Լ. Ս. ՀՈՎՀԵՓՅԱՆ

# ԳՐԱԲԱՐԻ ԲԱՌԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ЯЗЫКА ИМЕНИ Р. АЧАРЯНА

Л. С. ОВСЕПЯН

# СЛОВООБРАЗОВАНИЕ ДРЕВНЕАРМЯНСКОГО ЯЗЫКА

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1987

4(47.925)
Հ-87

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Լ. Ս. ՀՈՎՍԵՓՅԱՆ

2398

# ԳՐԱԲԱՐԻ ԲԱՌԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

ՀՍՍՀ ԳԱ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆ-Տ
ԳՐԱԴԱՐԱՆ
БИБЛИОТЕКА
Ин-т востоковед. АН Арм. ССР

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1987

ԳՄԴ 81. 2 Հ
Հ 872

Տպագրվում է ՀՍՍՀ ԳԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝
բանասիրական գիտությունների թեկնածու Լ. Շ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Գիրքը հրատարակության են երաշխավորել գրախոսներ՝
բանասիրական գիտությունների թեկնածուներ Ս. Ա. Էլոյանը և Լ. Լ. Կարապետյանը

Հովսեփյան Լ. Ս.

Հ 872 Գրաբարի բառակազմությունը /Պատ. խմբ. Լ. Շ. Հովհաննիսյան; ՀՍՍՀ ԳԱ Հ. Աճառյանի անվ. լեզվի ին.-տ.—Եր.: ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1987...375 էջ.

Աշխատությունը նվիրված է V դ. գրական հայերենի բառակազմական համակարգի ամբողջական նկարագրությանը: Ներկայացվում են գրաբարի բառակազմության հիմնական եղանակները՝ բառաբարդումը և ածանցումը, տրվում են բաղադրյալ բառերի բառակազմական կաղապարները, նրանց գործառական բեռնվածությունը, հատուկ ուշադրություն է դարձվում բառակազմական հիմքերի ձևավորման առանձնահատկություններին, բառակազմական միջոցների գործառական և իմաստային կողմերին:

Աշխատությունը նախատեսվում է հայոց լեզվի պատմության մասնագետների, բանասեր ուսանողների և ընդհանրապես հայոց լեզվի կառուցվածքով հետաքրքրվող ընթերցողների համար:

Հ $\frac{4602010000}{703(02)-87}$ 90—87 ԳՄԴ 81.2 Հ

© Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատարակչություն, 1987

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

## ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՌԱԿԱԶՄՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ

Բառակազմությունը, որպես լեզվաբանական հետազոտության առանձին բնագավառ, ձևավորվել է համեմատաբար ուշ շրջանում՝ վերջին տասնամյակների ընթացքում, թեև բառակազմական առանձին երևույթների նկարագրությանը հետազոտողներն անդրադարձել են դեռևս խոր անցյալից սկսած:

Գրաբարի բառակազմական առանձնահատկությունների մասին արված առաջին դիտողությունները մեզ են հասել հայ քերականական մտքի ծագման ժամանակաշրջանից՝ Դիոնիսիոս Թրակացու «Արուեստ քերականութեան» աշխատության թարգմանության մեջ:

Հին քերականագիտության մեջ ընդունված սխեմայի համաձայն բառակազմության հարցերը քերականական ձեռնարկներում չեն առանձնացվել, այլ քննվել են յուրաքանչյուր խոսքի մասի նկարագրության հետ, ի թիվս դրանց ուղեկցող քերականական այլ հատկանիշների: Թրակացու հայ թարգմանիչներն ու մեկնիչները նույնպես հետևել են այդ սխեմային:

Թրակացու քերականության մեջ առանձին խոսքի մասերի կազմության նկարագրության ժամանակ առաջ են քաշվում ձև (σχῆμα) և տեսակ (εἶδος) հասկացությունները: Վերջինի մեջ ամփոփվում են նախադաղափար և ածանցական (արդի տերմինաբանությամբ՝ պարզ և ածանցավոր) տիպերը: Ածանցական անունների մեջ առանձնացվում է 7 խումբ՝ հայրանունական, ստացական, բաղդատական, գերադրական, փաղաքշական, հարանունական, բայածական: Մյուս խոսքի մասերը այդ կարգի բաժանումների չեն ենթարկվում. նրանց մեջ մտնող բառերը դասդասվում են միայն ըստ ձևի և տեսակի: Ձև հասկացությունը ներառում է անունների, բայերի և դերանունների պարզ, բարդ և հարաբարդ տիպերը: Մակբայները բաժանվում են երկու տիպի՝ պարզ և ջոկադիր (որոնք համապատասխանում են մյուս խոսքի մասերի պարզ և բարդ «ձևերին»):

Թրակացու քերականության և նրա մեկնությունների մեջ առանձնացված անունների, բառակազմական խմբերի և բերված օրինակների քննությունից տեսնում ենք դասակարգման հակասական կողմերը: Չխոսելով այն մասին, որ «ածանցականների» խմբերի մեջ առանձնացված «հայրանունականը» հայերենին միանգամայն խորթ էր, և ածանցներն առանձնացվել են բառերի արհեստական հատույթավորմամբ, նշենք, որ իմաստային չափանիշով են առանձնացված 2—5 խմբերը, իսկ վերջին երկուսը բնորոշվում են ըստ կազմության եղանակի. ածանցների՝ անուններին «հարելու» և ածանցավոր բառերի՝ բայերից սերված լինելու հատկանիշների, այնպես որ, որոշ դեպքերում դասակարգման հիմք է ծառայում ածանցը իր իմաստով, իսկ այլ դեպքերում՝ ամբողջ ածանցավոր բառը:

Բացի այդ, ինչպես նկատել են Թրակացու երկի թարգմանության առաջին իսկ մեկնիչները, այդ ձևաիմաստային 7 խմբերը չափազանց քիչ են հայերենի ածանցավոր բառերի ամբողջ բազմազանությունը ներկայացնելու համար: Այդ կապակցությամբ Դավիթը գրում է. «Իսկ ածանցացն տեսակք զի յոյժ անհուն և անբաւ են, թողլով զայլոցն, յատուկ գրնականէն բուռն եհար առաջնորդութեամբ յայտնել, ասելով նախ հայրանունական... (և այլն)»[1]:

Հին քերականների՝ բարդ բառերի ըմբռնումը նույնպես բավականաչափ հստակ չէ. այսպես, Թրակացու թարգմանիչը բարդ և հարաբարդ բառերի համար բերում է բառակապակցության օրինակ (քաջ Մանեան, քաջ Մանուեղ), ըստ երևույթին, հայերենում չգտնելով հունարեն բնագրում բերված բարդ հատուկ անունների համապատասխանությունները: Բարդ և հարաբարդ բայերի օրինակների մեջ նույնպես բերվում են բառակապակցություններ կամ նախդրավոր կազմություններ. «Պարզ՝ գիտեմ, բարդ՝ բաոգիտեմ, յարաբարդ՝ կարի քաջ գիտեմ» (Անանուն մեկնիչ)[2]:

Դերանունների բառակազմական առանձնահատկությունները քննելիս քերականները դարձյալ գտնվել են հունարեն բնագրի ազդեցության տակ. որպես բարդ դերանուններ բերվում են բառակապակցությունների օրինակներ՝ անձին իմոյ, անձին քո, անձին նորայ (ἐμαυτοῦ, σαυτοῦ, αὑτοῦ): Դերանվան «տեսակների» մեջ ստացականները համարվում են անձնականներից ածանցված (մեք-մեր), այստեղ իմաստային կապը փաստորեն մեկնաբանվում է որպես բառակազմական առանձնահատկություն:



Հետաքրքիր է բարդ անունների դասդասումը չորս խմբերի՝ ըստ բաղադրիչների «լրիվ» կամ «պակաս» լինելու և նրանց շարադասության: Դժվար է ասել, թե ինչ նկատի ունեն քերականները «լրիվ» կամ «պակաս» ասելով. օրինակներից դատելով (թեև կան շեղումներ և բացահայտ սխալներ՝ ածանցավոր բառեր) դրանք թերևս արմատների՝ առանձին գործածվելու կամ չգործածվելու հատկություններն են, կամ բարդ բառի կազմում հնչյունափոխության ենթարկվել-չենթարկվելը: Ինչևէ, բարդ անունների այս չորս խմբերի մասին դատողությունները նույնությամբ փոխադրվում են քերականական մի ձեռնարկից մյուսը:

Բայերը նույնպես, ինչպես և անունները, ըստ տեսակի բաժանվում են նախագաղափարի և ածանցականի, սակայն Թրակացու մեկնիչներից Դավիթը այստեղ հետևյալ վերապահությունն է անում. «Տեսակ անուանց նախագաղափարիցն և ածանցացն անուան զբունն և զածանցեալն նշանակեն, իսկ սա սոսկ ի վերայ ձայնի միով վանգիւ ածանցեալ»[3]: Այսպիսով, նա ճիշտ կերպով նշում է որոշ կարգի ածանցավոր բայերի առանձնահատկությունը, որոնք, ի տարբերություն պարզ և ածանցավոր գոյականների, տարբերվում են միայն ձևով (ռոոգեմ–ռոոգանեմ):

Ի մի բերելով հայ հին քերականական մտքի ներկայացուցիչների արտահայտած բոլոր դիտողությունները բառակազմական երևույթների մասին, կարելի է ասել հետևյալը:

Բառակազմությունը չի առանձնանում և չի դառնում քննության ինքնուրույն բնագավառ, թեև բառը մտնում է քերականության քառամասնյա (տառ, վանգ, բառ, բան) բաժանման մեջ որպես առանձին միավոր, ընդ որում դիտվում է որպես վանկերից (այդ թվում նաև մեկ վանկից) կազմված, բայց նրանցից որակապես տարբեր՝ իմաստակիր միավոր. բառի կազմության հարցերը, ինչպես արդեն նշվել է, քննվում են առանձին խոսքի մասերի նկարագրության մեջ:

Այնուհետև, մի կողմից, հստակորեն չեն տարբերակվում բառաբարդումն ու ածանցումը (նախածանցավոր կազմությունները քննվում են որպես բարդություններ), մյուս կողմից, չկա ընդհանրապես պարզ արմատի գիտակցումը, ի հակադրություն բաղադրյալ բառերի. այն «ձևի» (բառաբարդման) մեջ կոչվում է պարզ, «տեսակի» (ածանցման) մեջ՝ նախագաղափար:

Չկա տերմինաբանական միասնություն՝ անունների և բայերի համար առանձնացվում են պարզ, բարդ, հարաբարդ տեսակները, իսկ մակբայների համար՝ պարզ և ջոկադիր:

*Ածանցավոր բառերի իմաստային դասակարգումների հիմքը միասնական չէ։ Այստեղ մերթ հիմք են ընդունվում ածանցների արտահայտած նշանակությունները, մերթ բառերի կազմության առանձնահատկությունները, մերթ ամբողջ բառի արտահայտած իմաստը։*

*Կոնկրետ նյութի քննության մեջ նկատվում են բառերի արհեստական հատույթավորում, իմաստային սխալ խմբերի առանձնացում, որ մասամբ հետևանք է հունարենի ազդեցության, մասամբ բառակազմական երևույթների ոչ հստակ ըմբռնման։*

*Այս պատկերացումները շարունակվում են նաև հետագա դարերի քերականների և մեկնիչների աշխատություններում, մինչև լատինատիպ քերականության սկզբնավորումը*[4]*։*

*Թեև լատինաբան հեղինակներից շատերը նույնպես հետևում են բառակազմական երևույթների նկարագրության նշված սխեմային, սակայն նրանցից ոմանք ինքնուրույն մոտեցում են ցուցաբերում այդ հարցերի քննությանը։*

*Այսպես, XVII դարի առաջին կեսի գործիչ Ֆրանցիսկոս Ռիվոլայի* „Grammaticae armenae libri quattuor" *(1624 թ.) աշխատության մեջ բառակազմական հարցերը առանձնացվում և քննվում են չորրորդ գլխում՝* „Observationes ad syntaxim spectantes" *(Շարահյուսությանը վերաբերող դիտողություններ), որտեղ շարահյուսական և ձևաբանական այլ երևույթների նկարագրության կողքին տրվում են բառակազմական տեղեկություններ գոյականների, ածականների ու մակբայների կազմության, ինչպես նաև ածականների համեմատության աստիճանների մասին։ Ռիվոլայի կողմից բառակազմական հարցերը շարահյուսության մեջ քննելու փաստը որոշ չափով հիշեցնում է ժամանակակից լեզվաբանության մեջ արտահայտված այն կարծիքը, որի համաձայն լեզվի մեջ յուրաքանչյուր բաղադրություն կամ կապակցություն (նախադասությունների, բառերի, ձևույթների) անվանվում է շարույթ և քննվում շարույթաբանության մեջ։*

*Այդ շրջանում հայերենի՝ լատիներենով գրված մյուս քերականության հեղինակը՝ Կղեմես Գալանոսը, ավանդաբար բառակազմությունը քննում է անունների և բայերի համակարգում որպես ձև և տեսակ, սակայն զգալի ճշտումներ և հավելումներ է կատարում դրանց դասդասման մեջ։ Նա խոսում է կրկնաբարդ և կրկնածանց անունների մասին, ածանցականների մեջ տարբերակում է 16 տեսակ, որոնք զգալիորեն գերազանցում են Թրակացու քերականության մեջ նշվածների թիվը։*



*Լատինատիպ քերականությունների առաջին հայ հեղինակներից Ոսկան Երևանցին կատարում է տերմինաբանական որոշ նորամուծություն, բառակազմական երևույթները նա քննում է ըստ* կարգի *(որը համապատասխանում է նախորդ քերականությունների* տեսակ *հասկացությանը) և ըստ* կերպավորության *(նախորդ քերականների համաձայն՝ ձև)։ Ոսկանը առանձնացնում է ածանցական անունների 11 տեսակ՝ առաջնորդվելով ածանցների իմաստային որոշ հատկանիշներով, իսկ մի շարք դեպքերում այս կամ այն իմաստային խմբի անուններ կերտելու նրանց գործառույթով. բայերի կազմության մասին (բառակազմական տեսակետից) Ոսկան Երևանցին չի խոսում։*

*Նշված ժամանակաշրջանի հայ քերականական մտքի ամենից ավելի նշանավոր ներկայացուցիչ Հովհաննես Հոլով Կոստանդնուպոլսեցին իր նախորդների համեմատությամբ հասնում է նկարագրության առավելագույն մանրամասնության, ներկայացնելով գրաբարի ածանցների բավական ընդարձակ մի ցանկ, թեև իր նախորդների նման նախածանցավոր կազմությունները դարձյալ քննում է բառաբարդումների շարքում։*

*Հաջորդ դարաշրջանի քերականները (Գ. Ջահուկյանի դասակարգմամբ՝ հունա-լատինատիպ քերականությունների հեղինակները)*[5] *բառակազմական երևույթների քննության մեջ սկզբունքային նորություններ չեն բերում։*

*XVIII դարի սկզբում լատինատիպ-բանասիրական քերականությունների հանդես գալով հայ քերականագիտության մեջ նկատվում է ինչպես գրաբարի ամբողջ քերականական համակարգի, այնպես էլ բառակազմական երևույթների առավել ճշգրիտ ու մանրամասն, արհեստականություններից զերծ նկարագրության հասնելու ձգտում։ Հայագիտության զարգացման պատմության մեջ նշանակալից դեր խաղաց Յոախիմ Շրյոդերի «Արամեան լեզուին գանձ» աշխատությունը (1711 թ.)։ Բառակազմական հարցերի քննության մեջ նախորդների համեմատությամբ Յ. Շրյոդերի բերած նորությունն այն է, որ նա, թեև ոչ բացահայտ ձևով, առաջ է քաշում բառակազմական (բաղադրող) հիմքի գաղափարը. ածանցական բառերը նա բաժանում է անվանականի և բայականի, փաստորեն նկատի ունենալով բառակազմական տարբեր հիմքերից կազմվելը։ Այնուհետև, նա առաջինն է, որ խոսելով այսպես կոչված «կրկնածանցականների» մասին, թվարկում է միմյանց հետ զուգորդվող ածանցները, ինչպես նաև բարդությունների մեջ նշում է տարբեր խոսքի մասերի զուգորդելիությունը որպես բարդ բառի բաղադրիչներ, ինչպես՝ անունը անվան հետ, անունը դերանվան հետ, անունը բայի հետ և այլն։ Կարևոր են նրա դի-*

տողությունները նաև հոդակապ ձայնավորների (ա, ե, է) գործածության մասին։

Մխիթար Սեբաստացին իր քերականության մեջ (1730 թ.) անդրադառնալով բառակազմական երևույթների քննությանը, մի շարք ինքնուրույն դիտողություններ է անում։ Հատկապես ուշագրավ են բարդ բառերի ձևաբանական առանձնահատկությունների մասին հայտնած նրա մտքերը. բարդությունների հոլովումը տարբերվում է նրա կազմի մեջ մտնող բաղադրիչների հոլովումից (գործ-գործոյ, բայց՝ բարեգործի, սէր-սիրոյ, բայց՝ մարդասէրի)։ Ածանցական և նախադաղափար անունների մասին խոսելիս Սեբաստացին նշում է, որ նախագաղափար կարող են լինել ինչպես պարզ, այնպես էլ բարդ բառերը։ Սա նախորդների համեմատությամբ նոր դիտողություն է։ Ածանցները Սեբաստացին համարում է մասնիկներ, «որոնք ինքնըստինքյան ոչինչ չեն նշանակում, բայց կցվելով նախագաղափար անուններին, փոփոխում են նրանց նախնական նշանակությունը և կիրառվում են այլ բան նշանակելու համար»[6]։ Այստեղ Սեբաստացին անտեսում է, որ ածանցները, որպես ձևույթներ, մտնում են լեզվի նվազագույն իմաստակիր միավորների շարքը. սա, թերևս, կարելի է բացատրել նրանով, որ Սեբաստացու ժամանակ լեզվական իմաստների այդպիսի լայն ըմբռնում չկար։ Ածանցների թվարկման և դասակարգման մեջ Սեբաստացին հետևում է իր նախորդներին, հատկապես Խաչատուր Էրզրումեցուն, անելով, սակայն, մի շարք քննադատական դիտողություններ։

Բաղդասար Դպիրը խոսում է ածանցների հիմնական և երկրորդական նշանակությունների մասին, վերապահում անելով, սակայն, որ դրանց մանրամասն քննությունը իր նպատակներից դուրս է։ Բարդությունների մասին խոսելիս նա նկատի է առնում բաղադրիչների կապակցման եղանակները, փորձում է գտնել բարդությունները բառերի սովորական շարահյուսական զուգորդումից տարբերակող հատկանիշներ (մեկ բառի արժեք ունենալը, միասին գրվելը, միայն երկրորդ բաղադրիչի շեշտակիր լինելը)։ Բաղդասար Դպիրը առաջ է քաշում նաև բարդ և ածանցավոր բառերի տարբերակման հարցը, նշելով, որ բարդության մասերն ինքնին բառ են, իսկ ածանցներն ինքնին բառ չեն։

Այսպիսով, լատինատիպ քերականությունների հեղինակները նախորդ շրջանի քերականների համեմատությամբ բառակազմության հարցերի մեջ առաջ են քաշում որոշ նոր ըմբռնումներ և նյութի նկարագրության ուրույն եղանակներ, որոնք հիմնականում հանգում են հետևյալին. առանձնացվում և ընդարձակ ցանկերով ներկայացվում են բառակազմական մասնիկները, քերականները առավել մանրամասնության են հասնում հատկապես ածանցների թվարկման և դասդասման մեջ, նշում են ածանցների արտահայտած իմաստներն ու գործառույթները (անվանակերտ, մակբայակերտ և այլն), առաջ է քաշվում ածանցների բազմիմաստության (հիմնական և երկրորդական նշանակություններ) գաղափարը, խոսվում է բարդությունների բաղադրիչների կապակցման միջոցների, ածանցների զուգորդելիության, կրկնաբարդ և կրկնածանց կազմությունների մասին։ Երևան են գալիս բառակազմական հիմքերի մասին տեսության սաղմերը։

Միաժամանակ անհրաժեշտ է նշել, որ լատինաբան հեղինակները չեն կարողանում հաղթահարել նախորդ շրջանի քերականության հիմնական թերությունները։ Այսպես, բառակազմական հարցերը չեն առանձնացվում և քննվում են յուրաքանչյուր խոսքի մասի հետ (բացառություն է կազմում թերևս միայն Ֆ. Ռիվոլան), նախածանցավոր կազմությունները շարունակում են դիտվել որպես բարդություններ, դեռևս նկատվում են արհեստական տրոհման դեպքեր, քերականական ձևույթների արժեք ունեցող մասնիկների և բառակազմական միավորների շփոթում և այլն։

Ինքնատիպ քերականությունների շրջանի (XVIII դ. վերջին քառորդից սկսած) առաջին նշանավոր ներկայացուցիչ Միքայել Չամչյանը բառակազմական երևույթների քննության մեջ նախորդների համեմատությամբ հասնում է նկարագրության աննախընթաց մանրամասնության, թեև բառակազմությունը դեռևս քննում է անվանական կարգերի շարքում, չկարողանալով դուրս գալ դարավոր ավանդույթից։ Մ. Չամչյանը խախտում է ավանդականությունը, երբ առանձնացնում է նախածանցավոր կազմությունները, որոնք նախորդները քննում էին որպես բարդություններ, և անվանում է դրանք «բաղադրյալ», այդպիսով տարբերակելով անվան երեք «ձև»՝ պարզ, բարդ և բաղադրյալ։ «Տեսակի» կարգի մեջ նա շարունակում է քննել միայն վերջածանցավոր կազմությունները։ Ածանցները Մ. Չամչյանը դասդասում է ըստ գործածության հաճախականության։

Գ. Ավետիքյանը, ի տարբերություն նախորդների, առանձնացնում է պարզ բառերը, հակադրելով դրանք մնացած բոլոր բաղադրյալ ձևերին, որոնց մեջ միավորում է նախածանցավոր կազմությունները (դրանք կոչում է բաղադրյալ), բարդությունները և վերջածանցավոր կազմությունները, թեև շարունակում է նախածանցավոր բառերը քննել «ձև» անվան տակ, բարդ բառերի հետ միասին։ Բաղադրյալ բառեր կազմող նախածանցները նա անվանում է մասնիկներ և փորձում է տալ դրանք բարդ

բառերի բաղադրիչներից տարբերակող հատկանիշները՝ մասնիկները ինքնուրույն իմաստ չունեն, բառին կցվում են միայն սկզբից և առանց հոդակապի, մինչդեռ բարդությունների բաղադրիչները ունեն ինքնուրույն իմաստ, միանում են հոդակապով և կարող են դրվել բարդության սկզբից կամ վերջից։

Նախածանցավոր կազմությունները բաղադրյալ է համարում նաև Մ. Սալլանթյանը, սակայն նա ավելի առաջ է գնում և դրանք հանելով «ձևի» կարգից (ինչպես ինքն է ասում՝ «պարագայից»), հատկացնում է «տեսակի» կարգին, միավորելով նախատիպ, բաղադրյալ և ածանցյալ անունները։ «Ձևի» կարգի մեջ նա թողնում է պարզ, բարդ և հարաբարդ անունները, այսինքն՝ բուն բարդությունները։

Բայերի բառակազմության քննության ժամանակ Մ. Սալլանթյանն ըստ «տեսակի» առանձնացնում է նախատիպ, բաղադրյալ և ածանցյալ բայեր, բաղադրյալ համարելով նախածանցավոր, իսկ ածանցյալ՝ վերջածանցավոր կազմությունները։ Այսպիսով, ինչպես և անունների դեպքում, «տեսակի» մեջ նա միավորում է ածանցավոր բայերը, անկախ ածանցի դիրքից։

Վ. Զալըխյանի քերականության մեջ միացվում են «ձև» և «տեսակ» կարգերը և առանձնացվում պարզ, բարդ, բաղադրյալ և ածանցավոր անունները։ Բաղադրյալ անուն են համարվում նախածանցավոր կազմությունները՝ ինչպես նախորդ քերականություններում։

Վ. Շահան-Ջրպետյանի ֆրանսերեն քերականության մեջ բառակազմության հարցերը քննվում են «Բառագիտություն» (Lexicologie) բաժնում, որտեղ ամփոփված են հնչյունաբանական, ուղղագրական, ձևաբանական և բառակազմական տեղեկություններ։ «Ձև» և «տեսակ» կարգերի վրա Շահան-Ջրպետյանը ավելացնում է և «բաղադրությունը» (jonction), այս անվան տակ, ինչպես և նախորդները, ներկայացնելով նախածանցավոր կազմությունները։ Ինչպես Շահան-Ջրպետյանը, այնպես էլ մինչև Ա. Բագրատունու քերականության ասպարեզ գալը լույս տեսած հայերենի մյուս օտարալեզու քերականությունների հեղինակները (Մ. Ավգերյան, Մ. Բժշկյան, Հ. Պետերման) բառակազմական երևույթների նկարագրության մեջ առանձին ինքնուրույնություն չեն ցուցաբերում։

Ա. Բագրատունին իր «Հայերէն քերականութիւն ի պէտս զարգացելոց» աշխատության մեջ, որն աչքի է ընկնում գրաբարի քերականական իրողությունների առավել մանրամասն նկարագրությամբ, զգալի տեղ է հատկացնում նաև բառակազմությանը, վերջինիս նվիրելով հավելվածի «Յաղագս բարդութեան բառից» և «Յաղագս ածանցմանց բառից» բաժին-



ները։ Ինչպես տեսնում ենք, բառակազմությունը ոչ միայն առանձնացվում է խոսքի մասերի քննությունից, այլև վերջնականապես սահմանազատվում են բառակազմական երկու եղանակները՝ բառաբարդումն ու ածանցումը։

Ա. Բագրատունին ամենայն մանրամասնությամբ ներկայացնում է բարդության կազմիչների միացման միջոցները, առաջին բաղադրիչի հնչյունափոխության դեպքերը (կամ անփոփոխ կերպով հանդես գալը), առաջին, որոշ դեպքերում նաև երկրորդ բաղադրիչի տարբեր հոլովաձևերով դրվելը, ինչպես նաև բաղադրիչների շարահյուսական հարաբերությունները։ Նույնպիսի մանրամասնությամբ քննվում են ածանցական մասնիկները, առանձնացվում ըստ դիրքի (նախածանց կամ վերջածանց) և ենթարկվում մանրամասն իմաստային դասդասումների։ Պետք է նշել, որ ածանցական մասնիկների առավել լրիվ նկարագրության ձգտումը երբեմն Ա. Բագրատունուն մղում է բառերի արհեստական տրոհումների, կեղծ ստուգաբանությունների և այլն։ Չնայած սրան, Բագրատունու քերականությունը, ինչպես ամբողջությամբ վերցրած, այնպես էլ բառակազմական երևույթների քննության առումով, մինչև օրս չի կորցրել իր արժեքը և մնում է գրաբարի ուսումնասիրության կարևոր աղբյուրներից մեկը։

Մինչև այժմ քննված քերականական աշխատությունները թեև որոշ երևույթների նկարագրության մեջ ի հայտ էին բերում դպրոցական նորմատիվ քերականություններին ոչ հատուկ խորություն և մանրամասնություն, սակայն հիմնականում գործնական բնույթ էին կրում և հետապնդում էին ուսուցողական նպատակներ։

XIX դարից սկսած գրաբարի լեզվական համակարգը սկսում է դառնալ ինչպես հայ, այնպես էլ օտարազգի լեզվաբան հայագետների գիտական ուսումնասիրության առարկան, մասնավորապես, սկիզբ է առնում հայերենի պատմահամեմատական ուսումնասիրությունը, աշխատություններ են նվիրվում գրաբարի համակարգի այս կամ այն կողմի հետազոտությանը, շարունակում են գրվել ուսումնական ձեռնարկներ[7]։ Պետք է նաև նշել, որ եթե հաշվի չառնենք Ա. Այտընյանի կողմից Վ. Զալըխյանի քերականության վերամշակված հրատարակությունը (1885 թ.), XIX դարի կեսերից հետո գրաբարի քերականական կառուցվածքին նվիրված վերը քննված աշխատությունների նման ծավալուն և ամբողջական, լեզվական կառուցվածքի բոլոր կողմերն ընդգրկող ուսումնասիրություններ արդեն չեն գրվում։ Դրա պատճառներից մեկն էլ թերևս այն էր, որ նշված ժամանակաշրջանում հայ լեզվաբանական միտքը ուշադրությունը

սկսում է կենտրոնացնել աշխարհաբարի հետ կապված հարցերի լուծման, հատկապես նրա կազմավորման պատմության և քերականական կառուցվածքի նկարագրության վրա։

XX դարի սկզբից ի վեր և հատկապես վերջին մի քանի տասնամյակների ընթացքում ընդլայնվում և խորանում է ինչպես հայագիտության մյուս բնագավառների, այնպես էլ գրաբարի ուսումնասիրությունը։ Գրվում են հին գրական հայերենին նվիրված տեսական և գործնական բնույթի աշխատություններ, մենագրական քննության են ենթարկվում գրաբարի լեզվական կառուցվածքի առանձին կողմերը, հայերենի պատմական զարգացման ընթացքին նվիրված աշխատություններում անհրաժեշտ լուսաբանություն են ստանում նաև գրաբարի փաստերը, սակայն բառակազմության հարցերը հիմնականում մնում են ուսումնասիրողների գիտական հետաքրքրությունների շրջանակից դուրս։ Այս տեսակետից բացառություն է կազմում Է. Թումանյանի «Древнеармянский язык» մենագրությունը, որտեղ հեղինակը նպատակ է ունեցել տալու գրաբարի լեզվական համակարգի ամբողջական նկարագրությունը՝ ներառյալ բառային մակարդակը։ Բառի քննությանը նվիրված է աշխատության երկրորդ մասը՝ «Բառի կառուցվածքը և բառակազմությունը» վերնագրով։ Հեղինակը առանձնացնում է բառի ձևաբանական կառուցվածքի հետազոտությունը բուն բառակազմության քննությունից և ներկայացնում է դրանք առանձին գլուխներում։ Առաջին դեպքում կատարվում է գրաբարի բառի կազմում հանդես եկող ձևաբանական միավորների դասակարգում և դրանց զուգորդման հիմնական կաղապարների բացահայտում, իսկ երկրորդ դեպքում՝ այդ միավորներից նոր բառեր կազմելու եղանակների քննություն։

Գրաբարի բառի ձևույթային կազմի քննության ժամանակ Է. Թումանյանը նախ առանձնացնում է հասկացական (բառային և քերականական հատկանիշներով օժտված) և կառուցվածքային (զուտ ձևական) միավորները, այնուհետև, առաջինների մեջ՝ բառային ձևույթները, այսինքն՝ արմատական տարրերը իրենց ձևահնչույթաբանական այլևայլ տարբերակներով, և քերականական ձևույթները բառակազմական (ածանցներ) և բառափոխական (թեքույթներ) տարբերակներով։ Կառուցվածքային միավորների մեջ են մտնում հոդակապերը, թեմատիկ ձայնավորներն ու սոսկածանցները։ Այնուհետև հեղինակը ներկայացնում է գրաբարի բառի ձևաբանական կառուցվածքի հիմնական կաղապարները և նրանց մի քանի ամենագործուն տարբերակները, համառոտ կերպով կանգ է առնում



հարացուցային շարքերում բառի ձևաբանական կառուցվածքի կրած փոփոխությունների վրա։

Բուն բառակազմության, այսինքն՝ նոր բառեր կազմելու եղանակների քննության ժամանակ հեղինակը առաջին հերթին անդրադառնում է բառակազմական հիմք հասկացության բնորոշմանը (տարբերակելով այն ձևաբանական կամ քերականական հիմքից) և խոսում է գրաբարի բառակազմական հիմքերի ձևավորման ընդհանուր օրինաչափությունների մասին։ Այնուհետև առանձին-առանձին քննում է գրաբարի բառակազմության հիմնական եղանակները՝ նախածանցումը, վերջածանցումը, բառաբարդումը և կրկնությունը, յուրաքանչյուր դեպքում նշելով բառակազմական հիմնական միջոցներն ու կաղապարները։ Բառակազմական ձևույթները դասակարգվում են հետևյալ կերպ. նախածանցներն ըստ ծագման և գործառության բաժանվում են 1) զուտ նախածանցների, 2) արհեստականորեն (հունաբան դպրոցի կողմից) ստեղծված և 3) նախդիրներից առաջացած նախածանցների։ Վերջածանցների դասակարգումը հանգում է նրանց բառաքերականական և բառիմաստային բնութագրին, այսինքն՝ նախ որոշվում են այն ածանցները, որոնք օժտված են մի խոսքի մասը մի այլ խոսքի մասի փոխարկելու ունակությամբ, ապա կատարվում է վերջածանցների խմբավորում՝ ըստ իմաստային հատկանիշների։ Առանձնացվում են 9 իմաստային խմբեր (գնահատողական, վերացական, ստացականության, գործող անձի և այլ իմաստներով)։ Առանձին խոսվում է բայակազմական ածանցների մասին։ Բարդությունները նույնպես ենթարկվում են կառուցվածքաիմաստային դասակարգման, առանձնացվում են համադասական տիպի (կցական) և ստորադասական տիպի (իսկական) բարդությունները, այնուհետև տրվում են գրաբարի բառակազմական կաղապարների հիմնական տիպերը՝ անուն+անուն, անուն+բայահիմք՝ իրենց տարատեսակություններով։ Կրկնությունը Է. Թումանյանը համարում է բառակազմական մի յուրահատուկ եղանակ և առանձնացնում է անփոփոխ հիմքերով, հնչյունափոխված հիմքերով և առանձին դրվող բաղադրիչներով տիպերը։

Ինչպես գրքի մյուս մասերում, այնպես էլ բառակազմական հարցերի քննության ժամանակ Է. Թումանյանը չի բավարարվում փաստերի սոսկ արձանագրմամբ (որ հիմնականում հատուկ էր դպրոցական քերականություններին), այլ հաճախ անդրադառնում է լեզվի պատմության և տեսության հարցերին։ Այսպես, նա քննում է բառի ձևաբանական և հնչյունական կառուցվածքի փոխհարաբերության, ածանցների ծագման և ձևավորման, բարդությունների և շարահյուսական բառակապակցությունների

տարբերակման և այլ հարցեր: Ընդհանուր առմամբ պետք է նշել, որ գրաբարի բառակազմության քննությունը կատարվում է ժամանակակից լեզվաբանության կողմից մշակված տեսությունների մակարդակով:

Հայերենի բառի կառուցվածքի քննությանը յուրահատուկ մոտեցում է ցուցաբերում Մ. Մուրադյանը[8]: Նա առաջ է քաշում բառերի կառուցվածքային տարրերը «պատմական քերականության հայեցակետից» ուսումնասիրելու խնդիրը: Նրան հիմնականում հետաքրքրում է բառերի տրոհելիության հարցը: Քննությունը կատարվում է գլխավորապես գրաբարի նյութի հիման վրա, թեև հեղինակը բերում է օրինակներ նաև միջին հայերենից և աշխարհաբարից: Լեզվի զարգացման տվյալ փուլում տրոհվող են համարվում այդ ժամանակաշրջանում գոյություն ունեցող՝ իմաստով և ձևով մերձավոր, սակայն կազմությամբ տարբեր բառերը (լու-այ, ճ-լու, լու-ր): Ստուգաբանորեն անջատվող միավորները, եթե չեն պահպանվել տվյալ ժամանակահատվածի բառային համակարգում որպես անկախ բառեր կամ այլ բառերում տրոհելի միավորներ, չեն համարվում տվյալ փուլում տրոհելի (նո-ր): Բառերի զուգադրությամբ անջատվող միավորները «ըստ բառերի ոլորտում կատարած դերի» դասակարգվում են գլխավոր (արմատական ձևույթներ), օժանդակ (երկրորդական ձևույթներ՝ ածանցներ) և սին (նշանակությունը կորցրած) տարրերի: Քննվում են այդ տարրերի հնչյունական փոփոխակների, նրանց գործունության սահմանի, բառերի տրոհելիության վերացման պատճառների և այլ հարցեր:

Մ. Մուրադյանը չի տարբերակում բառերը ըստ տրոհելիության աստիճանների, հավասարապես անջատելի է համարում և՛ գործուն, իրենց իմաստն ու գործառույթը պահպանած ածանցները, և՛ արդեն «մեռած», իմաստազուրկ տարրերը: Ստացվում է այնպես, որ միայն լեզվաբանական միջոցներով (ներքին վերականգնման մեթոդ և այլն) տրոհվող բառակազմական միավորների հետ միևնույն մակարդակի վրա քննվում են բառակազմական պրոցեսին այդ ժամանակաշրջանում մասնակցող գործուն միավորները (հմմտ. մեղ-կ և մարտ-իկ):

Ընդհանուր առմամբ Մ. Մուրադյանի ուսումնասիրությունը հանգում է նախկինում գործուն, բայց լեզվի զարգացման տվյալ փուլում «մեռած» բառակազմական միավորների առանձնացման գործողությունների՝ ելնելով տվյալ ժամանակաշրջանում վկայված բառանյութի ընձեռած տվյալներից և միայն որոշ դեպքերում, որպես օժանդակ միջոցի, դիմելով ստուգաբանական քննության մեթոդին: Բառերի տրոհման տեխնիկան կիրառ-



վում է բավական հմտորեն և իր հերթին կարող է նպաստել բառի ստուգաբանական կառուցվածքը պարզելուն:

Գրաբարի բառապաշարի և բառերի կառուցվածքի հարցերին անդրադարձել է նաև Վ. Առաքելյանը իր «Հինգերորդ դարի հայ թարգմանական գրականության լեզուն և ոճը» աշխատության մեջ[9]: Որպես քննության նյութ վերցված է հայ մատենագրության ամենաառաջին գրավոր հուշարձանի՝ «Աստվածաշնչի» լեզուն: Հեղինակին հատկապես հետաքրքրում են հին գրական հայերենի սկզբնավորման ժամանակաշրջանում լեզվի բառապաշարի գրականացման գործընթացը, ինչպես նաև Աստվածաշնչում վկայված բառամթերքի ծագումնաբանական, գործառական, իմաստային և կառուցվածքային առանձնահատկությունները:

Ընդարձակ ցանկերով ներկայացվում և քննվում են ինչպես պարզ (հեղինակի տերմինով՝ անբաղադիր) այնպես էլ բաղադրյալ ածանցավոր և բարդ բառերը: Առանձին բաժնում ներկայացված են բայերը, որոնք քննվում են թե՛ ըստ բառակազմական, թե՛ քերականական հատկանիշների:

Ածանցավոր բառերի մեջ Վ. Առաքելյանն առանձնացնում է նախածանցավոր, նախդիր-նախածանցավոր և վերջածանցավոր տիպերը: Բուն նախածանցները նա համարում է ժխտականները՝ ամ, ան, ապ, ապի, դժ, չ, տ, տր[10], նախդիր-նախածանցներ են համարվում այն ածանցները, որոնք առաջացել են նախդիրների այնպիսի փոփոխությունից, որ այլևս անճանաչելի են դարձել, օրինակ՝ ընտիր (ընդդիր): Նախդիր-նախածանցներ են նաև այն նախդիրները, որոնք անկախ կիրառություն չունեն և որոնք բառի հետ կցվելով կազմում են նոր բառ. օրինակ՝ զկնի»[11]: Ինչպես տեսնում ենք, գործ ունենք տվյալ ժամանակագրական կտրվածքում անտրոհելի միավորների հետ և այստեղ խոսք կարող է լինել միայն բառերի՝ ստուգաբանորեն վերականգնելի ձևույթային կազմության մասին: Այս խմբում թվարկված բառերի մեջ (այսինքն՝ զ, ըն, ժ, ի, յ, ս (<*զ), ստ (<*բստ), ց նախդիր-նախածանցներով կազմված) կան, անշուշտ, բառեր, որոնք կերտված են 5-րդ դարում գործող բառակազմական կաղապարներով, ինչպես յանգգայս, յանգետս, յայնժամ (մակբայների ստեղծման արդյունավետ միջոցներից մեկը՝ յ նախդիր-նախածանցի և -ս վերջածանցի միաժամանակյա կցումը), սակայն բառերի մեծ մասը քարացած ձևեր են և նշված ժամանակաշրջանի համար ոչ գործուն: Հեղինակը նշում է նաև մի շարք այլ՝ մթագնած և արդյունավետությունը կորցրած նախածանցներ՝ ան, ապա, ե, կամա, ճ, ճամ, ճան, մ, ն, նի, ո, ս, տի, տար, փաս, որոնք տրոհելի են միայն ստուգաբանորեն: Սրանց մի մասն,



2—442

անշուշտ, կարիք ունի ստուգաբանական հետագա ճշգրտման: Կենդանի և գործուն մասնիկներ են՝ ամենա և գեր նախածանցները:

Վերջածանցավոր բառերի մեջ նույնպես նշվում են և՛ հնացած, և՛ դեռևս գործածական բառերը: Բերվում են 149 վերջածանցներ և նրանցից յուրաքանչյուրով կազմված բոլոր բառերը: Իհարկե, այս 149 վերջածանցների մեջ նույնպես կան ինչպես կենդանի և գործուն, այնպես էլ հնացած և իրենց բառակազմական գործառույթը կորցրած մասնիկներ, որոնցից մի քանիսը նույնիսկ կարող են ստուգաբանորեն դեռևս ճանաչելի արմատներ լինել (ագ, ժետ և այլն):

Բարդ բառերը Վ. Առաքելյանը բաժանում է կրկնավորների, կցականների և հոդակապավորների: Յուրաքանչյուր տիպի բառերը նույնպես ներկայացվում են լիակատար ցանկերով և նրանց կառուցվածքային առանձնահատկությունների մասին դիտողություններով: Հատկապես ուշագրավ է անհոդակապ բաղադրությունների մասին հեղինակի տեսակետը, որով նա կասկածի է առնում հայագիտության մեջ արծարծված այն կարծիքը, իբր այդ տիպի կազմությունները հատուկ չեն գրաբարին և խոսակցական-բարբառային ծագում ունեն: Վ. Առաքելյանի տեսակետով «այսպիսի կազմությունների գոյության հիմքը վերջիվերջո ներքին օրինաչափությունների վրա է խարսխվում»[12]:

Ճիշտ կերպով առանձնացված են բայերը որպես յուրահատուկ բառակազմական կաղապարով կազմված բառեր: Դրանք քննվում են ըստ տարբեր խոնարհումների, որոնց մեջ առանձնացվում են պարզ և ածանցավոր տիպերը: Բայերը նույնպես դիտարկվում են ըստ բնիկ և փոխառյալ, հնացած և կենդանի, մեռած և դեռևս գործուն կաղապարներով կազմված շերտերի: Ուշադրության են առնվում նրանց խոնարհման առանձնահատկությունները, փոխանցումները խոնարհումների միջև, օրինաչափ ձևերը և շեղումները:

Այսպիսով, թեև հեղինակի նպատակը չի եղել ներկայացնել գրաբարի բառակազմությունը որպես համակարգ, այլ քննել Աստվածաշնչի լեզուն ու ոճը, մասնավորապես այնտեղ վկայված բառապաշարը տարբեր առումներով, սակայն այդ աղբյուրի լեզվական նյութի սպառիչ ընդգրկումը և բառերի ձևույթային կազմի վերլուծությունը զգալիորեն նպաստում են հին գրական հայերենի սկզբնավորման շրջանի բառակազմության ուսումնասիրությանը:

Հայերենի (հատկապես հին հայերենում վկայված) բառապաշարի բառակազմական կառուցվածքը պատմահամեմատական հայեցակետով քննում է Գ. Բ. Ջահուկյանը իր «Հայոց լեզվի պատմություն, Նախագրային



ժամանակաշրջան» աշխատության մեջ, նպատակ ունենալով ի թիվս ամբողջ լեզվական կառուցվածքի վերականգնել նաև հայերենի բառակազմության առանձնահատկությունները վաղնջական (որպես ինքնուրույն լեզու հայերենի կազմավորման) և հնագույն (հին հայերենին նախորդած) շրջաններում:

Հին հայերենի բառապաշարից Գ. Ջահուկյանն առանձնացնում է այն բառերը, որոնք պահպանել են բառակազմական արխաիկ կառուցվածք, և, այսպիսով, ի տարբերություն նախորդ հետազոտողների, V դարում տարածված և գործուն կաղապարներից ու միավորներից հստակորեն սահմանազատում է ավելի վաղ ժամանակաշրջանում գործառած, բայց գրավոր շրջանում արդեն ոչ գործուն, քարացած բառակազմական միավորները, ընդ որում, որոշում է ոչ միայն այս կամ այն միավորի գործունության աստիճանը նախագրային ժամանակաշրջանում, այլև նշում է, թե որքանով է այն գիտակցվում հին հայերենի շրջանում՝ պարզ և բաղադրյալ հիմքերի հակադրությամբ կամ նախկին գործունությունը վերականգնելու միտումով:

Վաղնջական հայերենի համար Գ. Ջահուկյանը նշում է բառակազմական հիմնական եղանակները՝ ածանցում (նախածանցում և վերջածանցում), բարդում և կրկնություն, որոնք իրենց հիմքերն ունեն հնդեվրոպական նախալեզվում, որոշում վաղնջահայերենում ամենայն հավանականությամբ գոյություն ունեցած նախածանցներն ու վերջածանցները (իրենց հ.-ե. նախատիպերով), բառաբարդման հնագույն կաղապարները (անհոդակապ միացում՝ բնավոր կամ անբուն առաջին բաղադրիչի պայմաններում, կրկնություն «նույնական»՝ անհնչյունափոխ կամ «ոչ նույնական» հնչյունափոխված բաղադրիչներով, շարահյուսական կապակցության սերտաճում):

Նույն կարգի քննություն է կատարվում նաև հայերենի հնագույն շրջանի համար, նշվում է, որ նախկին՝ բնավոր (թեմատիկ) և անբուն (աթեմատիկ) հիմքերի հակադրությունը հնագույն շրջանում աստիճանաբար փոխարինվում է ձայնավորահանգ և ձայնորդահանգ հիմքերի հակադրությամբ, որն իր հերթին բերում է բառակազմական միավորների (հատկապես ածանցների ու հոդակապի) վերատարրալուծման երևույթը, առաջանում ածանցների ձայնավորման տարբերակներ, բաղադրյալ ածանցներ և այլն: Թվարկվում են ոչ միայն հնդեվրոպական ծագման, այլև ենթաշերտային ազդեցության և փոխառությունների հիման վրա առաջացած ածանցները, որոնք աստիճանաբար սկսում են բառեր կազմել նաև բնիկ հայերեն արմատներից: Վաղնջահայերենից եկող և հ.-ե. նախալեզվում

հիմքեր ունեցող նախածանցների գործածությունը (բացի ան- ժխտական նախածանցից) սկսում է նվազել, թեև նախդիր-նախածանցները դեռևս որոշ չափով պահպանում են իրենց արդյունավետությունը:

Բարդությունների մեջ այս շրջանում սկսում են տարածվել հոդակապավոր կազմությունները, առաջանում են կրկնավորների բաղադրման նոր կաղապարներ, աշխուժանում է հարադրությունների (հեղինակի դասակարգմամբ՝ անվանաբայական և մասնիկաբայական) բառակազմական տիպը: Քննվող բոլոր կաղապարների համար հայ հնագույն (դասական) մատենագրությամբ ավանդված բառապաշարից առանձնացվում են այնպիսի օրինակներ, որոնց հնությունը (հնագույն հայերենի շրջանին պատկանելը) որոշվում է մի շարք սկզբունքներով՝ կաղապարների հնատիպություն, փոխառյալ բառերի դեպքում՝ փոխառությունների ժամանակի հաշվառում, տվյալ հասկացության գոյության հնարավորություն ուսումնասիրվող շրջանի համար և այլն: Ըստ այդմ, ինչպես նշեցինք, շատ դեպքերում հնարավոր է դառնում 5-րդ դարում ավանդված բառապաշարի մեջ առանձնացնել հին և նոր կազմությունները:

Այսպիսով, ընդհանուր առմամբ կարելի է ասել, որ, ի տարբերություն ժամանակակից հայերենի, որի բառակազմության քննությանը նվիրված են զգալի թվով աշխատություններ, գրաբարի բառակազմությանը հետազոտողներն անդրադարձել են սակավ դեպքերում՝ գրաբարի լեզվական կառուցվածքի նկարագրությունն ամբողջացնելու կամ գրաբարի ընձեռած նյութը իրենց հետազոտության այլևայլ խնդիրներին ծառայեցնելու նպատակով:

Ժամանակակից հայերենի բառակազմության առանձնահատկությունները նկարագրվել են ինչպես լեզվի ամբողջական կառուցվածքը ներկայացնող ընդհանուր բնույթի աշխատություններում, այնպես էլ բուն բառակազմության այս կամ այն հարցին նվիրված առանձին մենագրություններում: Այդ ուսումնասիրություններում առաջ քաշված գաղափարներն ու նկարագրության սկզբունքները, ինչպես նաև հետազոտության արդյունքները կարող են մասամբ վերաբերել նաև գրաբարի բառակազմական համակարգին, քանի որ, ինչպես գիտենք, ժամանակակից հայերենի զարգացումը պատմականորեն ընթացել է այնպես, որ այն հիմնականում ժառանգել է գրաբարի բառապաշարն ու բառակազմական առանձնահատկությունները. ընդ որում նկատելի է ինչպես բառակազմական կաղապարների, այնպես էլ բառակազմական միավորների զգալի նույնություն: Ուստի անհրաժեշտ է համառոտակի անդրադառնալ նաև ժամանակակից հայերենի բառակազմության ուսումնասիրության պատմությանը:



Աշխարհաբարի լեզվական համակարգին նվիրված առաջին աշխատությունների հեղինակները բառակազմության հարցերը դեռևս քննում են գրաբարի հին քերականների սխեմայի համաձայն, տարբերելով բառերի նախագաղափար և ածանցյալ, պարզ և բարդ տեսակները և բառի կազմությունը ներկայացնելով յուրաքանչյուր խոսքի մասի հետ՝ հատկապես նշելով այդ խոսքի մասը կերտող ածանցները[13]: Ժամանակակից հայերենի բառակազմության՝ որպես լեզվական առանձին և ինքնուրույն համակարգի, առաջին ամբողջական և ծավալուն նկարագրությունը տվել է Մ. Աբեղյանը[14], հիմնականում զերծ մնալով գրաբարի քերականությունների սխեմայից: Սակայն գտնվելով երիտքերականների, հատկապես Հերման Պաուլի[15] ուժեղ ազդեցության տակ և լեզվական նկարագրության հիմնական ելակետ համարելով պատմականության սկզբունքը, նա մեծ ուշադրություն է դարձնում լեզվական ձևերի և բառակազմական միավորների ծագմանն ու պատմությանը՝ ժամանակակից գրական հայերենի բառակազմական առանձնահատկությունների հետ միաժամանակ քննելով ու նկարագրելով գրաբարյան և բարբառային շատ իրողություններ: Ավելին, բառակազմական համակարգն ինքնին նա քննում է շարժման մեջ, ցույց տալով բաղադրությունների տիպերի միջև եղած ծագումնաբանական կապերն ու պատմական հաջորդականությունը: Ինչպես և Հ. Պաուլը, գտնելով, որ բաղադրյալ բառերի առաջացման նախնական աղբյուրը շարահյուսական կապակցությունների սերտաճումն է, Աբեղյանը նույնպես կարևոր տեղ է հատկացնում համաբանությանը (անալոգիային), որի հետևանքով կազմվում են նաև այնպիսի բաղադրություններ, որոնք սկզբնական շարահյուսական կապակցության սերտաճման արդյունք չեն, այլ ստեղծվել են արդեն պատրաստի բաղադրյալ բառերի կաղապարով:

Բառակազմության մեջ առանձնացնելով բարդությունները և ածանցումը, Մ. Աբեղյանն առաջինների մեջ ներառում է հարադրությունները, կցական և իսկական բարդությունները: Ըստ որում, հարադրություններն իրենց հերթին բաժանվում են բայական հարադրությունների (հարադիր բայերի)՝ բաց անել, լաց լինել, և բաղհյուսական հարադրությունների՝ ցիր ու ցան, ճագած-կապած, ասել-խոսել: Հարադրության մի առանձին տեսակ են կրկնավորները՝ կերպ կերպ, տեղ տեղ, մի առ մի, ինչ ու ինչ: Կցական բարդություններն առաջացած են համարվում հարադրությունների նշված տիպերից՝ բաղադրիչների ավելի սերտ միացումով, քերականական կապակցության մթագնումով և իմաստային զանազան տեղաշարժերով՝ ակն ածել-ակնածել, աղ ու հաց-աղուհաց, գույն գույն-գույնզգույն: Բարդությունների մեջ Մ. Աբեղյանը քննում է նաև նախդրավոր կազմու-

թյունները (բայեր և անուններ), ինչպես նաև իր տերմինով ասած՝ «առաջադիրներով բաղադրությունները», որոնց մեջ ներառված են ինչպես «բացասական մասնիկներով» (ան, ապ, դժ, տ, չ), այնպես էլ «նախաբայերով» (արտ, բաղ, գեր, ստոր և այլն) կազմությունները, այս հարցում հետևելով գրաբարի քերականներին, որոնք նախամասնիկները բուն նախածանցներ չէին համարում:

Վերը նշված բոլոր տիպի բարդ բաղադրություններին Մ. Աբեղյանը հակադրում է այսպես կոչված «իսկական բարդությունները», որոնց հիմնական հատկանիշները համարում է՝ ա) հոդակապի առկայությունը, բ) առաջին բաղադրիչի ուղղական հոլովաձևը և գ) առաջին բաղադրիչի շեշտափոխական հնչյունափոխությունը: Իսկական բարդությունները քննվում են ըստ բաղադրիչների խոսքիմասային պատկանելության և նրանց միջև եղած շարահյուսական հարաբերությունների: Բուն ածանցում Մ. Աբեղյանը համարում է միայն վերջածանցումը, ընդ որում, դարձյալ հետևելով պատմականության սկզբունքին, խոսում է ոչ միայն առանձին ածանցների ծագման, այլև ընդհանրապես ածանցման՝ որպես բառակազմական եղանակի առաջացման հնարավոր ուղիների մասին: Հայերենի վերջածանցները Աբեղյանը բաժանում է անվանականների և դերբայականների՝ ըստ համապատասխան խոսքի մասերը կերտելու նրանց ունակության և քննում է յուրաքանչյուր ածանցով կազմված բաղադրությունները, նշելով ածանցների իմաստային և գործառական հիմնական առանձնահատկությունները: Որպես լուսաբանություն բերվող լեզվական նյութը նա քաղում է ոչ միայն գրական արևելահայերենից, այլև բազմազան բարբառներից, ինչպես նաև հաճախակի պատմական էքսկուրսներ է կատարում դեպի գրաբարյան ժամանակաշրջանը և նույնիսկ ավելի խոր հնություն: Այս ամենով հանդերձ ժամանակակից հայերենի բառակազմության քննության Մ. Աբեղյանի սխեման և տերմինաբանությունը հիմք են ծառայել հետագա գրեթե բոլոր ուսումնասիրությունների համար ավելի քան չորս տասնամյակների ընթացքում, զարգացվել ու ճշգրտվել են այլ հետազոտողների կողմից: Պատմական մոտեցումը առանձնապես հատուկ է Գ. Սևակին: Նա նույնիսկ գտնում է, որ «լեզվի տեսությունը, բացի նկարագրությունից, որը գերիշխում է մանավանդ դպրոցական քերականության մեջ, կատարում է նաև պատմական ու համեմատական ուսումնասիրություններ»[16]: Ելնելով այդ սկզբունքից, Գ. Սևակը մեծ տեղ է հատկացնում «բառակազմական տեխնիկայի զարգացման փուլերին», առանձնացնելով «0. հնչյունափոխության միջոցով արմատներ ստեղծելու, ա. նույն արմատի կրկնությամբ բարդ բառեր ստեղ-



ծելու, բ. հարադրական ու կցական բարդությունների, գ. իսկական բարդությունների, դ. ածանցումների փուլերը»: Մանրամասն ներկայացնում է նաև ածանցների ծագման հնարավոր ուղիները՝ արմատի իմաստի մթագնում, հոլովի իմաստի մթագնում, արմատների հնչյունափոխություն: Գալով բուն բառակազմական համակարգի նկարագրությանը, Գ. Սևակը բառերն ըստ կազմության բաժանում է հետևյալ խմբերի՝ ա) պարզ կամ արմատական, բ) ածանցավոր, գ) բարդ, դ) բարդ ածանցավոր: Բառակազմական եղանակներ են դիտվում բարդությունը (բառաբարդում), ածանցումը և հապավումը, որի առաջին համակողմանի նկարագրությունը տվել է ինքը՝ հեղինակը: Բարդությունների մեջ Գ. Սևակն առանձնացնում է երկու տեսակ՝ անիսկական և իսկական: Իսկական բարդությունների համար նա պահպանում է աբեղյանական ըմբռնումը, իսկ անիսկականները բաժանում է կրկնավոր, հարադրական, բաղհյուսական և կցական տեսակների: Հետագայում, սակայն, «անիսկական բարդություններ» տերմինը ենթարկվում է քննադատության, և հետազոտողները հանգում են բարդությունների երկու հիմնական կառուցվածքային տիպեր՝ հարադրական և համադրական բարդություններ առանձնացնելու մտքին[17]:

Բարդությունների կառուցվածքաիմաստային դասակարգման այդ սկզբունքը (բաղադրիչների միացման ձևի և նրանց իմաստային ինքնուրույնության աստիճանի հաշվառման) կիրառված է մանավանդ «Ժամանակակից հայոց լեզու»[18] ակադեմիական քերականության մեջ, որի «Բառակազմություն» բաժինը (հեղ.՝ Ս. Ա. Էլոյան) ժամանակակից հայերենի բառակազմության ամենաընդարձակ ու ամբողջական նկարագրությունն է:

Աշխատության մեջ առանձնացվում են բառակազմական երեք եղանակ՝ բառաբարդում, հապավում և ածանցում: Բարդությունները, ինչպես նշվեց, բաժանվում են հարադրականների (անվանական ու բայական) և համադրականների (կցական ու իսկական): Կցական բարդությունները քննվում են դարձյալ ըստ նրանց առաջացման ուղիների (արմատի կրկնություն, հարադրական բարդությունների և շարահյուսական կապակցությունների սերտաճում), իսկական բարդությունները՝ ըստ բաղադրիչների կցման եղանակի (հոդակապով և անհոդակապ) և նրանց շարահյուսական հարաբերությունների: Ածանցման քննությունը հանգում է ածանցների դասակարգմանը տարբեր հայեցակետերից (ըստ բառակազմական գործառույթի, կազմության, դիրքի, իմաստի և ձևի փոխհարաբերության, գործածության հաճախականության, խոսքի մասեր կերտելու արժեքի): Հիմնականում հետևելով Մ. Աբեղյանի մշակած սկզբունքներին՝ հեղինակը

բերում է և նորություններ, որոնք պայմանավորված են մասամբ արդի հայերենի բառակազմական համակարգի զարգացումով, մասամբ նյութի նոր մեկնաբանմամբ։ Այսպես, մանրամասն ներկայացվում են հապավումների նոր տարատեսակությունները, նորագույն փոխառյալ բաղադրիչներով (հիդրո-, միկրո-, մոտո-, ռադիո- և այլն) կազմությունները, համադասական և ստորադասական նոր տիպի (արտադրական-ճյուղային, տուն-թանգարան, մարդ-քաղաքացի) հարադրությունները, ուշադրություն է դարձվում նախկին արմատական ձևույթներից նոր ածանցների առաջացմանը (-գործ, -վար, -որակ, -բան և այլն), ածանցների գործառական բեռնվածության և գործունության ընդարձակմանը և նոր ձևավորվող այլ երևույթների։ Այսպիսով, ոչ միայն ներկայացվում է ժամանակակից հայերենի բառակազմական համակարգը, այլև նշվում են նրա տեղաշարժերն ու փոփոխությունները։

Արդի հայերենի բառակազմության զարգացման ընթացքի մեջ է դիտարկվում նաև մի շարք հետազոտություններում՝ կապված բառապաշարի զարգացման ընդհանուր խնդիրների քննության հետ[19]։ Այս առումով հատկապես ուշագրավ է Ս. Գ. Աբրահամյանի «Ժամանակակից հայերենի բառակազմական օրինաչափությունների զարգացման միտումները» հոդվածը, որտեղ հեղինակը քննում է «այն տեղաշարժերը, որոնք նկատվում են բառակազմության տեսակների, բաղադրյալ բառերի բաղադրիչների հարաբերության, բաղադրիչների բնույթի ու քանակի և նրանց կապակցման եղանակների ու միջոցների միջև»[20]։

Տարբերակելով բառերի բաղադրման երկու եղանակ՝ փոխանցումային (բառերի կապակցության կամ քերականական ձևի վերածում բառական նոր միավորի) և կաղապարային (բառերի ստեղծում արդեն լեզվում առկա կաղապարների հիման վրա), հեղինակը գտնում է, որ հայերենի զարգացման ներկա փուլում բացարձակ գերակշռություն է ձեռք բերել երկրորդ եղանակը։ Ս. Աբրահամյանը նշում է մի շարք նոր տիպի բազմաբաղադրիչ թե՛ համադրական, թե՛ վերլուծական բարդությունների, հապավված ու գեղչված բաղադրիչներով կառույցների լայն տարածումը, սահմանում այսպես կոչված «պայմանականության» սկզբունքը, որի համաձայն բարդ բառերի ներքին ձևը և նրանց բառակազմական իմաստը շատ ավելի հարուստ են, քան այն կարող է արտահայտել բաղադրիչների առկա կազմը (օր.՝ քիմիագործ «քիմիական արդյունաբերության բնագավառում աշխատող»), քննարկում բառապատճենման ու տերմինաստեղծման հետ կապված հարցեր։ Բառերի կազմավորման վերը նշված կաղապարային և փոխանցումային եղանակներն ավելի մանրամասն ներկայացվում են հեղինակի «Ժամանակակից գրական հայերեն»[21] աշխատության մեջ, որտեղ կաղապարային եղանակին են դասվում հիմքամիացումը (հարթ+ա+վայր), ածանցումը (դարձ+ույթ), հապավումը (ՍՍՀՄ) և կիսահարադրումը (կիլովատտ-ժամ)։ Փոխանցումային եղանակը ստորաբաժանվում է բառակապակցականի (տան+տեր) և բառաքերականականի (նկատմամբ)։ Սակայն արդի հայերենի բառակազմական համակարգը ներկայացվում է ոչ ըստ նշված եղանակների, այլ ավանդաբար ընդունված սկզբունքով՝ բառաբարդում, ածանցում, հապավում, թեև նյութի դասակարգման ու ներկայացման ժամանակ հեղինակն անում է մի շարք ուշագրավ ճշգրտումներ և լրացումներ։ Այսպես, նա խոսում է բառերի բաղադրիչների կցման հաջորդականության մասին, որի որոշման համար կիրառում է անմիջական բաղադրիչների մեթոդը, հարադրական կազմությունների մեջ առանձնացնում է բուն հարադրական և կիսահարադրական (բաղադրիչների համեմատաբար սերտ միացումով) տեսակները, խոսելով բառակազմական հիմքի մասին՝ հանգամանորեն ներկայացնում է բառածանցական հիմքերը և այլն։

Բառակազմության հարցերին զգալի տեղ է հատկացված նաև Ա. Մ. Սուքիասյանի «Ժամանակակից հայոց լեզու»[22] բուհական ձեռնարկում, որտեղ քննվում են արդի հայերենի հնչյունաբանությունը, բառաքննությունը, բառակազմությունը, դարձվածաբանությունը, ինչպես նաև ներկայացվում են հայ բառարանագրության նվաճումներն ու արդի վիճակը։ Նախքան բուն բառակազմական համակարգի նկարագրությանն անցնելը (որը նույնպես ներկայացվում է ավանդական սխեմայի համաձայն՝ բարդություն, ածանցում, հապավում), հեղինակը կանգ է առնում արդի բառակազմագիտության մի շարք նոր և արդյունավետ հասկացությունների պարզաբանման վրա, ինչպիսիք են բառերի ձևույթային և բառակազմական վերլուծությունների տարբերակումը, բառի կառուցվածքային-ձևույթային բանաձևերի կազմումը, բառակազմական միավորների տարբերակային ձևերի առանձնացումը և այլն։ Ա. Սուքիասյանը նույնպես, թերևս աշխատության ուսումնական բնույթից ելնելով, անդրադառնում է բաղադրյալ բառերի առաջացման պատմությանը, քննում է այնպիսի միջոցներ, ինչպիսիք են ձայնդարձը, աճականը, որոնք բառակազմական արժեք են ունեցել խոր անցյալում և ժամանակակից հայերենում այլևս ոչ մի դեր չեն խաղում։ Ածանցների քննության ժամանակ ևս հեղինակը նշում է նրանց առաջացման հնարավոր ուղիները։ Ա. Սուքիասյանը արդի հայերենի բառակազմական համակարգը ներկայացնում է բավական մանրամասն, ընդունված ձևով առանձնացնելով բարդություն-

ների տեսակներն ու ենթատեսակները ըստ բաղադրիչների կազմի ու կցման եղանակի, խոսքիմասային պատկանելության, շարահյուսական հարաբերությունների և այլն։ Ածանցները նույնպես քննվում են տարբեր հայեցակետերից՝ ըստ դիրքի, ծագման, իմաստային առանձնահատկությունների, բառակազմական գործունության, ինչպես նաև տարբեր խոսքի մասեր կերտելու ունակության։ Որպես աշխատության առավելություն պետք է նշել, որ այն հագեցած է փաստական հարուստ նյութով։

Ժամանակակից հայերենի բառակազմական համակարգի նկարագրության ավանդական (որոշ վերապահությամբ կարող ենք ասել՝ աբեղյանական) ուղղության զարգացման բարձրակետն ու ամփոփումը կարելի է համարել Է. Բ. Աղայանի «Ընդհանուր և հայկական բառագիտություն» աշխատությունը, որը յուրահատուկ հանրագումարն է նաև հեղինակի՝ այդ բնագավառում կատարած աշխատանքների։ Չնայած համեմատաբար փոքր ծավալին, աշխատության մեջ համակողմանիորեն քննարկվում են ինչպես ընդհանուր, այնպես էլ հայ բառագիտության, բառային իմաստաբանության, բառային կազմի, բառապաշարի՝ մասնավորապես տերմինաբանության զարգացման ուղիների և այլ կարևոր հարցեր։ Ինչ վերաբերում է բառակազմությանը, ապա նյութի նոր և անհակասական դասակարգմամբ, արդի հայերենի բառակազմության քննության պատմական և համաժամանակյա հայեցակետերի հստակ տարբերակմամբ, բառերի բաղադրման եղանակների ու տիպերի ընդհանրացված ու միասնական քննությամբ, ինչպես նաև հայ բառակազմագիտության մեջ մի շարք նոր հասկացությունների ներմուծումով հեղինակի նշված աշխատությունը դառնում է արդի հայերենի բառակազմական համակարգի բարդ պատկերը նորովի ներկայացնող մի ամփոփ, բայց ամբողջական ուսումնասիրություն։

Ամենից առաջ Է. Աղայանը ժամանակակից հայերենի բաղադրյալ բառերը ըստ կառուցվածքային հատկանիշի բաժանում է վերլուծական, համադրական և հապավական տիպերի (նկատենք, որ եթե առաջին երկուսի դեպքում անվանման հիմքը բաղադրիչների կցման եղանակն է, ապա վերջին՝ հապավական բաղադրիչների դեպքում նկատի է առնվում բուն բաղադրիչների կառուցվածքային առանձնահատկությունը)։ Այնուհետև յուրաքանչյուր տիպի մեջ ըստ բաղադրիչների կառուցվածքի, կազմի և փոխհարաբերության առանձնացվում են համապատասխան ենթատիպեր։ Այսպես, վերլուծական բաղադրությունները բաժանվում են՝ 1. հարադրությունների, 2. կրկնավորների կամ բառակրկնությունների,



3. կայուն բառակապակցությունների և 4. հատվածական բաղադրությունների՝ իրենց ներքին տարատեսակություններով հանդերձ։

Համադրական տիպի մեջ ըստ բաղադրիչների ձևույթային կազմի առանձնացվում են բարդությունների և ածանցավոր բառերի ենթատիպերը։ Այսպիսով, հայերենի բառակազմության երկու հիմնական եղանակները՝ բառաբարդումն ու ածանցումը ներկայացվում են մեկ միասնական համակարգի մեջ, որպես բառակազմության համադրական տիպ, ընդ որում, ի տարբերություն նախորդ հետազոտողների, Է. Աղայանը բարդություն է համարում արմատների կամ բառերի ոչ ամեն կարգի բաղադրություն, այլ միայն այն բառերը, «որոնք ներկայացնում են երկու կամ ավելի հիմնական ձևույթների միավորումը մեկ բառում»[23]։ Այդպիսի մոտեցումը հնարավորություն է տալիս հեղինակին մի կողմից՝ բաղադրյալ բառերի ամբողջության մեջ առանձնացնելու կառուցվածքային տիպեր (վերլուծական և համադրական) և շեշտելու նրանց էական բառակազմական տարբերությունը՝ բարդություն համարելով միայն համադրականները, մյուս կողմից՝ որպես բառակազմական իրողություններ դիտելու այնպիսի կառույցներ, ինչպիսիք են կայուն կապակցությունները (գլուխ գործոց, ամեն ինչ, կրակի կտոր), որոնք մեկ բառի արժեք ունեցող բաղադրություններ են, բայց ոչ բարդություններ։

Բարդությունները բաժանվում են դարձյալ չորս տեսակի՝ 1. բուն կամ իսկական, 2. կցական կամ կապակցական, 3. կրկնական և 4. հատվածական։ Պահպանելով Մ. Աբեղյանի «իսկական բարդություն» տերմինը, Է. Աղայանը նշում է, սակայն, որ գերադասում է «բուն բարդություն» անվանումը, քանի որ առաջին տերմինը կենթադրեր նաև «անիսկական բարդությունների» գոյությունը, մինչդեռ ըստ հեղինակի՝ «բոլոր կարգի բարդություններն էլ իսկական են հենց նրանով, որ համադրական բաղադրություններ են՝ կազմված երկու կամ ավելի ձևույթների միավորումով»[24]։

Համադրական բաղադրությունները ներկայացնելուց առաջ Է. Աղայանը խոսում է նրանց կառուցվածքային տարրերի՝ բաղադրական հիմքերի, հիմնական և երկրորդական ձևույթների, կառուցվածքային-գործառական տարրերի՝ հոդակապերի մասին։ Այստեղ հետաքրքրական է սերող և բաղադրող հիմքերի տարբերակումը. «Սերող է այն բաղադրական հիմքը, որին ավելանում է որևէ այլ բաղադրական հիմք կամ ածանց՝ կազմելով նոր բառ»[25], իսկ «բաղադրող հիմքը բառի այն մասն է, որ ավելանում է սերող հիմքին և կազմում նոր բաղադրություն»[26], ըստ այդմ բարդ բառի առաջին բաղադրիչը սերող հիմքն է, երկրորդը՝ բաղադրող։

Ածանցավոր բառերն ունեն միայն սերող հիմքեր, անկախ ածանցի դիրքից։ Ածանցները որպես երկրորդական ձևույթներ տարբերակվում են բաղադրական հիմքերից, թեև տեսականորեն հեղինակը հնարավոր է համարում դրանք ևս կոչել հիմքեր, ելնելով հիմքերի իր առաջարկած սահմանումից՝ «բաղադրական հիմք է կոչվում համադրական բաղադրության երկու մասերից յուրաքանչյուրը»[27]։

Համադրական բաղադրությունների մյուս ենթատիպը՝ ածանցավոր բառերը, քննվում է ըստ ածանցների դիրքի, նրանց գործառական ու ձևաիմաստային առանձնահատկությունների։

Հապավական բաղադրությունները դասակարգվում են ըստ բաղադրիչների (հեղինակի տերմինով՝ հապավույթների) կազմի ու արտահայտման ձևի և ըստ բառային արժեքի։

Այսպիսով, տրվում է ժամանակակից հայերենի բառային մակարդակում հնարավոր բոլոր տիպի բաղադրությունների դասակարգումը, թեև բառակազմական առանձին տարրերն ու նրանց բաղադրման բոլոր եղանակները մանրամասնորեն չեն ներկայացվում աշխատության ընդհանուր բնույթի և սեղմության պատճառով։

Արդի հայերենի բառակազմությունը ուրույն մոտեցումով է քննում Գ. Բ. Ջահուկյանը իր «Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները» աշխատության մեջ։ Ամենից առաջ այն չի առանձնացվում որպես առանձին մակարդակ, այլ ներկայացվում է մասամբ ձևաբանության մեջ՝ բառերի խմբերի և կազմության վերլուծության ժամանակ, մասամբ էլ փոխկաղապարման երևույթի քննության մեջ՝ որպես խոսքի մասերի փոխակերպման միջոց։ Բացի այդ, հեղինակն անդրադառնում է միայն ածանցմանը, քանի որ վերջինս, բացի բուն բառակազմական արժեքից, մեծ դեր է խաղում խոսքի մասերի կերտման մեջ։ Այն ածանցները, որոնք բառեր են կերտում միևնույն խոսքի մասի սահմաններում (գոյականից գոյական, ածականից ածական), քննվում են համապատասխան խոսքի մասի նկարագրության ժամանակ։ Փոխակերպող արժեք ունեցող ածանցները ներկայացվում են հիմնականում բայի փոխակերպումների հետ կապված՝ 1. բայի գոյականական փոխակերպում կամ գոյականացում. ածանցներն են՝ -ում, -ություն (-ողություն), -յուն, -ոց (դղրդյուն, դղրդոց), -մունք (համոզմունք), -անք (խնդրանք), -ույթ (ելույթ), -ք (վազք) և այլն, 2. բայի ածականական փոխակերպում կամ ածականացում. ածանցներն են՝ ան-, տ- (անդարձ, տհաս), -իչ, -ող (ապականիչ, ապականող), -ական (աղերսական), -արար (կործանարար), -իկ (ազդեցիկ, բացառիկ), -կոտ (բարկացկոտ), -ու (հատու), -ուկ (դիպուկ), -ուն (գնա-



յուն) և այլն, 3. բայի մակբայական փոխակերպում կամ մակբայացում. ածանցներն են՝ -անակի (փութանակի), -լիս (մնալիս, մոտենալիս), -աբար (պատահաբար)։ Գոյականի բայական փոխակերպումը կամ բայացումը կատարվում է՝ 1. բուն բայական -ել, -անալ ածանց-վերջավորություններով (պարապ–պարապել, կղզի–կղզիանալ) և 2. լրացուցիչ ածանցական մասնիկներով, որոնք բաղադրվում են -ել բայածանցի հետ՝ -արկել (գործարկել), -ավորել (սարքավորել), -ացնել (ավտոմատացնել)։ Նշվում են նաև թվականների գոյականացման, ածականների մակբայացման և այլ դեպքեր։

Գ. Ջահուկյանը որոշում է ժամանակակից հայերենի ածանցավոր բառերի կառուցվածքային ամենաբազմանդամ կաղապարի բանաձևը՝ $(((a+)b+)b_1+)A(+c(+d(+e)))$, որը «կարող է ունենալ մասնակի դրսևորումներ՝ ըստ A-ի խոսքիմասային պատկանելության և ածանցների բնույթի ու շարադասության՝ հայերենին բնորոշ առանձնահատկությունների»[28]։ Ըստ հիմքի միմյանց նկատմամբ դրված դիրքի ածանցները բաժանվում են վեց կարգի, և կազմվում է նշված լիակաղապարի մասնավոր իրացումների աղյուսակը՝ հիմքի և ածանցների տարբեր կարգերի հնարավոր զուգորդությունների համաձայն։

Բառային մակարդակի բաղադրյալ կազմությունների նկարագրության՝ Գ. Ջահուկյանի առաջադրած «փոխկաղապարման» մեթոդը ավելի խորացված և հետևողականորեն կիրառվում է նրա «Ժամանակակից հայերենի իմաստաբանություն և բառակազմություն» աշխատության մեջ[29], որը կառուցված է հեղինակի մշակած համընդհանուր լեզվաբանական տեսության (ՀԼՏ) և համընդհանուր լեզվաբանական կաղապարի (ՀԼԿ) հիման վրա և, ինչպես նշվում է առաջաբանում, նպատակ ունի «մի կողմից՝ պարզել, թե ինչ հնարավորություններ ունեն և ինչ չափով են իրենց արդարացնում համընդհանուր տեսության մշակած կաղապարները կոնկրետ կիրառության մեջ, մյուս կողմից՝ տալ ժամանակակից հայոց լեզվի բառակազմության և բառակազմական իմաստաբանության ամբողջական շարադրանքը տեսական միասնական սկզբունքների հիման վրա»։ Գիրքը կազմված է երկու հիմնական բաժնից՝ «Արմատագիտություն», որտեղ քննվում են արմատները և այսպես կոչված արմատահիմքերը (բառակազմության մեջ հանդես եկող սկզբնային հիմքերը), և «Բառակազմություն», որը նվիրված է բաղադրյալ բառերի քննությանը՝ իրենց արտահայտության և բովանդակության պլաններով։ Ներածության մեջ տրվում է ժամանակակից իմաստաբանական ուսմունքների համառոտ տեսությունը, ներկայացվում է հեղինակի մշակած համընդհանուր լեզվաբանական կա-

ղապարը, նշվում նրա երկրորդ[30] և ներկա՝ երրորդ խմբագրությունների մեջ կատարված ճշգրտումները, ներմուծված նոր գաղափարներն ու տերմինային համակարգը։ Վերջնական տեսքով ՀԼԿ-ն ներկայանում է որպես սկզբնական համակարգված հասկացությունների (կարգերի) մի ամբողջություն (8 գոյորոշ և 8 առգոյորոշ կարգեր, յուրաքանչյուրը 6-ական եզրով), որը հնարավորություն է տալիս միասնական սկզբունքներով բնութագրելու ցանկացած լեզվական օբյեկտ՝ իր բովանդակության և արտահայտության պլաններով։ Հեղինակը ճշգրտում է նաև լեզվական մակարդակների իր դասակարգումը, համապատասխանաբար նշելով յուրաքանչյուր մակարդակի և ենթամակարդակի հիմնական միավորները և դրանք ուսումնասիրող լեզվաբանական բաժինները։ Ըստ համընդհանուր լեզվաբանական հարաբերակցության սկզբունքի լեզվական մակարդակ կարող են ստեղծել միայն երկպլանային (թե՛ արտահայտության, թե՛ բովանդակության պլան ունեցող) միավորները։ Ըստ այդ դասակարգման արմատներն ու արմատահիմքերը դիտվում են որպես առաջին արմատային մակարդակի I և II ենթամակարդակների միավորներ, բառակազմությունը դիտվում է որպես բառագիտության առաջին ենթամակարդակ, իսկ ժամանակակից հայոց լեզվի բառապաշարը՝ որպես 1) արմատական ձևույթների, 2) ածանցական ձևույթների և 3) նրանց զանազան համակցությունների ամբողջություն։

«Արմատագիտության» մեջ Գ. Ջահուկյանը տալիս է արմատի և արմատահիմքի հնչյունական և վանկային կառուցվածքի կաղապարները, այնուհետև ժամանակակից հայերենի արմատները (խմբավորելով դրանք ըստ խոսքիմասային պատկանելության) վերլուծում ըստ իմաստային հատկանիշների՝ ՀԼԿ-ի կարգերի և եզրերի համաձայն։

Բուն բառակազմությանն անցնելով, Գ. Ջահուկյանը քննում է բառակազմական հիմքի և բառակազմական հարացույցի հասկացությունները (տարբերակելով դրանց լայն և նեղ ըմբռնումները), խոսում է բառակազմության քննության ստատիկ և դինամիկ մոտեցումների մասին և կատարում տերմինային ճշգրտումներ, մասնավորապես, բարդ բառերի սերման ընթացքը կոչելով բարդում, ածանցավոր բառերի սերման ընթացքը՝ ածանցում, երկու պրոցեսը միասին՝ բառաբաղադրում։ Ժամանակակից հայերենի բառակազմությունը քննվում է դինամիկ մոտեցմամբ ըստ երկու հիմնական եղանակների՝ ածանցման և բարդման, տրվում են դրանց տիպերը ըստ համընդհանուր լեզվաբանական տեսության։ Բառածանցման քննության մեջ բերվում է ընդհանրացված կաղապարը և տրվում են խոսքիմասային մասնակաղապարները, ընդ որում, տարբե-



րակվում են համասեռ և տարասեռ կաղապարներ, ըստ այնմ, համընկնո՞ւմ է արդյոք ածանցի գործառական արժեքը ածանցյալի խոսքիմասային պատկանելությանը, թե ոչ (օր. գոյական+գոյականակերտ ածանց կամ գոյական+այլ խոսքի մաս կերտող ածանց)։ Առաջին դեպքում ածանցներն ունեն գերազանցապես իմաստափոխական, երկրորդ դեպքում՝ գործառական-փոխանցական արժեք։

Բարդության տիպերի մեջ ըստ բաղադրիչների նույնության առանձնացվում են կրկնավորներ և տարաբաղադրիչ բարդություններ, ըստ բարդության բաղադրիչների՝ միմյանցից ունեցած կախման բնույթի՝ ստորադասական և համադասական, ընդ որում, հաշվի է առնվում կախյալ և լրացյալ անդամների դիրքը։ Ստորադասական բարդությունների մեջ առանձնացվում են համադրական և վերլուծական ձևեր։ Բառաբարդման պրոցեսների նկարագրության մեջ հեռանկարային է բառակապակցությունների ու բարդությունների կառուցվածքային կաղապարների համեմատության և փոխկաղապարման երևույթների քննությունը, որ կարող է հետագա ավելի մանրակրկիտ ուսումնասիրությունների սկիզբ դնել։

Բառակազմության առանձին ենթահամակարգերին նվիրված կարևոր աշխատություններից պետք է հիշատակել Ս. Գալստյանի «Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում» մենագրությունը, որտեղ տրվում է ածանցման համաժամանակյա կառուցվածքային նկարագրությունը։ Գտնելով, որ յուրաքանչյուր լեզվի բառակազմությունը ընդհանուր գծերով արտացոլում է այդ լեզվի բառահարաբերությունները, և բարդ ու ածանցավոր բառերից շատերի մեջ այս կամ այն կերպ «արտահայտվում են երբեմնի առանձին բառերի զանազան կապակցությունները»[31], հեղինակը, նախքան ուսումնասիրության բուն նյութին անցնելը, համառոտ կերպով ներկայացնում է ժամանակակից հայերենի բառակապակցությունների հիմնական տեսակները, և, որ ավելի կարևոր է, բառաբարդման պարզագույն բաղադրության (երկու արմատների միացումից ստացված իսկական բարդության) կառուցվածքային կաղապարները՝ ըստ բաղադրիչների խոսքիմասային պատկանելության։ Այնուհետև տրվում են ածանցավոր պարզագույն կառույցների (մեկ արմատի ու մեկ ածանցի զուգորդումների) կաղապարները նույն սկզբունքով՝ արմատի խոսքիմասային պատկանելության և ածանցի՝ տվյալ խոսքի մասը կերտելու ունակության։ Ի տարբերություն նախորդ հետազոտողների, որոնք ածանցման քննությունը սահմանափակում էին բուն ածանցների դասակարգմամբ (թեկուզև մանրամասն ու բազմակողմանի), Ս. Գալստյանը քննությունը ծավալում է ածանցական կաղապարների բացահայտման ուղղությամբ,

ուշադրություն դարձնելով հիմքի կազմությանը և տվյալ ածանցի զուգորդելիությանը հիմքի տարբեր տիպերի ու այլ ածանցների հետ, թեև արտաքուստ նույնատիպ են ընդունվում դարձյալ առանձին ածանցները: Յուրաքանչյուր ածանց բնութագրվում է ըստ այն կաղապարների, որոնցում հանդես է գալիս, այնուհետև՝ ըստ բառակազմական նշանակության, նախադիրք հիմքի և հիմքակազմության ընդհանուր առանձնահատկությունների, գործունության ասպիճանի ու գործառության շրջանակների[32]: Բայերը, որպես բառակազմական ուրույն կաղապարի արտահայտություն, քննվում են առանձին: Հատուկ ուշադրություն է դարձվում նաև ածանցների հոմանշությանը և նրանց հոմանշային շարքերին ժամանակակից հայերենում: Աշխատության մեջ կիրառվում է անմիջական բաղադրիչների մեթոդը, որի օգնությամբ պարզվում են բառակազմական նվազագույն միավորները, այնուհետև ներկայացվում են կաղապարները՝ բաղադրիչների աստիճանական հավելման սկզբունքով: Ածանցների գործունությունը քննվում է քանակական հետազոտությունների տվյալների հիման վրա: Ս. Գալստյանի աշխատությունը կարևոր նշանակություն ունի ժամանակակից հայերենի ածանցման համակարգի պարզման, ածանցական կաղապարների որոշման, ածանցների դասակարգման ու նրանց բառակազմական իմաստների բացահայտման տեսակետից:

Արդի հայերենի բառակազմական իրողություններն արտացոլված են նաև մի շարք այլ աշխատություններում[33], որտեղ հեղինակներն անդրադարձել են այդ հարցերին, իրենց հետազոտական այլևայլ խնդիրների հետ կապված, ինչպես, ուսումնասիրվող միավորի՝ խոսքի մասի կամ նրա ձևաիմաստային որևէ խմբի բառակազմական կողմի քննություն, բառի ձևույթային կազմի վերլուծություն, բառակազմական կաղապարների կամ իմաստների տիպաբանական-զուգադրական քննություն և այլն, որոնք մեր հետազոտության առարկայի հետ միայն մասնակիորեն և միջնորդված կերպով են կապվում, հետևաբար այդ աշխատությունների մանրամասն քննարկումը մեր նպատակներից դուրս է: Սակայն, որպես ընդհանուր դիտարկում, պետք է նշել, որ հայերենի բառակազմության ուսումնասիրման պատմությունն ընթացել է նյութի ավելի ու ավելի լայն ընդգրկման, դասակարգումների ճշգրտման ու խորացման, հետազոտության օբյեկտի ավելի խիստ սահմանազատման, նյութի քննության պատմական ու համաժամանակյա հայեցակետերի տարբերակման, հետազոտական մեթոդների կատարելագործման, բառակազմագիտական նոր հասկացությունների ներմուծման և ընդհանրապես արդի լեզվաբանության տվյալ բնագավառի նվաճումների ստեղծագործական յուրացման ուղղությամբ:



Ինչ վերաբերում է ժամանակակից բառակազմության տեսությանն ընդհանրապես, ապա նրա պրոբլեմատիկան ձևավորվել է մի կողմից՝ լեզվական մակարդակների մեջ նրան համապատասխան տեղի որոնումների, մյուս կողմից՝ բառակազմության, որպես լեզվական առանձնահատուկ ենթահամակարգի, հիմնական միավորների առանձնացման փորձերի մեջ:

Առաջ են քաշվել բառակազմության բնագավառի այնպիսի հասկացություններ, որոնք անծանոթ էին ավանդական լեզվաբանությանը:

Հատկապես կարևոր է նշել «բառակազմական տիպ», «բառակազմական բույն», «բառակազմական կարգ» (ի հակադրություն քերականական կարգի), «բառակազմական հարացույց» հասկացությունները, որոնց առաջացման և իմաստների հետագա ճշգրտման ու հստակեցման գործում առանձնապես մեծ ջանքեր են գործադրել սովետական լեզվաբանները: Ի դեպ, պետք է նշել, որ բառակազմության հարցերն ամբողջությամբ վերցրած ավելի վաղուց են եղել ռուս և սովետական լեզվաբանության ներկայացուցիչների ուշադրության կենտրոնում, մինչդեռ արտասահմանյան լեզվաբանները այդ հարցերը բավարար խորությամբ սկսել են քննել վերջին մի քանի տասնամյակում[34]:

Բառակազմությունը որպես ինքնուրույն գիտաճյուղ առանձնացնելու մեծապես նպաստեց նրա հետազոտության հիմնական միավորի սահմանազատումը: Լեզվաբանների մեծագույն մասը այն կարծիքին է, որ բառակազմության հիմնական միավորը բաղադրյալ բառն է: Այդ միավորի հատկանիշներն ամբողջությամբ չեն կարող քննվել լեզվաբանական հետազոտության որևէ այլ բնագավառում, որով և արդարացվում է բառակազմության ինքնուրույն գիտաճյուղ լինելը: Պետք է սակայն նշել, որ, բացի բառակազմության հիմնական միավորից, առանձնացվում են նաև այլ կարգի միավորներ, ընդ որում այդ հարցի մասին լեզվաբանների կարծիքները միասնական չեն: Առարկություն չի հանդիպում բառակազմության նվազագույն միավորների՝ ածանցների և զանազան այլ ձևույթների (հոդակապեր, հիմքակազմ տարրեր, ձևորդներ և այլն) առանձնացումը: Որոշ հետազոտողներ առանձնացնում են նաև ավելի բարդ միավորներ, ինչպես նշվեց վերը, նրանք քննության նյութ են դարձնում բառակազմական բույնը և հատկապես բառակազմական հարացույցը: Վերջինիս առանձնացումը հենվում է ձևաբանական հարացույցների համաբանության վրա: Բառակազմական հարացույց ասելով հասկանում են միևնույն բառակազմական հիմքից (բաղադրող կամ բաղադրելի հիմք) առաջացած բառերի ամբողջությունը:

Քանի որ բառակազմական միավորը ներառում է այնպիսի հատկանիշներ ու գծեր, որոնք հատուկ են նաև լեզվական հիմնական մակարդակների միավորներին, ուստի բառակազմագիտությունը սերտորեն առնչվում է լեզվաբանական այնպիսի գիտաճյուղերին, ինչպիսիք են՝ քերականությունը (ինչպես ձևաբանությունը, նույնպես և շարահյուսությունը), իմաստաբանությունը, հնչույթաբանությունն ու ձևահնչույթաբանությունը։

Հատկապես արդյունավետ են եղել բառակազմության և ձևաբանության հետաղոտման բնագավառների առանձնացման ու նրանց մասնավորեցման ուղղությամբ տարվող աշխատանքները։

Բացի այդ առանձնացվել է բառի կազմության քննության երկու հիմնական բնագավառ՝ բուն բառակազմություն, որն զբաղվում է նոր բառերի կերտման միջոցների ու կաղապարների քննությամբ, և բառի ձևաբանական կառուցվածքի քննություն, որն ուսմունք է բառի տրոհելիության, նրա մեջ բառակազմական նվազագույն միավորներ (տվյալ դեպքում՝ ձևույթներ) առանձնացնելու հնարավորության մասին։ Այս երկու ուղղությամբ տարվող ուսումնասիրությունները զգալիորեն նպաստեցին բառի ձևույթային և բառակազմական կառուցվածքների մանրակրկիտ հետազոտությանը[35]։

Ավելի մեծ կարևորություն է ներկայացնում բառակազմական իմաստաբանության առաջացումը. ուսումնասիրողներն սկսեցին հատուկ ուշադրություն դարձնել տրոհվող միավորների իմաստային հատկանիշներին։ Ավելին, առաջարկվեց «բառակազմական իմաստ» հասկացությունը։ Մասնավորապես, բաղադրվող բառի մեջ բաղադրիչների կապակցելիության հնարավորություններն սկսեցին ուսումնասիրվել ոչ միայն ձևական, այլև իմաստային տեսակետից[36]։

Մեր նպատակը չհամարելով ներկա աշխատության մեջ տալ ժամանակակից բառակազմության տեսական խնդիրների ու պրոբլեմների սիստեմատիկ շարադրանքը, նշենք, որ գրաբարի բառակազմության քննության ընթացքում յուրաքանչյուր կոնկրետ դեպքում մենք կանդրադառնանք այս կամ այն հարցի առթիվ արտահայտված առավել ուշագրավ տեսակետներին։

## ՆՅՈՒԹԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՈՒ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Ներկա աշխատությունը նպատակ ունի տալու գրաբարի բառակազմական համակարգի ամբողջական նկարագրությունը։ Ուսումնասիրությունը հենվում է V դարից մեզ ավանդված մատենագրության բառապաշա-



րի վրա, որ համատարած ընտրանքի մեթոդով քաղել ենք Նոր հայկազյան բառարանից[37] (պարզ արմատական բառերից բացի)՝ նկատի ունենալով բերված վկայությունների հեղինակներին։ Ընդգրկված են այն բոլոր աղբյուրները (բնագիր թե թարգմանություն), որոնք հայ բանասիրության մեջ առավել հավաստի կերպով ընդունված է թվագրել V դ.։ Այդ աղբյուրները, ըստ ՆՀԲ-ի վկայությունների, հետևյալներն են.

Աբր. մամկ. «Աբրահամ Մամիկոնեից եպիսկոպոսի «Պատմութիւն ժողովոյն Եփեսոսի»

Ագաթ. Ագաթանգեղոս

Աթ. Աթանաս Աղեքսանդրացի, «Աստուածաբանական ճառք»

Աղեքս. «Պատմութիւն Աղեքսանդրի»

Անյ. Դավիթ Անհաղթ (տարբեր երկերը)

Ածաբ.
Առ ուս. } Գրիգոր Նազիանզացի (ճառեր և քարոզներ)

Ածազգ. «Երեքտասան թուղթք սրյն Իգնատիոսի ածազգեաց Հայրապետին Անտիոքայ»

Արիստ. Արիստոտել

Բրս. Բարսեղ Կեսարացի (ճառեր, թղթեր, մեկնություններ)

Բուզ. Փավստոս Բուզանդ

Գեննադ. «Գեննադայ պատրիարքին յունաց ի Կոստանդնուպօլիս ճառ ի Նինուէացիս»

Գր. Սքանչ. «Ճառք զանազանք սրյն Գրիգորի սքանչելագործի Նէոկեսարիոյ եպիսկոպոսի»

Եզնիկ. Եզնիկ Կողբացի

Եղիշ. Եղիշէ («Վասն Վարդանայ և հայոց պատերազմին», ինչպես նաև այլևայլ ճառեր և մեկնություններ)

Եւագր. Եվագր Պոնտացի

Եւս. պատմ. քր. Եւսեբիոս Կեսարացի (Պատմութիւն եկեղեցական և Քրոնիկոն)

Եփր. Եփրեմ Ասորի (մեկնություններ, ճառեր)

Թղթ. դաշ. «Թուղթ դաշանց»

Թրակ. քեր. Դիոնիսիոս Թրակացի, «Արուեստ քերականութեան»

Իսիւք. «Մեկնութիւն գրոցն Յոբայ յԻսիւքիոսէ երիցուէ Երուսաղեմացւոյ»

Խոր. Մովսես Խորենացի (Պատմությունը և այլ երկեր)

**Կիւրղ.** Կիւրեղ Աղեքսանդրացի (ճառեր և մեկնություններ)

**Կոչ.** «Կոչումն ընծայութեան սբյն Կիւրղի Երուսաղեմացւոյ»

**Կորիւն** «Պատմութիւն վարուց սբյն Մեսրոպայ»

**Մամբրէ** Մամբրէ Վերծանող

**Մանդ.** Հովհան Մանդակունի (ճառեր, քարոզներ, աղոթքներ)

**Մաշտ.** Մաշտոց (ծիսարան)

**Մծբ.** «Սբյն Յակոբայ Մծբնայ հայրապետի ճառք լուսաւորք և հոգե-իցք»

**Յճխ.** Գրիգոր Լուսավորիչ, «Յաճախապատում ճառք»

**Նէղոս.** «Խրատք կամ ճառք սբյն Նէղոսի աբբայի»

**Նիւս.** Գրիգոր Նյուսացի

**Նոննոս**

**Ոսկ.** Յովհան Ոսկեբերան

**Պերիարմ.** «Գիրք Արիստոտելի՝ Պերիարմենիաս»

**Պիտ.** «Գիրք պիտոյից»

**Պորփ.** «Ներածութիւն Պորփիւրի»

**Պռոկղ.** «Պրոկղի եպիսկոպոսի ճառք և ներբողեանք»

**Սահմ.** «Սահմանք իմաստասիրութեան Դաւթի Անյաղթ փիլիսոփայի»

**Սեբեր.** «Սեբերիանոսի եպիսկոպոսի Եմեսացւոյ ճառք վարդապետականք և քարոզականք»

**Վրf. Սեղբ.** «Պատմութիւն սբյն Սեղբեստրոսի Հռովմայ հայրապետի»

**Վեցօր.** «Գիրք վեցօրէից կամ վեցօրեայ արարչութեան Բարսղի Կեսարացւոյ»

**Փարպ.** Ղազար Փարպեցի։

Աստվածաշնչից բերված վկայությունների համառոտագրությունները ՆՀԲ-ում բերվում են ըստ առանձին գլուխների, որ այստեղ ավելորդ ենք համարում նշել։

Քանի որ ՆՀԲ-ի կազմողները միշտ չէ, որ նշում են ավանդված բառի հնագույն վկայությունը, բացի այդ, կարող են լինել դեպքեր, երբ V դարից վկայված բառը ընդհանրապես տեղ գտած չլինի այս բառարանում, անհրաժեշտ ենք համարել նյութը լրացնել Հայկական համաբարբառի տվյալներով, որտեղ լիակատար կերպով ներկայացված է յուրաքանչյուր հեղինակի (տվյալ դեպքում մեզ հետաքրքրող՝ V դ. մատենագիրների) գործածած բառապաշարը։ Ուստի, նույն՝ համատարած ընտրանքի սկզբունքով բառաքաղված են Եզնիկ Կողբացու, Կորյունի, Փավստոս Բուզանդի, Եղիշեի, Մովսես Խորենացու, Ղազար Փարպեցու, Դավիթ Անհաղթի երկերի համաբարբառները[38], ինչպես նաև շատ ավելի վաղ կազմված՝ Աստվածաշնչի համաբարբառը[39]։

Այսպիսով, կազմվել է V դարից գրավոր աղբյուրներով մեզ հասած բաղադրյալ (բարդ և ածանցավոր) բառերի մի քարտարան, որ պարունակում է փոքր-ինչ ավելի, քան 23000 բառ-միավոր։ Կարելի է ասել, որ թեև բառերի այս քանակը լիակատար կերպով չի արտացոլում V դարում գործածված բառապաշարի (տվյալ դեպքում՝ բաղադրյալ բառերի) ողջ հարստությունը (մեծ թվով բառեր բնականաբար մեզ չեն հասել, քանի որ կամ ընդհանրապես գրի չեն առնվել, կամ հետագայում կորստի են մատնվել գրավոր շատ աղբյուրների ոչնչացման հետևանքով), սակայն լիովին բավարար է պատկերացում տալու համար հին գրական հայերենի սկզբնավորման ու զարգացման առաջին շրջանի բառակազմական համակարգի առանձնահատկությունների մասին։ Նշենք նաև, որ V դ. լեզվանյութն ընդգրկված է որպես մեկ ամբողջություն՝ առանց այսպես կոչված «դասական» և «հետդասական» շրջանների ավանդական առանձնացման (ինչպես գիտենք, դասական շրջանի վերջը ավանդաբար համարվում է V դ. 60-ական թթ.), նախ, այն պատճառով, որ այդ ժամանակաշրջանների սահմանազատիչ հատկանիշների հարցը դեռևս վերջնականապես լուծված չէ. պարզվում է, որ այնպիսի երևույթներ, որոնք հատուկ էին համարվում միայն հետդասական շրջանին, իրենց հիմքերն ունեցել են նաև դասական շրջանում[40], բացի այդ, կան հեղինակներ, որոնք ստեղծագործել են և՛ «դասական», և՛ «հետդասական» շրջաններում, բայց աղբյուրների սակավության ու բանասիրական հավաստի տվյալների բացակայության պատճառով հնարավոր չէ ընտրություն կատարել նրանց վաղ և ուշ շրջանի գործերի մեջ։ Այնուհետև, ավանդական շրջանաբաժանմամբ առաջնորդվելու և միայն «դասական» շրջանով սահմանափակվելու դեպքում ստիպված կլինեինք բացառել հունաբան դպրոցի բերած նորությունները և լիակատար պատկերացում չէինք ունենա գրաբարի բառակազմական համակարգի մասին, իսկ այդ շրջաններն առանձին-առանձին նկարագրելու դեպքում կունենայինք երկու առանձին, շատ բաներով իրար կրկնող, բայց ընդհանուր պատկերը չներկայացնող նկարագրություն, քանի որ որքան էլ հունաբան դպրոցի գործունեությունը նորարարական և լեզվաստեղծական համարվի, այնուամենայնիվ, բառակազմության մեջ նրանց բերած նորությունները խարսխվում էին լեզվի ներքին, նրան վաղուց ի վեր հատուկ հնարավորությունների վրա։ Այդ մասին ավելի մանրամասն

կխոսվի ստորև, երբ նյութի նկարագրության ընթացքում անհրաժեշտ տեղեկություններ կտրվեն այս կամ այն բառակազմական կաղապարի ի հայտ գալու կամ աշխուժացման վերաբերյալ, կամ, երբ հատկապես կխոսվի տվյալ բառակազմական միջոցի գործառական բեռնվածության մասին։

Հիշեցնենք նաև, որ «դասական հայերեն» հասկացությունը հիմնականում առաջ է քաշվել հակադրվելու համար V դ. կեսերից (ինչպես ենթադրվում էր այդ ժամանակ) իրենց գործունեությունը ծավալած հունաբան դպրոցի ներկայացուցիչների մշակած լեզվին։ Անտեսվել է այն փաստը, որ հունաբան դպրոցի ծագումից հետո էլ շարունակվել է լեզվի զարգացման բնականոն ընթացքը և գրական լեզվի մշակման նախկին ավանդույթը։ Այնպես որ մենք ավելի շուտ գործ ունենք ոչ թե ժամանակագրական հաջորդականության, այլ միաժամանակ գոյություն ունեցած երկու դպրոցի, գրական լեզվի մշակման երկու ուղղության հետ՝ հունաբան և, եթե կարելի է այսպես կոչել՝ հայկաբան[41]։ Մանավանդ, վերջին շրջանի ուսումնասիրություններից պարզվում է, որ հունաբան դպրոցի գործունեությունն սկսվել է ավելի վաղ, քան ենթադրվում էր մինչ այդ, այսինքն՝ V դարի երկրորդ քառորդում (35—40-ական թթ.)[42]։ Այդ նշանակում է հունաբան և «հայկաբան» դպրոցների ավելի վաղ սկսված և ավելի երկարատև գոյակցություն։ Դրա հետևանքով, բնականաբար, հունաբան դպրոցի մշակած բառակազմական կաղապարներն ու միջոցները, գիտական տերմինաբանությունը ներթափանցել են նաև ընդհանուր գրական լեզվի մեջ, ինչ չի կարելի ասել նրանց ստեղծած արհեստական քերականական ձևերի մասին։

Այսպիսով, բառակազմական վերլուծության է ենթարկվում V դ. մատենագրությամբ մեզ հասած լեզվական նյութը որպես մեկ ամբողջություն։ Այդ նյութը քննվում է հիմնականում համաժամանակյա բառակազմության հայեցակետից, այսինքն՝ փորձ է արվում բացահայտել V դարում գործուն և կենդանի բառակազմական համակարգը։ Որոշ դեպքերում, հատկապես բառերի տրոհելիության քննության և բառակազմական կառուցվածքի բանաձևերի (կաղապարների) կառուցման ժամանակ կիրառվում են նաև տարաժամանակյա բառակազմության սկզբունքները, այսինքն՝ որոշ կազմությունների մեջ կարող են պայմանականորեն առանձնացվել բառակազմական տարրեր, որոնք տվյալ փուլում կորցրել են իրենց գործունությունը, սակայն դեռևս գիտակցվում են որպես տրոհելի միավորներ։



Ներկա աշխատության մեջ, այսպիսով, բառակազմական համակարգի ուսումնասիրության ելակետը V դարի աղբյուրներում վկայված և բառարաններում արձանագրված՝ բաղադրյալ կազմություն ունեցող բառային միավորներն են։ Հետևաբար, գրաբարի բառակազմական առանձնահատկությունների քննության առաջին փուլը V դարի լեզվավիճակում պարզ և բաղադրյալ կազմությունների սահմանազատումն է. այնուհետև, արդեն առանձնացված բաղադրյալ կազմությունների մեջ բառակազմական արժեք ունեցող միավորների որոշումը և նրանց կառուցվածքային ու գործառական առանձնահատկությունների բացահայտումը։ Հաջորդ քայլն, այսպիսով, դառնում է բառակազմական առանձին տարրերի նկարագրությունը։ Այդ կապակցությամբ անհրաժեշտ է նշել հետևյալը։ Ինչպես քերականական կառուցվածքի քննության ժամանակ հետազոտողներն աշխատում են ընդգրկել ձևաբանական միավորների ողջ ինվենտարը, որքան էլ նրանցից մի քանիսը սահմանափակ գործառական բեռնվածություն ունենան (կամ լինեն զարտուղի, անկանոն և եզակի ձևեր), նույնպես պետք է վարվել և բառակազմության քննության դեպքում, ընդգրկելով ոչ միայն բոլոր կաղապարները, այլև բոլոր ձևույթները, բառակազմական հիմքերի տիպերը և նրանց ձևակազմական ու հնչյունափոխական տարատեսակությունները՝ ներառյալ և եզակի ձևերը։ Սակայն, եթե քերականական կառուցվածքը կարելի է նկարագրել սպառիչ կերպով, քանի որ քերականական ձևերը (և նրանց միջև գոյություն ունեցող հարաբերությունները) վերջավոր բազմություն են ներկայացնում, ապա բառակազմական միավորները թեև կարող են վերջավոր համարվել, բայց նրանց սահմանները շատ անորոշ են, հետևաբար խոսք կարող է լինել միայն բառակազմական կաղապարների, հիմքերի կառուցվածքային տիպերի և բառակազմության մեջ գործառող երկրորդական ձևույթների (տվյալ դեպքում ածանցների, հոդակապերի և հիմքակազմ տարրերի) լիակատար նկարագրության մասին։ Ինչ վերաբերում է հիմնական ձևույթներին՝ արմատներին և այլ սերող հիմքերին, ապա նրանց սպառիչ նկարագրությունը թեև ցանկալի կլիներ, սակայն այդ կարգի միավորների բազմաթվության պատճառով թերևս անհնար է, կամ գոնե ոչ նպատակահարմար։ Այդ դեպքում հետաքրքիր կլիներ առնվազն նշել ամենամեծ հաճախականություն ունեցող հիմքերը (ինչպես ամէն, բարի, խաչ, աստուած և այլն)։ Դա կնպաստեր ոչ միայն նեղ՝ բառակազմության քննության նպատակներին, այլև գաղափար կտար բառապաշարի պատկերի, գրական լեզվի որակի, լեզվամտածողության, տվյալ ժամանակաշրջանի հասկացությունների ու

պատկերացումների համակարգի, լեզվի կրողների հոգևոր ու մտավոր զարգացման մակարդակի մասին։

Ներկա աշխատության նպատակն է հնարավոր լրիվությամբ ներկայացնել մեր ընտրանքի ընձեռած լեզվական նյութը՝ բառակազմական բոլոր տարրերի ու կաղապարների բացահայտումով։ Ընդ որում, նյութի նկարագրությունն ուղեկցվում է քանակական հաշվումներով՝ ավելի ճշգրիտ ներկայացնելու համար յուրաքանչյուր կաղապարի ու ենթակաղապարի գործառական բեռնվածության աստիճանը և միմյանց նկատմամբ ունեցած տոկոսային հարաբերությունը։ Բացի այդ, անհրաժեշտ ենք համարել ոչ միայն բոլոր կաղապարների ու ենթակաղապարների տակ բերել առավել տիպական օրինակները, այլև, հատկապես քիչ տարածում ունեցող կառույցների դեպքում, ներկայացնել վկայված ամբողջ նյութը, քանի որ բառային մակարդակի միավորներն ինքնին օժտված են յուրահատուկ «անհատականությամբ» և այստեղ ոչ թե հարացուցային օրինակի դեր են խաղում, այլ ձեռք են բերում ձևաիմաստային միասնությամբ օժտված ինքնուրույն լեզվական միավորի արժեք։ Այս սկզբունքը հնարավորություն կտա դիտարկելու գրաբարի հետագա փուլերում և նույնիսկ ժամանակակից հայերենում բառակազմական համապատասխան կաղապարների և որոշակի նյութական միավորների գործառական բեռնվածության փոփոխության ուղիները։

Նշենք նաև, որ գրաբարի բաղադրյալ բառերի ամբողջությունից այստեղ ընտրված են միայն համադրական կազմությունները, բացի մի քանի անվանական կրկնավոր հարադրություններից (քանի որ նրանց անջատ կամ կից գրությունը պայմանականության արդյունք է), իսկ հարադրական կազմությունների ամբողջական քննությունը, որպես առանձին ուսումնասիրության նյութ, տեղ չի գտել ներկա աշխատության մեջ։

Բառակազմական կաղապարների և նրանց լուսաբանող օրինակների մեջ ներկայացված են միայն իրապես վկայված բառերը, թեև որոշ դեպքերում կարելի էր վերականգնել նաև չվկայված ձևեր (անցումային օղակներ և այլն), հատկապես, երբ ենթադրվում է բառակազմական «գաղտնի» քայլ։ Այդ հնարավոր է ոչ բոլոր դեպքերում, այլ նայած, թե վերջին բառակազմական տարրը ինչ հիմքի վրա է ավելանում, օր. եօթնամոլորակք կազմվում է միայն մեկ քայլից, քանի որ այդ բառը առանց ք հոգնակերտի չի կարող կազմվել, անհնար է վերականգնել եօթնամոլորակ+ք բառակազմական պատմությունը։ Սակայն շատ դեպքերում, եթե բառակազմական պատմության տեսակետից կա հաջորդ քայլը վկայող բառ, ապա նրա նախորդի գոյությունը կարելի է ենթադրել. օր. ան+(կեղծ+աւոր)



կամ (ան+կեղծ)+աւոր, (ամենախառն)+աբար և այլն։ Այդ վերաբերում է հատկապես -ագոյն, -եալ և այլ քերականական ածանցներով ձևավորված երկրորդական բաղադրյալ սերող հիմքերով բառերին։ Բոլոր դեպքերում սակայն մենք խուսափել ենք նման վերականգնումներից և առաջնորդվել բառարանով։ Եթե տվյալ բառը V դարից վկայված չէ, չենք գրել, թեկուզ և որոշ չափով խախտելով համաժամանությունը, սակայն հենվելով միայն հավաստի տվյալների վրա։

* * *

Գրաբարի բառակազմության հիմնական եղանակները՝ բառաբարդումն ու ածանցումը, ընդհանրապես հատուկ են եղել հայոց լեզվին նրա զարգացման բոլոր փուլերում, սկսած հնագույն ժամանակներից մինչև օրս։ Հայտնի է, որ դեռևս հնդեվրոպական հիմք լեզուն ուներ բավական հարուստ ու զարգացած բառակազմական համակարգ, որի հիմնական առանձնահատկությունները պահպանվել են և գրաբարում։ Ինչպես առանձին բառերը, նույնպես և բառակազմական կաղապարները լեզվի մեջ կարող են շատ երկարատև կյանք ունենալ և փոխանցվել նրա զարգացման մի փուլից մյուսին, նույնիսկ այն դեպքերում, երբ զգալիորեն փոխվում է լեզվի քերականական կառուցվածքը և անգամ տիպաբանական բնույթը։ Ուստի գրաբարում ևս (ինչպես և բոլոր լեզուների զարգացման տարբեր փուլերում) բառապաշարի, այդ թվում բաղադրյալ բառերի զգալի մասը ժառանգված է հնից, և միևնույն ժամանակագրական կտրվածքում գոյակցում են ինչպես ծագումնաբանորեն տարբեր ժամանակներից եկող, նույնպես և տվյալ փուլում ստեղծված և ստեղծվող բաղադրյալ բառերի շերտեր։ Քանի որ, ինչպես նշվեց, բառակազմական քննության հիմնական օբյեկտը բաղադրյալ բառերն են, և քննության առաջին փուլը պարզ և բաղադրյալ կազմությունների սահմանազատումն է» ուստի վերոհիշյալ ձևերի գոյակցումը լեզվական մեկ համակարգի մեջ անհրաժեշտություն է առաջացնում գտնելու հստակ չափանիշներ՝ առանձնացնելու համար քննվող ժամանակաշրջանում կենդանի և գործուն բառակազմական կաղապարները և նրանցով ստեղծված բառերը նախկին գործունությունը կորցրած կաղապարներով կամ արդեն «մեռած» բառակազմական միջոցներով բաղադրված բառերից, որոնք լեզվի զարգացման տվյալ փուլում կարող են դեռևս գիտակցվել որպես տրոհելի, ոչ պարզ միավորներ։ Պարզ և բաղադրյալ կազմությունների տարբերակումը, այսպես կոչված, «մեռած» լեզուների, կամ լեզվի անցած փուլերի համար

առաջ է բերում լրացուցիչ դժվարություններ, քանի որ չկա լեզվի կենդանի զգացողությունը, և բաղադրյալ կազմություն կարող է համարվել այն, ինչ տրոհելի էր լեզվի ավելի վաղ շրջանում, մինչդեռ V դ. լեզվավիճակում փաստորեն դարձել է պարզ արմատ (ճամբառնալ, յառնել, առաջ)։ Սա վերաբերում է բառի ձևաբանական (ձևույթային, բառակազմական) կառուցվածքին։ Ավելի բարդ է բառակազմական տարրերի բացահայտման և նրանց գործունության աստիճանի որոշման հարցը. արդեն պատրաստի բառերի մեջ առկա տրոհելի տարրերը ոչ միշտ են հանդես գալիս որպես լեզվի տվյալ ժամանակագրական կտրվածքում կենդանի, բառակազմական պրոցեսին, բառերի ստեղծմանը մասնակցող միավորներ (նորոգ, հաստատ, մեծար-ել)։ Այնպես որ այս դեպքում բառակազմական միավորների թիվը ընդհանրապես տրոհելի միավորների համեմատությամբ նվազում է։

Ըստ այդմ բառակազմության քննության մեջ անհրաժեշտություն է առաջանում տարբերակելու երկու փուլ կամ հետազոտական երկու ընթացակարգ (պրոցեդուրա)՝ 1) բառերի տրոհումը բաղադրիչ մասերի, 2) այդ մասերի գործառույթի, նրանց գործունության որոշումը և զուգորդման կաղապարների հայտնաբերումը։ Բառերի տրոհման հետևանքով հնարավոր է դառնում բառակազմական միավորների, նրանց տիպերի և փոխհարաբերության բացահայտումը, այլ խոսքով, պարզվում է բառակազմական տարրերի ինվենտարը, որոնց զուգորդման կաղապարներն ինքնին ներկայացնում են բաղադրյալ բառերի սերման օրինաչափությունները։ Անհրաժեշտ է այստեղ ճշտել սերում հասկացությունը։ Բառակազմության մեջ, ըստ երևույթին, գործ ունենք հիմնականում պատրաստի արդյունքի և ոչ բուն սերման հետ, նույնիսկ ամենատարածված կաղապարների դեպքում խոսողը ոչ թե խոսքի պահին ստեղծում է նոր բառ ըստ տրված կաղապարի (ինչպես, օրինակ, այդ կատարվում է նախադասությունների սերման կամ բառերի թեքման ժամանակ), այլ գործածում է արդեն պատրաստի բաղադրությունները։ Բառակազմությունը, եթե կարելի է այսպես ասել, առավելապես լեզվական երևույթ է, բառերն ստեղծվում են «լեզվի համար» և խոսքի մեջ վերարտադրվում են արդեն որպես պատրաստի արդյունք (անշուշտ, բացի դիպվածային կառույցներից, հեղինակային բառակերտումներից և նման կարգի այլ երևույթներից)։ Ըստ այդմ, վերը նշված՝ բառերի տրոհումը բաղադրիչ տարրերի և դրանց համադրումը (սինթեզը) կամ նոր բառերի սերումը ոչ միայն հակառակ գործողություններն են, այլև տարբեր են ըստ էության։ Տրոհումը զուտ հետազոտական հնար է, որ պարզում է, թե ինչպես են ստեղծված կամ ինչպես են ստեղծ-



վել բառերը անցյալում։ Մինչդեռ տրոհված տարրերի զուգորդման կաղապարների բացահայտումը ինքնին արտացոլում է լեզվի մեջ տվյալ պահին գործող օրինաչափությունները՝ բաղադրյալ բառերի սերման կանոնները։

Բառերի տրոհման (առաջին հերթին՝ պարզ և բաղադրյալ կառույցների սահմանազատման) մասին խոսելիս անհրաժեշտ է անդրադառնալ բառերի տրոհելիության տարբեր աստիճանների հարցին[43]։

Ինչպես ամեն մի լեզվում, այնպես էլ ուսումնասիրվող շրջանի գրաբարում, բացի հստակորեն որոշվող պարզ (միաձևույթ) բառերից և որոշակիորեն բաղադրյալ կազմություններից, կան նաև անցումային շատ դեպքեր, որոնց մեջ այս կամ այն բառակազմական միավորի առանձնացումը կապված է որոշակի պայմանականության հետ։

Քանի որ բառերի տրոհելիությունը պատմականորեն փոփոխվող երևույթ է, տրոհելի տարրերը որոշելիս պետք է ելնել տվյալ ժամանակագրական կտրվածքում գոյություն ունեցող բառակազմական համակարգային կապերից։

Անշուշտ, մեր նպատակը չէ այստեղ ներկայացնել գրաբարի բառակազմության մեջ առկա տրոհելի տարրերի ողջ բազմությունը և ոչ էլ սպառիչ կերպով նկարագրել տրոհելիության տարբեր աստիճանները, այլ բացատրել այն դեպքերը, երբ բառակազմական կաղապարներում կամ ածանցների ցանկերում առանձնացվում են իրենց բառակազմական իմաստը կորցրած այնպիսի տարրեր, որոնք տվյալ պահին այլևս կենդանի և գործուն չեն և բուն բառակազմության գործընթացին այլևս չեն մասնակցում, սակայն դեռևս լրիվ չեն սերտաճել արմատական ձևույթներին։ Այդ վերաբերում է հատկապես եզակի (ունիկալ) ածանցներին (–բար, –ոգ, –օր, –չուտ), կապված և մեծ մասամբ իմաստը կորցրած արմատներին (վայրագ, հաղորդ, դրանդ, համառոտ), իմաստազրկված, բայց մեկից ավելի բառերում պահպանված ածանցական մասնիկներին (–ին, –ատ, –ար), նախդիրներից առաջացած ածանցներին (ց, յ, ընդ (ընտ/ըն), որոշ փոխառյալ արմատների (դաստ, ասպ, սպար, ա–կար) և այլն։ Անդրադառնանք դրանց ավելի մանրամասն։

1) Նշված տիպերից ամենից ավելի հեշտությամբ տրոհելի են այն տարրերը, որոնք կցված են նաև անկախ հանդիպող և բառային ու բառակազմական նշանակությունը պահպանած արմատական ձևույթներին, ընդ որում, տրոհվող մասերից մեկը իմաստային որոշակիությունը կորցրած ածանց է, իսկ մյուսը՝ արմատային ձևույթ, որ տվյալ բաղադրության մեջ էլ պահպանել է իր իմաստը։ Այսպես, մեր ընտրանքի մեջ ընդգրկված

նյութից տրոհելի են համարված նշված տիպի հետևյալ դեպքերը՝ -ազ՝ -նաւազ, -աստ՝ նաւաստ, -անդակ՝ այլանդակ (հակառակ սրան, ավյալ փուլում այլևս չեն տրոհվում օժանդակ, բովանդակ ձևերը՝ օժ, բով արմատների անկախության կորստի և մասամբ նաև փոխառյալ լինելու պատճառով), -ոզ՝ նորոզ, -գոն(գոյն)՝ որգոն, -եամն՝ այծեամն, -եկան՝ շահեկան/շայեկան, -եցիկ՝ գեղեցիկ (այստեղ -եցիկ մասը ձևականորեն համընկնում է նաև այլ բառերում հանդիպող -եցիկ կապակցությանը՝ ազդեցիկ, դիեցիկ, երգեցիկ, ընկեցիկ և այլն, սակայն վերջիններում առանձնացվում է միայն -իկ մասնիկը, իսկ նրան նախորդող մասը մտնում է բառակազմական հիմքի մեջ, որ համընկնում է կատարյալի ձևաբանական հիմքին՝ ազդեց-, դիեց-, երգեց-, ընկեց-. այս տիպի հիմքերի մասին մանրամասն խոսվում է հիմքակազմության քննության ժամանակ), -եւին՝ ամենեւին, -էն՝ բուէն, -իմ՝ ուշիմ, նակ՝ թենակ, -ուակ՝ կառուակ, -շուտ՝ խաւարշուտ, -տակ՝ գումարտակ: Նշված կարգի ձևույթներին են հավասարեցվում նաև փոխառյալ ածանցները, որոնք հանդիպում են ընդամենը մեկական բառում, բայց նրանց սերող հիմքերը առանձին գործածվող ազատ արմատներ են (հիմնականում, անշուշտ, դարձյալ փոխառյալ): Դրանք են՝ արք-՝ արքեպիսկոպոս, քոր-՝ քորեպիսկոպոս, որոնք փոխառյալ են հունարենից, ունենք նաև ասորերենից փոխառյալ մեկ վերջածանց՝ -իթայ՝ հանգստարարիթայ (-ունի ածանցի իմաստով) և պարսկերենից փոխառյալ ա- նախածանցը ակամայ և -թար վերջածանցը՝ վատթար բառում. բերված բոլոր ածանցները եզակի են և այլ բառերում չեն հանդիպում: Տրոհելիության նույն աստիճանի վրա են նաև իմաստային որոշակիությունը կորցրած, բայց մեկից ավելի բառերում հանդիպող ածանցները: Դրանք են՝ անոր՝ աներանոր, աստանոր, ուրանոր, -աւանդակ՝ բարձրաւանդակ, գահաւանդակ, սարաւանդակ -ար՝ մթար, մոլար, պատահար, մեծարել, մեծամեծար, զարդար, յարդար, -ակար (-ակեար), -ակեր (-կեր)՝ օգտակար, վնասակար, համարակար, հրամանակար, կամակար, խոհակեր, համոզակեր, աղօթակեար/կեր, աղօթկեար/կեր, -այ՝ կամայ, ակամայ, որկորայ, փղոսկրայ, -անուտ՝ հոսանուտ, յորձանուտ, -աշ՝ մատաղաշ, աղուաշ, -արիմ/երիմ՝ հաւատարիմ, ոխերիմ, մտերիմ, -եղի՝ աղտեղի, մսեղի, -եք՝ բարեք, երբեք, ուստեք, ուրեք, -իլ՝ կաթիլ, տեսիլ, ան-արդիլ, ին՝ լուին, դառնին, կորկոտին, կապին, -շի՝ բոլորշի, լայնշի, -կու՝- յաղթկու, յոժկու, ոյկ՝ խարոյկ, ձորձոյկ (ստուգաբանվում է որպես ձորձմոյկ), պարոյկ, -որ՝ բեկոր, հատոր, երեկոր, -ոք՝ բարիոք, փորոք, բորբոք, -ուլ թաթուլ, կափուլ, -չեայ՝ առհաւատչեայ, աւետչեայ, -րի՝ բերրի, երախայրի և այլն: Վկայված են փո-



խառյալ ածանցներ՝ երկուական բառում՝ -իտ՝ յուլիանիտ, քանանիտ, անտի-՝ անտիհիպատոս, անտիքրիստոս:

2) Տրոհելիության հաջորդ աստիճանում են այն բաղադրությունները, որոնց կազմի մեջ մտնող ածանցները բավական գործուն են և հանդիպում են բազմաթիվ այլ բառերում, իսկ արմատներն առանձին հանդես չեն գալիս, ինչպես՝ -ակ՝ հասակ (հասանեմ), տեսակ (տեսանեմ), տափակ (տափակողմն, տափարակ), ան՝ արժան (արժեմ), բաժան (հմմտ. բաժին) և այլն:

Նույն տիպի, այսինքն՝ կապված՝ անկախ գործածություն չունեցող հիմքերի մոտ հանդիպում են նաև եզակի ու սակավ գործածության իմաստազրկված ածանցներ, որոնցից մեր ընտրանքում տրոհելի են համարված հետևյալները. -անգի՝ վտարանգի (վտարեմ), -ատակ՝ յիշատակ (յիշեմ), -իշ՝ բաշխիշ (բաշխեմ, -իւղ՝ երկիւղ (երկնչիմ բայի կատարյալի երկ(ի) (հիմքից), -չոտ՝ երկչոտ (նույն հիմքով), -րիւր՝ բերրիւր, -րի՝ բերրի (բերք), -կի՝ լուցկի (լուցանեմ), օթ՝ ծանօթ (ճանաչեմ բայի կատարյալի ծան(ի) հիմքից), -օն՝ զգօն (զգամ) և այլն:

3) Տրոհելիության ավելի թույլ աստիճան ունեն այսպես կոչված արմատակերպները, այսինքն՝ կապված արմատները, որոնք անկախ հանդես չեն գալիս և բացի այդ կորցրել են իրենց բառիմաստային որոշակիությունը: Նրանց իմաստը կարելի է մակաբերել միայն այն բառերի ընդհանուր իմաստի հիման վրա, որտեղ դրանք հանդիպում են: Այդպիսի արմատները զգալի թիվ են կազմում փոխառությունների մեջ: Այսպես, դաստակերտ բարդության մեջ որոշակիորեն տրոհվում է կերտ բաղադրիչը և հոդակապով (քանի որ հանդիպում է նաև նման կառուցվածքի այլ բառերում՝ Տիգրանակերտ, Մարակերտ և այլն, իսկ դաստ անջատվում է որպես մնացորդային տարր, թեև նրա իմաստը հասկանալի էր նշված ժամանակաշրջանում. հմմտ. Խորենացու կիրառած հայերեն համարժեքը՝ ձեռակերտ: Մինչդեռ դաստիարակ, դաստառակ բառերում այն այլևս չի տրոհվում, քանի որ անհասկանալի է նաև երկրորդ բաղադրիչը: Նույնպես է. ախտար փոխառյալ արմատը պայմանականորեն տրոհելի է ախտարք, ապախտար, վատախտարակ բառերի մեջ՝ «բախտ, աստղ, աստղահմայություն» իմաստներով, սակայն ամբողջությամբ փոխառյալ ախտարմար (սխալագրությամբ նաև՝ ախտարմաղ, ախտարմախ, ախտարմաղ, ախտարմոլ) բառում այլևս անտրոհելի է դարձել մյուս բաղադրիչի անհասկանալիության պատճառով: Կախարդասար և աղանդասար բառերում ճանաչվում և տրոհվում են կախարդ, աղանդ բաղադրիչները, իսկ սար-ը հանդես է գալիս որպես իմաստային որոշակիությունը կորցրած

մնացորդային ձևույթ, որի արմատական բնույթը այլևս չի գիտակցվում (ստուգաբանվում է որպես պրս. sar «գլուխ»՝ ըստ Հ. Հյուբշմանի)[44] և ավելի շատ ընկալվում է որպես ածանցային մասնիկ։ Կան մի շարք դեպքեր էլ, որտեղ իմաստային որոշակիությունից զրկվել են հիմնական, արմատային բաղադրիչները և բառի տրոհելիությունը պայմանավորվում է երկրորդական ձևույթների կամ, եթե բարդություն է, ոչ հիմնական արմատի ճանաչելիությամբ, այսպես՝ նախարար, մատակարար[45] փոխառյալ բառերի մեջ տրոհվում է միայն արար բաղադրիչը, այլ բառերում հանդիպող արար հիմքի բաղարկությամբ և համաբանությամբ, նահապետ, շահապետ, սպարապետ, անդարձապետ՝ տրոհվում է -պետ բաղադրիչը, շահաստան, անաշահիկ բառերում ճանաչվում են -աստան, ան-, -իկ ածանցները, բարաւր, բարապան բառերում հստակորեն ընկալվում են -աւր, -պան ածանցները, հաղորդ-ի մեջ՝ -որդ ածանցը, շտեմարան-ի, բաստարան-ի մեջ՝ -արան ածանցը, տիկին և տիեզերք բառերի մեջ կին և եզերք բաղադրիչները, համառօտ բառում՝ -առօտ ածանցը՝ կարճառօտ բառի համաբանությամբ և այլն։ Ընդ որում, ինչպես նշվեց, այս դեպքերում իրենց իմաստային և գործառական որոշակիությունը պահպանել են անջատվող բաղադրիչները (-աւր, -որդ, -աստան, -արան ածանցները, պետ, արար, կին, եզերք և այլն արմատները), իսկ մյուս բաղադրիչները, որոնք այստեղ գիտակցվում են որպես մնացորդային տարրեր, չունեն իմաստային որոշակիություն, և նրանց նշանակությունը կարելի է պարզել միայն ստուգաբանական քննությամբ։ Մեծ մասամբ դրանք փոխառյալ արմատներ են։ Նման կազմություններից, որոնց բաղադրիչներից մեկի իմաստը մթագնած է, կամ արմատը փոխառյալ է և, որ կարևոր է, առանձին չի հանդիպում, կարելի է հիշատակել նաև հետևյալները՝ բաստայեղց, բարեբաստ, չարաբաստ, գազախաղէմ, գաղտամեստ, դատախազ, զօրավիգն, ժանտաժուտ, երկաքանչիւր, իւրաքանչիւր, իսկաքանչ, մօտալուտ, խառնաղանջ, մեղրապոպ, կախաղան, կեղակարծ և այլն։ Այնուամենայնիվ, մեր կաղապարներում այս տիպի կազմությունները պայմանականորեն բաղադրյալ են համարված։

4) Տրոհելիության նվազագույն հնարավորություն են ընձեռում այն եզակի ածանցները, որոնք հանդիպում են այլ մասնիկների հետ գրեթե սերտաճած, և առանձնացվում են միայն տարբեր ածանցների հետ կազմած զուգորդությունների համեմատության միջոցով. ինչպես, մշտնջեան, բաղադրության մեջ -ունջ (>նջ) ածանցը կարելի է անջատել միայն վաղնջուց բառի հիման վրա, որտեղ այն հանդես է գալիս -ուց ածանցի (թերևս նախկին հոլովական վերջավորության) հետ։



5) Պայմանականորեն տրոհելի են համարվում բաղադրիչների հնչյունափոխությամբ կազմված կրկնավոր (մասամբ նաև տարարմատ) բարդությունները, ինչպես՝ աղբախուղբ, աղխամաղխ, աղջամուղջ, ախտամուխտ, արհամարհ, բարձրաբերձ, խաժամուժ, խառնամառն, խուժադուժ, կերակուր, հաստաբեստ, հաստամեստ, աղաւաղել (աղեւաղել)։ Անհոդակապ բաղադրություններից՝ ազազել, աղկաղկ, աղխաղխ-ակոյտ, բարբառ, բարձրբարձ, խեկբեկս, խծբիծ, խուժդուժ, խժդուժ, սարսուռ, սպառսպուռ, կասկած, կարկառ, կոչկոճ, կսկիծ, յողդողդ, շաղփաղփ և այլն։ Այս կազմություններում առանձին բաղադրիչների իմաստը և հարաբերական ինքնուրույնությունը երբեմն չեն գիտակցվում, բառիմաստը արտահայտվում է միայն ամբողջ կազմությամբ։ Սակայն ձևականորեն դրանք դեռևս բավական հստակորեն տրոհելի են, թեև կաղապարն այլևս գործուն չէ ուսումնասիրվող շրջանում։ Այս բառերը պարզապես լեզվի զարգացման նախորդ փուլերից ժառանգաբար անցել են V դ. լեզվավիճակին։

Բառերի տրոհելիության դժվարությունները առաջանում են ոչ միայն վերը նշված տիպերի դեպքում, երբ գործ ունենք եզակի արմատների և ածանցների, կամ իմաստազրկված և նախկին գործունությունը կորցրած ձևույթների հետ՝ այլև տվյալ շրջանում դեռևս կենդանի և գործուն, բայց որոշ բաղադրություններում արդեն սերտաճած բառակազմական տարրերի հետ։ Այսպես, V դարում կենդանի և գործուն է -ի վերջածանցը (ընդ որում տեղի ունի համանունություն՝ ի[1]՝ գործի, դալարի, բերի, չարի, վայրի, ի[2]՝ բարտի, դափնի, եղևնի, խնձորի, ծիրանի, ի[3]՝ ախորժելի, ատելի, գենլի, ըղձալի և այլն), սակայն արդեն անտրոհելի է բազմաթիվ կազմություններում, քանի որ նրանց երբեմնի սերող հիմքերն այլևս ինքնուրույն չեն գիտակցվում և չեն հանդիպում ոչ միայն առանձին գործածությամբ, այլ նույնիսկ այլ բառերի մեջ՝ կապված արմատների դերում։ Այդպիսի օրինակներից են՝ ամուրի, այգի, կոգի, աղաւնի, գինի, գարի, մարի, ոզնի, որդի, ուղի, սամի, քենի, քեռի և այլն, որոնց մեջ դեռևս վաղնջահայերենից եկող -ի ածանցը այլևս չի տրոհվում։ Նման գործուն ածանցների սերտաճման դեպքեր են նաև հետևյալ օրինակները՝ ին՝ գործուն է առաջին, ներքին, վերին, ստորին, վերջին և այլ ձևերում, անտրոհելի՝ ամուսին, գետին, դարբին, դեղին, եղևին, կաղին, ոստին և այլ բառերի մեջ, -ուն՝ գործուն է անուն, ասուն, արբուն, գիտուն, փորբրկուն և այլ ձևերում, անտրոհելի՝ աղփուն, ձեղուն բառերի մեջ, -ար՝ կենդանի է մթար, պատահար, մոլար, փողար ձևերի մեջ, անտրոհելի՝ արդար, դալար, երկար, պալար և այլ բառերում, -ին՝ կենդանի է գոչին, լալին, ար-

դիւն, անկիւն, շարժիւն ձևերում, անտրոհելի՝ աճիւն, արիւն, ափիւն, կո-րիւն, ճերիւն, մրջիւն, որճիւն և այլ բառերում, -ուկ՝ կենդանի է և գործում բողկուկ, կանեփուկ, ճաճարուկ, ինչպես նաև ճարցուկ, ճեղուկ, ջերմուկ և այլ ձևերում, անտրոհելի՝ դերբուկ, մանուկ բառերի մեջ։

Նշված տիպի տարրերի մեջ կարևոր է հիշատակել նաև որոշ սերտաճած նախածանցների մասին։ Դրանք, այսպես կոչված, նախդիր-նախածանցներն են, որոնք գրաբարին նախորդող փուլերում ավելի մեծ գործունեություն են ունեցել, սակայն ուսումնասիրվող շրջանում գրեթե զրկվել են բառակազմական գործառույթից և պահպանվել են հիմնականում նախորդ փուլերից ժառանգված բաղադրյալ կազմություններում։ Այդ բաղադրությունների զգալի մասում նրանք որոշակիորեն տրոհվում են, քանի որ պահպանվել են նրանցով կազմված բառերի սերող հիմքերը՝ ինքնուրույն անկախ գործածությամբ, կամ նմանատիպ բառակազմական շարքերում։ Սակայն կան նաև բավական թվով դեպքեր, երբ սերող հիմքերը որպես ինքնուրույն տարրեր չեն գիտակցվում՝ պարզ և նույնարմատ բաղադրյալ բառերի միջև իմաստային խզում առաջանալու պատճառով, կամ արմատի՝ ինքնուրույն գործածությունից և իմաստային որոշակիությունից զրկվելու հետևանքով։ Այդ հատկապես զգալի է առ, ընդ, ըստ, զ, յ նախդիր-նախածանցների դեպքում։ Այսպես, առ- նախածանցը որոշակիորեն տրոհելի է առայժմ, առաւել, առընթեր, առձեռն, առողջ և այլ բառերում, սակայն մի շարք կազմություններում, ինչպես՝ առագաստ, առած, առակ, առանց, առաջ, առասպել, առաստաղ, առաւօտ, առաքինի և այլն, հանդես է գալիս արդեն արմատին սերտաճած և անջատելի է միայն ստուգաբանորեն։ Ճիշտ նույնպես՝ զ- նախդիր-նախածանցը որոշ չափով պահպանել է իր բառակազմական արժեքը զանցանեմ (հմմտ. անցանեմ), զեղծանեմ (եղծանեմ), զարդ(արդ), զեռամ (եռամ) և այլ բառերում, սակայն սերտաճել է զարկ, զարմ, զարմանամ, զգամ, զգաւն, զգեստ, զեկուցանեմ, զինչ, զենտ, զով և բազմաթիվ այլ բառերում։ Յ- նախդիրը ճանաչվում և տրոհվում է յաջող (աջող), յերկար (երկար), յառաջ (առաջ), յանկարծ (անկարծ), յանուն (անուն) և այլ բառերում, թեև մի շարք դեպքերում արդեն չունի որոշակի բառակազմական իմաստ (ինչպես յերկար-երկար, յառաջ-առաջ ձևերի մեջ, որոնք փաստորեն ազատ տարբերակներ են դարձել՝ առաջադէմ-յառաջադէմ, յերկարութիւն-երկարութիւն և այլն)։ Այլևս անտրոհելի է յօղեմ, յառնեմ, յածիմ, յանգ, յատանեմ և այլ բառերում։ Ածանցների սերտաճմանը նպաստում են և նրանց կրած հնչյունական փոփոխությունները, այսպես, ընդ- նախածանցը, բացի իր անհնչյունափոխ ձևից (ընդարձակ, ընդդեմ), ներկայացված է նաև ընտ, ըն, ըմ



տարբերակներով՝ ընտաբոյս, ընտասուն, ընկլնուլ, ընկլուզանել, ընկեր, ընկնել, ընկողնիլ, ընկողմանիլ, ընկրկել, ընձեռել, ըմբերել, ըմբերանել, ըմբոշխնել և այլ ձևերում, որտեղ բնականաբար այլևս տրոհելի չէ։ Նույնպես և ըստ- նախդրի ստ- տարբերակը չի անջատվում ստերիվել, ստուգանել բառերի մեջ։

Բացի վերը նշված՝ տրոհելիության տարբեր աստիճան ունեցող տարբերից, որոնք մենք անջատում ենք պայմանականորեն և դրանք պարունակող կազմությունները համարում բաղադրյալ, հանդիպում են նաև տարրեր, որոնք նույնպես որոշակիորեն տրոհելի են (նույն պայմանների առկայությամբ), սակայն մենք դրանք չենք առանձնացնում որպես բառակազմական տարրեր, այլ նրանցով կազմված ձևերը դիտում ենք որպես արմատական (սկզբնահիմքային) տարբերակներ։ Այդ տարրերն ըստ ծագման կարող են լինել իմաստազրկված ածանցներ (նախածանց կամ վերջածանց), հիմքակազմ տարրեր, աճականներ, թեքույթներ և այլն։ Այդ կարգի դեպքերից են ձմեռն-ձմեր, ամառն-ամառ, դուռն-դուր, սերմն-սերմ, բեղ-բեղմն-(բեղ+ուն), ջեր-ջերմ-ջերմն, կող-կողն-կողմ-կողմն, կեան/կեն-կենց-կենդ և այլ ձևերը, որտեղ պարզ արմատների զուգադրությամբ տրոհվում են ն, մ, մն, ց, դ տարրերը։ Սակայն, քանի որ դրանք բոլորովին կորցրել են իրենց բառակազմական արժեքը, իմաստային որևէ երանգ չեն ավելացնում հիմքերին և միայն առաջացնում են հիմքերի հնչյունական տարբերակներ, այլևս չեն դիտվում որպես բաղադրիչ տարրեր (այդ մասին ավելի մանրամասն կխոսվի հիմքակազմության քննության ժամանակ)։

Այսպիսով, որպես ընդհանուր սկզբունք, տրոհելի (հետևաբար բաղադրյալ) են համարվում այն կազմությունները, որոնց բաղադրիչներից առնվազն մեկը տվյալ ժամանակագրական կտրվածքում պահպանել է իր իմաստային և գործառական որոշակիությունը և հարաբերակցվում է նաև այլ բառերում հանդիպող նույն կամ նույնարժեք տարրերին։ Ըստ այդմ բառակազմական կաղապարների շարքերում ներկայացնում ենք հատակ տրոհելի բառերի բանաձևերը (կաղապարները) իրենց բառակազմական պատմությամբ, անհրաժեշտ դեպքում հատուկ նշելով առավել գործուն և արդյունավետ կաղապարներն ու միավորները, շարահյուսական սերտաճումները, դիպվածային կառույցները, ըստ հնարավորին՝ բառապատճենումները և այլն։ Տրոհելի, բայց բառակազմական գործառույթից զրկված միավորները բերվում են մյուսների շարքում, որպես տվյալ կաղապարի իրացումներ։



4—442

Գրաբարի բառակազմական կառուցվածքի նկարագրությունը տրվում է հիմնականում արտահայտության դիտվածքով (պլանով), քննվում են բառակազմական միավորների հարաբերությունը և նրանց գործառական ու իմաստային որոշ առանձնահատկությունները: Ընդհանրապես իմաստաբանական հատուկ քննություն չի կատարվում, բառակազմական միավորների իմաստային կողմին անդրադառնում ենք այնքանով, որքանով այդ նպաստում է բառակազմական կաղապարների բացահայտմանը կամ տվյալ միավորի առանձնացմանը: Նկարագրության մյուս տեսական սկզբունքներն այստեղ առանձնահատուկ կերպով չենք նշում, քանի որ «լեզվի նկարագրությունը տեսություն է բուն իմաստով»[46]:

## ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ԿԱՂԱՊԱՐՆԵՐ ԵՎ ՄԻԱՎՈՐՆԵՐ

Բառակազմության ուսումնասիրության առարկան բաղադրյալ բառերի կազմության եղանակներն ու միջոցներն են. ըստ այդմ բառակազմական հիմնական միավորը բաղադրյալ բառն է, որն իր հերթին կազմված է բառակազմական նվազագույն միավորներից կամ տարրերից:

Բառակազմական կաղապարներ ասելով հասկանում ենք բառակազմական տարրերի զուգորդման եղանակները, որոնց օգնությամբ կազմվում են բաղադրյալ (բարդ և ածանցավոր) բառերը:

Բառակազմական տարրերն են լեզվի նյութական միավորները, տվյալ դեպքում, այն հիմնական և երկրորդական ձևույթները, որոնք, զուգորդվելով ըստ բառակազմական կաղապարների, ձևավորում են բաղադրյալ բառերը:

Հիմնական և երկրորդական ձևույթները ստացվում են որպես բառի ձևույթային կառուցվածքի վերլուծության վերջնական արդյունք, երբ բառը տրոհվում է վերջնային անբաժանելի միավորների՝ ձևաիմաստային և գործառական նվազագույն տարրերի, որոնք իրենց բնույթով ու արժեքով տարասեռ են: Այդ տարրերի մեջ սովորաբար առանձնացվում են, ինչպես նշվեց, հիմնական ձևույթները, որոնք այլ կերպ կոչվում են արմատներ (բառի բառային իմաստը կրող տարրերը), և երկրորդական ձևույթները, այսինքն՝ բառակազմական և քերականական մասնիկները՝ ածանցները, թեքույթները, հիմքակազմ տարրերը, թեմատիկ ձայնավորները, հոդակապերը և այլն:

Բառակազմական միավոր հասկացությունը սերտորեն առնչվում է ձևաբանական միավոր հասկացությանը ոչ միայն այն պատճառով, որ լեզվական երևույթների ավելի ընդհանրացված քննության մեջ նրանք հավասարապես համարվում են ձևույթներ և դասակարգվում ըստ իրենց գործառական ու բաշխական հատկանիշների, այլև այն պատճառով, որ բառակազմական և ձևաբանական միավորները թե՛ միմյանց նկատմամբ, թե՛ իրենց փակ համակարգերի մեջ հանդես են բերում որոշակի նմանատիպ հարաբերակցություն: Այսպես, նշված երկու կարգի միավորների

միջև հանդես են գալիս նույն տիպի հակադրություններ՝ ձևաբանական հիմք—բառակազմական հիմք, բառափոխական ձևույթ—բառակազմական ձևույթ, հիմքի և վերջավորության (թեքույթի) հակադրություն—հիմքի և ածանցի հակադրություն, այսինքն՝ այսպես կոչված հիմնական և երկրորդական ձևույթների հակադրություն և այլն: Բացի այդ, բառակազմական և ձևաբանական միավորների միջև կարող են տեղի ունենալ փոխներթափանցման և գործառական բազմարժեքության երևույթներ, օրինակ՝ որոշ երկրորդական ձևույթներ կարող են ունենալ ինչպես ածանցների, այնպես էլ ձևաբանական մասնիկների՝ վերջավորությունների արժեք, բառակազմական հիմքն իր կառուցվածքով կարող է համընկնել ձևաբանական հիմքին և այլն:

Համակարգային նույնարժեքության և փոխներթափանցման հնարավորության հետ միաժամանակ բառակազմական և ձևակազմական միավորներն ունեն որոշ կառուցվածքային, նաև գործառական ու դիրքային էական տարբերություններ:

Այսպես, թե՛ ձևույթային, թե՛ ձևաբանական, թե՛ բառակազմական վերլուծության դեպքում գործ ունենք հիմնական ձևույթների՝ արմատների նույն կազմի հետ, սակայն, որպես բառակազմական վերլուծության վերջնային հիմնական միավոր, այստեղ ընդունում ենք ոչ թե արմատը, այլ հիմքը: Վերջինս կարող է լինել ինչպես պարզ, անտրոհելի, այսինքն՝ համընկնել արմատի հետ, այնպես էլ բաղադրյալ, այսինքն՝ ձևավորվել հիմքակազմ տարրերով: Գրաբարի բառակազմական հիմքի կառուցվածքային տիպերի մասին ավելի մանրամասն կխոսվի ստորև, այստեղ նշենք միայն, որ բառակազմական հիմքը փոփոխական հասկացություն է և իրենից ներկայացնում է բառի այն մասը, որն ստացվում է եզրային բառակազմական մասնիկի կամ այլ հիմքի անջատումից հետո[42]: Այն իր հերթին կարող է բաղկացած լինել մեկից ավելի հիմքերից և բառակազմական այլ տարրերից: Բոլոր դեպքերում հիմքը պարունակում է առնվազն մեկ արմատական ձևույթ:

Բառակազմության մեջ, այսպիսով, ելակետային հիմնական ձևույթ ենք համարում և բառակազմական կաղապարների բանաձևերի մեջ առանձին նշանով արտահայտում միայն այսպես կոչված առաջնային հիմքերը կամ սկզբնահիմքերը[43], որոնք բուն բառակազմական այլ ձևույթներ չեն պարունակում, այսինքն՝ բառակազմական տեսակետից այլևս չեն հատույթավորվում, թեև կարող են կազմված լինել ինչպես միայն մեկ արմատից, այնպես էլ արմատից և որևէ հիմքակազմ տար-



ր(եր)ից, կամ ունենալ քերականական ձևավորում՝ համընկնելով բառի ձևաբանական հարացույցի որևէ անդամին:

Գրաբարում բառակազմական հիմքերը (նկատի ունենք սկզբնահիմքերը) ձևաբանականներից տարբերվում են իրենց նվազ օրինաչափականությամբ (регулярность), հիմքակազմական տարբերակների առկայությամբ, բաղադրությունների կազմության ժամանակ այդ տարբերակների պատահական, ոչ օրինաչափ, «անհատական» ընտրությամբ:

Բառակազմական և ձևակազմական երկրորդական ձևույթները, բացի բուն նյութական արտահայտությունից, տարբերվում են բաղադրության մեջ իրենց գրաված դիրքով (ձևակազմական ձևույթները գրավում են աջ և ձախ եզրային դիրքերը՝ նախորդելով նախածանցներին և հաջորդելով վերջածանցներին) և իմաստագործառական առանձնահատկություններով: Ինչպես և ձևաբանական հիմքերը, ձևակազմական միավորներն ավելի օրինաչափական են, վերաբերում են բառերի նույն դասին գրեթե առանց բացառության: Բուն բառակազմական ածանցներն ավելի անհատական կիրառություն ունեն, և բառերի որոշակի դասը (օր.՝ խոսքի մասը) ստեղծվում է հիմնականում որպես արդյունք: Քերականական ձևույթները միանշանակ են, կամ եթե ունեն մեկից ավելի քերականական իմաստներ, ապա բոլոր դեպքերում (տարբեր հիմքերի հետ հանդես գալիս) պահպանում են այդ իմաստները: Մինչդեռ բառակազմական ձևույթները հաճախ բազմիմաստ են, երբեմն էլ իմաստը անորոշ է, եթե ձևույթներն այնքան էլ գործուն չեն, և տարբեր զուգորդություններում կարող են իմաստային տարբեր երանգներ ստանալ: Այս տեսակետից նրանք մոտենում են բառային միավորներին և կարող են հանդես բերել բազմիմաստություն, համանշություն, հականշություն և այլն:

Գրաբարում բառակազմական երկրորդական ձևույթները բաժանվում են տարբեր տիպերի: Առաջին հերթին դրանք ածանցներն են, որոնք տարբերակվում են ըստ իրենց կարգային գործառույթի (որոշակի խոսքի մասեր կերտելու ունակության) և ըստ դիրքի (նախածանցներ և վերջածանցներ): Երկրորդական ձևույթների մեջ են մտնում նաև քերականական արժեք ունեցող բառակազմական ձևույթները: Բուն քերականական ձևույթներից դրանք տարբերվում են նրանով, որ ստեղծում են համեմատաբար ինքնուրույն («բառարանային») բառաձևեր, իսկ բուն բառակազմական ածանցներից տարբերվում են ձևաբանական լրացուցիչ իմաստի առկայությամբ և առավել օրինաչափականությամբ:

Քերականական արժեք ունեցող բառակազմական ձևույթները գրաբարում հիմնականում բայակազմական են, մասնավորապես դերբայա-

կան ածանց-վերջավորություններ, անորոշինը՝ -ել, -ալ, -ուլ, ենթակայականինը՝ -ող, -իչ, անցյալ դերբայինը՝ -եալ։ Որոշ չափով քերականական պետք է համարել նաև ածականների համեմատական աստիճան կազմող -ագոյն ածանցը, ինչպես նաև հավաքական-հոգնակերտ մասնիկները՝ -ան, -անի, -եան, -ստան, -ոտի/տի և այլն։ Այս տիպի ձևույթներին են հարում նաև թվականակերտ ածանցները, նշված խոսքի մասի մեջ մտնող իմաստային դասեր (անձնական, դասական) կազմելու իրենց գործառությամբ։

Քերականական-բառակազմական ածանցները բուն քերականներից (թեքույթներից ու վերջավորություններից) տարբերվում են նաև նրանով, որ կարող են հանդիպել նաև ոչ եզրային դիրքում, իրենցից հետո ստանալով նոր ածանցներ (գերագոյնութիւն, արարչութիւն, սիրելաբար), և ձևաբանական հիմքի կազմում մասնակցել թեքման հարացույցին։

Երկրորդական ձևույթներից տարբերում ենք բառակազմական հիմքերի կազմությանը մասնակցող տարրերը, որոնք կարող են լինել ինչպես թեքույթներ (հոլովական և հազվադեպ՝ խոնարհման վերջավորություններ), այնպես էլ ձևաբանական հիմքերի կազմիչներ (սոսկածանցներ, անցյալ կատարյալի, պատճառականի ածանցներ) և այլ տարրեր։ Այդպիսի տարրերը միշտ չէ, որ հնարավոր է տրոհել, քանի որ դրանք հանդես են գալիս ոչ միայն գծային հաջորդականությամբ, այլև հնչյունական հերթագայությունների ձևով։ Ըստ այդմ բառակազմական կաղապարների բանաձևերում նրանք ներկայացվում են ոչ թե մյուս ձևույթների հետ նույն գծի վրա, այլ կցվում են արմատների (սկզբնահիմքերի) նշաններին, որպես ցուցիչ։ Այդ նշանակում է, որ տվյալ դեպքում գործ ունենք քերականորեն ձևավորված հիմքի հետ՝ ի տարբերություն մաքուր կամ չեշտափոխական հնչյունափոխության ենթարկված հիմքերի։

Բացի հիմքերից և ածանցներից գրաբարի բառակազմության համար բնորոշ է նաև գործառական բնույթի մասնիկների առկայությունը, որոնք իմաստային բեռնվածություն չունեն և ծառայում են միայն բառակազմական ձևույթները միմյանց կապելուն։ Այդ մասնիկները կարող են լինել տարբեր տիպի՝ միայն բառակազմության մեջ կիրառվող՝ հոդակապեր, և հոդակապի դերով հանդես եկող շաղկապներ և նախդիրներ. ընդ որում, եթե շաղկապների իմաստը դեռևս բավական զգալի է բաղադրություններում (աղուհաց, այրուձի, հարցնխնդիր, ելևէջ, երբևէկ), ապա նախդիրներն ավելի են մոտենում զուտ ձևական գործառական մասնիկներին, մանավանդ այն դեպքերում, երբ նախդրավոր կազմություններին զուգահեռ գոյություն ունեն նույն բառի հոդակապավոր կամ երբեմն նաև անհոդա-



կապ տարբերակները (բարձրիգլուխ-բարձրագլուխ, այդիչափ-այդչափ)։ Մյուս կողմից, սակայն, նախդիրները կարող են հանդես գալ ոչ միայն կապող դերով, այլև իրենց բուն նշանակությամբ՝ նախնական շարահյուսական կապակցությունների մեջ, որոնք սերտաճելով առաջացրել են բաղադրյալ բառեր (ընդունչարկու)։ Այս դեպքում նախդիրները հավասարեցվում են բառակազմության մեջ գործառող մյուս հիմնական ձևույթներին (ներառյալ և նրանց խոսքիմասային արժեքը) և ներկայացվում համապատասխան կաղապարներում։

Ինչ վերաբերում է հոդակապին, ապա հայտնի է, որ սկզբնապես այն եղել է հիմնային ձայնավոր և արտացոլում է հ.-ե. բառակազմության այն հնագույն վիճակը, երբ բարդությունները առաջացել են հիմքերի պարզ կցումով։ Հոդակապը տրոհելի բառակազմական գործառական մասնիկ է դարձել միայն հին հայերենին նախորդող հնագույն շրջանում և որպես այդպիսին սկսել է գիտակցվել հիմնային վերջաձայնավորների թուլացումից ու անկումից հետո[49]։

Գրաբարում որպես հոդակապ բացարձակ տարածում ունի ա ձայնավորը։ Թեև մի շարք բաղադրությունների մեջ հոդակապի դիրքում առկա են այլ ձայնավորներ (ե–հնգետասան, երկեամ, երեամ, խաբեբայ, ո–կարոգին, ընդոծին, երկոտասան, ու–տանուտէր և այլն), սակայն դրանք չեն գիտակցվում որպես հոդակապեր, չեն տարանջատվում և ավելի շուտ կազմում են սերող հիմքերի տիպաբանական[50] տարբերակներ։ Որպես այդպիսիք էլ ներկայացվում են բառակազմական կաղապարների մեր բանաձևերում։ Այս ձևերը V դ. գրաբարում դիտվում են որպես հնագույն շրջանից կամ էլ նույնիսկ վաղնջահայերենից մնացած ժառանգություն և ապացուցում են նաև ա հոդակապի երբեմնի հիմնային ձայնավոր լինելը։ Այսպիսով, V դ. լեզվավիճակում հոդակապը, ինչպես և նրա դերով հանդես եկող շաղկապներն ու նախդիրները, չունենալով իմաստային բեռնվածություն, կատարում են գործառական բառակազմական մասնիկների դեր։

Գրաբարի բառակազմությունը ներկայացնելիս մենք նկատի ունենք լեզվի մեջ իրապես գոյություն ունեցող բաղադրությունները և ոչ թե դրանց ընդհանրական կամ լրիվ կաղապարը, որն ըստ Գ. Ջահուկյանի «ընդգրկում է տվյալ լեզվում հնարավոր բոլոր տիպերը և որոշ դեպքերում կարող է չունենալ ոչ մի նմուշ»[51]։ Բառակազմական լրիվ կաղապար Գ. Ջահուկյանը տալիս է միայն ածանցման համար, ընդ որում նկատի ունի նաև քերականական մասնիկները։ Բառաբարդումն ու ածանցումն ընդգրկող լրիվ կաղապարը բավականին բարդ ու ծանրաբեռնված տեսք կունենար և կզրկվեր բացատրողական արժեքից։ Այդ պատճառով դիմում

ենք ոչ թե լիակաղապարի կամ ընդհանրական կաղապարի, այլ հիմնակաղապարի հասկացությանը։

Գրաբարի բառակազմական տարրերի զուգորդումների ամբողջ բազմազանությունը հանգեցվում է երկու գլխավոր հիմնակաղապարի՝ 1) հիմք+հիմք և 2) հիմք+ածանց։ Հիմքերի զուգորդությունները միմյանց հետ ընդունված է կոչել բարդություններ կամ բարդ բառեր, հիմքի և ածանցի զուգորդությունները՝ ածանցավոր բառեր։ Իսկ այն կազմությունները, որոնք պարունակում են մեկից ավելի հիմքեր+ածանց(ներ)՝ բարդ ածանցավոր բառեր։ Քննության ընթացքում այս վերջին տիպի կազմությունները մենք բաշխում ենք առաջին երկուսի վրա, նայած այն բանին, թե վերջին բառակազմական քայլը ինչ բնույթի է՝ ունենք ածանցավոր հիմքերի միացում, թե բարդ հիմքերի ածանցում։ Ըստ այդմ առանձնացվում է բառերի կազմության երկու գլխավոր եղանակ՝ բառաբարդում և ածանցում[52], որոնք բաղադրյալ բառերի ստեղծման գործընթացում հանդես են գալիս կամ առանձին-առանձին, կամ (բարդ ածանցավոր բաղադրությունների մեջ)՝ հաջորդաբար։ Կան, սակայն, դեպքեր, երբ այդ երկու միջոցները գործում են միաժամանակ և հնարավոր չէ պարզել բառակազմական քայլերի հաջորդականությունը։ Այդ տիպի բառերի համար առանձնացվում է հատուկ կաղապար։

Գրաբարի բառակազմական կաղապարները ներկայացնելու համար օգտվում ենք հետևյալ պայմանական նշաններից. S—սկզբնահիմք, a—ածանց, f—քերականական մասնիկ կամ թեքույթ, j—հոդակապ, c-շաղկապ, p—նախդիր։

Հիմքի հնչյունափոխված կամ ձևավոր տարբերակը անհրաժեշտության դեպքում նշում ենք S̲ նշանով՝ S̲jS—ազնուազուր, քերականական ձևավորում ունեցող հիմքը՝ $S^f$ նշանով՝ $S^fS^f$—օրէնսուսոյց, $S^fjS^f$—անուանադիր, կրկնավորներն ընդգծվում են՝ SjS—չարաչար, S̲jS—դիզադէզ, բաղադրիչների անջատ կիրառությունը արտացոլվում է գծիկով՝ S—S—երփն երփն, $S^f$—$S_f$—գաւառս գաւառս: Միասնաբար հանդես եկող բաղադրյալ ձևույթները կցվում են իրար + նշանով՝ $(SS^f)(a+a)$—երկբայանամ: Վերոհիշյալ պայմանական նշանները բառակազմական կաղապարի բաղադրիչների դասավորությունն արտահայտելու համար տեղադրվում են գծային նույն հաջորդականությամբ՝ a[(SS)a]—անաստուածպաշտութիւն, a(ajS)—անպարագիծ, $SpS^f$—միըստմիոջէ:

Պետք է նշել, որ գրաբարի բառակազմական հնարավորությունները բավական լայն են ոչ միայն կաղապարների բազմազանության, այլև



նրանց իրացման հնարավորությունների տեսակետից։ Կարելի է ասել, որ բառակազմական տարրերի, հատկապես հիմնական ձևույթների զուգորդելիության կառուցվածքային և կարգային (խոսքիմասային) սահմանափակումներ գրեթե չկան։ Այդ զուգորդելիությունը հիմնականում պայմանավորված է բառակազմական տարրերի իմաստային կողմով։

Գրաբարի բառակազմական կաղապարները ներկայացնում ենք երկու հիմնական խմբերով, ըստ բառակազմության երկու գլխավոր եղանակների՝ բառաբարդման և ածանցման։ Յուրաքանչյուր խմբում ներկայացվում են հիմնակաղապարները և նրանց ենթակաղապարները։ Հիմնակաղապարը որոշվում է ըստ բաղադրիչների քանակի և կազմի։ Ենթակաղապարներն առանձնացվում են ըստ հիմնակաղապարի բաղադրիչների կրած փոփոխությունների (դիրքային և փոխազդեցական հնչյունափոխության, հիմքի քերականական ձևավորում), ըստ անհրաժեշտության նաև սկզբնահիմքերի խոսքիմասային պատկանելության։ Ըստ այդմ ընդունվում են խոսքի մասերի հետևյալ պայմանական նշանակումները՝ Գ(Sub)-գոյական, Ա(Adj)-ածական, Թ(Num)-թվական, Դ(Pron)-դերանուն, Բ(Ver)-բայ, Մ(Adv)-մակբայ, Ն(Prep)-նախդիր, Շ(Con)-շաղկապ, Ձ(Jnt)-ձայնարկություն։

Ի տարբերություն ժամանակակից բառակազմագիտության մեջ տարածված սկզբունքի, որի համաձայն բառակազմությունը որպես գործընթաց և այդ գործընթացի արդյունք քննվում է բառի ձևույթային կառուցվածքի քննությունից անջրպետված, մեր ընդունած կաղապարները հնարավորություն են տալիս միաժամանակ հստակ կերպով ներկայացնելու ինչպես բառի ձևույթային կազմությունը, այնպես էլ բառակազմական եղանակներն ու բառի սերման պատմությունը՝ բառակազմական տարրերի աստիճանական կցման հերթականությունը։ Այդ նպատակով դիմել ենք բառակազմական կաղապարի մեջ փակագծերի համապատասխան համակարգի օգտագործմանը։ Ամենանախնական բառակազմական քայլը առնվում է կլոր փակագծերի մեջ, հաջորդը՝ ուղիղ և վերջինը՝ ձևավոր։ Փակագծերի բացակայությունը նշանակում է բաղադրիչների միաժամանակյա կցում։ Այս առումով բաղադրյալ բառերի մեր ընդունած կառուցվածքային բանաձևերը կարելի է կոչել շարժուն (դինամիկ) կաղապարներ (բառի բառակազմական պատմությունը արտացոլելու ունակության տեսակետից)։

Կաղապարների շարժունությունն ապահովվում է նաև նրանց աստիճանական բարդացման, ավելի ճիշտ, մանրամասնեցման հնարավորությամբ։ Վերացարկման աստիճանից կախված՝ կաղապարներում կա-

բող են արտացոլվել կամ չարտացոլվել բառակազմական տարրերի հնչյունական և ձևաբանական փոփոխությունները, հիմքերի խոսքիմասային պատկանելությունը, արմատների ազատ կամ կապված լինելը, ածանցների գործառական արժեքը (տվյալ խոսքի մասը կերտելու ունակությունը) և այլ առանձնահատկություններ։

Այսպես, վերճառուղ բարդության առավել վերացական բանաձևն է (Sa)j(Sa), որտեղ նշվում է միայն բառակազմական միավորների կազմն ու կցման հաջորդականությունը. ավելի մանրամասն այն ներկայացվում է $(S\underline{a})j(S^f\underline{a})$ տեսքով, որտեղ արտացոլված է բաղադրիչների հնչյունական և քերականական ձևավորումը։ Սա մեր կաղապարների ներկայացման հիմնական ձևն է։ Հնարավոր է ցուցիչների ձևով տալ նաև հիմքերի կարգային (խոսքիմասային) բնութագիրը՝ $(S_{Adv}\,a)\,Aj\,(S^f_v\text{-}a)^{Part}$, այսինքն՝ նշել, որ առաջին բաղադրիչն ածական է՝ սերված մակբայական սկզբնահիմքից, երկրորդը՝ դերբայ՝ կազմված քերականական ձևավորում ունեցող հնչյունափոխված բայարմատից, ընդ որում, V—ցուցիչի նշանը արտացոլում է արմատի կապված լինելը։ Սակայն նկարագրությունը չծանրաբեռնելու նպատակով այս կարգի բանաձևերից հիմնականում խուսափել ենք, թեև անհրաժեշտության դեպքում կաղապարները տալիս են այդ հնարավորությունը, որը կարելի է իրացնել հետագա, ավելի մանրամասն հետազոտություններում։

Հիշեցնենք նաև, որ բաղադրյալ բառի բնույթը (ածանցավոր թե բարդ) որոշվում է ըստ բառակազմական գործընթացի վերջին քայլի։ Եթե վերջին քայլը ածանցի կցումն է, կաղապարը մտնում է ածանցավորների մեջ, իսկ եթե վերջին քայլը երկու հիմնային ձևույթների (իրենց կցված ածանցներով հանդերձ) միացումն է, կաղապարը մտնում է բարդությունների մեջ։ Անհրաժեշտ է, սակայն, նշել, որ բառակազմական պատմությունն արտացոլող կաղապարների որոշումը, անշուշտ, պայմանական բնույթ ունի հունաբան դպրոցի ստեղծած մի շարք տերմինների համար, քանի որ դրանք կազմվել են հունարեն բառերի ճշգրիտ պատճենմամբ և արտացոլում են նրանց կառուցվածքը։ Այնպես որ բառակազմական քայլերի հաջորդականություն այստեղ իրականում չի եղել, սակայն կաղապարներն առանձնացվում են, ելնելով գրաբարի բառակազմական համակարգի ընդհանուր օրինաչափություններից և բառակազմական միջոցների առանձնահատկություններից (կցման հաջորդականությունը և այլն), որ դրսևորվում են նաև այլ բառերում (օր.՝ բաղստորադրութիւն συνκαταθέσις բառը կարող է ներկայացվել a[(ajS)a] կաղապարի տեսքով, թեև



պարզ է, որ այն ստեղծվել է միանգամից, բառակազմական մեկ քայլի ընթացքում, բառապատճենման միջոցով)։

Մի քանի բաղադրիչների միաժամանակյա կցում տեղի ունի նաև մի շարք ածանցների դեպքում, երբ ածանցավոր (ավելի ճիշտ՝ բարդածանցավոր) բառը կազմվում է ոչ թե նախապես լեզվում գոյություն ունեցող բարդ բառից (որը տվյալ դեպքում հանդես կգար երկրորդային սերող հիմքի դերում, ինչպես՝ ողջախոհ–ողջախոհաբար), այլ բառակապակցությունից, ինչպես՝ հազար ամ+եայ–հազարամեայ, առ ոտն հարկանեմ+ու–առոտնհարու, զբանս ուսամ+ակ–բանուսակ և այլն։ Այս տիպի կառույցներն արտացոլող կաղապարները ներկայացվում են առանց փակագծերի՝ SSa-հազարամեայ, բանուսակ, aSSa-առոտնհարու։ Այս տիպի կազմությունները նույնպես, անկախ սերող հիմքի բնույթից, դասվում են ածանցավոր բաղադրությունների կազմում, քանի որ դրանք որպես բառային միավոր, վերջին հաշվով, ձևավորվում են ածանցի կցման շնորհիվ (թեև որպես առանձնահատուկ, խառը տիպի կաղապարների իրացում կարող էին ներկայացվել նաև առանձին, նկատի ունենալով արմատական և ածանցական բաղադրիչների համադրությունը՝ միաժամանակյա կցման առումով)։ Այսպիսով, գրաբարի բաղադրյալ բառերը նկարագրվում են երկու տիպի՝ բառաբարդման և ածանցման կաղապարների միջոցով։

Բառակազմական կաղապարների քննությանն անցնելուց առաջ անհրաժեշտ է ավելի հանգամանորեն կանգ առնել բառակազմական ելակետային միավորի՝ բառակազմական հիմքի ձևավորման առանձնահատկությունների վրա։

## ՀԻՄՔԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ

*Ինչպես հին հնդեվրոպական մի շարք լեզուների, այնպես էլ գրաբա-
րի լեզվական կառուցվածքի նկարագրության համար կարևոր նշանակու-
թյուն ունի հիմքի՝ որպես բառակազմական և բառափոխական պրոցես-
ների ելակետային միավորի հասկացությունը։*

*Հիմքի առանձնացումը պայմանավորված է ոչ միայն նրանով, որ
այն հարացուցային շարքերում և բառակազմական դասերի մեջ հանդես
է գալիս որպես բառի հիմնական, հարաբերականորեն անփոփոխ մաս՝
ի հակադրություն միմյանց հետ հերթագայվող թեքույթների (բառակազ-
մության ժամանակ՝ ածանցների և այլ հիմքերի), այլև նրանով, որ հիմ-
նական և երկրորդական ձևույթների հետ զուգորդվելու պրոցեսում այն
կարող է ստանալ հատուկ ձևավորում։ Հիմքերի այդ ձևավորման և զու-
գորդման առանձնահատկությունների հիման վրա էլ տարբերակվում են
քերականական (ձևաբանական) և բառակազմական հիմքերը։ Քերակա-
նական հիմքերի դեպքում այդ ձևավորումը, ինչպես գիտենք, հիմնակա-
նում կապվում է թեմատիկ ձայնավորների (անվանական հարացույցնե-
րում) և դրանց հետ զուգահեռ՝ հատուկ հիմքակազմ ածանցների հետ
(բայական հարացույցներում)։ Կան նաև հիմքակազմության այլ միջոց-
ներ (հերթագայություններ, սուպլետիվիզմ և այլն), որոնք սակայն մաս-
նավոր դեպքեր են և կանոնավոր բնույթ չեն կրում։*

*Բառակազմության ժամանակ, թեև շատ դեպքերում հանդես են գա-
լիս քերականական հիմքերին համընկնող ձևեր, սակայն հիմքակազմու-
թյան հիմնական օրինաչափությունները սկզբունքորեն տարբերվում են
ձևաբանականից։ Բաղադրյալ բառերի մեծագույն մասում անվանական
հիմքը համընկնում է ուղղական հոլովաձևին, իսկ բայականը՝ բայարմա-
տին։ Սակայն քիչ չեն և այն դեպքերը, երբ անվանական հիմքերը հանդես
են գալիս եզակի և հոգնակի տարբեր հոլովաձևերով* (առն-ական, օրէնս-
դիր, ձերբ-ա-կալ, ձեռ-ային, մարդկ-ական, ան-արանց), *իսկ բայա-
կանները՝ ներկայի կամ անցյալ կատարյալի հիմքին, անորոշ դերբային,
բուն հրամայականին, պատճառական անցյալի հիմքին և հարացուցային*



*այլ ձևերի համընկնող ձևավորմամբ* (գնաց-ական, եռացուց-*իչ*, սիրել-*ի*,
*լալ-ումն, քաշ-ա-լեր-ութիւն*)։
*Թե՛ ձևաբանական, թե՛ բառակազմական հիմքակազմության ժամա-
նակ տեղի են ունենում նաև սկզբնաձևի զուտ հնչյունական փոփոխու-
թյուններ (դիրքային և փոխազդեցական), որոնք քերականական արժեք
չունեն և իրենցից ներկայացնում են բառերի և բառաձևերի կազմավոր-
ման կողմնակի արդյունք, սակայն նրանց քննությունը նույնպես կարևոր
է բառակազմական և ձևակազմական պրոցեսի պատկերը լրիվ ներկայաց-
նելու տեսակետից։*

*Թեև ժամանակակից լեզվաբանության մեջ բառակազմական հիմքի
գաղափարը առաջ է քաշվում հիմնականում միայն ածանցման մասին
խոսելիս (նեղ իմաստով՝ բառածանցական հիմք), երբ այն հակադրում են
բառակազմական մասնիկին*[53]*, հատկապես վերջածանցներին, սակայն
հիմքակազմության նույն օրինաչափությունները գործում են նաև բառա-
բարդման ժամանակ, այնպես որ, կարելի է ասել, թե այստեղ ևս գործ
ունենք ոչ թե պարզապես արմատների կամ ձևույթների, այլ որպես հիմք
ձևավորված արմատական ձևույթների միացությունների հետ։ Ավելին,
հիմքերը, լինելով բարդության առաջին, կամ երկրորդ բաղադրիչ, բառ
դրա էլ դրսևորում են կազմության յուրահատկություններ։ Ըստ այսմ բա-
ռածանցումը կարելի է ներկայացնել որպես հիմքի և ածանցի (ածանցնե-
րի), իսկ բառաբարդումը որպես մեկից ավելի հիմքերի և նրանց միացնող
տարրերի (հոդակապեր և այլն) բաղադրություններ*[54]*։*

*Տարբեր կաղապարների դեպքում գործում են հիմքերի տարբեր տի-
պեր։ Բառակազմական հիմքերի դերում կարող են հանդես գալ ոչ միայն
պարզ, այլև բաղադրյալ միավորները, երբ բառը հաջորդաբար մասնակ-
ցում է մեկից ավելի բառակազմական քայլերի։ Այդ դեպքում նախորդ
բաղադրությունը բառակազմական հիմք է հաջորդ բառի համար՝* ներգոր-
ծողականաբար, անաստուածպաշտութիւն։ *Այն հիմքերը, որոնք բառա-
կազմական տեսակետից պարզ են, այսինքն՝ այլևս տրոհելի չեն բառա-
կազմական մասնիկների, կոչենք առաջնային հիմքեր։ Սրանք հանդիպում
են միայն ամենապարզ* (SjS, SS, Sa, aS) *կաղապարներում, որոնցից
յուրաքանչյուրն իր հերթին կարող է հիմք ծառայել այլ բաղադրությու-
ների համար։ Մյուս բոլոր կաղապարներում հանդես են գալիս երկրոր-
դային հիմքերը, որոնք բառակազմական տեսակետից պարզ չեն, այսինքն՝
իրենցից ներկայացնում են առաջնային հիմքերի միացություններ բառա-
կազմական այլ նշանների հետ։ Ըստ այդմ երկրորդային հիմքերը պետք
է կազմված լինեն առնվազն երկու բաղադրիչից (առաջնային հիմք+*

ածանց կամ մեկ այլ հիմք), բայց կարող են պարունակել նաև երկուսից ավելի հիմքեր և ածանցներ՝ լինել եռաբաղադրիչ, քառաբաղադրիչ և այլն:

Առաջնային և երկրորդային հիմքերի առանձնացումը պայմանավորված է ոչ միայն նրանց բառակազմական բարդության աստիճանով, այլև ձևավորման առանձնահատկություններով և բառակազմական դինամիկայում նրանց կրած փոփոխությունների բնույթով: Նախ և առաջ նշենք, որ թե՛ առաջնային, թե՛ երկրորդային հիմքերը կարող են լինել մաքուր և ձևավոր[55]: Առաջնային հիմքերի մեջ մաքուր ենք համարում այն հիմքերը, որոնք համընկնում են արմատական ձևույթին և բառակազմական գործընթացում որևէ փոփոխություն չեն կրում, բացի շեշտի կորստից (այն դեպքում, երբ բառն աճում է աջից), ինչպես՝ ագահ-ութիւն, ան-արուեստ, աստուած-որդի, արոր-ա-կալ: Ձևավոր հիմքերը իրենց հերթին բաժանվում են երկու տիպի՝ զուտ հնչյունական փոփոխությունների ենթարկված հիմքեր (կախված շեշտի դիրքի փոփոխությունից և ձևույթների կարերում հնչույթների փոխազդեցությունից)՝ ազնու-ական, դիւ-աբար, երկր-ա-չափ և հիմքակազմ տարրերով կամ հերթագայություններով օժտված հիմքեր, որոնց այդ յուրահատուկ ձևավորումը կապված է հենց բառակազմական գործընթացի հետ՝ առն-ական, ուսուց-ումն, ձերբ-ա-կալ, արար-իչ: Երկրորդային ձևավոր հիմքերի դեպքում, անկախ նրանց բաղադրիչների թվից, տեղի են ունենում միայն առաջին տիպի՝ զուտ հնչյունական փոփոխություններ: Հնչյունափոխության է ենթարկվում հիմքի վերջավանկի ձայնավոր տարրը՝ պարզ հնչույթ կամ երկբարբառ (գիտուն-գիտն-ագոյն, հայրենի-հայրենատուր, վերին-վերնագաւառ, ողջակէզ-ողջակիզաբար, հետախոյզ-հետախուզեմ, ողջոյն-ողջունաբեր):

Երկրորդային հիմքը կարող ենք մաքուր կոչել, եթե բառակազմական նոր ձևույթի կցման դեպքում այն փոփոխություններ չի կրում՝ թագաւոր-ա-բնակ, գերունակ-ապէս: Պայմանականորեն երկրորդային մաքուր հիմքերին են հավասարեցվում այն դեպքերը, երբ երկրորդային հիմքը որպես բաղադրիչ պարունակում է արդեն իսկ հիմքակազմական ձևավորում ստացած որևէ առաջնային հիմք, որը բառակազմական պրոցեսի շարունակության դեպքում այլևս լրացուցիչ փոփոխությունների չի ենթարկվում՝ աստեղաբաշխ-աստեղաբաշխական, առնական-առնականութիւն, օրինաւոր-օրինաւորական:

Առաջնային և երկրորդային հիմքերի այս սկզբունքային տարբերությունը հատկապես ցայտուն է դրսևորվում այն դեպքերում, երբ միևնույն բառն ի հայտ է գալիս որպես առաջնային հիմք և երկրորդայինի կազմիչ. այսպես, որոշ արմատներ (անուն, տէր, ակն և այլն) որպես առաջնային



հիմք մեծ մասամբ ունենում են սեռական-տրական հոլովաձև՝ անուանական, անուանումն, անուանութիւն, անուանադիր, անուանակիր, անուանակից, ականաւոր, ականողիք, ականատես, տեառնաբար, տեառնեղբայր (թեև հանդիպում են և ուղղականաձև՝ անուանակիր, ակնաղբիւր, տէրութիւն), իսկ երկրորդային հիմքերի կազմում ենթարկվելով բառաբարդման կամ ածանցման, երբեք չեն ստանում սեռական-տրական հոլովի ձև՝ տանուն-աբար, հոմանուն-աբար, յարանուն-աբար, փաղանուն-ակի, աստուածանուն-ութիւն, գերանուն-ութիւն[56], բոցակն-ագոյն, արեգակն-ածագութիւն, տանուտէր-աբար: Մեր ընտրանքում հանդիպած միակ բացառությունը բաղմանական բառն է, բաղումն երկրորդային հիմքի սեռ.-տր. հոլովաձևով:

Այսպիսով, առաջնային և երկրորդային հիմքերի ձևավորման ընդհանրությունը հանգում է նրանց կրած հնչյունափոխություններին, որ տեղի են ունենում գրաբարի հայտնի օրինաչափություններով՝ շեշտից կախված հնչյունափոխության են ենթարկվում ի, ու «թույլ» ձայնավորները, է, ոյ, եա երկբարբառները, եայ, իայ եռաբարբառները (վերջիններս սակավադեպ են) և գաղտնավանկի ը-ն: Ա, ե, ո ձայնավորների փոփոխությունները խիստ հազվադեպ են, վկայված են ընդամենը մեկ-երկու օրինակով և թերևս արդյունք են բարբառային ներթափանցումների: Սակայն քանի որ դրանք բացառված չեն նաև հոլովման մեջ (համ. ծիծեռն-ծիծռան), ապա բառակազմության մեջ հանդիպող օրինակները նույնպես չպետք է սխալագրություն համարվեն և դուրս թողնվեն քննությունից:

Տեղի են ունենում նաև փոխազդեցական հնչյունափոխություններ ձևույթների միացման կարերում՝ կապված ներքին սանդհիի երևույթի հետ:

Ամենից ավելի բազմազան են ի ձայնավորի կրած փոփոխությունները՝ կախված տարբեր կառուցվածքի վանկերում և շրջապատի հնչույթների նկատմամբ նրա գրաված դիրքից: Այստեղ հնչյունափոխության ամենատարածված տիպերն են ի/∅, ի/ը, ի+ա/ե մասամբ՝ ի/ե:

I. Ի/ը հնչյունափոխությունը տեղի ունի հետևյալ դեպքերում.

Ա. vcc, cvc, cvcc կառուցվածքի միավանկ հիմքերում, եթե դրանք հանդես են գալիս բառի սկզբում (բարդությունների մեջ՝ որպես առաջին բաղադրիչ): Հիմնական կաղապարներն են՝ SjS, SS, Sa: Երկրորդային հիմքերի դեպքում, հիմնականում (SjS)a, (SS)a, (Sa)a, (aS)a կաղապարներում, երբ վանկի նշված կառուցվածքն ունեցող արմատները կամ

*ածանցները հանդիպում են աջ եզրային բառակազմական միավորից առաջ:*

S̲jS *1)* vcc-ըղձակերտ, ըղձապատում, ըղձափափաք, ընչաբաղ, ընչագուրկ, ընչաշատ, ընչաքաղց

*2)* cvc-բժաբեր, բրածեծ, գրագէտ, թռալիր, ժրագլուխ, լկաձև, լճամէջ, խճաքար, ծրագիր, կնամոլ, ձլածիգ, ջղակապ, սնակուշտ, փղակոյտ, քմազարդ

*3)* cvcc—գրպախաղաց, գրկալիր, լրբախօս, խղճամիտ, ճնգաքաղաքք, մշտաբուղխ, մրգաբեր, պղծաբան, պնդակազմ, ջնջագիր, սրտաբեկ, վրշտաբեր, տղմաբաբու

S̲S. *1)* vcc—ընչատեաց, ընձուղտ

*2)* cvc—խծբիծ, չքմեղս

*3)* cvcc—բրտերախ, խստերախ, սրտկեղ, վշտամբեր

S̲a. *1)* vcc—ըղձական, ընչաւէտ

*2)* cvc—բծկան, գտանք, գրական, գրանոց, ժտագոյն, խթան, ծնական, կրական, կցան, ճնագոյն, ձգական

*3)* cvcc—բրտագոյն, ճնգակի, շռնչան, ջնջան, գրգանք, լպրշանք, խստաբար, սրտագին, վշտագին, տղմագին, բրտանալ, ճշտել, պրկել

*(SjS̲)*a. *1)* cvc—դիւրադրաբար, պարզամտաբար, փոխատրաբար, պատմագրական, կենդանածնական, բարեկրեալ, ախորժալրութիւն, անձրևածնութիւն, անուանադրութիւն, աստուածատպութիւն, արդարամտութիւն, երկայնամտել, խելամտել, կենդանագրել, ճառագրել, կենածնել, յարաձգել

*2)* cvcc—նաւանստական, երիզապնդեալ, չլապնդեալ, վատասրտել

*(SS̲)*a—օրէնսդրական, սրտամտական

*(Sa)*a—ցաւագնագոյն, նախկնագոյն, մոլեգնեալ, փոքրկանալ

*(aS̲)*a. *1)* cvc—անծնութիւն, անբծութիւն, անմտութիւն, անչքութիւն, անմտել

*2)* cvcc—անվշտութիւն, անսրտութիւն

*Բ. բազմավանկ հիմքերի վերջին փակ վանկում (*cvc, cvcc *կառուցվածքի), երբ ի ձայնավորի սղման դեպքում կստացվեր երեք և ավելի բաղաձայնների կուտակում: Այս դեպքում վերջին բաղաձայնն անցնում է հաջորդ վանկին, իսկ ի/ը հերթագայությունը կատարվում է նախորդ բաց կամ փակ վանկում:*

S̲jS—ազնուագութ, աղջկամարդ, դարգճակալ, խարսխաձև, կարկնաձև, կարմրագիր, կնքադէմ, կտտամաճ, յակնթակապ, ոջլալից, պարըսպապահ



S̲S—աղջկորդի, խորտկարար, կարմրայտ, շռնչանուն, ստնգի

S̲a—ազնուական, բժշկական, բժշկել, դարբնական *(հնարավոր է և* դարբ-նական *տարբերակը),* կսկծական, լպրծագոյն, լպրշական, ճանգրստանալ, ոմզդական

*գ) Վերջում գաղտնավանկ ունեցող հիմքերի վերջընթեր լիաձայն վանկում.*

S̲jS—մգնաձև, քրտնաբեր, ճգնագիր, սկզբնաբոյս, փանդռնահար

S̲a—ճգնական, սկզբնական

*II. Ի/∅ հնչյունափոխությունը տեղի ունի հետևյալ պայմաններում.*

*Ա. Բազմավանկ հիմքերի վերջին* cvc *կառուցվածքի վանկերում, ընդորում վերջին բաղաձայնն անցնում է հաջորդ վանկին.*

S̲jS—ամսագլուխ, անդրանկածին, գետնաբեկ, դահճապետ, դեղնագոյն, թախծադէմ, ճշգրտագործ, մարգարտատեսակ, մոխրալից, պատուագիր, ռամկավար, օձտաբեր

S̲S—աղախնորդի, գետնառիւծ, երկնառաք, ծաղկերանգ, կշռարար, կռուարար, ուղղընթաց

S̲a—ամսական, անահտական, դաւթական, երկրական, զննական, ընտրանք, ուղղաբար, պատուաբար, զազրագոյն, թախծագոյն, թախծել

*(Sa̲)*a—առաջնական, վերնական, լուսնական, պարսկական, կրկնակի, մեկնակի, առաջնային, վերնային, փրկչական, արարչական, գեղեցկաբար, աստուածայնաբար, մոլեգնաբար, տեսլական

*(Sa)*jS—գեղեցկադիր, գեղեցկախօս, առաջնածին, լուսնաբիւ, լուսնապաշտ, միջնաբերդ, միջնապարիսպ, յետնածեր, յետնամեղ, ներքնատուն, ստորնակայ, վերնազաւառ, արարչագործ, կրկնայարկ

*(SjS̲)*a—*այս կաղապարով վկայված են* -ութիւն *ածանցով բազմաթիվ օրինակներ՝* բարձրաքննութիւն, արագաթռչութիւն, բանակռուութիւն

*(Sa)*S—գեղեցկարար, գեղեցկաղեղն, գեղեցկոտն, կրկնարօր, վերնանկիւն, լուսնակն, միջնանիւ, միջնաշխարհ, միջնորմ, անկողնարկ

*(S̲a)*jSք—միջնաթիկունք

*(aS̲)*a—անամուսնութիւն, անխտրութիւն, անմարմնութիւն, անպատուութիւն

*Բ.* Ի *հանգով բազմավանկ հիմքերի վերջում, երբ հաջորդ բաղադրիչն սկսվում է ձայնավորով: Այս տիպի հնչյունափոխություն տեղի ունի հիմնականում ածանցներից առաջ, բարդություններում մեջ վկայված է համեմատաբար սակավ օրինակներով՝ մեծ մասամբ վերջահանգ* ի-ն, *ձուլվելով* ա *հոդակապին, առաջացնում է* եա>ե *հնչյունափոխությունը:*



5—442

SjS—աղաւճակերպ, գերանդաբեր, գերանդազէն, եկեղեցագաւառ, եկեղեցազարդ, եկեղեցախորան, բնտանասէր, բնտանասուն, յոռածին, մոլաթուզ, մոլարոյս, մոլախինդ

SS—բարատեպ, բարերջանիկ, ճոգեռանդ

S Sa—գինարբու, գինըմպու

(Sa) S—ճայրենաւանդ

Sa—եկեղեցական, թշնամական, արփային, ամենաբար, յոռաբար, առաfինաբար, բերազոյն, յոռութիւն, խնամութիւն, արզասաւոր, գերութիւն, լկտութիւն, արութիւն, սոնակ

(Sa)a—արfունական, ծերունական, մանկունական, տերունական, յայտնական, վայրենական, նախնական, ծիրանաւոր, ծիրանութիւն, յայտնաբար, բռնաբար, ճայրենաբար, պիտանաբար

(Sa)jS—աղտեղագործ, աղտեղաճանդերձ, աղտեղասէր, այծենական, ճայրենակատար, ճայրենատուր, վայրենամիտ, զաղտնագործ, զաղտնաշշուկ, սfանչելագործ

(aS)a—անարութիւն, անբերութիւն, անորդութիւն, անտեղութիւն

(Sa)S^f—սնոտիմաց, սfանչելարար

*III.* Ի *համգով բազմավանկ հիմքերի համար, ինչպես ասվեց, ավելի սովորական է* ի+ա>եա>ե *հնչյունափոխությունը, վկայված բազմաթիվ օրինակներում՝* SjS *կաղապարով՝* ալի, աղաւնի, աղի(f), այգի, արծուի (արծունճշան), բարի, գերի, գինի, բնտանի(f), լկտի(f), խեցի, կարասի, կարի, կարծի(f), ճոգի, ննի, մի (մետասան, մեկուսի)[57], մոլի, յղի, ոգի, ոսկի, որդի, ուղի, տեղի, փոշի *հիմքերով. որտեղ վերջահանգ* ի-*ն ձուլվում է* ա *հոդակապին՝ տալով* եա *երկբարբառը, որը շեշտազուրկ դիրքում հանդես է գալիս որպես* ե: *Բարդության երկրորդ բաղադրիչը հիմնականում սկսվում է բաղաձայնով՝* պլեկոծ, բարեզուք *և այլն: Ձայնավորով սկսվող բաղադրիչի դեպքում՝* բարեասաց, բարեանուն, բարեախորժ, բարեատեաց, ի-*ն վերածվում է իր ձայնորդ տարբերակին* (ե-*ն այստեղ սոսկ ուղղագրական արժեք ունի*[58], *եթե, անշուշտ,* ե, ա *տարրերը չեն բաշխվում տարբեր վանկերի միջև (հմմտ. նաև* ոսկեօղ). *ինչպես նշվում է Առձեռն բառարանում՝* բարե՛ասաց, բարե՛անուն *և այլն:* Եա-ե *հնչյունափոխությունը* բարերար, բարեսաց *ձևերում (*SS *կաղապարում) խոսում է* եա *երկբարբառի օգտին: Թե ինչու նշված բառերում* եա>ե *հնչյունափոխություն տեղի չի ունեցել շեշտազուրկ դիրքում, կարող են բացատրել և այն դեպքերը, երբ երկբարբառները պահպանվում են բաղադրություններում նաև առանձին արմատներում, առաջացնելով հիմքակազմական տարբերակներ՝* լեառնոտն–լեռնոտն, միայնակեաց–մենակեաց, օրէնագիր–օրինագիր, աշխոյժութիւն–աշխուժութիւն: *Նշենք նաև, որ որոշ դեպքերում* ի-*ն կարող է պահպանվել, թեև հաջորդ բաղադրիչն սկսվում է ձայնավորով՝* բարիատուր, բարիազգի:



Եա *երկբարբառ է առաջանում շեշտի տակ* Sa *և* (Sa)a *կաղապարներում՝* զրգլեակ, բնտանեակ, խշտեակ, յոռեակ, նախնեակ, ոսկեակ, որդեակ, պատանեակ, ջրեակ, *ինչպես նաև* երկեամ, եռեամ *բարդություններում՝* SS *կաղապարով: Այս դիրքում* եա>ե *հնչյունափոխությամբ վկայված է* արեկ (արի–ակ) *օրինակը: Մյուս՝ երկվանկ ածանցների դեպքում շեշտազուրկ դիրքում վկայված են* ի+ա>ե *հնչյունափոխությամբ ձևեր՝* ճոգեկան, մոլեկան, տարեկան, բնտանեկան, այրենոց, մոլեբար, որդեբար, մտացեբար, բնտանեբար, յոռեգոյն, այգեստան, տանեստան, գինեվէտ, ագեւոր, ալեւոր, աստեւոր, գոտեւոր, կարեւոր, ճեռեւոր, մայրեւոր, ունեւոր, ուղեւոր, տարեւոր:

Ու/ը *և* ու/∅ *հնչյունափոխությունների բաշխման պայմանները համընկնում են* ի/ը *և* ի/∅ *հնչյունափոխությունների վերը նշված բաշխման I. Ա, Բ, Գ և II. Ա, Բ կետերին, որոշ փոքր տարբերություններով, որոնք կնշվեն իրենց տեղում: Ստորև բերում ենք օրինակներ ըստ ամենահաճախական կաղապարների:*

*I.* Ու/ը հնչյունափոխություն.

*Ա.* SjS. *1)* vcc—*այստեղ միավանկ հիմքերի դեպքում, ի տարբերություն* ի-*ով հիմքերի՝* ու-*ն հնչյունափոխության է ենթարկվում միայն* ու+ն+բաղաձայն *կապակցություններում՝* ունջ, ունդ, ունշ–ընդարբատ, բնդասնունդ, բնշապտուկ *և այլն: Անփոփոխ են մնում* ուխտ, ունկն *և այլ հիմքերը:*

*2)* cvc—բնաբարձ, զրարան, թխագոյն, թփամուտ, լծադիր, լռանիստ, յրատես, խղատեղի, ծփալից, կնասալ, կռապաշտ, ճրաբաժակ, մթազգած, մխախառն, նշատերև, շնագլուխ, շfադիր, ջրաբեր, սզազգած, սռադատ, սրաբերան, տնակալ, ցլագլուխ, փշաբեր, fնահատ

*3)* cvcc—բռնադատ, գնդակից, թղթաբեր, լրջամիտ, խմբագործ, խնկալի, ծնկասէր, կշտապանակ, նրբալեզու, ոմբաfար, սրբագիր, տնկաբեր, ցրտաբեկ

SS. *1)* cvc—բնաշխարհ, զրպարտ, լծարձակ, լրտես, խժդուժ, ճրրկէզ, շնկննիթ, ջրարբ, ստանուն, տնանկ, փfադիf

*2)* cvcc—լրջմիտ, խնկաման, նրբաւարտ, սրբասաց, տնկարկ

Sa. *1)* vcc—բնշացf, բնջովին

2) cvc—բնական, ծփական, շնական, ջրական, տրական, ճրային, կռան, ծփանք, ճպարար, շնաբար, սղաբար, ստաբար, մրագին, բթագոյն, ճմագոյն, ճպագոյն, սղագոյն

3) cvcc—գնդական, ճնշական, շնչական, սրբական, տնկական, շրջան, խնկանոց, կրծանոց, նրբարար, լրբագոյն, նրբագոյն, սրբագոյն, գրտագոյն, բռնաւոր

*(SjS)a. 1)* cvc—զրուցատրութիւն, հարկատրութիւն, հովասնութիւն, մանկասնութիւն, մեծարնութիւն, մեծատնութիւն, գործամխել, եկամտել, զրուցատրել, հարկատրել, ձագասնել

*2)* cvcc—ամենասրբութիւն, այլազրկութիւն, աշալրջութիւն, բազմաշրջութիւն, եզախմբել, կենդանատնկել

*(aS)a. 1)* cvc—անգթութիւն, անդլութիւն, անլրութիւն, անստութիւն

*2)* cvcc—անշնչութիւն, անսրբութիւն

*Բ.* SjS—անդնդախոր, զմռսաբեր, ծծմբախառն, կարկտախառն, կնդրկախառն, մկնդահար, սանդղաձև, տաղտկալից, ցնցղաձև, փրփրածին, քեմխտապատ, քրքմացան

SS—աղմկարար

Sa—անդնդական, անրջական, մռնչական, աղմկել, անրջել

*Գ.* SjS—բռնադատ, դռնապան, եղնգնաքար, ճռնաձև

SS—լծնբարձ, ձկնորս, մկնաքիս, յանդգնարար

Sa—յանդգնագոյն

*II. Ու/∅ հնչյունափոխություն.*

SjS—ամրախիտ, արքնամիտ, բազկակից, բազմաբաժ, բլրաձև, բմբկահար, ծածկագիր, կակղամիս, կանխագէտ, մամռախնդիր, մանկաբարձ

SS—ամլորդի, բազկարձակ, բազմակն, կանխասաց, սկեսրայր, տրխրարար

Sa—ամրական, արքնական, պտղական, փաղաքշական, օգտակար, զարնային, գլխանոց, յլկանք, ծածկանք, տաղտկանք, բազմաբար, բլրաբար, մաքրաբար, օգտաբար, տրտմագին, բաքնագոյն, հմտագոյն, մանկագոյն, տրպագոյն

(SjS)a—գահագլխութիւն, իղագլխեմ

(aS)a—անհմտութիւն, անմաքրութիւն, անպտղութիւն, անտրտմութիւն, անպատմաբար, անտխրաբար

*III. Ու հանգով հիմքերի մեջ հաջորդ բաղադրիչը ձայնավորով սկըսվելու դեպքում տեղի է ունենում ու/ւ հնչյունափոխություն, ինչպես և ի հանգով հիմքերի մեջ, ու-ն այստեղ վերածվում է իր ձայնորդ տարբերա-*



*կին հաջորդող ձայնավորների հետ կազմելով երկբարբառներ*[59]*: Բայց եթե ի ձայնավորի նմանատիպ հնչյունափոխության ժամանակ առաջացած* եա *երկբարբառը հանդիպում է միայն շեշտի տակ, իսկ անշեշտ՝ եզակի օրինակներում, ապա* ուա *և* ուէ *երկբարբառները հետագա փոփոխության չեն ենթարկվում:*

SjS—աղուամազ, առուահանք, արուատէր, արտասուաբեր, լեզուակապ, հրնուալից, մեղուաբոյն, ուրուապաշտ

SS—արուէգ

Sa—արուական, հլուական, երկուական, երկուորի, երկուանալ, ուրուական, լեզուային, մեղուանոց, արուաբար, թթուաբար, մեղուոց, լեզուատ

–Ութիւն *ածանցից առաջ ու-ն վերածվում է վ բաղաձայնի՝* աղուութիւն, երկուութիւն, *թեև գրաբարի ուղղագրության կանոնների համաձայն ներկայացվում է ու տառով, կամ սղվում է, առաջացնելով հիմքակազմական տարբերակներ՝* թթուութիւն-թթութիւն, ցցուութիւն-ցցութիւն:

*Այստեղ պետք է նշել և հակառակ երևույթը, երբ հիմքի վերջին բաղաձայն վ-ն է փոխվում իր ձայնորդ տարբերակին և նույնպես հաջորդ ձայնավորի հետ կազմում երկբարբառ.* թիւ–թուական–թուակից, հովիւ–հովուական, պատիւ–պատուական, կռիւ–կռուակից–կռուանոց, անիւ–անուաւոր: *Ընդ որում այստեղ վ-ին նախորդող ի ձայնավորը ենթարկվում է իրեն հատուկ հնչյունափոխությունների՝* ի/ը, ի/∅:

*Ինչպես արդեն ասվել է, կան* ա, ե, ո *ձայնավորների հնչյունափոխության սակավաթիվ վկայություններ տարբեր կաղապարներում* ա/∅ նշտար–նշտրակ, շաբաթ–չորեքշաբթի, պահակ–պահկութիւն, սրբազան–սրբազնութիւն, ա/ը արմատ–արմտիք, օձանդակ–օձնդկութիւն, ո/∅ որկոր–որկրամոլութիւն–որկրամէտութիւն (*հմմտ.* որկորստութիւն), ո/ը քանոն–քաննակ, ե/ը ցեխ–ցխոտ, ե/∅ մժեղն–մժղուկ, սաեղն–սաղանի

*Ինչ վերաբերում է* ը *ձայնավորին, ապա այն օրինաչափորեն ընկնում է բառավերջի գաղտնավանկ պարունակող հիմքում, երբ բառակազմության մեջ երկրորդ բաղադրիչն սկսվում է ձայնավորով, և հիմքի վերջին բաղաձայնն անցնում է հաջորդ վանկին.*

SjS—ակնաբեր, անձնագով, արդնակիր, բարձրադէմ, եռանդնաթափ, եօթնածին, թանձրամած, ինքնաբաւ, խառնաղէզ, ծանրալուր, հիմնափոր, ձեռնագէտ, մանրակարկատ, մասնամուս, մառնագործ, կաթնաբեր, կողմնակալ, ոտնաբեկ, սառնապատ, փոքրատար

S̲S—ակնաղբիւր, անձնապաստան, անձրևտիր, բարձրանձն, ինքնանուն, ինքնասաց, լեռնոտն, ձեռներէց, մանրերամ, մանրոստ, ոտնառ, պուտնարդ, սերմնընկալ, տասնաղի

S̲a—դուզնաքար, առնաբար, ինքնագոյն, ծանրագոյն, մանրագոյն, յամրագոյն, յոգնագոյն, փոքրագոյն

(SjS̲)a—բազմամասնագոյն, ամենախառնաբար, նմանամասնաբար, բարեխառնագոյն

(SS̲)a—արեգակնակ, բոցակնագոյն, սրակնագոյն:

*Երկբարբառների հնչյունափոխությունը ավելի միօրինակ է. բոլոր կաղապարներում և վանկատիպերում շեշտից զրկվելով, երկբարբառները փոխվում են պարզ ձայնավորների՝ հայտնի օրինաչափություններով՝* է/ի *(երբեմն* ե*)*, եա/ե, ոյ/ու: *Անշուշտ, կան որոշ դեպքեր, երբ նրանք կարող են նաև պահպանվել, ստեղծելով տարբերակային բառակազմական հիմքեր, որոնց մասին կխոսվի ստորև: Նշված հնչյունափոխությունները շատ սովորական են և տարածված գրաբարում, հատուկ են գրեթե բոլոր բառակազմական կաղապարներին, այդ պատճառով վկայված բազմաթիվ օրինակներից կբերենք միայն մի քանիսը՝ ըստ ամենահաճախական կաղապարների:*

է/ի SjS—աղիտակոծ, աղիտաբեր, անիծաբեր, գիշակեր, գիտակից, երիցակից, հանգիտազօր, հանդիսադիր, նուիրաբեր, վրիպասէր, օրհնադիր

S̲S—գինատեաց, կիսանուն, հանգիտամանակ, հանդիսատեան, միջօր, տիրատեաց

S̲a—գիտական, հրաւիրական, նուիրական, պատուիրան, դիտանոց, թիկնանոց, դիմաբար, վիճաբար, միտագոյն, տիրագոյն, միջակ, վիճակ, ձիթաստան, գիսաւոր, տիգաւոր, քինաւոր, օրհնաւոր

(SjS̲)a—ախտասիրութիւն, աշխարհաշինութիւն, առաջադիմութիւն, աստուածագիտութիւն, գահավիժութիւն, ծանրադիւութիւն

(SS̲)a—արուեստագիտութիւն, աստուածսիրութիւն, աղքատսիրութիւն, բարսգիտութիւն, ինչպիտութիւն

(aS̲)a—անշինութիւն, անվրիպութիւն, անգիտաբար, անհանդիպաբար, անմիջաբար, անօրինաբար

Ոյ/ու—S̲jS—բուսաբեր, գուժաբեր, դուզնագիտ, զուգաբան, ընկուզազարդ, բուլամիտ, բունաբեր, լուսաբեր, խուզափորձ, կուսածին, համբուրասէր, յուզաքնին, յունասէր, ողկուզալից, ողջունազարդ, պաճունազարդ, փութաբեր

S̲S—բուսարձակ, ժուժկալ, կուսորդի, փութարար



S̲a—բուժական, զգուշական, խուզական, հրապուրական, ցուցական, քուրական, գուժկան, զուգաբար, պաճուճան, լուծանք, խրախուսանք, տռուզագոյն, անագորունագոյն, բուսակ, գունակ, կուտակ, ձուլած, կուսաստան, լուսարան, բուժել, ժուժալ, խուզել, յուզել, յուլանալ

(SjS̲)a—ապականալուծութիւն, բազմախուզութիւն

[S(Sa)]a—աստուածերեւութութիւն

(aS̲)a—անզգուշաբար, անժուժաբար, անխուզաբար, անյուսաբար, անզուգութիւն, անլուծութիւն, անփութութիւն

Եա/ե—S̲jS—ատենադպիր, արենանեմ, դայեկատոհմ, եղեմնախառն, լեռնաբեր, լերդաբոյր, կենազրաւ, կենսատու, կորեկահատ, մատենագէտ, մեհենաշէն, յաւիտենադիր, պատենազէն

S̲S—դայեկորդի, լեռնոտն, կենարար

S̲a—ատենական, ար[illegible]անեկական, լեռնական, մեհենային, դայեկաբար, կայենաւոր, մատենաւոր, վայրկենի, սենեկապան, լեռնօրէն, ներդեայ

(Sa)a—առաքելական, կատարելական, ընտրելագոյն

(SjS̲)a—երկայնակեցութիւն, լեռնակեցութիւն

*Եռաբարբառները գրաբարում ինքնուրույն սակավադեպ են, և նրանց հնչյունափոխությունն էլ, բնականաբար, վկայված է եզակի օրինակներով.*

եայ/է—քրիստոնեայ-քրիստոնէական, հրեայ-հրէութիւն, հրէաբար, Հրէաստան

իայ/ե—միայն-մենասէր, մենութիւն (*հմմտ.* միայնակեաց, միայնութիւն):

*Բացի բոլոր տիպի հիմքերին հատուկ այս հնչյունափոխական ձևավորումից, ինչպես արդեն նշվել է, առաջնային հիմքերը բառակազմական պրոցեսում կարող են ստանալ նաև յուրահատուկ հիմքակազմ տարրեր կամ ունենալ ոչ հնչյունափոխական հերթագայություններ: Հիմքերի այս տիպի ձևավորումը սերտորեն առնչվում է նրանց կարգային (խոսքիմասային) պատկանելությանը, քանի որ անվանական ձևավոր հիմքերը (ներառյալ թվականներն ու դերանունները) բառակազմության մեջ հանդես են գալիս հիմնականում տարբեր հոլովաձևերի հետ համընկնող ձևավորմամբ (ինչպես նաև որոշ դեպքերում ստանում են քերականական արժեք չունեցող աճականներ, իմաստազրկված ածանցներ և այլն), իսկ բայական հիմքերը՝ խոնարհման հարացույցի մեջ հանդես եկող բայահիմքերին կամ այլ ձևերին համընկնող ձևավորմամբ: Անշուշտ, պետք է նշել, որ*

բաղադրյալ բառերի մեծագույն մասում անվանական հիմքը համընկնում է ուղղական հոլովին, իսկ բայականը՝ բայարմատին։

1) Թեք հոլովաձևերի դեպքում անվանական հիմքերը հիմնականում ունենում են սեռական-տրական հոլովաձև։ Այդպիսի ձևավորման են ենթարկվում գերազանցապես ներքին թեքման պատկանող անունները.

ակն-ական՝ ականաւոր, ականի, ականող, ականողիք, ականակապ

աղբիւր-աղբեր՝ աղբերակն

անուն-անուան՝ անուանական, անուանութիւն, անուանի, անուանագիր, անուանագէտ, անուանարկ, անուանագործեմ, անուանադրեմ, անուանակցիմ, անուանակոչեմ, անուանափոխեմ

այր-առն՝ առնական, առնաբար, առնագոյն, առնացի, առնանոց, առնի, առնաղէն, առնապատկեր, առնխօսութիւն, առնապէս

աստղ-աստեղ՝ աստեղական, աստեղեայ, աստեղաբնակ, աստեղաբաշխ, աստեղաբանութիւն

աշուն-աշնան՝ աշնանային, աշնանի

ասր-ասու՝ ասուի, ասուեայ

արիւն-արեան-արեն՝ արձնաձեմ, արենագին, արենահեղութիւն

գարուն-գարնան՝ գարնանային, գարնանի, գարնանաբուղխ

գիւղ-գեղջ՝ գեղջեայ, գեղջուկ

դուռն-դրան՝ դրանիկ

եղբայր-եղբօր՝ եղբօրապես, եղբօրորդի

եղջիւր-եղջեր՝ եղջերեայ, եղջերու, եղջերագեղ

եօթն-եօթան՝ եօթանասուն, եօթանք

եզր-եզեր՝ ծովեզերեայ

թաղումն-թաղման՝ թաղմանական

թատր-թատեր՝ թատերական, թատերատես

կայսր-կայսեր՝ կայսերական, կայսերակերպ, կայսերագիր

կողմն-կողման՝ կողմանակի, կողմանաւոր, կողմանակալ

հայր-հօր՝ հօրաբարոյ, հօրաքոյր, հօրամոյն, հօրեղբայր, հօրորդի

մայր-մօր՝ մօրաքոյր, միամօր, միամօրութիւն

շուն-շան՝ շանի, շանագլուխ, շանախուր

սերմն-սերման՝ սերմանական, սերմանաւոր, սերմանիք, սերմանարկու, սերմանիչ, սերմանահան, սերմանահանութիւն

տէր-տեառն՝ տեառնանման, տեառնամայր, տեառնեղբայր, տեառնորդի

տասն-տասան՝ մետասան, տասանորդ, տասանորդիչ



տուն-տան՝ տանիք, տանտէր, տանտիկին, ընտանի, ընտանիք

քաղցր-քաղցու՝ քաղցուենի, քաղցուալից

քոյր-քեռ՝ քեռայր, քեռորդի

Ստացական դերանուններից՝ իմ-իմոյ՝ իմոյական, քո-քոյ՝ քոյին։

Հոգնակի սեռական-տրական հոլովաձևի հետ համընկնող հիմքով բաղադրություններ են կազմում ստացական և փոխադարձ դերանունները՝ մերային, մերոյին, մերունակ, մերազնեայ, մերասէր, մերասեռ, մերակերպ, մերազգեաց, ձերովին, ձերային, ձերոյն, իւրեանցային, իւրեանցասարաս, իւրեանցանեման, միմեանցասէր։ Գոյականներից հոգնակի սեռական-տրականի հիմք են ստանում որպես անեզականներ հանդես եկող մի շարք անուններ՝ աւետիք, բարիք, չարիք, մեղք, միտք, դիք և այլն՝ աւետեացաբեր, բարեացապարտ, չարեացապարտ, մեղացածին, մտացածին, դիցապաշտ։ Վկայված են նաև մի շարք այլ հիմքերով օրինակներ՝ այր-արանցի, անարանց, դև-դիւացամոլ, կին-կանանցաբար, կանանցական, կանանցածին, օր-ծերաւուրց, հինաւուրց, լեառն-լերանցամէջ, այլ-զայլոցկերութիւն։

2) Զուտ տրական հոլովաձևով են հանդես գալիս անձնական դերանուններից կազմված որոշ հիմքեր՝ մեզէն, մեզոյն, ձեզէն, ձեզոյն, նաև եզակի՝ քեզոյն (մակբայական արժեքով)։

3) Հոգնակի հայցական հոլովաձև ունեցող հիմքով նույնպես վկայված են մի շարք բաղադրություններ։ Սրանք, ամենայն հավանականությամբ, շարահյուսական կապակցություններից են առաջացել, ընդ որում բայական հիմքով երկրորդ բաղադրիչ ունեցող բարդություններում դեռևս բավական զգալի է բայի և նրա ուղիղ խնդրի հարաբերությունը՝ բանսարկու, զմիմեանսասէր, իմիմեանսահար, կենսատու, մեղսաբեր, մեղսախորհուրդ, օրէնսդիր, օրէնսդրիչ, օրհնութիւնսընկալու։ Նախնական շարահյուսական հարաբերությունները ցայտուն են արտահայտվում նաև -ութիւն ածանցով և երբեմն նաև նախդիրներով ձևավորված բաղադրություններում՝ արտաքսաբերութիւն, բանսարկութիւն, բարսգիտութիւն, զայլակերութիւն, զմիմեանսկալութիւն, զմիմեանսունակութիւն, ընդմի-միանսհարութիւն, միմիանսանկութիւն, միմիանսզրկութիւն, ներքսադրութիւն, ներքսածութիւն, օրէնսդրութիւն, օրէնսզանցութիւն։ Ածանցավոր կազմություններում հոգնակի հայցականի հիմքը վկայված է միայն կենսական, օրէնսերէն օրինակներում։

4) Մյուս հոլովաձևերով վկայված են հազվագյուտ օրինակներ՝ եզակի գործիական՝ այր-արամբի, կին-կանամբի, ձեռն-ձերբակալ, այս-այսուհետև, հոգնակի գործիական՝ մեք-մեօքակերպ, եզակի բացառական՝

իսկզբանէական, հոգնակի բացառական՝ յոգւոցհանութիւն, հոգնակի ուղղական՝ մարդիկ-մարդկական, մարդկային, մարդկաբար, մարդկակերպ, մարդկաձայն, որպես երկրորդ բաղադրիչ՝ չորքծիք, կիսադիք, եօթնամոլորակք, հնգաքաղաքք:

*5) Անվանական հիմքերի մեջ հանդիպում են և այնպիսի ձևեր, որոնք համընկնում են ոչ թե նշված ժամանակաշրջանում գործող հարացույցի որևէ անդամին ամբողջությամբ, այլ թեք հոլովաձևերից մեկի ձևաբանական հիմքին, ինչպես՝* մատանի *(սեռ.* մատին, *գործ.* մատամբ<*մատան+բ), ոտան-աւոր *(սեռ.* ոտին, *գործ.* ոտամբ<*ոտան+բ), հարսան-իք, հարսան-եկան *(սեռ.* հարսին, *հոգն. սեռ.* հարսան-ց), կանանոց, կան-ացի *(սեռ.* կն-ոջ, *հոգն. ուղղ.* կան-այք), գեղ-աքաղաք *(սեռ.* գեղ-ջ), տասան-որդ *(սեռ.* տասին, *հոգն. սեռ.* տասանց)*: Այս ձևերն արտացոլում են լեզվի ավելի վաղ շրջանի իրողությունները, կամ կարող են բարբառային ձևերի ներթափանցման արդյունք լինել (*գեղ *հիմքի դեպքում):*

*Ավելի բարդ պատկեր են ներկայացնում բայական հիմքերը: Սրանց կազմության առանձնահատկությունները քննելիս ամենից առաջ պետք է տարբերակել մի կողմից բուն բայերի, մյուս կողմից՝ այլ խոսքի մասերի մեջ հանդես եկող հիմքերը: Ինչպես գիտենք, բայը հայերենում միակ խոսքի մասն է, որ ունի պարտադիր քերականական ձևավորում, ձևական ցուցիչ՝ անորոշ դերբայի հատուկ վերջավորություն և հանդես է գալիս միշտ բաղադրյալ ձևով, կազմված լինելով առնվազն երկու բաղադրիչից՝ արմատ (հիմք) և վերջավորություն (եթե, անշուշտ, վերջավորության կազմի մեջ մտնող թեմատիկ ձայնավորը առանձին տարր չհամարենք)*[60]:

*Բայարմատը անկախ ձևով ներկայացված է ոչ թե բայերի այսպես կոչված «բառարանային» ձևերի մեջ (անորոշ դերբայ կամ սահմանական ներկայի եզակի առաջին դեմք), ինչպես անունների դեպքում է, այլ հարացույցում՝ կա՛մ որպես կատարյալի եզակի երրորդ դեմք, կա՛մ որպես բուն հրամայականի եզակի երկրորդ դեմք (ընդ որում այստեղ էլ գործ ունենք ոչ թե իբրպես մաքուր արմատի, այլ քերականական զրո ձևույթի հետ): Հարացույցի մեջ առկա է ներկայի և անցյալ կատարյալի հիմքերի հակադրություն և հստակ բաշխում որոշակի ժամանակաեղանակային ձևերի միջև. Հարացուցային բոլոր ձևերը կազմվում են այդ երկու հիմքերից որևէ մեկով:*

*Բայական ծագում ունեցող բառակազմական հիմքերը, ինչպես արդեն նշվել է, հիմնականում հանդես են գալիս մաքուր բայարմատի ձևով,*



*որը համընկնում է մե՛րթ պարզ բայերի ներկայի ձևաբանական հիմքին՝* ազատախօս, *մե՛րթ կատարյալի արմատական հիմքին՝* ականատես:

*Բառակազմական և ձևաբանական հարացուցային հիմքերի հարաբերակցությունը որոշելիս երբեմն դժվար է պարզել՝ գործ ունենք բայարմատի՞, թե անցյալ կատարյալի արմատական հիմքի հետ: Կարծում ենք, որ գերապատվությունը պետք է տալ կատարյալի հիմքին, քանի որ նախ՝ բառակազմության մեջ հաճախականության տեսակետից երկրորդ տեղում է անցյալ կատարյալի ցոյական հիմքին համընկնող բառակազմական հիմքը, որ համակարգային ուժեղ հենարան է ստեղծում նշված ձևերի համար, բացի այդ, տարահիմք կամ անկանոն խոնարհում ունեցող բայերի դեպքում* (ունիմ-կալայ, ուտեմ-կերայ, դառնամ-դարձայ, առնեմ-արարի *և այլն) բառակազմությանը մասնակցում է դարձյալ կատարյալի հիմքը՝* աքռակալ, գիշակեր, դիմադարձ, կենդանարար: *Այս պատճառով նպատակահարմար կլինի բայարմատ համարել միայն պարզ բայերի ներկայի հիմքին համընկնող ձևը, իսկ այն դեպքերում, երբ բայը խոնարհման հարացույցում ունի կատարյալի արմատական հիմք, բառակազմության մեջ այն համարել կատարյալին համընկնող:*

*Մի այլ կարգի դժվարություն է ներկայացնում այն դեպքը, երբ արմատական բայահիմքը բառակազմության մեջ հանդես է գալիս անհնչյունափոխ արմատի տեսքով, որը անկախ ի հայտ չի գալիս հարացույցի ոչ մի անդամի մեջ (*անդրանկածին, անուանագէտ, առաքինասէր, բազմագիր, բազմադէտ*), մինչդեռ կան ձևով դրանց համընկնող անկախ գոյականներ՝* սէր, գիր, կիր, դէտ *և այլն: Այս դեպքում արմատի խոսքիմասային արժեքը որոշելու համար պետք է հաշվի առնել նախ՝ նրանց բառակազմական իմաստը. տվյալ դեպքում գործողության իմաստն արտահայտված է բավական ցայտուն, փաստորեն այստեղ ունենք յուրատեսակ* nomina agentis՝ *բայարմատի հետ խնդրային կամ պարագայական հարաբերությամբ կապված առաջին բաղադրիչով: Այնուհետև, այստեղ որպես սերող հիմք հանդես են գալիս բայերը՝* անդրանկածին՝ *երկրորդ բաղադրիչը սերված է* ծնանել *բայից,* բազմադէտ՝ դիտել *բայից և այլն: Սա նշանակում է նաև, որ թեև բայական հարացույցի մեջ մաքուր արմատը հանդես չի գալիս, սակայն հստակորեն գիտակցվում է ինչպես ձևակազմության, այնպես էլ բառակազմության պրոցեսում: Այս տիպի կաղապարներին, ըստ երևույթին, պետք է մեծ հնություն վերագրել, թեև նրանք պահպանել են իրենց գործունությունը և ուսումնասիրվող շրջանում մեծ հաճախականություն ունեն:*

Բայական հիմքերին պետք է դասել նաև այն դեպքերը, երբ բայն ինքը կազմված է անվանական հիմքից՝ ժողովել, բժշկել, խմբել, հնարել, հռչակել, շնորհել, պարգևել, ներկել, վաստակել և այլն, քանի որ հետագա բառակազմական պրոցեսում նախատիպ է ծառայել բայը և ոչ թե անկախ անունը: Այստեղ էլ ցայտուն կերպով պահպանված է գործողության իմաստը՝ ամբոխաժողով՝ «ամբոխ ժողոված», ամենաբժիշկ՝ «ամենքին բժշկող», աստուածապարգև՝ «աստծու պարգևած», արիւնաներկ՝ «արյունով ներկված» և այլն:

Բառակազմության մեջ բայական հիմքերի տարբեր ձևավորումը երբեմն կախված է բառակազմական կաղապարների տիպերից, բաղադրյալ բառի մեջ բայահիմքերի գրաված դիրքից, այսպես, անհնչյունափոխ բայարմատը կարող է հանդիպել միայն որպես բաղադրության վերջին բաղադրիչ՝ շեշտի տակ: Բուն հրամայականին համընկնող հիմքերը, որոնք առանց այն էլ սակավադեպ են, գրեթե չեն հանդիպում ածանցավոր կազմություններում. կան սակավ բացառություններ, օր. տրական (տալ—հրամ.՝ տուր): Բացի այս վերապահումներից, ընդհանուր առմամբ կարելի է ասել, որ բայական հիմքերի ձևավորման առանձնահատկությունները «անհատական» բնույթ են կրում, կապված են այս կամ այն կոնկրետ բայի հետ:

Գրաբարի բառակազմական կաղապարներում վկայված բայական հիմքերը ըստ կազմության կարելի է բաժանել երկու խմբի՝ մաքուր բայարմատով ներկայացված և քերականական ձևավորում ունեցող: Ըստ այդմ կարելի է առանձնացնել բայական հիմքերի հետևյալ տիպերը: Արդեն նշվել է, որ դրանք կարող են լինել և՛ բուն բայական, և՛ սկզբնապես անվանական ծագում ունեցող բայահիմքեր: Ինչպես մինչև այժմ, օրինակները բերվում են ամենատարածված կաղապարներից:

1) Մաքուր լիաձայն բայարմատ, որ չի արտահայտվում խոնարհման հարացույցում.

SjS—ազգաբիւ, ազգասէր, ախտակից, ակօսածիգ, աղբիւրաբուղխ, ամենաբժիշկ, ամենաբոյս, ամենադէտ, ամպաշուփ, անդամալոյծ, անձրևայոյզ, աշխարհագիր, աշխարհածուփ, աշխարհաշէն, աշխարհապատում, աստուածախոյզ, աստուածամուխ, աստուածատունկ, արդարաքրհին, արևակէզ, արծաթաձոյլ, բևեռապինդ, բոլորադէզ, գահավէժ, գաղտաշուրջ, գետասոյզ, դատարկասուն, դժուարաբոյժ, դեղակուր, խորանաշու, ծայրակտուր, ճենճերալիր, մանրակրկիտ

SS—ամենափիւռ, դիւրապուր, զօրընտիր, հրապարականէծ, նախծին, նաւուղիղ, վրէժխնդիր, քարկուռ, օրէնսգէտ

aS—անդուլ, անգեղջ, անբրիջ, անժոյժ, անլիր, անլլուկ, անխլիրտ, անխնդիր, անխոյզ, անծին, անծուփ, անկապուտ, անկէզ, անմէտ, անյոյզ, անշէն, անշէջ, անպատում, անպարոյր, անջինջ, անջունջ, անվէն, անփուտ, անքնին, անքոյր, ապածոյժ, բացակտուր, հակակիր, հակամէտ, համաջինջ, համաջունջ, համասուն, համասփիւռ, չգիւտ, սորակտուր, տարագիր, տրամագիր

2) մաքուր բայարմատ, որ համընկնում է պարզ բայերի ներկայի հիմքին: Այս բայերի անցյալ կատարյալը հիմնականում ունի ցոյական հիմք: Սա բավական տարածված տիպ է, և նրա առանձնացումը որևէ դժվարություն չի ներկայացնում, ուստի նշենք միայն մի խումբ օրինակներ ամենագործուն կաղապարներից.

SjS—ազատախօս, ազատագործ, ախտահալած, ակնավայել, ահակտուր, ամբոխաժողով, բևեռակապ, գիշերապահ, դարահոս, դիւրադաւ, ինքնաբաւ, խաղաղածաւալ, խառնավար, վատախրատ, վնասաբեր, տերևաթափ, փայտապաշտ, քաղաքաբնակ, քարակերտ

SS—բազումողորմ, հաւրս, հեռաձակ, ձեռնընդել, ձեռնպահ, յառաջընծայ, որմարգել, ռամիկսպաս, քաղաքաւեր, քաջարշաւ, քաջէփ, քարկոծ, քարկոփ, քնարերգ, քրիստոսաւանդ, օտարընկալ

S'S—օրէնսպահանջ, օրէնսպահ, օրէնսխոտոր

aS—անաճ, անապական, անապաշաւ, անարգել, անաւարտ, անբնակ, անգայթ, անգեն, անբաղ, անբարշամ, անխաբ, անխափան, անխնամ, անխոստովան, անկարծ, անհոս, անհատ, անվաճառ, անվար, անվարժ, անվկանդ, անփոփոխ, անքակ, ապագով, արտահալած, արտահուագ, համախօս, համատարած, սորադաս, տրամախոհ

Sa—զենական, խօսական, ցանկական, փրկական, տենչող, մուրող, ազատիչ, այրիչ, ապականիչ, արձակիչ, թարգմանիչ, ժողովիչ, ազդող, ամբաստանող, այպանող, անջատող, թշնամանող, կարծող, պահող, պաշարող, ախորժումն, աճումն, ամփոփումն, առաքումն, արգելումն, արձակումն, աւարտումն, դանդաղումն

3) Բայարմատ, որ համընկնում է անցյալ կատարյալի արմատական հիմքին: Այստեղ նկատի ունենք ոչ միայն կանոնավոր, այլև անկանոն և տարահիմք խոնարհում ունեցող բայերի հիմքերը, հետևաբար այս տիպը պետք է համարել քերականորեն ձևավորված:

SjS—աթոռակալ, ախոյանաբեկ, ակօսահատ, ահացոյց, ամենակոլ, ամենահաս, ամենահատ, ամենաստեղծ, ամենատես, այսահար, այրասպան, աշխարհագրօս, աշխարհակեր, աշխարհատարած, արդիւնատու, արագայագ, արիւնահեղ, աւելայանց, բեռնաբարձ, գետամեռ, գողահան, դանդաղամած, դասալիք, դիւրածան

SS—աղկեր, ինքնուս, խորշակառ, մատնցույց, նորեկ, ոստայնանկ, ոտնհար, ոտնբեկ, պսակառ, սռնառու, վերարկ, տեսակարար, օրէնսգանց, օրհաս

aS—անանց, անարար, անդարձ, անեղ, անել, անեղծ, անզբօս, անլու, անհաս, անհատ, անմեռ, անմուտ, անյանց, անյար, անյեղ, ապացույց, առարկ, ենթացույց, ընդհատ, հակադարձ, համադարձ, տհաս, տարացույց

Sa—անկիչ, առիչ, արարիչ, բարձիչ, տուիչ, կերիչ, ցուցիչ, ելող, մտող, սպանող, տարող, տուող, ցուցող, ցասկոտ, արբումն, բուսումն, զբօսումն, լուցումն, լ՚ումն, մուծումն, ուսումն, ցուցումն, արբուն, հասուն։

*Ինչպես տեսնում ենք վերջին կետի օրինակներից, բաղադրության առաջին բաղադրիչի շեշտազուրկ դիրքում (վերջածանցավոր կազմություններում) բայարմատը կարող է ենթարկվել շեշտափոխական հնչյունափոխության ըստ ընդհանուր օրինաչափությունների (*մուտ–մտ, լիֆ–լֆ, ցույց–ցուց, տու–տւ *և այլն)։ Այդ ձևերը պետք է համարել կրկնակի՝ հնչյունափոխական և քերականական ձևավորման ենթարկված հիմքեր։*

*4) Քերականական ձևավորում ունեցող հիմքերից ամենից ավելի լայն կիրառություն ունի անցյալ կատարյալի ցոյական հիմքին համընկնող բառակազմական հիմքը*

SjS—ամպախաղաց, աստուածամոռաց, արագագնաց, միայնակեաց, աւելասաց, իրազգաց, մաշկազգեաց, վշտակեաց, փողակարդաց, արտասուալից, դիմակաց, դժոխալուաց

SS—աղքատատեաց, աստուածասաց, լափմաց, կիսայրեաց, հացեփեաց, յառաջընթաց, սակաւերեեաց, սաղմոսերգեաց, սնդիաց, երգմնուրաց, խնկաղաց, թոնրճկեց

aS—անգնաց, անընթաց, անիմաց, անկեաց, անխաղաց, անմոռաց, համակեաց, համընթաց, համիմաց, նախիմաց, տարակաց

Sa—անեցական, ազդեցական, եռացական, մնացական, մուրացկան, գոյացաբար, մոռացաբար, իմացագոյն, ընթացարան, լուացարան, ցանկացող, առացող, ունեցող, հայեցող, խնդացող, մնացորդ, վերացումն, դիմեցումն, յղացումն, կացումն, կերպացումն, բացիչ, խցիչ, լցիչ, ընթերցիչ, առացիչ, աղացիկ, դիւացիկ, լուացիկ, հայեցիկ, կացութիւն, յագեցութիւն, շլացութիւն, շփացութիւն, արբեցութիւն։

*5) Պատճառական բայերի անցյալ կատարյալին համընկնող հիմք.*

SjS—ակնակառույց, աղքատասնույց, ամենալցույց, ամենակեցույց, ամենաշիջույց, դժուարամատույց, դիւրահատույց, երախտահատույց, ծածկարագույց, ծովահեղձույց, կաթնասնույց, ճշմարտակորույս, երախտակորույս



SS—ամենուսույց, լոյսիջույց, լուսանցույց, ոտնզատույց, փքոցուռույց, մարդելույց

aS—անմատույց

ajS—համակորույս

Sa—ագուցիկ, հեղձուցիկ, ուռուցիկ, դարձուցիչ, զարթուցիչ, իջուցիչ, ծանուցիչ, կորուսիչ, կեցուցիչ, հանկուցիչ, շիջուցիչ, ուսուցիչ, ջեռուցիչ, սնուցիչ, արբուցումն, զեկուցումն, կառուցումն, կափուցումն, հատուցումն, հեղձուցումն, ուսուցումն, մեռուցումն։

*6) Ածանցավոր բայերի ներկայի հիմքին համընկնող հիմք. այստեղ կարելի է առանձնացնել երկու տարբերակ՝ 1) սոսկածանցներով և 2) պատճառական ածանցներով ներկայի հիմք (պարզ բայերի ներկայի հիմքի մասին խոսվեց արմատական հիմքերի քննության ժամանակ, տե՛ս կետ 2)։ Այս հիմքերը սահմանափակ կիրառություն ունեն, վկայված են մի շարք օրինակներ հիմնականում ածանցավոր կազմությունների մեջ, իսկ մյուս կաղապարներում ունենք միայն եզակի դեպքեր.*

SjS—արագաբոիչ, բարձրաբոիչ, քաջաբոիչ.

Sa—մեղանչական, ոստնական, անիծանող, հարկանող, բուչուն, մեղանչումն, շիջանուտ, ճանաչիչ, փախչկոտ, աշխատեցուցանող, դիպեցուցանող, հանգուցանող, հատուցանող, հարկեցուցանող, հոգեւորացուցանող, պակուցանող. *պատճառականի հիմքը սովորաբար կանոնավոր կերպով համընկնում է* իչ, ող *ածանցներով ենթակայական դերբայների կազմում։*

*7) Ներկայի հիմքի մի տարատեսակություն ենք համարում եզակի երրորդ դեմքին համընկնող հիմքը։ Այդպիսի ձևավորմամբ հանդես են գալիս միայն մի քանի պակասավոր կամ զարտուղի խոնարհում ունեցող բայերի հիմքեր՝* բայ *(բամ, բաս, բայ),* գայ *(գամ, գաս, գայ),* գոյ *(գոմ, գոս, գոյ),* կայ *(կամ, կաս, կայ),* գնայ *(գնամ, գնաս, գնայ), ինչպես նաև* զգայ *(զգամ),* մնայ *(մնամ) հիմքերը։ Անշուշտ, կարող ենք սրանք համարել նաև ձայնավորահանգ արմատներ՝ սերտաճած թեմատիկ ձայնավորով, իսկ վերջին յ-ին վերագրել պարզապես ուղղագրական-ուղղախոսական արժեք (գրաբարում բառը չէր կարող վերջանալ* ա, ո *ձայնավորներով), սակայն ձևաբանական և բառակազմական հիմքերի հարաբերակցության տեսակետից ավելի նպատակահարմար է դրանք դասել ներկայի հիմքերի թվին, քանի որ նախ՝ այդ հիմքերը հնչյունապես ճշտորեն համընկնում են երրորդ դեմքին, բացի այդ, ունենք նաև նույն բայերի*

կատարյալի հիմքին համընկնող բառակազմական տարբերակային հիմքեր՝ գնայ-գնաց, կայ-կաց, մնայ-մնաց և այլն, որով հարացուցային-համակարգային հարաբերակցություն է ստեղծվում այդ հիմքերի միջև: Ստորև ներկայացնում ենք մեր ընտրանքում հանդիպած օրինակները՝ տարբեր կաղապարներով, զգալի թվով օրինակներ են վկայված կայ, գայ, գոյ հիմքերով, մյուսներով՝ ավելի սակավ:

SjS—առաջակայ, աստուածակայ, բարձրակայ, ընթերակայ, հակառակակայ, հաստակայ, հետակայ, մերձակայ, միջակայ, մօտակայ, յանդիմանակայ, յարակայ, յավէժակայ, յարմարակայ, շրջակայ, հետագայ, յարագայ, շրջագայ, այլագոյ, ինքնագոյ, միագոյ, մշտագոյ, օտարագոյ, ներսագոյ, յարամնայ

SS—արևկայ, ոտնկայ, երկքայ

aS, ajS—անգոյ, բացագոյ, գերագոյ, ներգոյ, չգոյ, ապագայ, պարագայ, անզգայ, անկայ, գերակայ, ենթակայ, ներկայ, չկայ, ստորակայ

ā(ajS)—գերստորակայ

Sa—զգայարար, զգայական, զգայութիւն, գնայուն, մնայուն, մնայութիւն, կայական

8) Անորոշ դերբային համընկնող հիմք: Այս հիմքով նույնպես հիմնականում ածանցավոր կազմություններ ունենք, ընդ որում կարելի է առանձնացնել երկու բաց խումբ՝ անորոշ դերբայ+ի(իf) և անորոշ դերբայ+ութիւն կառուցվածքով. սկզբունքորեն յուրաքանչյուր բայ կարող է ստանալ այս երկու ածանցները: Մյուս կաղապարներով վկայված են եզակի օրինակներ.

SjS—արևագալ

SS—լալեստ

Sa—ատելական, ըմպելական, լալական, սիրելական, յարելարար, երևելոյթ, լալումն, խաղալիկ, ագանելի, ազդելի, ախորժելի, ածելի, բաղձալի, բերկրելի, զգալի, զենլի, կարելի, ճայելի, արբելիք, բառնալիք, զարմանալիք, ըմպելիք, լալիք, լուալիք, լսելիք, ճամբերելիք, ճգելիք, ունելիք, սպառնալիք, աճելութիւն, ատելութիւն, եկելութիւն, ընդունելութիւն, լինելութիւն, լսելութիւն, խաչելութիւն, կամելութիւն, կարծելութիւն, ունելութիւն, սիրելութիւն, օծելութիւն:

Արտաքուստ այս կառուցվածքներին են նման զգալապէս, երևելապէս, զարշելապէս, դիւրագրելութիւն տիպի կազմությունները, սակայն ավելի հավանական է, որ այստեղ գործ ունենք երկրորդային հնչյունափոխված հիմքերի հետ՝ զարշելի-զարշելապէս, դիւրագրելի-ութիւն-դիւրագրելութիւն:



9) Բուն հրամայականի եզակի երկրորդ դեմքին համընկնող հիմք: Այստեղ անվերապահորեն հրամայական պետք է համարել միայն դիր, լեր, լուր, տուր հիմքերը: Մյուս դեպքերում հնարավոր են և այլ մեկնաբանություններ: Այսպես, առ, բող, լիf, մուտ, ել, էջ և այլն համընկնում են նաև անցյալ կատարյալի արմատական հիմքին (սրանք հիմնականում բերվել են 3-րդ կետում): Սակայն որոշ բաղադրություններում դրանք կարելի է համարել հրամայական, քանի որ հանդես են գալիս նույն բառում հրամայական հիմքերի հետ համազոր հարաբերությամբ՝ դիրևտար, տուրևառ: Սրանց համաբանությամբ են կազմված նաև ելևէջ, ելևմուտ, երբևեկ, բողլիf, գիրբող և նման ձևերը: Իմայ, լուայ հիմքերը կարելի է դասել հրամայականի հիմքերի թվին, քանի որ բուն արմատներն են այստեղ իմ և լու, իսկ բաղադրությունների մեջ հանդես է գալիս հիմնականում անցյալ կատարյալի ցույական հիմքին համընկնող հիմքը՝ իմաց, լուաց: Այս ձևերը բուն հրամայականից տարբերվում են վերջին յ-ով, որն այստեղ ուղղագրական նշանակություն ունի:

Նշված ձևերից ամենից ավելի լայն կիրառություն ունեն դիր, լուր և տուր հիմքերը, մյուսները հանդիպում են միայն սակավ դեպքերում:

SjS—խաչալուայ, քաջալեր, ախորժալուր, ականջալուր, աւետալուր, արտմնալուր, չարալուր, քաղցրալուր, անձնատուր, աստուածատուր, արքայատուր, ընծայատուր, նորատուր, վանատուր, առաջադիր, արօրադիր, ութագադիր, հարկադիր, մասնադիր, մտադիր, խոյրադիր, մեղադիր, ուխտադիր, օրինադիր

SS—գիրբող, ունկնդիր, բողլիf

ScS—առևգնայ (հմմտ. առևգնաց), առևանկ/առևանգ, անկևառ, տուրևառ, տարուբեր, դիրևտար, ելևէջ, ելևմուտ, երբևեկ

SpS—տրիտուր

Sa—դրութիւն, տարումն, տրական

aS—անիմայ, անլուայ, անլուր, անել

(SjS)a—քաջալերութիւն

(ScS)a—առևանգութիւն, տուրևառութիւն:

10) Սահմանական ներկայի եզակի առաջին դեմքին համընկնող հիմ-
քով վկայված է միայն մեկ բառ՝ անզգամ (հմմտ.՝ անզգայ):
Այսպիսով, գրաբարի բառակազմության մեջ հանդես եկող բայա-
հիմքերը զգալի բազմազանություն են ներկայացնում: Բացի վերը նըշ-
ված դասակարգումից դրանք կարելի է ներկայացնել նաև փոքր-ինչ այլ
խմբավորմամբ՝ հաշվի առնելով նրանց միջև եղած համակարգային կա-
պերը: Հարացուցային ձևերում հանդես եկող հիմքերին համընկնող ձևե-

րը բաժանելով երկու հիմնական խմբի, կստանանք ներկայի և անցյալ կատարյալի հիմքերը իրենց տարատեսակներով.

1) Ներկայի հիմք. ա) արմատական, բ) սոսկածանցավոր, գ) պատճառական ածանցներով, դ) եզակի երրորդ դեմք, ե) եզակի առաջին դեմք.

2) Կատարյալի հիմք. ա) արմատական, բ) ցոյական, գ) պատճառական ածանցներով, դ) հրամայականի եզակի երկրորդ դեմք։

Այս երկու խմբերից դուրս մնացած հիմքերը կլինեն հարացույցի մեջ չներկայացված մաքուր արմատները և անորոշ դերբային համընկնող հիմքերը։

Պետք է նշել, որ հիմքերի տարբեր ձևավորումը հիմնականում զուտ ձևական արժեք ունի և չի ազդում բառակազմական իմաստների վրա. հարացուցային անդամների քերականական իմաստները չափազանց աղոտացած են։ Թերևս այդ է պատճառը, որ գրաբարում միևնույն հիմքը կարող է հանդես գալ տարբեր ձևավորմամբ։

Գրաբարի բառակազմական հիմքերի կազմության առանձնահատկությունների քննությունն ամբողջացնելու համար պետք է խոսել նաև այսպես կոչված հատված հիմքերի մասին[61]։ Սա այն դեպքն է, երբ բառակազմության ժամանակ հիմքը անկախ սկզբնաձևի համեմատությամբ կորցնում է իր կազմի մեջ մտնող որոշ հնչյուններ։ Թեև գրաբարում այսպիսի հիմքերը բավական սակավադեպ են, բայց կարելի է այստեղ ևս սահմանել հիմքերի հատման մի քանի տարբեր պայմաններ։ Ամենից առաջ պետք է նշել փոխառյալ բառերի, հատկապես հատուկ անունների մեջ ու վերջավորության անկումը, որ հատուկ է նաև թեքման հարացույցին՝ Եգիպտոս–Եգիպտեայ–եգիպտական, Հոմերոս–Հոմերայ–հոմերական, Թադէոս–Թադէի–թադէական, Օգոստոս–Օգոստեայ–օգոստական–օգոստափառ: Այս տիպին են հարում նաև թե՛ փոխառյալ, թե՛ բնիկ անեզական տեղանունները՝ Աթենք, Դելփիք, Կորդուք և այլն, որոնք բառակազմության մեջ կորցնում են ք, իք հոգնակերտները՝ աթենացի, դելփական, կորդուացի:

Հիմքի հատման յուրահատուկ դեպք է վանկազրկությունը կամ ամփոփումը, երբ բառակազմական հաջորդող միավորը սկսվում է նույն հնչյունով կամ հնչյունախմբով, ինչով վերջանում է նախորդողը։ Ընդհանուր հնչյունները կարող են լինել ինչպես ձայնավոր, այնպես էլ ձայնավորի և բաղաձայնի կապակցություն՝ ստորապ+ապետ–ստորապետ, բազմակ+ակալ–բազմակալ, պատսպար+արան–պատսպարան, փակաղակ+ական–փակաղական, քուեայ+ական–քուական, Եղդադայ+ական–եղդադական, Նիկիայ+ական–նիկիական, մեքենայ+աւոր–մեքենաւոր, լումայ+ափոխ–



լումափոխ, մամոնայ+ապաշտ–մամոնապաշտ, երդու+ումն–երդումն (հմմտ. երդուեալ): Որոշ դեպքերում նկատվում է հ-ի անկում որպես երկրորդ բաղադրիչ հանդես եկող հիմքի սկզբում՝ արտա+հալածել–արտալածել, չ+հաւատալի–չաւատալի, մակ+հաւասար–մակաւասար, փող+հար–փողար, երկ+հարիւր–երկերիւր, երեք+հարիւր–երեքարիւր և այլն, նաև ածանցի կամ հիմքի վերջին ձայնավորի անկում՝ թագաւոր–թագուհի, արքայ–արքունի:

Հատված հիմքերի մի տարատեսակություն կարելի է համարել նաև հաջորդող բաղադրիչից առաջ հիմքի վերջի ի ձայնավորի անկումով ստացված ձևերը՝ բարի–բարերջանիկ, աղուեի–աղուեակերպ և այլն (տե՛ս ի/Ø հնչյունափոխության մեջ), ընդ որում ի-ն կարող է ընկնել ոչ միայն առաջնային, այլև երկրորդային հիմքերի մեջ, որտեղ այն ածանց է կամ ածանցի մաս՝ անբերի–անբերութիւն, սխանչելի– սխանչելաւոր: Այնուամենայնիվ, այստեղ ևս գործ ունենք հնչյունական երևույթի և ոչ թե ածանցի անկման հետ։ Այս դեպքերի թիվը մյուս հատված հիմքերի համեմատությամբ բավական զգալի է։

Գրաբարի բառակազմությանը բնորոշ առանձնահատկություն է հիմքերի տարբերակայնությունը, այսինքն՝ հիմքակազմական զուգաձևությունների առկայությունը։ Տարբերակային ենք կոչում այն հիմքերը, որոնք պահպանելով իրենց բառային և բառակազմական նշանակությունը, տարբեր բաղադրություններում, հաճախ նաև նույն բառերում, հանդես են գալիս տարբեր ձևավորմամբ։ Հիմքերի տարբերակային ձևերը ներկայացնելիս, ավելի ակնառու դարձնելու համար նրանց իմաստային նույնությունը, աշխատել ենք ընտրել այնպիսի օրինակներ, որտեղ հիմքերը հանդես են գալիս նույն շրջապատում, թեև, անշուշտ, նրանց կիրառությունը չի սահմանափակվում բերվող օրինակներով։ Հիմքակազմական տարբերակները նույն իմաստով կարող են հանդես գալ նաև իրարից տարբեր շրջապատում, տարբեր հիմքերի և ածանցների զուգորդությամբ, ինչպես՝ ձեռնազէտ և ձեռազէտ, բայց նաև ձեռնհաս և ձեռագործ:

Հիմքերի զուգաձևությունները կարող են լինել տարբեր բնույթի՝ հենված ինչպես զուտ հնչյունական, այնպես էլ ձևաբանական ձևավորման տարբերությունների վրա։

1. Որպես զուտ հնչյունական տարբերակներ կարող են դիտվել նախ և առաջ այն հիմքերը, որոնք բառակազմության մեջ միևնույն պայմաններում հանդես են գալիս մերթ հնչյունափոխված, մերթ անհնչյունափոխ ձևով։ Ընդհանրապես պետք է ասել, որ գրաբարում սակավ չեն նաև հնչյունափոխության ենթարկվող ձայնավորների պահպանման դեպքեր

(նաև առանց տարբերակների առկայության), ինչպես տէրութիւն (փխ. տիրութիւն), բարիորդիութիւն (փխ. բարիորդութիւն) և այլն։ Այս դեպքերում սպասվող փոփոխությունների բացակայությունը պետք է բացատրել բառակազմական հիմքի ավելի հստակ գիտակցումով և անհատական բառաստեղծմամբ՝ լեզվի մշակման գիտակցված և նպատակադրված պրոցեսում, քանի որ հոլովման և խոնարհման ժամանակ այս կարգի երևույթներ գրեթե չեն նկատվում։ Թերևս պատճառն այն է, որ վերջիններիս դեպքում տեղի են ունենում հնչյունափոխական ավելի ավտոմատ, ավանդաբար ժառանգված պրոցեսներ, իսկ բառակազմության պրոցեսում, հատկապես ուսումնասիրվող շրջանում գիտակցական մոտեցումն ավելի զգալի է, որտեղից էլ՝ հիմքը անձեռնմխելի պահելու ձգտումը։ Բացի այդ՝ լեզվի բառակազմական հնարավորությունները իրենից չեն բացառում այդ կարգի կազմությունները, ինչպես, օրինակ, շարահյուսական կապակցությունից ստացված բաղադրությունների դեպքում՝ լոյսիջոյց, փոյթարագ և այլն։

ա) Անհնչյունափոխ հիմքեր հանդիպում են հատկապես երկբարբառներով, թեև կան նաև ի, ու ձայնավորների պահպանման դեպքեր.

ի/ը—հինգամեան, հինգհազարեան, հինգամսան, հինգետասան, հինգեկին—հնգամատնեան, հնգհեղեան, հնգետասան, հնգեկին

ու/∅, ը—անդուլութիւն-անդլութիւն, բազումուսումնութիւն-բազմուսումնութիւն-բազմուսմնութիւն, ուսումնասէր-ուսմնասէր

ու/∅, ւ—ցցութիւն-ցցուութիւն, թթութիւն-թթուութիւն

եա/ե—արեանաճեմ, արեանառու—արենաճեմ, արենահեղութիւն, լեառնական, լեառնայայտ, լեառնակողմն, լեառնորդեայ—լեռնական, լեռնաբերձ, լեռնադաշտ, լեռնախոյզ, լեռնակեաց, լեռնակողմն, լեռնորդեայ

է/ի—գէշաքարշ-գիշաքարշ, երէցութիւն-երիցութիւն, սակաւապէտութիւն-սակաւապիտութիւն, տէրութիւն-տիրութիւն, օրէնադրել-օրինադրել, օրէնադրութիւն-օրինադրութիւն, նաև առանց զուգահեռ ձևերի՝ մէջօր, էշայծեամ, քաջօրէնութիւն բառերում սպասվող է>ի հնչյունափոխությունը չի կատարվում

իայ/ե—միայնաւոր, միայնակեաց—մենաւոր, մենակեաց

ոյ/ու—առոյգութիւն-առուգութիւն, գերագոյնութիւն-գերագունութիւն, անփոյթութիւն-անփութութիւն. առանց զուգաձևության ոյ երկբարբառը պահպանվում է նաև հետևյալ դեպքերում՝ աշխոյժութիւն, առոյգաբարձ, վարագոյրաձիգ, քոյրակից և այլն.

բ) Մի շարք հիմքերում առկա են զուտ հնչյունական, բայց ոչ հնչյունափոխական զուգաձևություններ՝ դիւց-դից, ազն-ազուն-ազգ, կիր-կուր,



ջինջ-ջունջ, կոտոր-կտուր, ջեր-ջերմ-ջերմն, ինչպես՝ դիւցաբանութիւն-դիցապաշտութիւն-դիցազն, բազմազն-բազմազուն-բազմազգ, խակակիր-խակակուր, անջինջ-անջունջ, համաջինջ-համաջունջ, ծայրակոտոր-ծայրակտուր, ջերոտ-ջերմուկ-ջերմնոտ։ Այս տիպի զուգաձևությունները սակավադեպ են և արդյունք նախկին ձայնդարձային տարբերությունների, տարբեր աճականներով ձևերի, կամ պարզապես ազատ հնչյունական տարբերակներ են, ինչպես՝ խոճ-խորճ՝ միախորճ, իւրախորճ, բարեխորճ-միախոճ, իւրախոճ, բարեխոճ։

գ) Հիմքակազմական զուգաձևությունների այս տիպին են հարում նաև երկու, երեք, չորք թվականների հնչյունական տարբերակները, որ հանդես են գալիս միայն բառակազմության մեջ։ Այստեղ ևս գործ ունենք նախկին ձևահնչույթաբանական օրինաչափությունների մնացուկների հետ (երկակի թվի արտահայտության, բաղաձայնների հերթագայության և այլն)։

Երկու թվականի հիմքը վկայված է երկ, երկու, երկի ձևերով՝

| | | |
|---|---|---|
| երկօրեայ | երկուօրեայ | երկեմեան (երկի-ամեան)[62] |
| երկօրակեան | երկուօրակեան | երկերիւր (երկի-հարիւր) |
| երկագլուխ | երկուկանգնեան | երկեամ (երկի-ամ) |
| երկավանգ | | |

Երեք թվականն ունի եռ, եր(իր), երեք, երի հիմքակազմական տարբերակային ձևերը.

| | | | |
|---|---|---|---|
| եռօրեայ | երեքօրեայ | երեամ (երի-ամ) | երրորդ (երիր-որդ) |
| եռանկիւնի | երեքամսնեայ | երեմնի | երրեակ (երիր-եակ) |
| եռամսան | երեքսայրի | երեամսեայ | |
| մակեռակ | երեքանկիւն | | |

Բառակազմության մեջ ավելի հաճախադեպ են երեք, ապա եռ տարբերակները, մյուսները հավանաբար ավելի վաղ կազմությունների հետքեր են։

Չորք թվականն ունի չոր, չորք, չորեք և տարահիմք քառ տարբերակները։ Առավել հաճախական են վերջին երկուսը.

| | | | |
|---|---|---|---|
| չորրորդ | չորքձիք | չորեքկարգեան | քառակարգեան |
| չորիր | | չորեքօրեայ | քառամեայ |
| | | չորեքկուսի | քառակուսի |
| | | չորեքկերպ | քառորդ |
| | | չորեքմարմին | մակքառակ և այլն։ |

դ) Այստեղ պետք է նշել նաև ակն–աչ, դուռն–դուռ–դր, ամառն–ամառ, ձմեռն–ձմեռ, ձեռն–ձեռ տիպի հերթագայական տարբերակային հիմքերը, որոնք հանդես են գալիս ոչ միայն նշված անունների հոլովման հարացույցներում, այլև բառակազմության մեջ՝ ակնառել–աչառել, ակնառու–աչառու, դռնապան, դռնապահ–դրակից, դրանդ, դրացի, ձմեռնամուտ–ձմերամուտ, ձմեռնային–ձմերային, ամարամուտ–ամառնային, ձեռնագէտ–ձեռագէտ, ձեռնակապ–ձեռակապ, ձեռնակերտ–ձեռակերտ, անձեռնհաս–անձեռագործ, ձերբակալ, ձերբամուտ, ձերբացի:

ե) Բաղադրյալ կազմությունների հնչյունական տարբերակմանն են հանգեցնում և այն ձևերը, որոնք առաջանում են մաքուր արմատի և սերտաճած նախկին ածանցով հիմքերի զուգահեռ գործածությունից (մոլ–մոլի, հոգ–հոգի, բար–բարի)՝ հոգածութիւն–հոգիածութիւն, հոգաբարձ–հոգեբարձ, մոլաբոյս–մոլեբոյս, մոլախինդ–մոլեխինդ, բարոյական–բարւոյական: Նմանատիպ զուգաձևություն է առաջանում նաև հատված և ամբողջական հիմքերի հակադրությամբ՝ դելփական–դելփիական (տե՛ս ստորև)։

2. Հիմքակազմական զուգաձևություններ են առաջանում նաև մի կողմից՝ քերականական ձևավորում ունեցող և անփոփոխ հիմքերի, մյուս կողմից՝ տարբեր քերականական ձևավորում ունեցող հիմքերի միջև։ Անվանական հիմքերն ունեն հետևյալ տարբերակները.

ա) եզ. ուղղ.—եզ. սեռ-տր.

անունդրութիւն–անուանադրութիւն, արիւնհեղութիւն–արեանհեղութիւն, սերմնական–սերմանական, սերմնաւորութիւն–սերմանաւորութիւն, գարունաբեր, գարնային–գարնանային, հայրաբարոյ–հօրաբարոյ, եղբայրապէս–եղբօրապէս, շնաբերան–շանաբերան, աւրեղէն–աւուրեղ, քաղցրենի–քաղցուենի:

բ) եզ. ուղղ.— հոգն. սեռ.— տր.

լեռնամէջ–լերանցամէջ, դիւամոլ–դիւացամոլ

գ) եզ. ուղղ.—հոգն. ուղղ.

մարդօրէն–մարդկօրէն, մարդապէս–մարդկապէս:

դ) Հոգն. սեռ.-տր.—հոգն. հայց.

միմեանցասէր–զմիմեանսասէր

Հիմքակազմական զուգաձևությունները հատկապես առատ են բայական հիմքերի դեպքում։ Առանձնապես պետք է նշել ներկայի և անցյալ կատարյալի, անցյալ կատարյալի և հրամայականի հետ համընկնող հիմքերի զուգահեռ կիրառությունը միևնույն գրքերում։ Այս կարգի զուգաձևություններ գտնում ենք բազմաթիվ օրինակներում՝ թե՛ բարդություն-



ներում, թե՛ ածանցավոր կազմություններում։ Վկայված զուգաձևությունները կարելի է խմբավորել հետևյալ կերպ.

ա) Ներկայի հիմք—կատարյալի հիմք.

ազգական—ազգեցական
ազգութիւն—ազգեցութիւն
ազգումն—ազգեցումն
աճական—աճեցական
աճուն—աճեցուն
աճումն—աճեցումն
դիմումն—դիմեցումն
երգող—երգեցող
խորհումն—խորհեցումն
կամող—կամեցող
մերկումն—մերկացումն
յագութիւն—յագեցութիւն
յագումն—յագեցումն
քաջեփ—վաղեփեաց, խղեփեաց
անցանողական—անցողական
հատանումն—հատումն
հասանողութիւն—հասողութիւն
տեսանող—տեսող
տեսանողական—տեսողական
տեսանողութիւն—տեսողութիւն
առնող-առող
գործառնութիւն—գործառութիւն
դիմառնութիւն—դիմառութիւն
զարմանք—զարմացք
ուտիչ—կերիչ

բ) պատճառականի ներկա—պատճառականի կատարյալ.

ապրեցուցանողական—ապրեցուցողական
սնուցանողական—սնուցողական

գ) կատարյալ—պատճառականի ներկա.

լցողական—լցուցանողական

դ) կատարյալ—պատճառականի կատարյալ.

լցողական—լցուցողական
կափումն—կափուցումն

ե) բայարմատ—կատարյալի հիմք.

բարկութիւն—բարկացութիւն
զայրութիւն—զայրացութիւն, զայրումն—զայրացումն
սքանչումն—սքանչացումն
նաւակառու—նաւակառոյց
երախտամոռ—երախտամոռաց

գ) բայարմատ—պատճառականի հիմք.

բարձիչ—բարձրացուցիչ
հեղձումն—հեղձուցումն

է) ներկայի երրորդ դեմք—կատարյալի հիմք.

գոյութիւն—գոյացութիւն
գոյումն—գոյացումն
կայուն—կացուն
յառաջակայ—յառաջակաց
յանդիմանակայ—յանդիմանակաց, յանդիմանակայութիւն—յանդիմանակացութիւն
յաւէժակայ—յաւէժակաց
ընդդիմակայ—ընդդիմակաց (հմմտ. նաև ընդդիմակացու)
ընթերակայ—ընթերակաց
ստորակայ—ստորակաց
ստորակայութիւն—ստորակացութիւն.

ը) հրամայականի հիմք—կատարյալի հիմք.

կենդանատուր—կենդանատու
հրամանատուր—հրամանատու
ժառանգատուր—ժառանգատու
ձայնատուր—ձայնատու
վանատուր—վանատու
անհամայ—անհամաց
անլուր—անլու
հարկատրութիւն—հարկատուութիւն
բացատրութիւն—բացատուութիւն
հրամանատրութիւն—հրամանատուութիւն
պատասխանատրութիւն—պատասխանատուութիւն

թ) ներկայի հիմք—անորոշ դերբային համընկնող հիմք.

ստարասիրութիւն—ստարասիրելութիւն
օծութիւն—օծելութիւն
լսողութիւն—լսելութիւն
ընկղմութիւն—ընկղմելութիւն



ժ) Հետաքրքիր հիմքակազմական զուգաձևություն է ստեղծվում լի ածականով (որ նաև բայարմատ է) և լից, լիր բայահիմքերով, ընդ որում, լիր բայահիմքը վկայված է միայն բառակազմության մեջ, բայց չկա բայական հարացույցում՝ լրանամ բայի կատարյալն է լրացայ: Հավանաբար լիր-ը լրանամ բայի հետ երբեմն զուգահեռ գոյություն ունեցած *լրեմ բայի վերապրուկային հիմքն է՝ վկայված բաղադրյալ ոչ բայական կազմություններում՝ օր. լրումն (հմմտ. լուանամ-լուամ՝ լուանալիք-լուալիք): Այդ ձևերը զգալի թիվ են կազմում.

| | | |
|---|---|---|
| ամենալի | ամենալից | ամենալիր |
| թախծալի | թախծալից | — |
| շնորհալի | շնորհալից | — |
| հեշտալի | հեշտալից | — |
| խնկալի | խնկալից | — |
| խնդալի | խնդալից | — |
| պտղալի | պտղալից | — |
| պատառալի | — | պատառալիր |

ինչպես նաև առանց զուգաձևության՝ գրկալիր, բռնալիր, թռալիր, լուսալիր, սրտալիր:

ժա) Տարբեր խոսքիմասային պատկանելություն ունեցող հիմքերից կարելի է հիշել նաև բայական մեռ—անվանական մահ հիմքերի զուգաձևությունը՝ անմահ-անմեռ, վաղամահ-վաղամեռ:

3. Կան նաև հիմքերի կառուցվածքային զուգաձևություններ, որոնք մոտենում են հնչյունական տարբերակների տիպին:

ա) Հատված հիմք—լրիվ հիմք.

մեքենաւորութիւն—մեքենայաւորութիւն
նշանական—նշանակական
շարունական—շարունակական
ունական—ունակական
դելփական—դելփիական
զարմազանութիւն—զարմանազանութիւն

բ) Որոշ դեպքերում զուգաձևություններ են առաջանում մաքուր հիմքի և արդեն «մեռած», բառակազմական գործունությունը կորցրած ածանցներ կամ աճականներ ունեցող հիմքի հակադրությամբ, ընդ որում այդ մասնիկներն այլևս չեն գիտակցվում և տրոհելի են միայն պայմանականորեն: Այդ իսկ պատճառով նման տիպի հիմքերը չենք տրոհում

բառակազմական միավորների և հավասարեցնում ենք առաջնային հիմքերին, քանի որ այդ մասնիկները իմաստային և գործառական բեռնվածություն չունեն և ստեղծում են միայն հիմքակազմական տարբերակներ, ինչպես աճ-աճն, ջեր-ջերմն, կեան/կեն-կեաց-կենս-կենց(աղ)-կենդ(ան), որոնցով վկայված են մի շարք նույնիմաստ բաղադրություններ.

անձեայ—անձնեայ
ջերոտ—ջերմնոտ
անկեաց—անկեանք—անկենցաղ—անկենդան
կենսական—կենցական—կենցաղական
կենսատու—կենսատու—կենդանատու
կենսազգեաց—կենդանազգեաց
կենսասէր—կենցաղասէր—կենսասիրութիւն
կենարար—կենդանարար
կենագործել—կենդանագործել
կենաստեղծել—կենդանաստեղծել

Նախդիրների իմաստի մթագնման և սերտաճման միջոցով առաջացած հիմքակազմական տարբերակներ կան նաև հետևյալ ձևերում՝ աջողութիւն-յաջողութիւն, առաջաբան-յառաջաբան, աւելորդ-յաւելորդ, աւելադրեմ-յաւելադրեմ, երկարեմ-յերկարեմ, երկարութիւն-յերկարութիւն և այլն։

գ) Երբեմն ստացվում է առաջնային և երկրորդային հիմքերի զուգաձևություն, այն դեպքում, երբ երկրորդային հիմքը պարունակում է որևէ ածանց, որն իմաստային փոփոխություն չի մտցնում, այլ ստեղծում է միայն որոշ ոճական երանգ՝ անբաժ-անբաժան, անկերպ-անկերպարան, անխօս-անխօսուն, աւելաբանութիւն-առաւելաբանութիւն, զլացութիւն-զլացողութիւն, սրբեցութիւն-սրբեցողութիւն, ցուցական-ցուցողական, տունջական-տունջենական և այլն։ Սրանք թեև բուն իմաստով հիմքակազմական զուգաձևություն չի կարելի համարել, քանի որ գործ ունենք բառակազմական տարբեր կառույցների հետ։ Ճիշտ նույն ձևով երկրորդային հիմքերով բաղադրությունների մեջ առկա են միևնույն, կամ գրեթե միևնույն իմաստն ունեցող կազմություններ, որոնք թեև ունեն հիմքակազմական տարբերություններ, սակայն իմաստային տեսակետից տարբերակված չեն, ինչպես՝ լուալիք-լուանալիք, աստուածածանութիւն-աստուածածանօթութիւն, աստուածածնութիւն-աստուածածնելութիւն, պայծառազգեստութիւն-պայծառազգեցութիւն, մարդահաճութիւն-մարդահաճոյութիւն, ինքնահաճ-ինքնահաճոյ, անձնապուր-անձնապուրծ, օծութիւն-օծելութիւն-օծանութիւն, ծնելութիւն-ծնողութիւն, անծնելութիւն-անծնողութիւն-անծննդութիւն-անծնութիւն և այլն։ Այստեղ չենք խոսում այն տարբերակների մասին, որոնք ստացվում են հոմանիշ ածանցներով, ինչպես՝ քաջավայելչապէս-քաջավայելչագոյնս-քաջավայելչաբար, կամ առաջնային սերող հիմքով ու ածանցավոր կազմություններով՝ տրտունջ-տրտնջիւն-տրտնջումն-տրտնջութիւն-տրտնջողութիւն, ջրահեղձ-ջրահեղձիկ-ջրահեղձոյց, կամ վերջապես, տարբեր հիմքերով և ածանցներով՝ դռնապահ-դռնապան, խրատարար-խրատտու, քանի որ այստեղ գործ ունենք ոչ թե հիմքակազմական տարբերակների, այլ որպես արդյունք ստացված բառային տարբերակների հետ։

Գրաբարի բառակազմության մեջ առկա հիմքակազմական տարբերակների այս առատությունը պետք է նախ և առաջ բացատրել այն բանով, որ ինչպես յուրաքանչյուր լեզվի բառակազմության մեջ, այնպես էլ հին հայերենի ուսումնասիրվող շրջանի լեզվավիճակում համագոյակցում են տարբեր ժամանակագրական կտրվածքների գոյացություններ։ Տվյալ ժամանակաշրջանում գործուն կաղապարների կողքին վերապրուկային ձևով պահպանվել են նաև արդեն «մեռած» կաղապարներ, թեև վերջիններով ստեղծված բառերը դեռևս լեզվի բառապաշարում կարևոր տեղ են գրավում, իսկ որոշակի պայմաններում, լեզվամշակման խնդիրների հետ կապված, այդ ձևերը կարող են ակտիվություն ձեռք բերել և գործուն կաղապարների ու հիմքերի շարքն անցնել։ Այնուհետև, կարևոր պայման է նաև գրաբարի բառակազմության ճկունությունն ու լայն հնարավորությունները, որ ընձեռում են բառակազմական գործուն կաղապարների բազմազանություն, այդ թվում հիմքերի ընտրության լայն պայմաններ։

Ըստ այդմ, որպես հիմքակազմական փոփոխակներ կարող են հանդես գալ.

ա) Անցյալում, թերևս նաև տարբեր ժամանակագրական կտրվածքներում առաջացած, տվյալ պահին ոչ գործուն, բայց լեզվի մեջ զուգահեռաբար պահպանված ձևերը։ Սրանք հիմնականում իրենցից ներկայացնում են ձայնդարձի հնատիպ երևույթները՝ կուր-կիր, ջունջ-ջինջ, կոտոր-կտուր, բաղաձայնների հերթագայությունները՝ ակն-աչ, դուռն-դուր/դր, տարահիմքությունը՝ չոր-քառ, տարբեր աճականներով ընդլայնված արմատական տարբերակները՝ կեան-կեաց, կենս-կենց(աղ)-կենդ(ան), սերտաճած ածանցներով կամ նախդիրներով և մաքուր արմատական տարբերակները՝ ջեր-ջերմն, ձեռ-ձեռն, եր-երիր(երր), աւել-յաւել և այլն։

բ) Տվյալ ժամանակագրական կտրվածքին հատուկ, հավասարապես գործուն ձևերը, որոնք պարզապես միմյանց հետ դիրքային կամ ազատ տարբերակների հարաբերության մեջ են։ Դրանք, ինչպես նշվեց, անու-

ների տարբեր հոլովաձևերին կամ բայական հարացույցի տարբեր անդամներին համընկնող ձևավորում ստացած հիմքերն են, որոնք այստեղ նորից չենք թվարկում:

Գրաբարի բառակազմական կաղապարների բազմազանությունը, ինչպես նաև հիմքային զուգաձևությունների առատությունը նպաստում են անհատական բառակերտմանը և հնարավորություն տալիս ստեղծելու ոճական բազմազանության աղբյուր հանդիսացող հարանվանական և հոմանշային շարքեր:

Երկրորդային հիմքերի ձևավորման առանձնահատկությունների մասին որոշ չափով արդեն խոսվել է: Այստեղ նշենք նաև երկրորդային հիմքերի հետագա աճման ժամանակ տեղի ունեցող մի քանի այլ առանձնահատկությունների մասին.

1. *Հոդակապի սղում կամ անկում, ինչպես՝* աստուածասէր-աստուածսիրութիւն, աստուածպաշտ-աստուածպաշտութիւն, ընկերահաշտ-ընկերհաշտութիւն, կարճամիտ-կարճմտութիւն, ճարտարամտեմ-ճարտարմտութիւն, յարակայ-յարկայութիւն: *Այս երևույթը բավական հաճախադեպ է և տարածվում է նույնիսկ այնպիսի դեպքերի վրա, երբ նախադիր հանդիսացող հիմքը այդ ձևով չի վկայված կամ հնարավոր չէ, օր.՝* անուղղութիւն, երազմտութիւն, երդմնստութիւն, մոլախօսութիւն, նոյնբանութիւն, շատխօսութիւն, շատկերութիւն, ողջմտութիւն, պարզմտութիւն, սուտխօսութիւն *և այլն:*

2. *Սկզբնահիմքերի համընկում հնչյունափոխության հետևանքով. այստեղ նկատի ունենք ոչ թե սովորական շեշտից կախված հնչյունափոխական երևույթները, որոնք առաջնային հիմքերի հնչյունափոխություններից չեն տարբերվում, այլ հատկապես այն դեպքերը, որոնք սերող հիմքի ձևավորումը որոշելիս դժվարություններ են հարուցում, ինչպես՝* առանձնական *բառում սերող հիմքը կարող է լինել* առանձն *(հմմտ.* առձեռն) *կամ* առանձին, անկողնարկ՝ անկողն *կամ* անկողին, *հետևաբար պատկանել* $aS$ *կամ* $aS^{ք}$ *կաղապարին (Մաքուր կամ քերականական ձևավորում ունեցող սկզբնահիմքերով): Բացի անորոշ և անցյալ դերբայների ձևերը բարդվելիս կամ ածանցվելիս հնչյունապես նույնանում են՝* առաքելահրաման (առաքել *և* առաքեալ), կատարելագործ (կատարել *և* կատարեալ), *կամ մի կողմից ունենք* շիջելափառ, հեծելազօր, ընտրելակից, եկելութիւն *(անցյալ դերբային համընկնող հիմքով), մյուս կողմից՝* ծնելասէր, փոխելապատճառ, անելութիւն, ատելութիւն *(անորոշ դերբային համընկնող հիմքով): Տվյալ դեպքում հիմքը ճիշտ որոշելու համար անհրաժեշտ է հաշվի առնել հիմնային բաղադրիչի առանձին գործածվելու հանգամանքը և իմաստային կողմը:*



3. *Հնչյունափոխական երևույթ է նաև երկրորդային հիմքերի վերջին* ի *ձայնավորի անկումը, ընդ որում այն կարող է լինել ինչպես չտրոհվող հիմնային ձայնավոր* (աղաւնի, առաքինի, պատանի), *այնպես էլ ածանց* (ախորժելի-ախորժելագոյն, զգալի-զգալապէս, ծիրանի-ծիրանազարդ, ծիրանածին, կորովի-կորովաձիգ, կորովութիւն, հաւաստի-հաւաստագոյն, սքանչելի-սքանչելագործ) *կամ ածանցամաս* (արժանի-արժանահաւատ, լեզուանի-լեզուանութիւն, պիտանի-պիտանագոյն, աղտեղի-աղտեղահանդերձ, այծենի-այծենական, հայրենի-Հայրենասէր, հայրենաւանդ, վայրենի-վայրենամիտ, սնոտի-սնոտիմաց, ծերունի-ծերունաբար, տէրունի-տէրունական *և այլն): Վերջին երկու դեպքում ստացվում են ածանցավոր և անածանց հիմքերի կամ տարբեր ածանցների ձևական նույնացում՝* ծիրան-ծիրանի, կորով-կորովի, ան-անի՝ արժան-արժանի, պիտան-պիտանի *(հմմտ.* անարժան, անպիտան), *ինչպես նաև* ուն-ունի *և այլն: Երբեմն նկատվում է նաև անցյալ, անորոշ ու ապառնի դերբայների (վերջիններս հաճախ արդեն ածականի գործառույթով) նույնացում՝* ընտրելագոյն (ընտրեալ), զարշելապէս (զարշելի), ատելութիւն (ատել):

4. *Քերականական ածանց-վերջավորության հատում (անջատում). այս հատկապես տեղի է ունենում բայական հիմքերից սերված բաղադրությունների դեպքում, երբ հիմքն առանց բայական վերջավորության չի հանդիպում, օր.՝* մակածեմ-մակածական *և ոչ թե* մակած+ական *կամ* մակ+ածական, ներածեմ-ներածապէս, ընձեռեմ-ընձեռայք *և այլն: Ի դեպ, որոշ ածանցներ հենց միայն այդ ձևով էլ կցվում են, հատկապես բայանվանակերտ ածանցները՝* անք, ութիւն, ումն: *Բառակազմական հետագա քայլերի ժամանակ երկրորդական հիմքի հատում է տեղի ունենում նաև* ք *և* ք*-ով բաղադրյալ* այք, անք, ունք, իք *և այլ ածանցների դեպքում, ինչպես* աղօթք-աղօթարար, կուռք-կռապարիշտ, ընթացք-ընթացակից, սահմանք-սահմանական, կոչունք-կոչնական, գահոյք-գահոյանի, տանջանք-տանջանաւոր, փորձանք-փորձանաւոր *և այլն: Այս երևույթը թերևս կարելի է բացատրել նրանով, որ թեև շատ դեպքերում* ք *մասնիկը հանդես է գալիս զուտ բառակազմական դերով* (բարք, բերք, դաւանք, ընթացք, հայեացք *և այլն), այնուամենայնիվ, այս կազմություններում դեռևս խիստ զգալի է նրա հոգնակերտության քերականական իմաստը, որ բառակազմության պրոցեսում վերացվում է, թողնելով քերականապես չեզոք հիմք: Այստեղից կարելի է նաև եզրակացնել, որ* ք *տարրը պարունակող՝ վերը նշված ածանցները երբեմնի բաղադրյալ կազմություններ են, որ ուսում-*

նասիրվող շրջանում արդեն հանդես են գալիս որպես անտրոհելի սերտաճումներ։ Բառակազմական կաղապարներում երկրորդական հիմքեր ենք համարում միայն նշված տիպի՝ ք-ով բաղադրված ածանցներ պարունակող ձևերը (**կոչունք, տանջանք** և այլն), իսկ այն դեպքերում, երբ ք ածանց-հոգնակերտը կազմում է անեզական անուններ (**միտք, դէմք, խօսք, կուռք** և այլն), ինչպես նաև տարբեր տիպի բայահիմքերից՝ բայանուններ (**ելք, զարմանք, թռիչք, իմացք, ստացք**), ապա ք-ի անկումով ստացված հիմքերը հավասարեցվում են առաջնային հիմքերին, քանի որ հնարավոր չէ պարզել բառի բառակազմական պատմությունը՝ գործ ունենք ք-ի անկմա՞ն, թե պարզապես մաքուր հիմքի հետ, որ ավելի հավանական է, քանի որ ք հոգնակերտի բառակազմական գործառույթը համեմատաբար ավելի ուշ երևույթ է, երբ արդեն հիմնականում ձևավորված էին մաքուր հիմքեր պարունակող բառակազմական կաղապարները։



## ԲԱՌԱԲԱՐԴՄԱՆ ԿԱՂԱՊԱՐՆԵՐ

Բառաբարդման կաղապարները ներկայացվում են երկու հիմնական խմբով՝ հոդակապավոր և առանց հոդակապի։ Յուրաքանչյուր խմբում առանձնացվում են կաղապարները ըստ բաղադրիչների կազմի և դիրքի, իսկ յուրաքանչյուր կաղապարի մեջ՝ ենթակաղապարները կամ տարբերակները, ըստ բաղադրիչների ձևավորման առանձնահատկությունների (հնչյունափոխություն, թերույթավորում)։ Կաղապարները դասավորվում են ըստ բառակազմական միավորների քանակի աճման՝ ավելի պարզ կառույցներից դեպի ավելի բարդերը։ Գործառական մեծ բեռնվածություն ունեցող կաղապարների համար բերվում են սակավաթիվ օրինակներ, իսկ սահմանափակ կիրառությամբ կամ ոչ գործուն կաղապարների դեպքում՝ մեր ընտրանքում հանդիպած բոլոր օրինակները, եթե, անշուշտ, դրանց թիվը մի քանի տասնյակից չի անցնում։

1. SjS—ապատագոր, անտառախիտ, զարունաբեր, բիւրագործ, ինքնաբաւ և այլն. սերում է «մաքուր» հիմքերով երկհիմք հոդակապավոր բարդություններ։ Գործառական բեռնվածության տեսակետից բառաբարդման կաղապարների մեջ բացարձակ գերակշռություն ունի։ Իր բոլոր ենթակաղապարներով այն կազմում է գրաբարի բարդությունների 67,2%-ը (տե՛ս աղյուսակ 1)։

1ա. $\underline{S}jS$—ամրակապ, ազնուազութ, լուսապատիւ, կարկնաձև և այլն.

SjS—կաղապարի ենթակաղապարն է, գործածման հաճախականության տեսակետից գրեթե երեք անգամ զիջում է առաջինին։

Առաջին սկզբնահիմնային բաղադրիչի կրած հնչյունական փոփոխությունների տիպերը, ինչպես նաև հաջորդ ենթակաղապարներում հանդիպող քերականական ձևավորում ունեցող հիմքերի տարբերակները ավելի մանրամասն դիտարկվել են «Հիմքակազմություն» բաժնում։ Այստեղ կնշվեն միայն մի քանի բնորոշ օրինակներ։

1բ. $S^{f}jS$—առաջին հիմքային բաղադրիչի քերականական ձևավորում։ Այս ենթակաղապարը կարող է ունենալ տարբերակումներ՝ կախված սկզբնահիմքի խոսքիմասային պատկանելությունից և վերջիններիս ձևա-

բանական հատկանիշներից. ա) անվանական բաղադրիչի ուղղականից տարբեր հոլովաձև՝ կայսերագիր (եզ. սեռ.), բարեացապարտ (հոգն. սեռ.), ձեռբակալ (եզ. գործ.), մարդկամահ (հոգն. ուղղ.) և այլն, բ) բայական բաղադրիչի դեպքում՝ անցյալ կատարյալի ցոյական հիմք՝ բերացակից, անորոշ դերբային համընկնող հիմք՝ ծնելասէր, փոխելպատճառ: Այս օրինակները հազվադեպ են, քանի որ բայական սկզբնահիմքն ինքնին որպես առաջին բաղադրիչ հանդես է գալիս բացառիկ դեպքերում:

1գ. $SjS^{f}$—երկրորդ հիմքային բաղադրիչի քերականական ձևավորում: Այստեղ գործ ունենք հիմնականում բայական հիմքերի հետ (ներկայի սոսկածանցավոր՝ բարձրաբրիչ, անցյալ կատարյալի ցոյական՝ ամպախաղաց, այդ թվում նաև պատճառական՝ ամենակեցոյց) կամ հարացուցային որևէ այլ ձևի համընկնող հիմք՝ fաջալեր, բացագոյ և այլն: Անվանական հիմքի դեպքում սակավադեպ ունենք երկրորդ բաղադրիչի հոգնակի ձև՝ հնգաfաղաff, եօթնամոլորակf, բացակողմանf, ջերմաղրունf: Եզակի օրինակ է անվանական սկզբնահիմքի թեք հոլովաձևով վկայված միամօր բառը:

1դ. $\underline{S}jS^{f}$—1ա. և 1գ. ենթակաղապարների համակցումը՝ առաջին սկզբնահիմքի հնչյունափոխություն և երկրորդի քերականական ձևավորում՝ գետնագնաց, դիմակաց, երկնակեաց, թախծալից, ծածկաթագոյց:

1ե. $S^{f}jS^{f}$—երկու բաղադրիչների քերականական ձևավորում՝ անուանագիր, ատեղակառոյց, շանագգեաց, մերագգեաց:

1զ. $SjS$ կամ $\underline{S}jS$—երկբաղադրիչ հոդակապավոր բարդությունների առանձին տարատեսակություն, որտեղ առաջին բաղադրիչի վերջին ձայնավորը ձուլվելով հոդակապին, տալիս է ե ձայնակապը: Սա հայտնի ի+ա>ե հնչյունափոխությունն է, որ կարելի է համարել հայերենում ներքին սանդհիի արտահայտություններից մեկը: Փաստորեն այստեղ ունենք հիմքի վերջնահնչույթի փոփոխություն՝ հոդակապի ազդեցությամբ, սակայն կաղապարի մեջ նշանակում ենք հոդակապի հնչյունափոխություն ($S\underline{j}S$)՝ բառի կառուցվածքն ավելի ճշգրիտ արտացոլելու համար: Կաղապարի ներկայացման երկրորդ տարբերակը՝ $\underline{S}jS$, կարելի է դիտել որպես նրա հետևյալ մեկնաբանության արդյունք՝ բարեգործ=բար(ի)+(ի+ա>ե)+ գործ, այսինքն՝ քանի որ առաջին բաղադրիչի վերջին ձայնավորը միանում է հոդակապին, ապա առաջին հիմքը հանդես է գալիս հնչյունափոխված ձևով: $S\underline{j}S$ տարբերակի դեպքում այդ երևույթն անտեսվում է:

Այս կաղապարով զգալի թվով կազմություններ ունենք՝ ալի, աղաւնի, աղի, այգի, արծուի, բարի, գերի, գինի, ընտանի, լկտի, խեցի, կարասի,



կարի, կարծի, հոգի, ճճի, մի, մոլի, յղի, ոգի, ոսկի, որդի, ուղի, տեղի, փոշի բաղադրիչներով:

Այս կաղապարին ենք դասում նաև որոշ բառեր, որոնց ազատ հիմքը -ի հանգը չունի, բայց որոնք բարդությունների մեջ ցուցաբերում են նմանատիպ հնչյունափոխություն՝ իշեվան (կա նաև իշավան տարբերակը), օրեան, հնգետասան, ծաղկեոտն, յորդեգնաց (յորդագնաց ավելի սովորական տարբերակով), թերևս նաև fառեամ, վաղեմի և մի քանի այլ դեպքերում (այդ մասին տե՛ս SS, (SS)a կաղապարներում):

Հետաքրքրական օրինակներ են բարեախորժ, բարեանուն, բարեաւաց, ոսկեօղ կազմությունները, որտեղ ձայնավորով սկսվող երկրորդ բաղադրիչից առաջ նույնպես տեղի ունի ի+ա>ե հնչյունափոխությունը. (բարի+ա+ախորժ), թեև օրինաչափորեն սպասվում էր կամ երկու բաղադրիչների անհոդակապ միացում առանց որևէ հնչյունափոխության, ինչպես որ վկայված են բարիանուն, բարիաւաց (SS կաղապարով), կամ առաջին բաղադրիչի վերջին ձայնավորի հնչյունափոխություն՝ ձայնավորների հորանջից խուսափելու համար: Ունենք վկայված նաև այդ կարգի օրինակներ՝ բարերջանիկ, հոգեռանդ (ի-ի անկում հաջորդող ե-ի ազդեցությամբ), բարեսաց, բարերար (ի+ա>ե հնչյունափոխություն)՝ $\underline{S}S$ և $\underline{S}S^{f}$ կաղապարներով:

1է. $\underline{S}jS^{f}$—նախորդի տարբերակն է՝ երկրորդ բաղադրիչի քերականական ձևավորումով՝ ոսկեհանf, ուղեգնաց:

Գրաբարում զգալի թիվ են կազմում ածանցավոր, այսպես կոչված, երկրորդային հիմքերով բարդությունները, որոնք վկայված են բազմազան կաղապարներով: Հասկանալի է, որ բարդության ածանցավոր հիմքեր են ստեղծվում ոչ բոլոր ածանցների օգնությամբ: Հատկապես այդ վերաբերում է եզրային ածանցներին, որոնցից հետո բառին այլևս նոր բառակազմական մասնիկ չի կարող ավելանալ: Դրանց կցումը փաստորեն դառնում է բառակազմական պրոցեսի վերջին քայլը, նրա ավարտը: Այդպիսի ածանցներից են -ական, -աբար, -ապէս, -օրէն, մեծ մասամբ նաև -ութիւն, ան- և այլն: Այս տեսակետից պետք է շեշտել մակբայակերտ ածանցների ոչ գործուն դերը, քանի որ մակբայներն ինքնին բառակազմության մեջ ակտիվ մասնակցություն չունեն, բնորոշվում են նվազագույն արժութայնությամբ և սակավ դեպքերում են նախատիպ հանդիսանում այլ բաղադրությունների համար: Երկրորդային հիմքեր կազմելու մեջ սահմանափակ է նաև այսպես կոչված քերականական ածանցների դերը: Այսպես -եալ, -ող, -իչ ածանցները բաղադրություններ են կազմում բայական հիմքերից և կցվում են ամբողջ բայահիմքին, անկախ նրա կազ-

մությունից։ Մյուս ածանցները, թեև սկզբունքորեն կարող են հանդես գալ բարդությունների ածանցավոր հիմքերում, սակայն, քանի որ ինքնըստինքյան գործածման մեծ հաճախականություն չունեն, ապա ածանցավոր հիմքերով բարդությունների մեջ ևս սակավ դեպքերում են հանդիպում։ Համեմատաբար քիչ են նախածանցավոր երկրորդային հիմքերը։

Ածանցավոր հիմքերով բարդությունները ներկայացված են հետևյալ կաղապարներով.

2. (aS)jS—**առողջամիտ**: Այստեղ պետք է նշել, որ թեև **ան-** ժխտական նախածանցը կիրառման մեծ հաճախականություն ունի, բայց նշված կաղապարում նրա գործածությունը անհամեմատ սահմանափակ է, քանի որ այն մեծ մասամբ վերաբերում է ամբողջ կազմությանը և ստեղծում է բարդ ածանցավոր բառեր ըստ հետևյալ կաղապարի՝ a(SjS) **ան+աստուածասէր**: Տվյալ դեպքում կաղապարի ճիշտ ընտրության համար կարող է հիմք ծառայել առանց **ան-** նախածանցի բառի գոյությունը. եթե այն վկայված է, ապա գործ ունենք վերջին կաղապարի հետ, իսկ այն դեպքերում, երբ նշված նախածանցի անջատումից հետո մնացած մասը վկայված չէ կամ անիմաստ է, ապա տվյալ բառը վերաբերում է առաջին կաղապարին, ինչպես օր.՝ **անբծախօս**՝ հնարավոր չէ **ան+բծախօս** տրոհումը, այլ միայն **անբ(ի)ծ+ա+խօս**: Այսպիսի օրինակները համեմատաբար սակավաթիվ են, ի տարբերություն a(SjS) կաղապարով վկայված ավելի մեծ թվով դեպքերի։

Այն դեպքերում, երբ բառը կարող է ունենալ այսպես կոչված կրկնակի պատճառաբանվածություն, այսինքն՝ երբ երկու կաղապարներն էլ հնարավոր են, պետք է դիմել բառի բառակազմական իմաստին՝ ըստ բնագրային օրինակների։ Այսպես, **անաստուածասէր** բառը կարող է մեկնաբանվել թե՛ որպես **ան+աստուածասէր**, թե՛ որպես **անաստուած+ա+սէր** (առանձին գործածվում են երկու հնարավոր սերող հիմքերն էլ՝ **անաստուած և աստուածասէր**), բայց քանի որ վկայված է միայն «ոչ-աստվածասեր» բառակազմական իմաստը (և ոչ թե «անաստվածներին սիրող»), հետևաբար բառը պատկանում է ածանցական կաղապարներին, a(SjS)։

Բերում ենք մեր ընտրանքում հանդիպած օրինակները՝ ըստ առանձին նախածանցների.

**ան**—անաղօտաբորբոք, անամօթափառ, անապատասէր, անաստուածախօս, անաստուածապար, անբաւագէտ, անբաւազօր, անբաւայօդ, անբաւապարգև, անեղաշէն, անկարծակամ, անկարծահաս, անմահաճաշակ, անմահանման, անպակասագիր, անպատեհակից, անփայտակերտ, անփոխարէն, անփոխահաւատ, անփոխանման, անփորձաբերձ, անփորձայաղթ



**առ**—առաւելագործ, առաւելահրաշ, առաւելասքանչ, առժամագիտ, առողջագործ, առողջամիտ, առստուերագիր

**արք**—արքեպիսկոպոսապետ

**դժ**—դժկամակից

**ընդ**—ընդարձակաձեռն, ընդարձակամիտ, ընդարձակասուն, ընդարձակասրահ, ընդերկայնամիտ, ընդունայնախօս, ընդունայնակարծ, ընդունայնամիտ, ընդունայնապարծ, ընդունայնավաստակ, ընդվայրաբոյս, ընդվայրախոյզ, ընդվայրախօս, ընդվայրահար, ընդվայրայած, ընդվայրապաճոյճ, ընդվայրապատիւ, ընդվայրասուն, ընդվայրավաստակ, ընդվայրաքենին

**ի**—իսպառազէն, իվայրաձիգ

**համ**—համաշխարհագործ

**յ**—յառաջագէտ, յառաջագիր, յառաջագիտ, յառաջագուշակ, յառաջադէմ, յառաջախոհ, յառաջախօս, յառաջահրաւէր, յառաջամուխ, յառաջաչափ, յառաջապահ, յառաջապատում, յառաջավաստակ, յառաջատես, յառաջացոյց

**տ**—տկարամիտ

**ց**—ցայգակռիւ, ցայգացնոր

2ա. $(a\underline{S})jS$

**ան¹**—անբծախօս[63] (հնչյունափոխական տարբերակ՝ ամբծախօս), անսկզբնակից, անսկզբնասէր, անփութասէր, անօրինածին

**ընդ**—ընդդիմաբախ, ընդդիմակից, ընդդիմակողմն, ընդդիմամարտ, ընդդիմասովոր, ընդդիմատիպ, ընդդիմափառ, ընդերկնահաչ, ընդհանրատարած, ընդմիջաշաւիղ

**տ**—տգիտահալած

2բ. $(aS)jS^f$

**ան¹**—անաւագակեր, անչափակալ

**առ**—առընթերագիր, առընթերակայ, առընթերակաց

**ընդ**—ընդարձակագնաց, ընդարձակատար, ընդվայրագնաց, ընդվայրահայեաց

**ընդ**—նախածանցի **ըն** տարբերակով՝ ընտեղակաց

**յ**—յառաջադիր, յառաջախաղաց, յառաջակայ, յառաջակաց, յառաջահայեաց, յառաջամուտ, յառաջայանց, յառաջասլաց, յառաջատու

2գ. $(a\underline{S})jS^f$

**ընդ**—*ընդդիմադարձ, ընդդիմակալ, ընդդիմակայ, ընդդիմակաց, ընդմատատար*

2գ. $(a\underline{S}^f)jS$

**ան**[2]—*անկողնակից (հնչյունական տարբերակ՝ ընկողնակից)*

**առ**—*առանձնագործ*

2ե. $(a\underline{S}^f)jS^f$

**առ**—*առանձնակաց*

2զ. $[a(aS)]jS$—*առաջին բաղադրիչը երկու նախածանցով: Այս կազմությունները վկայված են հիմնականում յանկարծ բառով, ընդ որում մի շարք դեպքերում ունենք նաև անկարծ հիմքը (տե՛ս վերը՝ անկարծահաս և այլն), այնպես որ յ-նախդիր-նախածանցն այս բաղադրություններում թերևս կորցրել է իր իմաստային բեռնվածությունը և մնացել որպես հավելուրդային ձևական տարր. օրինակներն են՝ յանկարծագիտ, յանկարծագործ, յանկարծադէմ, յանկարծադէպ, յանկարծաթափ, յանկարծածագ, յանկարծածին, յանկարծակամ, յանկարծահաս:*

2է. $(ajS)jS$—*այս ենթակաղապարով վկայված են սակավաթիվ օրինակներ, որտեղ առաջին հիմնային բաղադրիչում նախածանցը արմատին է միանում հոդակապով.*

**համ**—*համահասակակից, համաձայնակից*[64]

2ը. $(aj\underline{S})jS$

**համ**—*համաբնակից*

**յար**—*յարաձգակից*

3. $(Sa)jS$—*նշված կաղապարը նախորդի համեմատությամբ աչքի է ընկնում ավելի մեծ գործառական բեռնվածությամբ, ընդ որում, բնականաբար հանդես է բերում ածանցների ավելի մեծ բազմազանություն, քանի որ գրաբարի (ընդհանրապես հայերենի) նախածանցների թիվը զգալիորեն զիջում է վերջածանցների թվին: Վկայված են օրինակներ հետևյալ վերջածանցներով.*

**-ակ**—*ամբարակապետ (համբարակապետ), բոլորակածիր, բոլորակաձև, երասանակաղանց, զանգակաձայն, խառնակաբան, խօսակակից, պահակափոխ, սուտակասպաս, սրահակաձև, տափակաքիթ, տեսակապետ*

**-ական**—*բազմականակից, բաւականազոր*

**-աղ**—*խանդաղակաթ*

**-այն**—*միայնաբան, միայնագործ*

**-ան**—*բաժանակամ, բաժանակից, իշխանակին, իշխանակիր, իշխանակից, իշխանասէր, իշխանափոխ, խորանակից, խորանաձև, խորանանման, խորանափեղկ*



**-անակ**—*ժամանակագիր, ժամանակակետ, ժամանակակից, ժամանակաչափ, ժամանակացոյց, ժամանակափայլ*

**-անդակ**—*այլանդակափառ*

**-ապար**—*վայրապարազարդ, վայրապարախօս*

**-ար**—*զարդարագիր*

**-արան**—*աւետարանագիր, աւետարանագործ, աւետարանաժառանգ, աւետարանաշահ, կերպարանակից, կերպարանափոխ, շտեմարանապետ*

**-աւ**—*իրաւաբան, իրաւագետ, իրաւազարդ, իրաւախոհ/իրաւախորհ, իրաւառոյզ, սակաւագին, սակաւաթիւ, սակաւահաւատ, սակաւաձեռն, սակաւամեղ, սակաւամիտ, սակաւանիստ, սակաւապետ, սակաւավախճան*

**-աւոր**—*ահաւորալուր, թագաւորաբնակ, թագաւորագիր, թագաւորակից, թագաւորանիստ, կեղծաւորակից, չափաւորակից, սպասաւորակից, փառաւորակից*

**-եղ**—*բոլորեղակերպ*

**-երէն**—*հայերէնախօս*

**-եւ**—*աղբեւայոյզ*

**-էն**—*այգրէնածին*

**-թար**—*վատթարազաւակ, վատթարատես*

**-իղ**—*երկիւղազարդ*

**-ին**—*արգիւնաբեր, արգիւնագործ, արգիւնակատար*

**-ոգ**—*նորոգագործ, նորոգաձև, նորոգաշէն*

**-ող**—*աջողաձեռն, բաշխողակից, կատարողապետ*

**-ոյ**—*բարոյախօս, բարոյածին, բարոյակից*

**-ոտի**—*սնոտիագործ*

**-որ**—*յորդորամիտ*

**-որդ**—*աւելորդագործ, աւելորդածախ, հաղորդակից, ճանապարհորդակից, որսորդախաբ*

**-ուած**—*հատուածաձև, հերձուածապետ, մանուածապատ, ստեղծուածագործ*

**-ութիւն**—*արդարութիւնաբեր, արքայութիւնաբեր, մխիթարութիւնաբեր, յարութիւնագործ, յարութիւնակից, նեղութիւնակիր, ցանկութիւնասեր, փրկութիւնագործ, քաւութիւնաբեր, օրհնութիւնաբեր*

**-ումն**—*ուսումնակից, ուսումնասէր*

**-ուր**—*երկուորածին, զինուորակից*

**-ուստ**—*կորուստախառն*

**-(ա)պան**—*պահպանակից, պահպանապետ/պահապանապետ*

**-ս**—*յետսամիտ*

-ստ (-աստ, -եստ)—*զգաստասէր, զգեստապարոյր, իմաստաբան, իմաստախնդիր, իմաստախորհ, իմաստակարծ, իմաստակիր, իմաստահանճար, իմաստաճեմ, իմաստայեղց, իմաստապարգև, իմաստասէր*

-րորդ—*չորրորդապետ*

-օն—*զգօնամիտ, պաշտօնասէր. պաշտօնակից*

*3ա.* (S̲a)jS

-ակ—*կապուտակաձև, կուտակադէզ, նուիրակապետ, օրինակագիր*

-ական—*շինականաշէն, պատուականագիւտ*

-ան—*կռանագործ, կռանակուռ, նշանագիր, նշանագիւտ, նշանագործ, նշանադէտ, նշանադրոշմ, նշանալոյծ, նշանախեց, նշանախնդիր, նշանակապ, նշանակերտ, նշանակիր, նշանացոյց, պատուիրանազանց, պատուիրանակատար, պատուիրանապահ*

-ատ—*կնատաձորձ*

-ւոր—*բնաւորակից, թունաւորաբեր, լուսաւորամիտ*

-եղ—*շքեղազարդ, շքեղակերպ, շքեղաշուք*

-ող—*խորողադիւթ, պատմողական*

-որդ—*կցորդակից, ուղղորդագնաց*

-ու—*եղջերուահար, եղջերուաքաղ*

-ուած—*շինուածաձև*

-ստ—*հանգստաբեր, հանգստասէր*

*3բ.* (Sa)jS

-անի (>ան)—*արժանակշիռ, արժանահաւատ, արժանապարտ, արժանատես, արժանափայլ, արժանափառ*

-անք (>ան)—*կապանակից, կապանապահ, յորձանախոր, յորձանաձիգ*

-գին (>գն)—*ուժգնասիրտ*

-եալ (>ել)—*առաքելարան, առաքելագործ, առաքելախօս, առաքելակարգ, առաքելակից, առաքելահրաման, առաքելանման, առաքելաշնորհ, առաքելաջահ, առաքելաջան, առաքելասպան, կատարելագործ, կատարելածին, կատարելակից, կատարելամիտ, հեծելազօր, հեծելախումբ, շիջելափառ*

-եամն (>եմն)—*այծեմնաձև*

-եան (>են)—*պատենաշէն, պատենաթև*

-ելի (>ել)—*սքանչելագործ, սքանչելախառն, սքանչելակերպ, սքանչելաշուք*

-եղի (>եղ)—*աղտեղագործ, աղտեղահանդերձ, աղտեղասէր*



-ենի (>են)—*այծենակաճ, հայրենակատար, հայրենասէր, վայրենամիտ*

-եցիկ (>եցկ)—*գեղեցկագործ (նոյն* գեղեցիկ *բաղադրիչով ունենք* 22 *օրինակ)*

-ի (>∅)—*ծիրանազարդ, ծիրանածայր, ծիրանածին, ծիրանակիզն, ծիրանակիր, ծիրանաներկ, ծիրանավաճառ, ծիրանափառ, կորովաձիգ*

-իլ (>լ)—*տեսլասեր*

-իկ (>կ)—*եզնկաբերան, հնդկավան, պարսկազեն, սաստկակոծ, սաստկաձայն, սաստկամահ, սաստկայաղթ, սաստկաջինջ*

-ին (>ն)—*առաջնածին, առաջնապատում, առաջնապարգև, առաջնասքանչ, մեկնահանդերձ, յետնածեր, յետնամեղ, վերնագաւառ, վերնագիր, վերնադուռն, վերնազարդ, վերնախարխուխ, վերնախնամ, վերնակողմն, վերնայարկ, վերնապարգև, վերնատուն, վերնափեղկ*

-իւ (>ու)—*ազնուագութ, ազնուատոհմ*

-կին (>կն)—*երեքկնայարկ, կրկնաբուղխ, կրկնամեռ, կրկնայարկ, կրկնապարիսպ, կրկնաձայն, կրկնակերտ, կրկնաքաշ*

-նի (>ն)—*գաղտնագործ, գաղտնաշշունջ*

-ոյկ (>ուկ)—*խարուկածին*

-ոյն (>ուն)—*հանգունակից, ողջունաբեր, ողջունալի, ողջունապատում, ողջունացոյց*

-ութիւն (>ութեն)—*խռովութենապարտ*

-ումն (>մն)—*երգմնահար, երգմնայեղց, երգմնասուտ, ուսմնակից*

-ուն (>ն)—*արթնամիտ, խօսնակից*

-ունդ (>նդ)—*ծննդաբախտ, ծննդաբան, ծննդագործ, ծննդակարգ, ծննդակից, ծննդապետ, սննդակից*

-ունի (>ուն)—*տերունավայել*

-ուն(ք) (>ն)—*կոչնատէր*

-ուչ (>չ)—*վայելչակերպ, վայելչատարած*

-ուստ (>ստ)—*կորստաբեր, կորստախառն, կորստապատիր, կորստասէր, հարստաբուռն, հարստակոյլ, հարստահար*

-ուրդ (>րդ)—*ժողովրդախնամ, ժողովրդապետ, ժողովրդասպան, ժողովրդավար, խորհրդագետ, խորհրդազգած, խորհրդակատար, խորհրդակիր, խորհրդակից, խորհրդապահ*

*3գ.* (S̲a)jS

-ազան (>ազն)—*սրբազնագործ, սրբազնակատար, սրբազնաստեղծ, սրբազնատիպ*

-այն (>են)—մենածին, մենակերպ, մենակոխ, մենակռիւ, մենամարտ

-աւոր (>եւոր)—հոգեւորաշահ

-ին (>ն)—լուսնաթիւ, լուսնաժետ, լուսնահար, լուսնապաշտ, միջնաբերդ, միջնալոյս, միջնայարկ, միջնապարիսպ, միջնատուն, միջնացանկ

-եալ (>ել)—ընտրելակից

3գ. $(Sa)jS$

-ի (+ա>ե)—ծիրանեզարդ, ծիրանեկիր

3ե. $(S^{f}a)jS$

-ուած—ստացուածատէր

3զ. $(S^{f}a)jS$

-իչ (>չ)—արարչագործ, արարչախնդիր, արարչակից, արարչապաշտ, արարչապետ

3է. $(Sa)jS^{f}$

-ակ—երամակակալ, երասանակակալ

-այն—միայնակեաց, միայնակեր

-ան—բաժանակալ

-արան—շտեմարանալից

-աւ—սակաւակեաց, սակաւակեր

-աւոր—թագաւորակաց

-եւ—հետեւախաղաց

-իւղ—երկիւղալից

-իւն—արդիւնատու

-ոգ—նորոգատուր

-ստ—իմաստալից, իմաստահայեաց, իմաստատուր

-օն—պաշտօնատար

3ը. $(\underline{S}a)jS^{f}$

-ան—պատուիրանագիր

-ստ—հանգստակայ

3թ. $(S\underline{a})jS^{f}$

-ենի (>են)—հայրենատուր

-իկ (>կ)—պարսկակորոյս

-ին (>ն)—ստորնակայ

-ումն (>մն)—երգմնակեր

-ունի (>ուն)—արքունատուր, տէրունատուր



-ուրդ (>րդ)—ժողովրդակեր, ժողովրդակեցոյց, խորհրդակալ, խորհրդակորոյս, խորհրդատօնք

3ժ. $(\underline{S}\underline{a})jS^{f}$

-այն (>են)—մենակեաց

-աւոր (>եւոր)—հոգեւորազգաց

-ին (>ն)—լուսնակայ, միջնաթիկունք

3ժա. $(S^{f}\underline{a})jS^{f}$

-իչ (>չ)—արարչադիր, արարչատուր

3ժբ. $[(Sa)a]jS$—առաջին հիմնային բաղադրիչն ունի երկու վերջածանց

-ան+-ական—իշխանականագործ

-եւ+-ակ—հետեւակազօր, հետեւակամարտ

-ք+-ս—ներքսակողմ, ներքսամուտ, ներքսափակ

3ժգ. $[(S\underline{a})a]jS$

-իլ+-արան—տեսլարանաձեւ

-ին+-ակ—մեկնակազէն

3ժդ. $[(Sa)\underline{a}]jS$

-ստ+-ուն—իմաստնաբան, իմաստնագիտ, իմաստնախնդիր

-ք+-ին—ներքնագիր, ներքնագունդ, ներքնակողմ, ներքնատուն

3ժե. $[(\underline{S}\underline{a})\underline{a}]jS$

-ունչ+-եան—մշտնջենաբուղխ, մշտնջենակարգ, մշտնջենակից, մշտնջենահոս, մշտնջենամռունչ, մշտնջենավառ, մշտնջենատես

3ժզ. $[(Sa)a]jS^{f}$

-եւ+-ակ—հետեւակագնաց

3ժէ. $[(Sa)\underline{a}]jS^{f}$

-ք+-ին—ներքնադիր

3ժը. $[(\underline{S}\underline{a})\underline{a}]jS^{f}$

-ունչ+-եան—մշտնջենակաց, մշտնջենակեաց

3ժթ. $[(S^{f}a)a]jS^{f}$

-ան+-աւոր—կալանաւորակալ

3ի. $\{[(S\underline{a})a]\underline{a}\}jS$—առաջին հիմնային բաղադրիչն ունի երեք վերջածանց

-ք+-ին+-ի (>∅)—ներքինապետ

3իա. $\{[(\underline{S}\underline{a})a]a\}jS$

-ունչ+-եան+-աւոր—մշտնջենաւորակից, մշտնջենաւորակոյս

4. $[\acute{a}(Sa)]jS$—առաջին հիմնային բաղադրիչն ունի և՛ նախածանց, և՛ վերջածանց.

ան-. . .-ան—անարժանագործ

ան-. . -աւ—անիրաւագիր, անիրաւակից

յ-. . . -ող—յաջողաբախտ

յ-. . . -ս—յետսամիտ

4ա. $[(aS)a]jS$

ան-. . . -ող—անարգողաւէր

4բ. $[a(\underline{S}a)]jS$

ան-. . . -ան—անպիտանաբան

4գ. $[a(S\underline{a})]jS$

ան- . . . -ուն (>ն)—անասնաբոյծ, անասնագէտ, անասնամոլ

ան- . . . -եալ (>ել)—անկատարելակից

4դ. $[a(S\underline{a})]jS'$

ան-. . .-ուն (>ն)—անասնասնոյց

Երկրորդ հիմնային բաղադրիչի ածանցավոր կազմությունների դեպքում նույնպես վկայված են թե՛ նախածանցավոր, թե՛ վերջածանցավոր բաղադրիչներ։

5. $Sj(aS)$—Այս կաղապարն իր ենթակաղապարներով (տե՛ս 5ա, 5բ, 5գ) խիստ սահմանափակ կիրառություն ունի, ներկայացված է միայն հետևյալ օրինակներով.

դժ—ամենադժպատեհ

ներ—ինքնաներգործ

5ա. $Sj(ajS')$

տրամ—աւելատրամակայ

ստոր—այլաստորակայ, ինքնաստորակայ

5բ. $\underline{Sj}(aS)$

զ—ոսկեզօծ

5գ. $\underline{S}j[a(Sa)]$

պար—բազմապարունակ

Վերջածանցով երկրորդ հիմնային բաղադրիչ ունեցող բարդությունները անհամեմատ ավելի տարածված են։ Մեր ընտրանքում ներկայացված են հետևյալ տարատեսակությունները։

6. $Sj(Sa)$—Այս կաղապարով վկայված են կազմություններ բազմազան վերջածանցներով.

-ակ—ամենատեսակ, այծատեսակ, աստուածատեսակ, աստուածատօնակ, արծաթատեսակ, բոցատեսակ, գոլորշատեսակ, դաժանատեսակ,



դժոխատեսակ, դժուարատեսակ, երկատեսակ, թանձրատեսակ, ժանտատեսակ, խաչատեսակ, կարծրատեսակ, հեծատեսակ, հողատեսակ, հրաշատեսակ, հրեշտակատեսակ, մարդահասակ, մարդատեսակ, մեծահասակ, միատեսակ, յաղթահասակ, յարատեւակ, նաւալուղակ, պասեքատօնակ, սառնատեսակ, քաղցրատեսակ, Քրիստոսատեսակ, օձատեսակ, օրապահակ

-ական—ամենաբաւական

-ան—խորայորձան

-անակ—ինքնաժամանակ, հաւասարաժամանակ, տօթաժամանակ

-անք—յորդահոսանք

-ար—ամենայարդար, աւագամեծար, հիւրամեծար, մարդայարդար, մեծամեծար, նախամեծար, նուագայարդար, տաճարայարդար, Քրիստոսամեծար

-արան—այլակերպարան

-ացի—աշխարհաքաղաքացի, մարապարացի, մեծաքաղաքացի

-աւ—արինասակաւ, սուղասակաւ

-աւոր—ամենաթագաւոր

-եակ—տաճարասպասեակ

-եան—հողապատեան, ողորկապատեան

-եցիկ—ամենագեղեցիկ, ինքնագեղեցիկ, քաջագեղեցիկ

-ի¹—երկաթագործի, եզրածիրանի

-ի²—թանձրամայրի

-իլ—ամպատեսիլ, աստուածատեսիլ, աոքատեսիլ, բալատեսիլ, բոցատեսիլ, գարշատեսիլ, դժուարատեսիլ, ժանդատեսիլ, լանջատեսիլ, հեշտատեսիլ, հրապարակատեսիլ, հրեշտակատեսիլ, ճառագայթատեսիլ, մարդատեսիլ, մեծատեսիլ, միատեսիլ, նորատեսիլ, չարատեսիլ, պայծառատեսիլ, քաջատեսիլ

-իկ—գազանամարտիկ, դժուարամարտիկ, կառամարտիկ, ձիամարտիկ, մերկամարտիկ, նաւամարտիկ, ստուերամարտիկ, վերամարտիկ, քաջամարտիկ

-իճ—ակնակապիճ

-ին—լարաբաժին, կճղակաբաժին

-իչ—ամենահաստիչ, ամենափրկիչ, մեղաքաւիչ, վրանաբնակիչ

-իք—այլակարծիք, կեղակարծիք

-ոյ—ազատաբարոյ, աւազակաբարոյ, գազանաբարոյ, դաժանաբարոյ, դառնաբարոյ, դժուարաբարոյ, իժաբարոյ, ծառայաբարոյ, հայրաբարոյ, հզօրաբարոյ, ճիւաղաբարոյ, միաբարոյ, չարաբարոյ, ողջաբա-

բոյ, ակնահաճոյ, ամենահաճոյ, անձնահաճոյ, աստուածահաճոյ, դժուարահաճոյ, ինքնահաճոյ, կամահաճոյ, մարդահաճոյ, վատահաճոյ, քաջահաճոյ

-ող—ամենաշնորհող, ամենապարգևող, դիւրագործող, դիւրախաբող, կամակարող, հաւասարակարող, մեծագործող, չարախորհող, քաջայաղթող

-ոյք—բարձրագահոյք

-որդ—հողմանախանձորդ

-ոք—ամենաբարիոք

-ու—դաժանաբարու, հայրաբարու

-ուած—առասպելաստեղծուած, դժուարախառնուած

-ումն—բոցածագումն, դիւրածախումն, ծանրացասումն, յեղակարծումն

-ուն—հասկահասուն, մեծապարծուն, ձիավարուն, քաջաբերուն

ուչ—ամենավայելուչ, ամենատեսուչ, աստվածավայելուչ, ինքնավայելուչ, ինքնատեսուչ, հրեշտակավայելուչ, մարդավայելուչ, մեծավայելուչ, պայծառավայելուչ, վերատեսուչ, փոքրավայելուչ, քաջավայելուչ, քաջատեսուչ, օտարատեսուչ

-ուստ—ամենահարուստ, աշխարհակորուստ, հաստահարուստ

-ուրդ—աշխարհաժողովուրդ, լայնախորհուրդ, խորախորհուրդ, հզօրախորհուրդ, մեծախորհուրդ, միախորհուրդ, ողջախորհուրդ, չարախորհուրդ, վատախորհուրդ

-ստ—առաջապահեստ, աստուածազգեստ, արջնազգեստ, դառնազգեստ, դրահազգեստ, խարազնազգեստ, խաւարազգեստ, կանաչազգեստ, կարճազգեստ, հանդարտազգեստ, հարսնազգեստ, հաւատազգեստ, մարդազգեստ, մորթազգեստ, նորազգեստ, պայծառազգեստ, պատկերազգեստ, սևազգեստ, սպիտակազգեստ, տերևազգեստ, Քրիստոսազգեստ, մահահանդիստ, նաւահանդիստ

-րի—քաջաբերրի

-օթ—աստուածածանօթ, լաւածանօթ, հրեշտակածանօթ, նախածանօթ, քաջածանօթ, Քրիստոսածանօթ

-օն—գիշերապաշտօն, ժանտապաշտօն, միապաշտօն

-օնք—գաղտագողօնք

-ք—այլակամք, անձրևաթիւք, արգելավանք, ինքնակեանք, խաչակառք, խոխոմաձիգք, ձիազէնք, նախամուտք, նորատիք, շեղջախտիրք, սայլակառք, սայլատունք, վարազաթեք, օտարաբարք

6ա. S̲j(Sa)

-ած—երկնահաստատած

-ածոյ—բազմամանուածոյ



-ակ—բազմատեսակ, գձձատեսակ, զօղատեսակ, զազրատեսակ, լուսատեսակ, ծխատեսակ, հրատեսակ, մարգարտատեսակ, մարմնատեսակ, մոխրատեսակ, շնչատեսակ, տղմատեսակ, ցխատեսակ, փրփրատեսակ

-ան—հրահոսան, մտահոսան

-անի—բազմահոմանի

-անոց—մսավաճառանոց

-անք—ձկնատեսանք

-ացի—երկնաքաղաքացի

-եակ—տնասպասեակ

-եան—զինապատեան

-եցիկ—զուգագեղեցիկ

-իլ—բազմատեսիլ, զազրատեսիլ, լուսատեսիլ, կարմրատեսիլ, հրատեսիլ, շնչատեսիլ, սկզբնատեսիլ, սրատեսիլ, սրբատեսիլ

-իկ—բռնամարտիկ, զինամարտիկ, ըմբշամարտիկ, կռփամարտիկ, հնգամարտիկ, մենամարտիկ

-ին—ջրաբաժին

-իւն—զուգահնչիւն

-իք—ընակարծիք

-ոյ—շղուաբարոյ, շնաբարոյ, բազմահաճոյ, մտահաճոյ, սրտահաճոյ

-ող—գէտնակոխող, հանգիտակարող, ստակարծող

-որդ—երկնաճանապարհորդ

-ուն—բազմաբեղուն

-ուչ—ծաղկավայելուչ, մարմնավայելուչ, սրբավայելուչ

-ուրդ—գետնախորհուրդ, զրախորհուրդ

-ստ—բուսազգեստ, թխազգեստ, լուսազգեստ, կարմրազգեստ, հրազգեստ, մարմնազգեստ, մաքրազգեստ, փշազգեստ

-ք—առուահանք, հովուավանք, շինավայրք

-օթ—կանխածանօթ

6բ. Sj(S̲a)

-ազան—ամենասրբազան

-ած—ամենագթած, կենդանագրած, հաստաշինած

-ակ—աստուածհրաւիրակ, երկադիտակ, հրաշադիտակ

-ան—այլանշան, աստղանշան, արիւնանշան, բարձրանշան, բոցանշան, խաչանշան, կառանշան, մատնանշան, մեծահոսան, միահեծան,

միանշան, յորդահոսան, նորանշան, պայծառանշան, վատանշան, փողանշան, Քրիստոսանշան

-անք — ծովածփանք

-ավոր — ամենալուսավոր

-եկին — եռահնգեկին

-ենի — ժանտաթզենի, մոլաթզենի, մոլաձիթենի

-ող — ամենակրող, աստուածածնող, դժուարավիճող, իրագիտող, հաւասարակրող

-ոց — խորամիջոց

-ոք — ամենաբարուք

-ունդ — աշխարհածնունդ, դիւրասնունդ, մայրածնունդ, միասնունդ, նախածնունդ, նորածնունդ, քաջածնունդ

6գ. $\underline{S}j(\underline{S}a)$

-ածոյ — պղնձակռածոյ

-ակ — բազմատեղեակ, երկնահրաւիրակ, կիսապատանեակ, ջրասուզակ, ջրակուտակ

-ան — մատենանշան

-անակ — բազմանշանակ, մարմնանշանակ

-ումն — բազմաշրջումն

-ի — գետնախշտի

-իկ — գետնախշտիկ

-ող — երկրածրող, զուգակշռող, թղթագրող

-որդ — արտասուակցորդ

-ունդ — բազմածնունդ, դայեկասնունդ, ընդասնունդ, ջրածնունդ

6դ. $S^{f}j(Sa)$

-ակ — ականատեսակ

-առ/ար — դիւցախեղառ/դիցախեղար

-արան — մարդկակերպարան

-իչ — մեղսաբաւիչ

-ոյ — հօրաբարոյ

-ումն — աստեղաբորբոքումն

-ուստ — տեառնագալուստ

-ուրդ — մեղսախորհուրդ

6ե. $Sj(S^{f}a)$

-ի — ահարեկելի, դժոխաշարժելի, դժուարաբերելի, դիւրագթելի, դիւրադատելի, դիւրակալի, հրաշանազելի, քաջահամարելի և այլն

-ող — դիւրագայրացող



-ուած — աւելաստացուած

6զ. $\underline{S}j(S^{f}a)$

-ի — հրահալելի

-ուած — բազմաստացուած

-ք — մատենակալք

6է. $Sj(\underline{S}^{f}a)$

-անոց — որբանուցանոց

-ի — դիւրաբժշկելի, դժուարաբուժելի, դժուարաժուժալի, դժուարախտրելի, դժուարակրուելի, դիւրակրելի

-իկ — ճգնազգեցիկ

-ուած — փախստուած

6ը. $S^{f}j(S^{f}a)$

-ան — իւրակայան

6թ. $\underline{S}j(Sa)$

-ակ — բարետեսակ, փոշետեսակ, ոսկետեսակ

-անակ — բարեժամանակ

-իլ — բարետեսիլ, ոսկետեսիլ

-ող — բարեբանող, բարեխորհող, բարեհաշտող

-ոյ — բարեբարոյ, բարեհաճոյ

-ուչ — բարեվայելուչ

-ուրդ — բարեխորհուրդ

-ստ — հոգեզգեստ

-օն — բարեպաշտօն

6ժ. $\underline{S}j(\underline{S}a)$

-ան — արծուենշան, բարենշան

-ունդ — հոգեծնունդ

6ժա. $\underline{S}j(S^{f}a)$

-ող — բարետրող

Երկհիմք հոդակապավոր բարդությունների մի համեմատաբար փոքրաթիվ խումբ է կազմում այն տարատեսակությունը, որտեղ երկու հիմքերն էլ ածանցավոր են։ Բոլոր հնարավոր դեպքերից V դարի աղբյուրներում վկայված են հետևյալ տարբերակները.

7. (aS)j(Sa)

ան- . . . -ար — անարգամեծար

առ- . . . -իլ — առաւելատեսիլ

առ- . . . -ուրդ — առողջախորհուրդ

ընդ- . . . -իլ — ընդաղօտատեսիլ

յ- . . . -ակ — *յառաջատեսակ, յառաջատօնակ*
յ- . . . -իկ — *յառաջամարտիկ*
յ- . . . -իչ — *յառաջամարտիչ*
յ- . . . -ուրդ — *յառաջախորհուրդ*
յ- . . . -ստ — *յառաջապահեստ*
յ- . . . -օթ — *յառաջածանօթ*
ց- . . . -օն — *ցայգապաշտօն*

7ա. (aS̲)j(Sa)
ան- . . . -ուրդ — *անօրինախորհուրդ*

7բ. (aS)j(S̲a)
ան- . . . -ակ — *անհարթագիտակ*
ընդ- . . . -ունդ — *ընդվայրասնունդ*
յ- . . . -ակ — *յառաջակրթակ*

7գ. (Sa)j(Sa)
-այն . . . -ակ — *միայնատեսակ*
-ան . . . -ակ — *կենդանատեսակ*
-ան . . . -ի — *արժանատարփելի*
-ան . . . -իլ — *արժանատեսիլ*
-ան . . . -ուչ — *արժանավայելուչ*
-անդակ . . . -իլ — *այլանդակատեսիլ*
-ալ . . . -իլ — *սակաւատեսիլ*
-ոգ . . . -իլ — *նորոգատեսիլ*
-ստ . . . -ուրդ — *իմաստախորհուրդ*
-օն . . . -ոյ — *գգօնաբարոյ*

7դ. (S̲a)j(Sa)
-աստան . . . -ակ — *բուրաստանատեսակ*

7ե. (Sa̲)j(Sa)
-եալ . . . -ստ — *մեռելազգեստ*
-եալ . . . -օթ — *առաքելածանօթ*
-ելի . . . -իլ — *սքանչելատեսիլ*
-եցիկ . . . -ակ — *գեղեցկատեսակ*
-եցիկ . . . -իլ — *գեղեցկատեսիլ*
-եցիկ . . . -ուչ — *գեղեցկավայելուչ*
-իկ . . . -ակ — *սաստկատեսակ*
-իկ . . . -ոյց — *սաստկասառոյց*
-ի . . . -ստ — *ծիրանազգեստ*
-իւ . . . -օն — *աղնուապաշտօն*



-ումն . . . -ակ — *ցասմանատեսակ*
-ուն . . . -ուրդ — *թաքնախորհուրդ*
-ուչ . . . -ակ — *վայելչատեսակ*

7զ. (S̲a)j(Sa)
-այն . . . -ակ — *մենատեսակ*
-ազան . . . -ուչ — *սրբազնավայելուչ*
-ին . . . -ի — *միջնածիրանի*
-ին . . . -ք — *լուսնախոտիրք*

7է. (Sa)j(S̲a)
-աւ . . . -ան — *սակաւանշան*
-կան . . . -իչ — *վարձկանագրիչ*

7ը. (S̲a)j(S̲a)
-ակ . . . -ունդ — *բնակասնունդ*
-ան . . . -ակ — *նշանագիմակ*

7թ. (Sa̲)j(S̲a)
-եալ . . . -ան — *առաքելանշան*
-եակ . . . -ին — *պատանեկատափին*
-եցիկ . . . -ակ — *գեղեցկադիմակ, գեղեցկադիտակ*
-իկ . . . -ումն — *սաստկաբուրումն*
-ին . . . -անդ — *վերնադրանդ*
-ուկ . . . -ան — *յատկանշան*

7ժ. (Sa)j($S^f$a)
-եցիկ . . . -ի — *գեղեցկատարփելի*

7ժա. (Sa̲)j(S̲$^f$a)
-ին . . . -ող — *վերնատուող*

7ժբ. [a(aS)]j(Sa)
յ-+ան- . . . ումն — *յանկարծացասումն*

7ժգ. [a(Sa̲)]j(Sa)
ան- . . . -ուն . . . -ոյ — *անսանաբարոյ*
ան- . . . -ուն . . . -ութիւն — *անսանազոհութիւն*

*Ածանցավոր երկրորդային հիմքերից կազմված բարդությունները, չնայած իրենց կաղապարների բազմազանությանը, քանակական տեսակետից մեծ թիվ չունեն և կազմում են գրաբարի բարդությունների ընդամենը 17,6 տոկոսը (ներառյալ նաև SS հիմնակաղապարի դեպքերը, որոնք կներկայացվեն ստորև՝ 17—19 կաղապարների տակ)։*

*Երկհիմք հոդակապավոր բարդությունների մի տարատեսակություն է կազմում նույն արմատի կրկնությամբ ստացվող կաղապարը, որն ունի*

*կառուցվածքային երկու տարբերակ. 1) երբ բաղադրիչները կրկնվում են նույնությամբ (առաջին բաղադրիչի շեշտափոխական հնչյունափոխությունն այստեղ էական չենք համարում, թեև առանձնացնում ենք որպես հատուկ ենթակաղապար) և 2) երբ բաղադրիչներն ունեն հնչյունական տարբերություններ: Այս կառույցները թեև ունեն բավական մեծ հնություն, սակայն գործուն են նաև ուսումնասիրվող շրջանի համար, ընդհանրապես հատուկ են խոսակցական լեզվին և ժամանակակից բարբառներին: Մեր ընտրանքում հանդիպել են հետևյալ օրինակները.*

8. SjS—*գունդագունդ, դառնադառն, դասադաս, դարձադարձ, դեռադեռ, դէզադէզ, զանազան, ժիրաժիր, կերպակերպ, կորակոր, մանրամանր, մեծամեծ, նորանոր, շեղջաշեղջ, չարաչար, ջերմաջերմ, տարմատարմ*

8ա. SjS—*բնաբուն, գիշագէշ, գունագոյն, դիզադէզ*

8բ. SjS—*այս ենթակաղապարում երկրորդ բաղադրիչը հնչյունապես նույնությամբ չի համապատասխանում առաջինին: Այս բառերը, թերևս, հնդեվրոպական միասնության շրջանից ժառանգված բառակազմական կաղապարներից մեկի արտահայտությունն են: Պահպանվել են սակավաթիվ բառեր՝ մոտավորապես մեկ տասնյակի չափ, ընդ որում երբեմն մթագնել է երկրորդ բաղադրիչի իմաստը, և ոչ կանոնավոր հնչյունափոխության հետևանքով այն երբեմն դժվարությամբ է գիտակցվում որպես առաջինի փոփոխված ձև: Ունենք հետևյալ օրինակները՝ աղբախուղբ, աղխամախ, աղջամուղջ, աղտամուղտ, արհամարհ, բարձրաբերձ, ժանտաժուտ, խաժամուժ, խառնամառն, խուժադուժ, կերակուր, հաստաբեստ, հաստամեստ:*

*Ինչպես նշվել է, գրաբարի բառակազմության առանձնահատուկ ձևերից մեկն է նաև շաղկապների և նախդիրների հանդես գալը հոդակապերում: Շաղկապներից այդ գործառությունը կատարում են և-ը և ու-ն, ընդ որում նրանք երբեմն կարող են հանդես գալ միևնույն դիրքերում որպես ազատ տարբերակներ: Ինչպես SjS կաղապարի դեպքում, այստեղ ևս ունենք միևնույն արմատի կրկնությամբ կազմված ձևեր, ընդ որում, ինչպես միաձույլ, այնպես էլ անջատ բաղադրիչներով կազմություններ:*

9. ScS—*և շաղկապով՝ այրևձի, երբևէ, թոհևբոհ/թոխևբոխ, կալևկապ, հարցևխնդիր, հարցևփորձ, հարցևքնին, միևնոյն, որձևէգ, ցանևցիր, ու շաղկապով՝ աղուհաց, աղուփոխ, այրուբեն(ք), այրուձի, հատուկրճիր, հատուկտիր, հարցուփորձ:*



*Այս կաղապարներին են ենթարկվում նաև հետևյալ թվականները. եօթնևտասն||եօթնուտասն, ութևտասն||ութուտասն, իննևտասն||իննուտասն, տասնևհինգ, տասնևեօթն, տասնեւութ, ինչպես նաև տասնավորների և միավորների միացումը սկսած քսանևմեկ-ից, սակայն սրանք ավելի մոտ են վերլուծական կազմություններին:*

9ա. $S^{t}cS^{t}$—*անկևառ, առևանգ, դիրևտար, ելևէջ, ելևմուտ, երթևեկ, կացևմնաց, հասևխած, տուրևառ, տարուբեր*

9բ. ScS—*միևնույն արմատի կցումով առաջացած ձևեր. և շաղկապով՝ այլևայլ, դարիևդարի, դէպևդէպ, խսկևխսկ, լիևլի, օնևօն, ու շաղկապով՝ դէպուդէպ, գինչուգինչ, չիուլի*

9գ. $S^{t}cS^{t}$—*ելևել, հասուհաս*

9դ. S-c-S—*նախորդ ենթակաղապարի օրինակներից անջատ գործածությամբ*[65] *հանդիպում են՝ այլ և այլ, դարիւ և դարիւ, լի և լի, օն և օն:*

*Նախդրով կապակցված արմատների կաղապարը կարելի է դիտել որպես երբեմնի բառակապակցությունների սերտաճում, որտեղ նախդիրն այլևս չի գիտակցվում իր իմաստով, այլ ձեռք է բերել ձևական բառակազմական միավորի արժեք: Հետագայում նախդիրների իմաստի մթագնման հետևանքով կարող են կազմված լինել նոր բառեր ըստ նշված կաղապարի: Գրաբարի նախդիրներից այս կազմություններում ամենից հաճախ կիրառվում է ի-ն, այնուհետև, ըստ նվազող հաճախականության՝ ընդ, ըստ, զ նախդիրները (նկատի ունենք նաև նույն արմատի կրկնությամբ կազմված բարդությունները, տե՛ս ստորև).*

10. SpS

ի—*այդիշափ, ափիբերան, բանիբուն, բարձրիգլուխ, բարձրիձայն, զառիթափ, զառիկող, զառիվայր, զառիվեր (զ և առ նախդիրներն այստեղ սերտաճել և իմաստի մթագնման հետևանքով մոռնցել են այսպես կոչված արմատակերպներին), խառնիճաղանճ, յափսիթերս, փորիբաց*

ընդ—*գիրկընդխառն, խոշընդակն, խոշընդոտն, ուսընդանութ, յետսընդդեմ*

10ա. SpS

ի—*գլխիբաց, գլխիվայր*

ընդ—*գրկընդխառն*

10բ. $SpS^{t}$

ի—*գերիվերոյ*

*Նախդիրներով նույնպես ունենք միևնույն արմատի կրկնությամբ կազմված բարդություններ, ընդ որում այստեղ ևս հանդիպում են ինչպես*

«մաքուր» հիմքեր, այնպես էլ որոշ հնչյունափոխությամբ կամ տարբեր հոլովաձևերով՝ ըստ հետևյալ կաղապարների.

*10գ.* SpS

ի- —*բացիբաց, ղատիղատ, ժամիժամ, լուիլու, կէսիկէս, կորիկոր, մոտիմոտ*

ընդ—*ետընդետ, ժամընդժամ, հուպընդհուպ, մերձընդմերձ*

*10դ.* $S^f p S^f$

ի—*արիտուր*

*10ե.* SpS

ի —*խառնիխուռն*

*10զ.* $S^f p S$

ի —*բացէիբաց (իբացէիբաց), ժամէիժամ*

*10է.* (Sa)pS

ի—*բացուստիբաց*

*10ը.* $S p S^f$

ի—*կարճիկարճոյ, վերիվերոյ*

ըստ—*միըստմիօջէ, օրըստօրէ*

զ—*հետզհետէ*

(քան)զ—*ժամքանզժամ, օրքանզօր*

*10 թ.* $S^f$-p-$S^f$

ի—*կաղս ի կաղս, կեղծս ի կեղծս։*

Գրաբարի բարդությունների թվում աննշան տոկոս են կազմում երեք հիմնական ձևույթով (արմատով) կազմությունները (ի տարբերություն երկրորդական ձևույթների, որոնց թիվը մեկ բառի մեջ կարող է հասնել մինչև 5—6-ի), սակայն վկայված են մի շարք հետաքրքրական ենթակաղապարներով։ Պետք է նշել, սակայն, որ, բառերն ըստ անմիջական բաղադրիչների վերլուծելիս, այս բարդությունները հանգում են երկհիմք կազմությունների, որոնցից մեկն իր հերթին կազմված է երկու հիմքերի միացումից։ Այս երկուսի (առաջին երկուսի կամ վերջին երկուսի) կապը միշտ ավելի սերտ է լինում, և նրանք ամբողջ բաղադրության մեջ են մտնում որպես մեկ միաձույլ ամբողջություն։ Այդ փաստը հուշում է նաև բառի բառակազմական պատմությունը։ Այնպես որ երեք արմատի միացությունը մենք չենք կարող ներկայացնել SSS կաղապարով, որպես բա-



ղադրիչների միաժամանակյա կցում, այլ միայն (SS)S կամ S(SS)՝ առաջին երկու կամ վերջին երկու արմատների միացում և հաջորդական կցում երրորդ արմատին՝ բառակազմական գործընթացի հաջորդ քայլում։ Ուստի և եռարմատ կազմությունները նույնպես հանգեցվում են SjS կամ SS երկու հիմնակաղապարներից մեկին՝ ըստ հոդակապի առկայության կամ բացակայության։ Պետք է նշել նաև, որ եռարմատ բարդություններում հանդիպում են հիմնականում մաքուր սկզբնահիմքերով կազմություններ, ավելի սակավ են ածանցավոր կամ քերականորեն ձևավորված հիմքերը։ Առաջին հոդակապավոր բարդությունների հիմնակաղապարով վկայված են հետևյալ տարբերակները. ա) առաջին երկու բաղադրիչների ավելի սերտ կապով.

*11.* (SS)jS—*այսօրածին, արեգակնակէզ, արեգակնակոխ, արեգակնաճեմ, արեգականման, արեգակնատես, արեգակնափայլ, արևելակողմն, կայծակնաբուղխ, կայծակնակերպ, կայծակնաճաճանչ, կատակերգասէր, միանունակիր, յայտյանդիմանակաց, չարախտավատ, չարախտավար, սարրատաքարշ, վայրագասուն, վերամբարձահան, վերամբարձայած, փայլակնաբորբոք, փայլակնատարած, փայլակնացայտ*

*11ա.* (SS)jS—*ջրհեղեղակուլ*

*11բ.* $(SS^f)jS$—*եօթնառնակին*

*11գ.* $(SS^f)jS^f$—*ծովեզերակայ*

*11դ.* (SS)jS—*այլայլախառն, բամբասասէր, կասկածահար, կարկառակոյտ, կսկծակից, չարչարակից, սարսռասէր*

*11ե.* (SS)cS—*գիարդուպէտ*

*12.* (SjS)jS—*ամանորաբեր, կամակորախօս, անձնապահապետ, նորափառախնդիր, չարագործակից, փառաբանակից*

*12ա.* $(SjS)jS^f$—*ճգնափորձակից*

*12բ.* (SjS)jS—*միագլխապետ*

*12գ.* $(SjS)jS^f$—*լծակցատուր*

*12դ.* $(S^f jS)jS$—*առնապատկերագործ*

*12ե.* (SjS)jS—*ոսկեհուռազարդ*

*12զ.* (SjS)jS—*զանազանակից, զանազանափայլ*

*բ) Վերջին երկու բաղադրիչի ավելի սերտ կապով.*

*13.* Sj(SjS)—*դժուարափաստաբան, դիւրագործակից, դիւրահեշտալի*

*13ա.* Sj(SjS)—*բազմապտղաբեր*

*13բ.* Sj(SjS)—*ամենաբարեպաշտ*

*13գ.* $Sj(SjS^f)$—*արծաթափոխատու*

13դ. Sj(SS)—աշտարակաքարկուծ, աստուածապարարկ

13ե. Sj(SS)—աստուածաբարբառ, բարձրաբարբառ, խրամակարկատ, հակառակաբարբառ, հայաբարբառ, հատակարկատ, մարդախողխող, մեծաբարբառ, միաբարբառ, նախաբարբառ, նորախողխող, քաղցրաբարբառ, քարակարկառ

13զ. Sj(SS)—բազմաբարբառ, բազմախողխող, բռնաբարբառ, զուգաբարբառ, խեցակարկառ, կիսախողխող, մշտաբարբառ, նգախարխար, պղծաբարբառ

13է. $S^t$j(SS)—տեառնաբարբառ

Ուսումնասիրվող ժամանակաշրջանից վկայված են նաև ածանցավոր երկրորդային հիմքերով մի քանի եռարմատ բաղադրություններ, ինչպես՝

14. Sj[(SjS)$^t$a]—դժուարափաստաբանելի

14ա. Sj[(SjS)a]—ամենակերակրիչ

14բ. Sj[(Sa)jS]—մեծասքանչելաշուք

14գ. Sj[(SS)a]—դժոխանուարկութիւն, մերկավերարկու

14դ. Sj[(SS$^t$)a]—ամենածաղրանելի, դժոխաձեռնարկելի

14ե. Sj[(SS)a]—ամենաշարչարող

14զ. Sj[(SS)$^t$a]—դիւրասասանելի

14է. Sj[Sa)$S^t$]--ինքնագեղեցկարար

14ը. [(Sa)jS]jS—իմաստասիրակից

14թ. [($S^t$a)jS]jS—արարչագործակից

14ժ. (aS)j(SS)—ընդվայրակոչկոճ

14ժա. (SS)j(Sa)—արեգակնածագութիւն

Գրաբարի բառակազմության մեջ քառարմատ բաղադրությունները մեր ընտրանքում ներկայացված են միայն մեկ օրինակով՝ հետևյալ կաղապարով՝

15. [(SS)S]jS—թափանցանցալոյս

Հիմնակաղապարների մյուս տիպը անհոդակապ երկարմատ կազմություններն են, որոնք նույնպես հանդես են գալիս բազմազան ենթակաղապարներով։ Սրանց մեջ ամենից ավելի գործունը անհնչյունափոխ սկզբնահիմքերի (կամ արմատների) միացումն է։ Քանի որ հայերենի գրավոր զարգացման բոլոր փուլերի համար էլ հոդակապով կապակցությունները ավելի տարածված են, և նույնիսկ ածանցների մի զգալի մասը հիմքերին է կցվում հոդակապի միջոցով (թեև ածանցները հետագայում



հաճախ սերտաճում են հոդակապի հետ), հայագիտության մեջ ստեղծվել է այն կարծիքը, որ անհոդակապ կազմությունները բարբառային, կամ առնվազն, «ժողովրդախոսակցական» ծագում ունեն։ Սակայն քննությունը ցույց է տալիս, որ դրանց մեծ մասը միանգամայն գրական կազմություններ են և երբեմն նույնիսկ անհատական բառակերտման տպավորություն են թողնում, այնպես որ դժվար է դրանց գոյությունը բացատրել որպես խոսակցական լեզվի ազդեցություն։ Պարզապես սա գրաբարի բառակազմական կաղապարներից մեկն է, որ հանդես է գալիս որոշակի պայմաններում։ Ամենից առաջ պետք է նշել բաղադրիչների կցման կետում ձայնավորի առկայությունը, ընդ որում այդ ձայնավորը պատկանում է հիմնականում երկրորդ բաղադրիչին (ձայնավորով սկսվող արմատ)։ Ավելի սակավ են այն դեպքերը, երբ առաջին բաղադրիչն է վերջանում ձայնավորով (հայտնի է, որ գրաբարում ձայնավորահանգ արմատները սահմանափակ տարածում ունեն)։ Էլ ավելի հազվադեպ են այն օրինակները, որտեղ բաղադրիչների կցման կետում հանդիպում են երկու ձայնավոր, ինչպես՝ աղիողորմ, բարիանուն, բարիասաց, զիարդ։

Ձայնավորների առկայությունը սակայն անհոդակապ բաղադրություն կազմելու անհրաժեշտ պայման չէ։ Այն դեպքերը, երբ արմատների կցման կետում հանդիպում են բաղաձայն հնչյուններ, քանակապես միայն որոշ չափով են զիջում ձայնավոր բաղադրիչներով դեպքերին։ Մեր ընտրանքում վկայված են մեծ թվով այդպիսի օրինակներ՝ աղկեր, ամենաբփիւ, այդպես, այդչափ, այդքան, այլպես, այծքաղ, այնժամ, անձնդիր, աշխարհալած, աշխարհամար[66], արբշիռ, արեկայ, արեւմուտք, արջնդեղ, բամբաս, բանբեր, գիրբող, դեհպետ, երեքժանի, երեքպայծառ, երկբայ, երկբերան, երկրոյս, երկգլուխ, երկխօս, երկկանգուն, երկծով, երկձայն, երկձի, երկճիւղ, երկմարմին, երկմիտ, երկշաւիղ, երկցեղ, զինչպետ, թաւալգլոր, թողլիք, խեցբեկ, խեցխեղեփ, խոզանոտն, կարճկեր, հատկոտոր, հարգփորձ, հացկից, հացտու, ձաղկոծ, ձեռնբեկ, ձեռնթափ, ձեռնհաս, ձեռնպահ, ձեռնտու, մահտարաժամ, մանկալ, մատնտու, մատնցոյց, մարզպետ, մէջգետին, մէջգիշեր, մինչդեռ, մոգպետ, յարդգող, շատխօս, շուրջանապարհ, ոտնբեկ, ոտնկայ, ոտնկոխ, ոտնհար, ոտնփոխ, որչափ, ումպէտ, ունկնդիր, չորեքկերպ, չորեքմարմին, չորեքշաբաթ, պասեքտօն, պետմոգ, ռամիկապաս, սուտքրիստոս, ստնդի, ստնտու, վատնշան, վրէժխնդիր, փայտբեր, քարկոծ, քարկուռ, քարկոփ, օրհաս և բազմաթիվ այլ օրինակներ, ինչպես այս, այնպես էլ մյուս ենթակաղապարներով։

*Երկրորդ պայմանը կարելի է համարել բաղադրիչների երկարությունը, թեև սա այնքան էլ վճռական դեր չի կատարում։ Հնում առանձնապես չէին խուսափում երկար բառեր ստեղծելուց, հատկապես որոշ ոճերում, երբ երկար բառերը խոսքին հանդիսավորություն են հաղորդում։ Այդ նկատելի է հատկապես որոշ հեղինակների լեզվում (օր. Ագաթանգեղոսի բնագրում հաճախ հանդիպում ենք* **-ական** *ածանցի հավելուրդային կիրառություն)։ Բաղադրիչների երկարության պատճառով հոդակապի արտամղման դեպքերը տեղի ունեն, երբ բառը ստանում է որևէ լրացուցիչ բառակազմական ձևույթ՝ այսպես՝* **ստուածասէր**, *բայց* **ստուածսիրութիւն, աղխատասէր, աղխատսիրութիւն**: *Այս դեպքերի մասին արդեն խոսվել է երկրորդային հիմքերի կազմությունը ներկայացնելու ժամանակ։*

*Երկարմատ անհոդակապ բարդությունները ներկայացված են հետևյալ տարբերակներով.*

*16. SS—գործառական բեռնվածության տեսակետից գրավում է երկրորդ տեղը SjS հիմնակաղապարից հետո։ Մեր ընտրանքում վկայված է ավելի քան 800 օրինակ (հիմքերի ձևավորման բոլոր տարբերակներով հանդերձ)։*

*Առկա են հնչյունական կառուցվածքի հետևյալ տարատեսակությունները՝*

**աբեղաբաղ**—*առաջին բաղադրիչը ձայնավորահանգ.*

**ազատերամ**—*երկրորդ բաղադրիչն սկսվում է ձայնավորով.*

**բանբեր**—*բաղադրիչների կցվանքում հանդիպում են երկու բաղաձայն.*

**բարիասաց**—*բաղադրիչների կցվանքում հանդիպում են երկու ձայնավոր. գրաբարի համար սա հազվագյուտ օրինակներից է, որովհետև, ինչպես նշվեց, լեզուն խուսափում է հորանջից, և նման դեպքերում տեղի է ունենում ձայնավորների ձուլում (հմմտ.* **ի+ա>ե** *հնչյունափոխությունը)։*

*Վկայված է և նույն բառի հնչյունափոխված տարբերակը.* **բարեասաց** *և նույնիսկ* **բարեսաց**, *հմմտ. նաև* **գինարբու, գինեարբու.**

*16ա. $\underline{S}S$—առաջին բաղադրիչը ենթարկված է շեշտից կախված հնչյունափոխության.* **բազմամբոխ**:

*16բ. $S^fS$—առաջին բաղադրիչը քերականորեն ձևավորված։ Առկա են հետևյալ դեպքերը.*

*ա) առաջին բաղադրիչի եզակի սեռական հոլովաձև՝ աղբերակն, անուանարկ, արեանառու, հօրեղբայր, հօրորդի, տանտէր, տեառնեղբայր, տեառնորդի, քեռայր, քեռորդի*



*բ) առաջին բաղադրիչի հոգնակի հայցական հոլովաձև՝ օրէնսգէտ, օրէնսդիր, օրէնսզանց, օրէնսխօսոր, օրէնսպահ, օրէնսպահանջ*

*գ) անցյալ կատարյալի ցոյական հիմք՝ այրեացաւեր*

*16գ. $SS^f$—երկրորդ բաղադրիչը քերականորեն ձևավորված։ Առկա են հետևյալ դեպքերը.*

*ա) երկրորդ բաղադրիչը համընկնում է անցյալ կատարյալի ցոյական հիմքին՝ աղքատատեաց, ամենիմաց, աստուածասաց, աստուածուբաց, արագընթաց, թօնընկեց, իւղեփեաց, կիսայրեաց, միլաղաց, սաղմոսերգեաց, սռնդիաց և այլն*

*բ) երկրորդ բաղադրիչը համընկնում է անցյալ կատարյալի կրկնավոր հիմքին, դա հայտնի* **արար** *բացառությունն է, որով վկայված են մի քանի տասնյակ բարդություններ՝ ագոնարար, աղատարար, ամբոխարար, ամենարար, ամոքարար, անուշարար, աշխարհարար, ապականարար, աստուածարար, արդիւնարար, արծաթարար[67] և այլն*

*գ) պատճառականի անցյալ կատարյալին համընկնող հիմք՝ ամենուսոյց, աստուածուսոյց, արդարուսոյց, լոյսիջոյց, ճեպանցոյց, ոտնգատոյց, մարդելոյզ*

*դ) երկրորդ բաղադրիչի եզակի սեռական հոլովաձև՝ առուարեան*

*ե) երկրորդ բաղադրիչի հոգնակի սեռական հոլովաձև՝ հինաւուրց, ծերաւուրց*

*զ) երկրորդ բաղադրիչի հոգնակի ուղղական հոլովաձև՝ արևմուտք, տիեզերք, ամենաւուրք, տապեղուլունք*

*16դ. $\underline{S}S^f$—առաջին բաղադրիչը հնչյունափոխված, երկրորդը՝ քերականորեն ձևավորված։ Վկայված են օրինակներ նախորդ ենթակաղապարի տարբերակներով.*

*ա) բարատեաց, զուգընթաց, ընչատեաց, ճշմարտատեաց, կանխասաց, խնկաղաց, սռնդիաց, սրբասաց և այլն*

*բ) ադմկարար, բքարար, խորտկարար, կենարար, կշռարար, հանդիսարար, տիրարար և այլն*

*գ) լուսանցոյց, ջրածոյց*

*Անվանական հիմքերով՝ լուսերամք, պատուաւուրք, չքմեղս*

*16ե. $\underline{S}\underline{S}^f$—երկու բաղադրիչներն էլ հնչյունափոխված, երկրորդը՝ քերականական ձևավորումով՝ բարեսաց, բարերար*

*16զ. $S^fS^f$—երկու բաղադրիչի քերականական ձևավորում՝ դիւցընկեց, յառաջիկայ, յանմհետէ, յայսմհետէ, չորքձիք, օրէնսդիր, օրէնսուսոյց։*

Ինչպես երկարմատ հոդակապավոր բարդությունների դեպքում, այստեղ ևս հիմքերը կարող են լինել նաև երկրորդային, այսինքն՝ ձևավորվել այլևայլ բառակազմական մասնիկներով, հիմնականում նախածանցներով և վերջածանցներով, իսկ երբեմն նախածանցի արժեք ստացած նախդիրներով (ի, առ և այլն)։ Վկայված ենթակաղապարներն այս դեպքում ևս բավական բազմազան են, թեև նրանցից յուրաքանչյուրն իրացվում է համեմատաբար սակավաթիվ օրինակներով, իսկ երբեմն պահպանված ունենք միայն մեկական դեպք։

Ներկայացնում ենք վկայված ենթակաղապարները։

Առաջին հիմնային ածանցավոր բաղադրիչով.

17ա. (aS)S—առաւելևս, առձեռնպատրաստ, զօրհանապազ, ընդվայրած, յայնժամ, յայնկոյս, յայսկոյս, յանձնապաստան, յերկարօգի, յորժամ, չևս, յառաջեպիսկոպոս, յառաջընծայ, յառաջսարկաւագ

17բ. (aS)S'—յառաջասաց, յառաջընթաց, յառաջիմաց, ընդվայրընկեց

17գ. (aS̲')a—անկողնարկ

17դ. (ajS)S—տարապարտարոտ

17ե. (Sa)S—այլակդեն, թագաւորազգ, թագաւորազն/թագաւորազուն, իրաւընտիր, խորանարդ, համակդեն, հետիոտն, մոլարանոն, պաշտոնարկ, փառաւորընկալ

17զ. (S̲a)S—ամուսնութիընկալ, կուպտարանձն

17է. (S'a)S—ականակեռդ

17ը. (Sa)S—առաքելաւանդ, գեղեցկադեղն, գեղեցկոտն, երեքկնաբոր, խօսնայր, կրկնաբոր, հայրենաւանդ, սաստկանդամ, վերնանկին, քառասնօր

17թ. (S̲a)S—լուսնակն, լուսնթագ, միջնանիւ, միջնաշխարհ, միջնորմ

17ժ. (Sa)S'—առաջիկայ, բաժանարար, բախողարար, իրաւարար, խորանարար, մերձաւորարար, սակաւերևեաց, տեսակարար

17ժա. (S̲a)S'—փքոցուռոյց

17ժբ. (Sa)S'—անձկայրեաց, գեղեցկարար, երդմնուրաց, հանգստարար, սքանչելարար

17ժգ. (S̲a)S'—սնոտիմաց

17ժդ. [(Sa)a̲]S'—իմաստնարար

Երկրորդ հիմնային ածանցավոր բաղադրիչով.

18ա. S(aS)—ամենամրիծ, եռանէ, երազընդհատ, կորնթարդ, մինչև, նախանձընդդեմ, որոտընդոստ



18բ. S̲(aS)—լծընդդէմ

18գ. S'(aS)—տեառնընդառաջ

18դ. S̲(aS')—գետնանկողին, չորեքյափք

18ե. S(Sa)—Տվյալ խմբի ենթակաղապարների մեջ օժտված է ամենամեծ գործառական բեռնվածությամբ։ Վկայված են զգալի թվով օրինակներ տարբեր վերջածանցներով (տե՛ս նաև 18զ—18ժբ ենթակաղապարները)։

-ակ—այծերամակ, արձակերասանակ, բանորսակ, դժոխերասանակ, ինքներեւակ, ինքնէակ, խեղտեսակ, կատակերգակ, հարթարդակ, յայտերեակ, ողբերգակ, ուղտերամակ, չարախորժակ, պարերգակ, տիկտեսակ, քնարերգակ

-ական—բայածական

-ան—ամենիշխան, անձնիշխան, աստուածարժան, ինքնիշխան, ճարտասան, ճարտարասան

-եակ—պինապասեակ

-եայ—ողնոժնեայ

-եար—ազատորեար, աւագորեար, լաւորեար, ծառայորեար, հայրորեար, քաջորեար

-եք—այլուստեք, այլուրեք

-ի—աղանաղգի, այլազգի, բիւրազգի, բարիազգի, դժոխազգի, հինգշաբաթի, մեծազգի, մեծարգի, միազգի, նոյնազգի, չարազգի, վատազգի, քաջազգի, քարուրազգի, օտարազգի

-իչ—սաղմոսերգիչ

-ող—ամենիշխող, բանորսող, սաղմոսերգող

-ոյ—մեծարգոյ

-ոյն—իւրուրոյն

-ումն—արագուսումն, աւարառումն, դժուարուսումն, դիւրաճումն, ինքնուսումն, շատերդումն, վաղցասումն, վայրածումն, վայրբերումն, վերարկումն, քաջուսումն, օտարուսումն

-ուն—դրախտաճուն, ծանրարթուն, փայլածուն, քաջաճուն

-ուչ—մեծվայելուչ

-ուրդ—երկխորհուրդ

-ստ(աստ)—աղքատիմաստ, ամենիմաստ, աստուածիմաստ, բանիմաստ, դիտապաստ, մեծիմաստ, չարիմաստ

-ք—արևելք, արևմուտք

18զ. S̲(Sa)

-ան—վիպասան

-ի—բազմազգի, դիւազգի

-ումն—բազմուսումն, ստերդումն

-ք—ձկնատեանք

*18է.* S(S̲a)

-ակ—այլօրինակ, այնգունակ, այսգունակ, ղոյնօրինակ, երկգունակ, նոյնգունակ, նոյնօրինակ, նորօրինակ, որգունակ, սոյնօրինակ, քանի-օրինակ

-ային—զոյգերկնային

-անոց—եռակմբանոց

-իչ—բաչուղղիչ, վայրիջիչ

*18ը.* S̲(Sa)

-ակ—բազմօրինակ

-անոց—բազմակմբանոց

-ումն—հրձգումն

*18թ.* S$^{f}$(Sa)

-ած—դարձառած

-եւ—այնուհետև, այսուհետև, որովհետև

-ոյն—իրուրոյն

*18ժ.* S(S$^{f}$a)

-ած—մեծարարած

-ի$^{3}$—աստուածատեալի, աստուածըմպելի, դժոխելանելի, դժուարա-պականելի, դժուարորսելի, դիւրամփոփելի, դիւրապականելի, դիւրորոշե-լի, միջտերգելի

-ող—բացբարձող

-ուն—ամենաճեցուն

*18ժա.* S(S̲$^{f}$a)

-ի$^{3}$—դժուարարգելլի

*18ժբ.* S$^{f}$(S̲$^{f}$a)

-իչ—օրենադրիչ

*18ժգ.* S[(Sa)a]

-ակ$^{2}$+-ք—վեցօրինակք

-ի+-ք—վեցաչիք

-ումն+-ակ—ինքնուսումնակ

-ստ+-ուն—ամենիմաստուն

*18ժդ.* S[(aS)$^{f}$a]



ընդ(ըմ)- . . . -ի$^{3}$—դժուարըմբռնելի, դիւրըմբռնելի, քաջընդունելի

*Երկու հիմնային ածանցավոր բաղադրիչներով.*

*19ա.* (aS)(Sa)

առ- . . . -ակ—առինչունակ

զ- . . . -ուն—զառաջասուն

ընդ- . . . -ակ—ընդարձակերասանակ

յ- . . . -ող—յառաջազդող

յ- . . . -ումն—յառաջածումն, յառաջառաքումն

տ- . . . -ուրդ—տգէտխորհուրդ

*19բ.* (aS$^{f}$)(Sa)

յ- . . . -ակի—յետսերեակի

*19գ.* (aS)(S$^{f}$a)

յ- . . . -ումն—յառաջասացումն

*19դ.* (aS$^{f}$)(aS)

շ- . . . զ—շէզոք

*19ե.* (Sa)(Sa)

-աւոր . . . -ի$^{1}$—թագաւորազգի

-թար . . . -ի$^{1}$—վատթարազգի

-ի$^{1}$ . . . -ուկ—առաջիյեղուկ

*19զ.* (S̲a)(Sa)

-ակ . . . -ի$^{1}$—շնակաքի

*19է.* (Sa)$^{f}$(Sa)

-ի . . . -ուն—առաջեւասուն

*19ը.* (Sa)(S$^{f}$a)

-ան . . . -ի$^{3}$—արժանաւատալի

-ան . . . -ող—կենդանարարող

*Երկարմատ անհոդակապ կազմությունների նկարագրությունն ամբողջացնելու համար անհրաժեշտ է դիտարկել նաև նույն արմատի կրկնությամբ կազմված բարդությունները։ Դրանք երկու կարգի են՝ բաղադրիչների առավել սերտաճումով տիպը, որոնք ընկալվում են որպես մեկ բառ մեկ շեշտով, և բաղադրիչների հարաբերական ինքնուրույնությունը պահպանած տիպը, որտեղ արմատներն ունեն իրենց շեշտը և ընկալվում են որպես քիչ թե շատ անկախ միավորներ (այսպես կոչված հարադիրներ)։ Երկու տիպերում էլ վկայված են ձևեր ինչպես նույն անհնչյունափոխ հիմքի կրկնությամբ, նույնպես և հիմքի հնչյունական այլևայլ տարբերակ-*

ներով, ինչպես այդ տեսանք երկհիմք հոդակապավոր կազմությունների տիպերը քննելիս։ Մեր ընտրանքում վկայված են հետևյալ տարբերակները.

20. SS—աղկաղկ, աղտաղտ, այլայլ, ծործոր, պէսպէս, ջախջախ, վաղվաղ, փոխփոխ

20ա. SS—բարբառ, բարձրբարձ, խեկբեկս, խծբիծ, խուժդուժ, սարսուռ, սպառսպուռ

20բ. $S^fS^f$—բամբաս

Պետք է սակայն նշել, որ այս կաղապարները, հատկապես երկրորդ տարբերակը, ուսումնասիրվող շրջանում այլևս գործուն չէին, վկայված օրինակները պարզապես ժառանգված կազմություններ են, ստեղծված երբեմնի գործուն կաղապարով։ Ունենք այս կաղապարով մի շարք կազմություններ, որոնք բաղադրյալ կարելի է համարել միայն պայմանականորեն, քանի որ դրանք տրոհելի են միայն պատմահամեմատական լեզվաբանության տեսակետից, մանավանդ որ դրանց բաղադրիչները ոչ միայն առանձին չեն վկայված, այլև նույնիսկ չեն պահպանել իրենց ձևաիմաստային թեկուզ հարաբերական ինքնուրույնությունը, ինչպես՝ բողբոջ, բրբուռ, գրգիռ, դադար, կասկած, կարկառ, կոչկոճ, կսկիծ, յողդողդ, շաղշաղփ, շոգմոգ, մեղմեխ, պաղպաջ, պղպջ-ակ, փոփոխ և այլն։

Ինչ վերաբերում է անջատ բաղադրիչներով կրկնավորներին, ապա այդ կաղապարը հայերենի բոլոր փուլերում էլ գործուն է եղել և V դարից վկայված է բազմաթիվ օրինակներով։ Ի դեպ նշենք, որ այս կաղապարը անվանական խոսքի մասերից մակբայների կազմության հիմնական եղանակներից մեկն է և ներկայացվում է երեք տարբերակով՝ մաքուր, քերականական ձևավորում ունեցող և ածանցավոր հիմքերի կրկնություն։

21. S—S—ամուր ամուր, այր այր, անդամ անդամ, արագ արագ, գոյն գոյն, գունդ գունդ, դաս դաս, դարգ դարգ, երագ երագ, երամ երամ, երանգ երանգ, երկու երկու, երփն երփն, եօթն եօթն, ընտիր ընտիր, իմն իմն, ինչ ինչ, կողմն կողմն, մանր մանր, մասն մասն, մի մի, շեղջ շեղջ, ումն ումն, որիշ որիշ, ոք ոք, չորք չորք, պէս պէս, սեղան սեղան, ստեպ ստեպ, վաղ վաղ, վեց վեց, տեղի տեղի, տէր տէր, փայլ փայլ, քաղաք քաղաք, քաջ քաջ.

21ա. $S^f$—$S^f$—Այս կաղապարով վկայված են ուղղականից տարբեր հոլովաձևեր ունեցող բաղադրիչներով կազմություններ.



ա) եզակի սեռական-տրական՝ ամի ամի, ամսոյ ամսոյ, աւուր աւուր, գամու գամու, կարգի կարգի, միոյ միոյ

բ) հոգնակի սեռական-տրական՝ իրաց իրաց, տեղեաց տեղեաց

գ) հոգնակի հայցական՝ բարդս բարդս, գաւառս գաւառս, երախանս երախանս, կերպս կերպս, տեղիս տեղիս

դ) հոգնակի գործիական՝ իւիք իւիք

ե) բաղադրիչների տարբեր հոլովաձևերով՝ մի զմի, անձամբ անձին

21բ. Sa—Sa—վկայված են կազմություններ հետևյալ ածանցներով.

ակ—գունակ գունակ

-անակ—ժամանակ ժամանակ

-(ա)սուն—քառասուն քառասուն

-աւ—սակաւ սակաւ, տակաւ տակաւ

-եալ—տեռեալ տեռեալ

-եք—երբեք երբեք, ուստեք ուստեք, ուրեք ուրեք

-էն—անդէն անդէն

-ի¹—ազգի ազգի

-իւ—դարիւ դարիւ

-ոյն—ուրոյն ուրոյն

21գ. (Sa)a—(Sa)a—գունակս գունակս

Եռարմատ անհոդակապ կազմությունները ներկայացված են հետևյալ ենթակաղապարներով (ինչպես և նախորդ հիմնակաղապարի համապատասխան տիպերի քննության ժամանակ այստեղ ևս բաղադրությունները հանգեցվում են երկհիմք կազմությունների, ընդ որում փակագծերով արտահայտված է բառի բառակազմական պատմությունը)։

22ա. S(SS)—բացօթեագ, երկբարբառ

22բ. $S^f$(SS)—տանտիկին

22գ. (SS)S—թափանցանց, թէպէտև, որպէսզի

22դ. (SS)$S^f$—վաղվաղընկեց

22ե. ($S^fS^f$)S—հօրեղբօրորդի

Վկայված են և եռարմատ այնպիսի կազմություններ, որտեղ բառակազմական վերջին քայլը հիմքերի անհոդակապ միացումն է, մինչդեռ դրանցից մեկը (հիմնականում երկրորդը) կարող է իրենից ներկայացնել հոդակապավոր երկարմատ բարդություն, ինչպես՝

23ա. (SjS) S—միաբանամբոխ, խաւարաբանտարգել

23բ. (SjS) $S^f$—մեծամեծարար

23գ. $S(SjS)$—ամենախտալից, երեքբոլորաձև, մեծսկայազօր

23դ. $S(\underline{SjS})$—դիւրարհամարհ, հեշտարհամարհ

23ե. $S(\underline{S}jS)$—հարճորդեգիր

Եռարմատ կազմություններում հիմնային բաղադրիչներից մեկը կարող է ածանցավոր լինել։

24ա. $S[(Sa)jS]$—մերկիմաստասէր

24բ. $(SS)(Sa)$—վայրագիմաստ

24գ. $(S\underline{a})(SjS^{f})$—յատկանձնակալ

Այսպիսով տեսնում ենք, որ գրաբարի բառակազմական երկու հիմնական եղանակներից մեկը՝ բառաբարդումը, ներկայացված է բավական հարուստ և բազմազան կաղապարներով։ Իրենց գործունության և գործառական բեռնվածության տեսակետից նրանք աչքի են ընկնում խիստ արտահայտված անհամաչափությամբ։

Հետևյալ աղյուսակն արտացոլում է մեր ընտրանքում ընդգրկված բարդ բառերի բաշխումն ըստ վերը նկարագրված տարբեր բառակազմական կաղապարների՝ ինչպես բացարձակ թվային արժեքներով, այնպես էլ տոկոսային հարաբերությամբ։ 0,1%-ից փոքր արժեքները չեն նշվում, այլ տրվում է նրանց ընդհանուր գումարը ենթակաղապարների խմբի վերջում։ Թվերի կլորացումը կատարվում է 0,1-ի, սակավ դեպքերում՝ 1 ամբողջի ճշտությամբ։



Աղյուսակ 1

| № | Կաղապարներ | Օրինակներ | Թիվը | Տոկոսը |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| I | | | 6213 | 84,6 |
| 1 | $SjS$ | ազատազօր | 3086 | |
| 1ա | $\underline{S}jS$ | ամբակապ | 1034 | |
| 1բ | $S^{f}jS$ | կայսերագիր | 85 | |
| 1գ | $SjS^{f}$ | ամպախաղաց | 365 | |
| 1դ | $\underline{S}jS^{f}$ | երկնակեաց | 189 | |
| 1ե | $S^{f}jS^{f}$ | աստեղակառոյց | 14 | |
| 1զ | $\underline{S}jS$ | բարեգործ | 142 | |
| 1է | $\underline{S}jS^{f}$ | ուղեգնաց | 23 | |
| Ընդամենը | | | 4938 | 67,2 |
| 2 | $(aS)jS$ | առողջամիտ | 75 | |
| 2ա | $(a\underline{S})jS$ | անբծախոս | 16 | |
| 2բ | $(aS)jS^{f}$ | յառաջախաղաց | 19 | |
| 2գ | $(a\underline{S})jS^{f}$ | ընդդիմադարձ | 5 | |
| 2դ | $(a\underline{S}^{f})jS$ | առանձնագործ | 2 | |
| 2ե | $(a\underline{S}^{f})jS^{f}$ | առանձնակաց | 1 | |
| 2զ | $[a(aS)]jS$ | յանկարծագիւտ | 9 | |
| 2է | $(ajS)jS$ | համաձայնակից | 2 | |
| 2ը | $(aj\underline{S})jS$ | յարաձգակից | 2 | |
| Ընդամենը | | | 131 | 1,8 |
| 3 | $(Sa)jS$ | բոլորակածիր | 132 | |
| 3ա | $(\underline{S}a)jS$ | կապուտակաձև | 39 | |
| 3բ | $(Sa)jS$ | արժանակշիռ | 154 | |
| 3գ | $(\underline{S}a)jS$ | սրբազնագործ | 21 | |
| 3դ | $(Sa)\underline{j}S$ | ծիրանեզարդ | 2 | |
| 3ե | $(S^{f}a)jS$ | ստացուածատէր | 1 | |
| 3զ | $(S^{f}\underline{a})jS$ | արարչագործ | 5 | |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| 3է | $(Sa)jS^f$ | իմաստահայեաց | 18 | |
| 3ը | $(\underline{S}a)jS^f$ | պատուիրանագիր | 2 | |
| 3թ | $(Sa)jS^f$ | հայրենատուր | 11 | |
| 3ժ | $(\underline{S}a)jS^f$ | միջնաթիկունք | 4 | |
| 3ժա | $(S^f\underline{a})jS^f$ | արարչատուր | 2 | |
| 3ժբ | $[(Sa)a]jS$ | իշխանականագործ | 6 | |
| 3ժգ | $[(Sa)a]jS$ | տեսլաբանաձև | 2 | |
| 3ժդ | $[(Sa)\underline{a}]jS$ | իմաստնաբան | 8 | |
| 3ժե | $[(\underline{S}\underline{a})\underline{a}]jS$ | մշտնջենաբուղխ | 7 | |
| 3ժզ | $[(Sa)a]jS^f$ | հետևակագնաց | 1 | |
| 3ժէ | $[(Sa)\underline{a}]jS^f$ | ներքնագիր | 1 | |
| 3ժը | $[(\underline{S}a)\underline{a}]jS^f$ | մշտնջենակեաց | 2 | |
| 3ժթ | $[(S^fa)a]jS^f$ | կայանաւորակալ | 1 | |
| 3ի | $\{[(Sa)a]\underline{a}\}jS$ | ներքինապետ | 1 | |
| 3իա | $\{[(S\underline{a})\underline{a}]a\}jS$ | մշտնջենաւորակոյս | 2 | |
| Ընդամենը | | | 422 | 5,7 |
| 4 | $[a(Sa)]jS$ | անարժանագործ | 4 | |
| 4ա | $[(aS)a]jS$ | անարգողաւէր | 1 | |
| 4բ | $[a(\underline{S}a)]jS$ | անպիտանաբան | 1 | |
| 4գ | $[a(Sa)]jS$ | անասնաբոյծ | 4 | |
| 4դ | $[a(Sa)]jS^f$ | անասնասնոյց | 1 | |
| Ընդամենը | | | 11 | 0,1 |
| 5 | $Sj(aS)$ | ամենազմպատեհ | 2 | |
| 5ա | $Sj(ajS^f)$ | աւելատրամակայ | 3 | |
| 5բ | $\underline{Sj}(aS)$ | ոսկեզօծ | 1 | |
| 5գ | $\underline{Sj}[a(Sa)]$ | բազմապարունակ | 1 | |
| Ընդամենը | | | 7 | 0,1 |



| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| 6 | $Sj(Sa)$ | նաւալուղակ | 221 | |
| 6ա | $\underline{Sj}(Sa)$ | բազմատեսակ | 68 | |
| 6բ | $Sj(\underline{S}a)$ | աստուածահրաւիրակ | 44 | |
| 6գ | $\underline{Sj}(\underline{S}a)$ | երկնահրաւիրակ | 26 | |
| 6դ | $S^fj(Sa)$ | մեղսաքաւիչ | 8 | |
| 6ե | $Sj(S^fa)$ | դիւրագատելի | 24 | |
| 6զ | $\underline{S}j(S^fa)$ | բազմաստացուած | 3 | |
| 6է | $Sj(\underline{S}^fa)$ | դժուարամուծալի | 10 | |
| 6ը | $S^fj(S^fa)$ | իւրակայան | 1 | |
| 6թ | $\underline{Sj}(Sa)$ | ոսկետեսիլ | 15 | |
| 6ժ | $\underline{Sj}(\underline{S}a)$ | հոգեծնունդ | 3 | |
| 6ժա | $\underline{Sj}(\underline{S}^fa)$ | բարերրող | 1 | |
| 6ժբ | $Sj[(S\underline{a})a]$ | աստուածայայտնութիւն | 1 | |
| Ընդամենը | | | 425 | 5,8 |
| 7 | $(aS)j(Sa)$ | անարգամեծար | 12 | |
| 7ա | $(a\underline{S})j(Sa)$ | անօրինախորհուրդ | 1 | |
| 7բ | $(aS)j(\underline{S}a)$ | անհարթագիտակ | 3 | |
| 7գ | $(Sa)j(Sa)$ | նորոգատեսիլ | 10 | |
| 7դ | $(\underline{S}a)j(Sa)$ | բուրաստանատեսակ | 1 | |
| 7ե | $(S\underline{a})j(Sa)$ | վայելչատեսակ | 13 | |
| 7զ | $(\underline{S}\underline{a})j(Sa)$ | միջնածիրանի | 4 | |
| 7է | $(Sa)j(\underline{S}a)$ | վարձկանագրիչ | 2 | |
| 7ը | $(\underline{S}a)j(\underline{S}a)$ | բնակասնունդ | 2 | |
| 7թ | $(S\underline{a})j(\underline{S}a)$ | գեղեցկադիմակ | 7 | |
| 7ժ | $(S\underline{a})j(S^fa)$ | գեղեցկատարփելի | 1 | |
| 7ժա | $(S\underline{a})j(\underline{S}^fa)$ | վերնատուող | 1 | |
| 7ժբ | $[a(aS)]j(Sa)$ | յանկարծացասումն | 1 | |
| 7ժգ | $[a(S\underline{a})]j(Sa)$ | անասնաբարոյ | 2 | |
| Ընդամենը | | | 60 | 0.8 |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| 8 | SjS | գունդագունդ | 17 | |
| 8ա | SjS | դիզադէզ | 4 | |
| 8բ | SjS | բարձրաբերձ | 13 | |
| Ընդամենը | | | 34 | 0,5 |
| 9 | ScS | այրեձի | 21 | |
| 9ա | SᶠcSᶠ | դիրեկտար | 10 | |
| 9բ | ScS | այլեայլ | 9 | |
| 9գ | SᶠcSᶠ | ելեել | 2 | |
| 9դ | S-c-S | դարիւ և դարիւ | 4 | |
| Ընդամենը | | | 46 | 0,6 |
| 10 | SpS | այդիչափ | 17 | |
| 10ա | SpS | գլխիբաց | 3 | |
| 10բ | SpSᶠ | գերիվերոյ | 1 | |
| 10գ | SpS | բացիբաց | 11 | |
| 10դ | SᶠpSᶠ | տրիտուր | 1 | |
| 10ե | SpS | խառնիխուռն | 1 | |
| 10զ | SᶠpS | բացէիբաց | 2 | |
| 10է | (Sa) pS | բացուստիբաց | 1 | |
| 10ը | SpSᶠ | կարճի.կարճոյ | 7 | |
| 1°թ | Sᶠ-p-Sᶠ | կաղս ի կաղս | 2 | |
| Ընդամենը | | | 46 | 0,6 |



| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| 11 | (SS) jS | այսօրածին | 23 | |
| 11ա | (SS) jS | չրհեղեղակուլ | 1 | |
| 11բ | (SSᶠ) jS | եօթնանակին | 1 | |
| 11գ | (SSᶠ) jSᶠ | ծովեղերակալ | 1 | |
| 11դ | (SS) jS | այլայլախառն | 7 | |
| 11ե | (SS) cS | դիարդուպէտ | 1 | |
| Ընդամենը | | | 34 | 0,5 |
| 12 | (SjS) jS | ամանորաբեր | 6 | |
| 12ա | (SjS) jSᶠ | ձգնափորձալից | 1 | |
| 12բ | (SjS) jS | միագլխապետ | 1 | |
| 12գ | (SjS) jSᶠ | լծակցատուր | 1 | |
| 12դ | (SᶠS) jS | առնապատկերագործ | 1 | |
| 12ե | (SjS) jS | ոսկեհուռազարդ | 1 | |
| 12զ | (SjS) jS | զանազանակից | 2 | |
| Ընդամենը | | | 13 | 0,2 |
| 13 | Sj (SjS) | դժուարափատաբան | 3 | |
| 13ա | Sj (SjS) | բազմապտղաբեր | 1 | |
| 13բ | Sj (SjS) | ամենաբարեպաշտ | 1 | |
| 13գ | Sj (SjSᶠ) | արծաթափոխատու | 1 | |
| 13դ | Sj (SS) | աշտարակաբարկութ | 2 | |
| 13ե | Sj (SS) | աստուածաբարբառ | 13 | |
| 13զ | Sj (SS) | բազմաբարբառ | 9 | |
| 13է | Sᶠj (SS) | տեառնաբարբառ | 1 | |
| Ընդամենը | | | 31 | 0,4 |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| 14 | Sj [(SjS)ᶠ a] | դժուարափաստարանելի | 1 | |
| 14ա | Sj [(SjS) a] | ամենակերակրիչ | 1 | |
| 14բ | Sj [(Sa) jS] | մեծասքանչելաշուք | 1 | |
| 14գ | Sj [(SS) a] | մերկավերարկու | 2 | |
| 14դ | Sj (SSa) | ամենածաղրանելի | 2 | |
| 14ե | Sj [(SS) a] | ամենաշարշարող | 1 | |
| 14զ | Sj [(SS) a] | դիւրասաստանելի | 1 | |
| 14է | Sj [(Sa) Sᶠ] | ինքնագեղեցկարար | 1 | |
| 14ը | [(Sa) jS] jS | իմաստասիրակից | 1 | |
| 14թ | [(Sᶠa) jS] jS | արարչագործակից | 1 | |
| 14ժ | (aS) j (SS) | ընդվայրակոչկոծ | 1 | |
| 14ժա | (SS) j (Sa) | արեգակնածագութիւն | 1 | |
| Ընդամենը | | | 14 | 0,2 |
| 15 | [(SS) S] jS | թափանցանցալոյս | 1 | |
| Ընդամենը | | | 1 | |
| 11 | | | 1133 | 15,4 |
| 16 | SS | արեգաթաղ | 456 | |
| 16ա | SS | բազմամբոխ | 119 | |
| 16բ | SᶠS | աղբերակն | 32 | |
| 16գ | SSᶠ | աղքատատեաց | 138 | |
| 16դ | SSᶠ | զուգընթաց | 48 | |
| 16ե | SSᶠ | բարեսաց | 2 | |
| 16զ | SᶠSᶠ | օրէնսուսոյց | 11 | |
| Ընդամենը | | | 8С6 | 11,0 |



| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| 17ա | (aS) S | տուաւելս | 14 | |
| 17բ | (aS) Sᶠ | յառաջասաց | 4 | |
| 17գ | (aSᶠ) S | անկողնարկ | 1 | |
| 17դ | (ajS) S | տարապարտաբօտ | 1 | |
| 17ե | (Sa) S | թագաւորազգ | 10 | |
| 17զ | (Sa) S | ամուսնութիւնընկալ | 2 | |
| 17է | (Sᶠa) S | ականակեռ | 1 | |
| 17ը | (Sa) S | գեղեցկաղեղն | 10 | |
| 17թ | (Sa) S | յուսնակն | 5 | |
| 17ժ | (Sa) Sᶠ | բախողարար | 9 | |
| 17ժա | (Sa) Sᶠ | փրոցուտոյց | 2 | |
| 17ժբ | (Sa) Sᶠ | գեղեցկարար | 5 | |
| 17ժգ | (Sa) Sᶠ | սնոտիմաց | 1 | |
| 17ժդ | [Sa) a]Sᶠ | իմաստնարար | 1 | |
| Ընդամենը | | | 66 | 0,9 |
| 18ա | S (aS) | ամենամրիծ | 7 | |
| 18բ | S (aS) | լծընդդէմ | 1 | |
| 18գ | S (aS) | տեառնընդառաջ | 1 | |
| 18դ | S (aSᶠ) | գետնանկողին | 2 | |
| 18ե | S (Sa) | բայածական | 77 | |
| 18զ | S (Sa) | բազմուսումն | 6 | |
| 18է | S (Sa) | այլօրինակ | 15 | |
| 18ը | S (Sa) | հրձգումն | 3 | |
| 18թ | Sᶠ (Sa) | դարձառած | 5 | |
| 18ժ | S (Sᶠa) | մեծարարած | 13 | |
| 18ժա | S (Sᶠa) | դժուարարգելլի | 1 | |
| 18ժբ | Sᶠ (Sᶠa) | օրէնսդրիչ | 1 | |
| 18ժգ | S[ (Sa) a] | ամենիմաստուն | 4 | |
| 18ժդ | S [(aS)ᶠ a] | քաջընդունելի | 3 | |
| Ընդամենը | | | 139 | 1,9 |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| 19ա | (aS) (Sa) | ոգեխորհուրդ | 7 | |
| 19բ | (a$S^f$) (Sa) | յետանեբեակի | 1 | |
| 19գ | (aS) ($S^f$a) | յառաջատացումն | 2 | |
| 19դ | (a$S^f$) (aS) | չեզոք | 1 | |
| 19ե | (Sa) (Sa) | թագաւորազգի | 3 | |
| 19զ | (Sa) (Sa) | շնակաքի | 1 | |
| 19է | $(Sa)^f$ (Sa) | առաջիաւասուն | 1 | |
| 19ը | (Sa) ($S^f$a) | արժանաւատալի | 2 | |
| Ընդամենը | | | 18 | 0,2 |
| 20 | SS | այլայլ | 8 | |
| 20ա | SS | բարբառ | 8 | |
| 20բ | $S^fS^f$ | բամբաս | 1 | |
| Ընդամենը | | | 17 | 0,2 |
| 21 | S—S | ամուր ամուր | 38 | |
| 21ա | $S^f$—$S^f$ | ամոյ ամոյ | 16 | |
| 21բ | Sa—Sa | գունակ գունակ | 12 | |
| 21գ | (Sa)a—(Sa)a | գունակս գունակս | 1 | |
| Ընդամենը | | | 67 | 0,9 |
| 22ա | S (SS) | բացօթեաց | 2 | |
| 22բ | $S^f$ (SS) | տանտիկին | 1 | |
| 22գ | (SS) S | թէպէտև | 3 | |
| 22դ | (SS) $S^f$ | փաղփաղընկեց | 1 | |
| 22ե | ($S^fS^f$) S | հօրեղբօրորդի | 1 | |
| Ընդամենը | | | 8 | 0,1 |
| 23ա | (SjS) S | միաբանամբոխ | 2 | |
| 23բ | (SjS) $S^f$ | մեծամեծարար | 1 | |
| 23գ | S (SjS) | ամենախտալից | 3 | |
| 23դ | S (SjS) | դիւրարհամարհ | 2 | |
| 23ե | S (SjS) | հարճորդեգիր | 1 | |
| Ընդամենը | | | 9 | 0,1 |
| 24ա | S[(Sa) jS] | մերկիմաստասէր | 1 | |
| 24բ | (SS) (Sa) | վայրագիմաստ | 1 | |
| 24գ | (Sa) (Sj$S^f$) | յատկանձնակայ | 1 | |
| Ընդամենը | | | 3 | — |
| Ընդհանուր թիվը | | | 7346 | 100 |

## ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ԽՈՍՔԻՄԱՍԱՅԻՆ (ԿԱՐԳԱՅԻՆ) ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Բառակազմական հիմքերի քննության ժամանակ խոսվեց սկզբնահիմքերի խոսքիմասային պատկանելության մասին։ Այստեղ այդ հարցին կանդրադառնանք ավելի մանրամասն, ներկայացնելով բառաբարդման մեջ տարբեր խոսքի մասերից առնված սկզբնահիմքերի հնարավոր զուգորդությունները և այդ զուգորդություններից ստացված արդյունքը։ Ածանցավոր կազմություններում հիմքերի խոսքիմասային պատկանելության և տարբեր ածանցների հետ սկզբնահիմքերի զուգորդելիության մասին կխոսվի ածանցման քննության ժամանակ։ Բարդությունների մեջ հանդես եկող ածանցավոր բաղադրող հիմքերը այստեղ առանձին քննության չենք առնի, քանի որ նրանց խոսքիմասային պատկանելությունը մեծ չափով պայմանավորված է նրանց կազմի մեջ առկա ածանցի բնույթով (գոյականակերտ, ածականակերտ, մակբայակերտ և այլ ածանցներ)։ Այդ իսկ պատճառով բարդությունների բաղադրիչների կարգային բնութագիրը տալիս հենվում ենք միայն առաջնային հիմքեր ունեցող կաղապարների վրա։ Դրանք են՝ SjS և SS հիմնակաղապարները և նրանց

*այն ենթակաղապարները, որոնցում ունենք միայն արմատի հնչյունափոխություն կամ քերականական ձևավորում, բայց ոչ ածանցում (այն է՝* SjS *հիմնակաղապարի հետ միասին վերցվում են միայն* $\underline{S}jS$, $S^fjS$, $SjS^f$, $\underline{S}jS^f$, $S^fjS^f$, SjS, $SjS^f$ *ենթակաղապարները, իսկ* SS *հիմնակաղապարի հետ՝ միայն* $\underline{S}S$, $S^fS$, $SS^f$, $\underline{S}S^f$, $S^fS^f$ *ենթակաղապարները):*

*Բարդությունների բաղադրիչների (տվյալ դեպքում սկզբնահիմքերի) կարգային պատկանելության որոշումը դժվարություններ չի հարուցում այն դեպքերում, երբ բաղադրիչները վկայված են նաև անկախ արմատների տեսքով, հատկապես անվանական խոսքի մասերի դեպքում, երբ չկան փոխանցումներ խոսքի մասերի միջև և անվանաբայական արմատական համանունություն, օրինակ՝ ազգատոհմ—Գ+Գ,* ձեռնունայն—*Գ+Ա,* ամրապարիսպ—*Ա+Գ,* եռականգուն—*Թ+Գ,* եռամեծ —*Թ+Ա,* մերակերպ—*Դ+Գ,* ինքնաբարի—*Դ+Ա և այլն: Իրադրությունը պարզ է նաև բայական (կապված) արմատների դեպքում, եթե ա) դրանք հանդիպում են միայն բայերի մեջ՝* աղիտաբեր *(բերեմ),* աշխարհալած *(հալածեմ),* եղբայրասպան *(սպանանեմ),* հիւրընկալ *(ընկալեմ),* տիեզերատարած *(տարածանեմ) և ծագումով բուն բայական են և բ) ունեն քերականական ձևավորում, այսինքն՝ նրանց ձևաբանական հատկանիշները «մատնում են» նրանց խոսքիմասային պատկանելությունը՝* աղքատասնոյց, մտակորոյս *(պատճառականի ձև),* ուղեգնաց, աղմկարար *(կատարյալի ձև),* անուանագիր, քրիստոսատուր *(հրամայականի ձև),* բարձրաթռիչ, երկնաչու *(ներկայի հիմք) և այլն:*

*Սակայն շատ դեպքերում բարդությունների բաղադրիչների կարգային պատկանելության որոշումը կապվում է դժվարությունների հետ, որոնց պատճառները հիմնականում հանգում են հետևյալին.*

*1. Արմատներն առանձին վկայված չեն. այսպես՝* մոլ *արմատը (*դիւամոլ*) պահպանված է* մոլի *ածականի կամ* մոլիմ *բայի մեջ,* կուր *արմատը միայն բարդությունների մեջ կա (*կերակուր, անձրևակուր *և այլն, նաև* ի կուր արկանել *հարադրության մեջ), ընդ որում նույնիսկ սերող բայը չի պահպանվել (ինչպես կա* կուլ՝ կլանեմ-*ի առկայությամբ):*

*2. Թեև առանձին արմատը վկայված է, սակայն կաղապարում ձեռք է բերել բառակազմական կամ խոսքիմասային այլ արժեք. օր.՝* բերանալիր *բառի երկրորդ բաղադրիչը՝* լիր, *առանձին գոյական է, բայց բաղադրության մեջ թվում է ածական կամ բայարմատ (*լրանամ *կամ նույնիսկ չվկայված* *լրեմ *բայի արմատը):*

*3. Ձևով համընկնում են բայական մաքուր արմատը և գոյականը*[68]*, ընդ որում այստեղ հնարավոր է երկու դեպք. ա) երբ թե՛ բայարմատը,*



*թե՛ գոյականը հնչյունապես նույնն են, ինչպես՝* գործ-գործեմ-ախտագործ, մարտ-մարտնչիմ-աղանդամարտ, մատն-մատնեմ-անձնամատն, պաճոյճ-պաճուճեմ-հարկապաճոյճ, հարց-հարցանեմ-հաւահարց *և այլն և բ) երբ գոյականը լիաձայն է, իսկ բայարմատը անհնչյունափոխ տարբերակով հանդես չի գալիս բայական հարացույցի որևէ անդամի մեջ, այսպես՝* գէտ, գիր, դէտ, թիւ, ծին, մուտ, շէն, պատում, վէպ, սէր *և բազմաթիվ այլ արմատներ, որպես անկախ գոյականներ, բնականաբար, հանդես են գալիս լիաձայն տարբերակներով, մինչդեռ բայերի մեջ հանդիպում են միայն* գտ *(գտանեմ),* գր *(գրեմ),* դիտ *(դիտեմ),* թու *(թուեմ),* ծն *(ծնանեմ),* մտ *(մտանեմ),* շին *(շինեմ),* պատմ *(պատմեմ),* վիպ *(վիպեմ),* սիր *(սիրեմ) հնչյունափոխված տարբերակներով, ընդ որում լիաձայն տարբերակը հարացույցի ոչ մի անդամի մեջ չի վերականգնվում: Մի շարք հնչյունափոխված բայարմատներ ընդհանրապես չունեն իրենց համապատասխան լիաձայն անկախ գոյականները և անհնչյունափոխ ձևով հանդես են գալիս միայն որպես բարդությունների երկրորդ բաղադրիչ. ինչպես՝* բազմացունդ *(*ցնդիմ*),* ամպաշուփ *(*շփեմ*),* անձնապուրծ *(*պրծանիմ*), իսկ որոշ դեպքերում էլ լիաձայն և հնչյունափոխված տարբերակների միջև առկա են ոչ սովորական հնչյունական համապատասխանություններ՝* գիւտ-գիտ-գտ՝ երախտագիւտ-գտանեմ-եգիտ:

*4) Սերող հիմքը (հետևաբար բաղադրիչի խոսքիմասային պատկանելությունը) պարզելու համար պետք է ենթադրել բառակազմական գաղտնի քայլ: Այսպես,* ընթացակից *բառի մեջ առաջին բաղադրիչը իր ձևաքերականական ձևավորումով բայական հիմք է, սակայն տվյալ բաղադրության համար սերող հիմք է ծառայել* ընթացք *գոյականը՝* ք *ածանցի անկումով՝* ընթաց(ք)+ա+կից: *Այս ենթադրությունը կարող է հաստատվել և այն փաստով, որ բայական արմատները որպես բարդության առաջին բաղադրիչ խիստ հազվադեպ են հանդիպում: Ավելի տարածված է հակառակ երևույթը՝ երբ բարդության բաղադրիչը բացահայտորեն անվանական ծագում ունի, բայց տվյալ բաղադրության համար անմիջական սերող հիմք է ծառայել անվանակազմ բայը՝ բայական ածանցի անկումով. այսպես՝* աշխարհաժողով, ամբոխաժողով, հարկաժողով, աշխարհագումար, աշխարհագունդ, աշխարհախումբ, աշխարհակոյտ, աստուածատունկ, աստուածաքարոզ, դիակողոպուտ *և այլ բառերի մեջ երկրորդ բաղադրիչները ոչ թե անվանական են, այլ բայական, քանի որ անմիջաբար սերում են* ժողովեմ, գումարեմ, գնդեմ, խմբեմ, կուտեմ, տնկեմ, քարոզեմ, կողոպտեմ *բայերից և ոչ թե վերջիններիս համար բաղադրող հիմք հանդիսացած համապատասխան գոյականներից: Այս հանգամանքի ան-*

տեսումը կարող է հանգեցնել գոյականական և բայական սերող հիմքերի շփոթմանը։ Նույնպիսի շփոթ կարող է առաջանալ նաև բայական և ածականական սերող հիմքերի միջև։ Այսպես, առաջին հայացքից դժվար է որոշել, **առագաստափակ, առասպելապատիր, բեռնապինդ, բեռածածուկ, բոցախառն, աչաբաց, աթոռակից** և այլ բառերում գործ ունենք **փակ, պատիր, պինդ, ծածուկ, խառն, բաց, կից** ածականների՞, թե՞ **փակեմ, պատրեմ, պնդեմ, ծածկեմ, խառնեմ, բանամ, կցեմ** բայերի արմատների կամ հարացուցային ձևերի հետ։ Նման դեպքերում յուրաքանչյուր կոնկրետ բառում պետք է հաշվի առնել բաղադրիչների շարահյուսական հարաբերությունը և բառերի բառակազմական իմաստները. օր.՝ **երկաթապինդ** կարող է մեկնաբանվել ինչպես «երկաթով պնդված» այնպես էլ «երկաթի պես պինդ», **բերանաբաց**՝ «բաց բերանով» կամ «բերանը բացած», **բոցախառն**՝ «բոցի հետ խառն» կամ «բոցով խառնված» և այլն։ Այսպիսի դեպքերում առաջնորդվում ենք բառարաններում արձանագրված իմաստներով կամ տեքստային օրինակներով։

5) Բացի վերը նշված դեպքերից առկա են նաև խոսքի մասերի դասակարգման, ավելի ճիշտ բառերի խոսքիմասային պատկանելության որոշման ընդհանուր կարգի դժվարություններ, կապված հայերենում գոյականի-ածականի, ածականի-մակբայի ձևաբանական չտարբերակվածության, խոսքի մասերի միջև փոխանցումների, ածականների և այլ խոսքի մասերի գոյականացման և այլ երևույթների հետ։ Այսպես, Ա+Բ կաղապար հնարավոր է միայն այն դեպքերում, երբ մի կողմից տեղի ունի ածականի և մակբայի նույնացում, այսինքն՝ ածականի մակբայական կիրառություն (կամ ածականը միաժամանակ մակբայ է)՝ **քաջասուն, քաջավար, քաջատես** (մնացած դեպքերում ունենք Ա+Գ, Ա+Ա՝ **քաջաձև, քաջայանդուգն**), մյուս կողմից՝ ածականի և գոյականի նույնացում, այսինքն՝ ածականի գոյականական կիրառություն՝ **դառնաբեր, քաղցրավաճառ, քաղցրատուր, օտարասէր** և այլն։ Ըստ այդմ էլ որոշվում են բաղադրիչների բառակազմական իմաստները և նրանց միջև եղած հարաբերությունները՝ 1) բուն մակբայ+բայ՝ գործողության հատկանիշ+գործողություն, 2) մակբայական կիրառությամբ ածական+բայ՝ դարձյալ գործողության հատկանիշ+գործողություն, 3) գոյականացված ածական+բայ՝ գործողության առարկա (մեծ մասամբ ուղիղ խնդիր)+գործողություն։ Ամբողջ բաղադրությունը 1) և 2) դեպքերում լինում է ածական, 3) դեպքում կարող է լինել և՛ ածական, և՛ գոյական, բառակազմական իմաստն է հիմնականում ենթակայական դերբայի իմաստը՝ **հիւանդատես** «հիւանդ տեսնող, նայող» (ՆՀԲ)։



Այսպիսով, նշված դեպքերում բարդությունների բաղադրիչների խոսքիմասային պատկանելությունը որոշելիս առաջնորդվում ենք հետևյալ սկզբունքներով.

1) Ոչ թե բաղադրիչ սկզբնահիմքերի ստուգաբանական-ծագումնաբանական բնույթով (բայական կամ անվանական), այլ անմիջական սերող հիմքերի կարգային պատկանելությամբ։

2) Սկզբնահիմքերի շարահյուսական զուգորդելիությամբ։ Քանի որ բայի հետ զուգորդվում են հիմնականում գոյականն ու մակբայը բայց ոչ ածականը, հետևաբար ընդունվում են Գ+Բ, Մ+Բ կաղապարները, անկախ այն բանից, որ առանձին վերցրած առաջին բաղադրիչը կարող է ածական լինել։ Այսինքն՝ գոյականաբար առնված ածականը համասարեցվում է գոյականին, իսկ մակբայական կիրառությամբ ածականը՝ մակբային։

3) Բառակազմական իմաստով և բաղադրիչների միջև եղած իմաստաքերականական հարաբերություններով։ Այդ տեղի ունի գոյական-բայ, ածական-բայ երկընտրանքի դեպքում և, հատկապես, ածականի գոյականական թե մակբայական կիրառությունը պարզելիս. այսպես՝ **սամուտ** «ամսվա մուտքը, գլուխը, սկիզբը» բառում երկրորդ բաղադրիչը գոյական է՝ բաղադրիչների միջև եղած հատկացուցիչ-հատկացյալ հարաբերության և նշված բառակազմական իմաստի պատճառով, իսկ **թփամուտ** բառում «թփերի մեջ մտնող, մտած» իմաստի և բաղադրիչների միջև պարագայական հարաբերության առկայության հետևանքով մուտ-ը բայարմատ է։ Նույնպես և՝ եթե բաղադրիչների միջև առկա են պարագայական հարաբերություններ, գործ ունենք մակբայացած ածականի, իսկ խնդրային հարաբերությունների դեպքում՝ գոյականացած ածականի հետ, օր.՝ **նորասէր** «նորություն սիրող» բառի մեջ առաջին բաղադրիչը դիտվում է որպես գոյական, իսկ **նորաշէն** «նոր շինած» բառում՝ մակբայ։

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է SjS և SS հիմնակաղապարներում սկզբնահիմքերի խոսքիմասային պատկանելության պատկերը թվային արժեքներով և տոկոսային հարաբերությամբ։

Աղյուսակ 2

| № | Սկզբնահիմքերի խոսքիմասային պատկանելություն | Կաղապարներ | | Օրինակներ | Քանակը | Տոկոսը |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | | 4 | 5 | 6 |
| 1 | Գ + Գ | 1 | $SjS$ | ազգատոհմ | 542 | |
| | | 1ա | $\underline{S}jS$ | ամսագլուխ | 195 | |
| | | 1բ | $S^fjS$ | աստեղաբանակ | 22 | |
| | | 1գ | $\underline{S}jS^f$ | մեհենագիրք | 5 | |
| | | 1դ | $\underline{S}jS$ | խեցեմորթ | 30 | |
| | | 1է | $\underline{S}jS^f$ | ոսկեհանք | 2 | |
| | | 16 | $SS$ | ակնաղբիւր | 101 | |
| | | 16ա | $\underline{S}S$ | աղախնորդի | 47 | |
| | | 16բ | $S^fS$ | աղբերակն | 14 | |
| | | 16գ | $SS^f$ | պարթեւազունք | 11 | |
| | | 16դ | $\underline{S}S^f$ | լուսերամք | 2 | |
| | Ընդամենը | | | | 971 | 17,1 |
| 2 | Գ + Ա | 1 | $SjS$ | գեղապատշաճ | 217 | |
| | | 1ա | $\underline{S}jS$ | անդնդախոր | 82 | |
| | | 1բ | $S^fjS$ | տեառնանման | 6 | |
| | | 1դ | $\underline{S}jS$ | հոգեխառն | 6 | |
| | | 16 | $SS$ | ձեռնունայն | 12 | |
| | | 16ա | $\underline{S}S$ | տնկից | 2 | |
| | Ընդամենը | | | | 325 | 5,7 |
| 3 | Գ + Բ | 1 | $SjS$ | ամպավար | 1037 | |
| | | 1ա | $\underline{S}jS$ | աղխատաբեր | 447 | |
| | | 1բ | $S^fjS$ | անուանակիր | 34 | |
| | | 1գ | $SjS^f$ | աղքատաանոյց | 234 | |
| | | 1գ | $\underline{S}jS^f$ | մտակորոյս | 103 | |
| | | 1ե | $S^fjS^f$ | անուանագիր | 10 | |
| | | 1դ | $\underline{S}jS$ | ոսկեգործ | 68 | |
| | | 1է | $\underline{S}jS^f$ | ուղեգնաց | 13 | |



| 1 | 2 | 3 | | 4 | 5 | 6 |
|---|---|---|---|---|---|---|
| 3 | Գ + Բ | 16 | $SS$ | հիւրընկալ | 94 | |
| | | 16ա | $\underline{S}S$ | ձկնորս | 37 | |
| | | 16բ | $S^fS$ | անուանարկ | 6 | |
| | | 16գ | $SS^f$ | լոյսիչոյց | 86 | |
| | | 16դ | $\underline{S}S^f$ | աղմկարար | 34 | |
| | | 16ե | $\underline{S}S^f$ | բարերար | 2 | |
| | | 16է | $S^fS^f$ | օրէնսուսոյց | 4 | |
| | Ընդամենը | | | | 2209 | 39,0 |
| 4 | Գ + Մ | 16 | $SS$ | ակնյանդիման | 2 | |
| | Ընդամենը | | | | 2 | — |
| 5 | Գ + Չ | 16 | $SS$ | մեղեդուկ | 1 | |
| | Ընդամենը | | | | 1 | — |
| 6 | Ա + Գ | 1 | $SjS$ | թանձրաթաղանթ | 491 | |
| | | 1ա | $\underline{S}jS$ | ամրապարիսպ | 157 | |
| | | 1գ | $SjS^f$ | սպիտակավարսք | 3 | |
| | | 1գ | $\underline{S}jS^f$ | բազմամարդիկ | 4 | |
| | | 1դ | $\underline{S}jS$ | բարեբախտ | 33 | |
| | | 1է | $\underline{S}jS^f$ | բարեբարք | 3 | |
| | | 16 | $SS$ | քաջանուն | 92 | |
| | | 16ա | $\underline{S}S$ | տխրերանգ | 27 | |
| | | 16գ | $SS^f$ | հինաւուրց | 3 | |
| | | 16դ | $\underline{S}S^f$ | բազմատեղք | 1 | |
| | Ընդամենը | | | | 814 | 14,4 |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
|---|---|---|---|---|---|
| 7 | Ա + Ա | 1 SjS | քաջալալ | 65 | |
| | | 1ա SjS | մաքրապայծառ | 25 | |
| | | 1գ SjS | բարեմաքուր | 3 | |
| | | 16 SS | քաջարի | 7 | |
| | | 16ա SS | բազմանձուկ | 2 | |
| Ընդամենը | | | | 102 | 1,8 |
| 8 | Ա + Թ | 1ա SjS | բազմարփիւր | 1 | |
| Ընդամենը | | | | 1 | — |
| 9 | Ա + Մ | 1 SjS | երկարայալէտ | 1 | |
| Ընդամենը | | | | 1 | — |
| 10 | Թ + Գ | 1 SjS | եռականգուն | 83 | |
| | | 1ա SjS | յիսնապետ | 1 | |
| | | 1գ $SjS^t$ | միամօր | 2 | |
| | | 1գ $SjS^t$ | հնգաքաղաքք | 1 | |
| | | 16 SS | տասնաղի | 32 | |
| | | 16ա SS | քառեամ | 1 | |
| | | 16բ $S^tS$ | չորսկոյս | 4 | |
| | | 16է $S^tS^t$ | չորքծիք | 1 | |
| Ընդամենը | | | | 125 | 2,2 |
| 11 | Թ + Ա | 1 SjS | եռամեծ | 12 | |
| | | 16 SS | երեքպայծառ | 1 | |
| Ընդամենը | | | | 13 | 0,2 |
| 12 | Թ + Բ | 1 SjS | եօթնածին | 19 | |
| | | 1գ $SjS^t$ | քառայարոյց | 2 | |
| | | 16 SS | երկխօս | 4 | |
| | | 16գ $SS^t$ | միաբար | 1 | |
| Ընդամենը | | | | 26 | 0,4 |
| 13 | Թ + Թ | 1է $SjS^t$ | մետասան | 1 | |
| | | 16 SS | երեքհարիւր | 8 | |
| | | 16գ $SS^t$ | երկոտասան | 3 | |
| | | 16ե $S^tS^t$ | երեքտասան | 1 | |
| Ընդամենը | | | | 13 | 0,2 |
| 14 | Թ + Մ | 16 SS | միանգամ | 3 | |
| Ընդամենը | | | | 3 | — |
| 15 | Գ + Գ | 1 SjS | նոյնաձև | 46 | |
| | | 1բ $S^tjS$ | մեօքակերպ | 3 | |
| | | 1գ $SjS^t$ | ամենադից | 1 | |
| | | 16 SS | այլազանդ | 33 | |
| | | 16բ $S^tS$ | ումպէտ | 1 | |
| | | 16է $S^tS^t$ | յայսմհետէ | 2 | |
| Ընդամենը | | | | 86 | 1,5 |
| 16 | Գ + Ա | 1 SjS | ինքնաբարի | 37 | |
| | | 1բ $S^tjS$ | իւրակից | 2 | |
| | | 16 SS | ամենառատ | 2 | |
| Ընդամենը | | | | 41 | 0,7 |





10—442

| 1 | 2 | 3 | | 4 | 5 | 6 |
|---|---|---|---|---|---|---|
| 17 | Գ + Բ | 1 | SjS | բոլորակատար | 75 | |
| | | 1բ | $S^{f}jS$ | միմեանցասէր | 11 | |
| | | 1գ | $SjS^{f}$ | այլազոյ | 8 | |
| | | 1ե | $S^{f}jS^{f}$ | մերազգեաց | 2 | |
| | | 16 | SS | ամենողորմ | 4 | |
| | | 16գ | $SS^{f}$ | ինքնիմաց | 6 | |
| Ընդամենը | | | | | 106 | 1,9 |
| 18 | Գ + Գ | 16 | SS | այսինքն | 3 | |
| Ընդամենը | | | | | 3 | — |
| 19 | Գ + Մ | 16 | SS | միւսանգամ | 1 | |
| Ընդամենը | | | | | 1 | — |
| 20 | Բ + Գ | 1 | SjS | խեղդամահ | 11 | |
| | | 1ա | $\underline{S}jS$ | փութասիրտ | 3 | |
| | | 1բ | $S^{f}jS$ | կացածի | 2 | |
| | | 1գ | $\underline{S}jS^{f}$ | մրցամարտք | 1 | |
| | | 16 | SS | բերանուն | 2 | |
| | | 16ա | $\underline{S}S$ | դիպաղեղն | 1 | |
| | | 16բ | $S^{f}S$ | լալեող | 2 | |
| | | 16գ | $\underline{S}S^{f}$ | չըմեղս | 1 | |
| Ընդամենը | | | | | 23 | 0,4 |
| 21 | Բ + Ա | 1 | SjS | շարժակից | 6 | |
| | | 1բ | SiS | ընթացակից | 2 | |
| | | 16 | SS | արբշիռ | 1 | |
| Ընդամենը | | | | | 9 | 0,1 |



| 1 | 2 | 3 | | 4 | 5 | 6 |
|---|---|---|---|---|---|---|
| 22 | Բ + Բ | 1 | SjS | լիզաչինչ | 14 | |
| | | 1ա | $\underline{S}jS$ | պատմագով | 8 | |
| | | 1բ | $S^{f}jS$ | ծննլասէր | 1 | |
| | | 1ե | $S^{f}jS^{f}$ | նաւելաստաց | 1 | |
| | | 1է | $\underline{S}jS^{f}$ | խարբերայ | 1 | |
| | | 16 | SS | թաւալգլոր | 2 | |
| | | 16գ | $S^{f}S^{f}$ | դարձընթաց | 2 | |
| Ընդամենը | | | | | 29 | 0,5 |
| 23 | Մ + Գ | 1 | SjS | յաւէտահրաշ | 22 | |
| | | 1բ | $S^{f}jS$ | յետսամիտ | 1 | |
| | | 16 | SS | արտուղի | 4 | |
| Ընդամենը | | | | | 27 | 0,5 |
| 24 | Մ + Ա | 1 | SjS | համապազազգոյշ | 6 | |
| | | 1ա | $\underline{S}jS$ | մշտապայծառ | 1 | |
| Ընդամենը | | | | | 7 | 0,1 |
| 25 | Մ + Բ | 1 | SjS | արագաշարժ | 394 | |
| | | 1ա | $\underline{S}jS$ | մշտափթիթ | 114 | |
| | | 1գ | $SjS^{f}$ | վերագնաց | 105 | |
| | | 1դ | $\underline{S}jS^{f}$ | մշտագոյ | 14 | |
| | | 1ե | $S^{f}jS^{f}$ | ներսագոյ | 1 | |
| | | 1դ | $\underline{S}jS$ | կարեսէր | 2 | |
| | | 1է | $\underline{S}jS^{f}$ | բարեկեաց | 3 | |
| | | 16 | SS | քաջընկալ | 33 | |
| | | 16ա | $\underline{S}S$ | խստամբեր | 2 | |
| | | 16գ | $SS^{f}$ | արագընթաց | 32 | |
| | | 16դ | $\underline{S}S^{f}$ | կանխասաց | 6 | |
| | | 16է | $S^{f}S^{f}$ | յառաջիկայ | 1 | |
| Ընդամենը | | | | | 707 | 12,5 |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
|---|---|---|---|---|---|
| 26 | Մ + Մ | *16* SS | *փոյթարագ* | 6 | |
| | *Ընդամենը* | | | 6 | 0,1 |
| 27 | Մ + Շ | *16* SS | *իբրև* | 3 | |
| | *Ընդամենը* | | | 3 | |
| 28 | Շ + Գ | *16* SS | *թէպէտ* | 1 | |
| | *Ընդամենը* | | | 1 | |
| 29 | Շ + Շ | *16* SS | *թէև* | 2 | |
| | *Ընդամենը* | | | 2 | |
| | *Ընդհանուր թիվը* | | | 5657 | |

*Եթե բարդության բաղադրիչների խոսքիմասային պատկանելության քանաձևերը ներկայացնենք ըստ նրանցով կազմված բառերի նվազող հաճախականության, կստացվի հետևյալ պատկերը.*

*1. Գ + Բ — 2209*
*2. Գ + Գ — 971*
*3. Ա + Գ — 814*
*4. Մ + Բ — 707*
*5. Գ + Ա — 325*
*6. Թ + Գ — 125*
*7. Դ + Բ — 106*
*8. Ա + Ա — 102*
*9. Դ + Գ — 86*
*10. Դ + Ա — 41*
*11. Բ + Բ — 29*
*12. Մ + Գ — 27*
*13. Թ + Բ — 26*
*14. Բ + Գ — 23*
*15. Թ + Ա — 13*
*16. Թ + Թ — 13*
*17. Բ + Ա — 9*
*18. Մ + Ա — 7*
*19. Մ + Մ — 6*
*20. Թ + Մ — 3*
*21. Դ + Դ — 3*
*22. Մ + Շ — 3*
*23. Գ + Մ — 2*
*24. Շ + Շ — 2*
*25. Դ + Մ — 1*
*26. Գ + Զ — 1*
*27. Ա + Թ — 1*
*28. Ա + Մ — 1*
*29. Շ + Գ — 1*



*Որպես բարդության առաջին բաղադրիչ առավելապես հանդես են գալիս անվանական խոսքի մասերը և մակբայը, իսկ երկրորդ բաղադրիչի դերում՝ բայը: Այդ նկատելի է ոչ միայն և ոչ այնքան դրանցով կազմված կաղապարների քանակից, որքան կաղապարների կոնկրետ իրացումներից:*

*Հետևյալ աղյուսակում արտացոլված է բարդությունների մեջ առաջին և երկրորդ բաղադրիչների գործառական բեռնվածությունը՝ ըստ տարբեր խոսքի մասերի պատկանող սկզբնահիմքերի:*

Աղյուսակ 3

| № | *Առաջին բաղադրիչ* | | | *Երկրորդ բաղադրիչ* | | |
|---|---|---|---|---|---|---|
| | *խոսքի մասեր* | *կաղապարների քանակը* | *բառերի քանակը* | *խոսքի մասեր* | *կաղապարների քանակը* | *բառերի քանակը* |
| 1 | Գ | 5 | 3507 | Բ | 5 | 3077 |
| 2 | Ա | 4 | 918 | Գ | 7 | 2047 |
| 3 | Մ | 5 | 750 | Ա | 6 | 497 |
| 4 | Դ | 5 | 238 | Մ | 3 | 13 |
| 5 | Թ | 5 | 180 | Թ | 2 | 14 |
| 6 | Բ | 3 | 61 | Շ | 2 | 5 |
| 7 | Շ | 2 | 3 | Դ | 1 | 3 |
| 8 | — | — | — | Զ | 1 | 1 |
| | | | 5657 | | | 5657 |

*Այսպիսով, բառակազմական ակտիվության տեսակետից խոսքի մասերը դասավորվում են հետևյալ հերթականությամբ.*

*Գ — 5554*
*Բ — 3138*
*Ա — 1415*
*Մ — 763*
*Դ — 241*
*Թ — 194*
*Շ — 8*
*Զ — 1*

*Ըստ այսմ բացարձակ գերակշռությունը պատկանում է գոյական + բայ կաղապարին:*

*Խոսքի մասերի ակտիվության այսպիսի բաշխումը կապված է ոչ միայն լեզվի բառային կազմի մեջ նրանց բացարձակ քանակի[69], այլև շարահյուսական կապակցելիության առանձնահատկությունների հետ:*

Հայտնի է, որ բարդության բաղադրիչների միջև կարելի է գտնել նախադասության անդամների միջև եղած գրեթե բոլոր շարահյուսական հարաբերությունները, բարդ բառերը միշտ էլ կարելի է փոխակերպել շարահյուսական կապակցությունների (անշուշտ, չանտեսելով նրանց իմաստների որոշ դարձվածքային բնույթը)՝ ընդ որում, հիմնականում մնալով բարդությունների բաղադրիչների բառային կազմի սահմաններում, դրանք ենթարկելով միայն համապատասխան քերականական ձևավորման, սակայն երբեմն անհրաժեշտ է լինում ներմուծել օժանդակ (սպասարկու) բառեր, կապեր, հարադիրներ և այլն: Բոլոր դեպքերում բարդությունները սեղմ ձևի մեջ «զորությամբ» (իմպլիցիտ կերպով) արտացոլում են շարահյուսական հարաբերությունները և համապատասխանաբար՝ խոսքի մասերի հնարավոր զուգորդությունները նախադասության կամ բառակապակցության մեջ: Բարդությունների և բառակապակցությունների կառուցվածքների համեմատության ուղղությամբ դեռևս հետազոտություններ չեն կատարվել[70], որոնք հնարավորություն կտային ստույգ կերպով պարզել բառակապակցությունների և բարդ բառերի բաղադրիչների խոսքիմասային կազմերի միջև եղած քանակային հարաբերությունները: Մի բան պարզ է սակայն, որ որքան ակտիվ է տվյալ խոսքի մասը մտնում բառակապակցության մեջ, նույնքան ակտիվ կերպով հանդես է գալիս որպես բարդ բառերի բաղադրիչ, ընդ որում շատ հաճախ պահպանվում է բառակապակցության հատուկ շարադասությունը: Հնարավոր է նաև, անշուշտ, որ բարդությունների բաղադրիչների շարադասությունն արտացոլի լեզվի ավելի վաղ շրջանի շարադասական առանձնահատկությունները, քանի որ, ինչպես արդեն առիթ է եղել նշելու, բառակազմական կաղապարներն ավելի պահպանողական են լեզվի մեջ, քան քերականական մի շարք կողմեր: Այսպես, Գ+Բ կաղապարում հիմնականում առկա է խնդրային հարաբերություն՝ բայն իր խնդրով (մեծ մասամբ ուղիղ), հետևաբար ունենք [S]OV շարադասություն, մինչդեռ գրաբարի շարահյուսական համակարգին հավասարապես, եթե ոչ ավելի, հատուկ է և VO[S] կառուցվածքը[71]: Մյուս կողմից, սակայն, հարադրավոր բայերի մեջ և անորոշ դերբայով բայական բառակապակցություններում գերակշռում են OV կառույցները (պատասխանի տալ, ազդ առնել, զմտաւ ածել, զրոյց արկանել, ի գործ անկանել, յերկրայս լինել և այլն): Կամ, Գ+Ա և Ա+Գ կաղապարներում արտացոլված է որոշիչների և հատկացուցիչների ինչպես նախադաս, այնպես էլ հետադաս կիրառությունը:

Բարդությունների բաղադրիչների խոսքիմասային պատկանելությունից բացի հետաքրքիր է պարզել, թե որպես արդյունք ինչ խոսքի մասեր



են կերտվում տարբեր խոսքի մասերից վերցված սկզբնահիմքերի զուգորդություններով (կաղապարները քննվում են ըստ նվազող հաճախականության, տե՛ս էջ 148-ի ցանկը):

1. Ամենագործուն՝ Գ+Բ կաղապարով կազմվում են գերազանցապես «տատապուրուշա» տիպի ածականներ (բաղադրիչների միջև խնդրային հարաբերությունների առկայությամբ): Սրանք հիմնականում հանդես են գալիս ենթակայական, երբեմն հարակատար դերբայի իմաստով. որևէ գործողություն կատարելը (կատարած լինելը) առնվում է իբրև հատկանիշ՝ ազգասէր, ախտաբեր, աշխարհապահ, աստուածագէտ, արտօսրաբուղխ; ընծայատու, բագադիր, ճաւրս, ձեռնպահ, մատնցոյց, վրէժխնդիր:

Նույնքան հաճախադեպ են կրավորականությունը՝ գործողությունը իր վրա կրելը (կրած լինելը) որպես հատկանիշ արտահայտող ածականները՝ աղաքարս, ամօթապարտ, ապաստանապահ, բանտակալ, աստուածակերտ, ժանգակեր, սուսերապատ և այլն: Անհամեմատ սակավ են այս կաղապարով կազմված գոյականները, որոնք մեծ մասամբ միաժամանակ նաև ածական են, կամ գոյականացել են սկզբնական ածականներից, այնուօրինակ՝ ադամածին սկզբնապես նշանակել է «Ադամից ծնված», այնուհետև՝ «ադամորդի, մարդ», նույնպես և անդամալոյծ, անձրևաբախ, աշխարհաբնակ, աշխարհագործ, աշխարհախումբ՝ միաժամանակ և՛ ածականներ են, և՛ գոյականներ: Այս տիպի կազմությունները որպես երկրորդ բաղադրիչ հաճախ ունեն գործ, կիր, կալ, վար բայահիմքերը (աթոռակալ, աշխարհակալ, ասպարակիր, ատաղձագործ, աղեղնակիր, արիւնակալ, արծաթագործ, արկղագործ, արմանագործ), որոնք, կարծես, արդեն սկսել են ձեռք բերել ածանցակերպների արժեք (գործակալ, ակնագործ, չափակիր), թեև շատ դեպքերում էլ դեռևս պահպանել են իրենց ներքին ձևը՝ աշխարհագործ «աշխարհի ստեղծողը», առաստաղակալ «առաստաղը բռնող, պահող», խաչակիր «խաչ կրող, տանող», արտավար «արտը վարող» և այլն:

Ավելի սակավ են այն գոյականները, որոնք կազմվել են որպես այդպիսիք՝ առանց նախապես ածական լինելու: Դրանք հիմնականում գործողության առարկայացված անվանումներ են կամ բայահիմքի նշած գործողությունը դիտում են որպես արդյունք՝ աշխարհագիր «մարդահամար», աղիւսաթիւ «աղիւսարկություն» (ՆՀԲ), ամբոխաժողով «ժողովված, հավաքված ամբոխ», ասպարաբեկ «ասպարի կտոր, փոքրիկ կոտրված վահան», արձանագիր «1. կոթող՝ արձանագրությամբ, 2. արձանագրություն» և այլն:

Գ+Բ կաղապարին ենք վերագրում, ինչպես նշել էինք, նաև ածականական ծագումով առաջին բաղադրիչ ունեցող կառույցները, որտեղ ածականը հանդես է գալիս ոչ թե իր բուն խոսքիմասային արժեքով, այլ գոյականացած, ընդ որում, եթե գոյականացումը (զուտ կոնվերսիայի ձևով) այդքան հատուկ չլիներ հայերենին նրա զարգացման բոլոր փուլերում, ապա այստեղ հնարավոր կլիներ ենթադրել նաև բառակազմական գաղտնի քայլ՝ գոյականակերտ -ութիւն կամ որևէ այլ ածանցի կցում և հետագա անկում՝ բառաբարդման հաջորդող քայլի ժամանակ՝ քաղցրաբէր–քաղցրութիւնաբէր «քաղցրություն բերող», պարկեշտասէր «պարկեշտություն սիրող», դառնաբուղխ «դառնություն բխող» և այլն, ինչպես ասենք այդ տեղի ունի -ք- հոգնակերտ ածանցի անկման ժամանակ՝ կապան(ք)+ա+պան, կապանակից, յորձան(ք)+ա+խոր, յորձանաձիգ և այլ դեպքերում (որ այստեղ իսկապես ք տարրի անկում գոյություն ունի և ոչ թե սերող հիմքը կապան, հորձան ձևերն են, ապացուցում է անք անտրոհելի ածանցի առկայությունը կապանք, հորձանք, աղաչանք, ամօթանք, աշխատանք, արշաւանք, ընտրանք, խտրանք և այլ բառերում)։

2. Գ+Գ կաղապարի դեպքում որպես արդյունք ստացվում են գոյականներ և ածականներ։ Բաղադրիչների միջև գոյություն ունի գերազանցապես հատկացուցիչ-հատկացյալի շարահյուսական հարաբերություն՝ ազգապետ, աղեղնակապարճ, անձնապէտ, անձրևաշիթ, աշխարհաքանակ, առիւծակորիւն, աստուծազաւակ, արշաւահանդէս, գահագլուխ, ոտնատեղի, որբատուն։ Ավելի քիչ են բաղադրիչների միջև որոշիչ-որոշյալ հարաբերությամբ կազմությունները՝ աղաջուր, աղիւսադուռն, ամոլաջիլ, այգալաց, նաւակամուրջ, մարգագետին, մարդագերի, նարօտաներկ և այլն։ Սակավ դեպքերում հանդիպում են օրինակներ բաղադրիչների համազոր հարաբերությամբ՝ այծամարդ, այծաքաղ, այրակին, նկարապատկեր, աշխարանուագ և այլն։ Այս դեպքում ամբողջ բարդությունը գոյական է։ Ստացված ածականների մեծ մասը պատկանում է «բահուվրիհի» տիպին՝ ակօսաձև «ակոսի ձև ունեցող», ահապարանց «ահավոր պարանոցով», աղանդամիտ «մոլորեալ մտօք», այսպես նաև՝ ամպագոյն, այրասիրտ, աչագեղ, բոցատերև, գազանասիրտ, նոխազադէմ, ոսկիգիսակ, պատկերակերպ և այլն։

3. Ա+Գ կաղապարով նույնպես հիմնականում կազմվում են «բահուվրիհի» տիպի ածականներ՝ բաղադրիչների որոշիչ-որոշյալ շարահյուսական հարաբերությամբ՝ ազատամիտ, անուշաբոյր, անօրամարմին, արագաթև, արգաւանդահող, բարձրագագաթ, դառնաբոյն, դատարկաձեռն, զգօնամիտ և այլն։



4. Մ+Բ կաղապարի բաղադրիչները բնականաբար միմյանց նկատմամբ գտնվում են պարագայական հարաբերությունների մեջ, իսկ ամբողջ բաղադրությունն ինքը դարձյալ ածական է՝ ենթակայական և հարակատար դերբայների իմաստով (ինչպես և Գ+Բ կաղապարի դեպքում, թեև այնտեղ գործ ունեինք հիմնականում խնդրային հարաբերությունների հետ)՝ արագահաս, դանդաղամած, դեռաբողբոջ, դժոխաշարժ, դժուարագիւտ, դիւրաբեկ, յաճախապատում, նորատունկ, շատակեր և այլն։

5. Գ+Ա կաղապարով կազմվում են բացառապես ածականներ (եթե նկատի չունենանք նրանց հետագա հնարավոր գոյականացումը, ինչպես՝ ազգակից, աթոռակից), քանի որ երկրորդ ածականական բաղադրիչը որպես գերադաս անդամ իր խոսքիմասային պատկանելությունը հաղորդում է ամբողջ բարդությանը՝ այրանման, անտառախիտ, աչալուրջ, աստուածահաւասար, արիւնակից, ծայրակարմիր, հողմախառն, շնորհալի և այլն։

6. Թ+Գ կաղապարը Ա+Գ կառույցների նման կազմում է բաղադրիչների որոշիչ-որոշյալ հարաբերությամբ ածականներ՝ եռամանեակ, երկալեզու, եօթնաձոր, իննագլուխ, հարիւրաձեռն, հինգակատար, միանուն, ութանիստ, վեցանկիւն, տասնաղի, քառականգուն, քսանանիստ և այլն։ Վկայված են նաև մի շարք գոյականներ՝ պետ բաղադրիչով՝ հազարապետ, հարիւրապետ, յիսնապետ, տասնապետ, որտեղ առաջին բաղադրիչը նույնպես առնվում է գոյականաբար։

7. Դ+Բ կաղապարը նմանվում է Գ+Բ կաղապարին թե՛ բաղադրիչների միջև եղած խնդրային հարաբերությամբ, թե՛ որպես արդյունք ստացվող ածականներով։ Բարդությունների բառակազմական իմաստը նույնպես այստեղ համընկնում է՝ գործողությունը որպես հատկանիշ (ենթակայական կամ հարակատար դերբայի իմաստով)՝ ամենաբժիշկ, ամենագէտ, ամենագիտ, այլափոխ, այլասեր, այլածին, բոլորաձոյլ, բոլորասէր, ինքնաբաւ, ինքնաբեր, ինքնագոյ, ինքնուս, նոյնահաս, նոյնաշարժ։ Այս կաղապարում որպես առաջին բաղադրիչներ հանդես են գալիս միայն նշված դերանունները, որոնք հարաբերակցվում են գոյականների (ամեն, բոլոր, ինքն) և ածականների (այլ, նոյն) հետ։ Առաջին բաղադրիչի քերականական ձևավորումով վկայված են նաև այլ դերանուններ՝ իւր և միմեանց, իւրածին, իւրեանցասարաս, միմեանցասէր, միմեանսասէր, միմեանցայար։

8. Ա+Ա կաղապարի բաղադրիչների միջև գոյություն ունի համազոր հարաբերություն, և արդյունքում ևս ստացվում են ածականներ՝ բացարձակ, զուարթառատ, յորդառատ, քաջարի, քաջողջ, ազատանման, դիւրայարմար, թանձրադանդաղ, հաստապինդ, չարանախանձ և այլն։

9. *Դ+Գ կաղապարով (ինչպես և Գ+Գ և Ա+Գ կաղապարներով) կազմվում են ածականներ՝* ամենազօր, այլաբան, այլալեզու, այլամիտ, բոլորակամ, ինքնագլուխ, ինքնաձեռն, նոյնազաւակ, նոյնատիպ *և այլն։ Այս կաղապարում, բացի վերը նշված դերանուններից, որպես առաջին բաղադրիչ (SS հիմնակաղապարով) կարող են հանդես գալ նաև մի շարք այլ ցուցական և հարցահարաբերական դերանուններ՝* այս, այդ, այն՝ այդչափ, այնժամ, այսօր. սոյն, դոյն, նոյն՝ սոյնպէս, դոյնչափ, նոյնօրինակ, որ՝ որչափ, որքան, որպակ. սա՝ սապէս *և այլն։ Այս դեպքում կազմվում են նաև մակբայներ (հիմնականում ձևի, ժամանակի, չափ ու քանակի)։* $S^{f}jS$ *կաղապարով վկայված են* մերակերպ, մերասեռ, մեօքակերպ *ածականները, իսկ* $S^{f}S^{f}$ *կաղապարով՝* յայսմհետէ, յայնմհետէ, որովհետեւ *և նման մակբայներ։*

10. *Դ+Ա կաղապարով ստեղծվում են ածականներ, ընդ որում որպես առաջին բաղադրիչ դարձյալ հանդես են գալիս* ամեն, բոլոր, ինքն, նոյն *դերանունները, որով Դ+Ա կաղապարը նույնարժեք է դառնում Գ+Ա և մասամբ Ա+Ա կաղապարներին, օր.՝* ամենաբարի, ամենալաւ, ամենալի, բոլորահեշտ, ինքնաբարի, ինքնաբուն, նոյնանման *և այլն։*

11. *Բ+Բ կաղապարով կազմվում են սակավաթիվ ածականներ՝* դարձընթաց, եկամուտ, եկակոչ, թաւալգլոր, թռալիր, թողլիք, խուզափորձ, յեղափոխ, յուզաքնին, պատմագիր, պատմագով *և ավելի սակավ՝ գոյականներ՝* ելամուտ, քերթաքաղ *և այլն։*

12. *Մ+Գ կաղապարը նույնպես գործառական շատ փոքր բեռնվածություն ունի և դարձյալ կազմում է ածականներ* (առաջաձայն, յառաջադաս, յառաջաքաղերթ, յարաժամ, յաւէտահրաշ) *ու գոյականներ* (յառաջաբան, յառաջարաժին, յարակոյս, յաւէտակոյս *և այլն)։ Վկայված են և երկու մակբայ՝* հանապազօր, յետկոյս։

13. *Թ+Բ կաղապարը կազմում է ածականներ՝ բաղադրիչների խնդրային (մասամբ պարագայական) հարաբերությամբ, ինչպես Գ+Բ կաղապարի դեպքում էր՝* բիւրագործ, երկապաշտ, երկխօս, եօթնածին, հարիւրաժողով, միարար, միագոյ, միակեաց, քառայարոյց։ *Սրանցից մի քանիսը կարող են ենթարկվել հետագա գոյականացման, ինչպես* միակեաց *«ճգնավոր»։*

14. *Բ+Գ կաղապարով կազմվում են գոյականներ* (իջավան, պաճուճապատան, մրգամարտ, բերանուն, լալետղ) *և ածականներ* (ջնջագիր, փութասիրտ, դիպաղեղն, չքմեղ)։

15. *Թ+Ա կաղապարով կազմվում են սահմանափակ թվով ածականներ. առաջին բաղադրիչը հիմնականում մի թվականն է՝* միազոյգ, միա-[illegible], միակից, միահարթ, միահաւասար, միանման *և այլն, նաև՝* եռա-[illegible], եռեքպայծառ։

16. *Թ+Թ կաղապարով, բնականաբար, կազմվում են միայն թվականներ, ընդ որում վկայված բոլոր օրինակները խոր հնություն ունեն և յուրահատուկ հիմքակազմական ձևավորում՝* մետասան, երկոտասան, երեքտասան, չորեքտասան, հնգետասան, վեշտասան։ *Ինչ վերաբերում է մյուս բաղադրյալ թվականներին, ապա նրանց բաղադրիչները միմյանց միացված են* և, ու *շաղկապների օգնությամբ* (եօթնետասան, ութևտասան *և այլն), այդ պատճառով չեն արտացոլված բարդությունների խոսքիմասային բնութագրի մեջ, քանի որ այստեղ, ինչպես ասվել է, քննարկվում են միայն* SjS *և* SS *հիմնակաղապարները։*

17. Բ+Ա կաղապարով վկայված են միայն ածականներ, որոնց բոլորի երկրորդ բաղադրիչը կից *ածականն է՝* եղակից, ընթացակից, կործանակից, շարժակից, մաղթակից, մխիթարակից, պահակից։

18. *Մ+Ա բաղադրությունը տալիս է դարձյալ ածականներ՝* հանապազգոյշ, հանապազասուտ, մշտապայծառ, յարազուարճ, յաւէտազուարթ *և այլն։*

19. *Թ+Մ կաղապարով վկայված են 2 մակբայ՝* միանգամ, եզանգամ *և մեկ ածական՝* քառառաջ։ *Սրանք կարելի է վերագրել Թ+Գ կաղապարին, երկրորդ բաղադրիչը համարելով գոյական։*

20. *Գ+Մ կաղապարով մեր ընտրանքում հանդիպում են* ակնյանդիման *մակբայը և* բոքառաջ(ք) *գոյականը, վերջինիս երկրորդ բաղադրիչը կարող է համարվել նաև գոյական։*

21. *Դ+Դ կաղապարով կազմված են մեկ մակբայ՝* այլուր *և մեկ շաղկապ՝* այսինքն։

22. *Դ+Մ կաղապարով ունենք ընդամենը մեկ մակբայ՝* միւսանգամ։

23. *Գ+Զ կաղապարով կազմված է* մեղեդուկ *գոյականը* (մեղեդուկս ասել *հարադրության մեջ)։*

24. *Ա+Թ կաղապարով ունենք* բազմաբիւր *ածականը։*

25. *Ա+Մ կաղապարով նույնպես վկայված է ընդամենը մեկ բառ՝* երկարայաւէտ *ածականը, եթե առաջին բաղադրիչը մակբայ չհամարենք։*

26—29 *կաղապարներով, բնականաբար, կազմվում են մակբայներ և շաղկապներ։*

*Հետևյալ աղյուսակն արտացոլում է* SjS *և* SS *հիմնակաղապարներով կազմված բարդությունների բաղադրիչների և նրանցով կազմված բառերի խոսքիմասային պատկանելությունը։ Յուրաքանչյուր վանդակում նախ*

նշվում է առավել տարածված, ապա նվազ գործունություն ունեցող տիպը։

Աղյուսակ 4

| | Խոսքի մասեր | Երկրորդ բաղադրիչներ | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Գ | Ա | Թ | Դ | Բ | Մ | Զ | Շ |
| Առաջին բաղադրիչներ | Գ | Ա աստուա-ծակերպ Գ մարդա-գերի | Ա հայրա-նման | — | — | Ա ամպա-վար Գ աթոռա-կալ | Մ ակնյան-դիման | Գ մեղե-դուկ | — |
| | Ա | Ա չարա-կամ | Ա քաջա-լաւ | Ա բազմա-բիւր | — | — | Մ երկա-րայաւէտ | — | — |
| | Թ | Ա եռայարկ Գ հազա-րապետ | Ա եռամեծ | Թ մետա-սան | — | Ա քառայա-րոյց Գ միակաց | Մ միանգամ Ա քառատաշ | — | — |
| | Դ | Ա այլա-կրօն | Ա ամենա-վսեմ | — | Մ այլուր Շ այսինքն | Ա ինքնա-կոչ | Մ միւս-անգամ | — | — |
| | Բ | Գ լայեող Ա ջնջագիր | Ա ընթա-ցակից | — | — | Ա լիզա-ջինջ Գ եկամուտ | — | — | — |
| | Մ | Ա յաւէտա-հրաշ Գ յարա-կոյս Մ հանա-պազօր | Ա մշտա-պայծառ | — | — | Ա հակառա-կամէտ | Մ յայտյան-դիման | — | Մ իբրև — |
| | Շ | Շ թէպէտ | — | — | — | — | — | — | Շ թէև |

Այսպիսով, ինչպես տեսնում ենք աղյուսակից, բարդությունների ճնշող մեծամասնությունը ածականներ են, որոնք ստացվում են տարբեր



խոսքի մասերից վերցված սկզբնահիմքերի ամենաբազմազան զուգորդումներից։ Երկրորդ տեղում են գոյականները, որոնք թե՛ կաղապարների, թե՛ նրանց իրացումների առումով մեծապես զիջում են ածականներին, մանավանդ, եթե նկատի ունենանք, որ բարդությունների մի մասն էլ գոյականների է վերածվում միայն երկրորդաբար։ Մյուս խոսքի մասերից (թվական, մակբայ, շաղկապ) վկայված են խիստ սահմանափակ թվով օրինակներ։ Հետաքրքիր է նշել, որ, բացի Գ+Գ կաղապարից, մնացած բոլոր դեպքերում, երբ բաղադրիչները պատկանում են միևնույն խոսքի մասին, նրանց միջև գոյություն ունի համազոր հարաբերություն (Ա+Ա—քաջալաւ, Բ+Բ—եկամուտ, Թ+Թ—երեքտասան), մինչդեռ Գ+Գ կաղապարի դեպքում, ինչպես նշվել է, բաղադրիչների համազոր հարաբերությունները սահմանափակ տեղ են գրավում, և հիմնականում առկա են գոյականական բառակապակցություններին հատուկ՝ որոշիչ-որոշյալ և հատկացուցիչ-հատկացյալ հարաբերությունները։

## ԱԾԱՆՑՄԱՆ ԿԱՂԱՊԱՐՆԵՐ

Գրաբարի բառակազմության երկրորդ հիմնական եղանակը ածանցումն է։ Ածանցման հիմնակաղապարն է մեկ հիմնական և մեկ երկրորդական ձևույթի (ածանցի) բաղադրությունը, ընդ որում, ըստ հիմնական ձևույթի նկատմամբ ածանցի գրաված դիրքի, ածանցման կաղապարները բաժանվում են նախածանցավորների և վերջածանցավորների։ Միջածանցները լեզվի զարգացման այս փուլին արդեն անծանոթ են։ Սակավաթիվ դեպքերում նկատվում է նախածանցման և վերջածանցման միաժամանակյա գործողություն, որի մասին ավելի մանրամասն կխոսվի ստորև։ Բաղադրյալ բառերի ընդհանուր քանակով մեր ընտրանքում ածանցավոր կազմությունները գրեթե մեկուկես անգամ գերակշռում են բարդություններին։ Ինչ վերաբերում է նախածանցման և վերջածանցման գործառական բեռնվածությանն առանձին վերցրած, պետք է ասել, որ ածանցման կաղապարների մեջ նախածանցավորները և վերջածանցավորները համաչափ բաշխում չունեն։ Առաջինները թե՛ թվով, թե՛ կաղապարների բարդության և բազմազանության աստիճանով մեծ չափով զիջում են երկրորդներին։ Չի կարելի, անշուշտ, ասել, թե նախածանցումը խորթ է եղել հայերենին նրա զարգացման որևէ կոնկրետ փուլում։ Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ գրաբարում պահպանվել են բազմաթիվ բառեր, որոնց կազմում ստուգաբանորեն կարելի է անջատել զգալի թվով նախածանցներ[72], որոնք ժամանակին ակտիվ բառակազմական դեր են կատարել։ Սակայն հին գրական հայերենի սկզբնավորման շրջանում ստեղծվել էր մի այնպիսի վիճակ, երբ հնդեվրոպական նախալեզվից ժառանգված նախածանցների մեծ մասը մթագնել էր և, կորցնելով բառակազմական գործառույթը, ձուլվել արմատին։ Այդ կազմություններում ածանցները դադարել էին գիտակցվել որպես առանձին տրոհվող միավորներ, և առաջ էր եկել նախածանցման որոշ սահմանափակություն։ Այդ էր պատճառը, որ գրավոր լեզվի հիմնադրումից և նրա գիտակցված մշակման սկզբնավորումից հետո հունաբան դպրոցի ջանքերով ստեղծվեցին կամ գործառական ակտիվություն ձեռք բերեցին



բազմաթիվ նախածանցներ, որոնք շատ կարճ ժամանակաշրջանում օրգանապես ներմուծվեցին հին հայերենի բառակազմական համակարգ և զգալիորեն հարստացրին նախածանցման կաղապարները։ Այնպես որ ուսումնասիրվող շրջանում հաղթահարվել էր բառակազմական կառուցվածքի նշված սահմանափակությունը։

Ածանցման, այդ թվում նախածանցման միջոցով է ստեղծված V դ. գրաբարի բաղադրյալ բառերի ավելի քան երկու երրորդը, և ածանցման կաղապարներն իրենց թվով և բազմազանությամբ չեն զիջում բառաբարդման կաղապարներին։

Եթե տվյալ դեպքում նկատի չունենանք բաղադրյալ բառերի բառակազմական պատմությունը (բառակազմական ձևույթների կցման հաջորդականությունը), ածանցավոր բառերի կառուցվածքային լիակաղապարը կարելի է ներկայացնել հետևյալ տեսքով՝ $a_3a_2a_1(j)Sa_1a_2a_3a_4$[73]։ Այդ նշանակում է, որ բառը կարող է ստանալ առավելագույնը երեք նախածանց (թեև վկայված է ընդամենը մեկ օրինակ՝ աններստորադրական) և չորս վերջածանց։ Անշուշտ, այս լիակաղապարի իրացումը մենք չունենք։ Ածանցների առավելագույն քանակը (նախածանցների և վերջածանցների ընդհանուր գումարը) իրապես վկայված բառերում չորսից չի անցնում, ընդ որում քառածանց կազմությունները խիստ սահմանափակ թիվ ունեն, այսպես, ունենք մեկ նախածանցով և երեք վերջածանցով ներ+գործ+ող+ական+արար բառը, երկու նախածանցով և երկու վերջածանցով՝ առ+ընդ+ուն+ող+ութիւն օրինակը, չորս վերջածանցով՝ մշտ+(ու)նջ+ե(ա)ն+աւոր+ական, պահ+պան+ող+ական+ութիւն, առաջ+(ի)ն+որդ+ական+ութիւն և մի քանի այլ վկայություններ։ Ամենատարածված կաղապարներն են aS (միարմատ նախածանցավոր), Sa (միարմատ վերջածանցավոր) և (Sa)a (միարմատ երկվերջածանց) կազմությունները։

Հասկանալի է, որ ածանցավոր բառերի սերող հիմքերը կարող են լինել ոչ միայն առաջնային հիմքեր, այլև բաղադրյալ կազմություններ, այդ թվում՝ բարդ բառեր։ Ըստ այդմ ստացվում են նախածանցների ու վերջածանցների, ինչպես նաև տարբեր ձևավորում ունեցող հիմքերի ու ածանցների բազմազան զուգորդություններ։ Այդ զուգորդությունների մեջ ածանցների գրաված դիրքը միմյանց նկատմամբ խիստ օրինաչափությունների չի ենթարկվում, թեև որոշակիորեն կարելի է առանձնացնել մի խումբ ածանցներ, որոնք առավելապես եզրային դիրք են գրավում՝ նշելով բառակազմական պրոցեսի ավարտը։ Ածանցավոր կամ բարդ (այսպես կոչված երկրորդային) սերող հիմքերը մաքուր առաջնային հիմքի համեմատությամբ գործառական առանձնահատկություններ ի հայտ չեն

բերում և ունեն խոսքիմաստային ու բառակազմական նույն արժեքը, ինչ որ արմատական հիմքը։ Որոշակի օրինաչափություններ չկան նաև տարբեր վերջածանցների, ինչպես նաև նախածանցների և վերջածանցների զուգորդելիության մեջ, կան միայն խոսքիմաստային և բառիմաստային պայմաններ, օրինակ, մակբայներ են կերտվում ածականներից կամ գոյականներից, հետևաբար երկրորդային (ածանցավոր) հիմքերի դեպքում մակբայակերտ ածանցները զուգորդվում են ածականակերտ կամ գոյականակերտ ածանցների հետ (ական+աբար-բնականաբար, աւոր+աբար-զօրաւորաբար, ային+աբար-աստուածայնաբար և այլն)։

Այսպիսով, ածանցներն «անտարբեր» են հիմքի կառուցվածքի նկատմամբ, բայց ընտրություն կա հիմքի դասի՝ խոսքիմաստային պատկանելության առումով (որոշակի ածանցներ կցվում են որոշակի խոսքի մասերի,) ինչպես նաև ստացված արդյունքի առումով (որոշակի ածանցներ կերտում են որոշակի խոսքի մասեր)։ Քանի որ կոնկրետ ածանցների գործառական առանձնահատկությունների քննությանը մենք անդրադառնալու ենք առանձին գլխում, այստեղ կսահմանափակվենք միայն ընդհանուր դիտողություններով և կաղապարների ու ածանցների թվարկումով։

## ՆԱԽԱԾԱՆՑՈՒՄ

Եթե նկատի չունենանք մթագնած կազմություններն ու եզակի ածանցական ձևույթները, ապա կարելի է ասել, որ գրաբարի նախածանցները բաժանվում են երեք հիմնական խմբի՝ 1) ժխտական, 2) նախդիրներից առաջացած, 3) հունարենի հետևողությամբ անկախ բառերից կամ բառահատվածներից արհեստական կերպով ստեղծված։ Անշուշտ, այսպիսի խմբավորումը որոշ պայմանականություն ունի, քանի որ առաջին խմբի դեպքում նկատի է առնվում ածանցների իմաստային հատկանիշը, իսկ երկրորդ և երրորդ խմբերի համար՝ նրանց ծագումը։ Այս բաժանումը, սակայն, արդարացվում է նշված խմբերի ածանցների նաև որոշ գործառական առանձնահատկություններով և մի շարք այլ հատկանիշներով, որոնց մասին կխոսվի ստորև։

Առաջին խմբի ածանցներն են՝ ան-, ապ(ա)-, դժ-(տժ-), չ-, տ-, որոնք խմբավորվում են ժխտականության իմաստային ընդհանուր հատկանիշով։ Կիրառման հաճախականության տեսակետից նրանք միմյանցից խիստ տարբերվում են։ Սրանց մեջ գործունության առումով առանձնանում է ան ժխտական նախածանցը, որը հայերենի զարգացման բոլոր



շրջաններում էլ եղել և մնում է բառակազմական ամենաարդյունավետ միջոցներից մեկը։ Այս նախածանցով կազմված բառերը բաց խումբ են ներկայացնում և հեշտությամբ կարող են համալրվել նորանոր կազմություններով։ Այնուհետև, ըստ նվազող հաճախականության դասավորվում են չ-, տ-, ապ-, դժ- նախածանցները, ընդ որում հիմնական՝ aS կաղապարով դրանցով կազմված բոլոր բառերը միասին վերցրած կազմում են ան-ով բաղադրությունների միայն 6,8%-ը։ Այդ ածանցներով գրեթե բոլոր կազմություններն էլ ժառանգված են հնուց և ուսումնասիրվող շրջանում, բացառությամբ չ- ածանցի, այլևս գործուն չեն։ Սրանց թվին, թերևս, կարելի է դասել նաև ակամայ փոխառյալ բառի մեջ հանդիպող ա- ածանցը, որը հեշտությամբ տրոհվում է կամայ-ակամայ զույգի հակադրությամբ։

Երկրորդ խմբի՝ նախդիրներից առաջացած նախածանցներն են՝ առ-, ընդ-, ըստ-, ի(յ)-, զ-, ց-, որոնք նույնպես գործառական բեռնվածության տեսակետից նույնարժեք չեն։ Նախածանցների դերում ամենից ավելի մեծ գործունություն են հանդես բերում առ- և ընդ- նախդիրները, որոնցով կան ինչպես ավանդաբար ժառանգված, այնպես էլ նոր կազմություններ։ Ինչ վերաբերում է ըստ-, ի(յ)-, զ-, ց- նախդիր-նախածանցներին, ապա պետք է ասել, որ V դարում նրանք արդեն գործուն չէին և բաղադրությունների կազմում ճանաչվում են անկախ գոյություն ունեցող հիմքերի (պարզ արմատների) կամ հեշտությամբ տրոհելի այլ բաղադրիչների հակադրությամբ (առաջ-յառաջ, երկար-յերկար, սպառ-իսպառ, արձակ-յարձակ, այգ-ցայգ, անկ-ցանկ և այլն), իսկ երբեմն նույնիսկ լրիվ ձուլվել են հիմքին և տրոհելի են միայն ստուգաբանորեն, ինչպես՝ ըստերիւրել, ըստգտանել, անստգիտ, զգեստ, զարմ, զանխուլ և այլն։ Կարելի է ասել, որ այս խմբի նախածանցները մի շարք դեպքերում գրեթե կորցրել են իրենց բառակազմական նշանակությունը և այժմ բառին սոսկ իմաստային որոշ երանգներ են հաղորդում։ Այդ առանձնապես վերաբերում է զ նախդիր-նախածանցին։ Մի շարք բառերում, հատկապես բայերում, այն ունի սաստկական նշանակություն՝ արդ-զարդ, եղծ-զեղծ, գնալ-զգնալ, կծանել-զկծանել, եռալ-զեռալ, արմանալ-զարմանալ, իջանել-զիջանել, գետնել-զգետնել և այլն։ Իսկ որոշ դեպքերում էլ առաջացել են նոր նշանակությամբ բայեր, որտեղ մթագնել կամ իսպառ կորել է նախկին իմաստային կապը դրանց սերող հիմքերի հետ, ինչպես՝ գալ-զգալ, անցանել-զանցանել (նաև յանցանել), զարգանալ (արմատը՝ արգ), զբաղիմ (արմատը՝ բաղ) և այլն։ Այստեղ զ-ի բառակազմական առանձին մասնիկ լինելն այլևս չի դիտակցվում։

Ի նախդիրը հիմնականում (եթե նկատի չունենանք սակավ բացառությունները, ինչպես՝ իսպառ) հանդես է գալիս ձայնավորից առաջ իր յ տարբերակով՝ յառաջ, յանկարծ, յերկար, յապայ, յակամայ, յանգ, յանուն և այլն: Պետք է նշել, որ մի շարք բառերում (հատկապես, երբ դրանք կիրառվում են բարդ բառերի կազմում՝ յառաջամարտիկ, յառաջակայ, յերկարմտութիւն և այլն) յ-նախածանցը որևէ իմաստային երանգ չունի, այն պարզապես ստեղծում է նույն հիմքերի ազատ տարբերակներ նույնատիպ կազմություններում (անկարծակամ–յանկարծակամ, առաջամուտ–յառաջամուտ և այլն): Այդ պատճառով մենք յ նախածանցն այստեղ տրոհելի ենք համարում միայն պայմանականորեն, ինչպես ասացինք, առանց յ-ի ձևերի հակադրությամբ: Յ նախդիրը իսկապես բառակազմական արժեք ունի միայն մի շարք եղանակավորող բառերի և մակբայների մեջ (յառաջ, յանկարծ, յորժամ, յանուն, յուրաստ, յայնժամ, յարգելք և այլն), մանավանդ այն դեպքերում, երբ բառը միաժամանակ ստանում է ս մակբայակերտ վերջածանցը կամ ունի քերականական ձևավորում, ինչպես՝ յանգետս, յաներկրայս, յաներկիւղս, յանխնայս, յանծանօթս, յանճոգս, յանպետս, յանօգուտս, յերկրայս, յառաջիկայս, յիսկզբանցն, յերեսաց և այլն: Սակայն այստեղ արդեն մենք գործ ունենք aSS, aSa, aSSa, aSf և նման կաղապարների հետ: Նույնը վերաբերում է ց նախդիր-նախածանցին՝ ունենք ցայգ, ցերեկ գոյականները և մի շարք մակբայներ ու եղանակավորող բայեր՝ ցայժմ, ցայդվայր, ցայնժամ, ցայնքան, ցայսօր, ցերբ, ցորչափ, ցանկ, ցարդ և այլն: Այս տիպի (ի-ով, ց-ով) նախդիր-նախածանցավոր կազմությունները մեծ մասամբ առաջացել են նախկին շարահյուսական կապակցությունների բաղադրիչների ձուլումից:

Երրորդ խմբի՝ հունարենի հետևողությամբ ստեղծված նախածանցներն են՝ ապ-, արտ-, բաղ-, բար-, բաց-, գեր-, դեր-, ենթ-, թեր-, հակ-, համ-, հոմ-, մակ-, յար-, նախ-, ներ-, շաղ-, շար-, պար-, ստոր-, վեր-, տար-, տրամ-, փաղ-, փար-: Սրանցից բացի, սակավ կիրառություններով վկայված են նաև պարզապես փոխառյալ նախածանցներ՝ անտի-, արք-, քոր-:

Նշված ածանցները նախորդ երկու խմբի ածանցներից տարբերվում են ոչ միայն իրենց առաջացման բնույթով, այլև ձևական և իմաստային որոշ առանձնահատկություններով: Ամենից առաջ նշենք, որ նրանցից մի քանիսը իմաստային կոնկրետության տեսակետից ընդհանրություն ունեն արմատական ձևույթների հետ, շատ դեպքերում բաղադրություններում նույնպես պահելով իրենց սկզբնաձև հանդիսացած բառի բառային, հիմնականում տարածական իմաստը, ինչպես՝ ստոր, վեր («դեպի



վեր» իմաստով), բաց («հեռու» իմաստով), ներ («ներս» իմաստով) և այլն: Որոշ դեպքերում ստեղծվում են իմաստային տարբերակման վրա հիմնված արմատաածանցային նույնանունության դեպքեր, օր. վեր «դեպի վեր» իմաստով՝ վերադէտ, վերագնաց հանդես է գալիս որպես արմատ, իսկ «նորից» իմաստով՝ նախածանց: «Վրա, վրան» իմաստի դեպքում ևս առկա է արմատին հատուկ իմաստային հարաբերական ինքնուրույնություն, ինչպես՝ վերարկու, վերակացու, թեև արդեն կան նաև զուտ ածանցային կազմություններ՝ իմաստի ձևականացումով՝ վերագիր, վերագրել և այլն: Կամ յար նախածանցը «միշտ» իմաստով՝ յարատև, յարակայ, յարաձգութիւն օրինակների մեջ ունի արմատի արժեք, իսկ «կից» իմաստով՝ յարակից, յարանուն, յարաշէշտ և այլն՝ ածանցի:

Նշված նախածանցները արմատական արժեք են ձեռք բերում հատկապես այն դեպքերում, երբ իրենք ստանում են որևէ վերջածանց՝ բաղազանութիւն, պարաւորութիւն, բացաւորութիւն:

Մյուս էական տարբերությունը նախորդ երկու խմբից (բացառությամբ ապ- ժխտական նախածանցի) հիմքի հետ հոդակապով միանալու հատկությունն է, որ նույնպես նրանց մոտեցնում է անկախ արմատների[74]: Միևնույն ածանցների՝ հոդակապով և անհոդակապ միացումը հիմքին մեծ մասամբ սոսկ արտասանական արժեք ունի (նայած հիմքը ձայնավորով է սկսվում, թե բաղաձայնով՝ տրամաբան և տրամատ, գերագոյ և գերստուած), իսկ երբեմն դրանք պարզապես տարբերակներ են՝ (համարուն և համբուն): Մի շարք ածանցներ էլ կիրառվում են առանց հոդակապի նաև բաղաձայնով սկսվող հիմքերի դեպքում, թեև, անշուշտ, կան նաև հոդակապով ձևեր, ինչպես՝ շաղկապ, բայց՝ շաղաշար, ներկայ, ներգործ, ներկուռ, ներդաշնակ, ներհակ, բայց նաև ներադարձել և այլն:

Վերը նշված հատկանիշներից ելնելով, ավելի ճիշտ կլիներ երրորդ խմբի ածանցները դասել այսպես կոչված ածանցակերպների շարքը, որոնք օժտված են թե՛ արմատի, թե՛ ածանցի հատկանիշներով՝ կախված իրենց բաշխման, գործառության և իմաստային առանձնահատկություններից:

Ինչ վերաբերում է այս խմբի ածանցների զուգորդելիությանը, ապա պետք է ասել, որ aS, ajS կաղապարներով կազմությունները այս նախածանցակերպներով համեմատաբար սակավաթիվ են: Սրանք հիմնականում հանդես են գալիս բայակազմության մեջ, հետևաբար՝ եռաբաղադրիչ կառույցներում (սրանց քննությունը կտրվի «բայակազմություն» բաժնում), կամ այլևայլ, մեկից ավելի ածանցների ու հիմքերի զուգորդություննե-

բում։ Կան նույնիսկ ածանցներ, որոնք տվյալ ժամանակաշրջանից aS, ajS կաղապարներով վկայություններ չունեն։

Գործառական բեռնվածության տեսակետից ևս այս ածանցները նույնարժեք չեն, թեև այստեղ չկա նաև ժխտական ածանցների նման մեծ խզում գործածման հաճախականության մեջ (համմտ. մի կողմից **ան-** և մյուս կողմից՝ **ապ-, դժ-, չ-, տ-** ածանցների հաճախականությունը)։ Երրորդ խմբի նախածանցներից համեմատաբար ավելի գործուն են **արտ-, բաց-, գեր-, համ-, ներ-, նախ-, ստոր-, վեր-, տար-** ածանցները, միջին դիրք են գրավում **ապ(ա)-, բաղ-, հակ-, հոմ-, մակ-, յար-, շաղ-, շար-, պար-, տրամ-,** իսկ մյուսներից՝ **բար-, դեր-, թեր-, ենթ-, փաղ-, փար-,** վկայված են մեկ տասնյակից էլ պակաս օրինակներ։

Ստորև ներկայացնում ենք գրաբարի նախածանցման կաղապարները։ Յուրաքանչյուր կաղապարի տակ նախ բերվում են առաջին խմբի (ժխտական) նախածանցներով կազմությունները, ապա երկրորդ և երրորդ խմբերինը միասին՝ ընդհանուր այբբենական կարգով, քանի որ որոշ նախդիր-նախածանցներ (**առ-, ընդ-**) իրենց գործառական նոր ակտիվացմամբ մոտենում են հունաբան դպրոցի ստեղծած նախածանցներին։ Բերվում են նաև այդ խմբերից դուրս մնացած՝ եզակի ածանցներով հնում ավանդված կազմությունները։ Ինչպես և բառաբարդման կաղապարները ներկայացնելիս, այստեղ ևս մեծ հաճախականություն ունեցող կաղապարներից բերում ենք սակավաթիվ օրինակներ, իսկ սահմանափակ թվով վկայությունների դեպքում՝ մեր ընտրանքում հանդիպած բոլոր օրինակները։ Նշենք նաև, որ նախածանցավոր կազմությունների մեջ բնականաբար հիմքի շեշտափոխական հնչյունափոխություն չի կատարվում, քանի որ բառն աճում է ձախից, և այստեղ մենք փաստորեն գործ ունենք մաքուր հիմքերի կամ, սակավ դեպքերում, քերականական ձևավորում ունեցող հիմքերի հետ։ Հետաքրքիր են այն դեպքերը, երբ որոշ բայական սկզբնահիմքեր իրենց լիաձայն տարբերակով հանդես են գալիս միայն այս (նախածանցավոր) կաղապարներում, ընդ որում, հաճախ ձայնավորման տարբերություններով, ինչպես օր.՝ **անզիղջ** կամ **անզեղջ** (**զղջալ** բայի արմատը, որն այլուր լիաձայն տարբերակով չի հանդիպում), **անբրիջ** (**բրջել** բայի արմատը), **համաջինջ** կամ **համաջունջ** (**ջնջել** բայի արմատը) և այլն։

1. aS—միարմատ մեկ նախածանցով կազմություններ.

**ան**[1]—(ունի հնչյունափոխական տարբերակ՝ **ամ-**, որ հանդիպում է **ամբարիշտ/ամպարիշտ, ամբիծ** բառերում)—անազատ, անգործ, անդարձ։ Գրաբարի ամենագործուն նախածանցն է, մեր ընտրանքում այս կաղապարով վկայված է 588 օրինակ.



**ապ**[1]—ապախտ, ապարասան/ապերասան, ապերախտ, ապուշ

**դժ-(տժ-)**—դժգոհ, դժխեմ, դժմիտ, դժպատեհ, տժգին

**չ**—չաստուած, չարուեստ, չբարի, չգազան, չգիտ, չեպիսկոպոս, չերէց, չզարդ, չժողովուրդ, չինչ, չպէտ, չքահանայ

**տ**—տգեղ, տգեղծ, տգէտ, տգոյն, տկար, տկեղտ, տհալ, տհաճ, տհաս, տձև, տմոյն

**ան**[2]—անոտն

**անտի**—անտիհիպատոս/անթիհիպատոս, անտիքրիստոս

**առ**—առաթուր, առայժմ, առաւել, առաւիր, առբերան, առընթեր, առինչ, առլի, առհասարակ, առձեռն, առողջ, առցեղ

**արտ**—արտուղի, արտորէն

**արք**—արքեպիսկոպոս

**բաղ**—բաղմատ, բաղյօդ

**գեր**—գերանուն, գերաստուած, գերարտօսր, գերարփի

**դեր**—դերանուն

**ընդ**—ընդարմ, ընդդեմ, ընդաթուր, ընդարձակ, ընդէր, ընդհանուր, ընդհատ, ընդոծին, ընդոստ, ընդունայն, ընդվայր

**ըստ**—ըստգիտ

**թեր**—թերանուն, թերուղիղ

**ի**—իսպառ

**հակ**—հակերգ

**համ**—համազն/համազուն, համաթոռ, համանուն, համաշխարհ, համարփին, համարձակ, համարուեստ, համբուն, համգունդ

**հոմ**—հոմազն, հոմանուն, հոմարփին, հոմերամ

**մակ**—մականուն, մակաւասար, մակբաշխ, մակատեղծ

**յ**—յանուն, յառաջ, յերկար

**յար**—յարանուն

**նախ**—նախաթոռ, նախաշխարհ, նախարդար, նախեկեղեցի

**ներ**—ներանձն, ներավարտ, ներգործ, ներդաշնակ, ներկուռ, ներհակ

**շաղ**—շաղկապ

**տար**—տարաշխարհ, տարբեր, տարորոշ

**տրամ**—տրամանկին

**ց**—ցայգ, ցայժմ, ցայն, ցայս, ցանգ/ցանկ, ցերբ, ցերեկ

**փաղ**—փաղանուն

**քոր**—քորեպիսկոպոս

Ինչպես տեսնում ենք, բացի **ան-** ժխտական նախածանցից, մյուս ածանցներով այս կաղապարով (նախածանցի անհոդակապ կցում հիմքին) վկայված օրինակները խիստ սահմանափակ են։ Ավելի քիչ են $aS^f$ (հիմքի քերականական ձևավորումով) կաղապարի վկայությունները։

1ա. $aS^f$ ենթակաղապարով հանդիպում են հետևյալ տարատեսակությունները.

**ան**[1]—անարանց, անմօրուս, անօրէնք (անվանական հիմքեր), անաբար, անգնաց, անգոյ, անդարձ, անզգայ, անզգամ, անընթաց, անիմայ, անիմաց, անլու, անլուայ, անլուր, անխաղաց, անկայ, անկեաց, անմատոյց, անմոռաց (բայական հիմքեր)

**չ**—չգոյ, չէ, չէր, չկայ

**ան**[2]—անկողին

**առ**—առանձին, առարկ, առէջ

**գեր**—գերիմաց

**ընդ**—ընդմիմեամբ

**բստ**—բստիւրաքանչիւրք, բստմիոջէ

**համ**—համընթաց, համիմաց

**մակ**—մակդիր, մակբայ

**յ**—յանուանէ, յերեսաց, յոգւոց

**ներ**—ներգոյ, ներկայ

2. ajS—միարմատ, հոդակապով նախածանցավոր կազմություններ։ Ինչպես նշվել է, երրորդ խմբի ածանցները արմատին են կցվում հիմնականում հոդակապի միջոցով, բացի նախորդ կաղապարում նշված դեպքերից։ Սակայն ajS կաղապարով վկայված օրինակները նույնպես բազմաթիվ չեն, քանի որ այս նախածանցները բառի կազմում սովորաբար զուգորդվում են բառակազմական այլ միավորների՝ մեկից ավելի արմատների և ածանցների հետ (**գերասկզբնագոյն, արտակացութիւն, համագոյակցութիւն** և այլն) և հատկապես գործուն են բայակազմության մեջ, հետևապես, առնվազն եռաբաղադրիչ, իսկ հոդակապի հաշվառումով՝ նաև քառաբաղադրիչ կաղապարների մեջ։

Ժխտական նախածանցներից այս կաղապարով կազմություններ կան **ապ**-նախածանցով։

**ապ**[1]—ապագով, ապաժամ, ապաժաման, ապաժոյժ, ապալեր, ապալերկ, ապահարկ, ապաշնորհ։ Կան մի քանի փոխառություններ պարսկերենից (**ապիկար, ապենիազ, ապիրատ**), որտեղ թեև նախածանցը հնչյունական որոշ տարբերությամբ է հանդես գալիս, սակայն V դարում դեռևս գիտակցվում էր որպես տրոհելի, նույն շարքի մեջ մտնող ածանցավոր



այլ կազմությունների համաբանությամբ (հմմտ. նաև **ան-նիազ, ան-կար** և այլն), ինչպես նաև բավական զգալի արտահայտված ժխտականության իմաստով։

**ապ**[2]—ոչ ժխտական իմաստով ունենք մեկ օրինակ՝ ապացոյց.

**արտ**—արտաբոյս, արտահալած, արտայայտ, արտանուագ, արտապողոտայ, արտասահման, արտասայց, արտատեղի, արտատիպ, արտատոհմ

**բաղ**—բաղաձայն

**բաց**—բացակտուր, բացասայց

**գեր**—գերաբուղխ, գերաբուն, գերազանց, գերազարդ, գերաղօր, գերալիր, գերախանչ, գերակատար, գերահրաշ, գերաճաճանչ, գերապայծառ, գերապանծ, գերասահման, գերավախճան, գերատարած

**ենթ**—ենթացոյց

**հակ**—հակաբան, հակադարձ, հակակիր, հակամարտ, հակարաշ

**համ**—համաբան, համաբնակ, համաբոլոր, համաբուն, համագաղափար, համագոյն, համագործ, համագումար, համագունդ, համադուռն, համադոյզ, համազօր, համաթիւ, համալեզու, համալուծ, համախահ, համախօս, համածառայ, համածին, համակամ, համակար, համակարգ, համամիտ, համայարկ, համանիւթ, համանման. համաշունչ, համաչափ, համակերպ, համակերտ, համահամ, համահայր, համահանդերձ, համաձայն, համաձանձիր, համաձև, համաճանապարհ, համամայր, համամարտ, համապայծառ, համապատիւ, համաջինջ, համաջունջ, համասեղան, համասեռ, համասեր, համասուն, համասփիւռ, համատարած, համատարր, համատի, համատիպ, համատոհմ, համացեղ

**հոմ**—հոմահայր, հոմանման, հոմասեղան, հոմասեռ, հոմասեր, հոմացեղ

**մակ**—մակալեզու, մակաձի

**յար**—յարաբագին, յարաշէշտ

**նախ**—նախաբոյս, նախագահ, նախագաղափար, նախագիծ, նախագիր, նախագլուխ նախադաս, նախադատ, նախադուռն, նախակատար, նախակարգ, նախահայր, նախահաւակ, նախաձեռն, նախաճանապարհ, նախաճաշակ, նախամայր, նախամարգարէ, նախայայտ, նախաշաւիղ, նախաչար, նախապատիւ, նախապատճառ, նախապարիսպ, նախապետ, նախապտուղ, նախասկիզբն, նախավախճան, նախավաղ, նախավատակ, նախավկայ

**շաղ**—շաղաշար

**շար**—շարագիր

**պար**—պարածածուկ, պարականոն

**ստոր**—ստորագավառ, ստորադաս, ստորակետ, ստորակտուր, ստորանախանձ

**վեր**—վերաբեր

**տար**—տարաբաժին, տարաբան, տարաբեր, տարաբուն, տարագիր, տարագոյն, տարագործ, տարադեմ, տարազարդ, տարաժամ, տարակարծ, տարակոյս, տարահասակ, տարամիտ, տարապայման, տարապատկան, տարապարհակ, տարապարտ, տարատարափ, տարացոյց

**տրամ**—տրամաբան, տրամաբնակ, տրամագիծ, տրամագիր, տրամախոհ, տրամաչափ

2ա. $ajS^t$

**ապ**—ապագայ

**բաց**—բացագոյ

**գեր**—գերագոյ, գերակայ

**ներ**—ներթակայ

**հակ**—հակադարձ, հակակայ

**համ**—համակարիք, համատիք, համատուրք, համադարձ, համակեաց, համակորոյս

**մակ**—մակաբանք

**պար**—պարագայ

**ստոր**—ստորակայ, ստորակաց

**տար**—տարակաց

3. $a(aS)$—երկնախածանց միարմատ կազմություններ: Այս կաղապարի բաղադրությունները վերջածանցների զուգորդությունների համեմատությամբ չափազանց սահմանափակ են ոչ միայն բառերի բացարձակ քանակի, այլև ածանցների զուգորդելիության տեսակետից: Որպես առաջին բաղադրիչ հիմնականում հանդես է գալիս **ան-** ժխտական նախածանցը, որը ածանցման լիակաղապարում մեծ մասամբ գրավում է ձախ եզրային դիրքը: Միայն սակավ դեպքերում **ան-**ը կարող է նախորդվել այլ ածանցներով՝ **գերանձանօթ, յանկարծ**:

Ի տարբերություն վերջածանցավոր կազմությունների, ուր հանդիպում են մինչև չորս վերջածանցի զուգորդություններ, ընդհանրապես բառը չի կարող ունենալ երկու նախածանցից ավելի (երեք նախածանցով կա ընդամենը մեկ բառ՝ **աններստորադրական**, որ արհեստականության որոշ կնիք ունի):



Երկնախածանց կազմություններից վկայված են հետևյալ օրինակները.

**ան-+առ**—անառաւել

**ան-+բաղ**—անբաղյօդ

**ան-+ընդ**—անընդհատ, անընդհար, անընդոստ

**ան-+ըստ**—անըստգիտ

**ան-+շաղ**—անշաղկապ

**ան-+տար**—անտարորոշ

**գեր-+ան**—գերանձանօթ

**գեր-+ընդ**—գերընդարձակ

**հակ-+ընդ**—հակընդդեմ

**յ-+ան**—յանկարծ

3ա. $a(aS^t)$

**ան$^1$-+ան$^2$**—անանկողին

**յ-+ան**—յանգգայ

4. $a(ajS)$

**ան-+համ**—անհամանիւթ

**ան-+հոմ**—անհոմացեղ

**ան-+շար**—անշարակարգ

**ան-+պար**—անպարագիծ, անպարագիր

**ան-+տար**—անտարակոյս

4ա. $a(ajS^t)$

**ան-+շար**—անշարադիր

**ան-+վեր**—անվերադիր

**գեր-+ստոր**—գերստորակայ

**նախ-+ներ**—նախներթակայ

Թեև վերջին երկու կաղապարների համար բերվող օրինակներում առանձնացվում են նախածանցների զուգորդությունները, սակայն, անշուշտ, պետք է նկատի ունենալ, որ այստեղ միմյանց են կցվում ոչ թե ածանցները, այլ եզրային ածանցը միանում է արդեն իսկ նախածանցով ձևավորված երկրորդային հիմքին, այնպես որ ածանցների զուգորդությունները ստացվում են պատահականորեն: Հաստատուն է միայն ածանցների դիրքը. երրորդ խմբի՝ հիմնականում տարածական և ժամանակային իմաստ ունեցող ածանցները անմիջաբար կցվում են մաքուր առաջնային հիմքին (արմատից ձախ $a_1$ դիրքն ունեն), իսկ ժխտական **ան-** նախածանցը վերաբերում է ամբողջ բառին և փաստորեն բացասում սերող հիմ-

քով արտահայտված հատկանիշը, գրվում է արմատից ձախ եզրային $a_2$ դիրքը։ Այս դիրքում կարող է հանդես գալ նաև գեր- նախածանցը, մի դեպքում նույնիսկ նախորդելով ան- ժխտականին։ Կարելի է ասել, որ այն տվյալ դեպքում ունի հատկանիշի առավելագույն աստիճանի իմաստ և նույնպես վերաբերում է ամբողջ հիմքին։

5. a(Sa)—վերջածանցով ձևավորված երկրորդային հիմքերով նախածանցավոր կազմություններ։ Նշված կաղապարին պատկանող օրինակների որոշումը զգալի դժվարություններ է հարուցում, քանի որ շատ դեպքերում դրանք կարող են հավասարապես վերագրվել (aS)a կաղապարին, հատկապես ակ-, -ական, -ակի, -ավոր և այլ վերջածանցների դեպքում։ Կաղապարները սահմանազատելիս հիմնականում առաջնորդվել ենք վերջածանցավոր կամ նախածանցավոր հիմքի անկախ գոյության փաստով և սերող հիմքի ու սերված բառի ավելի սերտ իմաստային կապով։ Այսպես, աներևակ, անորոշակ բառերի կաղապարն է (aS)a, քանի որ երևակ, որոշակ բաղադրիչներ առանձին վկայված չեն, մինչդեռ անորոշական, անորոշակի բառերի դեպքում հարցը բարդանում է, քանի որ առանձին գոյություն ունեն ինչպես անորոշ, այնպես էլ որոշական, որոշակի ձևերը։ Բառակազմական իմաստի տեսակետից էլ այստեղ միայն նուրբ տարբերություն կարելի է գտնել՝ անորոշական, անորոշակի կարող են նշանակել կա՛մ «ոչ-որոշական, ոչ-որոշակի», եթե ընդունենք a(Sa) կաղապարը, կա՛մ «անորոշ կերպով», եթե ընդունենք (Sa)a կաղապարը։ Բառիմաստի առումով սա էական տարբերություն չէ։ Կաղապարների սահմանազատման հարցում որոշ չափով կարող է օգնել և կառուցվածքային չափանիշը, տվյալ դեպքում նկատի ունենք, որ -ակի ածանցը, որպես մակբայակերտ ածանց, սովորաբար եզրային դիրք է գրավում, հետևաբար, կարելի է ավելի նպատակահարմար համարել պայմանականորեն ընդունել (aS)a կաղապարը։ Նույն ձևով -ական-ով կազմությունների մեծ մասը պատկանում է (aS)a կաղապարին, քանի որ շատ հաճախ -ական ածանցը հավելուրդային բնույթ ունի[75], այսպես, ան- նախածանց պարունակող սերող հիմքերն արդեն իսկ ունեն նույն բառիմաստը, ինչպես՝ անազատական=անազատ, անախորժական=անախորժ, անեզրական=անեզր և այլն։ Երբեմն հավելուրդային բնույթ ունի նաև -ակ վերջածանցը, ինչպես վերը նշված անորոշակ բառում, կամ անգիտակ բառի մեջ, եթե վերջինիս համար ընդունենք (aS)a կաղապարը (անգէտ+ակ). a(Sa) կաղապարի դեպքում բառը կունենա «ոչ-գիտակ» բառակազմական իմաստը։



Զուտ իմաստային չափանիշի կիրառումը կարելի է ցույց տալ անարդարակ «անհարմար» բառի օրինակով։ Բառի հնարավոր սերող հիմքեր կարող են լինել ինչպես անարդար (+ակ), այնպես էլ (ան+) արդարակ բաղադրիչները։ Բայց քանի որ անարդարակ բառը իր բառային և բառակազմական իմաստով կապվում է արդարակ «շիտակ, հարմար» և ոչ թե անարդար «անիրավ» հիմքի հետ, ապա ընդունվում է a(Sa) կաղապարը։ Այն դեպքերում, երբ հնարավոր են երկու կաղապարներն էլ, օրինակները բերվում են աստղանիշով։ Նշենք նաև, որ a(Sa) կաղապարի օրինակների մեծագույն մասը վկայված է ան- ժխտական նախածանցով, որ զուգորդվում է այլևայլ վերջածանցների հետ։ Զգալի հաճախականություն է ցուցաբերում և չ- նախածանցը։ Սա բացատրվում է թերևս նրանով, որ այս երկու նախածանցներն ունեն տրամաբանական ժխտման արժեք և վերաբերում են ամբողջ սերող հիմքին, ժխտելով նրանով արտահայտված հասկացությունն ամբողջապես։

Մյուս նախածանցներով ունենք սակավաթիվ կազմություններ։ Նախածանցների և վերջածանցների զուգորդման հատուկ պայմաններ կամ սահմանափակումներ չկան, այդ զուգորդությունները ստացվում են պատահականորեն, որպես բառակազմական հաջորդական քայլերի արդյունք։

ա-...-այ ակամայ

ան-...-ակ անազգակ, անարդարակ, աներասանակ/աներեսանակ, աներեւակ, անխառնակ, անմոլորակ, անորակ, անորոշակ*, անտեսակ

ան-...-ական անբաւական, անընդելական*, անիրական, անլայնական, անծառայական, անծերական, անհամեմատական*, անհաւանական, անմխիթարական, անշահեկան/անշայեկան, անտեւական

ան-...-ակար անվնասակար

ան-...-ակի անհեշտակի, անորոշակի*

ան-...-այ անբաղայ, անուղղայ

ան-...-ան անարժան, անբաժան, աներեւան, աներկեան, անիշխան, անխոտան, անպաճարան, անսխուրան, անպատսպարան[76]

ան-...-անակ անժամանակ

ան-...-անի անարժանի, անկենդանի

ան-...-ատ[1] անհաստատ

ան-...-ար անաստուածար, անյարդար, անմեծար

ան-...-արան անկերպարան

ան-...-արիմ անհաւատարիմ

ան-...-ացի անփառացի

ան-...-ացու անապականացու

ան-...-աւ անիրաւ

ան-...-աւոր անանձնաւոր*, անանցաւոր, անարգասաւոր, անբանաւոր, անթագաւոր, անկեղծաւոր*, անհնարաւոր*, անյանցաւոր, անշնորհաւոր, անպատկանաւոր, անվտանգաւոր*, անփառաւոր

ան-...-եալ անազդեալ, անեղեալ, անեղծեալ, անզետեղեալ, անհալածեալ, անհամբաւեալ, անյարդարեալ, անպարտեալ, անվայելեալ

ան-...-եայ անաչեայ

ան-...-եցիկ անգեղեցիկ

ան-...-եք անուստեք, անուրեք

ան-...-ի[1] անազգի, անաղի, անարդի, անարի, անաւելի, անընտանի, անկարծի(ս, ք), անհաւաստի, անմարդի

ան-...-իլ անարդիլ, անտեսիլ

ան-...-իկ անտոհմիկ*

ան-...-ին անբաժին, անդժուարին

ան-...-իչ անվարիչ

ան-...-իղ աներկիղ

ան-...-կոտ անյաշաղկոտ

ան-...-ող անդաւաճանող, անլսող, անհոգող, անճանաչող, անտանող

ան-...-ոյ անհաճոյ

ան-...-ոյթ աներեւոյթ, աննմանոյթ

ան-...-ոյն անողջոյն

ան-...-ոտ աննախանձոտ, անպալարոտ, անվէհերոտ

ան-...-որդ անհաղորդ

ան-...-ու անյաղթու

ան-...-ուած անխառնուած

ան-...-ուկ աննեցուկ, անտաղտուկ

ան-...-ումն աներդումն, անյագումն, անուսումն, անցասումն, անփոփոխումն

ան-...-ուն անասուն, անբեղուն, անխօսուն, անհաստատուն, անշարժուն

ան-...-ունչ անտերունչ

ան-...-ուչ անյարուչ, անվայելուչ

ան-...-ուստ անթաքուստ, անկորուստ, անփախուստ

ան-...-ուրդ անխորհուրդ

ան-...-(ա)պան անպահապան/անպահպան



ան-...-ստ անզգաստ, անիմաստ, անհանգիստ, անպահեստ

ան-...-օթ անծանօթ

առ-...-անակ առժամանակ

գեր-...-ակ գերերեւակ, գերունակ

գեր-...-եալ գերարձակեալ

գեր-...-ստ գերիմաստ

գեր-...-իկ գերաշխարհիկ

զ-...-ացու զաչացու

ընդ-...-ակ ընդունակ

հակ-...-ումն հակորոշումն

համ-...-ակ համերասանակ, համոլորակ

համ-...-ան համիշխան

համ-...-ի համազգի

հոմ-...-ան հոմիշխան

մակ-...-ական մակածական

մակ-...-ակ մակեռակ, մակքառակ, մակընթրակ(ք)

մակ-...-ի մակաւելի

մակ-...-ոյթ մակերեւոյթ

մակ-...-ուտ մակեղուտ

յ-...-ստ յուրաստ

յ-...-ք յարգելք

յար-...-եալ յարանկեալ

նախ-...-ակ նախերեւակ

նախ-...-ական նախասպնջական

նախ-...-ոյն նախողջոյն

ներ-...-ական ներմեղական

ներ-...-ային ներծովային

ներ-...-ի ներազգի

ներ-...-ութիւն ներերեւութիւն

չ-...-ական չախորժական, չէական

չ-...-անի չկենդանի

չ-...-աւոր չանձնաւոր

չ-...-ագին չահագին

չ-...-եալ չհամարեալ

չ-...(ալ/ել)ի չհաւատալի/չաւատալի, չլուալի, չուտելի

չ-...-ոյք չխաղոյք

չ-...-ութիւն չէութիւն, չխոստովանութիւն, չմարթութիւն, չյարութիւն

չ- . . . -ուհի չաստուածուհի*
չ- . . . -ուն չմարթուն
տրամ- . . . -անակ տրամանցանակ
փաղ- . . . -ութիւն փաղառութիւն*
5ա. a(S̲a)
ան- . . . -ազան անսրբազան
ան- . . . -ակ անգիտակ, անտեղեակ
ան- . . . -ական անբնական, անբուսական, անգիտական*, անտրրամական, անօգնական
ան- . . . -ակար անօգտակար
ան- . . . -ան անպիտան
ան- . . . -անակ աննշանակ
ան- . . . -անի անպիտանի
ան- . . . -ատ անթլփատ
ան- . . . -աւոր անգլխաւոր, անլուսաւոր, անմտաւոր, անշնչաւոր*, անպարսպաւոր, անսկզբնաւոր*, անվիրաւոր, անտպաւոր
ան- . . . -դի/դին անշրդի/անշրդին
ան- . . . -ին անլուսին
ան- . . . -ող անընտրող
ան- . . . -ոյ անպիտոյ
ան- . . . -ոյթ անծածկոյթ, անձանձրոյթ
ան- . . . -որդ անկցորդ
ան- . . . -ոց անմիջոց
ան- . . . ումն անսկզբումն
ան- . . . -ունդ անծնունդ
առ- . . . -ին առտնին
ներ- . . . -անակ ներշրջանակ
չ- . . . -աւոր չընաւոր
չ- . . . -իկ չնչիկ
չ- . . . -ին չնչին
չ- . . . -ոյ չպիտոյ
չ- . . . -ու չգիտու
չ- . . . -ութիւն չաղնուութիւն, չհլութիւն
չ- . . . -ուն չգիտուն
5բ. a(Sᶠa)



ան- . . . -ական անզգայական*, անիմացական*, անկայական*, անմեղանչական
ան- . . . -ան անկայան
ան- . . . -ել անարուեստացել, անբաժացել, անծաղրացել, անհաշտեցել, անշնացել
ան- . . . -ի³ այս կազմությամբ վկայված են բազմաթիվ բառեր. փաստորեն նման տիպի բաղադրությունները բաց խումբ են կազմում և կարող են համալրվել գրեթե յուրաքանչյուր բայից ստեղծված նորակազմություններով՝ անազատելի, անամբոխելի, անանցանելի, անբովանդակելի, անգթելի, անգիտելի, անգնալի, անէլանելի, անեղանելի, անորսալի և այլն։
ան- . . . -իչ անարարիչ
ան- . . . -ող անայրեցող, անարարող, անբարկացող, անզգուշացող, անճանաչող, անստացող
ան- . . . -ուած անարարուած, անստացուած
ան- . . . -ումն անհատուցումն
ան- . . . -ուն անզգայուն, անկայուն
գեր- . . . -ել գերիմացել
ըստ- . . . -էք ըստմիոչէք
համ- . . . -ական համիմացական
համ- . . . -ութիւն համիմացութիւն*
մակ- . . . -ական մակստացական
չ- . . . -ական չմոռացական
չ- . . . -ել չլուել, չյանցուցել
չ- . . . -ու չկեցու
չ- . . . -ութիւն չգոյութիւն, չկեցութիւն
չ- . . . -ապէս չմարդկապէս

6. aj(Sa)—այս կաղապարով վկայված են համեմատաբար սակավաթիվ օրինակներ, հիմնականում երրորդ խմբի (հունաբան դպրոցի ստեղծած) նախածանցներով։
ապ(ա)- . . . -իկ ապատոհմիկ
բաց(ա)- . . . -ատակ բացայիշատակ
համ(ա)- . . . -ակ համանմանակ, համատեսակ
համ(ա)- . . . -ական համապետական
համ(ա)- . . . -անակ համաժամանակ
համ(ա)- . . . -իկ համատոհմիկ
համ(ա)- . . . -ոյ համաբարոյ

համ(ա)-...-ուրդ համախորհուրդ
հոմ(ա)-...-ակ հոմատեսակ
մակ(ա)-...-ուչ մակատեսուչ
յար(ա)-...-ումն յարահիւսումն
յար(ա)-....-ոյկ յարապարոյկ
նախ(ա)-...-ակ նախահասակ, նախահոգակ
նախ(ա)-...-իկ նախամարտիկ
նախ(ա)-...-իչ նախաճաշակիչ
նախ(ա)-...-նի նախայայնի
վեր(ա)-...-իկ վերամարտիկ
վեր(ա)-...-ու վերահասու

6ա. aj($\underline{S}$a)

գեր(ա)-...-աւ գերաբնաւ
հակ(ա)-...-ող հակատուփող
համ(ա)-...-ակ համագունակ
համ(ա)...-ական համաբնական
համ(ա)-...-ան համանշան
համ(ա)-...-արան համալսարան
համ(ա)-...-ունդ համասնունդ
նախ(ա)-...-ակ նախագիտակ, նախակրթակ
ներ(ա)-...-ակ ներամիջակ
տրամ(ա)-...-ակ տրամաբնակ

6բ. aj($S^f$a)

մակ(ա)-...-եղ մակագոյեղ
նախ(ա)...-ակ նախագոյակ
նախ(ա)-...-ի նախապատուելի
վեր(ա)-..-ուստ վերագալուստ

7. a[(Sa)a]—երկու վերջածանց ունեցող երկրորդային բաղադրյալ հիմքերով նախածանցավոր կազմություններ.

ան-...-ան+-աւոր անարժանաւոր
ան-...-անակ+-աւոր անժամանակաւոր
ան-...-անակ+-եայ անժամանակեայ
ան-...-անակ+-եան անժամանակեան
ան-...-ատ+-ուն անհաստատուն
ան-...-ար+-եալ անյարդարեալ



ան-...արան+-եալ անշտեմարանեալ
ան-...աւոր+-եալ անպատկանաւորեալ
ան-...-աւ+-ունք անիրաւունք
ան-...-իղ+-ած աներկիղած
ան-...-իղ+-ուտ աներկիղուտ
ան-...-կան+-ացու անմահկանացու
ան-...-ող[1]+-ակ անյաջողակ
ան-...-ող[2]+-ական անանցողական, անճանաչողական
ան-...-ստ+-ուն անիմաստուն
առ-...-անակ+-եայ առժամանակեայ
գեր-...-ան+-ական գերիշխանական
չ-...-ական+-ութիւն չազգականութիւն
չ-...-ակար+-ութիւն չվնասակարութիւն
չ-...-ող[1]+-ութիւն չաջողութիւն/չյաջողութիւն

7ա. a[($\underline{S}$a)a]

ան-...-ան+-աւոր աննշանաւոր
ան-...-աւոր+-ական անգրաւորական
ան-...-ող[2]+-ական անբուժողական, անընտրողական, անցուցողական

7բ. a[(S$\underline{a}$)a]

ան-...-ին+-որդ անառաջնորդ
ան-...-իչ+-ական անտուչական
ան-...-ուն+-աւոր անբեղնաւոր
ան-...ուն+-ակի անխոտորնակի
ան-...-ուչ+-ական անվայելչական
ապ-...-ումն+-ական ապերդմնական
մակ—...-իկ +-ութիւն—մակաստկութիւն

7գ. a[($S^f$a)a]

չ-...-ող[2]+-ութիւն չպահեցողութիւն

7դ. a[$(Sa)^f$a]

ան-...-տակ+-եալ անյիշատակացեալ
ան-...-ան+-ի անբաժանելի
ան-...-ատ+-ի անխրամատելի

ան- . . . -ատակ+-ի *անյիշատակելի*
ան- . . . -իկ+-ի *անսասանելի*
ան- . . . -ոտ+-ի *անխոցոտելի*
ան- . . . -տ+-ի *անքակտելի*

*7ե.* a*[(*S̲a*)*$^{f}$a*]*

ան- . . . -աւոր+-ի *անվիրաւորելի*

*Հետաքրքիր է նշել այն վերջածանցները, որոնք առանց նախածանցների հետ զուգորդվելու հանդես չեն գալիս. ինչպես՝ -այ -անուղղայ, անբաղայ, անբաղբաղայ, -դի -անչրդի, -դին -անչրդին: Իսկ մի շարք դեպքերում, թեև ածանցը կարող է կցվել նաև մաքուր հիմքին, ինչպես՝* -եայ, -իկ, -իլ (կաթիլ, տեսիլ), *սակայն որոշ կոնկրետ բառերի մեջ հանդիպում է միայն նախածանցի հետ զուգորդված, այսինքն՝ վերջածանցավոր սերող հիմքը առանձին գոյություն չունի (ինչպես* անարդիլ՝ *չկա առանձին* արդիլ *ձևը) կամ կա բոլորովին այլ իմաստով (ինչպես* անաշխարհիկ *«տարագիր, վտարանդի»՝ իմաստային կապ չունի* աշխարհիկ *«աշխարհական» հիմքի հետ): Այդպիսի օրինակներից են* անառիկ, անազատիկ, անտենչիկ, անեմանոյթ *և այլն: Անշուշտ, այս օրինակները կարելի է մեկնաբանել որպես նախածանցավոր սերող հիմքից վերջածանցով կազմված ձևեր, սակայն այս դեպքում վերջածանցը իմաստային տեսակետից դառնում է հավելուրդային, ինչպես՝* անարդ–անարդիլ, անառ–անառիկ, անազատ–անազատիկ, անտենչ–անտենչիկ, անարգ–անարգիկ, անկեղծ–անկեղծիկ, անճենար–անճենարին, անգեղ–անգեղեայ, անդեղ–անդեղեայ *և այլն:*

*8.* aj*[(*Sa*)*a*]*

մակ(ա)- . . . -ան+-ումն *մակաբաժանումն*
նախ(ա)- . . . -որդ+-եալ *նախահաղորդեալ*
ստոր(ա)- . . . -ան+-ումն *ստորաբաժանումն*
տրամ(ա)- . . . -ատ+-եալ *տրամահատատեալ*

*8ա.* aj*[*Sa̲*)*a*]*

նախ(ա)- . . . -եան+-ական *նախայաւիտենական*

*Կան մի շարք օրինակներ, երբ սերող հիմքը ունի և՛ նախածանց, և՛ վերջածանց: Այդպիսի կազմությունների թիվը խիստ սահմանափակ է:*

*9.* a*[*a*(*Sa*)]* *անբացձաձական, անբաղդատական, անընդունակ, անընդունական, անպարունակ, չհամազգի, ներընդունական, ներընդունելի, ներպարունակ*



*9ա.* a*[(*aS*)*$^{f}$a*]* *անբաղդատելի, անբաղկացելի, անըստգտանելի, յարընդունելութիւն*

*9բ.* a*[(*ajS̲$^{f}$*)*a*]* *անստորադրական, բաղստորադրութիւն, ներստորադրական, ներտրամադրական*

*9գ.* a*[(*ajS̲*)*$^{f}$a*]* *անպարագրելի, անտարակուսելի*

*9դ.* aj*[(*aS*)*a*]* *նախանների ծութիւն*

*10.* a{*[*a*(*Sa*)]*a} *ներպարունակական*

*10ա.* a{*[*a*(*Sa*)]*$^{f}$a} *անպարունակելի*

*11.* a{a*[*aj*(*S̲$^{f}$a*)]*} *աններստորադրական*

*Այս վերջին օրինակները կարելի է մեկնաբանել այնպես, որ բառակազմական վերջին քայլը լինի* -ական *և* -ութիւն *ածանցների կցումը՝* անստորադ(ի)ր+ական, բաղստորադ(ի)ր+ութիւն, աններստորադ(ի)ր+ական: *Այս դեպքում կաղապարները համապատասխանաբար կլինեն՝ [*a*(*ajS*)]*a *և* {a*[*a*(*ajS*)]*}a:

*Մեկ նախածանցով և երեք վերջածանցով վկայված են հետևյալ կազմությունները՝*

*12.* a{*[(*Sa*)*a*]*a} *չմշտնջենաւոր*

*12ա.* a{*[(*Sa*)*a*]*$^{f}$a} *անփոխանորդելի*

*Որպես նախածանցավոր կազմությունների բաղադրյալ երկրորդային սերող հիմք կարող են հանդես գալ և բարդությունները հետևյալ կաղապարներով՝*

*13.* a(SjS)*—հոդակապավոր բարդ հիմքով նախածանցավոր կազմություններ: Այս կաղապարի օրինակների մեծ մասը վկայված է* ան- *նախածանցով:*

ան- *անախտակից, անամբողջախոհ, անամենագործ, անայլափոխ, անաստուածասէր, անարծաթասէր, անդասակից, անընկերասէր, անթեբահաւատ, անիրաղեկ, անխաղաղասեր, անխառնաբնդոր, անխորամանկ, անծամածուռ, անկենդանակից, անհակառակաբան, անհակառակամարտ, անհամբերատար, անձեռագործ, անմախասեր, անմարդաձայն, անմիաբան, անյօդակապ, աննմանասեռ, անողջախոհ, անպատերազմասէր, անպատերազմափորձ, անվայրափակ, անփոխակործ, անփոխաշարժ*

գեր*—գերարտօսրալիր*

դար/դեր*—դարանդարձապետ/դերանդարձապետ*

չ*—չքահանայապետ*

տար*—տարազգակից*

*13ա.* $a(\underline{S}jS)$

**ան**—*անբքալի, անգրագէտ, աներկրաչափ, անընչասէր, անմարմնասէր, անմտադիր, անպատուասէր, անպտղաբեր*

*13բ.* $a(S^{\prime}jS)$

**ան**—*անծնելասէր*

*13գ.* $a(SjS^{\prime})$

**ան**—*անոտնալուաց, անշնորհակալ*

**գեր**—*գերարտօսրալից*

**չ**—*չոխակալ*

*13դ.* $a(\underline{S}jS^{\prime})$

**ան**—*անդիմակաց*

*13ե.* $a(\underline{S}jS)$

**ան**—*անալեկոծ, անբարեկամ, անբարեսէր, անբարեփորձ, անխաբեբայ, անկարեկից*

*13զ.* $a(SjS)$

**ան**—*անզանազան*

*13է.* $a(Sj\underline{S})$

**ան**—*անկերակուր*

*14.* $a(SS)$—*անհոդակապ բարդ հիմքով նախածանցավոր կազմություններ՝*

**ան**—*անաշառ, անարեգակն, աներկհաւատ, աներկմիտ, անկարկատ, անձեռընդել, անձեռնհաս, անմիտ, անփոխորոշ, անսայթաք*

**մակ**—*մակերկման*

**յ**—*յայնժամ, յորժամ*

**ներ**—*ներմիւսանգամ*

**չ**—*չձեռնհաս*

**ց**—*ցայդվայր, ցայնժամ, ցայնվայր, ցայնքան, ցայսվայր, ցայսքան, ցայսօր, ցորժամ, ցորչափ, ցորվայր, ցորքան*

*14ա.* $a(SS^{\prime})$

**ան**—*անակնկալ, աներկբայ, անհարթարար, անմահարար, անոմկընդիր*

**չ**—*չոմկնդիր*



*14բ.* $a(\underline{S}S^{\prime})$

**ան**—*անժուժկալ*

*14գ.* $a(\underline{SS})$

**ան**—*անայլայլ, անյեղյեղ, անջախջախ (անջաղխջախ)*

*14դ.* $a(\underline{\underline{S}S})$

**ան**—*անբարբառ, անկասկած*

*14ե.* $a(\underline{\underline{S}^{\prime}\underline{S}^{\prime}})$

**ան**—*անբամբաս*

*15.* $aj(SjS)$

**համ**—*համահասակակից, համաձայնակից*

*15ա.* $aj(\underline{S}jS)$

**համ**—*համաբնակից*

*15բ.* $aj(\underline{Sj\underline{S}})$

**համ**—*համակերակուր*

*15գ.* $aj(SS)$

**յար**—*յարաշեշտոլոր*

*15դ.* $aj(\underline{\underline{S}S})$

**տար**—*տարակասկած*

*16ա.* $a[(a\underline{S})jS^{\prime}]$

**ան**—*անընդդիմակաց*

*16բ.* $a[(\underline{S}a)jS]$

**ան**—*անհմաստասէր*

*16գ.* $a[(\underline{S}a)jS]$

**ան**—*անխորհրդազգած, անվերնագիր*

*Վկայված են նաև սակավաթիվ կազմություններ, որտեղ նախածանցը կցվում է բարդածանցավոր երկրորդային հիմքին։*

*17ա.* $a[\underline{Sj}(Sa)]$ *անբարեվայելուչ*

*17բ.* $a[(SjS^{\prime})a]$ *անշնորհակալի*

*17գ.* $a[(Sj\underline{S}^{\prime})a]$ *անփոխադրական, չմեղադրանք*

*17դ.* $a[(\underline{S}jS^{f})a]$ *անընչաստացիչ*

*17ե.* $a[(\underline{S}j\underline{S}^{f})a]$ *անմտադրեալ*

*17զ.* $a[(SjS)^{f}a]$ *անկեղակարծելի, անյեղափոխելի*

*17է.* $a[(Sj\underline{S}^{f})^{f}a]$ *անմեղադրելի, անփոխադրելի*

*17ը.* $a[\underline{(Sj\underline{S})}^{f}a]$ *անկերակրելի*

*17թ.* $a(SjS^{f}a)$ *անշնորհակալու, անվերակացու*

*17ժ.* $a[\underline{(\underline{S}j\underline{S}}a)]$ *անմեկուսի*

*17ժա.* $a[\underline{(SjS)}a]$ *անզանազանեալ*

*17ժբ.* $a\{[(Sa)j\underline{S}^{f}]a\}$ *անիմաստասիրելի*

*17ժգ.* $a[(\underline{S}a)j(\underline{S}a)]$ *ներշրջանապտոյտ*

*18.* $a[(SS)a]$ *անակնածող, մակեռանկիւնի*

*18ա.* $a[(SS^{f})a]$ *անակնածելի, անակնոնելի, անխնամարկելի, անձեռնարկելի, անտեղիտալի*

*18բ.* $a[(\underline{S}S^{f})a]$ *անժուժկալի, անմտածելի, աներկրպագելի*

*18գ.* $a[\underline{(SS)}a]$ *անբաղբաղայ, անյեղյեղուկ*

*18դ.* $a[\underline{(\underline{S}S)}a]$ *անկասկածաւոր*

*18ե.* $a[(\underline{SS})^{f}a]$ *անայլայլելի, անչարչարելի*

*18զ.* $a[\underline{(\underline{S}S)}^{f}a]$ *անքամքասելի, անքարքառելի, անկասկածելի*

*18է.* $a(SSa)$ *անկաշառառու, անվերարկու*

*18ը.* $a(\underline{S}Sa)$ *աներկրպագու, անմտառու*

*19ա.* $a\{[(Sa)S^{f}]a\}$ *անարտաքսբերելի*

*19բ.* $a[(aSS^{f})a]$ *անիբացբառնալի, անիբացդնելի*

*19գ.* $a[(aS^{f}S^{f})a]$ *անիդուրսելանելի*

*Երեք արմատական բաղադրիչով ունենք հետևյալ կազմությունները.*

*20ա.* $a\{[a(SS)]S\}$ *անիմիկոյսթաւալ*

*20բ.* $a\{S[(SS)a]\}$ *անչարակնածութիւն։*

*Այսպիսով, նախածանցման կաղապարները նույնպես ի հայտ են բերում զգալի բազմազանություն։ Տարբեր է նաև կաղապարների գործառական բեռնվածության աստիճանը։ Հետևյալ աղյուսակը ներկայացնում է մեր ընտրանքում վկայված օրինակների քանակը և տոկոսային հարաբերությունը ըստ յուրաքանչյուր կաղապարի։*



Աղյուսակ 5

| № | Կաղապարներ | Օրինակներ | Թիվը | Տոկոսը |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1 | aS | անազատ | 588 | |
| 1ա | $aS^{f}$ | համընթաց | 41 | |
| | Ընդամենը | | 629 | 40,6 |
| 2 | ajS | տրամագիծ | 175 | |
| 2ա | $ajS^{f}$ | ստորակաց | 18 | |
| | Ընդամենը | | 194 | 12,5 |
| 3 | a (aS) | գերընդարձակ | 12 | |
| 3ա | $a\ (aS^{f})$ | յանգգայ | 2 | |
| | Ընդամենը | | 14 | 0,9 |
| 4 | a (ajS) | անհամանիւթ | 6 | |
| 4ա | $a\ (ajS^{f})$ | նախենթակայ | 4 | |
| | Ընդամենը | | 10 | 0.6 |
| 5 | a (Sa) | անծառայական | 180 | |
| 5ա | $a\ (\underline{S}a)$ | անգլխաւոր | 42 | |
| 5բ | $a\ (S^{f}a)$ | համիմացութիւն | 222 | |
| | Ընդամենը | | 444 | 28,7 |
| 6 | aj (Sa) | համապետական | 19 | |
| 6ա | $aj\ (\underline{S}a)$ | ներամիջակ | 11 | |
| 6բ | $aj\ (S^{f}a)$ | նախադոյակ | 4 | |
| | Ընդամենը | | 34 | 2,2 |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| 7 | a[(Sa) a] | անարժանաւոր | 21 | |
| 7ա | a[(S̲a) a] | անգրաւորական | 5 | |
| 7բ | a[(Sa̲) a] | անառաջնորդ | 7 | |
| 7գ | a[(S^f a) a] | չպահեցողութիւն | 1 | |
| 7դ | a[(Sa)^f a] | անյիշատակցեալ | 7 | |
| 7ե | a[(S̲a)^f]a | անվիրաւորելի | 1 | |
| Ընդամենը | | | 42 | 2,7 |
| 8 | aj[(Sa) a] | ստորաբաժանումն | 4 | |
| 8ա | aj[(S̲a̲)a] | նախայայտնենական | 1 | |
| Ընդամենը | | | 5 | 3,3 |
| 9 | a[(aS)a] | անբաղդատական | 9 | |
| 9ա | a[(aS)^f a] | անբաղկացելի | 4 | |
| 9բ | a [(ajS̲^f)a] | ներստորադրական | 4 | |
| 9գ | a [(ajS̲)^f a] | անտարակուսելի | 2 | |
| 9դ | aj [(aS)a] | նախանձբածութիւն | 1 | |
| Ընդամենը | | | 20 | 1,3 |
| 10 | a{[a(Sa)]a} | ներպարունակական | 1 | |
| 10ա | a{[a(S̲a)]a} | անպարունակելի | 1 | |
| Ընդամենը | | | 2 | 0,1 |
| 11 | a {a[aj(S̲^f a)]} | աններստորադրական | 1 | |
| Ընդամենը | | | 1 | 0,1 |
| 12 | a {[(S̲a)a̲]a} | չմշտնջենաւոր | 1 | |
| 12ա | a{[(Sa)a]^f a} | անփոխանորդելի | 2 | |
| Ընդամենը | | | 2 | 0,1 |



| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| 13 | a (SjS) | անարծաթասէր | 34 | |
| 13ա | a (S̲jS) | անպտղաբեր | 8 | |
| 13բ | a (S^f jS) | անծնելասէր | 1 | |
| 13գ | a (SjS^f) | անոտնալուաց | 4 | |
| 13դ | a (S̲jS^f) | անդիմակաց | 1 | |
| 13ե | a (S̲j̲S) | անալեկոծ | 6 | |
| 13զ | a (SjS) | անզանազան | 1 | |
| 13է | a (SjS̲) | անկերակուր | 1 | |
| Ընդամենը | | | 56 | 3,6 |
| 14 | a (SS) | չձեռնհաս | 26 | |
| 14ա | a (SS^f) | անակնկալ | 6 | |
| 14բ | a (S̲S^f) | անժուժկալ | 1 | |
| 14գ | a (SS) | անայլայլ | 3 | |
| 14դ | a (S̲S) | անբարբառ | 2 | |
| 14ե | a (S^f S^f) | անբամբաս | 1 | |
| Ընդամենը | | | 39 | 2,5 |
| 15 | aj (SjS) | համահասակակից | 2 | |
| 15ա | aj (S̲jS) | համարնակից | 1 | |
| 15բ | aj (SjS̲) | համակերակուր | 1 | |
| 15գ | aj (SS) | հարաշէշտոլոր | 1 | |
| 15դ | aj (S̲S) | տարակասկած | 1 | |
| Ընդամենը | | | 6 | 0,4 |
| 16ա | a [(aS̲) jS^f] | անընդդիմակաց | 1 | |
| 16բ | a [(Sa) j S] | անիմաստասէր | 1 | |
| 16գ | a [(Sa̲) j S] | անխորհրդազգած | 2 | |
| Ընդամենը | | | 4 | 0,3 |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| 17ա | a [Sj (Sa)] | անբարիվայելուչ | 1 | |
| 17բ | a [(SjS$^{f}$) a] | անշնորհակալի | 1 | |
| 17գ | a [(SjS$^{f}$) a] | չմեղադրանք | 2 | |
| 17դ | a [(SjS$^{f}$) a] | անընչաստացիչ | 1 | |
| 17ե | a [(SjS$^{f}$) a] | անմտադրել | 1 | |
| 17զ | a [(SjS)$^{f}$ a] | անկեղակարծելի | 2 | |
| 17է | a [(SjS$^{f}$)$^{f}$ a] | անփոխադրելի | 2 | |
| 17ը | a [(SjS)$^{f}$ a] | անկերակրելի | 1 | |
| 17թ | a (SjS$^{f}$a) | անվերակացու | 2 | |
| 17ժ | a [(SjS) a] | անմեկուսի | 1 | |
| 17ժա | a [(SjS) a] | անզանազանել | 1 | |
| 17ժբ | a {[(Sa) jS$^{f}$] a} | անիմաստասիրելի | 1 | |
| 17ժգ | a [(Sa) j (Sa)] | ներշրջանապտույտ | 1 | |
| | Ընդամենը | | 17 | 1,1 |
| 18 | a[ (SS) a] | մակեռանկինի | 2 | |
| 18ա | a [(SS$^{f}$) a] | անակնունելի | 5 | |
| 18բ | a [(SS$^{f}$) a] | անժուժկալի | 3 | |
| 18գ | a [(SS) a] | անյեղյեղուկ | 2 | |
| 18դ | a [(SS) a] | անկասկածաւոր | 1 | |
| 18ե | a [(SS)$^{f}$ a] | անչարչարելի | 2 | |
| 18զ | a [(SS)$^{f}$ a] | անբարբառելի | 3 | |
| 18է | a (SSa) | անվերարկու | 2 | |
| 18ը | a (SSa) | անմտառու | 2 | |
| | Ընդամենը | | 22 | 1,4 |



| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| 19ա | a {[(Sa) S$^{f}$] a} | անարտաքսրելի | 1 | |
| 19բ | a [(aSS$^{f}$) a] | անիբացբառնալի | 2 | |
| 19գ | a [(aS$^{f}$S$^{f}$) a] | անիդուրսելանելի | 1 | |
| 19դ | aj [(SS) a] | մակամտածութիւն | 1 | |
| | Ընդամենը | | 5 | 0,3 |
| 20ա | a {[a(SS)]S} | անիմիկոյթաւալ | 1 | |
| 20բ | a {S[(SS) a]} | անշարակնածութիւն | 1 | |
| | Ընդամենը | | 2 | 0,1 |
| | Ընդհանուր թիվը | | 1547 | 100,0 |

## ՎԵՐՋԱԾԱՆՑՈՒՄ

*Ուսումնասիրվող շրջանի բառակազմական համակարգում վերջածանցման կաղապարներն աչքի են ընկնում թե՛ ավելի մեծ բազմազանությամբ, թե՛ իրացման ավելի լայն հնարավորություններով, քան նախածանցման կաղապարները: Բացի այն, որ վերջածանցներն իրենք ավելի մեծ թիվ են կազմում, քան նախածանցները, վերջածանցավոր կազմությունների քանակի ավելացման մեջ մեծ դեր է խաղում նաև վերջածանցների զուգորդելիությունը՝ ինչպես նշվել է, մեկ բառը կարող է ստանալ մինչև չորս վերջածանց, իսկ երկու վերջածանցի զուգորդությունը բավական հաճախադեպ է (12,5%), ինչ չէր կարելի ասել նախածանցների մասին (0,9%): Դրան հակառակ, վերջածանցները անհնար է ենթարկել այնպիսի հստակ խմբավորման, ինչպես նախածանցները: Կարելի է առանձնացնել միայն ածանցների գործառական խմբեր՝ այս կամ այն խոսքի մասը կերտելու նրանց գործառույթի համաձայն (գոյականակերտ, ածականակերտ, մակբայակերտ և այլն): Իմաստային տեսակետից նրանք խայտաբղետ պատկեր են ներկայացնում:*

*Ինչպես վերջածանցման, այնպես էլ նախածանցման կաղապարների իրացումների միջև մեծ տարբերություններ կան կաղապարների գործառական բեռնվածության և բառակազմական միավորների գործունության*

տեսակետից։ Գրեթե սահմանափակում չունեցող՝ վերջածանցավոր բառերի բաց խմբեր կազմող ածանցների (–ումն, –ութիւն, –ական, –իչ, –ող) կողքին կան հազիվ մեկ-երկու տասնյակ բառերով, իսկ երբեմն եզակի օրինակներով վկայված վերջածանցներ, որոնց իմաստային և գործառական առանձնահատկությունները անգամ օրինակների սակավության պատճառով բավարար հստակություն չունեն։ Ուսումնասիրվող շրջանում, ինչպես արդեն նշվել է, պահպանվել են նաև մթագնած և իրենց բառակազմական գործառույթը կորցրած վերջածանցներ, որոնք տրոհվում են միայն ազատ արմատների կամ այլ բառերում պահպանված կապված արմատների և նույնատիպ ածանցների համեմատությամբ։ Չնայած դրան, ստորև կաղապարների իրացումների մեջ բերվում են նաև նշված տիպի օրինակներ, եթե, անշուշտ, նրանք լրիվ մթագնած չեն, և դրանց առանձնացման համար ստուգաբանական հատուկ քննության անհրաժեշտություն չկա (ինչպես՝ նորոգ, օգտակար, վնասակար, խաւարչտին և այլն)։

Կառուցվածքային տեսակետից վերջածանցման կաղապարները կարելի էր թերևս բաժանել երկու խմբի՝ վերջածանցի հոդակապով կամ անհոդակապ կցման հատկանիշի հիման վրա։ Հայտնի է, որ գրաբարի (և ոչ միայն գրաբարի) զգալի թվով վերջածանցներ (խոսքն, անշուշտ, բաղաձայնով սկսվող ածանցների մասին է) հիմքին են միանում հոդակապի օգնությամբ։ Ըստ ծագման այդ հոդակապը շատ դեպքերում կապվում է հիմքերի թեմատիկ ձայնավորի հետ և մյուսների վրա տարածվել է համաբանաբար։ Սակայն հետագա զարգացման ընթացքում այդ հոդակապը սերտաճել է ածանցի հետ (հմմտ. անվանական և բայական հիմքերի թեմատիկ ձայնավորների վերատարրալուծումն ու անցումը վերջավորություններին ու հոլովիչներին)[77] և ածանցավոր բառերի կազմում տրոհվում է ստուգաբանորեն ու գիտակցվում հատկապես բառաբարդման հոդակապավոր կաղապարների համաբանական հենարանի շնորհիվ։

Ինչ վերաբերում է միևնույն ածանցի հոդակապավոր և անհոդակապ տարբերակներին, ապա այս հարցում նրանց առկայությունն էական դեր չի խաղում, քանի որ անհոդակապ տարբերակներն ինքնին խիստ սահմանափակ կիրառություն ունեն, իսկ իմաստային ու գործառական տեսակետից որոշ չափով հեռացել են հոդակապավոր տարբերակներից։ Այսպես՝ –կան ածանցով վկայված է ընդամենը մի քանի բառ՝ **բժկան, գուժկան, մուրացկան, վաշտկան, վարձկան** (մի մասը փոխառյալ ձևեր են), **–ուոր(ւոր)**-ով՝ **զինուոր, ջրուոր, վարձուոր**, որոնք բոլորը, բացի **բժկան**ից, գոյականներ են՝ nomen agentis-ի իմաստով, և ոչ թե ածականներ, ինչպես **–ական**-ով և **–աւոր**-ով կազմությունները, **բար**-ը կիրառվում է



միայն հունաբան դպրոցի քերականական կամ տրամաբանական գրքերում՝ օրինակները ներմուծելու համար՝ **այսբար, ո՞րբար** (ընդամենը 2 բառ), **–ագոյն**-ի **–գոն(գոյն**-ից) տարբերակը նույն կիրառությունն ունի՝ **ո՞րգոն**, **–գին** ածանցով ուսումնասիրվող շրջանից վկայված ունենք ընդամենը 2 բառ՝ **կաթոգին, ուժգին**, ընդ որում առաջինն այն եզակի դեպքերից է, երբ պահպանվել է հիմքի նախկին՝ **ո**-ով ձայնավորումը՝ հետագայում տարածված **ա**-ի փոխարեն։ Այնպես որ կարելի է ասել հոդակապավոր և անհոդակապ տարբերակները որոշ իմաստով ինքնուրույն ածանցների արժեք են ստացել։ Այդ պատճառով մենք այստեղ վերջածանցման կաղապարների մեջ հատուկ հոդակապավոր ենթակաղապար չենք առանձնացնում, բայց ածանցների հոդակապավոր և անհոդակապ տարբերակները միմյանցից լրիվ անջրպետված չներկայացնելու համար բերում ենք իրար տակ և ոչ թե ընդհանուր այբբենական կարգով։

Վերջածանցների, ինչպես և նախածանցների մեջ, կարելի է առանձնացնել, այսպես կոչված, ածանցակերպներ, ինչպես՝ **զան, պէս, պան** և այլն, քանի որ սրանք որոշ չափով պահպանել են իրենց բառային իմաստը և մանավանդ հանդես են գալիս նաև որպես անկախ արմատներ կա՛մ բառաբարդումների մեջ որպես առաջին բաղադրիչ, հատկապես կրկնավորների կազմում՝ **պէսպէս, պէսպիսութիւն, անզանազան, զանազանութիւն**, կա՛մ ցուցական դերանունների և դերանվանական մակբայների մեջ՝ **այսպէս, ինչպէս, որպէս, որզան** և այլն։ Վերջածանցման կաղապարներում ածանցակերպները չեն առանձնացվում և ներկայացվում են բուն ածանցների հետ միասին։

Ստորև ներկայացնում ենք գրաբարի վերջածանցման կաղապարները համապատասխան օրինակներով։ Քանի որ հիմքերի կրած հնչյունափոխությունների բոլոր տիպերը ներկայացվել են հիմքակազմության քննության ժամանակ, այստեղ դրանք առանձին-առանձին չենք նշում, այլ միայն բերում ենք վկայված օրինակները Տ-ով (հնչյունափոխված հիմքի պայմանական նշանով) օժտված ենթակաղապարների տակ։ Ընդ որում, միևնույն ածանցն ունեցող բառերը միևնույն տեղում համախմբված ներկայացնելու նպատակով խմբավորում ենք մաքուր, հնչյունափոխված և քերականական ձևավորում ունեցող հիմքերով ածանցավոր կազմությունները, այլապես ստիպված կլինենք ածանցների գրեթե նույն ցանկը (իրենց համապատասխան օրինակներով) ներկայացնել երեք անգամ տարբեր ենթակաղապարների տակ։

*Հնչյունափոխության հատուկ դեպք է ածանցին սերտաճած հոդակապի և հիմքի վերջի* **-ի** *ձայնավորի ձուլումը* (**ի+ա>ե**), *որ նշանակում ենք* Sa *ենթակաղապարով:*

*1.* Sa, *1ա.* Sa, *1բ.* Sa, *1գ.* $S^f$a*—միարմատ մեկ վերջածանցով կազմություններ: Գրաբարի բառակազմության ամենագործուն կաղապարը, որ վկայված օրինակների քանակով գերազանցում է նույնիսկ բառաբարդման ամենահաճախական՝* SjS *կաղապարին: Թվարկում ենք մեր ընտրանքում հանդիպող բոլոր վերջածանցները, օրինակները տալով միևնույն սկզբունքով (տարածված ածանցներից՝ սակավաթիվ, իսկ սահմանափակ թվով դեպքերը՝ բոլորը):*

**–աբար** *ազատաբար, ախորժաբար, բարձրաբար, հրաշաբար, սահմանաբար և այլն*

*1ա.* Sa *արուաբար, բազմաբար, նրբաբար, քինաբար և այլն*

*1բ.* Sa *ընտանեբար, մոլեբար, որդեբար*

*1գ.* $S^f$a *1. անվանական հիմքեր՝ առնաբար, կանացաբար/կանանցաբար, մարդկաբար, 2. բայական հիմքեր՝ զգայաբար, գոյացաբար, մոռացաբար, յարելաբար, քաղցելաբար*

**–բար** *այսբար, որբար*

**–ագար** *աշագար, լեզուագար, խելագար*

*1ա.* Sa *գլխագար, միջագար*

**–ագին** *ահագին, գոռոզագին, դանդաղագին, դիւրագին, երերագին, զայրագին, զուարթագին, թեթևագին, խանդաղատագին, հզօրագին, հիւանդագին, ողբագին, ողորմագին, տապագին, տառապագին, տօթագին, ցաւագին, ցօղագին*

*1ա.* Sa *դիւագին, զազրագին, մթագին, սրտագին, վշտագին, տղմագին, տրտմագին*

*1բ.* Sa *մոլեգին*

**–գին** *կաթոգին, ուժգին*

**–ագոյն** *ագահագոյն, դառնագոյն, դիւրագոյն, երկայնագոյն և այլն*

*1ա.* Sa *անդրանկագոյն, ամրագոյն, առաքինագոյն, զգուշագոյն, հիքագոյն և այլն*

*1բ.* Sa *ընտանեգոյն, յոռեգոյն*

*1գ.* $S^f$a *առնագոյն, իմացագոյն*

**–գոյն** *այնգոյն, նախգոյն*

**–գոն** *որգոն*

**–ազ** *նաւազ*



**–ազան** *ամենազան, աստուածազան, զարմանազան, հրաշազան*

*1ա.* Sa *բազմազան, սրբազան*

**–զան** *որզան*

**–աժէտ** *ախտաժէտ, նենգաժէտ, որկորաժէտ*

**–ած**—*անկած, ասած, արկած, աւերած, բախած, բարդած, գոգած, գործած, գուպարած, դրօշած, դաժած, զատած, խափանած, ծեծած, կազմած, կատաղած, կատարած, կարգած, կոտորած, հասարակած, հատած, հարած, հերձած, հոգած, մատնած, յազած, ներկած, շարած, ողորմած, որմած, սահմանած, ստուերած, տապալած, տարած, ցաւած, փորած, փախած, քերթած*

*1ա.* Sa *գթած, գծած, թրջած, թրքած, խախտած, կողոպտած, կռած, կտրած, ձուլած, շինած, վիժած, վիրած, վրիպած, փլած, քնած*

*1գ.* $S^f$a *միայն բայական հիմքերով՝ արարած, այրեցած, ասացած, հայեցած, մուրացած, նայեցած*

**–ուած** *անկուած, անջատուած, առուած, արդուած, արկուած, աւելուած, աւերուած, գործուած, դարձուած, դրօշուած, եղծուած, զետեղուած, զանգուած, խայծուած, խառնուած, ծակուած, կազմուած, կաթուած, կապուած, կատարուած, կիտուած, կոտորուած, հայցուած, հաստուած, հատուած, հարուած, հարցուած, հեղուած, հերձուած, մածուած, մանուած, մանրուած, մաշուած, յանցուած, յարմարուած, յաւելուած, յօդուած, յօշուած, ներկուած, պատառուած, պատուած, պարզուած, սկսուած, սպառուած, ստեղծուած, վառուած, տեսուած, փորուած, քերթուած, քերուած*

*1ա.* Sa *գիտուած, դիպուած, լուծուած, խնդրուած, կշռուած, կտուած, կցուած, հեղուսուած, յօրինուած, շինուած, շրջուած*

*1գ.* $S^f$a *միայն բայական հիմքերով՝ արարուած, այրեցուած, ասացուած, ընթերցուած, իմացուած, կալուած, հայեցուած, մնացուած, ստացուած, ցաւացուած*

**–ածոյ** *խարտածոյ, խափանածոյ, ծալածոյ, կոփածոյ, կռածոյ, հալածոյ, հիւսածոյ, մաշածոյ, մթերածոյ, յազածոյ, ներկածոյ, տաշածոյ, քանդակածոյ, քերածոյ*

*1ա.* Sa *կուտածոյ, կռածոյ, ձուլածոյ*

*1գ.* $S^f$a *մուրացածոյ*

**–ուածոյ** *անկուածոյ, խառնուածոյ, մանուածոյ, մաշուածոյ, յօդուածոյ, պատուածոյ, ստեղծուածոյ, քաղուածոյ*

*1ա.* Sa *կցուածոյ*

**–ակ**[1] *աղիւսակ, անձրևակ, անտառակ, առասանակ, գաւառակ, գետակ, դասակ, դրօշակ և այլն*

*1ա.* Sa *անրակ, բլթակ, գիսակ, գնդակ, լծակ, լճակ, կնդակ, յակընթակ, նշտրակ, շամփրակ, սունակ, սռնակ, վզենակ, տնակ, քաննակ, աղամնեակ, գինեակ, գրգլեակ, ընտանեակ, յոռեակ, ոսկեակ, որդեակ, պատանեակ, ջորեակ*

*1բ.* Sa *արեկ (արի+ակ)*

**–ակ$^2$** *ազատակ, ախորժակ, անուշակ, աւերակ, բաւակ, բիւրակ, բոլորակ, գործակ, եզակ, եռակ, երգակ, երևակ, երկակ, էակ, ընդելակ, լուղակ, խաղակ, խառնակ, խարդաւանակ, կամակ, կենդակ, համակ, համբարակ, հասակ, հաւակ, հետևակ, հերձակ, հրոսակ, ղուղակ, ղօղակ, ճեղանակ, մաճառակ, միակ, մոլորակ, ոլորակ, որակ, պահակ, սխալակ, սպանակ, սովորակ, վեցակ, վարձակ, տեսակ, քանակ, քանդակ, քառակ*

*1ա.* Sa *բնակ, բուժակ, բուսակ, գունակ, դիտակ, դիմակ, ելուզակ, երաժշտակ, թրթրակ, խնդրակ, խուզակ, կապուտակ, կիտակ, կուտակ, կրթակ, հանգիտակ, հրաւիրակ, միջակ, յուզակ, նուիրակ, ուռեակ, պատուիրակ, վիժակ, վիճակ, վրիժակ, վրիպակ, տեղեակ, ցուցակ, օրինակ*

**–ական** *ազատական, արքայական, խոհական, մոգական, ուրախական, պակասական և այլն*

*1ա.* Sa *գինական, ըղձական, կուսական, նուիրական, ցուցական և այլն*

*1բ.* Sa *ընտանեկան, հոգեկան, մոլեկան, տարեկան*

*1գ.* S$^f$a *1. անվանական հիմքեր՝ անուանական, առնական, աստեղական, դիւցական, եռեղական, իմոյական, իսկզբանէական, իւրական, կայսերական, կանանցական, մարդկական, սերմանական, 2. բայական հիմքեր՝ ազդեցական, աճեցական, առնլական, գնացական, գոյական, եղական, եռացական, զգայական, ըմպելական, ընթացական, իմացական, լալական, խաղացական, կայական, ճանաչական, մատուցական, մեղանչական, մնացական, ոստնական, սիրելական, ստացական, տրական*

**–կան** *ղատկան, յախերկան, վաշտկան, վարձկան*

*1ա.* Sa *բծկան, գուժկան*

*1գ.* S$^f$a *մուրացկան*

**–ակար** *կամակար, համարակար, հրամանակար, վնասակար*

*1բ.* Sa *օգտակար*

**–ակեր/ակեար** *աղօթակեր/աղօթակեար, խոհակեր, համօղակեր*

**–կեար** *աղօթկեար*



**–ակի** *արշաւակի, երևակի, երկակի, եօթնակի, ընդելակի, թեթևակի, կողմնակի, կորովակի, յոգնակի, յոլովակի, որոշակի, սովորակի, քանակի, քառակի*

*1ա.* Sa *կշռակի, հնգակի, ուղղակի*

*1գ.* S$^f$a *կողմանակի*

**–այ** *կամայ, որկորայ*

**–ային** *ազգային, ամառնային, ամպրոպային, աշխարհային, աստղային, աստուածային և այլն*

*1ա.* Sa *ամսային, անդնդային, գարնանային, երկնային, գրային և այլն*

*1գ.* S$^f$a *միայն անվանական հիմքերով՝ աշնանային, գարնանային, մարդկային, մեղացային, իւրային, իւրեանցային, ձերային, մերային*

**–այն** *ամենայն, գիշերայն, ժամայն, համայն, ճանապարհայն, միայն (նախկինում տրոհելի, այժմ սերտաճած հանդես է գալիս հետևյալ բառերում՝ երկայն, որովայն, ոստայն, ունայն)*

**–այնի** *ամարայնի, ձմերայնի*

*1ա.* Sa *գարնայնի*

*1գ.* S$^f$a *գարնանայնի*

**–այք** *աշխարհայք, գորդայք, եպիկուրայք, հռետորայք, պիւթագորայք*

*1գ.* S$^f$a *աշնանայք*

**–ան$^1$** *ապուան, աշխարան, արգելան, արժան, բաժան, գլան, դեղձան, ըմպան, ժաման, իշխան, խարան, խեղդան, խոզան (?), խոտան, կայան, կարան, կենդան, կոխան, ղուղան, նենգան, նշմարան, ոլորան, պատան, տողան, փական, փոխան, փորձան*

*1ա.* Sa *դիպան, զուգան, խթան, խուժան, կթան, կռան, կցան, հրաւիրան, մկան, մսան, շունչան, շրջան, պաճուճան, պատուիրան, ջնջան, սրբան, վզան, փրկան*

*1գ.* S$^f$a *թռչան*

**–ան$^2$** *ձիան, 1ա.* Sa *իշան*

**–անակ** *այսանակ, գանձանակ, (յ)եղանակ, ժամանակ, մրցանակ, յաղթանակ, փոխանակ*

*1ա.* Sa *նշանակ, շրջանակ*

**–անակի** *շուրջանակի*

*1ա.* Sa *փութանակի*

**–անդ** *1ա.* Sa *դրանդ*

**–անդակ** *այլանդակ*

**–անդի** *վտարանդի*

**–անի**[1] *ամարանի, աղանի, դողանի, հովանի, ձմերանի, մօրուանի, տողանի (նախկինում տրոհելի՝ հօլանի, հոմանի և այլն)*

*1ա.* S̲a *լեզուանի, պիտանի*

**–անի**[2] *ազատանի, աւագանի, կրականի, նամականի, վնասանի, քաղաքանի*

*1ա.* S̲a *գլխանի, երիցանի, կանանի*

**–անոց** *աղքատանոց, աղօթանոց, ամարանոց, աշակերտանոց, ապարահանոց, արձականոց, արուեստանոց, աւագականոց, բոզանոց, գայլանոց, եզնանոց, ելանոց, եղբայրանոց, եպիսկոպոսանոց, երիտասարդանոց, զոհանոց, թիկ(ն)անոց, լանջանոց, լորանոց, կապեղանոց, կողմանոց(")*[78]*, համբարանոց, հեծանոց, հիւանդանոց, հովանոց, ձմերանոց, ճախանոց, մարգարէանոց, մթերանոց, որբանոց, պարկեշտանոց, սարկաւագանոց, սպանդանոց, վկայանոց, վաճառանոց, օթանոց, օտարանոց*

*1ա.* S̲a *բժշկանոց, գլխանոց, գրանոց, դիտանոց, զինանոց, ընթանոց, խնկանոց, կանանոց, կուսանոց, կռուանոց, կրծանոց, մեղուանոց, մոխրանոց, նուիրանոց, պանդխտանոց, պոռնկանոց, ջրանոց, օրկանոց/ուրկանոց*

*1բ.* S̲a *այրենոց (այրի+անոց)*

*1գ.* $\mathrm{S^{f}a}$ *առնանոց*

**–անուտ** *հոսանուտ, յորձանուտ*

*1ա.* S̲a *շիջանուտ*

**–անց** *ածանց, դիւրանց (այս ածանցով մյուս բառերը երկրորդային բաղադրյալ հիմքերով են)*

**–անք**[1] *առականք, աղաչանք, ամօթանք, աշխատանք, արշաւանք, դադարանք, եպերանք և այլն*

**–անք**[2] *1ա.* S̲a *մարեմանք*

*1ա.* S̲a *ընտրանք, խտրանք, խրախուսանք, տրփանք, հրապուրանք և այլն։*

*1գ.* $\mathrm{S^{f}a}$ *կալանք*

**–անօր** *անդանօր, աստանօր, ուրանօր*

**–աշ** *1բ.* S̲a *աղուաշ*

**–ապան** *բանտապան, բարապան, բարձապան, բողապան, դաստապան, դարապան, դիւանապան, զանկապան, լանջապան, համբարապան, մահապան, պահապան, պանծապան, պարեկապան, պարտապան, վանապան, վարապան*



*1ա.* S̲a *դռնապան, սենեկապան, սրսկապան ("), սռնապան, փղապան*

**–պան** *մատակպան, մարզպան, պահպան*

*1ա.* S̲a *պարտիզպան*

**–ապանակ** *վարապանակ*

*1ա.* S̲a *գրապանակ, կշտապանակ*

**–ապատիկ** *ամենապատիկ, բիւրապատիկ, հազարապատիկ, հարիւրապատիկ, յօդնապատիկ, յոլովապատիկ*

*1ա.* S̲a *բազմապատիկ, հնգապատիկ*

**–պատիկ** *երեքպատիկ, երկպատիկ, եօթնպատիկ*

**–ապէս** *առատապէս, ամէնապէս, էապէս, իսկապէս, նմանապէս, սոսկապէս, քաջապէս և այլն*

*1ա.* S̲a *զազրապէս, խստապէս, ծուլապէս, ճշմարտապէս, ստուգապէս, սրբապէս, օրինապէս և այլն*

*1բ.* Sa *հոգեպէս*

*1գ.* $\mathrm{S^{f}a}$ *1. անվանական հիմքեր՝ առնապէս, եղբօրապէս, մարդկապէս, 2. բայական հիմքեր՝ գոյապէս, սիրելապէս*

**–առոտ** *կարճառոտ, համառոտ*

**–աստ** *նաւաստ*

**–աստան** *ակաստան, ամարաստան, անգաստան, ապաստան, Ատտիկէաստան, արմաւաստան, դատաստան, դարաստան, խուժաստան, Հայաստան, հեռաստան, Հրէաստան, ձիաստան, Մարաստան, մարգաստան, մուրտաստան, շահաստան, օտարաստան*

*1ա.* S̲a *բուրաստան, կուսաստան, Տաճկաստան*

*1բ.* S̲a *այգեստան, Ասորեստան, տանեստան*

**–աստուն** *ամարաստուն*

**–ատ**[1] *հաստատ*

**–ատ**[2] *ազգատ, ականջատ, ակնատ, բացատ, ծոռատ, կառափնատ, հեղեղատ, ունչատ, պարուտակատ, ջոկատ, փայտատ, քաղթնատ*

*1ա.* S̲a *գունատ, լեզուատ, կնատ, կրճատ, հրատ, միջատ, պնչատ, թլփատ*

**–ատակ** *յիշատակ*

**–ար** *արդար, զարդար, մեծար, մթար, մոլար, պատահար, փողար, (նախկինում տրոհելի, իսկ ուսումնասիրվող շրջանում արդեն սերտաճած այս ածանցը գտնում ենք դալար, դալար, տապար բառերում)*

**–արան** *անցարան, զոհարան, լոգարան, երգարան, կտակարան, խոտարան և այլն*

*1ա.* Sa *առաքինարան, բժշկարան, գրգարան, լուարան, լուսարան, խնկարան, կրթարան, նստարան, պոռնկարան, ջնջարան, սրբարան, փորկարան*

*1գ.* S$^{f}$a—*միայն բայական հիմքեր՝ զգայարան, ընթացարան, լուացարան*

**-արէն/երէն** *լիկայոնարէն, հռովմէարէն, հոոոմարէն, հրէարէն, պարթևարէն, փոխարէն, քաղդէարէն, ասորերէն, դաղմատերէն, հրէերէն, հայերէն, հոոոմերէն/հոոոմայերէն/հռովմայերէն/հռովմերէն, ողբերէն, բստամբակերէն, քրիստոսերէն*

*1ա.* Sa *յունարէն/յուներէն*

*1գ.* S$^{f}$a *օրէնսերէն*

**-արիմ/-երիմ** *հաւատարիմ, ոխերիմ*

*1ա.* Sa *մտերիմ*

**-աց** *գիշերաց, խաղաց, հասարակաց, 1ա.* Sa *դիմաց*

**-ացի/-եցի**[1] *այրացի, արդարացի, աքացի, բախտացի, բառացի, բերանացի, խելացի, հայացի/հայեցի, մուրցացի, օրացի*

*1ա.* Sa *արեացի, ծղացի, կանացի, մտացի*

*1գ.* S$^{f}$a *առնացի, ձերբացի*

**-ցի** *հարևանցի*

*1ա.* Sa *բոնցի*

**-ացի/եցի**[2] *ափացի, արաբացի, տիտանացի, քաղաքացի և այլն. աքայեցի, եբրայեցի, հռովմայեցի, մանիքեցի, նիկողայեցի, սադուկեցի, սոդոմայեցի, փարիսեցի*

*1ա.* Sa *բաբելացի, բլրացի, դրացի, կիպրացի, մծբնացի, փղշտացի*

**-ացու** *աչացու, ապականացու, խաղաղացու, հարսնացու, մահացու, մարտացու*

*1գ.* S$^{f}$a *սերմանացու*

**-աւ** *աղագաւ, դժուարաւ, դիւրաւ, իրաւ, խոտանաւ, կամաւ, կարգաւ, հարկաւ, հեշտաւ, հրապարակաւ, ճեպաւ, մեծաւ, պատճառաւ, սակաւ, տակաւ, տագնապաւ*

*1ա.* S$^{f}$a *բարեաւ, բնաւ, զգուշաւ, կանխաւ, ստիպաւ*

**-աւանդ** *գահաւանդ, դարաւանդ, կարաւանդ*

**-աւանդակ** *բարձրաւանդակ, գահաւանդակ, սարաւանդակ*

**-աւէտ** *այգաւէտ, արեգաւէտ, բոլորաւէտ, երանաւէտ, լօռաւետ, խաշնաւէտ, խոտաւէտ, ծառաւէտ, կառաւէտ, կենդանաւէտ, կենցաղաւէտ, հացաւէտ, ճառագայթաւէտ, շահաւէտ, շնորհաւէտ, ուրախաւէտ, փրկաւէտ*



*1ա.* Sa *առաքինաւէտ, գինաւէտ, երջանկաւէտ, ընչաւէտ, թիկնաւէտ, ծաղկաւէտ, կենաւէտ, միգաւէտ, քրքմաւէտ*

*1բ.* Sa *գինեւէտ*

**-աւոր** *ահաւոր, աղեղնաւոր, բանաւոր, դաշնաւոր, ժառանգաւոր, հասակաւոր, պակասաւոր և այլն*

*1ա.* Sa *ամսաւոր, բազմաւոր, գուժաւոր, դիմաւոր, հանդիսաւոր և այլն*

*1բ.* Sa *ագեոր, ալեոր, ատեոր, գոտեոր, կարեոր, հեռեոր, հոգեոր, մայրեոր, ուղեոր, ունեոր, տարեոր*

*1գ.* S$^{f}$a *1. անվանական հիմքեր՝ ականաւոր, կողմանաւոր, ոտանաւոր, սերմանաւոր, 2. բայական հիմքեր՝ գոյաւոր, զգայաւոր*

**-ուոր** *վարձուոր, 1բ.* Sa *գոլորշուոր, զինուոր*

**-բ** *արդեամբ, անձամբ, մասամբ, ողջամբ*

**-բի** *արամբի, կանամբի*

**-եալ** *այս վերջածանցով բաղադրությունները բաց խումբ են ներկայացնում և կարող են կազմվել փաստորեն յուրաքանչյուր բայից՝ հիմնականում անցյալ դերբայի իմաստով, սակայն բազմաթիվ են նաև արդեն ածականի և գոյականի արժեք ստացած բառերը՝ անցեալ, առաքեալ, բարձրեալ, կապեալ, կարօտեալ, պահպանեալ, տառապեալ և այլն*

*1ա.* Sa *անիծեալ, մոլեալ*

*1գ.* S$^{f}$a *միայն բայական հիմքերով՝ այրեցեալ, ատեցեալ, բացեալ, դարձեալ, մածուցեալ, սիրեցեալ և այլն*

*1դ.* S$^{f}$a *թրքացեալ, կթուցեալ, կնացեալ, կնճթացեալ, հիքացեալ և այլն*

**-եակ** *բիւրեակ, երկեակ, եօթնեակ, թամբատեակ, իննեակ, ինքնեակ/ինքնեկ, խաւեակ, հազարեակ, հարիւրեակ, հինգեակ, մաշկեակ, ջերմնեակ, սպասեակ վեցեակ, տասնեակ, քառեակ*

*1ա.* Sa *խշտեակ, հնգեակ, յիսնեակ, ուղղեակ*

**-եամն** *այծեամն*

**-եայ** *ադամանդեայ, աղիւսեայ, անդեայ, անձնեայ, աջեայ, հասակեայ, մաշկեայ, որկորեայ և այլն*

*1ա.* Sa *բրդեայ, եղնեայ, ծաղկեայ, կաշեայ, կճեայ, ջղեայ, սրտեայ, քնեայ, քրիստոնեայ և այլն*

*1գ.* S$^{f}$a *միայն անվանական հիմքեր՝ առնեայ, ասուեայ, ասեղեայ, գեղջեայ*

**-եայն** *1գ.* S$^{f}$a *լռելեայն*

**-եան**[1] ադամանդեան, ադամեան, ամանակեան, առաւօտեան, աս-տուածեան, արդեան, բաժակեան, եդեմեան, երեքեան, եօթնեան, հազա-րեան, հայկեան, ներբողեան, ովկիանեան, պատեան, սելեւկեան, ստոյի-կեան, տապեան, փարաւոնեան, փիւնիկեան, քրիստոսեան և այլն

1ա. Sa գունեան, գաւթեան, երիկեան, թզեան, կանգնեան, Մովսի-սեան, յաւիտեան, ուղկեան, չնչեան

1գ. S'a կայեան

**-եան**[2] բերդեան, գիւղեան, գործեան, խողեան, հիւպատեան, մոգեան, մորթեան, նախարարեան, նոխազեան, քաջեան

1ա. Sa գեղեան, գրեան, թղթեան

**-եաշ/էշ** խարտեաշ/խարտէշ

**-եար** բանեար, որեար/օրեար, վարժեար

**-եր** վաներ

**-եաւ** առաջեաւ, գիրեաւ, կենդանեաւ, հաւաստեաւ, ստորեաւ

1ա. Sa զգուշեաւ

**-եկան** շայեկան/շահեկան

1ա. Sa հնգեկան

**-եկի(ն)** եօթնեկին, հինգեկին, տասնեկին

1ա. Sa հնգեկին, հիսնեկին

**-եղ** ահեղ, անձնեղ, աչեղ, արագեղ, զօրեղ, ինքնեղ, կարշնեղ, համեղ, հանճարեղ, հզօրեղ, հիւթեղ, ճաճանչեղ, ուժեղ, ուշեղ, տաշեղ

1ա. Sa ընչեղ, թիկնեղ, մարմնեղ, շքեղ, պտղեղ, քաղրթեղ

1գ. S'a 1. անվանական հիմք՝ ասուեղ, 2. բայական հիմք՝ փոյեղ

**-եղէն** աղբեղէն, ամպեղէն, աստուածեղէն, ասրեղէն, արծաթեղէն, աւազեղէն, բանջարեղէն, բեհեզեղէն, բոցեղէն, դալարեղէն, երկաթեղէն, խոտեղէն, խորշեղէն, կաւեղէն, կտաւեղէն, հանդերձեղէն, հոգեղէն, հո-ղեղէն, հողմեղէն, ձիւնեղէն, մազեղէն, մաշկեղէն, մրեղէն, մորթեղէն, մո-մեղէն, նիւթեղէն, ոգեղէն, սառնեղէն, ստեղէն, տարրեղէն, փայտեղէն, քարեղէն, օդեղէն

1ա. Sa ապակեղէն, գարեղէն, գինեղէն, ընչեղէն, լուսեղէն, խեցե-ղէն, հրեղէն, մարմնեղէն, մսեղէն, ոսկեղէն, ջրեղէն, փշեղէն, քրձեղէն

1գ. S'a 1. անվանական հիմք՝ մարդկեղէն, 2. բայական հիմք՝ գո-յեղէն

**-եղի** աղտեղի

1ա. Sa մսեղի

**-եմ** համեմ, խոհեմ

**-եմն** երբեմն, ուստեմն, ուրեմն



**-ենի**[1] արմաւենի, դարիսենի, խնձորենի, մորենի, նշդարենի, ուռենի, սեխենի, վարդենի

1ա. Sa դեղնենի, դդմենի, դմռնենի, թզենի, թթենի, թթուենի, խըն-կենի, ձիթենի, նռնենի

**-ենի**[2] աղուեսենի, այծենի, բորենի, գայլենի, գառնենի, խոզենի, ուլենի

1ա. Sa կնգմենի, սամուրենի

**-ենի**[3] արքայենի, դառնենի, կատաղենի, հայրենի, մայրենի, վայրե-նի, քաղցրենի, օղենի

1ա. Sa լրբենի

1գ. S'a անվանական հիմք՝ քաղցուենի

**-երեակ** եօթներեակ, հինգերեակ, վեցերեակ, տասներեակ

1ա. Sa յիսներեակ

**-երիր** վեցերիր

**-(ե)րորդ** երկրորդ, երրորդ, չորրորդ, հինգերորդ, վեցերորդ, եօթնե-րորդ, ութերորդ, իններորդ, տասներորդ, քսաներորդ, հարիւրերորդ, հա-զարերորդ

1ա. Sa քաներորդ (քանի+երորդ)

**-եցիկ** գեղեցիկ

**-եւ** արդարև, առաջև, հետև, ստորև

**-եւին** ամենեւին

**-եք** բարեք, երբեք, ուստեք, ուրեք

**-եքեան/-եքին** ամենեքեան, բոլորեքեան, երկոքեան, երեքեան, չո-րեքեան, հինգեքեան և այլն. ամենեքին, բոլորեքին և այլն (նույն օրի-նակները -եքին տարբերակով), 1ա. Sa հնգեքեան, 1գ. S'a եօթանեքին

**-է** հետէ

**-էճ** բուէճ

**-էն** այսրէն, անդէն, անդրէն, աստէն, արդէն, նկարէն

1գ. S'a ինձէն, ձեզէն, մեզէն, քեզէն

**-էք** այծէք, ձեռէք

**-թար** վատթար

**-ի**[1] ազգի, աղի, այրի, այդի, անագանի, անդի, առաջի, աստի, ար-ծաթի, աւելի, գործի, դալարի, թերի, չարի, վայրի և այլն

1ա. Sa արի, բնի, բռնի, կծծի, ձրի, պղնձի

1գ. S'a միայն անվանական հիմքեր՝ ականի, անուանի, աշնանի, առնի, ասուի, արանցի, գարնանի, շանի, մատանի

-ի² բարտի, բեեկնի, դափնի, եղևնի, խնձորի, ծիրանի, կաղամախի, հաճարի, հացի, մայրի, նշդարի, ուռի, սոսի, տանձի, սղոցի, ցաքի

1ա. Sa ընկուզի, կաղնի, հացնի, մամխի

-ի³ այս ածանցով կազմվում է բաղադրությունների բաց խումբ՝ հիմնականում ապառնի դերբայի նշանակությամբ, սակայն կան նաև մեծ թվով գոյականացած և ածականացած ձևեր. վկայված բոլոր ձևերը պատկանում են S$^{f}$a ենթակաղապարին, քանի որ բոլորն էլ սերում են քերականական ձևավորում ունեցող հիմքից. այդ հիմքը անորոշ դերբայի ձևն է իր բոլոր տարատեսակություններով՝ պարզ, սոսկածանցավոր, պատճառական կառուցվածքի և տարբեր լծորդությունների. ազանելի, արգելլի, ջենլի, ըղձալի, ընթեռնելի, ընթերցանելի, կամելի, կարելի և այլն։

-իլ կաթիլ, տեսիլ

-իկ¹ այրիկ, աչիկ, աստղիկ, գիւղիկ, եղեգնիկ, թանիկ, մասնիկ, վայրիկ, քաջիկ և այլն

1ա. Sa բունիկ, դստրիկ, երկրիկ, ընչիկ, ձկնիկ, մանկիկ, մատենիկ, ջրիկ, տնիկ և այլն

-իկ² այժմիկ, ամիկ, արքայիկ, բարբարոսիկ, գռեհիկ, դայլայլիկ, դաշտանիկ, դժնիկ, ըռազմիկ, թշնամանիկ, խաղաղիկ, հանդարտիկ, մարգիկ, մարտիկ, մուրիկ, ոստանիկ, պահլաւիկ, պատերազմիկ, պարսիկ, պողովատիկ, սաստիկ, տոհմիկ, սպասիկ, վաճառիկ

1ա. Sa բնիկ, գուժիկ, լռիկ, խուժիկ, հնդիկ, մնջիկ

1գ. S$^{f}$a 1. անվանական հիմքով՝ դրանիկ, 2. բայական հիմքով՝ ազդեցիկ, ազուցիկ, աղացիկ, դիացիկ/դիեցիկ, երգեցիկ, զբօսուցիկ, ընկեցիկ, լուացիկ, խաբուսիկ, խաղալիկ, հայեցիկ, հեղձուցիկ, մուրացիկ, ուռուցիկ

-իճ դառնիճ, լուիճ, խառնիճ, կապիճ, կորկոտիճ, հատիճ, ուտիճ, պատեղիճ, պատիճ, թերևս նաև ճահիճ/ճախիճ (հմմտ. ճախին)

-իմ ուշիմ

-ին աջին, առաջին, առաւօտին, աստին, արտաքին, աւազին, բաժին, դառնին, դժուարին, դիւրին, երեքին (երեքեքին-ից), ինքնին, խաւարին, խորին, ծմակին, հնարին, յետին, ոստին, ջերին, ջերմին, ստորին, վերին, վերջին, տաքին, օտարին

1ա. Sa—լուսին, լռին, մթին, միջին, չնչին

1գ. S$^{f}$a—իւրոյին, ձերոյին, մերոյին, քոյին

-ինք դահինք, նախատինք, ստորինք, քրիստոսինք

-իշ բաշխիշ



-իչ բայահիմքերից կազմում է վերջածանցավոր բառերի բաց խումբ՝ հիմնականում ենթակայական դերբայի նշանակությամբ, ընդ որում բայահիմքերը կարող են լինել կամ մաքուր արմատ, կամ ունենալ ամբողջ քերականական ձևավորում (կատարյալի ցոյական հիմք, պատճառականի ձև և այլն). ազատիչ, առաքիչ, բնակիչ, գերիչ, երգիչ, խառնիչ, մատնիչ, ստեղծիչ և այլն

1ա. Sa անիծիչ, բուժիչ, գտիչ, գրգռիչ, լկիչ, լուծիչ և այլն

1գ S$^{f}$a միայն բայական հիմքերով՝ արարիչ, ընթերցիչ, լցիչ, խցիչ, ստացիչ, զարմացուցիչ, լուսացուցիչ, քաղցրացուցիչ, ազատեցուցիչ, ազդեցուցիչ, ապրեցուցիչ և այլն

-իտ յուլիանիտ, քանանիտ

-իր երկիր, չորիր

-իցս երիցս, երկիցս, չորիցս, քանիցս

1ա. Sa զուգիցս, հնգիցս

-իւ ազնիւ, գոյիւ, հազիւ, սաստիւ, սերտիւ, վաղիւ

1ա. Sa լրիւ, խստիւ, ճշգրտիւ, ճշդիւ, ճշմարտիւ, ստուգիւ

-իւղ երկիւղ

-իւն անկիւն, արգիւն, բախիւն, բոմբիւն, գոչիւն, դոնչիւն, լալիւն, խանչիւն, կոչիւն, կոփիւն, ճայթիւն, շարժիւն, սօսափիւն/սօսաւիւն, փայլիւն և այլն

1ա. Sa գուժիւն, դղրդիւն, թնդիւն, հնչիւն, ճչիւն, ննջիւն, շնչիւն, վրնջիւն, տրտնջիւն և այլն

-իւր բերիւր/բեւրիւր «բեւրի»

-իք¹ ապախտիք, աւետիք, բաղանիք, դրուատիք, երախտիք, թեղանիք, խոպոպիք, կարիք, կարծիք, կեղծիք, հարկիք, հաւաստիք, ձողիք, ճապաղիք, չարիք, պատարագիք, պարտիք

1ա. Sa աճեկիք, արմտիք

1գ. S$^{f}$a հարսանիք, սէրմանիք, տանիք

-իք² բայերից կազմում է գոյականներ, սերող հիմքն է անորոշ դերբայը՝ արբելիք, բառնալիք, երանելիք, զարմանալիք, ըմպելիք, ըսելիք, լալիք, լուալիք և այլն

-կէն ժանտկէն, կոճկէն, հիւսկէն, ճանճկէն, որկէն

-կի 1գ. S$^{f}$a լուցկի

-կին երեքկին, կրկին, հինգկին, նախկին, չորեքկին, վեցկին

-կոտ դանդաղկոտ, նախանձկոտ, խռովկոտ, ծարաւկոտ, ծիծաղկոտ, յամառկոտ, յաշաղկոտ, վախկոտ, ցասկոտ

1ա. Sa փութկոտ

1գ. S$^{f}$a միայն բայական հիմքերով՝ զայրացկոտ, ձանձրացկոտ, մոռացկոտ, փախչկոտ

**-կու** յաղթկու, յօժկու/յուժկու

**-ճակ** թնճակ

**-ճան** խրախճան

**-նի** գաղտնի, յայտնի, նախնի

**-շի** բոլորշի, լայնշի

**-ոգ** նորոգ

**-ող**$^{1}$ կազմում է ենթակայական դերբայի բաց խումբը բայական մաքուր կամ քերականական ձևավորում ունեցող հիմքերից՝ ագող, առաքող, առող, ասող, ելող, երգող և այլն

1ա. Sa բուսող, բրող, գիտող, գնող, գտող, դիպող, զրկող և այլն

1գ. S$^{f}$a անիծանող, աշխատեցուցանող, առնող, ասացող, ատեցող, արարող, գոհացող և այլն, այդ թվում նաև անվանական ծագում ունեցող սկզբնահիմքերով՝ ականող, սերմանող

**-ող**$^{2}$ աջող/յաջող, ձախող

**-ոյ** ագոյ, աջոյ, առաջոյ, արգոյ, արտաքոյ, երեկոյ, եփոյ, (դ)այգոյ, հաճոյ, ձախոյ, յարգոյ, յետոյ, վերոյ, վերջոյ

1ա. Sa միջոյ, պիտոյ

**-ոյթ** աւագոյթ, երևոյթ, զայրոյթ, ծերոյթ, սովորոյթ

1ա. Sa ծածկոյթ, ծկոյթ, ձանձրոյթ

1գ. S$^{f}$a երևելոյթ

**-ոյկ** խարոյկ, ձորձոյկ, պարոյկ

**-ոյն** անագորոյն, գիշերոյն, իսկոյն, հանգոյն, ողջոյն, ուրոյն

1գ. S$^{f}$a ձեզոյն, ձերոյն, մեզոյն, քեզոյն

**-ոյց** հանգոյց, ուռոյց, սառոյց, ցասոյց

**-ոյք** ամօթոյք, բաշխոյք, բարոյք, գահոյք, գործոյք, ժամոյք, խրնճոյք, խորովոյք, հաճոյք, հիւրոյք, յետոյք, չափոյք

1ա. Sa պիտոյք

**-ով** բարով, դիւրով, լիով, խնամով, ճեպով, մեղմով, չափով, պարապով

1ա. Sa կիսով, ճշդով, ստիպով, փութով

1գ. S$^{f}$a միայն բայական հիմք՝ տեսանելով «տեսքով»

**-ովին** բոլորովին, երամովին, խալամովին, կարճ(ն)ովին, ճարպովին

1ա. Sa գլխովին, ընչովին

1գ. S$^{f}$a իւրովին, ձերովին



**-ոտ**$^{1}$ բորոտ, գայթոտ, դեղոտ, եռանդոտ, թափառոտ, ժանգոտ, խնամոտ, խոցոտ, ծակոտ, կաթոտ, կակազոտ, հաշմոտ, հիւանդոտ և այլն

1ա. Sa անձկոտ, դալնկոտ, դեղնոտ, կսկծոտ, մոխրոտ, մրճոտ, տաղտկոտ, ցխոտ, փութոտ

1գ. S$^{f}$a միայն բայական հիմքեր՝ երկնչոտ, լքանոտ

**-ոտի** կալոտի, ոսկրոտի, փորոտի, օտարոտի

1ա. Sa զագրոտի, հնոտի, չքոտի, սնոտի, ցնցոտի

1գ. S$^{f}$a 1. անվանական հիմք՝ ոսկերոտի, 2. բայական հիմք՝ մեռելոտի

**-որ** բեկոր, երեկոր, համոր

**-որայ/որեայ** արտորայ, արտորեայ, կալորայ, վանորայ/վանորեայ

**-որդ** այգորդ, անդիորդ/անդեորդ, աւելորդ, բագորդ, ժառանգորդ, լուղորդ, նախանձորդ, սայլորդ, սեղանորդ, քառորդ և այլն

1ա. Sa կանգնորդ, կշռորդ, կցորդ, ուղղորդ

1գ. S$^{f}$a 1. անվանական հիմք՝ տասանորդ, 2. բայական հիմք՝ մնացորդ

**-ոց**$^{1}$ արգելոց, բազմոց, բայոց, գելոց, դարմանոց, եփոց, խախացոց, հալոց, համբարոց, ձմերոց, մրջիմնոց, ներկոց, որթոց, վարդապետոց, վարժոց, տարածոց, օթոց

1ա. Sa ամրոց, գրոց, դպրոց, ծաղկոց, ծնոց, կուտոց, հնոց, մեղուոց, միջոց, մոխրոց, պոռնկոց, քնթռնոց

**-ոց**$^{2}$ խայթոց, խառնոց, խարտոց, կնտնտոց, հեծանոց, մանոց, յիշոց, փակոց

1ա. Sa խտրոց, ծածկոց, կնքոց, կշռոց, կտրոց, մխոց, պրկոց, ջրնջոց, քշոց

**-ոք** բարիոք, բորբոք, փորոք

1ա. Sa բարւոք

**-ու**$^{1}$ ածու, անկու/անգու, դակու, խաբու, հասու, հատու, խուսափու

1գ. S$^{f}$a միայն բայական հիմքով՝ այցելու

**-ու**$^{2}$ այժմու, աջու, առաջու, առաւօտու, արու, եղջերու, ժամու, ձախու, մօրու, (յ)արևու, վաղու

1ա. Sa ծաղկու, քսու

**-ուակ** կարուակ

**-ութիւն** ագահութիւն, այցելութիւն, առոյգութիւն, զայլութիւն, դեսպանութիւն, երիտասարդութիւն, զուարթութիւն, խրատութիւն և այլն

1ա. Sa—աղախնութիւն, ապշութիւն, զագրութիւն, զննութիւն, խնդութիւն, հմտութիւն, սրբութիւն և այլն

1գ. S[f]a 1. անվանական հիմքերով՝ անուանութիւն, առնութիւն, իւրութիւն, մարդկութիւն, 2. բայական հիմքերով՝ աճելութիւն, առնելութիւն, եկելութիւն, զեռալութիւն, ընկղմելութիւն, թաղելութիւն, թուելութիւն, լալութիւն, լինելութիւն, լսելութիւն, խաչելութիւն, ծնելութիւն, կամելութիւն, կարծելութիւն, ունելութիւն, սիրելութիւն, փոխելութիւն, ազդեցութիւն, ասացութիւն, արբեցութիւն, բարկացութիւն, գոյացութիւն, դարձութիւն, զայրացութիւն, զլացութիւն, իմացութիւն, կացութիւն, հրաժարեցութիւն, մոռացութիւն, յագեցութիւն, յօժարեցութիւն, շփացութիւն, շլացութիւն, ուրացութիւն, սրբեցութիւն, արարութիւն, գոյութիւն, զգայութիւն, մնայութիւն

-ուի 1ա. Sa շնուի

-ուլ թաթուլ, կափուլ

-ուկ[1] այրուկ, թեփուկ, ծիծառնուկ, կայծուկ, սևուկ, քարուկ

1ա. Sa ճնճղուկ, մժղուկ, ողկուզուկ, պուտուկ/պտուկ, սկնդուկ

-ուկ[2] բողկուկ, ժախուկ, կանեփուկ, հաճարուկ, մեղրուկ, քնարուկ

-ուկ[3] առուկ, գաղտուկ, ընտրուկ(ք), ծեփուկ, հարցուկ, հեղուկ, նեցուկ, յատուկ, նախանձուկ, շնորհուկ, ողորմուկ, պարծուկ, պարտուկ, ջերմուկ

1ա. Sa բուսուկ

1գ. S[f]a գեղջուկ

-ուհի աբեղուհի, աշակերտուհի, աստուածուհի, արդարուհի, եգիպտուհի, երանուհի, երիտասարդուհի, ընտանուհի, թագուհի, հաւատուհի, մարգարէուհի, պիթագորուհի, քահանայուհի, քանանուհի

1ա. Sa սրբուհի, քրմուհի

-ումն կազմում է բայանունների բաց խումբը. ազդումն, աճումն, այրումն, արբումն, արձակումն, դանդաղումն, եղծումն, նուազումն և այլն

1ա. Sa բժշկումն, լուծումն, կիզումն, անկումն, փքումն, քննումն և այլն

1գ. S[f]a միայն բայական հիմքերով՝ հատանումն, մեղանչումն, լալումն, գոյումն, ազդեցումն, աճեցումն, գոյացումն, զլացումն, իմացումն, լրումն, լցումն, խցումն, կացումն, արբուցումն, զատուցումն, զեկուցումն, կառուցումն, կափուցումն և այլն։ Ունենք նաև անուանումն ձևը, որտեղ ածանցից առաջ հանդես է գալիս քերականական ձևավորում ունեցող անվանական հիմք, սակայն տվյալ բառի անմիջական սերող հիմքը անուանել բայն է, հետևաբար այստեղ ևս գործ ունենք բայական հիմքի հետ։



-ուն աճուն, ասուն, արբուն, աւարտուն, բեղուն, գործուն, դողդոջուն, զարթուն, թաթաղուն, խաղաղուն, խոհուն, շարժուն, պատառուն, տարածուն և այլն

1ա. Sa գիտուն, թրծուն, լռուն, փծուն, փոթորկուն, փցուն

1գ. S[f]a միայն բայական հիմքերից՝ աճեցուն, գնայուն, զգայուն, թռչուն, կայուն, կացուն

-ունակ բնակունակ, նախունակ, նմանունակ, շարունակ, պարզունակ, պարունակ, վարձունակ, քառունակ, քրիստոսունակ

1ա. Sa լուսունակ

1գ. S[f]a մերունակ

-ունդ ելունդ, սերունդ

1ա. Sa ծնունդ, սնունդ

-ունի[1] արքունի, գողունի, խխնջունի, խնամունի, ծերունի, ռաբբունի, տէրունի

-ունի[2] 1ա. Sa տիկնունի

-ունք[1] բարձունք, կոչունք, հրաշունք, պաղպաջունք, պաշտամունք

1ա. Sa ցցունք

-ունք[2] արտևանունք, երիկամունք, երիցունք, լորձունք, խուշակունք, խրախունք, մկանունք

-ուշ ընկալուշ, թաթաւուշ, մարթուշ, վայելուշ, տեսուշ

-ուստ[1] ապրուստ, ելուստ, թաքուստ, կորուստ, հարուստ, որկորուստ, փախուստ, 1գ. S[f]a գալուստ

-ուստ[2] ամենուստ, այլուստ, անդուստ/անտուստ, առաջուստ, աստուածուստ, աստուստ, արտաքուստ, արտուստ, բացուստ, ընտուստ, խոնարհուստ, խորուստ, հեռուստ, նախուստ, չորուստ, ստորուստ, վաղուստ, վայրուստ, վերուստ, օտարուստ

1ա. Sa երկնուստ

-ուտ աղբուտ, ապառաժուտ, արինուտ, աւազակուտ, աւազուտ, գազանուտ, դալարուտ, երիզուտ, թաւուտ, թօնուտ, խաղաղուտ, խաւարուտ, խոնաւուտ, խռովուտ, ծանծաղուտ, ծարաւուտ, հացուտ, հողմուտ, հողուտ, մացառուտ, շաղաշուտ, շամբուտ, չարուտ, վախուտ, տօնուտ, քարուտ, օձուտ

1ա. Sa երկրուտ, ընկուզուտ, լպրծուտ, ծաղկուտ, կուպճուտ, հրուտ, մառախլուտ/մառախղուտ, վիմուտ, տղմուտ

-ուրդ արձակուրդ, ժողովուրդ, խառնուրդ, խորհուրդ, կացուրդ, յագուրդ, յամուրդ

-ուց[1] այգուց, առաւօտուց, վաղուց

-ուց² ղայրուց, խայտուց, նեղուց, սպիտակուց

1ա. Sa կիզուց

-ուցք բարուցք, լայնուցք, մոլուցք

-ուք այրուք, քամուք

-չեայ անէտչեայ

-չոտ երկչոտ

-չուտ խաւարչուտ

-ս արտաքս, յետս, յոլովս

-սանն 1գ. $\mathrm{S^{f}a}$ խմովսանն

-(ա)սուն տասնյակներ ցույց տվող քանակական թվականների ածանցը՝ երեսուն, քառասուն, յիսուն, վաթսուն, եօթանասուն, ութսուն, իննսուն (հիմքերի մի մասը ենթարկված է ոչ օրինաչափ հնչյունափոխությունների՝ յի, վաթ, իսկ մյուսները հանդիպում են և այլ բաղադրությունների մեջ՝ ինչպես երե-, եօթան-, քառ-, անփոփոխ են ութ, ինն հիմքերը):

-ստ զգաստ, զգեստ, իմաստ, զովեստ, ուտեստ, ուրաստ, պահեստ, հանգիստ

-տակ գումարտակ

-տի 1ա. Sa մանկտի

-րի բերրի, երեխայրի/երախայրի

-ք աղօթք, անցք, ապարանք, արգասիք, արտասուք, բարք, բերք, դաւանք, դէմք, դիրք, ելք, զարմանք, ժանիք, խօսք, ծախք, կուռք, հունձք, մուտք, վայելք, վանք, օրէնք և այլն

1գ. $\mathrm{S^{f}a}$ 1. անվանական հիմք՝ եօթանք, 2. բայական հիմքեր՝ արարք, գնացք, զարմացք, ընթացք, իմացք, խրացք, հայեացք, յարոյցք, ստացք, թռիչք

-օթ 1գ. $\mathrm{S^{f}a}$ ծանօթ

-օն գեղօն, գողօն, գործօն, դգօն, պաշտօն, 1ա. Sa կտրօն, կրօն

-օնք 1ա. Sa ցրօնք, 1գ. լալօնք, մոռացօնք

-օրէն ազատօրէն, անձնօրէն, աշխարհօրէն, աստուածօրէն, արքայօրէն, աւագօրէն, անէտօրէն, գազանօրէն, գետօրէն, ինքնօրէն, խաղաղօրէն, համբակօրէն, համօրէն, հայրօրէն, հայօրէն, հեզօրէն, հեթանոսօրէն, հրեշտակօրէն, մարգարէօրէն, մարդօրէն, յոխորտօրէն, նմանօրէն, վարազօրէն, վկայօրէն, տարօրէն, փեսայօրէն, քաջօրէն, քրիստոսօրէն

1ա. Sa գծօրէն, երկրօրէն, լեռնօրէն, հմտօրէն, ողկուզօրէն

1գ. $\mathrm{S^{f}a}$ անվանական հիմքով՝ մարդկօրէն



2. (Sa)a—վերջածանցավոր (և ընդհանրապես ածանցավոր) կազմությունների մեջ գործառական բեռնվածության տեսակետից այս կաղապարը գրավում է երկրորդ տեղը։ Վկայված են բազմաթիվ օրինակներ ածանցների ամենաբազմազան զուգորդություններով, ընդ որում, բառերի մեծագույն մասում ածանցները հստակորեն տրոհվում են, սակայն կան նաև դեպքեր, երբ ածանցները սերտաճել են միմյանց հետ, և նրանց առանձնացումը որոշ պայմանականություն ունի, մանավանդ, երբ առաջին ածանցական բաղադրիչն այլևս առանձին սերող հիմքում հանդես չի գալիս, ինչպես՝ մշտնջենան(ունջ+եան), նմանցօրէն(ցի+օրէն), երկուորի(որ+ի կամ ուոր+ի) և այլն։

Ինչպես առաջնային, այնպես էլ երկրորդային վերջածանցավոր հիմքերի դեպքում, բնականաբար, տեղի են ունենում շեշտափոխական հնչյունափոխություններ, որոնք առանձին չենք քննում, քանի որ դրանք ենթարկվում են ընդհանուր օրինաչափություններին, ընդ որում, հնչյունափոխված կարող է լինել և բուն մաքուր հիմքը՝ դեռևս բառակազմական առաջին քայլի ընթացքում, և առաջին ածանցը՝ միտ+ացի→մտացի+աբար→մտացեբար: Կան դեպքեր, երբ առաջին ածանցը ենթարկվում է խիստ ձևափոխության կամ նույնիսկ դուրս է ընկնում, բայց ոչ թե բառակազմական, այլ զուտ հնչյունափոխական գործոնի ազդեցությամբ (ինչպես՝ սքանչել+ի+աբար–սքանչելաբար, կորով+ի+ութիւն–կորովութիւն): Որոշ չափով ձևակազմական-ձևաբանական արժեք ունի բառակազմական հետագա քայլերի ժամանակ ածանցի կազմի մեջ մտնող -ք տարրի անկումը՝ օր. արքունիք–արքունուստ: Հնչյունափոխված ածանցի լիաձայնությունը ճիշտ վերականգնելու համար պետք է նկատի ունենալ երկրորդային սերող հիմքի առկայությունը։ Այսպես, -նի, -ին և -ուն ածանցները ածանցական զուգորդություններում հավասարապես հանդես են գալիս -ն- ձևով, -իչ-ը և -ուչ-ը՝ -չ- ձևով, -ուկ-ը և -իկ-ը՝ -կ-ձևով և այլն։ Մինչդեռ երկու վերջածանց ունեցող յետնաբար բառում գործ ունենք -ին ածանցի, գիտնաբար-ում՝ -ուն, իսկ յայտնաբարում՝ -նի ածանցի հետ։ Նույն ձևով՝ արարչաբար-ի մեջ առկա է -իչ-ը, իսկ վայելչաբար-ի մեջ՝ -ուչ-ը և այլն։ Որոշ դեպքերում, երբ երկրորդային սերող հիմքը չի պահպանվել, ածանցը վերականգնվում է ենթադրաբար, օր.՝ խոտորնակի, խոտորնագույն բառերի համար վերականգնվում է -ուն ածանցը՝ խոտորուն:

Ածանցների զուգորդությունների մեջ գործածման մեծ հաճախականություն ունեցողները քիչ են, դրանցից են, օրինակ՝ -աւոր+-աբար, -ող+-աբար, -աւոր+-ապէս, -ական+-ապէս,-աւոր+-ութիւն, -ական+

-ություն, -ակ+-ություն, -ող+-ություն և այլն: Զուգորդությունների զգալի մասը մնում է մի քանի օրինակի սահմաններում, իսկ հաճախ հանդիպում են զուգորդություններ միայն մեկ վկայությամբ՝ -կին+-ություն (նախկնություն), -ոգ+-ություն (նորոգություն): Հասկանալի է, որ զուգորդությունների մեծ մասը ստացվում է առավել գործածական ածանցների մասնակցությամբ, երբ դրանք հանդես են գալիս որպես երկրորդ բաղադրիչ:

Հիշեցնենք նաև, որ վերջածանցների զուգորդությունները գոյություն ունեն ոչ թե ինքնին, որպես բաղադրյալ ածանցներ, այլ ստացվում են երկրորդ վերջածանցի՝ արդեն իսկ վերջածանցավոր երկրորդային հիմքերին կցվելուց: Անշուշտ, այստեղ նկատի չունենք լեզվի զարգացման ավելի վաղ շրջանից ժառանգված ածանցների սերտաճումները, որոնք հնարավոր է վերականգնել միայն ստուգաբանորեն, այն էլ որոշ պայմանականությամբ, ինչպես՝ -րորդ՝ -իր+-որդ (երկրորդ, երրորդ), -չուտ՝ թերևս՝ -ուչ+-ուտ (խավարչուտ) և այլն: Սրանք դիտվում են որպես պարզ ածանցներ:

Ստորև բերում ենք մեր ընտրանքում պարունակվող երկվերջածանց զուգորդություններն իրենց օրինակներով, որոնք խմբավորված են ըստ երկրորդ ածանցի (նկատի ունենալով բառակազմական վերջին քայլը): Ածանցները և նրանց զուգորդությունները միասնաբար ներկայացնելու և նկարագրությունը չծանրաբեռնելու նպատակով դրանք ըստ առանձին ենթակաղապարների չենք բաշխում: Ենթակաղապարները կներկայացվեն վերջածանցման գործառական բնութագրության աղյուսակում՝ համապատասխան օրինակներով և թվային արժեքներով: Այստեղ նշենք միայն, որ երկվերջածանց բաղադրություններում հանդիպում են հետևյալ ենթակաղապարները՝ 2ա. $(\underline{S}a)a$—բնականաբար, 2բ. $(S\underline{a})a$—հաւատարմաբար, 2գ. $(\underline{S}a)a$—պիտանաբար, մոլեգնաբար, 2դ. $(\underline{Sa})\underline{a}$—մտացեբար, 2ե. $(S^{f}a)a$—իմացողաբար, 2զ. $(S^{f}a)a$—արարչաբար, գոյեղինաբար, 2է. $(Sa)^{f}a$—շահեկանացնել, 2ը. $(Sa)^{f}a$—փոշկացնել:

I. -աբար

1. -(ա)գին+-աբար մոլեգնաբար, ուժգնաբար
2. -ազան+-աբար սրբազնաբար
3. -ած+-աբար սովածաբար
4. -ակ+-աբար բոլորակաբար, քառակաբար
5. -ական+-աբար բաւականաբար, բնականաբար
6. -ակար+-աբար կամակարաբար
7. -ային+-աբար աստուածայնաբար



8. -ան+-աբար իշխանաբար, բաժանաբար
9. -անակ+-աբար ժամանակաբար, նշանակաբար
10. -անդակ+-աբար այլանդակաբար
11. -անի+-աբար պիտանաբար
12. -ապատիկ+-աբար բազմապատկաբար, յոգնապատկաբար
13. -ապէս+-աբար մարդկապիսաբար
14. -արիմ+-աբար հաւատարմաբար
15. -ացի+-աբար մտացեբար
16. -աւ+-աբար իրաւաբար
17. -աւոր+-աբար ախտաւորաբար, բնաւորաբար, բանաւորաբար, գրաւորաբար, զօրաւորաբար, թագաւորաբար, լուսաւորաբար, կամաւորաբար, մասնաւորաբար, մերձաւորաբար, շահաւորաբար, պատկանաւորաբար, կարեւորաբար
18. -եակ+-աբար տեղեկաբար
19. -եալ+-աբար առաքելաբար, կատարելաբար, քաղցելաբար
20. -եայ+-աբար քրիստոնէաբար
21. -եղ+-աբար գոյեղաբար, հանճարեղաբար, շքեղաբար
22. -եղէն+-աբար գոյեղինաբար, միեղինաբար
23. -ելի+-աբար սքանչելաբար
24. -ենի+-աբար հայրենաբար
25. -երիմ+-աբար մտերմաբար
26. -եցիկ+-աբար գեղեցկաբար
27. -իկ+-աբար սաստկաբար
28. -ի+-աբար արիաբար
29. -ին+-աբար յետնաբար
30. -իչ+-աբար արարչաբար, կեցուցչաբար
31. -կին+-աբար նախկնաբար
32. -նի+-աբար յայտնաբար
33. -ող+-աբար գիտողաբար, դատողաբար, ելողաբար, ընտրողաբար, իմացողաբար, իրողաբար, յանդիպողաբար, պատմողաբար, սիրողաբար, տենչողաբար, տարփողաբար, տոփողաբար, փրկողաբար
34. -որդ+-աբար աւելորդաբար, ուղղորդաբար
35. -ուկ+-աբար յատկաբար
36. -ուն+-աբար գիտնաբար, թաքնաբար
37. -ունի+-աբար ծերունաբար
38. -ունակ+-աբար շարունակաբար
39. -ուոր+-աբար զինուորաբար

*IV.* -աժէտ

-ին+-աժէտ *լուսնաժէտ*

*V.* -ած

1. -իւղ+-ած *երկիւղած*
2. -եայ+-ած *ընէած*

*VI.* -ուած

1. -ար+-ուած *զարդարուած*
2. -կին+-ուած *կրկնուած*
3. -ող+-ուած *յաջողուած*
4. -ոտ+-ուած *ծակոտուած*
5. -ումն+-ուած *ուսումնուած*

*VII.* -ակ[1]

1. -աւոր+-ակ *գահաւորակ*
2. -ի+-ակ *մատանակ*
3. -ին+-ակ *լուսնակ*
4. -այն+-ակ *միայնակ*
5. -անոց+-ակ *հովանոցակ*

*VIII.* -ակ[2]

1. -ան+-ակ *կենդանակ, շրջանակ*
2. -ար+-ակ *տափարակ*
3. -արէն+-ակ *փոխարինակ*
4. -աւոր+-ակ *պարաւորակ, սպասաւորակ, օրաւորակ*
5. -ին+-ակ *առաջնակ, մեկնակ, ներքնակ, ստորնակ*
6. -կին+-ակ *երեքկնակ, կրկնակ*
7. -նի+-ակ *նախնեակ*
8. -ող+-ակ *աջողակ/յաջողակ, ձախողակ*
9. -ուն+-ակ *խօսնակ, խոտորնակ*
10. -ուրդ+-ակ *խորհրդակ*
11. -պան+-ակ *պահպանակ*
12. -ստ+-ակ *իմաստակ*
13. -տի+-ակ *մանկտեակ*

*IX.* -ական

1. -ազան+-ական *զարմազանական*
2. -ագին+-ական *մոլեգնական*
3. -ակ+-ական *որակական, ունակական, օրինակական*



4. -այ+-ական *կամայական*
5. -այն+-ական *միայնական*
6. -ան+-ական *արժանական, բաժանական, իշխանական, նշանա-կան, պատուիրանական*
7. -անակ+-ական *ժամանակական, նշանակական*
8. -անք+-ական *սահմանական*
9. -աստ+-ական *նաւաստական*
10. -աստան+-ական *դատաստանական*
11. -ատ+-ական *կրճատական, հաստատական*
12. -ատակ+-ական *յիշատակական*
13. -արան+-ական *աւետարանական*
14. -աւ+-ական *իրաւական*
15. -աւէտ+-ական *շահաւէտական*
16. -աւոր+-ական *ախտաւորական, անձնաւորական, բազմաւորա-կան, բանաւորական, բնաւորական, բռնաւորական, գլխաւորական, գոր-ծաւորական, գրաւորական, երկնաւորական, թագաւորական, լուսաւորա-կան, կեղծաւորական, կերպաւորական, կրաւորական, կրօնաւորական, հո-գեւորական, ճգնաւորական, մասնաւորական, մարմնաւորական, մերձա-ւորական, միաւորական, մտաւորական, նենգաւորական, ուղեւորական, չքաւորական, պատժաւորական, սգաւորական, սկզբնաւորական, սպասա-ւորական, վարձաւորական, տարեւորական, տոյաւորական, օրինաւորա-կան*
17. -եալ+-ական *առաքելական, կատարելական*
18. -եայ+-ական *քրիստոնէական*
19. -եան+-ական *յաւիտենական*
20. -եղ+-ական *հանճարեղական*
21. -ենի+-ական *հայրենական, վայրենական*
22. -թար+-ական *վատթարական*
23. -ի[1]+-ական *արիական, գործիական, ծիրանական*
24. -ի[3]+-ական *երեւելական*
25. -իլ+-ական *տեսլական*
26. -իկ+-ական *պարսկական*
27. -ին+-ական *առաջնական, լուսնական, վերնական*
28. -իչ+-ական *արարչական, փրկչական*
29. -իւղ+-ական *երկիւղական*
30. -նի+-ական *յայտնական, նախնական*
31. -ոգ+-ական *նորոգական*

32. -ող¹+-ական *իրողական*

33. -ող²+-ական *աճողական, անցանողական, այրեցողական, արարողական, գիտողական, իմանողական, տեսողական և այլն*

34. -ոյ+-ական *բարոյական/բարույական, հաճոյական*

35. -ոյն+-ական *ողջունական*

36. -ոտ+-ական *վաւաշոտական*

37. -որ+-ական *մոլորական*

38. -որդ+-ական *որսորդական, հատարակորդական, ճանապարհորդական*

39. -ու+-ական *արուական*

40. -ուած+-ական *հարուածական, հերձուածական*

41. -ութիւն+-ական *յարութիւնական, փրկութենական*

42. ումն+-ական *ուսումնական, սկսմնական, ցասմնական*

43. -ուն+-ական *գիտնական, գործնական, զարթնական, կանգնական*

44. -ունակ+-ական *պարունակական, շարունակական (կա նաև վանկազրկության ենթարկված* շարունական *տարբերակը)*

45. -ունդ+-ական *ծննդական, սննդական*

46. -ունի+-ական *արքունական, ծերունական, մանկունական, տերունական*

47. -ունչ+-ական *տռնչական*

48. -ունք+-ական *կոչնական*

49. -ուոր+-ական *զինուորական*

50. -ուչ+-ական *վայելչական*

51. -ուստ+-ական *կորստական, փախստական*

52. -ուրդ+-ական *ժողովրդական, խորհրդական*

53. -չուտ+-ական *խաւարչտական*

54. -պան+-ական *պահպանական*

55. -ստ+-ական *զգաստական, իմաստական*

56. -րորդ+-ական *երկրորդական, երրորդական*

57. -օթ+-ական *ծանօթական*

58. -օն+-ական *զգօնական, պաշտօնական*

*X.* -ակի

1. -գին+-ակի *ուժգնակի*
2. -ին+-ակի *մեկնակի*
3. -կին+-ակի *երեքկնակի, կրկնակի, չորեքկնակի*



4. -ող¹+-ակի *ձախողակի*
5. -ուն+-ակի *խոտորնակի*
6. -ուչ+-ակի *վայելչակի*

*XI.* -ային

1. -ակ+-ային *կապուտակային*
2. -իկ+-ային *հնդկային, պարսկային*
3. -ին+-ային *առաջնային, լուսնային, վերջնային, ստորնային*

*XII.* -այն

1. -ի+-այն *լռելեայն*
2. -որդ+-այն *վաղորդայն*

*XIII.* -անի²

1. -ոյք+-անի *գահոյանի*

*XIV.* -անոց

1. -այն+-անոց *միայնանոց/մենանոց*
2. -ատակ+-անոց *յիշատականոց*
3. -աւոր+-անոց *դատաւորանոց*
4. -ունդ+-անոց *ծննդանոց*
5. -ուրդ+-անոց *ժողովրդանոց, խորհրդանոց*
6. -ստ+-անոց *հանգստանոց*

*XV.* -անք

1. -ագար+-անք *խելագարանք*
2. -ար+-անք *զարդարանք, յարդարանք, մեծարանք*
3. -աւանդ+-անք *պարաւանդանք*
4. -ող+-անք *ձախողանք*
5. -որ+-անք *մոլորանք*
6. -ուչ+-անք *վայելչանք*

*XVI.* -ապան

1. -ակ+-ապան *պահակապան*
2. -ան+-ապան *կապանապան*

*XVII.* -ապատիկ

1. -կին+-ապատիկ *կրկնապատիկ*

## XVIII. -ապէս

1. **-ակ+-ապէս** *դաշնակապէս, պիտակապէս, ցուցակապէս, օրինակապէս*

2. **-ական+-ապէս** *բանականապէս, բնականապէս, հանրականապէս, հարցականապէս, հրաժարականապէս, միականապէս, սկզբնականապէս, վաճառականապէս*

3. **-ակար+-ապէս** *կամակարապէս*

4. **-ային+-ապէս** *աստուածայնապէս*

5. **-ան+-ապէս** *արժանապէս, իշխանապէս*

6. **-անակ+-ապէս** *նշանակապէս*

7. **-ապատիկ+-ապէս** *բազմապատկապէս*

8. **-աստ+-ապէս** *հաստատապէս*

9. **-արան+-ապէս** *աւետարանապէս*

10. **-արիմ+-ապէս** *հաւատարմապէս*

11. **-աւ+-ապէս** *իրաւապէս*

12. **-աւոր+-ապէս** *ահաւորապէս, բանաւորապէս, բնաւորապէս, գլխաւորապէս, թագաւորապէս, լուսաւորապէս, կարգաւորապէս, կարևորապէս, կերպաւորապէս, հնարաւորապէս, հոգևորապէս, մասնաւորապէս, մարմնաւորապէս, մերձաւորապէս, չափաւորապէս, պարտաւորապէս, պիտաւորապէս, փառաւորապէս*

13. **-գին+-ապէս** *ուժգնապէս*

14. **-եալ+-ապէս** *կատարելապէս*

15. **-եայ+-ապէս** *քրիստոնէապէս*

16. **-եղ+-ապէս** *զօրեղապէս, հզօրեղապէս, ուժեղապէս*

17. **-եղէն+-ապէս** *գոյեղինապէս, միեղինապէս, նիւթեղինապէս*

18. **-եցիկ+-ապէս** *գեղեցկապէս*

19. **-թար+-ապէս** *վատթարապէս*

20. **-ի[3]+-ապէս** *գարշելապէս, զգալապէս, երևելապէս, սքանչելապէս*

21. **-իկ[1]+-ապէս** *փոքրկապէս*

22. **-իկ[2]+-ապէս** *սաստկապէս*

23. **-ին+-ապէս** *առաջնապէս, մեկնապէս*

24. **-իշ+-ապէս** *արարշապէս*

25. **-նի+-ապէս** *յայտնապէս*

26. **-ոգ+-ապէս** *նորոգապէս*

27. **-ող[1]+-ապէս** *յաջողապէս*



28. **-ող[2]+-ապէս** *ապրեցողապէս, ապրեցուցողապէս, գիտողապէս, դարձողապէս, ըմբռնողապէս, ընտրողապէս, լուծողապէս, կարողապէս, հոգողապէս, վիճողապէս*

29. **-ուք+-ապէս** *բարւոքապէս*

30. **-ուն+-ապէս** *գիտնապէս*

31. **-ունակ+-ապէս** *շարունակապէս, պարունակապէս*

32. **-ունի+-ապէս** *եզունապէս*

33. **-ուչ+-ապէս** *վայելչապէս*

34. **-ուրդ+-ապէս** *խորհրդապէս*

35. **-ստ+-ապէս** *իմաստապէս*

36. **-օթ+-ապէս** *ծանօթապէս*

## XIX. -աստան

1. **-այն+-աստան** *միայնաստան/մենաստան*

## XX. -արան

1. **-ակ+-արան** *բնակարան, ճաշակարան*
2. **-այն+-արան** *միայնարան*
3. **-անք+-արան** *կայանարան, տանջանարան*
4. **-ատակ+-արան** *յիշատակարան*
5. **-եալ+-արան** *առաքելարան*
6. **-իլ+-արան** *տեսլարան*
7. **-ուրդ+-արան** *խորհրդարան*
8. **-պան+-արան** *պահպանարան*
9. **-ստ+-արան** *հանգստարան*
10. **-օն+-արան** *պաշտօնարան*

## XXI. -ացի[1]

1. **-ան+-ացի** *նշանացի*
2. **-աւ+-ացի** *իրաւացի*

## XXII. -ացու

1. **-անի+-ացու** *կենդանացու, պիտանացու*
2. **-եալ+-ացու** *առաքելացու*
3. **-կան+-ացու** *մահկանացու*

## XXIII. -աւ

1. **-անակ+-աւ** *նշանակաւ*
2. **-անակի+-աւ** *շուրջանակաւ*

XXIV. -աւէտ

1. -ան + -աւէտ *իշխանաւէտ*
2. -անի + -աւէտ *կենդանաւէտ*

XXV. -աւոր

1. -ակ + -աւոր *բնակաւոր, դաշնակաւոր, միջակաւոր, նպարակաւոր*
2. -այն + -աւոր *միայնաւոր*
3. -ան + -աւոր *արժանաւոր, բաժանաւոր, իշխանաւոր, կայանաւոր, խորանաւոր, նշանաւոր, կալանաւոր, կապանաւոր*
4. -անակ + -աւոր *ժամանակաւոր, նշանակաւոր*
5. -անի + -աւոր *ծիրանաւոր. հովանաւոր, պիտանաւոր*
6. -անք + -աւոր *տանջանաւոր, փորձանաւոր*
7. -աստան + -աւոր *դատաստանաւոր*
8. -արան + -աւոր *կերպարանաւոր*
9. -ու + -աւոր *սակաւաւոր*
10. -եղ + -աւոր *շքեղաւոր*
11. -ին + -աւոր *լուսնաւոր, մեկնաւոր,*
12. -իչ + -աւոր *վարչաւոր*
13. -իւն + -աւոր *արդիւնաւոր*
14. -կին + -աւոր *կրկնաւոր*
15. -նի + -աւոր *յայտնաւոր*
16. -ոց + -աւոր *վարոցաւոր*
17. -ուած + -աւոր *ստացուածաւոր*
18. -ուն + -աւոր *բեղնաւոր, կանգնաւոր*
19. -սուն + -աւոր *երեսնաւոր, վաթսնաւոր*
20. -ստ + -աւոր *իմաստաւոր*
21. -օթ + -աւոր *ծանօթաւոր*
22. -օն + -աւոր *պաշտօնաւոր*

XXVI. -բ

1. -եւին + -բ *ամենեիմբ*
2. -ովին + -բ *ազգովիմբ, բոլորովիմբ*

XXVII. -եալ

1. -ական + -եալ *աշխարհականացեալ*
2. -ազան + -եալ *զարմանազանեալ*
3. -ագին + -եալ *մոլեգնեալ*
4. -անակ + -եալ *շրջանակեալ*



5. -ատ + -եալ *կրճատեալ*
6. -ու + -եալ *սակաւացեալ*
7. -աւէտ + -եալ *երանաւէտեալ*
8. -աւոր + -եալ *հռչակաւորեալ, ուղևորեալ, փառաւորեալ*
9. -եկան + -եալ *շահեկանացեալ*
10. -ենի + -եալ *վայրենեալ, վայրենացեալ*
11. -իկ + -եալ *փոշկացեալ*
12. -կոտ + -եալ *բծկոտեալ*
13. -ոտ + -եալ *թեփոտեալ, խոթոտեալ, պակշոտեալ*
14. -որ + -եալ *մոլորեալ*
15. -որդ + -եալ *հանապազորդեալ*
16. -պան + -եալ *պահպանեալ*

XXVIII. -եակ

1. -այն + -եակ *միայնեակ*
2. -աւոր + -եակ *երկաւորեակ*
3. -ուոր + -եակ *երկուորեակ*
4. -ին + -եակ *լուսնեակ*
5. -իր + -եակ *երրեակ, չորրեակ*
6. -սուն + -եակ *եօթանասնեակ, իննսնեակ, յիսնեակ, վաթսնեակ*

XXIX. -եայ

1. -ակ² + -եայ *կապուտակեայ, կուտակեայ*
2. -անակ + -եայ *ժամանակեայ*
3. -աստան + -եայ *ձիթաստանեայ*
4. -աք + -եայ *դուղնաքեայ*
5. -ին + -եայ *ստորնեայ*
6. -որ + -եայ *երեկորեայ*
7. -որդ + -եայ *լեառնորդեայ, հանապազորդեայ, նաւորդեայ*
8. -ուն + -եայ *գործունեայ*
9. -ուստ¹ + -եայ *փախստեայ*
10. -ուստ² + -եայ *վերստեայ*
11. -սուն + -եայ *քառասնեայ*
12. -օն + -եայ *գործօնեայ, պաշտօնեայ*

XXX. -եան

1. -անակ + -եան *ժամանակեան*
2. -ենի + -եան *հայրենեան*

3. -իկ$^{1}$ + -եան *վայրկեան*
4. -իկ$^{2}$ + -եան *պղատոնիկեան*
5. -ունի + -եան *ծերունեան, տէրունեան*
6. -որդ + -եան *Հանապազորդեան*

XXXI. -եկի

1. -ասուն + -եկի *եօթանասնեկի*

XXXII. -եկին

1. -ասուն + -եկին *եօթանասնեկին*

XXXIII. -եղ

1. -ուկ + -եղ *յատկեղ*

XXXIV. -եղէն

1. -իչ + -եղէն *արարչեղէն*

XXXV. -երեակ

1. -(ա)սուն + -երեակ *երեսներեակ, եօթանասներեակ, իննսներեակ*

XXXVI. -երէն

1. -եցի + -երէն *եբրայեցերէն*
2. -իկ + -երէն *հնդկերէն, պարսկերէն*

XXXVII. -երորդ

1. -ին + -երորդ *առաջներորդ*
2. -(ա)սուն + -երորդ *երեսներորդ, յիսներորդ, եօթանասներորդ, ութսներորդ, վաթսներորդ, քառասներորդ*

XXXVIII. -եքեան

1. -(ա)սուն + -եքեան *քառասնեքեան*

XXXIX. -ի$^{1}$

1. -ան + -ի *արժանի*
2. -աստ + -ի *նաւաստի*
3. -աստան + -ի *այգեստանի, սեխաստանի, ձիթաստանի, ապաստանի, Ասորեստանի*
4. -աւ + -ի *իրաւի*
5. -աւոր + -ի *երկաւորի*



6. -ուոր + -ի *երկուորի*
7. -աք + -ի *արմատաքի*
8. -եմն + -ի *երբեմնի*
9. -ին + -ի *խրթնի*
10. -ող$^{1}$ + -ի *ձախողի*
11. -որ + -ի *երեկորի*
12. -որդ + -ի *փոխորդի*
13. -ումն + -ի *երգմնի*
14. -ուստ + -ի *Հարստի*

XL. -ի$^{3}$

1. -ագին + -ի *վշտագնելի*
2. -աւոր + -ի *փառաւորելի*
3. -որ + -ի *այգորելի*

XLI. -իկ$^{1}$

1. -ակ + -իկ *նաւակիկ*
2. -անոց + -իկ *անթանոցիկ*
3. -աւ + -իկ *սակաւիկ*
4. -եակ + -իկ *պատանեկիկ, անղեկիկ*
5. -եամն + -իկ *այծեմնիկ*
6. -եան + -իկ *պատենիկ*
7. -ստ + -իկ *զգեստիկ*

XLII. -իկ$^{2}$

1. -այն + -իկ *միայնիկ*
2. -աստ + -իկ *նաւաստիկ*
3. -աստան + -իկ *ապաստանիկ, գերդաստանիկ*
4. -եղէն + -իկ *ոսկեղէնիկ*
5. -բար + -իկ *վատթարիկ*
6. -կէն + -իկ *կոճկէնիկ*
7. -ցի + -իկ *Հարեանցիկ*

XLIII. -ին

1. -աւ + -ին *ընաւին, տակաւին*
2. -աք + -ին *արմատաքին*
3. -չուտ + -ին *խաւարչտին*
4. -ուստ + -ին *անդստին, աստստին, վերստին*

5. -ոյ+-ին *երեկոյին*
6. -որ+-ին *երեկորին*
7. -ք+-ին *ներքին*

XLIV. -իչ

1. -ազան+-իչ *սրբազանիչ*
2. -ակ+-իչ *ճաշակիչ*
3. -անակ+-իչ *նշանակիչ*
4. -ատ+-իչ *Թլփատիչ*
5. -ար+-իչ *զարդարիչ, մեծարիչ, յարդարիչ*
6. -արան+-իչ *աւետարանիչ*
7. -աւոր+-իչ *լուսաւորիչ, կարգաւորիչ, մերձաւորիչ, միաւորիչ, վիրաւորիչ, փառաւորիչ*
8. -կին+-իչ *մեկնիչ*
9. -նի+-իչ *յայտնիչ*
10. -ոգ+-իչ *նորոգիչ*
11. -ող[1]+-իչ *յաջողիչ*
12. -ոտ+-իչ *խոցոտիչ*
13. -որդ+-իչ *տասանորդիչ*
14. -պան+-իչ *պահպանիչ*
15. -տ+-իչ *քակտիչ*

XLV. -իցս

1. -(ա)սուն+-իցս *երեսնիցս, եօթանասնիցս*

XLVI. -իւ

1. -առօտ+-իւ *կարճառօտիւ, համառօտիւ*

XLVII. -իք

1. -ող[2]+-իք *ականողիք*
2. -րի+-իք *երախայրիք*

XLVIII. -կէն

1. -ոտ+-կէն *ծակոտկէն*

XLIX. -կոտ

1. -ար+-կոտ *զարդարկոտ*



L. -ն

1. -ական+-ն *բժշկականն, գիտականն, գործականն, ջարբնականն, Թուականն, խաղացականն, խինջականն, մոգականն, տեսականն, քաղաքականն*
2. -ային+-ն *աստղայինն*
3. -ին+-ն *առաջինն*

LI. -նեար

1. -իկ+-նեար *բարձկնեար, նաւկնեար, քաղաքկնեար*

LII. ող[2]

1. -ար+-ող *զարդարող*
2. -աւոր+-ող *հոգեորացուցանող*
3. -եար+-ող *բաներող*
4. -ուած+-ող *հերձուածող*

LIII.-ոյ

1. -ար+-ոյ *մեծարոյ*
2. -ս+-ոյ *ներսոյ*
3. -ք+-ոյ *ներքոյ*

LIV. -ոյն

1. -անի+-ոյն *կենդանւոյն*

LV. -ոյք

1. -իկ+-ոյք *գրկոյք*
2. -օթ+-ոյք *ծանօթոյք*

LVI. -ոտ

1. -ագին+-ոտ *մոլեգնոտ, ցաւագնոտ*
2. -ին+-ոտ *լուսնոտ, վերնոտ*

LVII. -որդ

1. -ան+-որդ *բաժանորդ, պահանորդ, փոխանորդ*
2. -ին+-որդ *առաջնորդ, միջնորդ, յետնորդ*
3. -(ա)սուն+-որդ *քառասնորդ*

LVIII. -ոց[1]

1. -ակեր+-ոց *խոհակերոց*
2. -իկ+-ոց *մարտկոց*

3. -ուստ+-ոց *թաքստոց*

4. -ուց+-ոց *խոտցոց*

5. -ստ+-ոց *հանգստոց*

LIX. -ոց²

1. -ային+-ոց *ձայնայնոց*

2. -ին+-ոց *մեկնոց*

3. -կին+-ոց *կրկնոց*

LX. -ութիւն

1. -ագար+-ութիւն *գլխագարութիւն, լեզուագարութիւն*

2. -ագին+-ութիւն *ահագնութիւն, մոլեգնութիւն, վշտագնութիւն, ցաւագնութիւն*

3. -գին+-ութիւն *ուժգնութիւն*

4. -ագոյն+-ութիւն *բացագունութիւն, նուաստագունութիւն, վեհագունութիւն*

5. -ազան+-ութիւն *զարմազանութիւն, զարմանազանութիւն, բազմազանութիւն, սրբազանութիւն*

6. -ած+-ութիւն *անկածութիւն, գթածութիւն, ողորմածութիւն*

7. -ուած+-ութիւն *հատուածութիւն, յաւելուածութիւն, յօրինուածութիւն*

8. -ակ+-ութիւն *այլակութիւն, ախորժակութիւն, բնակութիւն, բոլորակութիւն, երևակութիւն, իրակութիւն, խաղակութիւն, խառնակութիւն, կամակութիւն, կուտակութիւն, միջակութիւն, որակութիւն, ունակութիւն, պահկութիւն, պատուիրակութիւն, վիճակութիւն, վրիպակութիւն, տեղեկութիւն (տեղի+ակ+ութիւն), տոհմակութիւն, տեսակութիւն, տևակութիւն, քանակութիւն*

9. -ական+-ութիւն *ազգականութիւն, ազնուականութիւն, առնականութիւն, ասպնջականութիւն, բաւականութիւն, բժշկականութիւն, բնականութիւն, գնացականութիւն, գոյականութիւն, դժուարականութիւն, եզականութիւն, երաժշտականութիւն, զուգականութիւն, էականութիւն, թափառականութիւն, թուականութիւն, իսկականութիւն, իրականութիւն, խաղաղականութիւն, խոհականութիւն, կայականութիւն, կրթականութիւն, հովուականութիւն, մանկականութիւն, մեղանչականութիւն, շինականութիւն, պատուականութիւն, պետականութիւն, սեպհականութիւն, սխալականութիւն, սովորականութիւն, ստեղծականութիւն, ստուերականութիւն, սրբականութիւն, վաճառականութիւն, վանականութիւն, վսեմականութիւն, տևականութիւն, տոհմականութիւն, ցուցականութիւն, քաղաքականութիւն, քարուականութիւն, քերականութիւն, օգնականութիւն*

10. -ակար+-ութիւն *կամակարութիւն, վնասակարութիւն, օգտակարութիւն*

11. -ակեր+-ութիւն *խոհակերութիւն/խահակերութիւն*

12. -ային+-ութիւն *աստուածայնութիւն*

13. -այն+-ութիւն *միայնութիւն/մենութիւն*

14. -ան+-ութիւն *իշխանութիւն, կայանութիւն, կենդանութիւն, վզանութիւն, օծանութիւն*

15. -անակ+-ութիւն *նշանակութիւն, շրջանակութիւն, փոխանակութիւն*

16. -անդի+-ութիւն *վտարանդութիւն*

17. -անի+-ութիւն *լեզուանութիւն, պիտանութիւն*

18. -ապան+-ութիւն *տնապանութիւն*

19. -պան+-ութիւն *պահպանութիւն, պաշտպանութիւն, մարզպանութիւն*

20. -ապատիկ+-ութիւն *բազմապատկութիւն*

21. -ապէս+-ութիւն *յոգնապիսութիւն*

22. -առօտ+-ութիւն *կարճառօտութիւն*

23. -աստ+-ութիւն *նուաստութիւն*

24. -ատ+-ութիւն *բացատութիւն, գլխատութիւն, գունատութիւն, երկատութիւն, թլփատութիւն, խրամատութիւն, կառափնատութիւն, կըրճատութիւն, կնատութիւն, քաղթնատութիւն*

25. -ար+-ութիւն *աստուածարութիւն, մթարութիւն*

26. -արան+-ութիւն *աւետարանութիւն*

27. -արիմ/երիմ+-ութիւն *հաւատարմութիւն, մտերմութիւն*

28. -աւ+-ութիւն *իրաւութիւն*

29. -աւէտ+-ութիւն *ընչաւէտութիւն, ծաղկաւէտութիւն, շահաւէտութիւն*

30. -աւոր+-ութիւն *ազգաւորութիւն, ախտաւորութիւն, ահաւորութիւն, աղեղնաւորութիւն, աղիտաւորութիւն, անձնաւորութիւն, առաջաւորութիւն, արգասաւորութիւն, արգելաւորութիւն, արուեստաւորութիւն, աւետաւորութիւն, բախտաւորութիւն, բանաւորութիւն, բարաւորութիւն և այլն*

31. -եալ+-ութիւն *անկելութիւն, առաքելութիւն, դենելութիւն, կատարելութիւն, հեծելութիւն, մեռելութիւն, յարուցելութիւն, օծելութիւն*

32. -եայ+-ութիւն *դժնէութիւն, քրիստոնէութիւն*

33. -եկան+-ութիւն *շահեկանութիւն/շայեկանութիւն*

34. -եղ+-ութիւն *գահեղութիւն, ինքնեղութիւն, կարշնեղութիւն, համեղութիւն, շրեղութիւն, ուժեղութիւն, պաճարեղութիւն*

35. -եղէն+-ութիւն *հրեղենութիւն, միեղինութիւն, նիւթեղինութիւն*

36. -եղի+-ութիւն *աղտեղութիւն*

37. -ենի+-ութիւն *վայրենութիւն*

38. -երորդ+-ութիւն *եօթներորդութիւն*

39. -եցիկ+-ութիւն *գեղեցկութիւն*

40. -թար+-ութիւն *վատթարութիւն*

41. -ի$^{1}$+-ութիւն *արիութիւն, ընտանութիւն, կորովութիւն*

42. -ի$^{3}$+-ութիւն *գարշելութիւն, երևելութիւն, սքանչելութիւն*

43. -իկ$^{1}$+-ութիւն *փոքրկութիւն*

44. -իկ$^{2}$+-ութիւն *սաստկութիւն*

45. -ին+-ութիւն *մեկնութիւն, յետնութիւն, սրտնութիւն*

46. -իչ+-ութիւն *արարչութիւն, գրչութիւն, դառնայցչութիւն, թովչութիւն, ծնչութիւն, հալածչութիւն, մարթչութիւն, նկարչութիւն, վարչութիւն, տուչութիւն*

47. -կան+-ութիւն *բծկանութիւն, վարձկանութիւն*

48. -կեր+-ութիւն *աղօթկերութիւն*

49. -կին+-ութիւն *նախկնութիւն*

50. -կոտ+-ութիւն *վեհերկոտութիւն*

51. -նի+-ութիւն *գաղտնութիւն, յայտնութիւն, նախնութիւն*

52. -ոգ+-ութիւն *նորոգութիւն*

53. -ող$^{1}$+-ութիւն *աջողութիւն/յաջողութիւն, իրողութիւն*

54. -ող$^{2}$+-ութիւն *ազդողութիւն, արարողութիւն, բարկացողութիւն, գիտողութիւն, գոհացողութիւն, դատողութիւն, լսողութիւն, համարողութիւն, շարժողութիւն, սաղմոսողութիւն, սպանողութիւն, տեսանողութիւն, տեսողութիւն և այլն*

55. -ոյ+-ութիւն *հաճոյութիւն, պիտոյութիւն*

56. -ոյթ+-ութիւն *երևութութիւն*

57. -ոտ+-ութիւն *բորոտութիւն, երկնչոտութիւն, պակշոտութիւն, պատկառոտութիւն, վավաշոտութիւն*

58. -որդ+-ութիւն *աւելորդութիւն, լծորդութիւն, կցորդութիւն, հակառակորդութիւն, հանապազորդութիւն, հասարակորդութիւն, ճանապարհորդութիւն, յաջորդութիւն, նաւորդութիւն, ուղղորդութիւն, տասանորդութիւն*

59. -ուակ+-ութիւն *կարուակութիւն*

60. -ուկ+-ութիւն *հարցկութիւն, նեղկութիւն*



61. -ուհի+-ութիւն *քրմուհութիւն*

62. -ուն+-ութիւն *արթնութիւն, թաքնութիւն, կանգնութիւն*

63. -ունակ+-ութիւն *պարունակութիւն*

64. -ուոր+-ութիւն *զինուորութիւն*

65. -ուչ+-ութիւն *վայելչութիւն, տեսչութիւն*

66. -ուստ+-ութիւն *հարստութիւն, որկորստութիւն*

67. -ոք+-ութիւն *բարիոքութիւն*

68. -չոտ+-ութիւն *երկչոտութիւն*

69. -ստ+-ութիւն *զգաստութիւն, իմաստութիւն*

70. -րորդ+-ութիւն *երկրորդութիւն, երրորդութիւն, չորրորդութիւն*

71. -օթ+-ութիւն *ծանօթութիւն*

72. -օն+-ութիւն *քանիօնութիւն/քանօնութիւն*

*LXI.* -ուկ

1. -այն+-ուկ *միայնուկ*
2. -իւղ+-ուկ *երկիւղուկ*

*LXII.* -ուհի

1. -եալ+-ուհի *առաքելուհի*
2. -ստ+-ուհի *իմաստուհի*

*LXIII.* -ումն

1. -ակ+-ումն *կայծակումն, կուտակումն, սխալակումն*
2. -ան+-ումն *բաժանումն, պատանումն, վզանումն*
3. -ատ+-ումն *խածատումն*
4. -ատակ+-ումն *յիշատակումն*
5. -ար+-ումն *զարդարումն*
6. -արան+-ումն *աւետարանումն*
7. -թար+-ումն *վատթարումն*
8. -ին+-ումն *առաջնումն*
9. -կ+-ումն *խեթկումն*
10. -կին+-ումն *կրկնումն*
11. -ոգ+-ումն *նորոգումն*
12. -ող$^{1}$+-ումն *յաջողումն*
13. -ոտ+-ումն *խոցոտումն, փողոտումն*
14. -տ-+-ումն *բեկտումն, ձգտումն, քակտումն, օծտումն*
15. -րորդ+-ումն *երկրորդումն*

LXIV. -ուն

1. -ած+-ուն *նիւթծուն*
2. -ատ[1]+-ուն *հաստատուն*
3. -ատ[2]+-ուն *պատառատուն*
4. -ար+-ուն *չարդարուն, յարդարուն*
5. -ոտ[2]+-ուն *պատառոտուն*
6. -ստ+-ուն *իմաստուն*

LXV. -ունք[1]

1. -աւ+-ունք *իրաւունք*

LXVI. -ունք[2]

1. -ան+-ունք *մսանունք*
2. -իկ+-ունք *բերդկունք, վանկունք*

LXVII. -ուստ

1. -ունի(ք)+-ուստ *արքունուստ*
2. -րորդ+-ուստ *երկրորդուստ*
3. -ք+-ուստ *ներքուստ*

LXVIII. -ուտ

1. -ակ+-ուտ *գազանակուտ*
2. -եղ+-ուտ *գոյեղուտ*

LXIX. -ուց

1. -ակար+-ուց *կամակարուց*
2. -(ու)նջ+-ուց *վաղնջուց*

LXX. -ուք

1. -աւ+-ուք *սակաւուք*

LXXI. -ս

1. -ագոյն+-ս *դիւրագոյնս, թուլագոյնս, լաւագոյնս, խորագոյնս, համարձակագոյնս, հպարտագոյնս, յստակագոյնս, յաճախագոյնս, յոլովագոյնս, պարարտագոյնս, պերճագոյնս, ստիպագոյնս*
2. -ած+-ս *ստուերածս*
3. -աք+-ս *արտաքս*
4. -եան+-ս *յաւիտեանս*
5. -եցիկ+-ս *գեղեցիկս*



6. -ուկ+-ս *նախանձուկս, շնորհուկս, պատկառուկս*
7. -ք+-ս *ներքս*

LXXII. -ք

1. -ած+-ք *անձրեւածք, կեղեւածք, որմածք, տարածածք*
2. -ուած+-ք *խառնուածք, կտորուածք*
3. -ական+-ք *արիստոտելականք*
4. -անի+-ք *արժանիք, ընտանիք*
5. -արան+-ք *կերպարանք*
6. -եայ+-ք *առաջեայք*
7. -եան+-ք *գրեանք, եւայեանք, դրահեանք, որեանք, պիթագորեանք*
8. -ենի+-ք *հայրենիք*
9. -իչ+-ք *հոտոտիչք*
10. -նի+-ք *գաղտնիք, նախնիք*
11. -ուկ+-ք *խրատուկք*
12. -ունդ+-ք *ծնունդք*
13. -ունի+-ք *արքունիք*
14. -ուտ+-ք *խորուտք*
15. -օն+-ք *գողօնք*

LXXIII. օրէն

1. -ակ+-օրէն *միակորէն*
2. -ան+-օրէն *իշխանորէն*
3. -անի+-օրէն *կենդանորէն*
4. -աւոր+-օրէն *գլխաւորորէն, երկրաւորորէն*
5. -եալ+-օրէն *առաքելորէն*
6. -եցիկ+-օրէն *գեղեցկորէն*
7. -ուած+-օրէն *պատուածորէն*
8. -ուկ+-օրէն *յատկորէն*
9. -ուոր+-օրէն *գինուորորէն*
10. -ուրդ+-օրէն *խորհրդորէն*
11. -ցի+-օրէն *նմանցորէն*

3. *[(Sa)a]a—եռածանց բաղադրությունները քանակով մեծապես զիջում են երկածանցներին, սակայն այստեղ ևս ամենից ավելի գործածական են եզրային* -ութիւն, -ագոյն, -ակար, -արար *ածանցները։ Այս կաղապարի մեջ մտնող կազմությունները նույնպես խմբավորում ենք ըստ վերջին ածանցի, ապա նաև նրան նախորդող ածանցի ընդհանրու-*

թյան։ Նշված կազմությունների մեջ հանդիպում են հետևյալ ենթակաղապարները՝ 3ա. [(S̲a)a]a—բնաւորականագոյն, 3բ. [(Sa̲̅)a]a—առաջնորդական, 3գ. [(Sa)a̲]a—իմաստնական, 3դ. [(S̲a̲̅)a]a—ծննդականութիւն, 3ե. [(Sa̲)a̲]a—գեղեցկագունութիւն, 3զ. [(S̲a̅)a̲]a—մշտնջենաւոր, 3է. [(S'a)a]a—արարողականութիւն, 3ը. [S'a̲)a]a—արարչականութիւն, 3թ. [(Sa)a]'a—իմաստացուցչութիւն։

*I.* -աբար

1. -իւղ + -ած + -աբար *երկիւղածաբար*
2. -ող + -ակ + -աբար *յաջողակաբար*
3. -ոյ + -ական + -աբար *բարոյականաբար*
4. -ան + -որդ + -աբար *փոխանորդաբար*
5. -ստ + -ուն + -աբար *իմաստնաբար*

*II.* -ագոյն

1. -իւղ + -ած + -ագոյն *երկիւղածագոյն*
2. -ող + -ակ + -ագոյն *յաջողակագոյն*
3. -ան + -ական + -ագոյն *կենդանականագոյն, նշանականագոյն*
4. -աւոր + -ական + -ագոյն *բնաւորականագոյն, սպասաւորականագոյն, օրինաւորականագոյն*
5. -ին + -ական + -ագոյն *վերնականագոյն*
6. -իւ + -ական + -ագոյն *ազնուականագոյն*
7. -ող + -ական + -ագոյն *ըմբռնողականագոյն*
8. -ոյ + -ական + -ագոյն *բարոյականագոյն*
9. -ումն + -ական + -ագոյն *ուսումնականագոյն*
10. -ունդ + -ական + -ագոյն *ծննդականագոյն*
11. -ուչ + -ական + -ագոյն *վայելչականագոյն*
12. -ուրդ + -ական + -ագոյն *խորհրդականագոյն*
13. -ակ + -աւոր + -ագոյն *օրինակաւորագոյն*
14. -անի + -աւոր + -ագոյն *արժանաւորագոյն*
15. -ուն + -աւոր + -ագոյն *բեղնաւորագոյն*
16. -ին + -որդ + -ագոյն *առաջնորդագոյն*
17. -ստ + -ուն + -ագոյն *իմաստնագոյն*
18. -ք + -ս + -ագոյն *ներքսագոյն*

*III.* -ակ²

1. -ք + -ին + -ակ *ներքնակ*



*IV.* -ական

1. -այն + -աւոր + -ական *միայնաւորական*
2. -արան + -ող + -ական *կերպարանողական*
3. -իլ + -արան + -ական *տեսլարանական*
4. -ին + -որդ + -ական *առաջնորդական*
5. -նի + -ող + -ական *յայտնողական*
6. -ունջ + -եան + -ական *մշտնջենական, տունջենական/տունջեանական*
7. -պան + -ող + -ական *պահպանողական*
8. -ստ + -ուն + -ական *իմաստնական*
9. -ք + -ին + -ական *ներքնական*
10. -օն + -եայ + -ական *պաշտօնէական*

*V.* -ային

1. -ին + -ակ + -ային *ստորնակային*
2. -ունջ + -եան + -ային *տունջենային*

*VI.* -ապէս

1. -անի + -աւոր + -ապէս *արժանաւորապէս*
2. -արան + -ական + -ապէս *աւետարանականապէս*
3. -աւոր + -ական + -ապէս *բնաւորականապես*
4. -եղ + -ական + -ապէս *հանճարեղականապէս*

*VII.* -աւոր

1. -իւն + -ական + -աւոր *արդիւնականաւոր*
2. -ունջ + -եան + -աւոր *մշտնջենաւոր*
3. -ստ + -ուն + -աւոր *իմաստնաւոր*

*VIII.* -եայ

1. -որ + -ին + -եայ *երեկորնեայ*

*IX.* -ի

1. -իկ + -եան + -ի *վայրկենի*
2. -ք + -ին + -ի *ներքինի*

*X.* -իկ

1. -աւ + -ացի + -իկ *իրաւացիկ*

*XI.* -ն

1. -ան + -ական + -ն *բաժանականն*

2. -ի + -ական + -ն *գործիականն*

3. -ող + -ական + -ն *ազդողականն, դատողականն, համարողականն, շինողականն, սափրողականն, քերթողականն*

4. -ոյ + -ական + -ն *բարոյականն*

5. -ումն + -ական + -ն *ուսումնականն/ուսմնականն*

6. -ուրդ + -ական + -ն *կացրդականն*

XII. -ութիւն

1. -եցիկ + -ագոյն + -ութիւն *գեղեցկագոյնութիւն*

2. -իղ + -ած + -ութիւն *երկիղածութիւն*

3. -և + -ակ + -ութիւն *հետևակութիւն*

4. -ող + -ակ + -ութիւն *(յ)աջողակութիւն*

5. -ստ + -ակ + -ութիւն *իմաստակութիւն*

6. -ան + -ական + -ութիւն *իշխանականութիւն*

7. -աստ + -ական + -ութիւն *նաւաստականութիւն*

8. -աւոր + -ական + -ութիւն *թագաւորականութիւն*

9. -ին + -ական + -ութիւն *արդիւնականութիւն*

10. -իչ + -ական + -ութիւն *արարչականութիւն*

11. -ող + -ական + -ութիւն *արարողականութիւն, ըմբռնողականութիւն, մատուցողականութիւն, քերթողականութիւն*

12. -որդ + -ական + -ութիւն *ճանապարհորդականութիւն*

13. -ումն + -ական + -ութիւն *ուսումնականութիւն*

14. -ունդ + -ական + -ութիւն *ծննդականութիւն, սննդականութիւն*

15. -ուստ + -ական + -ութիւն *փախստականութիւն*

16. -ուրդ + -ական + -ութիւն *խորհրդականութիւն*

17. -ստ + -ական + -ութիւն *իմաստականութիւն*

18. -ակ + -աւոր + -ութիւն *ճաշակաւորութիւն, վիճակաւորութիւն*

19. -այն + -աւոր + -ութիւն *միայնաւորութիւն/մենաւորութիւն*

20. -ան + -աւոր + -ութիւն *նշանաւորութիւն*

21. -անի + -աւոր + -ութիւն *արժանաւորութիւն*

22. -տակ + -աւոր + -ութիւն *յիշատակաւորութիւն*

23. -աւ + -աւոր + -ութիւն *սակաւաւորութիւն*

24. -ի + -աւոր + -ութիւն *մայրևորութիւն*

25. -նի + -աւոր + -ութիւն *յայտնաւորութիւն*

26. -ոտ + -աւոր + -ութիւն *հոտոտաւորութիւն*

27. -ուն + -աւոր + -ութիւն *բեղնաւորութիւն*

28. -օն + -աւոր + -ութիւն *զգօնաւորութիւն*



29. -կան + -ացու + -ութիւն *մահկանացութիւն*

30. -կին + -ապատիկ + -ութիւն *կրկնապատկութիւն*

31. -ստ + -իչ + -ութիւն *իմաստացուցչութիւն*

32. -ուած + -ող + -ութիւն *հերձուածողութիւն*

33. -ակ + -որդ + -ութիւն *վիճակորդութիւն*

34. -ան + -որդ + -ութիւն *փոխանորդութիւն*

35. -եցիկ + -որդ + -ութիւն *գեղեցկորդութիւն*

36. -ին + -որդ + -ութիւն *առաջնորդութիւն, միջնորդութիւն*

37. -ք + -ս + -ութիւն *ներքսութիւն*

XIII. -ս

1. -ագին + -ագոյն + -ս *ահագնագոյնս*

2. -եւ + -ագոյն + -ս *հետեւագոյնս*

3. -իկ + -ագոյն + -ս *սաստկագոյնս*

4. -ուստ + -եայ + -ս *փախստեայս*

5. -իղ + -ուկ + -ս *երկիղուկս*

XIV. -ք

1. -առօտ + -իւ + -ք *համառօտիւք*

2. -աստան + -եայ + -ք *այգեստանեայք, Հայաստանեայք, հեռաստանեայք, Հրէաստանեայք, Տաճկաստանեայք*

3. -որդ + -եայ + -ք *լեռնորդեայք*

4. -ասուն + -որդ + -ք *քառասնորդք*

5. -(ա)գին + -ուց + -ք *մոլեգնուցք*

6. -օն + -ուկ + -ք *պաշտօնուկք*

4. {[(Sa)a]a}a *քառածանց բաղադրությունները խիստ սահմանափակ են, մեր ընտրանքում վկայված են միայն հետևյալ օրինակները.*

I. -աբար

1. -ունջ + -եան + -աւոր + -աբար *մշտնջենաւորաբար*

II. -ական

1. -ունջ + -եան + -աւոր + -ական *մշտնջենաւորական*

III. -ութիւն

1. -ին + -աւոր + -ական + -ութիւն *արդիւնաւորականութիւն*

2. -ան + -ող + -ական + -ութիւն *բաժանողականութիւն*

3. -պան + -ող + -ական + -ութիւն *պահպանողականութիւն*

4. -ին+-որդ+-ական+-ութիւն *առաջնորդականություն*

5. -ունչ+-ական+-աւոր+-ութիւն *մշտնջենավորություն*

*Ածանցների զուգորդություններ պարունակող* (Sa)a, [(Sa)a]a *և* {[(Sa)a]a}a *կաղապարների քննությունից պարզվում է, որ երկվերջածանց կազմություններում հանդիպում են 566 տարբեր զուգորդություններ, եռավերջածանց կազմություններում՝ 102 և քառավերջածանց կազմություններում՝ 7, ընդ որում, գրաբարի 220 վերջածանցներից 73-ը կարող են հանդես գալ եզրային դիրքում, իրենցից առաջ ունենալով 1 ածանց, 14-ը կարող են կցվել 2 ածանց ունեցող, իսկ 3-ը՝ 3 ածանց ունեցող երկրորդային սերող հիմքերի։*

*Յուրաքանչյուր ածանցի կազմած զուգորդությունների քանակը, ըստ նվազող հաճախականության, արտացոլված է 6-րդ աղյուսակում։ Ինչպես տեսնում ենք, աղյուսակի 3 հատվածում էլ առաջին տեղում է* -ութիւն *ածանցը, I և II հատվածներում (երկանդամ և եռանդամ զուգորդություններ) գրեթե նույն հաջորդականությամբ հանդես են գալիս* -ագոյն, -ական, -աբար, -ապէս, -աւոր *ածանցները, այն մասնակի տարբերությամբ, որ* -ական *և* -ագոյն *ածանցները II հատվածում փոխում են իրենց տեղերը, II հատվածում 4-րդ տեղը* -աբար*-ի փոխարեն գրավում են* -ն, -ք *գոյականակերտ ածանցները, իսկ* -աբար*-ը մակբայակերտ* -ս *ածանցի հետ կիսում է 5-րդ տեղը։ III հատվածում նույնպես պահպանվում է հիմնական հաջորդականությունը, բայց առանց* -ագոյն *ածանցի։*

*Երկվերջածանց կազմություններում 73 ածանցից 44-ը (60,2%) զուգորդություններ են կազմում միայն 3 (8 ածանց), 2 (17 ածանց) և 1 (19 ածանց) այլ ածանցների հետ։*

5. (aS)a—*նախածանց ունեցող երկրորդային սերող հիմքով վերջածանցավոր կազմություններ (հմմտ. նախածանցման* a(Sa) *կաղապարի հետ)։ Բաղադրություններն այստեղ ես խմբավորում ենք ըստ վերջածանցների, մասնավորեցնելով ենթակաղապարների տակ։ Վկայված ենթակաղապարներն են՝ 5ա.* (a$\underline{S}$)a—*տգիտաբար, 5բ.* (a$S^f$)a—*բաղկացաբար, 5գ.* (a$\underline{S}^f$)a—*առանձնաբար։*

-աբար

ան-...-աբար *անազատաբար, անանջատաբար, անարուեստաբար, անյապաղաբար, անշարժաբար, անողորմաբար, անփորձաբար, անօտարաբար և այլն*

*5ա.* (a$\underline{S}$)a *ամբարշտաբար, ամբծաբար, անգիտաբար, անզգուշաբար, անլռաբար, անխուզաբար և այլն*



Աղյուսակ 6

| Զուգորդությունների կազմը | № | Եզրային վերջածանցներ | Եզրային վերջածանցների քանակը | Զուգորդությունների քանակը |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1 երկանդամ | 1 | -ութիւն | 1 | 72 |
| | 2 | -ական | 1 | 58 |
| | 3 | -ագոյն | 1 | 52 |
| | 4 | -աբար | 1 | 45 |
| | 5 | -ապէս | 1 | 36 |
| | 6 | -աւոր | 1 | 22 |
| | 7 | -եալ | 1 | 16 |
| | 8 | -իչ, -ումն, -ք | 3 | 15 |
| | 9 | -ի¹ | 1 | 14 |
| | 10 | -ակ² | 1 | 13 |
| | 11 | -եայ | 1 | 12 |
| | 12 | -օրէն | 1 | 11 |
| | 13 | -արան | 1 | 10 |
| | 14 | -իկ¹, -իկ², -ին, -ս | 4 | 7 |
| | 15 | -ակի, -անոց, -անք, -եակ, -եան, -ուն | 6 | 6 |
| | 16 | -ակ¹, -ոց¹, -ուած | 3 | 5 |
| | 17 | -ող² | 1 | 4 |
| | 18 | -ային, -ացու, -ի³, -ն, -ոյ, -որդ, -ոց², -ուստ | 8 | 3 |
| | 19 | -ած, -այն, -ապան, -ացի¹, -աւ, -աւէտ, -ր, -երէն, -երորդ, -իք, -ոյք, -ոտ, -ուկ, -ուհի, -ունք², -ուտ, -ուց | 17 | 2 |
| | 20 | -ագին, -ամէտ, -անի², -ապատիկ, -աստան, -եկի, -եկին, -եղ, -եղէն, -երեակ, -եքեան, -իցս, -իւ, -կէն, -կոտ, -նեար, -ոյն, -ունք¹, -ուք | 19 | 1 |
| | | Ընդամենը | 73 | 566 |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| II | 1 | -ություն | 1 | 37 |
| Ածանցում | 2 | -ագույն | 1 | 18 |
| | 3 | -ական | 1 | 11 |
| | 4 | -ն, -ք | 2 | 2×6 |
| | 5 | -արար, -ս | 2 | 2×5 |
| | 6 | -ապէս | 1 | 4 |
| | 7 | -ւոր | 1 | 3 |
| | 8 | -ային, -ի | 2 | 2×2 |
| | 9 | -ակ, -եայ, -իկ | 3 | 3×1 |
| | | Ընդամենը | 14 | 102 |
| III | 1 | -ություն | 1 | 5 |
| Բառան-գամ | 2 | -արար, -ական | 2 | 2×1 |
| | | Ընդամենը | 3 | 7 |

5բ. $(aS^{f})a$—անդարձարար, անզգայարար

առ-...-արար առպատշաճարար, 5գ. $(a\underline{S}^{f})a$—առանձնաբար

բաղ-...-արար 5բ. $(aS^{f})a$—բաղկացաբար

բաց-...-արար բացասաբար, բացորոշաբար

ընդ-...-արար 5ա. $(a\underline{S})a$—ընդդիմաբար, ընդմիջաբար

հակ-...-արար հակասաբար

հոմ-...-արար հոմանունաբար

յար-...-արար յարանունաբար

նախ-...-արար նախերգաբար

ներ-...-արար ներհակաբար

տ-....-արար տկարաբար, 5ա. $(a\underline{S})a$—տգիտաբար

փաղ-...-արար փաղանունաբար

-ագույն

ան-...-ագույն անամօթագոյն, անբանագոյն, անբաւագոյն, անդադարագոյն, անխօսագոյն, անհակառակագոյն, աննիւթագոյն և այլն, 5ա. $(a\underline{S})a$—աներաժշտագոյն, անզգուշագոյն, անհանգիտագոյն, անմըտագոյն և այլն



5բ. $(aS^{f})a$—անզգամագոյն, անզգայագոյն

առ-...-ագույն առաւելագոյն, առընթերագոյն, առհասարակագոյն, առողջագոյն

արտ-...-ագույն 5ա. $(a\underline{S})a$—արտօրինագոյն

դժ-...-ագույն դժպահագոյն

ընդ-...-ագույն ընդարձակագոյն, 5ա. $(a\underline{S})a$—ընդհանրագոյն

յ-...-ագույն յառաջագոյն, յերկարագոյն

ներ-...-ագույն ներգործագոյն, ներյարմարագոյն

տ-...-ագույն տգեղագոյն, տկարագոյն, 5ա. $(a\underline{S})a$—տգիտագոյն

առ-... -ած առարկած

ընդ-....-ած ընդելուզած

ստոր-...-ած ստորոգած

-ակ

ան-...-ակ անտոհմակ

առ-...-ակ 5գ. $(a\underline{S}^{f})a$—առանձնակ

բաց-...-ակ բացերեակ

դժ-...-ակ դժկամակ

ընդ-...-ակ 5ա. $(a\underline{S})a$—ընդդիմակ

նախ-...-ակ նախերեակ

-ական

ան-...-ական անազատական, անազդական, անախորժական, անանջատական, անանցական, անաշառական, անարգելական, անարիական և այլն, 5ա. $(a\underline{S})a$—աներժշկական, անզղջական, անզուգական, անմարմնական, անշնչական, անպատժական և այլն, 5բ. $(aS^{f})a$—անճանաչական, անստացական, 5գ. $(a\underline{S})\underline{a}$—անկարեկան

առ-...-ական առասական, առաւելական, առընտելական, առճանապարհական, առողջական, 5գ. $(a\underline{S}^{f})a$—առանձնական

բաղ-...-ական բաղբանական, բաղխոհական, բաղհաւաքական, բաղհյուսական, 5բ. $(aS^{f})a$—բաղկացական

բաց-...-ական բացասական, բացերեական, 5բ. $(aS^{f})a$—բացբարձական

գեր-...-ական գերհիւսիսական, 5գ. $(a\underline{S}^{f})a$—գերհատուցական

ընդ-...-ական ընդունական, ընդունայնական, 5ա. $(a\underline{S})a$—ընդդիմական, ընդհանրական

5ր. $(aS^{f})\bar{a}$—անզգամագոյն, անզգայագոյն
ցական*

մակ- . . . -ական* մակածական*, 5ր. $(aS^{f})a$—մակստացական*

յ- . . . -ական յերկուական

նախ- . . . -ական նախասպնչական*, նախունական, 5ր. $(aS^{f})a$—նախիմացական*

ներ- . . . -ական ներածական, ներանձնական, ներգործական, ներհական (վանկազրկությամբ՝ ներհականական-ից), ներմեղական, 5ա. $(a\underline{S})a$—ներբուսական, ներհմտական, ներշնչական, ներշրջական, ներպտղական

շաղ- . . . -ական շաղկապական

ստոր- . . . -ական ստորասական

վեր- . . . -ական վերածական, վերբերական, 5ա. $(a\underline{S})a$—վերլուծա-

առ . . . -ած առարկած

տար- . . . -ական տարաշխարհական

տրամ- . . . -ական տրամատական

-ակի

ան- . . . -ակի անբաւակի, աներևակի, անկարծակի, անհեշտակի*, անորոշակի*

առ- . . . -ակի 5գ. $(a\underline{S}^{f})a$—առանձնակի

հոմ- . . . -ակի հոմանունակի

յար- . . . -ակի յարանունակի

փաղ- . . . -ակի փաղանունակի

-ային

ան- . . . -ային 5ա. $(a\underline{S})a$—անմարմնային

առ- . . . -ային—առողջային, 5գ. $(a\underline{S}^{f})a$—առանձնային

-այն

առ- . . . -այն առժամայն

համ- . . . -այն համանգամայն

-այք

ըն(դ)- . . . -այք ընձեռայք

հակ-. . . . -այք հակոտնայք

-անոց

ց-. . . . -անոց ցայգանոց



-անք

ան- . . . -անք անարգանք, անպարապանք

առ- . . . -անք առաւելանք

ընդ- . . . -անք 5ա. $(a\underline{S})a$—ընդվզանք

բստ- . . . -անք 5ա. $(a\underline{S})a$—բստգտանք

չ- . . . -անք 5ա. $(a\underline{S})a$—չգիտանք

տ- . . . -անք 5ա. $(a\underline{S})a$—տգիտանք

-ապէս

ան- . . . -ապէս անախտապէս, անարգապէս, անբանապէս, անբաւապէս, անդադարապէս, անզբաղապէս, անխոտորապէս, անխրատապէս, անծանրապէս, անկարգապէս, անմահապէս, անյեղապէս, աննախանձապէս, անշարժապէս, անշփոթապէս, անչափապէս, անսահմանապէս, ան-սխալապէս, 5ա. $(a\underline{S})a$—անբծապէս, անխտրապէս, անպատմապէս, անստապէս

առ . , . -ապէս առաւելապէս, 5գ. $(a\underline{S}^{f})a$—առանձնապէս

բաց- . . . -ապէս բացերևապէս

գեր- . . . -ապէս գերաշխարհապէս, գերունակապէս

ընդ- . . . -ապէս ընդարձակապէս

յար- . . . -ապէս յարանունապէս

ներ- . . . -ապէս ներածապէս, ներհակապէս

վեր- . . . -ապէս վերածապէս

տար . . . -ապէս տարբերապէս

-աւոր

ան- . . . -աւոր անապատաւոր

զ- . . . -աւոր զառաչաւոր

ներ- . . . -աւոր ներանձնաւոր

-ել

առ- . . . -ել առաւելել, 5ր. $(aS^{f})a$—առէացել, 5գ. $(a\underline{S}^{f})a$—առլցել

բաղ- . . . -ել 5ր. $(aS^{f})a$—բաղկացել

ենթ- . . . -ել ենթանկել

զ- . . . -ել զմածել

ընդ- . . . ել ընդկողմնել/ընկողմնել, 5ր. $(aS^{f})a$—ընդոստացել, ընկալել

նախ- . . . -եալ *նախառեալ, 5բ.* (a$S^{f}$)a—*նախընծայացեալ*
շար- . . . -եալ *5բ.* (a$S^{f}$)a—*շարկացեալ*
ստոր- . . . -եալ *ստորանկեալ, ստորոգեալ*
վեր- . . . -եալ *վերուսեալ*
տար- . . . -եալ *տարընկղմեալ*

-եակ

առ- . . . -եակ *առօրեակ*

-ի$^{3}$

բաղ- . . . -ի *5բ.* (a$S^{f}$)a—*բաղկացելի*
ընդ- . . . -ի *ընդունելի*
մակ- . . . -ի *5բ.* (a$S^{f}$)a—*մակացելի*
ստոր- . . . -ի *ստորոգելի*

-իկ$^{2}$

ան- . . . -իկ *անազատիկ, անաշխարհիկ, անառիկ, անարգիկ, անկեղծիկ, անտենչիկ*
առ- . . . -իկ *առանցիկ*
բաց- . . . -իկ *5բ.* (a$S^{f}$)a—*բացընկեցիկ*
նախ- . . . -իկ *նախիղձիկ, 5բ.* (a$S^{f}$)a—*նախասացիկ*
տար- . . . -իկ *տարաշխարհիկ*

-ին

ան- . . . -ին *անհնարին*

-իչ

բաղ- . . . -իչ *5բ.* (a$S^{f}$)a—*բաղկացուցիչ*
ընդ- . . . -իչ *ընդունիչ, 5բ.* (a$S^{f}$)a—*ընդոստուցիչ*

-ն

առ- . . . -ն *5բ.* (a$S^{f}$)a—*առանձինն*

-ող

ան- . . . -ող *անարգող*
առ- . . . -ող *5ա.* (a$\underline{S}$)a—*առգնող*
բաղ- . . . -ող *բաղդատող*
ընդ- . . . -ող *ընդունող*



նախ- . . . -ող *նախասող*
վեր- . . . -ող *վերծանող*

-ու

ան- . . . -ու *անարգու*
առ- . . . -ու *առարկու*
բաղ . . . -ու *5բ.* (a$S^{f}$)a—*բաղկացու*
մակ- . . . -ու *մակացու*

-ուած

առ- . . . -ուած *առարկուած, առեղծուած*

-ութիւն

ան- . . . -ութիւն *անազատութիւն, անախտութիւն, անանունութիւն, անարատութիւն, անբաւութիւն, անեղծութիւն, անզարդութիւն և այլն, 5ա.* (a$\underline{S}$)a—*անբժշկութիւն, անբծութիւն, անգիտութիւն, անդլութիւն, անզուգութիւն, անժուժութիւն, անծնութիւն և այլն, 5բ.* (a$S^{f}$)a—*անգոյութիւն, անդարձութիւն, անզգամութիւն, անզգայութիւն, անիմացութիւն, անմոռացութիւն, անստացութիւն*
ապ(ի)- . . . -ութիւն *ապիկարութիւն*
առ- . . . -ութիւն *առասութիւն, առարկութիւն, առաւելութիւն, առկոչութիւն, առողջութիւն, 5բ.* (a$S^{f}$)a—*առբայութիւն, առոգանութիւն*
արտ- . . . -ութիւն *արտառութիւն, արտելութիւն*
բաղ- . . . -ութիւն *բաղանունութիւն, բաղդասութիւն, բաղդատութիւն, 5բ.* (a$S^{f}$)a—*բաղկացութիւն*
բար- . . . -ութիւն *բարառնութիւն*
բաց- . . . -ութիւն *բացառութիւն, բացասութիւն, բացարձակութիւն, բացերեսութիւն, բացերեւութիւն, բացորոշութիւն*
դեր-...-ութիւն *դերանունութիւն*
դժ- . . . -ութիւն *դժգոհութիւն, դժկերպութիւն, դժպաշտութիւն*
ընդ- . . . -ութիւն *ընդարձակութիւն, ընդդիրութիւն, ընդերկարութիւն, ընդունայնութիւն, ընձեռութիւն, 5ա.* (a$\underline{S}$)a—*ընդդիմութիւն, ընդհանրութիւն*
թեր- . . . -ութիւն *թերանունութիւն*
հակ- . . . -ութիւն *հակասութիւն*
համ- . . . -ութիւն *համանունութիւն, 5բ.* (a$S^{f}$)a—*համիմացութիւն*
հոմ- . . . -ութիւն *հոմանունութիւն*

մակ-...-ություն *մակածություն, մականունություն, 5բ.* (a$S^{f}$)a—*մակացություն*

նախ-...-ություն *նախախտություն, նախառություն, նախեղություն, նախերգություն, 5բ* (a$S^{f}$)a—*նախաասացություն, նախիմացություն*

ներ-...-ություն *ներածություն, ներգործություն, ներհակություն, 5ա.* (a$\underline{S}$)a—*ներհմտություն*

շաղ-...-ություն *շաղկապություն*

չ-...-ություն *չկամություն, չմարթություն, 5ա.* (a$\underline{S}$)a—*չհլություն*

պար-...-ություն *պարառություն*

ստոր-...-ություն *ստորասություն, ստորոգություն*

վեր-...-ություն *վերելություն, վերեկություն, վերերևություն, վերծանություն, վերճառություն, վերսաստություն, վերտառություն, 5ա.* (a$\underline{S}$)a—*վերլուծություն, 5բ.* (a$S^{f}$)a—*վերամբարձություն, վերասացություն*

տ-...-ություն *տգեղություն, տկարություն, տմարդություն, 5ա.* (a$\underline{S}$)a—*տգիտություն, տգոնություն, տմոնություն*

տար-...-ություն *տարբերություն, տարորոշություն, տարօրենություն*

տրամ-...-ություն *տրամատություն*

ց-...-ություն *ցայգություն, ցերեկություն*

քոր-...-ություն *քորեպիսկոպոսություն*

-ումն

ապ-...-ումն *ապարասանումն*

առ-...-ումն *5գ.* (a$\underline{S}^{f}$)a—*առդրումն*

բաղ-...-ումն *բաղհավաքումն, 5բ.* (a$S^{f}$)a—*բաղեզերումն*

բաց-...-ումն *5բ.* (a$S^{f}$)a—*բացբարձումն*

ընդ-...-ումն *ընդհատումն, ընդհարումն, ընձեռումն, ընդոստումն, 5բ.* (a$S^{f}$)a—*ընդելուզումն*

հակ-...-ումն *հակորոշումն*

ստոր-...-ումն *ստորոգումն*

-ունի

առ-...-ունի *5ա.* (a$\underline{S}$)a—*առընչունի*

-ս

ան-...-ս *անխտիրս*

-ք

առ-...-ք *առանցք, 5բ.* (a$S^{f}$)a—*առգոյք*



ընդ-...-ք *ընդվայրք*

բստ-...-ք *բստիրաքանչյուրք*

*6.* (aj$S$)a *ներկայացված է հիմքակազմական նույն ենթակաղապարներով, ինչ որ նախորդ՝* 5. (aS)a *կաղապարը. 6ա.* (aj$\underline{S}$)a—*համապատուաբար, 6բ.* (aj$S^{f}$)a—*հակադարձաբար, 6գ.* (aj$\underline{S}^{f}$)a—*գերադրական*

-աբար

գեր(ա)-...-աբար *գերազարդաբար, 6բ.* (aj$S^{f}$)a—*գերագոյաբար, գերակայաբար*

հակ(ա)-...-աբար *6բ.* (aj$S^{f}$)a—*հակադարձաբար*

համ(ա)-...-աբար *համակրոնաբար, համաձայնաբար, 6ա.* (aj$\underline{S}$)a—*համապատուաբար*

յար(ա)-...-աբար *6բ.* (aj$S^{f}$)a—*յարակայաբար, յարամնացաբար*

նախ(ա)-...-աբար *նախագործաբար, նախախնամաբար, նախակարգաբար, նախայայտաբար, նախապետաբար, 6ա.* (aj$\underline{S}$)a—*նախասկզբնաբար, 6գ.* (aj$\underline{S}^{f}$)a—*նախատրաբար*

վեր(ա)-...-աբար *վերաձայնաբար*

տար(ա)-...-աբար *տարապարտաբար*

տրամ(ա)-...-աբար *տրամաբանաբար*

-ագոյն

բաղ(ա)-...-ագոյն *բաղաղանագոյն*

բաց(ա)-...-ագոյն *բացափայլագոյն*

գեր(ա)-...-ագոյն *գերազանցագոյն, գերապետագոյն, 6ա.* (aj$\underline{S}$)a—*գերաբնագոյն, գերասկզբնագոյն*

նախ(ա)-...-ագոյն *նախախնամագոյն*

տար(ա)-...-ագոյն *տարաբանագոյն*

-ած

շար(ա)-...-ած *շարագրած*

-ակ$^{3}$

արտ(ա)-...-ակ *6ա.* (aj$\underline{S}$)a—*արտախուրակ*

գեր(ա)-...-ակ *6ա.* (ajS)a—*գերագունակ*

համ(ա)-...-ակ *6բ.* (aj$S^{f}$)a—*համագոյակ*

վեր(ա)-...-ակ *6ա.* (aj$\underline{S}$)a—*վերադիտակ*

տրամ(ա)-...-ակ *տրամաբանակ*

-ական

ապ(ա)-...-ական 6ա. (ajS)a—ապացուցական

արտ(ա)-...-ական արտաբերական, 6բ. (aj$S^{f}$)a—արտագնացական, 6գ. (aj$\underline{S}^{f}$)a—արտադրական

բաղ(ա)-...-ական բաղաձայնական

գեր(ա)-...-ական գերազանցական, 6գ. (a$\underline{S}^{f}$)a—գերադրական

ենթ(ա)-...-ական ենթանմանական, 6բ. (aj$S^{f}$)a—ենթակայական

համ(ա)-...-ական 6ա. (aj$\underline{S}$)a—համաշնչական, 6բ. (aj$S^{f}$)a—համագոյական

յար(ա)-...-ական 6ա. (aj$\underline{S}$)a—յարաձգական, յարացուցական, 6բ. (aj$S^{f}$)a—յարակայական

նախ(ա)-...-ական նախագուշակական, նախադասական, նախախնամական, նախահոգական, նախատեսական, 6ա. (aj$\underline{S}$)a—նախագիտական

ստոր(ա)-...-ական 6ա. (aj$\underline{S}^{f}$)a—ստորագրական, 6գ. (aj$\underline{S}^{f}$)a—ստորադրական

վեր()ա-...-ական վերաբանական, վերաբերական, վերայաղթական, վերաշարժական, 6գ. (aj$\underline{S}^{f}$)a—վերատրական

տար(ա)-...-ական 6ա. (aj$\underline{S}$)a—տարակուսական, տարացուցական

-ակի

բաղ(ա)-...-ակի բաղաձայնակի

հակ(ա)-...-ակի 6բ. (aj$S^{f}$)a—հակադարձակի

-անք

ապ(ա)-...-անք ապագովանք

տար(ա)-...-անք 6ա. (aj$\underline{S}$)a—տարակուսանք

-ապէս

բաց(ա)-...-ապէս բացափայլապէս

գեր(ա)-...-ապէս գերազարդարապէս, 6ա. (aj$\underline{S}$)a—գերաբնապէս, գերագունապէս, 6բ. (aj$S^{f}$)a—գերագոյապէս, 6գ. (aj$\underline{S}^{f}$)a—գերադրապէս

համ(ա)-...-ապէս համաձայնապէս

նախ(ա)-...-ապէս նախախնամապէս, 6գ. (aj$\underline{S}^{f}$)a—նախատրապէս

վեր(ա)-...-ապէս վերաբերապէս

-աւոր

արտ(ա)-...-աւոր 6ա. (aj$\underline{S}$)ə—արտատպաւոր



-եալ

արտ(ա)-...-եալ 5գ. (aj$\underline{S}$)a—արտատուեալ

բաց(ա)-...-եալ բացավաղեալ, 6ա. (aj$\underline{S}$)a—բացակտրեալ, 6բ. (aj$S^{f}$)a—բացայիշեցեալ

գեր(ա)-...-եալ գերակարդեալ, գերահեղեալ, գերապարդեալ, 6ա. (aj$\underline{S}$)a—գերահնչեալ

ենթ(ա)-/ընթ(ա)-...-եալ—6գ. (ajS)a—ընթադրեալ

համ(ա)-...-եալ 6ա. (aj$\underline{S}$)a—համազուգեալ, 6բ. (aj$S^{f}$)a—համակառուցեալ

մակ(ա)-...-եալ 6բ. (aj$S^{f}$)a—մակաստացեալ

նախ(ա) ...-եալ նախահնարեալ, նախախոստովանեալ, նախասերտեալ, 6բ. (aj$S^{f}$)a—նախայարուցեալ

ներ(ա)-...-եալ 6բ. (aj$S^{f}$)a—ներադարձեալ

շար(ա)-...-եալ 6բ. (aj$S^{f}$)a—շարակցեալ

վեր(ա)-...-եալ վերաբնակեալ

տար(ա)-...-եալ 6ա. (aj$\underline{S}$)a—տարագծեալ, տարալուծեալ

-եայ

համ(ա)-...-եայ 6ա. (aj$\underline{S}$)a—համաբնեայ

-եայք

համ(ա)-...-եայք համատոհմեայք

-ենի

ապ(ա)-...-ենի ապաշնորհենի

-ի

տար(ա)-...-ի 6ա. (aj$\underline{S}$)a—տարակուսի

-իկ

գեր(ա)-...-իկ գերազանցիկ

համ(ա)-...-իկ համատոհմիկ

նախ(ա)-...-իկ նախաստեղծիկ

-իչ

վեր(ա)-...-իչ վերագուշակիչ

-ող

յար(ա)- . . . -ող *յարատեւող, յարահեւող*
նախ(ա)- . . . -ող *6ա.* (aj$\underline{S}$)a—*նախածնող*
վեր(ա)- . . . -ող *6բ.* (aj$S^f$)a—*վերահայեցող*

-ոյն

համ(ա)- . . . -ոյն *համահաղոյն*

-ու

տար(ա)- . . . -ու *տարաժամու, տարամահու*

-ութիւն

արտ(ա)- . . . -ութիւն *արտաթորութիւն, արտահոսութիւն, արտաճառութիւն, 6ա.* (aj$\underline{S}$)a—*արտաշնչութիւն, 6բ.* (aj$S^f$)a—*արտակացութիւն, 6գ.* (aj$\underline{S}^f$)a—*արտադրութիւն*

բաղ(ա)- . . . -ութիւն *բաղաձայնութիւն, բաղաղանութիւն, 6գ.* (aj$\underline{S}^f$)a—*բաղադրութիւն*

բաց(ա)- . . . -ութիւն *բացափայլութիւն, 6ա.* (aj$\underline{S}$)a—*բացառութիւն, 6բ.* (aj$S^f$)a—*բացակայութիւն, 6գ.* (aj$\underline{S}^f$)a—*բացատրութիւն*

գեր(ա)- . . . -ութիւն *գերագոյնութիւն, գերազանցութիւն, գերակատարութիւն, գերապանծութիւն, 6ա.* (aj$\underline{S}$)a—*գերաբնութիւն, գերագոյնութիւն, գերալուսութիւն, գերալրութիւն, 6բ.* (aj$S^f$)a—*գերակայութիւն, 6գ.* (aj$\underline{S}^f$)a—*գերադրութիւն*

ենթ(ա)- . . . -ութիւն *ենթադատութիւն, 6ա.* (aj$\underline{S}$)a—*ենթաձգութիւն, 6բ.* (aj$S^f$)a—*ենթակայութիւն, 6գ.* (aj$\underline{S}^f$)a—*ենթադրութիւն*

հակ(ա)- . . . -ութիւն *6բ.* (aj$S^f$)a—*հակադարձութիւն, հակակայութիւն*

համ(ա)- . . . -ութիւն *համաբանութիւն, համաբնակութիւն, համազօրութիւն, համակամութիւն, համակրօնութիւն, համաձայնութիւն, համանոյնութիւն, համասեռութիւն, համատարածութիւն, համապատասխանութիւն, 6ա.* (aj$\underline{S}$)a—*համաբնութիւն, համամտութիւն, համաշնչութիւն, 6բ.* (aj$S^f$)a—*համագոյութիւն*

մակ(ա)- . . . -ութիւն *մակակոչութիւն, 6ա.* (aj$\underline{S}$)a—*մակագրութիւն*

յար(ա)- . . . -ութիւն *6ա.* (aj$\underline{S}$)a—*յարակցութիւն, յարաձգութիւն, 6գ.* (aj$\underline{S}^f$)a—*յարադրութիւն*

նախ(ա)- . . . -ութիւն *նախագահութիւն, նախագործութիւն, նախագուշակութիւն, նախադասութիւն, նախախնամութիւն, նախախոհութիւն,*



*նախահոգութիւն, նախաճառութիւն, նախամասնութիւն, նախայայտութիւն, նախապետութիւն, նախասահմանութիւն, նախատեսութիւն, 6ա.* (aj$\underline{S}$)a *նախագիտութիւն, նախագրութիւն, նախազգուշութիւն, նախակրթութիւն, նախապատուութիւն, նախատպութիւն, 6գ.* (aj$\underline{S}^f$)a—*նախադրութիւն*

շաղ(ա)- . . . -ութիւն *շաղամանութիւն, շաղաշարութիւն*

շար(ա)- . . . -ութիւն *շարաբանութիւն, շարադասութիւն, շարակարգութիւն, շարաձայնութիւն, շարամանութիւն, շարամերձութիւն, 6ա.* (aj$\underline{S}$)a—*շարագրութիւն, 6գ.* (aj$\underline{S}^f$)a—*շարադրութիւն*

պար(ա)- . . . -ութիւն *պարաբերութիւն, 6բ.* (aj$S^f$)a—*պարագայութիւն*

ստոր(ա)- . . . -ութիւն *6ա.* (aj$\underline{S}$)a—*ստորագրութիւն, 6բ.* (aj$S^f$)a—*ստորակացութիւն, 6գ.* (aj$\underline{S}^f$)a—*ստորադրութիւն*

վեր(ա)- . . . -ութիւն *վերաբանութիւն, վերաբերութիւն, վերաճառութիւն, վերաստեղծութիւն, 6ա.* (aj$\underline{S}$)a—*վերագրութիւն, վերածնութիւն, վերաշնչութիւն, վերաշրջութիւն, 6բ.* (aj$S^f$)a—*վերաբացութիւն, վերակացութիւն, 6գ.* (aj$\underline{S}^f$)a—*վերադրութիւն, վերատրութիւն*

տար(ա)- . . . -ութիւն *տարաբերութիւն, տարաժամութիւն, տարահաւանութիւն, տարաձայնութիւն, 6ա.* (aj$\underline{S}$)a—*տարաբռնութիւն, տարագրութիւն, տարակուսութիւն, տարամտութիւն, 6բ.* (aj$S^f$)a—*տարակացութիւն, տարաբարձութիւն*

տրամ(ա)- . . . -ութիւն *տրամաբանութիւն, տրամազարդութիւն, տրամախոհութիւն, տրամախօսութիւն, 6գ.* (aj$\underline{S}^f$)a—*տրամադրութիւն*

փար(ա)- . . . -ութիւն *6բ.* (aj$S^f$)a—*փարաբարձութիւն, 6գ.* (aj$\underline{S}^f$)a—*փարադրութիւն*

-ումն

արտ(ա)- . . . -ումն *արտաբերումն, արտաչափումն, 6ա.* (aj$\underline{S}$)a—*արտաշնչումն*

բաց(ա)- . . . -ումն *բացագանչումն, բացակատարումն, բացայայտումն*

ստոր(ա)- . . . -ումն *6ա.* (aj$\underline{S}$)a—*ստորախմբումն*

վեր(ա)- . . . -ումն *վերաբերումն, վերակոչումն, 6ա.* (aj$\underline{S}$)a—*վերաշնչումն*

տար(ա)- . . . -ումն *6ա.* (aj$\underline{S}$)a—*տարակուսումն, տարացուցումն*

-ուց

տար(ա)- . . . -ուց *տարապարտուց*

-օրէն

գեր(ա)-. . . . -օրէն *գերազանցօրէն*

7. *[a(Sa)]a մեկ նախածանցով և երկու վերջածանցով նույնպես վկայված են զգալի թվով կազմություններ՝ հիմնականում* ան- *ժխտականով և* -աբար, -ագոյն, -ական, -ութիւն *եզրային վերջածանցներով։ Ենթակաղապարներն այստեղ առանձնացվում են ոչ միայն ըստ սերող հիմքերի հնչյունափոխական և քերականական ձևավորման տարբերակների, այլև ըստ ածանցների կցման հաջորդականության, այսպես՝ 7ա. [a(S̲a)]a—անմիջակաբար, 7բ. [a(Sa̲)]a անկատարելաբար, 7գ. [a(S̲a)]a—անսրբագնաբար, 7դ. [a($S^t$a)]a—անծանօթութիւն, 7ե. [a(S̲a)]a̲—անընտանեբար, 7զ. [(aS)a]a—դժկամակութիւն, 7է. [(aS̲)a]a—ընդհանրականապէս, 7ը. [(a$\underline{S}^t$)a]a—առանձնատրական, 7թ. (aSa̲)a—առօրէական*

-աբար

ա-. . . -այ+-աբար *ակամայաբար*

ան-. . . -ան+-աբար *անարժանաբար, անբաժանաբար*

ան-. . . -անակ+-աբար *անժամանակաբար*

ան-. . . -ար+-աբար *անմոլարաբար*

ան-. . . -աւ+-աբար *անիրաւաբար*

ան-. . . -ի+-աբար *անհաւատիաբար, անարիաբար*

ան-. . . -իղ+-աբար *աներկիւղաբար*

ան-. . . -որդ+-աբար *անհաղորդաբար*

ան-. . . -ումն+-աբար *անուսումնաբար*

ան-. . . -պան+-աբար *անպահպանաբար*

*7ա. [a(S̲a)]a*

ան-. . . -ակ+-աբար *անմիջակաբար*

*7բ. [a(Sa̲)]a*

ան-. . . -եալ+-աբար *անկատարելաբար*

ան-. . . -եայ+-աբար *անքրիստոնէաբար*

ան-. . . -ոյթ+-աբար *աներևութաբար*

ան-. . . -ուն+-աբար *անասնաբար*

*7գ. [a(S̲a)]a*

ան-. . . -ազան+-աբար *անսրբազնաբար*



*7դ. [a($S^t$a)]a*

ան-. . . օթ+-աբար *անծանօթաբար*

*7ե. [a(Sa)]a̲*

ան-. . . -ի+-աբար *անընտանեբար*

-ագոյն

ան-. . . -ան+-ագոյն *անարժանագոյն*

ան-. . . -ար+-ագոյն *անմոլարագոյն*

ան-. . . -աւ+-ագոյն *անիրաւագոյն*

ան-. . . -ումն+-ագոյն *անուսումնագոյն*

ներ-. . . -ան+-ագոյն *ներհականագոյն*

*7ա. [a(S̲a)]a*

չ-. . . -ին+-ագոյն *չնչինագոյն*

ան-. . . -ական+-ագոյն *անպատուականագոյն*

ան-. . . -ակար+-ագոյն *անօգտակարագոյն*

ընդ-. . . -ական+-ագոյն *ընդհանրականագոյն*

*7բ. [a(Sa̲)]a*

ան-. . . -եալ+-ագոյն *անկատարելագոյն*

ան-. . . -ի+-ագոյն *անկարելագոյն*

ան-. . . -ուն+-ագոյն *անասնագոյն*

ան-. . . -ուչ+-ագոյն *անվայելչագոյն*

*7գ. [a(S̲a)]a*

ան-. . . -ակ+-ագոյն *անտեղեկագոյն (տեղի+ակ)*

ան-. . . -անի+-ագոյն *անպիտանագոյն*

-ական

ան-. . . -ան+-ական *անբաժանական*

ան-. . . -անակ+-ական *անժամանակական*

ան-. . . -ի+-ական *անարիական*

ներ-. . . -ող+-ական *ներգործողական*

*7ա. [a(S̲a)]a*

ան-. . . -ան+-ական *աննշանական*

ներ-. . . -ան+-ական *ներշրջանական*

7բ. [a(Sa̲)]a

ան- . . . -ուն + -ական *անսանական, անկանգնական*

7գ. [a(S̲a)]a

ան- . . . -ունդ + -ական *անծննդական*

7դ. [(aS)a]a

վեր- . . . -ող + -ական *վերածողական*

7ե. [(aS̲')a]a

առ- . . . -աւոր + -ական *առանձնաւորական*

7թ. (aSa)a

առ- . . . -եայ + -ական *առօրէական*

-անք

ան- . . . -աւ + -անք *անիրաւանք*

ապէս

ան- . . . -ան + -ապէս *անբաժանապէս*
ան- . . . -անակ + -ապէս *անժամանակապէս*
ան- . . . -աւոր + -ապէս *անբանաւորապէս*
ան- . . . -իւղ + -ապէս *աներկիւղապէս*
ան- . . . -որ + -ապէս *անմոլորապէս*
ան- . . . -պան + -ապէս *անպահպանապէս*
ան- . . . -օթ + -ապէս *անծանօթապէս*
ներ- . . . -ակ + -ապէս *ներդաշնակապէս*

7ը. [a(Sa̲)]a

ան- . . . -ոյթ + -ապէս *աներևութապէս*
ան- . . . -ուչ + -ապէս *անվայելչապէս*

7ե. [a(Sa)]a̲

ան- . . . -ի + -ապէս *անընտանեպէս*

7է. [(aS̲)a]a

ընդ- . . . -ական + -ապէս *ընդհանրականապէս*

-եալ

առ- . . . -ակ + -եալ *առէակեալ*



-ն

առ- . . . -անակ + -ն *առժամանակն*

-ութիւն

7. [a(Sa)]a

ան- . . . -ած + -ութիւն *անողորմածութիւն*
ան- . . . -ակ + -ութիւն *անխառնակութիւն, անկամակութիւն*
ան- . . . -ական + -ութիւն *անազատականութիւն, անխոհականութիւն*
ան- . . . -ան + -ութիւն *անարժանութիւն, անբաժանութիւն, անիշխանութիւն*
ան- . . . -ատ² + -ութիւն *անհաստատութիւն*
ան- . . . -ատակ + -ութիւն *անյիշատակութիւն*
ան- . . . -արան + -ութիւն *անկերպարանութիւն*
ան- . . . -աւ + -ութիւն *անիրաւութիւն*
ան- . . . -աւոր + -ութիւն *անախտաւորութիւն, անարգասաւորութիւն, անարգելաւորութիւն, անթագաւորութիւն, անկեղծաւորութիւն, անհնարաւորութիւն, անմերձաւորութիւն, անյօդաւորութիւն, աննախանձաւորութիւն, անպատկանաւորութիւն, անչափաւորութիւն, անփառաւորութիւն*
ան- . . . -եկան + -ութիւն *անշահեկանութիւն*
ան- . . . -իւղ + -ութիւն *աներկիւղութիւն*
ան- . . . -ող + -ութիւն *անլսողութիւն, անհետևողութիւն, անյիշողութիւն*
ան- . . . -ող + -ութիւն *անյաջողութիւն*
ան- . . . -որդ + -ութիւն *անհաղորդութիւն, անճանապարհորդութիւն*
ան- . . . -ումն + -ութիւն *անուսումնութիւն*
ան- . . . -ստ + -ութիւն *անզգաստութիւն, անիմաստութիւն*
արտ- . . . -ան + -ութիւն *արտասանութիւն*
գեր- . . . -ակ + -ութիւն *գերերևակութիւն, գերոմակութիւն*
ընդ- . . . -ակ + -ութիւն *ընդոմակութիւն*
չ- . . . -ակար + -ութիւն *չվնասակարութիւն*

7ա. [a(S̲a)]a

ան- . . . . -արար + -ութիւն *անվճարարութիւն*
ան- . . . -ական + -ութիւն *անազնուականութիւն, աներաժշտականութիւն, անզուգականութիւն*
ան- . . . -ատ¹ + -ութիւն *անթլփատութիւն*
ան- . . . -աւոր + -ութիւն *անսկզբնաւորութիւն*

ան-...-ի+-ութիւն անարիութիւն
ան-...-ող+-ութիւն անծնողութիւն, անքննողութիւն
ան-...-որդ+-ութիւն անկցորդութիւն
ան-...-ստ+-ութիւն անհանգստութիւն
ներ-...-անակ+-ութիւն ներշրջանակութիւն

7բ. [a(Sa̲)]a

ան-...-ել+-ութիւն անկատարելութիւն
ան-...-ի+-ութիւն անարութիւն
ան-...-նի+-ութիւն անյայտնութիւն
ան-...-ումն+-ութիւն անցաամնութիւն
ան-...-ուն+-ութիւն անասնութիւն
ան-...-ունդ+-ութիւն անծննդութիւն
ան-...-ունչ+-ութիւն անտերնչութիւն
ան-...-ուչ+-ութիւն անվայելչութիւն, անտերչութիւն
ան-...-ուստ+-ութիւն անփախստութիւն
առ-...-ել+-ութիւն առանցելութիւն
մակ-...-իկ+-ութիւն մակսաստկութիւն

7գ. [a(S̲a)]a

ան-...-ակ+-ութիւն անտեղեկութիւն
ան-...-անի+-ութիւն անպիտանութիւն

7դ. [a($S^f$a)]a

ան-...-ուած+-ութիւն անստացուածութիւն
ան-...-ող+-ութիւն անգոհացողութիւն, անստացողութիւն, անճանաչողութիւն
ան-...-օթ+-ութիւն անծանօթութիւն
չ-...-ող+-ութիւն չճանաչողութիւն

7գ. [(aS)a]a

զ-...-աւոր+-ութիւն զառաջաւորութիւն
դժ-...-ակ+-ութիւն դժկամակութիւն
շաղ-...-ական+-ութիւն շաղկապականութիւն

7թ. [(a$\underline{S}^f$)a]a

առ-...-ական+-ութիւն առանձնականութիւն
առ-...-աւոր+-ութիւն առանձնաւորութիւն



-ուստ

7բ. [a(Sa)]a

ան-...-ոյթ+-ուստ աներեւութուստ

-ուտ

ան-...-իւղ+-ուտ աներկիւղուտ

-ս

7գ. [(aS)a]a

ան-...-ագոյն+-ս անհասագոյնս
ան-...-ոյթ+-ս աներեւոյթս
առ-...-այ+-ս առժամայս

-ք

7ա. [a(S̲a)]a

նախ-...-ոյն+-ք նախողջոյնք
ներ-...-անակ+-ք ներշրջանակք

8. [aj(Sa)]a «նախածանցավերջածանցավոր» սերող հիմքերով կազմություններ, որտեղ առաջին նախածանցը կցվում է հոդակապով.

նախ(ա)-...-ող+-ութիւն նախախնամողութիւն
նախ(ա)-...-պան+-ութիւն նախապահպանութիւն

8ա. [aj(S̲a)]a

համ(ա)-...-ակ+-ութիւն համաբնակութիւն
շար(ա)-...-ած+-ութիւն շարագրածութիւն
տրամ(ա)...-աւոր+-ութիւն տրամատպաւորութիւն

8բ. [aj(Sa̲)]a

նախ(ա)...-ուրդ+-ութիւն նախախորհրդութիւն
վեր(ա)-...-իկ+-ութիւն վերասաստկութիւն
վեր(ա)-...-նի+-ութիւն վերայայտնութիւն

8գ. [aj($S^f$a)]a

մակ(ա)-...-եղ+-աբար մակագոյեղաբար

9. [a(aS)]a—երկու նախածանց ունեցող սերող հիմքով վերջածանցավոր կազմությունները խիստ սակավաթիվ են։ Վկայված են հետևյալ օրինակները.

ան-+առ-...-ութիւն անառողջութիւն

ան-+տար-. . .-ապէս *անտարբերապէս*
յ-+ան-. . .-ագոյն *յանկարծագոյն*
յ-+ան-. . .-ական *յանկարծական*
յ-+ան-. . .-ակի *յանկարծակի*
յ-+ան-. . .-ութիւն *յանկարծութիւն*
յ-+ան-. . .-օրէն *յանկարծօրէն*

*Ինչպես տեսնում ենք, որպես սերող հիմք հանդես է գալիս հիմնականում միևնույն* յանկարծ *բառը տարբեր վերջածանցներից առաջ։*

*9ա.* [a(aS̲)]a
ան-+ընդ-. . .-աբար *անընդմիջաբար* -

*9բ.* [a(aS$^{f}$)]a
առ-+ընդ-. . .-ումն *առընդդիմացումն*
յար-+ընդ-. . .-ութիւն *յարընդունելութիւն*

*9գ.* [a(ajS)]a
ան-+նախ(ա)-. . .-ագոյն *աննախախնամագոյն*

*9դ.* [a(ajS̲)]a
ան-+պար(ա)-. . .-աբար *անպարագրաբար*
ան-+պար(ա)-. . .-ութիւն *անպարագրութիւն*

*9ե.* [a(ajS$^{f}$)]a
նախ-+ներ(ա)-. . .-եալ *նախներթակացեալ*

*10.* {a[(aS)a]}a *երկու նախածանցով և երկու վերջածանցով վկայված է ընդամենը երկու օրինակ՝ նշված կաղապարով.*
ընդ-+յ-. . .-ող+ութիւն *ընդյերկարողութիւն*
առ-+ընդ-. . .-ող+ութիւն *առընդունողութիւն*

*Մեկ նախածանցով և երեք վերջածանցով ունենք հետևյալ օրինակները.*

*11.* {[a(Sa)]a}a
ան-. . .-իղ+-ած+-ութիւն *աներկիւղածութիւն*
ան-. . .-ուն+-ատր+-ութիւն *անասնատրութիւն*
ներ-. . .-ող+-ական+-աբար *ներգործողականաբար*
ընդ-. . .-ող+-ական+-ագոյն *ընդունողականագոյն*
տրամ-. . .-ան+-ակ+-ութիւն *տրամասանակութիւն*



*11ա.* {a[(Sa̲)a]}a
ան-. . .-ին+-որդ+-ութիւն *անառաջնորդութիւն*

*11բ.* {a[(S̲a)a]}a
ան-. . .-ին+-որդ+-աբար *անմիջնորդաբար*

*11գ.* {aj[(Sa̲)a]}a
վեր(ա)-. . .-կին+-ակ+-ութիւն *վերակրկնակութիւն*

*Բավական բազմաքանակ և բազմազան ենթակաղապարներով ներկայացված խումբ են կազմում այսպես կոչված բարդածանցավոր բառերը։ Տվյալ դեպքում մենք նկատի ունենք այն վերջածանցավոր կազմությունները, որոնց սերող հիմքը բարդ բառ է։ Այս բաղադրությունները նույնպես խմբավորվում են ըստ եզրային ածանցի, որի տակ տրվում են մեր ընտրանքում վկայված կաղապարներն ու ենթակաղապարները։*

-աբար

*12.* (SjS)a *այլաբանաբար, ամենախառնաբար, աստուածաբանաբար, քահանայապետաբար և այլն*

*12ա.* (S̲jS)a *բնազանցաբար, թզաչափաբար, հրաբերձաբար*

*12բ.* (SjS̲)a *ազգակցաբար, երկասիրաբար, ինքնադիմաբար, ողջակիզաբար, պարզամտաբար և այլն*

*12գ.* (S̲jS̲)a *պատուասիրաբար*

*12ե.* (SjS$^{f}$)a *փոխադարձաբար, քաջալերաբար*

*12զ.* (S̲jS$^{f}$)a *շրջագայաբար*

*12է.* (SjS$^{f}$)a *դիւրադրաբար, փոխատրաբար*

*12ժբ.* SjS)a *զանազանաբար*

*12ժե.* (S̲jS)a *բարեզարդաբար, բարեպաշտաբար*

*12ժգ.* (S̲jS̲)a *բարեսիրաբար, բարեմտաբար*

*13.* (SS)a *այլազգաբար, գեղուղէշաբար, հացներգաբար, նոյնբանաբար, որքանաբար, չարաբուեստաբար, օրհներգաբար, վայրագաբար*

*13ա.* (S̲S)a *բազմաստուածաբար, ձկնորսաբար, ստանունաբար, տնտեսաբար*

*13բ.* (SS̲)a *այսպիսաբար*

*13գ.* (S$^{f}$S)a *դիւցազնաբար, տանուտէրաբար*

*13ե.* (SS$^{f}$)a *երկրայաբար*

*13ժգ.* (S̲S)a *յանձանձաբար*

-ագին

*13ժբ.* (SS)a *կոզկոզագին*

13ժգ. $(\underline{S}S)a$ կասկածագին

13ժե. $(S\underline{S})a$ սարսռագին

–ագոյն

12. $(SjS)a$ ամբողջախոհագոյն, ամենայարմարագոյն, արագաշարժագոյն, հրաշափառագոյն, որովայնամոլագոյն, քաջալուագոյն և այլն

12ա. $(\underline{S}jS)a$ բազմաբանագոյն, բազմամասնագոյն, բռնադատագոյն, երկնաբերձագոյն, լուսաձևագոյն և այլն

12բ. $(Sj\underline{S})a$ ազգակցագոյն, աշխատասիրագոյն, խորագիտագոյն, կարճամտագոյն, մեծատնագոյն, քաջառուգագոյն և այլն

12գ. $(\underline{S}j\underline{S})a$ հնագիտագոյն

12ե. $(SjS^{f})a$ կաթնակերագոյն, քաջալերագոյն

12է. $(SjS^{f})a$ երկայնակեցագոյն

12ժբ. $(Sj\underline{S})a$ զանազանագոյն

12ժե. $(\underline{S}jS)a$ բարեբախտագոյն, բարեբանագոյն, բարեբաստագոյն, բարեխառնագոյն, բարեհամբաւագոյն, բարեձևագոյն, բարեպաշտագոյն, բարեփառագոյն

12ժզ. $(\underline{S}j\underline{S})a$ որդեսիրագոյն

13. $(SS)\bar{a}$ այլազգագոյն, բոցակնագոյն, գեղուղէշագոյն, դիւրանցագոյն և այլն

13ա. $(\underline{S}S)a$ սրակնագոյն, տնանկագոյն

13բ. $(S\underline{S})a$ օտարսիրագոյն

13գ. $(\underline{S}\underline{S})a$ խժդժագոյն

13ե. $(SS^{f})a$ կենդանարարագոյն, հրաշարարագոյն, վերհամբարձագոյն

13ղ. $(\underline{S}S^{f})a$ ժուժկալագոյն

13ժբ. $(\underline{S}S)a$ այլայլագոյն

–ակ[1]

12ա. $(\underline{S}jS)a$ լեռնադաշտակ

12ի. $(SpS)a$ զառիվերակ

12. $(\underline{S}S)a$ ծործորակ

–ակ[2]

12. $(SjS)a$ եռահիւսակ, վատատոհմակ, քաջախոհակ

12ա. $(\underline{S}jS)a$ ծաղկատարփակ

12բ. $(Sj\underline{S})a$ աստուածասիրակ, բանագտակ, չարադիւակ



12ժե. $(\underline{S}jS)a$ բարեգործակ

13. $(SS)\bar{a}$ արեգակնակ, ձեռարուեստակ, շեշտոլորակ, վատառոհմակ, վերելակ, վերեռակ

13գ. $(\underline{S}\underline{S})a$ նուիրամսակ

13է. $(S^{f}\underline{S})a$ եղբօրորդեակ

13ժբ. $(\underline{S}\underline{S})a$ պաղպաղակ

–ական

12. $(SjS)a$ աստուածատեսական, բանաստեղծական, հայրապետական, չարամոգական և այլն

12ա. $(\underline{S}jS)a$ բնաբանական, գնդաձևական, երկրագործական, լրբաբանական, շրջաբերական և այլն

12բ. $(Sj\underline{S})a$ ազգակցական, երկասիրական, ժամագրական, մարդասիրական, նաւանստական և այլն

12գ. $\underline{S}j\underline{S})a$ լծակցական, խնդակցական, կանխագիտական, մանկամտական, շնչաբուսական, պատմագրական, պատուասիրական

12դ. $(S^{f}jS)a$ աստեղաբաշխական

12ե. $(SjS^{f})a$ աստուածածնելական, ինքնակալական, յեղադարձական, յոժարատարական

12զ. $(\underline{S}jS^{f})a$ շրջագայական

12է. $(Sj\underline{S}^{f})a$ հիմնադրական

12ժ. $(S^{f}j\underline{S})a$ աստեղագիտական

12ժբ. $(\underline{S}j\underline{S})a$ զանազանական

12ժե. $(SjS)a$ բարեգործական, բարեպետական

12ժզ. $(\underline{S}j\underline{S})a$ բարեսկզբնական

13. $(SS)a$ ածանցական, աստուածանունական, արեգակնական, հերբանձնական, ժանտախտական, միանձնական և այլն

13ա. $(SS)a$ հանգիտաստուածական, մտածական, շնչորսական, տն-տեսական

13բ. $(S\underline{S})a$ քաջերաժշտական

13գ. $(S\underline{S})a$ սրտմտական, տնօրինական

13դ. $(S^{f}S)a$ դիւցազնական, տանուտէրական

13ե. $(SS^{f})a$ ամենիմացական, յայտարարական, սանձարարական

13է. $(S^{f}S)a$ տանուտիրական

13ը. $(S\underline{S}^{f})a$ խրատտուական

13թ. $(\underline{S}S^{f})a$ բարերարական

13ժ. $(S^{f}S^{f})a$ բամբասական



17—442

13ժա. $(S^{f}\underline{S}^{f})$a օրէնսդրական
13ժբ. $(SS)$a շաղփաղփական, շարշարական

—ակի

13. $(SS)$a քաջոլորակի
13ժբ. $(SS)$a վաղվաղակի

—այ

13բ. $(\underline{S}S)$a սանդիայ, փղոսկրայ

—ային

13. $(SS)$a արեգակնային
13բ. $(SS)$a զույգերկնային
13գ. $(S^{f}S)$a դիցազնային
13ե. $(SS^{f})$a ծովեզերային

—այն

13. $(SS)$a միանգամայն, նոյնժամայն, նոյնհետայն
13ժե. $(S\underline{S})$a լեռնլեռնայն
13ժզ. $(SS^{f})$a որմզորմայն

—այք

12. $(SjS)$a նմանամասնայք
13գ. $(\underline{S}S)$a միջերկրայք
13ե. $(SS^{f})$a ծովեզերայք
13ժբ. $(SS)$a բաղբաղայք

—ան

13ժբ. $(SS)$a խորշխորշան

—անք

12. $(SjS)$a աղախարշանք, աղակատանք, դատապարտանք, հարցափորձանք, յաղթահարանք
12բ. $(Sj\underline{S})$a շառագունանք
12դ. $(\underline{S}j\underline{S})$a լրջամտանք
12է. $(Sj\underline{S}^{f})$a մեղադրանք
12ժդ. $(Sj\underline{S})$a արհամարհանք, կերակրանք
12ժե. $(\underline{S}jS)$a բարեխօսանք



13. $(SS)$a աշառանք, քարկոծանք
13բ. $(S\underline{S})$a բանդատանք
13ժ. $(S^{f}S^{f})$a բամբասանք
13ժբ. $(SS)$a գեղգեղանք, թաքթաքանք, կողկողանք, կըկղանք, մեխմեխանք, շաղփաղփանք, շարշարանք, ջախջախանք, փայփայանք, քայքայանք, քրքրանք
13ժգ. $(SS)$a կասկածանք, թարթափանք, խողխողանք
13ժդ. $(S\underline{S})$a հայթայթանք, հեծեծանք, հայհոյանք, յանձանձանք, յորջորջանք
13ժե. $(\underline{S}\underline{S})$a կսկծանք, խռպտանք, մխմխանք

—ապէս

12. $(SjS)$a աստուածանմանապէս, արդարադատապէս, հրաշափառապէս, հրեշտականմանապէս, մեծաձայնապէս, միաբանապէս, ողջախոհապէս, չափաբերապէս, քաջաձայնապէս
12ա. $(\underline{S}jS)$a երկրագործապէս, ուղղափառապէս, սկզբնապետապէս, ստուգաբանապէս
12բ. $(Sj\underline{S})$a ամենասրբապէս, աշխատասիրապէս, մարդասիրապէս
12գ. $(\underline{S}j\underline{S})$a բնակցապէս, զուգակցապէս, ճշմարտասիրապէս, պատմագրապէս, պատուասիրապէս
12ժբ. $(SjS)$a զանազանապէս
12ժե. $(\underline{S}jS)$a բարեբանապէս, բարեգործապէս, բարեկամապէս, բարեկարգապէս, բարեհռչակապէս, բարեպաշտապէս, բարեքաշկապէս
12ժթ. $(\underline{S}j\underline{S}^{f})$a բարետրապէս
13. $(SS)$a այլազգապէս, աստուածաւանդապէս, արեգակնապէս, բերանունապէս, զիարդապէս, միանձնապէս
13ա. $(\underline{S}S)$a բազմանունապէս, լուսանունապէս
13բ. $(S\underline{S})$a աստուածսիրապէս
13ե. $(SS^{f})$a մատակարարապէս
13թ. $(\underline{S}\underline{S}^{f})$a բարերարապէս
13ժբ. $(SS)$a այլայլապէս

—ատ

13. $(\underline{S}S)$a խորխորատ

-արան

13. (SS)a ձիարձակարան
13ե. (SS$^f$)a ծիրնթացարան

-ացի[1]

12. (SjS)a գաղտագողացի

-աւոր

12ա. (SjS)a բազմարփիւրաւոր
13. (SS)a արեգակնաւոր, գեղարդնաւոր
13ա. (SS)a յուղարկաւոր/յղարկաւոր

-եալ

12. (SjS)a ամօթապարտեալ, արիւնաներկեալ, թակարդապատեալ, շուշանազարդեալ, ողնաբեկեալ, տեառնագործեալ և այլն:

12ա. (SjS)a դռնափակեալ, բղձակերտեալ, լուսավառեալ, լուսափայլեալ, կանխավաճառեալ, կանխասահմանեալ, մշտավայելեալ, շրջահոսեալ, շրջապատեալ, ջրագողեալ, ցռակաթեալ

12բ. (SjS)a առաջագրեալ, աշխարհագուժեալ, աստուածագրեալ, դարանամտեալ, դեռատեալ, հրաշաբուսեալ, մեծապատուեալ, բատեղծագրեալ

12գ. (SjS)a երիզապնդեալ, մեղուաբուծեալ, մենագինեալ, ջլապնդեալ, սրբագրեալ

12ե. (SjS$^f$)a բերանաբացեալ, գաղտագողացեալ, դեսպանագնացեալ, մեծագործեցեալ, վերջածնիցեալ, յարակացեալ

12զ. (SjS$^f$)a ուղղագնացեալ

12է. (SjS$^f$)a առաջադրեալ, բոցախմբեցեալ, խաւարազգեցեալ

12թ. (SjS$^f$)a կանխահաստուցեալ, կիտագրեալ

12ժդ. (SjS)a խառնամառնեալ

12ժե. (SjS)a ոսկեվարսեալ

12իբ. (ScS)a ելեելեալ

13. (SS)a առաջարկեալ, աւետաճեալ, դեղառեալ, խաչելեալ, խորշանկեալ, կողածեալ, ախտանկեալ, վերանցեալ

13ա. (SS)a ածուատեալ, երկրպագեալ, ջրգողեալ
13բ. (SS)a բարիկրեալ, յառաջընտրեալ
13դ. (S$^f$S)a դիւցազնեալ
13զ. (SS$^f$)a կանխասացեալ



13ժ. (S$^f$S$^f$)a դիւցազնացեալ, մերազնացեալ
13ժգ. (SS)a յանձանձեալ, յողդողդեալ

-եակ

12ը. (SjS$^f$)a հնգետասանեակ

-եայ

12. (SjS)a գայլախազեայ, եօթնամսնեայ, ինքնագաւառեայ, հողանիւթեայ, մայրափայտեայ, չարագաւառեայ, տասնաբանեայ, քառանիւթեայ

12ա. (SjS)a եղնափայտեայ
12գ. (SjS)a գետնախշտեայ
12ի. (SpS)a օրըստօրեայ

13. (SS)a համապազօրեայ, չարակնեայ
13ա. (SS)a լեռնոտնեայ, փղոսկրեայ
13բ. (SS)a արևմտեայ, յաղճապակեայ
13դ. (S$^f$S)a մերազնեայ
13ե. (SS$^f$)a ծովեզերեայ

-եան[1]

12. (SjS)a աջակողմեան, բիւրաբառեան, եռափափաքեան, եօթնապարեան, եօթնապարսպեան, եօթնաչափեան, ձախակողմեան, քառակարգեան

12ա. (SjS)a հնգամատնեան, բազմաթևեան
12բ. (SjS)a ամենաերաժշտեան, եօթնագիսեան, վեցաբլեան
12գ. (SjS)a բազմականգնեան
13. (SS)a արևելեան
13ե. (SS$^f$)a երկոտասանեան

-եան[2]

12բ. (SjS)a զօրագլխեան
12ե. (SjS$^f$)a բերդակալեան
13. (SS)a հացկատակեան

-եղ

12բ. (SjS)a մեծակիտեղ

-ենի

13գ. (SS)a երեմենի/երեմնի

-երեակ

13ե. (SS$^f$)a երկոտասաներեակ

-երորդ

12ժէ. (SjS$^f$)a մետասաներորդ

12իա. (ScS)a եօթնուտասաներորդ, իննևտասաներորդ/իննուտասաներորդ, ութուտասաներորդ

13. (SS)a հինգհարիւրերորդ, վեցհարիւրերորդ, քսանհինգերորդ և այլն

13ե. (SS$^f$)a երեքտասաներորդ, երկոտասաներորդ, հնգետասաներորդ, չորեքտասաներորդ, վեշտասաներորդ

-երեան/-երին

12ը. (SjS$^f$)a մետասանեքեան

13ե. (SS$^f$)a երեքհարիւրեքին, երեքտասանեքեան, երկոտասանեքեան/եքին, հնգետասանեքին, չորեքտասանեքեան/եքին

-ի[1]

12. (SjS)a գաղտագողի, դիւրահեշտի, ծանրաբեռնի, միաշաբաթի, միաճետի և այլն

12ա. (SjS)a բազմակերպի, բազմամանի, բազմամարդի, խնդամոլի, կնամարդի, օգտածարաւի

12բ. (SjS)a իննագլխի, ծանրագնի, հարիւրագլխի, մեծագնի

12գ. (SjS)a բազմագնի, բազմագունի

13. (SS)a այնքանի, այսքանի

13բ. (SS)a այդպիսի, այնպիսի, այսպիսի, ինչպիսի, նոյնպիսի, որպիսի

13գ. (SS)a երեմի

13զ. (SS$^f$)a սոնդիացի

-ի[3]

12է. (SjS$^f$)a մեղադրելի

12իբ. (SjS)$^f$a արհամարհելի

13զ. (SS$^f$)a երկրպագելի

13ժբ. (SS$^f$)a այլայլելի, չարչարելի

13ժգ. (SS)a կասկածելի



-իկ[1]

12ժգ. (SjS)a կերակրիկ

-իկ[2]

12. (SjS)a ազատատոհմիկ, արագախաբիկ, դիապատիկ, լիաքախտիկ, հրաշատեսիկ, ձեռակերտիկ, մոգակրօնիկ, վաղահասիկ, վաղամեռիկ, վաղամանիկ, վաճառաշահիկ, վատաբախտիկ, վատաբաստիկ, վատատոհմիկ, փայտակերտիկ, փառատենչիկ, քաջաբանիկ, քաջաբաստիկ, քաջատեսիկ, քաջատոհմիկ

12ա. (SjS)a բռնազբօսիկ, երկնապատիկ, լուսատարմիկ, լուսատեսիկ, մենամարտիկ, մաքերիկ, շրջապատիկ, սնապարծիկ, բրքմատեսիկ

12բ. (SjS)a զարդասիրիկ

12ե. (SjS$^f$)a արդարագնացիկ, ծովագնացիկ

12է. (SjS$^f$)a թևազգեցիկ, խառնակեցիկ

12թ. SjS$^f$)a բռնազգեցիկ, դիւազգեցիկ, լեռնակեցիկ, ճգնազգեցիկ

12ժե. (SjS)a գինեվաճառիկ, բարեբախտիկ, բարեբաստիկ, բարեկամիկ, բարեպաշտիկ, բարետոհմիկ

12ժթ. (SjS$^f$)a բարեկեցիկ

12իա. (ScS)a հասևառիկ, տուրևառիկ

13. (SS)a աշխարհաւանդիկ, թափանցիկ, ձեռարուեստիկ, պարանցիկ, վերըմբերձիկ

13ա. (SS)a ջրանցիկ

13ե. (SS$^f$)a երկրացիկ, ինքնարձակեցիկ, մարդատեցիկ

13զ. (SS$^f$)a շրջածուցիկ, սոնդիացիկ

-ին

12. (SjS)a վայրավատին

12ժդ. (SjS)a աղջամղջին

13ժբ. (SS)a աղտաղտին

-իչ

12. (SjS)a դատապարտիչ, կառավարիչ, փառաբանիչ, օրհնաբանիչ

12ա. (SjS)a բռնադատիչ

12գ. (SjS)a անուշաբուրիչ

12ե. (SjS$^f$)a քաջալերիչ

12թ. (SjS$^f$)a օրինադրիչ

12ժդ. (SjS)a կերակրիչ, արհամարհիչ
13ա. (SS)a զրպարտիչ, հրդեհիչ, յուղարկիչ
13թ. (SS$^f$)a ոսկերիչ
13ժբ. (SS)a արծարծիչ, խողխողիչ, յեղյեղիչ, չարչարիչ
13ժգ. (SS)a յանձանձիչ

**-իցս**

13ե. (SS$^f$)a երկոտասանիցս

**-իւ**

12բ. (SjS)a մանրախուզիւ

**-իւն**

12. (SS)a փայլածիւն

**-իք¹**

12. (SjS)a սառնամանիք/սառամանիք, ընկերահաշտիք
13. (SS)a այսչափիք, արևելիք
13ժբ. (SS)a ջախջախիք
13ժգ. (SS)a կասկածիք

**-իք²**

13. (SS)a բանտարգելիք
13զ. (SS$^f$)a գինըմպելիք

**-կոտ**

13ժբ. (SS)a վաղվաղկոտ

**-ող**

12ժդ. (SjS)a արհամարհող
13. (SS)a փայլածող
13ժդ. (SS)a հայհոյող
13ժ. (S$^f$S$^f$)a բամբասող

**-ոյ**

12. (SjS)a փողակարգոյ
12ա. (SjS)a բազմամարդոյ
12ի. (SpS)a գերիվերոյ



**-ոյթ**

13ե. (SS$^f$)a հացկերոյթ

**-ոյն**

12. (SjS)a միահաղոյն

**-ոտ**

13. (SS)a չարակնոտ
13ժդ. (SS)a արհամարհոտ

**-որդ**

12ժ. (S$^f$jS)a արտասուակցորդ

**-ոց**

13ե. (SS$^f$)a հացարարոց

**-ու¹**

12ա. (SjS)a ընդաբարու
13ե. (SS)a երկրպագու

**-ութիւն**

12. (SjS)a ազատատոհմութիւն, ազգահատութիւն, այրասպանութիւն, աշխարհահոգութիւն, առակախօսութիւն, առատաձեռնութիւն, աստուածամարտութիւն, աւելաբանութիւն, բանագործութիւն, գաւառապետութիւն, դալարակերութիւն, դիւրածախութիւն և այլն

12ա. (SjS)a ասղնագործութիւն, բազմախօսութիւն, բռնադատութիւն, գետնասողութիւն, դիւապաշտութիւն, երկրագործութիւն, զուգաբանութիւն, շրջափակութիւն, որկրամոլութիւն, ուղղափառութիւն և այլն

12բ. (SjS)a ազգակցութիւն, ախորժալրութիւն, աղտասիրութիւն, ամենալրութիւն, անձրևածնութիւն, աշալրջութիւն, աստուածատպութիւն, ճարտարալեզուութիւն, քաջաբուսութիւն և այլն

12գ. (SjS)a բազմադիմութիւն, գծագրութիւն, թուլասրտութիւն, կանխագիտութիւն, մատենագրութիւն, պտղածնութիւն, վշտակցութիւն, տնաշինութիւն, քինախնդրութիւն և այլն

12գ. (S$^f$jS)a անվանական սկզբնահիմքերով՝ անուանակոչութիւն, անուանափոխութիւն, անուանաքերթութիւն, աստեղաբանութիւն, աստեղաբաշխութիւն, դիցապաշտութիւն, դիւցապաշտութիւն, դիւցաբանութիւն, զայլակերութիւն, սերմանահանութիւն. բայական սկզբնահիմքերով՝ գոյապետութիւն, լինելաբանութիւն

12ե. (SjS$^{f}$)a աթոռակալութիւն, անդրադարձութիւն, աստուածածնելութիւն, աւելասացութիւն, եզրակացութիւն, թեթևագնացութիւն, հեռակացութիւն, յարագոյութիւն, քաջազգայութիւն և այլն, անվանական հիմքով՝ միամօրութիւն

12գ. ($\underline{S}$jS$^{f}$)a բազմաստացութիւն, դրակացութիւն, խորտակակերութիւն, կանխակալութիւն, կուսակալութիւն, պտղակորուսութիւն և այլն

12է. (Sj$\underline{S}^{f}$)a աշխարհակեցութիւն, արագաթռչութիւն, գրաւադրութիւն, թելադրութիւն, ժամադրութիւն, կարգադրութիւն, հարկատրութիւն, հրամանատրութիւն, միակեցութիւն և այլն

12ը. ($\underline{S}^{f}$jS)a արենաթաթաւութիւն, արենահեղութիւն

12թ. ($\underline{S}$j$\underline{S}^{f}$)a դիմադրութիւն, զրուցատրութիւն, լեռնակեցութիւն, հանդիսադրութիւն, մենակեցութիւն, պտղատրութիւն, վիճադրութիւն, վրշտակեցութիւն, օրինադրութիւն

12ժ. (S$^{f}$j$\underline{S}$)a անուանակցութիւն, աստեղագիտութիւն, զգայակցութիւն, թատերասիրութիւն, մեղսասիրութիւն

12ժա. (S$^{f}$j$\underline{S}^{f}$)a անուանադրութիւն

12ժբ. (SjS)a զանազանութիւն

12ժդ. (Sj$\underline{S}$)a արհամարհութիւն

12ժե. ($\underline{S}$jS)a այգեգործութիւն, ալեկոծութիւն, բարեկարգութիւն, գինեհարութիւն, գոտեմարտութիւն, հոգեսպանութիւն, որդեհայրութիւն, որդեսպանութիւն և այլն

12ժզ. ($\underline{S}$jS)a աղեպնդութիւն, բարեմտութիւն, գինեկիզութիւն, կարեկցութիւն, հոգեսիրութիւն, որդեծնութիւն, որդեգրութիւն և այլն

12ժէ. ($\underline{S}$jS$^{f}$)a բարելինելութիւն, ուղեգնացութիւն, խարեբայութիւն

12ժթ. ($\underline{S}$j$\underline{S}^{f}$)a բարեկեցութիւն

12իա. (ScS)a առևանգութիւն, երթևեկութիւն, տուրևառութիւն

13. (SS)a ազգածութիւն, ակնարկութիւն, այլազգութիւն, անձնգովութիւն, աստուածպաշտութիւն, բանտարգելութիւն, գահերեցութիւն, դիւրընկալութիւն, հասարակօրութիւն, ձեռնարձակութիւն, նաւարկութիւն և այլն

13ա. ($\underline{S}$S)a բազմամբոխութիւն, գլխատութիւն, դիմառութիւն, երկըրպագութիւն, զուգօրութիւն, զրարուեստութիւն, լրտեսութիւն, ծլարձակութիւն, ձկնորսութիւն և այլն

13բ. (S$\underline{S}$)a աղքատսիրութիւն, աստուածգիտութիւն, արծաթսիրութիւն, ժամորդութիւն, երկայնմտութիւն, խրատտուութիւն, կարճմտութիւն, վրեժխնդրութիւն և այլն



13գ. ($\underline{SS}$)a զուգամուսնութիւն, լրջմտութիւն, խղճմտութիւն, սըրտմըտութիւն, բարերջանկութիւն

13դ. (S$^{f}$S)a անվանական հիմքերով՝ առնխօսութիւն, բանսարկութիւն, դիւցազնութիւն, միմեանսանկութիւն, տանուտէրութիւն, օրէնսպանցութիւն

13ե. (SS$^{f}$)a ակնկալութիւն, ամենաբարութիւն, բեմասացութիւն, բերանբացութիւն, գործառնութիւն, դժուարիմացութիւն, հացկերութիւն, ձեռնկալութիւն, յարկայութիւն, քարընկեցութիւն, օտարսիրելութիւն և այլն

13զ. ($\underline{S}$S$^{f}$)a գրաբարութիւն, դիմառնութիւն, ժուժկալութիւն, կանխասացութիւն, հրընկեցութիւն, մանկաբարութիւն, սրբասացութիւն, փիրառնութիւն

13է. (S$^{f}\underline{S}$)a բարսգիտութիւն, տանտիկնութիւն

13ը. (S$\underline{S}^{f}$)a աղքատատեցութիւն, անունդրութիւն, աստուածատեցութիւն, եղբայրատեցութիւն, խրատտուութիւն, ծունրդրութիւն, հիւրատեցութիւն, ձեռնդրութիւն, ձեռնտուութիւն, մարդատեցութիւն, մարդելուզութիւն, ունկնդրութիւն, չարատեցութիւն

13թ. ($\underline{SS}^{f}$)a բարեբարութիւն, բարեսացութիւն, հրայրեցութիւն, ջրարբեցութիւն

13ժ. (S$^{f}$S$^{f}$)a գոյաբարութիւն

13ժա. (S$^{f}\underline{S}^{f}$)a օրէնսդրութիւն

13ժգ. (SS)a այլայլութիւն, արծարծութիւն, չարչարութիւն, քայքայութիւն

13ժդ. (S$\underline{S}$)a հայհոյութիւն, հեծեծութիւն

**-ուկ**

12. (SjS)a ծովահեղձուկ, վաղահասուկ, վաղամահուկ, վաղափոխուկ

12ժդ. (Sj$\underline{S}$)a հեղձամղձուկ

13. (SS)a վաղհասուկ

13դ. (S$^{f}$S)a առաջիհեղուկ

13ժբ. (SS)a աղտաղտուկ, ճեղճեղուկ, վաղվաղուկ

**-ուհի**

13. (SS)a աշխարհածուհի

**-ումն**

12. $(SjS)a$ *այլափոխումն, յեղակարծումն, (յ)ինքնաքարշումն, վայրաբերումն, վայրավատումն, վայրաքարշումն, տեղափոխումն, փայլատակումն, փոխաբերումն*

12ա. $(\underline{S}jS)a$ *զուգահավաքումն, լուսափայլումն, շրջապատումն, շըրջաստեղծումն, շրջափակումն, սրտաթափումն*

12բ. $(Sj\underline{S})a$ *ակնակրումն, յեղաշրջումն*

12ե. $(SjS^f)a$ *անդրադարձումն, վայրակացումն*

12ժբ. $(S\underline{jS})a$ *գանագանումն*

12ժե. $(\underline{S}jS)a$ *բարեբանումն*

13. $(SS)\bar{a}$ *ակնարկումն, աչառումն, առաջարկումն, խորտակումն, ձեռնարկումն, փայլածումն*

13ա. $(\underline{S}S)a$ *գլխատումն, հրդեհումն, մտածումն, յուղարկումն*

13ժբ. $(\underline{SS})a$ *այլայլումն, թորթորումն, խողխողումն, կափկափումն, ճեղճեղումն, ջախջախումն, քայքայումն*

13ժգ. $(\underline{S}S)a$ *յողդողդումն, յորջորջումն*

13ժդ. $(S\underline{S})a$ *շաղփաղփումն*

13ժե. $(\underline{S}\underline{S})a$ *շրջշրջումն*

**-ուն**

13ժբ. $(\underline{SS})a$ *վաղվաղուն*

13ժդ. $(\underline{S}S)a$ *շաղփաղփուն*

13ժե. $(\underline{S}\underline{S})a$ *շրջշրջուն*

**-ունակ**

12դ. $(S^fjS)a$ *մերակերպունակ*

**-ունք**

12. $(SjS)a$ *գետախառնունք, փայլատակունք*

**-ուստ**[2]

13ե. $(SS^f)a$ *վերըմբերձուստ*

**-ուտ**

13ժբ. $(\underline{SS})a$ *ճախճախուտ*



13ժդ. $(S\underline{S})a$ *շաղփաղփուտ*

13ժե. $(\overline{S}\underline{S})a$ *սարսռուտ*

**-ս**

12. $(SjS)a$ *այլափոփոխս*

12ժբ. $(\underline{SjS})a$ *մեծամեծս, չարաչարս*

13. $(SS)a$ *մեղեղուկս*

13ե. $(SS^f)a$ *երկքայս*

13ժ. $(S^fS^f)a$ *առաջիկայս*

13ժբ. $(\underline{SS})a$ *այլայլս*

**-ք**

12. $(SjS)a$ *ամամէջք, աչամէջք, առաջապտուղք, արձակավայրք, արտավայրք, բաղարջակերք, դիւահանք, դիւանացիրք, ընկերահաշտք, խոնաւայոյզք, խորտաբորտք, ծառաբերք, ծոմապահք, ծովաթաղանթք, կապարահատք, ձիամարտք, յորդահոսք, տոհմագիրք, տոհմաթիւք, օրահմայք, օրամուտք*

12ա. $(\underline{S}jS)a$ *զինապատեանք, հրատիկք, միջագետք*

12ե. $(SjS^f)a$ *առասպելակալք, նաւագնացք*

12զ. $(\underline{S}jS^f)a$ *միջագոյք*

12ժբ. $(\underline{SjS})a$ *մեծամեծք*

12իա. $(\overline{S}cS)a$ *ելէջք, ելմուտք*

13. $(SS)a$ *աղփարետք, երեկօթք, զուարճընծայք, խոտորկտուրք, հավանընկերք*

13ե. $(SS^f)a$ *ձիընթացք, վիշապաղունք*

**-օրէն**

12ա. $(\underline{S}jS)a$ *ստուգաբանօրէն*

12ե. $(SjS^f)a$ *հոգաբարձօրէն*

13. $(SS)a$ *այսպէսօրէն*

13բ. $(S\underline{S})a$ *այսպիսօրէն*

*Վերջածանցավոր կազմությունների երկրորդային բաղադրյալ սերող հիմքերի մեջ զգալի տեղ են գրավում նաև բարդ ածանցավորները, այսինքն՝ եզրային վերջածանցը կցվում է այնպիսի բարդությունների, որոնց բաղադրիչներից մեկը կամ երկուսը կարող են իրենց հերթին ածանցավոր կազմություններ լինել, կամ էլ ամբողջ բարդությունն արդեն ածանցավոր է (ածանցը վերաբերում է ամբողջ բարդ բառին)։ Այս տիպի կա-*

ղապարներն ու ենթակաղապարները բավական բազմազան են, թեև դրանցից յուրաքանչյուրի իրացումների թիվը մեծ չէ (բացառությամբ -ութիւն ածանցով բաղադրությունների)։ Ընդհանրապես ասենք, որ որքան բարդ է կաղապարը իր կառուցվածքով, այնքան նվազում է նրա կոնկրետ իրացումների հնարավորությունը։ Բարդ ածանցավոր սերող հիմքերով կաղապարներն ու ենթակաղապարները հնչյունափոխական և ձևակազմական առանձնահատկություններով հիմնականում համընկնում են 12 և 13 կաղապարներում հանդիպող հիմքակազմական տարատեսակություններին։ Մեր ընտրանքում վկայված են հետևյալ տիպերը (օրինակների սակավաթվության պատճառով դրանք ըստ ածանցների չենք խմբավորում).

14. [(SjS)a]a հոգաբարձականութիւն, ձիավարականն

14ա. [(S̲jS)a]a բնաբանականն, եղնգահատականն, երկրաչափականն, բռնադատողական, շրջաբերականութիւն

14բ. [(SjS̲)a]a ձեռնագիտականն, միասնականութիւն, նկարագրականութիւն

14գ. [(S̲jS̲)a]a ընչածնականագոյն, տնագիտականն

14դ. [(S̲jS)a]a մեկուսաբար, մեկուսագոյն

14ե. [(SjS̲)a]a կերակրողագոյն, կերակրողական, կերակրողութիւն

14զ. [(SjS̲)a]a կերակրչութիւն

14է. [($S^f$jS)a]a աստեղաբաշխականն

15. [(Sa)jS]a կատարողապետական, սուտակասպասու, աջողաձեռնութիւն, արդիւնակատարութիւն, բոլորակաձեւութիւն, երկրորդաբանութիւն, իմաստագործութիւն, կատարողագործութիւն, կատարողապետութիւն, կերպարանագործութիւն, համատաչափութիւն, հետևաբանութիւն, միայնամարտութիւն, միայնապետութիւն, մուրողաբանութիւն, նորոգագործութիւն, չորրորդապետութիւն, սակաւաբանութիւն, սակաւամարդութիւն, սակաւապետութիւն, տեսակագործութիւն, սուտակասպասութիւն, փոխանակավարձութիւն

15ա. [(S̲a)jS]a դիպողաբանութիւն, կռանահարութիւն, մասնահատութիւն, նշանագործութիւն, պատուիրանազանցութիւն, պատուիրանահատութիւն, պատուիրանապահութիւն

15բ. [(Sa)jS]a յայտնաբանաբար, գեղեցկակերպագոյն, յայտնաբանական, յայտնաբանապէս, կրկնաբախտիկ, յայտնաբանիչ, աղտեղաբանութիւն, աճազնափոխութիւն, գեղեցկաբանութիւն, գեղեցկագործութիւն, գեղեցկաղարդութիւն, գեղեցկակարգութիւն, գեղեցկակերպութիւն, գեղեցկաձեւութիւն, գեղեցկայօդութիւն, երդմնահարութիւն, խորհրդաբերութիւն, խորհրդազգածութիւն, կրկնաբանութիւն, հարստահարութիւն, մեռելահարցութիւն, յայտնաբանութիւն, յայտնաբերութիւն, յետնախոհութիւն, սղասկապետութիւն

15գ. [(Sa)jS̲]a իմաստասիրաբար, իմաստասիրագոյն, իմաստասիրակ, ժամանակագրական, իմաստասիրական, տեսողակցական, ուսումնասիրապէս, աւետարանագրութիւն, ժամանակագրութիւն, ժամանակասիրութիւն, իմաստասիրութիւն, իշխանասիրութիւն, իրաւագիտութիւն, խորանաշինութիւն, կերպարանակցութիւն, համառօտասիրութիւն, հաստատաձգութիւն, միայնակուսութիւն, ուսումնասիրութիւն, սակաւապիտութիւն

15դ. [(S̲a)jS]a ծննդաբանութիւն, ծննդագործութիւն, սրբազնաբանութիւն, սրբազնագործութիւն, սրբազնատեղծութիւն

15ե. [(S̲a)jS̲]a նշանագրութիւն, պատուիրանագրութիւն

15զ. [(Sa̲)jS]a գեղեցկադիմութիւն, գեղեցկամանկութիւն, գեղեցկասիրութիւն, երդմնասիրութիւն, ընտանակցութիւն, խորհրդակցութիւն, ձևրնագրութիւն

15ը. [(S̲a)jS̲]a սրբազնագրական, սրբազնագրութիւն

15թ. [($S^f$a)jS]a աստեղաբանութիւն, ստացուածաշատութիւն

15ժ. [($S^f$a̲)jS]a արարչագործական, արարչագործութիւն, ուսուցչապետութիւն, սքանչելատեսիկ, սքանչելագործութիւն

15ժա. [($S^f$a)jS̲]a արարչակցութիւն

15ժբ. [(Sa)j$S^f$]a անդրէնադարձական, իմաստասիրելի, իմաստասիրեցեալ

15ժգ. [(Sa)j$S^f$]a զօրացողատրապէս, միայնակեցական, միայնակեցութիւն, փոխանակատուութիւն

15ժդ. [(S̲a)j$S^f$]a միջնակացութիւն

15ժե. [(S̲S̲)j$S^f$]a սրբազնագրութիւն

16. {[(Sa)a]jS}a հետևակամարտութիւն, արտաքսաբերութիւն

16ա. {[(Sa̲)a]jS̲}a առաջնորդասիրութիւն

16բ. {[(Sa)a]j$S^f$}a ներքսագրութիւն

17. {[(Sa)a]ajS}a մշտնջենաւորակցութիւն

18. [Sj(Sa)]a աստուածատեսակաբար, միատեսակաբար, աստուածատեսակագոյն, երկատեսակագոյն, միատեսակագոյն, ինքնաշարժողական, միատեսակապէս, արիւնազգեստեալ, ինքնայայտնեալ, խաչազգեստեալ, ծարտարազգեստեալ, ջահազգեստեալ, հեշտապաշտօնեալ, երկայնաժամանակեան, աստուածատեսակութիւն, դառնաբարոյութիւն, դիւրա-

յիշատակութիւն, կարկաչասահունութիւն, հիւրամեծարութիւն, մարդահաճոյութիւն, միատեսակութիւն

18ա. $[\underline{S}j(Sa)]a$ բազմաժամանակագոյն, լուսատեսակագոյն, երկբաբաժանական, կանխաճանապարհորդել, կանխայայտնել, տրամազգեստել, բազմաժամանակեայ, բազմաժամանակեան, լուսատեսակութիւն, խստաբարոյութիւն, հրատեսակութիւն

18բ. $[Sj(\underline{S}a)]a$ միաբնակութիւն, աստուածանշանք

18գ. $[Sj(\underline{S}a)]a$ եօթնալուսնեայ

18դ. $[Sj(Sa)]a$ աստուածավայելչաբար, հրեշտակավայելչաբար, մարդավայելչաբար, մեծավայելչաբար, մեծախորհրդաբար, մեծավայելչագոյն, աստուածավայելչապէս, աստուածավայելչութիւն, աստուածայայտնութիւն, ամենատեսչութիւն, մարդավայելչութիւն, մեծախորհրդութիւն, մեծավայելչութիւն, քաջախորհրդութիւն, քաջավայելչութիւն

18ե. $[\underline{S}j(Sa)]a$ մարմնավայելչապէս, սրբավայելչապէս, մաախորհրրդութիւն

18զ. $[\underline{S}j(\underline{S}a)]a$ շրջապտուտակեալ

18է. $[Sj(S^{f}a)]a$ աստուածածանօթութիւն

18ը. $[Sj(S^{f}a)]a$ ամենաստացկութիւն, դիւրագթելութիւն

18թ. $[\underline{S}^{f}j(Sa)]a$ մարդկավայելչաբար

18ժ. $[\underline{S}j(Sa)]a$ բարետեսակապէս, բարետեսակութիւն, ոսկետեսակութիւն

18ժա. $[\underline{S}j(\underline{S}a)]a$ բարենշանագոյն

18ժբ. $[\underline{S}j(Sa)]a$ բարեվայելչապէս, բարեվայելչութիւն, բարեխորհրրդութիւն

18ժգ. $[\underline{S}j(aS)]a$ աղեներգործութիւն

19. $[(Sa)j(Sa)]a$ սակաւաժամանակագոյն, սակաւաժամանակեայ, սակաւաժամանակեան, իրաւախորհողութիւն

19ա. $[(Sa)j(Sa)]a$ պարսկաբարոյական, ծիրանազգեստեալ

19բ. $[(\underline{S}a)j(Sa)]a$ լուսաւորատեսլագոյն

19գ. $[(Sa)j(\underline{S}a)]a$ գեղեցկաշքեղութիւն

19դ. $[(Sa)j(Sa)]a$ արժանահաւատարմագոյն

20. $[Sj(aS)]a$ միափաղառական, քառափաղառական

21. $[a(SjS)]a$ աննմանամանաբար, անխորամանկաբար, անդատապարտաբար, աննմանամանայք, անմիաբանութիւն, անփոխաշարժութիւն, չմիաբանութիւն

21ա. $[a(\underline{S}jS)]a$ անպտղաբերութիւն, անսրտացաւութիւն



21բ. $[a(Sj\underline{S})]a$ անփոխաբնապէս, անախտակցութիւն, անկամակցութիւն, անփոխակցութիւն

21գ. $[a(\underline{S}jS)]a$ անընչասիրաբար, անընչասիրութիւն

21դ. $[a(SjS^{f})]a$ անշնորհակալութիւն, անոխակալութիւն, չոխակալութիւն

21ե. $[a(Sj\underline{S}^{f})]a$ անփոխատրաբար, անպատասխանատուութիւն

21զ. $[a(\underline{S}jS)]a$ անբարեփորձութիւն

21է. $[a(\underline{S}j\underline{S})]a$ անբարեմտութիւն

21ը. $[a(SjS)]a$ անզանազանաբար, անզանազանութիւն

21թ. $[a(\overline{\underline{SjS}})]a$ անկերակրութիւն

21ժ. $[aj(S^{f}j\underline{S})]a$ համագոյակցութիւն

22. $[(aS)jS]a$ յառաջաբերական, յառաջաբանական, անարգակերպութիւն, անժամակերութիւն, առաւելաբանութիւն, առաւելազանցութիւն, առողջաբերութիւն, առողջախոհութիւն, ընդունայնաբանութիւն, ընդվայրաբանութիւն, ընդվայրախօսութիւն, դայլակերութիւն, յառաջաբանութիւն, յառաջաբերութիւն, յառաջազանցութիւն, յառաջախօսութիւն, յառաջակամութիւն, յառաջակարգութիւն, յառաջահոգութիւն, յառաջամասնութիւն, յառաջատեսութիւն, յառաջաքաղերթութիւն

22ա. $[(a\underline{S})jS]a$ ընդդիմամարտիկ, ընդդիմաբանութիւն, ընդդիմակազմութիւն, ընդդիմահարութիւն

22բ. $[(aS)j\underline{S}]a$ առողջամտութիւն, յառաջագիտութիւն, յառաջադիմութիւն, յառաջաձգութիւն, յառաջամտութիւն, յառաջապատուութիւն, տկարամտութիւն, յերկայնամտութիւն

22գ. $[(a\underline{S})j\underline{S}]a$ ընդդիմագրութիւն, ընդդիմաքննութիւն

22դ. $[(aS)jS^{f}]a$ առաւելաստացութիւն

22ե. $[(a\underline{S})jS^{f}]a$ ընդդիմակայումն, ընդդիմակացու, ընդդիմակացեալ, ընդդիմակայութիւն, ընդդիմակացութիւն

22զ. $[(aS)j\underline{S}^{f}]a$ առընթերադրութիւն, յառաջադրութիւն, յառաջատուութիւն

22է. $[(a\underline{S})j\underline{S}^{f}]a$ ընդդիմադրութիւն

23. $\{[a(\underline{S}j\underline{S})a]\}a$ անմեկուսապէս

24. $\{[(Sa)]j\underline{S}\}a$ անասնագիտութիւն

25. $[(aS)jS^{f}]a$ իրացակայութիւն

25ա. $[a(Sa)S^{f}]a$ յառաջիկայն

26. $\{[a(Sa)]jS\}a$ անարժանագործութիւն, յաջողաձեռնութիւն

26ա. $\{a[(Sa)j\underline{S}]\}a$ անիմաստասիրութիւն



18—442

27. [(SS)a]a աստուածպետականագոյն, աստուածպետականապէս, արևելեայք, Հայկազեանք, ձեռնարկածք

27ա. [(SS)a]a տնտեսականն, մտածողութիւն, տնտեսականութիւն, լեռնոտեայք

27բ. [(SS)a]a տնօրինականն

27գ. [(S$^f$S$^f$)a]a օրէնսդրականն

27դ. [(S$^f$S$^f$)a]a բամբասողութիւն

28. [(Sa)S]a կերպարանաւորութիւն

28ա. [(Sa)S]a կռանարկութիւն

28բ. [(Sa)S]a գեղեցկորոշաբար, խորհրդածութիւն, կրկնանունութիւն, քառասնամութիւն

28գ. [(Sa)S]a երդմնստութիւն

28դ. [(Sa)S$^f$]a անդրէնդարձութիւն, առաջիկայս, առաջիկողմանէք

28ե. [(Sa)S$^f$]a նշանարարութիւն, Հանգստարարիթայ

29. {[(Sa)a]S}a արտաքսառաքաբար, ներքսածական, ներքսածութիւն

30. [S(Sa)]a ինքնուսումնաբար, ամենիմաստաբար, անձնիշխանական, ինքնիշխանական, ճարտասանական, ինքնուսումնակի, ամենիմաստապէս, ինքնիշխանապէս, ինքնուսումնապէս, անձնիշխանութիւն, աստուածիմաստութիւն, բազումուսումնութիւն, ինքնիմաստութիւն, հիմնարկողութիւն, միիշխանութիւն, քաջունակութիւն

30ա. [S(Sa)]a բազմիշխանութիւն, բազմունակութիւն, բազմուսումնութիւն, վիպասանութիւն

30բ. [S(Sa)]a նոյնօրինակագոյն

30գ. [S(Sa)]a մեծվայելչաբար, խունկրդմնական, աստուածերևութութիւն, բարիխորհրդութիւն, մեծվայելչութիւն, սուտերդմնութիւն, քաջուսմնութիւն

30դ. [S(Sa)]a բազմուսմնութիւն, լուսերևութութիւն

30ե. [S$^f$(Sa)]a դարձառածութիւն

30զ. [S$^f$(Sa)]a մարդկօրինակագոյն

30է. [S$^f$(S$^f$a)]a գոյարարողական

30ը. {[S(Sa)]a}a ճարտասանականն

31. [(Sa)(Sa)]a սակաւիշխանական

31ա. [(Sa)(Sa)]a կենցաղօգտակարագոյն

32. [a(SS)]a անայցելութիւն, անաշառութիւն, անաստուածպաշտութիւն, անշարակնութիւն



32ա. [a(SS)]a անորպխութիւն

32բ. [a(SS$^f$)]a աններկրայաբար, աններկրայութիւն

32գ. [a(SS$^f$)]a անժուժկալութիւն

32դ. [a(SS$^f$)]a անունկնդրութիւն

32ե. [a(SS)]a անչարչարաբար, անչարչարութիւն

32զ. [a(SS)]a անբարբառաբար, անկասկածաբար, անբարբառութիւն

32է. [a(SS)]a անհայհոյաբար

32ը. [a(S$^f$S$^f$)]a անբամբասաբար

32թ. [a(SS$^f$)]a չբարերարութիւն

33. [(aS)S]a առձեռնպատրաստաբար, առձեռնպատրաստագոյն, յառաջանցակ, յառաջքերական, զհետերթանք, առաւելընկալութիւն, առոտնհարութիւն, զհետերթութիւն, ընդունայնարուեստութիւն, յանձնառութիւն, յառաջածութիւն, յառաջանցութիւն, յառաջքերութիւն, յառաջխօսութիւն

33ա. [(aS)S]a ընդդիմառութիւն, ընդմտածութիւն

33բ. [(aS)S]a յառաջգիտական, առողջմտութիւն, յառաջգիտութիւն, յառաջձգութիւն

33գ. [(aS$^f$)S]a յոգւոցհանութիւն, յոգացհանութիւն, ընդմիմեանսհարութիւն, զմտաւածութիւն, յետսհարութիւն

33դ. [(aS$^f$)S]a զմիմեանսղրկութիւն

33ե. [(aS)S$^f$]a յառաջիմացական, յառաջասացեալ, յառաջասացութիւն, յառաջխաղացութիւն

33զ. [(aS)S$^f$]a ընդդիմասացութիւն

33է. [(aS$^f$)S$^f$]a զմիմեանսկալութիւն, զայլոցկերութիւն

33ը. [(aS$^f$)(Sa)]a զմիմեանսունակութիւն

34. {S[(Sa)a]}a աստուածերկիւղածութիւն

35. [(aS)(Sa)]a յառաջգիտողութիւն

36. {[a(SS)]a}a յուղարկաւորութիւն

37. [S(aS)]a աստուածանգիտութիւն

Երեք արմատական ձևույթ ունեցող բարդածանցավոր սերող հիմքերով կազմությունները թեև ներկայացված են բավական բազմազան կաղապարներով, բայց դրանց կոնկրետ իրացումները նույնպես սահմանափակ թիվ ունեն։ Վկայված են հետևյալ օրինակները։

38. [S(SjS)]a ինքնարհամարհութիւն

39. [Sj(SjS)]a աստուածանմանակերպութիւն

39ա. [Sj(SjS)]a ազգատոհմակցութիւն, երկատեսակցութիւն

39բ. [Sj(SjS)]a ամենաբարեպաշտիկ

39գ. {Sj[(SS)a]}a ծայրասրտմտութիւն

39դ. {Sj[(aS)S]}a ինքնայառաջածութիւն

39ե. [Sj(SS)]a կամամտածական

39զ. [Sj(SS)]a բարձրաբարբառագոյն, մեծաբարբառագոյն

39է. {[($S^{f}$a)jS]jS}a արարչակերտագործութիւն, մերունակերպախառնութիւն

39ը. [(aS)j(Sj$S^{f}$)]a ընդդիմայարակայումն, ընդդիմայարակայութիւն

40. [(SS)jS]a արեգակնատենչիկ

40ա. [(SS)jS]a ողբերգակցութիւն, չարախտակցութիւն

40բ. [(SS)j$S^{f}$]a այսրանդրադարձութիւն

40գ. [(SS)jS]a չարչարակցութիւն

Ինչպես տեսնում ենք, վերջածանցման կաղապարները թե՛ իրենց քանակով ու բազմազանությամբ, թե՛ կոնկրետ իրացումների թվով մեծ չափով գերազանցում են նախածանցման կաղապարներին: Գործառական բեռնվածության տեսակետից վերջածանցման կաղապարները նույնպես բնորոշվում են ծայրահեղ անմիօրինակությամբ, հարյուրավոր իրացումներ ունեցող կառույցների կողքին հանդիպում են խիստ սահմանափակ և նույնիսկ եզակի վկայություններ ունեցող կաղապարներ:

Ստորև ներկայացնում ենք վերջածանցման կաղապարների գործառական բեռնվածության աղյուսակը:



Աղյուսակ 7

| № | Կաղապարներ | Օրինակներ | Թիվը | Տոկոսը |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1 | Sa | ազատաբար | 3894 | |
| 1ա | Sa | վշտագին | 1167 | |
| 1բ | Sa | յոթեգին | 31 | |
| 1գ | $S^{f}$a | առնագոյն | 633 | |
| 1դ | $S^{f}$a | հիբացեալ | 21 | |
| | Ընդամենը | | 5746 | 53,5 |
| 2 | (Sa) a | շահաւէտական | 652 | |
| 2ա | (Sa) a | բնականաբար | 248 | |
| 2բ | (Sa) a | խորհրդաւոր | 274 | |
| 2գ | (Sa) a | պիտանաբար | 68 | |
| 2դ | (Sa) a | մտացեբար | 61 | |
| 2ե | ($S^{f}$a) a | չքաւորական | 3 | |
| 2զ | ($S^{f}$a) a | արարչութիւն | 21 | |
| 2է | $(Sa)^{f}$ a | աշխարհականացեալ | 6 | |
| 2ը | $(Sa)^{f}$ a | վայրենացեալ | 3 | |
| | Ընդամենը | | 1336 | 12,4 |
| 3 | [(Sa)a]a | բարոյականաբար | 57 | |
| 3ա | [(Sa)a]a | բնաւորականագոյն | 16 | |
| 3բ | [(Sa)a]a | առաջնորդական | 21 | |
| 3գ | ([(Sa)a]a | իմաստնական | 10 | |
| 3դ | [(Sa)a]a | ծննդականութիւն | 7 | |
| 3ե | [(Sa)a]a | գեղեցկագոյնութիւն | 4 | |
| 3զ | [(Sa)a]a | մշտնջենաւոր | 4 | |
| 3է | [($S^{f}$a)a]a | արարողականութիւն | 2 | |
| 3ը | [($S^{f}$a)a]a | արարչականութիւն | 1 | |
| 3թ | [$(Sa)^{f}$a]a | իմաստացուցչութիւն | 1 | |
| | Ընդամենը | | 123 | 1,1 |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| 4 | $\{[(Sa)a]a\}a$ | պաշտպանողականություն | 3 | |
| 4ա | $\{[(S\underline{a})a]a\}a$ | առաջնորդականություն | 1 | |
| 4բ | $\{[(\underline{Sa})\underline{a}]a\}a$ | մշտնջենավորական | 3 | |
| | Ընդամենը | | 7 | — |
| 5 | $(aS)\ a$ | ներգործական | 490 | |
| 5ա | $(a\underline{S})\ a$ | ագիտություն | 118 | |
| 5բ | $(aS^f)\ a$ | նախասացիկ | 52 | |
| 5գ | $(a\underline{S}^f)\ a$ | առլցեալ | 9 | |
| 5դ | $(a\underline{S})\ \underline{a}$ | անկարեկան | 1 | |
| | Ընդամենը | | 670 | 6,2 |
| 6 | $(ajS)\ a$ | արտահոսություն | 121 | |
| 6ա | $(aj\underline{S})\ a$ | համապատուաբար | 63 | |
| 6բ | $(ajS^f)\ a$ | հակադարձաբար | 31 | |
| 6գ | $(aj\underline{S}^f)\ a$ | գերադրական | 23 | |
| | Ընդամենը | | 233 | 2,2 |
| 7 | $[a(Sa)]$ | անարժանաբար | 75 | |
| 7ա | $[a(\underline{S}a)]a$ | անօգտակարագույն | 19 | |
| 7բ | $[a(S\underline{a})]a$ | մակսատկություն | 25 | |
| 7գ | $[a(\underline{Sa})]a$ | անտեղեկագույն | 6 | |
| 7դ | $[a(S^fa)]a$ | անծանոթություն | 7 | |
| 7ե | $[a(S\underline{a})]\underline{a}$ | անընտանեբար | 2 | |
| 7զ | $[(aS)a]\ a$ | ներգործողական | 4 | |
| 7է | $[(a\underline{S})a]a$ | ընդհանրականապէս | 1 | |
| 7ը | $[(a\underline{S}^f)a]a$ | առանձնավորական | 3 | |
| 7թ | $(aS\ a)\ a$ | առօրէական | 1 | |
| | Ընդամենը | | 143 | 1,3 |



| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| 8 | $[aj\ (Sa)]a$ | նախախնամողություն | 2 | |
| 8ա | $[aj\ (\underline{S}a)]\ a$ | համարնակություն | 3 | |
| 8բ | $[aj\ (S\underline{a})]\ a$ | նախախորհրդություն | 3 | |
| 8գ | $[aj\ (S^fa)]\ a$ | մակագոյեղաբար | 1 | |
| | Ընդամենը | | 9 | 0,1 |
| 9 | $[a\ (aS)]\ a$ | յանկարծակի | 7 | |
| 9ա | $[a\ (a\underline{S})]\ a$ | անընդմիջաբար | 1 | |
| 9բ | $[a\ (aS^f)]\ a$ | առընդդիմացումն | 2 | |
| 9գ | $[a(ajS)]\ a$ | աննախախնամագոյն | 1 | |
| 9դ | $[a\ (aj\underline{S})]\ a$ | անպարագրաբար | 2 | |
| 9ե | $[a\ (ajS^f)]\ a$ | աննենթակացեալ | 1 | |
| | Ընդամենը | | 14 | 0,1 |
| 10 | $\{a[(aS)a]\}a$ | առընդունողություն | 2 | |
| | Ընդամենը | | 2 | — |
| 11 | $\{[a(Sa)]a\}a$ | ներգործողականաբար | 4 | |
| 11ա | $\{a[(S\underline{a})a]\}a$ | անառաջնորդություն | 2 | |
| 11բ | $\{a[(\underline{Sa})a]\}a$ | անմիջնորդություն | 1 | |
| 11գ | $\{aj[(S\underline{a})a]\}a$ | վերակրկնակություն | 1 | |
| | Ընդամենը | | 8 | — |
| 12 | $SjS)\ a$ | այլաբանաբար | 630 | |
| 12ա | $(\underline{S}jS)\ a$ | լուսաձեւագոյն | 221 | |
| 12բ | $(Sj\underline{S})\ a$ | երկասիրական | 243 | |
| 12գ | $(\underline{S}j\underline{S})\ a$ | կանխագիտական | 95 | |
| 12դ | $(S^fjS)\ a$ | աստեղաբաշխական | 15 | |
| 12ե | $(SjS^f)\ a$ | փոխադարձաբար | 73 | |
| 12զ | $(\underline{S}jS^f)\ a$ | շրջագայական | 15 | |
| 12է | $(Sj\underline{S}^f)\ a$ | հիմնադրական | 39 | |
| 12ը | $(\underline{S}^fjS)\ a$ | արենաթաթաւություն | 2 | |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| 12թ | (SjS$^{f}$) a | կիտագրեալ | 19 | |
| 12ժ | (S$^{f}$jS) a | աստեղագիտական | 6 | |
| 12ժա | (S$^{f}$jS$^{f}$) a | անուանագրութիւն | 1 | |
| 12ժբ | (SjS) a | զանազանապէս | 11 | |
| 12ժգ | (SjS) a | կերակրանք | 10 | |
| 12ժդ | (SjS) a | բարեգործակ | 70 | |
| 12ժե | (SjS) a | բարեսկզբնական | 22 | |
| 12ժզ | (SjS$^{f}$) a | ուղեգնացութիւն | 6 | |
| 12ժէ | (SjS$^{f}$) a | բարետրապէս | 3 | |
| 12ժթ | (SpS) a | զառիվերակ | 2 | |
| 12ի | (SpS) a | օրըստօրեայ | 1 | |
| 12իա | (ScS) a | երթեւեկութիւն | 11 | |
| 12իբ | (SjS)$^{f}$ a | արհամարհելի | 1 | |
| | Ընդամենը | | 1496 | 14,0 |
| 13 | (SS) a | այլազգաբար | 216 | |
| 13ա | (SS) a | տնանկագոյն | 63 | |
| 13բ | (SS) a | օտարսիրագոյն | 47 | |
| 13գ | (SS) a | նուիրամասակ | 12 | |
| 13դ | (S$^{f}$S) a | գիւցազնաբար | 14 | |
| 13ե | (SS$^{f}$) a | ամենիմացական | 66 | |
| 13զ | (SS$^{f}$) a | գրաբարութիւն | 16 | |
| 13է | (S$^{f}$S) a | եղբօրորդեակ | 4 | |
| 13ը | (SS$^{f}$) a | աղքատատեցութիւն | 14 | |
| 13թ | (SS$^{f}$) a | բարերարական | 7 | |
| 13ժ | (S$^{f}$S$^{f}$) a | գոյաբարութիւն | 7 | |
| 13ժա | (S$^{f}$S$^{f}$) a | օրէնսդրական | 2 | |
| 13ժբ | (SS) a | այլայլութիւն | 48 | |
| 13ժգ | (SS) a | յանձանձաբար | 12 | |
| 13ժդ | (SS) a | հեծեծանք | 10 | |



| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| 13ժե | (SS) a | լեռնլեռնայն | 5 | |
| 13ժզ | (SS$^{f}$) a | որմզորմայն | 1 | |
| | Ընդամենը | | 544 | 5,1 |
| 14 | [(SjS)a]a | հողաբարձականութիւն | 2 | |
| 14ա | [(SjS)a]a | բռնադատողական | 5 | |
| 14բ | [(SjS)a]a | նկարագրականութիւն | 3 | |
| 14գ | [(SjS)a]a | չնչածնականագոյն | 2 | |
| 14դ | [(SjS)a]a | մեկուսագոյն | 2 | |
| 14ե | [(SjS)a]a | կերակրողական | 3 | |
| 14զ | [(SjS)a]a | կերակրչութիւն | 1 | |
| 14է | [(S$^{f}$jS)a]a | աստեղաբաշխական | 1 | |
| | Ընդամենը | | 19 | 0,2 |
| 15 | [(Sa) jS]a | կատարողապետական | 23 | |
| 15ա | [(Sa) j S]a | պատուիրանազանցութիւն | 7 | |
| 15բ | [(Sa) j S] a | յայտնաբանաբար | 25 | |
| 15գ | [(Sa) j S] a | ժամանակագրական | 20 | |
| 15դ | [(Sa) jS]a | ծննդաբանութիւն | 5 | |
| 15ե | [(Sa) jS]a | նշանագրութիւն | 2 | |
| 15զ | [(Sa) jS]a | գեղեցկադիմութիւն | 7 | |
| 15է | [(Sa) jS]a | սրբազնագրական | 2 | |
| 15ը | [(S$^{f}$a) jS]a | աստեղաբանութիւն | 2 | |
| 15թ | [(S$^{f}$a) jS]a | արարչագործական | 5 | |
| 15ժ | [(S$^{f}$a) jS]a | արարչակցութիւն | 1 | |
| 15ժա | [(Sa) jS$^{f}$]a | անդրէնադարձական | 2 | |
| 15ժբ | [(Sa) jS$^{f}$]a | միայնակեցական | 4 | |
| 15ժգ | [(Sa) jS$^{f}$]a | միջնակացութիւն | 1 | |
| 15ժդ | [(Sa) jS$^{f}$]a | սրբազնագրութիւն | 1 | |
| | Ընդամենը | | 107 | 1,0 |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| 16 | {[(Sa)a] jS}a | հետեւակամարտութիւն | 2 | |
| 16ա | {[(Sa) a] jS}a | առաջնորդասիրութիւն | 1 | |
| 16բ | {[(Sa) a]jS$^{f}$}a | ներքսագրութիւն | 1 | |
| | Ընդամենը | | 4 | — |
| 17 | {[(Sa)a]ajS}a | մշտնջենաւորակցութիւն | 1 | |
| | Ընդամենը | | 1 | — |
| 18 | [Sj (Sa)]a | աստուածատեսակարար | 21 | |
| 18ա | [Sj (Sa)] a | բազմաժամանակագոյն | 11 | |
| 18բ | [Sj(Sa)]a | միաբնակութիւն | 2 | |
| 18գ | [Sj (Sa)]a | եօթնալուսնեայ | 1 | |
| 18դ | [Sj(Sa)]a | աստուածավայելչապէս | 15 | |
| 18ե | [Sj(Sa)]a | մտախորհրդութիւն | 3 | |
| 18զ | [Sj(Sa)]a | շրջապտուտակեալ | 1 | |
| 18է | [Sj(S$^{f}$a)]a | աստուածածանօթութիւն | 1 | |
| 18ը | [Sj(S$^{f}$a)]a | ամենաստացկութիւն | 2 | |
| 18թ | [S$^{f}$j(Sa)]a | մարդկավայելչաբար | 1 | |
| 18ժ | [Sj(Sa)]a | ոսկետեսակութիւն | 3 | |
| 18ժա | [Sj(Sa)]a | բարենշանագոյն | 1 | |
| 18ժբ | [Sj(Sa)]a | բարեվայելչապէս | 3 | |
| 18ժգ | [Sj(aS)]a | աղեներգործութիւն | 1 | |
| | Ընդամենը | | 66 | 0,6 |
| 19 | [(Sa) j (Sa)]a | իրաւախորհրդութիւն | 4 | |
| 19ա | [(Sa) j (Sa)]a | պարսկարարոյական | 2 | |
| 19բ | [(Sa) j (Sa)]a | լուսաւորատեսլագոյն | 1 | |
| 19գ | [(Sa) j (Sa]a | գեղեցկաշքեղութիւն | 1 | |
| 19դ | [(Sa) j (Sa)]a | արժանահաւատարմագոյն | 1 | |
| | Ընդամենը | | 9 | 0.1 |



| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| 20 | [Sj(aS)]a | միափազառական | 2 | |
| | Ընդամենը | | 2 | — |
| 21 | [a(SjS)]a | աննմանամասնաբար | 7 | |
| 21ա | [a(SjS)]a | անպտղաբերութիւն | 2 | |
| 21բ | [a(SjS)]a | անփոխարինապէս | 4 | |
| 21գ | [a(SjS)]a | անընչասիրաբար | 2 | |
| 21դ | [a(SjS$^{f}$)]a | անշնորհակալութիւն | 3 | |
| 21ե | [a(SjS$^{f}$)]a | անփոխատրաբար | 2 | |
| 21զ | [a(SjS)]a | անբարեփորձութիւն | 1 | |
| 21է | [a(SjS)]a | անբարեմտութիւն | 1 | |
| 21ը | [a(SjS)]a | անզանազանաբար | 2 | |
| 21թ | [a(SjS)]a | անկերակրութիւն | 1 | |
| 21ժ | [aj(S$^{f}$jS)]a | համագոյակցութիւն | 1 | |
| | Ընդամենը | | 26 | 0,2 |
| 22 | [(aS)jS]a | առողջաբերութիւն | 22 | |
| 22ա | [(aS) jS]a | ընդդիմաբանութիւն | 4 | |
| 22բ | [(aS) jS]a | տկարամտութիւն | 8 | |
| 22գ | [(aS) jS]a | ընդդիմաբննութիւն | 2 | |
| 22դ | [(aS) j S$^{f}$]a | առաւելաստացութիւն | 1 | |
| 22ե | [(aS) jS$^{f}$]a | ընդդիմակայութիւն | 5 | |
| 22զ | [(aS) jS$^{f}$]a | առընթերագրութիւն | 3 | |
| 22է | [(aS) jS$^{f}$]a | ընդդիմագրութիւն | 1 | |
| | Ընդամենը | | 46 | 0,4 |
| 23 | {[a(SjSa)]}a | անմեկուսապէս | 1 | |
| | Ընդամենը | | 1 | — |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| 24 | {[a(Sa)]jS}a | անասնագիտություն | 1 | |
| | Ընդամենը | | 1 | — |
| 25 | [(aS)j$S^f$]a | իրացակայություն | 1 | |
| 25ա | {[(aS)a]$S^f$}$^f$a | յառաջիկային | 1 | |
| | Ընդամենը | | 2 | — |
| 26 | {[a(Sa)]jS}a | անարժանագործություն | 2 | |
| 26ա | {a[(Sa)jS]}a | անիմաստասիրություն | 1 | |
| | Ընդամենը | | 3 | — |
| 27 | [(SS)a]a | աստուածպետականագոյն | 5 | |
| 27ա | [(SS)a]a | մտածողություն | 4 | |
| 27բ | [(SS)a]a | անօրինականն | 1 | |
| 27գ | [($S^f S^f$)a]a | օրէնսդրականն | 1 | |
| 27դ | [($S^f S^f$)a]a | բամբասողություն | 1 | |
| | Ընդամենը | | 12 | 0,1 |
| 28 | [(Sa)S]a | կերպարանառություն | 1 | |
| 28ա | [(Sa)S]a | պատուիրանաւանդություն | 2 | |
| 28բ | [(Sa)S]a | գեղեցկորոշարար | 4 | |
| 28գ | [(Sa)S]a | երդմնստություն | 1 | |
| 28դ | [(Sa)$S^f$]a | անդրէնդարձություն | 3 | |
| 28ե | [(Sa)$S^f$]a | նշանարարություն | 2 | |
| | Ընդամենը | | 13 | 0,1 |
| 29 | {[(Sa)a]S}a | արտաքսառաքարար | 3 | |
| | Ընդամենը | | 3 | — |
| 30 | [S(Sa)]a | ինքնուսս մնայէս | 16 | |
| 30ա | [S(Sa)]a | բազմիշխանություն | 4 | |
| 30բ | [S(Sa)]a | նոյնօրինակագոյն | 1 | |
| 30գ | [S(Sa)]a | աստուածերևութություն | 7 | |
| 30դ | [S(Sa)]a | բազմուսումնություն | 2 | |
| 30ե | [$S^f$(Sa)]a | զարձառածություն | 1 | |
| 30զ | [$S^f$(Sa)]a | մարդկօրինակագոյն | 1 | |
| 30է | [$S^f$($S^f$a)]a | զոյարարողական | 1 | |
| 30ը | {[S(Sa)]a}a | ճարտասանականն | 1 | |
| | Ընդամենը | | 34 | 0,3 |
| 31 | [(Sa)(Sa)]a | սակաւիշխանական | 1 | |
| 31ա | [(Sa)(Sa)]a | կենցաղօգտակարագոյն | 1 | |
| | Ընդամենը | | 2 | — |
| 32 | [a(SS)]a | անչարակնություն | 4 | |
| 32ա | [a(SS)]a | անորպխություն | 1 | |
| 32բ | [a(S$S^f$)]a | աներկրայարար | 2 | |
| 32գ | [a(S$S^f$)]a | անժուժկալություն | 1 | |
| 32դ | [a(S$S^f$)]a | անունկնդրություն | 1 | |
| 32ե | [a(SS)]a | անչարչարարար | 2 | |
| 32զ | [a(SS)]a | անբարբառություն | 3 | |
| 32է | [a(SS)]a | անհայհոյարար | 1 | |
| 32ը | [a($S^f S^f$)]a | անբամբասարար | 1 | |
| 32թ | [a(S$S^f$)]a | չարերարություն | 1 | |
| | Ընդամենը | | 17 | 0,1 |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| --- | --- | --- | --- | --- |
| 33 | [(aS)S]a | առձեռնպատրաստաբար | 14 | |
| 33ա | [(aS)S]a | ընդդիմանութիւն | 2 | |
| 33բ | [(aS)S]a | առողջմտութիւն | 4 | |
| 33գ | [(a$S^f$)S]a | զմտաւածութիւն | 5 | |
| 33դ | [(a$S^f$)S]a | զմիմեանսզրկութիւն | 1 | |
| 33ե | [(aS)$S^f$]a | յառաջիմացական | 4 | |
| 33զ | [(aS)$S^f$]a | ընդդիմասացութիւն | 1 | |
| 33է | [(a$S^f$)$S^f$]a | զմիմեանսկալութիւն | 2 | |
| | Ընդամենը | | 33 | 0,3 |
| 34 | {S[(Sa)a]}a | աստուածերկիւղածութիւն | 1 | |
| | Ընդամենը | | 1 | — |
| 35 | [(aS) (Sa)]a | յառաջգիտողութիւն | 1 | |
| 35ա | [(a$S^f$) (Sa)]a | զմիմեանսունակութիւն | 1 | |
| | Ընդամենը | | 2 | — |
| 36 | {[a(SS)]a}a | յուղարկաւորութիւն | 1 | |
| | Ընդամենը | | 1 | — |
| 37 | [S(aS)]a | աստուածանգիտութիւն | 1 | |
| | Ընդամենը | | 1 | — |
| 38 | [S(SjS)]a | ինքնարհամարհութիւն | 1 | |
| | Ընդամենը | | 1 | — |
| 39 | [Sj (SjS)]a | աստուածանմանակերպութիւն | 1 | |
| 39ա | [Sj(SjS)]a | ազգատոհմակցութիւն | 2 | |
| 39բ | [Sj (SjS)]a | ամենաբարեպաշտիկ | 1 | |
| 39գ | [Sj (SSa)]a | ծայրասրտմտողութիւն | 1 | |
| 39դ | {Sj[(aS)S]}a | ինքնայառաջածութիւն | 1 | |
| 39ե | [Sj (SS)]a | կամամտածական | 1 | |
| 39զ | [Sj (SS)]a | բարձրաբարբառագոյն | 2 | |
| 39է | [($S^f$a) j (SjS)]a | արարչակերտագործութիւն | 2 | |
| 39ը | [(aS) j (Sj$S^f$)]a | ընդդիմայարակայումն | 2 | |
| | Ընդամենը | | 13 | 0,1 |
| 40 | [(SS) jS]a | արեգակնատենչիկ | 1 | |
| 40ա | [(SS) jS]a | ողբերգակցութիւն | 2 | |
| 40բ | [(SS)j$S^f$]a | այսրանդրադարձութիւն | 1 | |
| 40գ | [(SS) jS]a | չարչարակցութիւն | 1 | |
| | Ընդամենը | | 5 | — |
| | Ընդհանուր թիվը | | 10761 | 100 |



## ԽԱՌԸ ՏԻՊԻ ԿԱՂԱՊԱՐՆԵՐ

Ինչպես արդեն նշվել է, գրաբարի բառակազմական կաղապարների ամբողջությունը՝ բաղադրյալ բառերն ըստ անմիջական բաղադրիչների վերլուծելու դեպքում, հանգում է երկու գլխավոր հիմնակաղապարի՝ հիմք+հիմք, հիմք+ածանց։ Ըստ այդմ էլ առանձնացվում են բարդ և ածանցավոր կազմությունները։ Սակայն գրաբարի բառակազմական համակարգում հանդիպում են և այնպիսի կառույցներ, որոնք հնարավոր չէ միանշանակ կերպով հատկացնել բարդ կամ ածանցավոր (վերջիններիս դեպքում՝ նախածանցավոր կամ վերջածանցավոր) կաղապարների թվին, քանի որ բառակազմական քայլերի հաջորդականություն, որպես այդպիսին, այդ կազմություններում չի դիտարկվում։ Այդ կառույցներն առաջացել են բաղադրիչների միաժամանակյա կցումով՝ բառակազմական մեկ

քայլի ընթացքում, որի հետևանքով ստացվում են բուն իմաստով բարդածանցավոր կամ նախածանցավորվերջածանցավոր[80] բառեր: Այս տերմինը տվյալ դեպքում արտացոլում է ոչ միայն բաղադրիչների ձևույթային կազմը (ածանցների և մեկից ավելի արմատական ձևույթների առկայություն), այլև նրանց հավասարությունը՝ հաջորդականության բացակայության առումով:

Այդ է պատճառը, որ անմիջական բաղադրիչների տրոհելու ժամանակ ստացվում են ոչ թե բառակազմական (ածանց, հիմք կամ արմատ, իսկ ազատ արմատի դեպքում՝ բառ), այլ բառակազմական և շարահյուսական միավորներ՝ մի կողմից ածանց, մյուս կողմից՝ բառակապակցություն, այսպիսով, պայմանականորեն կարող ենք ասել, որ որպես սերող հիմք հանդես է գալիս բառակապակցությունը[81]: Ընդ որում այդ բառակապակցությունը կարող է լինել և՛ անվանական, և՛ բայական: Վերջին դեպքում տրոհման ժամանակ վերականգնվում է բայի անորոշ ձևը, թեև բաղադրյալ բառի կազմում այն կարող է հանդես գալ հիմքակազմական տարբեր ձևավորմամբ: Այսպես, **հազարամեայ** բառի անմիջական բաղադրիչներն են **հազար ամ** բառակապակցությունը և **եայ** վերջածանցը. **խաչօրհնէք**-ը տրոհվում է **խաչ օրհնել** բառակապակցության և **-էք** ածանցի, նույնպես և՝ **ազատաշխարհիկ -ազատ աշխարհ+իկ**, **վատոհմիկ-վատ տոհմ+իկ**, **ակնածու-ակն ածել+ու**, **թագաւորանարգու-թագաւոր անարգել+ու**, **երեքգմբեթանի-երեք գմբեթ+անի** և այլն: Բնականաբար, հայերենի բառակազմական օրինաչափություններին համապատասխան, բաղադրման ժամանակ բայի կարգային (խոսքիմասային) ցուցիչը դուրս է ընկնում՝ **խաչ+օրհն (-ել) +էք**:

Բուն իմաստով բարդածանցավոր բառերի առաջացումը պայմանավորված է ածանցների առանձնահատկություններով, այսինքն՝ կան որոշակի ածանցներ, որոնք հանդես են գալիս բաղադրյալ բառի կազմիչները (տվյալ դեպքում՝ բառակապակցության անդամները) ի մի ձուլող գործոնի դերում (անշուշտ, այդ ածանցներն ունեն և իրենց սովորական բառակազմական դերը, կցվելով նաև պարզ սկզբնահիմքերի կամ բարդ ու ածանցավոր երկրորդային հիմքերի՝ բառակազմական գործընթացի վերջին քայլում): Այդ պատճառով էլ նշված տիպի կազմությունները վերջին հաշվով քննարկում ենք ածանցման կաղապարների մեջ:

Խառը տիպի կաղապարների մեջ նույնպես կարելի է առանձնացնել բազմազան ենթակաղապարներ, քանի որ բացի զգալի թվով ածանցներից (**-ակ, -այ, -ունի, -ացի, -եակ, -եայ, -եան, -է, -էք, -ի, -իկ, -ու, -ուչ, -ուք** և այլն) սրանց կազմությանը մասնակցում են նաև տարբեր տիպի



հիմքեր. այսպես, սերող բառակապակցության անդամներից մեկը կամ երկուսն էլ կարող են լինել բաղադրյալ կառույցներ՝ իրենց կազմում ունենալ այլ ածանցներ կամ մեկից ավելի արմատներ, օր.՝ **քսանեհինգամեայ-քսանեհինգ ամ+եայ**, **տասնպատուիրանեայ-տասն պատուիրան+եայ**, **օրհնութիւնընկալու-օրհնութիւնս ընկալեմ+ու** և այլն: Այսպիսի դեպքերում կաղապարների բանաձևերի մեջ կիրառվող փակագծերը ցույց են տալիս, որ փակագծում ամփոփված մասն ինքնին բաղադրյալ ձև է, բառակազմական համակարգում անկախ գոյություն ունի և խառը տիպի կաղապարի մեջ մտնում է արդեն որպես պատրաստի կառույց, ինչպես՝ (Sa)$^{f}$Sa—**(օրհն+ութիւն)ս+ընկալ+ու**, այսինքն՝ որոշ ենթակաղապարներում կարելի է հանդիպել բառակազմական պատմությունն արտացոլող մասերի:

Խառը տիպի կաղապարներն ունեն նաև այլ առանձնահատկություններ: Սրանք հիմնականում անհոդակապ միացություններ են, քանի որ հոդակապն ինքը արդեն ձուլում է բաղադրիչները և «նախապատրաստում» բառակազմական հետագա քայլերի, որպես պատրաստի կառույց՝ երկրորդային սերող հիմք, և, բնականաբար, կաղապարներում հեշտությամբ անջատվում է՝ արտացոլելով բառակազմական քայլերի հաջորդականությունը: Այսպես՝ **բազմաժամանակեան** և **բազումժամանակեան** օրինակների մեջ առաջինը ներկայացվում է [Sj(Sa)]a, իսկ երկրորդը S(Sa)a կաղապարով, քանի որ ինքնուրույն գոյություն ունի **բազմաժամանակ** ձևը, որին հետագայում կցվել է **եան** ածանցը (ի դեպ նշենք, որ տվյալ դեպքում այն հավելուրդային արժեք ունի), մինչդեռ **բազումժամանակ** բառ ինքնուրույն գործածությամբ չկա. վերջնական արդյունքի համար սերող հիմք է հանդիսացել **բազում ժամանակս** բառակապակցությունը: Հոդակապավոր կառույցները խառը տիպի կաղապարներին կարելի է դասել միայն պայմանականորեն, մեծ մասամբ այն դեպքերում, երբ սերող հիմքը առանձին վկայված չէ, ինչպես՝ **երկայնաժամանակեայ**, **հեշտապաշտօնեայ** (**երկայն ժամանակ**, **հեշտապաշտօն** ձևերը վկայված չեն) կամ երբ ածանցը հավելուրդային է և միայն սաստկացնում է բառակազմական իմաստը: Այդ տեղի ունի մասնավորապես **-ակ**$^{2}$, **-իկ**$^{2}$, **-ու**$^{1}$ ածանցների դեպքում, որոնք այստեղ հավելուրդային կիրառություն ունեն, քանի որ գործող անձի նրանց իմաստը արդեն իսկ արտահայտվում է գոյական+բայահիմք կառույցով, ինչպես **աստուածասիրակ=աստուածասէր**, **զարդասիրիկ=զարդասէր**, **դիւազգեցիկ=դիւազգեաց**, **կամակատարու=կամակատար** և այլն, թեև օրինակների մեծ մասում առանց ածան-

ցի զուգահեռ ձևերը վկայված չեն, օր.՝ նաւակառու, վաղայագու, խաչահանու, շնորհահատուցու և այլն:

Նշենք նաև, որ, ու[1] ածանցը պարզ բայական սկզբնահիմքերին կցվում է սակավ դեպքերում (ունենք միայն ածու, անկու, դակու, խարու, հասու, հատու, խուսափու), մինչդեռ խառը տիպի կաղապարներում այն անհամեմատ ավելի գործուն է (տե՛ս ստորև): Բոլոր դեպքերում խառը տիպի կաղապարներին ենք դասում այն կառույցները, որոնց անածանց զուգաձևությունները կամ վկայված չեն, կամ այլ իմաստ ունեն. օր.՝ բազմադէմ «շատ դեմքեր ունեցող» և բազմադիմի «պէսպես, շատ, շատ կերպով» (ԱԲ):

Այնուհետև, այս կաղապարներում մեծ թիվ են կազմում թվական կամ քանակ արտահայտող ածական որոշիչով գոյականական սերող բառակապակցությունները՝ -անի, -եակ, -եայ, -եան, -ենի (եան+ի), -ի ածանցներով, ինչպես՝ երեքզմբեթանի, հինգամեակ, երեքօրեայ, եօթնճառագայթեան, հինգհարիւրամենի, եռանկիւնի, բազմաստուածեան, դուզնամանակեան, սակաւժամանակեայ և այլն:

Ստորև ներկայացնում ենք մեր ընտրանքում հանդիպող խառը տիպի կաղապարներն իրենց ենթակաղապարներով: Վկայված օրինակները կաղապարների մեջ խմբավորվում են ըստ վերջածանցների:

1. SjSa

-ակ 1բ. SjS̲a—աստուածասիրակ, բանագատակ

-անի միաձեռանի

-էք միահանէք

-ի ձիագետի, մոշավայրի, 1ա. S̲jSa—իշավայրի, 1բ. SjS̲a-միադիմի, միաստնի, քառակուսի, 1գ. S̲jS̲a—բազմադիմի, իշակիսի, 1դ. SjS̲a—մեկուսի, 1ե. SjS$^{f}$a—երկակողմանի, միակողմանի, 1է. S̲jS$^{f}$a—մեկողմանի:

-ու[1] խաչահանու, կամակատարու, նաւակառու, վաղայագու, քակահատու, օձամարտու, 1ա. SjSa—բռնադատու, հուղկահարու, տիրասպանու, քինանախանձու, 1ե. SjS$^{f}$a—աւելաստացու, հոգաբարձու, շնորհակալու, շնորհահատուցու, ուշակալու, վերակացու, 1դ. S̲jS$^{f}$a—ընչաստացու, կանխակալու, 1է. SjS$^{f}$a—հոգեբարձու

2. Sj(Sa)a սերող բառակապակցության երկրորդ անդամը ածանցավոր կազմություն է:

-եայ երկայնաժամանակեայ, հեշտապաշտօնեայ

-եան երկայնաժամանակեան



2ա. (Sa)j(Sa)a—սերող բառակապակցության երկու անդամներն էլ ածանցավոր կազմություններ են:

-եան սակաւաժամանակեան

2բ. (SS)jSa—սերող բառակապակցության առաջին անդամը բարդություն է:

-ու վերամբարձահածու

3. SSa

-ակ վատոհմակ, վերելակ, վերնոակ

-այ ինքներկրայ

-անի երեքզմբեթանի, 3ե. SS$^{f}$a—եռոտանի, երկոտանի, չորքոտանի, քառոտանի, 3գ. S̲S$^{f}$a—բազմոտանի

-ացի օտարաշխարհացի

-եակ հինգամեակ, քսանամեակ, 3բ. SS̲a—քսանեմեակ

-եայ այլաշխարհեայ, դանգարժեայ, եռօրեայ, երեքմասնեայ, երկայնօրեայ, երկարդնեայ, եօթնստեայ, ծովափնյա, հազարամեայ, հինգօրեայ, ճենազգեայ, մատաղօրեայ, միօրեայ, շաբաթօրեայ, ութատիճանեայ, վեցոտնեայ և այլն, 3ա. SSa—ամսօրեայ, բազմամեայ, բազմաչեայ, բազմօրեայ, երեամեայ, զուգօրեայ, խստոստեայ, հրաչեայ, միջօրեայ, 3բ. SSa—եօթնամսեայ, իննամսեայ, հինգկանգնեայ, ոսկեկմբեայ, ութկանգնեայ, վեցամսեայ, տասնամսեայ, տասնկանգնեայ, 3գ. S̲Sa—երեամսեայ, միջերկրեայ

-եան եռամեան, երեքանձնեան, երեքաստուածեան, երեքերեւեան, երեքթեւեան, երեքձեղունեան, երեքվտակեան, երկարմատեան, երկրեբանեան, երկրրամեան, երկուորակեան, եօթնճառագայթեան, եօթնպարբեան, իննամեան, հինգհեգեան, հինգշաբաթեան, հազարամեան, յոգնամանակեան, չորեքդրամեան, չորեքկերպեան, չորեքձեղունեան, չորեքտարրեան, վեցգարեան, տասնբանեան, տասնպատգամեան, տասնփեղկեան և այլն, 3ա. SSa—բազմազգեան, բազմախոտեան, բազմամեան, բազմաստուածեան, դուզնամանակեան, հնգյեղեան, յիսնամեան, վիմարդեան; 3բ. SS̲a—արեմտեան, երեքամսեան, երեքթղեան, երեքուղկեան, երեքթուեան, երկուկանգնեան, երկտիրեան, եօթնկաշեան, եօթնպարսպեան, հինգամսեան, չորեքգրեան, չորեքդիմեան, ութեմեան և այլն, 3գ. S̲Sa—երեմեան, բազմօրինեան, 3ե. SS$^{f}$a—եօթնաստեղեան, չորեքեղերեան

-եանց միօրեանց

-է մոգպաշտէ, 3ա. S̲Sa—միջօրէ

-էք խաչօրհնէք, հիմնարկէք

-ի[1] բիւրասպի, եռանկիւնի, աղիկամի, երեքմատնի, երեքսայրի, երկկերպի, երկթերթի, երկրանի, հինգշաբաթի, միակնի, միողնի, պարաբաշխի, 3ա. $\underline{S}$Sa—հնամի, ջրարբի, 3բ. S$\underline{S}$a—երեքկուսի, երկդիմի, երկբուսի, ոտնխթի, չորեքդիմի, չորեքկուսի, չորեքշաբթի, վաղեմի, 3գ. $\underline{S}$Sa—շնչրի, 3ե. SS$^{f}$a—միականի

-իկ[2] ազատաշխարհիկ, չնաշխարհիկ, օտարաշխարհիկ, վատոհմիկ

-ու[1] ակնածու, ակնառու, ահարկու, արիւնարբու, աւարառու, աւերածու, գոտիածու, դիւրառու, խաչհանու, խնամածու, խռովարկու, ծաղրածու, կաշառառու, հոգածու, հրամանառու, ձայնարկու, նախանձարկու, նուագածու, սակառու, սաղմոսերգու, վերարկու, տարփածու, փայլածու, փոխառու, քաղաքառու, քնարերգու, օրհներգու և այլն, 3ա. $\underline{S}$Sa—գինարբու, գինըմպու, եղեմնարկու, խնկածու, խնկարկու, խուզարկու, կարկտածու, հնածու, մանկածու, մտառու, պատժածու, ջրըմպու, վրիժառու, քնածու, 3գ. S$\underline{S}$a—գինարբու, 3դ. S$^{f}$Sa— բանսարկու, սերմանարկու, 3ե. SS$^{f}$a—ձեռնկալու

-ու[2] 3ե. SS$^{f}$a—մինեղջերու

-ուշ 3ա. $\underline{S}$Sa—սրտառուշ

-ուք 3ա. SSa—գինարբուք, 3գ. $\underline{S}$Sa—գինեբրուք

4. (aS)Sa—սերող բառակապակցության առաջին բաղադրիչը նախածանցավոր.

-ու[1] յառաջածու, 4ա. (aS)Sa—յուղարկու

4բ. (aaS)Sa եայ—յանկարծօրեայ

4գ. S(aS)a սերող բառակապակցության երկրորդ անդամը նախածանցավոր.

-ու[1] հայրանարգու

5. (Sa)Sa սերող բառակապակցության առաջին բաղադրիչը վերջածանցավոր.

-եակ 5ա. (Sa)Sa—երեսնօրեակ

-եայ սակաւօրեայ, 5ա. (Sa)Sa—երեսնօրեայ, իննսնամեայ, քառասնամեայ, քառասնօրեայ, 5բ. (Sa)$\underline{S}\bar{a}$—իննսնեմեայ, 5գ. ($\underline{S}$a)Sa—միջներկրեայ

-եան 5ա. (Sa)Sa—երեսնամեան, իննսնամեան, վաթսնամեան, քառասնամեան, 5բ. (S$\underline{a}$)$\underline{S}$a—երեսնեմեան, քառասնեմեան

-էք ապաշխարողարձակէք, 5գ. (Sa)S$^{f}$a—ապաշխարողարարէք, առաջիկողմանէք

-ի 5ա. (Sa)S$\bar{a}$—երեսնամի, 5ե. (S$^{f}$a)Sa—եօթանասնամի



ու[1] սուտակասպասու, 5ա. (Sa)Sa—խորհրդածու, 5գ. (Sa)$^{f}$Sa—օրհնութիւնընկալու

-ութիւն 5ա. (Sa)Sa—քառասնամութիւն

6. S(Sa)a սերող բառակապակցության երկրորդ բաղադրիչը վերջածանցավոր.

-եայ բազումժամանակեայ, իննհարուածեայ, տասնհարուածեայ, 6ա. S(Sa)a տասնպատուիրանեայ, 6բ. S($\underline{Sa}$)a—երկլուսնեայ

-եան չորեքժամանակեան, սուտկերպարանեան, տասնհարուածեան

7. (Sa)(Sa)a—սերող բառակապակցության երկու անդամն էլ վերջածանցավոր կազմություններ են.

եայ սակաւժամանակեայ

եան սակաւժամանակեան

8. (Sa)(aS)a—սերող բառակապակցության առաջին անդամը վերջածանցավոր, երկրորդը՝ նախածանցավոր կազմություն.

ու[1] թագաւորանարգու

9. (SS) Sa—սերող բառակապակցության առաջին անդամը բարդություն է.

-եայ 9ա. (SS$^{f}$) Sa երեքտասանամեայ, երկոտասանամեայ, հնգետասանամեայ, 9բ. ($\underline{S}$S$^{f}$) Sa վեշտասանօրեայ, 9գ. ($\underline{S}$jS$^{f}$) Sa մետասանօրեայ, 9դ. (ScS)Sa քսանևհինգամեայ, 9ե. (ScS$^{f}$)Sa եօթնուտասանամեայ, իննուտասանամեայ

-եան իննհազարամեան, 9բ. (SS$^{f}$)Sa—հնգետասանամեան

-ի 9դ. (ScS)a—եօթնուտասնամի

-որդ 9գ. (SjS$^{f}$)Sa—մետասանժամորդ

Խառը տիպի կաղապարներում հանդիպում են և այնպիսի կառույցներ, երբ վերջին ածանցը բաղադրյալ կազմություն է՝ առանձին ածանցների սերտաճում, որոնք տվյալ դեպքում հանդես են գալիս միասնաբար, մեկ ածանցի արժեքով. այդպիսի ածանցներն ընդամենը երկուսն են՝ ենի<եան+ի և եաց<ի+աց. Նրանցով վկայված օրինակները նույնպես սակավաթիվ են։

10. SS(a+a)

-ի+-աց—բարձրաքեաց, քառաքեաց

-եան+-ի—10ա. (Sa)S(a+a)—երեսնամենի, իննսնամենի, 10բ. (SS)S($\underline{a}$+a)—հնգհարիւրամենի

Վկայված է նաև երկու օրինակ, որտեղ սերող բառակապակցությունը եռանդամ է՝ գոյականն իր նախդրով և բայական անդամ։ Նախդիրն

այստեղ պահպանում է իր բառային արժեքը և չի վերածվում նախածանցի։

*11ա.* $SS^fSa$—ընդունչարկու

*11բ.* $SSS^fa$—ընդվայրընկեցիկ

*Խառը տիպի կաղապարների մյուս տարատեսակությունը նախածանցավերջածանցավոր կազմությունները են, որտեղ, ինչպես արդեն նշվել է, տեղի ունի նախածանցի և վերջածանցի միաժամանակյա կցում։ Դրանք հիմնականում յ- նախածանցով և -ս վերջածանցով մակբայներն են, թեև կան նաև մի շարք այլ տիպի օրինակներ։*

*12.* aSa

**ան-...-եայ** *անաչեայ, անգեղեայ, անդեղեայ*

**ան-...-ուչ** *անյարուչ*

**առ-...-եայ** *առօրեայ*

**առ-...-եան** *առժամեան*

**առ-...-չեայ** *առհաւատչեայ*

**բստ-...-եայք** *բստմանեայք*

**համ(ա)-...-եայ** *12բ.* $aS^fa$ *համհօրեայ,* *12գ.* ajSa *համատոհմեայ*

**յ-...-ի** *յակնատանի,* *12ա.* aSa *յարամբի*

**յ-...-ուստ** *յայլուստ, յետուստ,* *12ա.* aSa *յերկնուստ*

**յ-...-ս** *յապայս(ն)*

**ստոր-...-եայ** *12ա.* aSa *ստորերկրեայ*

**տ-...-ի** *տմարդի*

*Որոշ ենթակաղապարներում հանդիպում են բաղադրյալ սերող հիմքեր, որոնք խառը տիպի կաղապարների մեջ մտնում են որպես պատրաստի կառույցներ։ Մեր ընտրանքում վկայված են հետևյալ օրինակները.*

*13.* a(aS)a

**յ-...-ուստ** *յանկարծուստ*

**յ-...-ս** *յանգէտս, յանկերկիւղս, յանխնայս, յանհոգս, յանպէտս, յանօգուտս*

*13ա.* $a(aS^f)a$

**յ-...-ս** *յանզգայս*

*13բ.* a(Sa)a

**յ-...-ուստ** *յարքունուստ*

*13գ.* a[a(Sa)]a

**յ-...-ից** *յանզգաստից*



**յ-...-ուց** *յանզգաստուց*

**յ-...-ս** *յանզգաստս, յանծանօթս*

*13դ.* aj(Sa)a

**ենք(ա)-...-եայ** *ենթալուսնեայ*

*14.* a(SjS)a

**յ...-ուց** *յայլակարծուց*

*14ա.* a(SS)a

**յ-...-ս** *յերկբայս*

*14բ.* a[a(SS)]a

**յ-...-ս** *յաներկբայս*

*14գ.* a[a(SS)]a

**յ-...-ս** *յանկասկածս*

*Ինչպես տեսնում ենք, խառը տիպի կաղապարները թեև կառուցվածքային տեսակետից զգալի բազմազանություն են ցուցաբերում, սակայն նրանց կոնկրետ իրացումները շատ չեն և մեծ մասամբ վկայված են մեկերկու օրինակներով։ Ամբողջությամբ վերցրած նրանք կազմում են վերջածանցման կաղապարների ընդամենը 3,3 տոկոսը։*

*Ստորև ներկայացնում ենք խառը տիպի կաղապարների գործառական բեռնվածության աղյուսակը։*

Աղյուսակ 8

| № | *Կաղապարներ* | *Օրինակներ* | *Թիվը* | *Տոկոսը* |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| *1* | SjSa | *միահանէք* | 10 | |
| *1ա* | SjSa | *բռնադատու* | 5 | |
| *1բ* | SjSa | *բանադրակ* | 5 | |
| *1գ* | SjSa | *բազմադիմի* | 2 | |
| *1դ* | SjSa | *մեկուսի* | 1 | |
| *1ե* | $SjS^fa$ | *վերակացու* | 8 | |
| *1զ* | $SjS^fa$ | *ընչատացու* | 2 | |
| *1է* | $SjS^fa$ | *մեկողմանի* | 2 | |
| | *Ընդամենը* | | 35 | 9,2 |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| 2 | Sj (Sa) a | հեշտապաշտոնեայ | 3 | |
| 2ա | (Sa) j (Sa) a | սակաւաժամանակեան | 1 | |
| 2բ | (SS) j Sa | վերամբարձահաճու | 1 | |
| | Ընդամենը | | 5 | 1,3 |
| 3 | SSa | երեքգմբեթանի | 157 | |
| 3ա | SSa | հնգյեղեան | 37 | |
| 3բ | SSa | երեքկուսի | 38 | |
| 3գ | SSa | տասնկանգնեայ | 7 | |
| 3դ | $S^fSa$ | բանսարկու | 2 | |
| 3ե | $SS^fa$ | միեղջերու | 7 | |
| 3զ | $SS^fa$ | բազմոտանի | 1 | |
| | Ընդամենը | | 249 | 65,2 |
| 4 | (aS) Sa | յառաջածու | 1 | |
| 4ա | (aS) Sa | յուղարկու | 1 | |
| 4բ | (aaS) Sa | յանկարծօրեայ | 1 | |
| 4գ | S (aS) a | հայրանարգու | 1 | |
| | Ընդամենը | | 4 | 1,0 |
| 5 | (Sa) Sa | ապաշխարողարձակէք | 3 | |
| 5ա | (Sa) Sa | խորհրդածու | 11 | |
| 5բ | (Sa) Sa | քառասնեմեան | 3 | |
| 5գ | (Sa) Sa | միջներկրեայ | 1 | |
| 5դ | $(Sa)^fSa$ | օրհնութիւնընկալու | 1 | |
| 5ե | $(S^fa)$ Sa | եօթանասնամի | 1 | |
| 5զ | $(Sa)S^fa$ | առաջիկողմանէք | 2 | |
| | Ընդամենը | | 22 | 5,7 |



| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| 6 | S (Sa) a | սուտկերպարանեան | 6 | |
| 6ա | S(Sa) a | տասնպատուիրանեայ | 1 | |
| 6բ | S (Sa) a | երկլուսնեայ | 1 | |
| | Ընդամենը | | 8 | 2,1 |
| 7 | (Sa) (Sa) a | սակաւժամանակեայ | 2 | |
| | Ընդամենը | | 2 | 0,5 |
| 8 | (Sa) (aS) a | թագաւորանարգու | 1 | |
| | Ընդամենը | | 1 | 0,2 |
| 9 | (SS) Sa | իննհազարամեան | 1 | |
| | Ընդամենը | | 1 | 0,2 |
| 9ա | $(SS^f)$ Sa | երեքտասանամեայ | 3 | |
| 9բ | $(SS^f)$ Sa | վեշտասանօրեայ | 2 | |
| 9գ | $(SjS^f)$ Sa | մետասանժամորդ | 2 | |
| 9դ | (ScS) a | քսանեհինգամեայ | 2 | |
| 9ե | $(ScS^f)$ a | եօթնուտասնամեայ | 2 | |
| | Ընդամենը | | 11 | 2,9 |
| 10 | SS (a+a) | բարձրաքեաց | 2 | |
| 10ա | (Sa) S (a+a) | իննսնամենի | 2 | |
| 10բ | (SS) S (a+a) | հինգհարիւրամենի | 1 | |
| | Ընդամենը | | 5 | 1,3 |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| 11 | SSSa | առոանհարու | 1 | |
| 11ա | SS$^{f}$Sa | ընդունչաարկու | 1 | |
| 11բ | SSS$^{f}$a | ընդվայրընկեցիկ | 1 | |
| | Ընդամենը | | 3 | 0 8 |
| 12 | aSa | անյարուչ | 13 | |
| 12ա | aSa | յերկնուստ | 3 | |
| 12բ | aS$^{f}$a | համհօրեայ | 1 | |
| 12գ | ajSa | համատոհմեայ | 1 | |
| | Ընդամենը | | 18 | 4.7 |
| 13 | a (aS) a | յանօգուտս | 7 | |
| 13ա | a (aS$^{f}$) a | յանզգայս | 1 | |
| 13բ | a (Sa) a | յարբունուստ | 1 | |
| 13գ | a[a(Sa)]a | յանզգաստից | 4 | |
| 13դ | aj (Sa) a | ենթալուսնեայ | 1 | |
| | Ընդամենը | | 14 | 3,4 |
| 14 | a (SjS) a | յայլակարծուց | 1 | |
| 14ա | a (SS) a | յերկրայս | 1 | |
| 14բ | a [a(SS)] a | յաներկրայս | 1 | |
| 14գ | a [a(SS)] a | յանկասկածս | 1 | |
| | Ընդամենը | | 4 | 1,0 |
| | Ընդհանուր թիվը | | 382 | 100 |

## ԲԱՅԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ

*Ինչպես հայտնի է, հայերենում բայը միակ խոսքի մասն է, որ ունի ձևաբանական ցուցիչ (նկատի ունենք բայերի, այսպես կոչված, «բառարանային» ձևը՝ անորոշ դերբայը կամ սահմանականի ներկայի եզակի*



*առաջին դեմքը). գրաբարում բայական մաքուր արմատը կարող է կամ ընդհանրապես առանձին հանդես չգալ հարացույցում, կամ հանդիպել միայն մեկ դիրքում՝ անցյալ կատարյալի եղակի 3-րդ դեմքում, կամ բուն հրամայականի եղակի 2-րդ դեմքում: Այսպիսով, բայերը միշտ հանդես են գալիս կարգային պատկանելության ցուցիչով՝ դիմային վերջավորություններով կամ անորոշ դերբայի, որպես գործողության անվանման, -*լ *ածանց-վերջավորությամբ (*ե, ի, ա, ու *թեմատիկ ձայնավորներով նախորդված), այլ կերպ ասած, չունեն միասնական «մաքուր» ելակետային ձև՝ զրո քերականական ձևույթով, որից կազմվեին բայական հարացույցի անդամները, ինչպես մյուս թեքվող խոսքի մասերի դեպքում է: Սրա հետևանքով բայական բառույթը միշտ բաղադրյալ է, կազմված է առնվազն երկու ձևույթից՝ արմատից և վերջավորություններից (եթե, անշուշտ, թեմատիկ ձայնավորները դիտվեն ոչ թե որպես առանձին տարր, այլ որպես վերջավորության ներաճած մաս): Այս հանգամանքը նկատի ունենալով՝ սույն աշխատության մեջ բայերը ամբողջությամբ քննվում են ածանցավոր կազմությունների մեջ, անկախ այն բանից, թե վերջավորությանը (որը տվյալ դեպքում մենք համարում ենք քերականական ածանց[82]) նախորդող մասը ինքնին ինչ կազմություն ունի (պարզ, բարդ, ածանցավոր):*

*Կարգային (խոսքիմասային) նշույթավորվածության հատկանիշից բացի բայերն ունեն նաև մի շարք այլ բառակազմական յուրահատկություններ, որոնք նրանց առանձնահատուկ քննության անհրաժեշտությունն են առաջացնում:*

*Ամենից առաջ պետք է նշել բայերի բառահիմքերի[83] ծագումնաբանական առանձնահատկությունը: Դրանք կարող են լինել ինչպես բուն բայական (*այրել, առնել, ասել, բերել, լինել, խօսել*) և այդ դեպքում անկախ գործածություն չունեն (դրանք այսպես կոչված կապված արմատներն են, և եթե հանդիպում են հարացույցում «մաքուր» ձևով, ապա միշտ քերականական զրո ձևույթի ուղեկցությամբ), այնպես էլ ոչ բայական, որոնք բնականաբար այլ խոսքի մասերի դերում ունեն ինքնուրույն և անկախ գործածություն (*ական+ել–ակն, աղմկ+ել–աղմուկ, ամաճ+ել–ամաճ, անագան+ել–անագան, անձկ+ալ–անձուկ, աւաղ+ել–աւաղ *և այլն):*

*Բուն բայական արմատները հեշտ է ճանաչել այն դեպքերում, երբ դրանցից կազմված գոյականները ունեն գոյականակերտ ածանց (ինչպես՝ *վազք, խօսք, բերք, տուրք, դիրք *և այլն), իսկ այն դեպքերում, երբ բայական արմատը ձևով համընկնում է անկախ գործածություն ունեցող գոյականական արմատին (*սէր–սիրեմ, դէտ–դիտեմ, ծին–ծնանեմ, եկ–եկի,

գէտ-գիտեմ, կիր-կրեմ և այլն), դժվարություններ են առաջանում բայերի բառահիմքերի կարգային պատկանելության որոշման հարցում։ Այս պարագայում, եթե գոյականն ունի առարկայացված գործողության (ծին, կիր) կամ գործող անձի իմաստ (եկ, դէտ, գէտ), հնարավոր է ենթադրել արմատի բուն բայական ծագումը, և այս դեպքում գոյություն ունի այսպես կոչված «ետադարձ բառակազմություն», երբ անբաղադիր ձևը իմաստային տեսակետից ածանցյալ է, իսկ եթե գոյականի մեջ դժվար է ընկալել գործողության իմաստ (սէր), ապա արմատը ծագումնաբանորեն կարող է լինել ինչպես բուն անվանական, այնպես էլ բայական՝ գոյականների մեջ գործողության իմաստի հետագա թուլացումով։

Բուն բայական հիմքերի դեպքում դժվար է խոսել բառակազմության մասին որպես այդպիսին, այստեղ սերող հիմքը չունի անկախ գործածություն և դժվար է ասել, երբևէ ունեցե՞լ է, թե ոչ։ Ըստ այդմ, այստեղ անորոշ են մնում բայական արմատներից բայերի սերման պատմությունը և բաղադրյալ ու սերող հիմքերի հարաբերությունը։ Այսպիսով, կարելի է ասել, որ բայական արմատ ունեցող բայերը որպես պատրաստի արդյունք ժառանգվել են հնագույն շրջանից և ուսումնասիրվող ժամանակաշրջանում «մեռած» կաղապարների արժեք ունեն, թեև կազմությամբ, անշուշտ, ընկալվում են որպես բաղադրյալ, ինչպես մնացած բոլոր բայերը։ Այդ վերաբերում է հատկապես այսպես կոչված սուսկածանցավոր բայերին, որոնց արմատը ծագումով հիմնականում բայական է՝ այտնում, անկանեմ, անցանեմ, առնեմ, առնում, արբենամ, արկանեմ, բառնամ, բեկանեմ, բուծանեմ, բուսանիմ, գտանեմ, ելանեմ, երկնչիմ, զատչիմ, զարթչիմ, զարկանեմ և այլն։ Այստեղ ածանցներն ունեն ձևաբանական-հիմքակազմական, բայց ոչ բառակազմական արժեք։ Այնպես որ V դ. լեզվավիճակում այս տիպի կաղապարներով այլևս նոր բայեր չեն առաջանում։ Ինչ վերաբերում է այլ խոսքի մասերից բայերի առաջացմանը, ապա այստեղ գործ ունենք բայական բառակազմության հետ իր բուն իմաստով։ Բայերի կերտումը այլ խոսքի մասերից կարող է տեղի ունենալ կամ պարզապես բայական վերջավորության հավելումով (անորոշ դերբայում՝ լ ածանցը իր լծորդ ձայնավորներով), կամ, որ ավելի ցայտուն է դարձնում բայակազմությունը, անալ բաղադրյալ բայակերտ ածանցով։ Որ այս երկու միջոցները բայական բառակազմության մեջ հավասարազոր արժեք ունեն, ապացուցում են նրանցով կազմված այն բազմաթիվ զուգաձևությունները, որոնք վկայված են մեր ընտրանքում՝ աղտիմ-աղտանամ, ամբարտաւանիմ-ամբարտանանամ, անամօթիմ-անամօթանամ, անգիտիմ-անգիտանամ, աներևութիմ-աներևութանամ, անզգայիմ-անզգայանամ, անժուժիմ-անժուժանամ, անհաւատեմ-անհաւատանամ, անմտիմ-անմտանամ, անօսրիմ-անօսրանամ, առաւելիմ-առաւելանամ, առաւօտիմ-առաւօտանամ, առաքինիմ-առաքինանամ, զանգիտեմ-զանգիտանամ, երկբայիմ-երկբայանամ և այլն։ Գործառական տեսակետից սակայն -անալ բաղադրյալ ածանցն ունի որոշ սահմանափակություն։ Նրանով կազմվում են միայն չեզոք սեռի բայեր (այդ է վկայում նաև զուգահեռ ձևերի մեջ ի լծորդության առկայությունը, որ հատուկ է կրավորական և կրավորակերպ չեզոք սեռերին), որոնք բնորոշվում են դառնալու, վերածվելու, հատկանիշ ձեռք բերելու իմաստույթով, իսկ գործողության կերպի առումով մտնում են այսպես կոչված անցումային (ինգրեսիվ, ինխոատիվ) կերպի մեջ։ Մինչդեռ բայական մյուս վերջավորությունների կցումը այդ կարգի սահմանափակում չունի և կարող է կազմել բոլոր սեռերին պատկանող բայեր՝ հիմնականում ե (երբեմն ա, ի) լծորդություններով՝ ականեմ, աղմկեմ, ամանեմ, անուանեմ, գթամ, գումարեմ, համարձակիմ և այլն։

Նոր բայեր կարող են կազմվել նաև արդեն գոյություն ունեցող բայերից, այս դեպքում որպես սերող հիմք հանդես է գալիս ոչ թե բայարմատն իր զանազան տարբերակներով (ինչպես բայահիմքերից այլ խոսքի մասերի առաջացման ընդհանուր օրինաչափությունն էր), այլ արդեն քերականական ձևավորում ստացած ամբողջ բայական բառույթը։ Այսպես, բարդությունների դեպքում առաջին բաղադրիչը, իսկ նախածանցման դեպքում նախածանցը կարող են կցվել արդեն պատրաստի բային՝ գրեմ-արձանագրեմ, չուեմ-ամպաչուեմ, արկանեմ-միջարկանեմ, իջանեմ-վայրիջանեմ, սիրեմ-ախտասիրեմ, գնամ-ապագնամ, հալածեմ-արտահալածեմ, մտանեմ-առմտանեմ, նմանեմ-առնմանեմ, լսեմ-տարալսեմ, փախչիմ-տարափախչիմ և այլն։ Իսկ եթե բայը կազմվում է արդեն իսկ բաղադրյալ (բարդ կամ ածանցավոր) երկրորդային հիմքից՝ (SjS)a, (SS)a, (aS)a, (Sa)a կաղապարներով, ապա փակագծի մեջ ամփոփված մասը կարող է լինել միայն անվանական կամ որևէ այլ խոսքի մաս, բայց ոչ երբեք բայական բառույթ՝ անիրաւիմ, անհամիմ, անմիաբանիմ, անձնաւորիմ, արդիւնաւորեմ, արժանաւորիմ, ժանգոտիմ, ժառանգորդեմ, ձորձապատեմ, չարաբանեմ, տակառապետեմ և այլն։ Նման դեպքում թերևս բացառություն պետք է համարել կրկնավոր կազմությամբ երկրորդային սերող հիմքերը, որոնք բուն բայական հիմքերով և սուսկածանցավոր բայերի նման (տե՛ս վերը) շատ խոր հնություն ունեն, և երբեմն նույնիսկ դժվար է որոշել նրանց խոսքիմասային պատկանելությունը, մանավանդ երբ պահպանված չէ առանձին արմատով բայը կամ անկախ

արմատը, ինչպես՝ աղխաղխեմ, արծարծեմ, բաղբաղեմ, բոհբոհեմ, գեղգեղեմ, կակածեմ, խարխարեմ և այլն: Որոշ դեպքերում սակայն ակնհայտորեն գործ ունենք բայական արմատի կրկնության հետ (երբեմն՝ քերականորեն ձևավորված)՝ բամբասեմ, բեկբեկեմ, դարձդարձիմ, ձրգձրգեմ, յեղյեղում և այլն:

Բաղադրյալ երկրորդային սերող հիմքերով բայերի մեջ (նկատի ունենք այն դեպքերը, երբ բայական վերջավորությանը նախորդում են բարդ կամ նախածանցավոր կազմություններ՝ բաղադրել, ներքաղրել և այլն) հանդիպում են նաև այնպիսի կառույցներ, որոնք պարունակում են քերականական ձևավորում ունեցող բայահիմքեր՝ անցյալ կատարյալի հիմքին (դարձ, բարձ, կալ, ծին/ծն, զանց, արկ, անկ), հրամայականին (տուր/տր, դիր/դր, լեր, առ), ներկայի եզակի 3-րդ դեմքին (կայ, գայ, գոյ) համընկնող ձևերով:

Ընդ որում այստեղ ևս, թեև ոչ այնքան հաճախադեպ, առկա են հիմքակազմական զուգաձևություններ՝ առադրեմ-առդնեմ, առանցեմ-առանցանեմ, առարկեմ-առարկանեմ, հակադարձիմ-հակադառնամ, վերագամ-վերագայիմ կամ ունենք, մի կողմից՝ անդրադարձել, ընդդիմադարձել, տեղադարձել, տարաբարձել, մյուս կողմից՝ վերամբառնալ, պարաբառնալ, համաբառնալ, հակադառնալ, վերադառնալ: Այս երևույթը հակասում է այն օրինաչափությանը, որ նախածանցները և արմատները կցվում են ամբողջ բայական բառույթին, քանի որ առանձին ձևով գոյություն չունեն *դրեմ, *անցեմ, *արկեմ, *բարձեմ, *դարձեմ, *տեսեմ (պարատեսեմ), *գայիմ (օրագայիմ, բացագայիմ), *տրեմ (բացատրեմ), *իջեմ (ստորիջեմ), *կալեմ (բռնակալեմ), *բեկեմ (նաւաբեկեմ), *ծնեմ (կենսածնեմ) և բազմաթիվ նման ձևեր:

Կարելի է ենթադրել, որ այս կառույցներում որպես սերող հիմք ծառայել են արդեն գոյություն ունեցող՝ վերջին բայական բաղադրիչով բարդ անունները (ուշադիր, յուսահատ, բռնակալ, դիմադարձ, խնամակալ, նախանձաբեկ, ընծայատուր, առաջարկ, կենարար, կենսածին և այլն) կամ բայական հիմքով նախածանցավոր բառերը (հակադարձ, բացագայ, գերազանց, անզգայ, անզգամ): Իսկ եթե դրանք վկայված չեն, կամ այդ կարգի իրացումներ հնարավոր չեն, ապա նշված կառույցները կաղապարային հենարան են ծառայել մյուս ձևերի համար, քանի որ արդեն բաղադրյալ բառերի մեջ կարող էին հանդես գալ այդ տիպի արմատական բայաձևեր, ընդ որում ամենայն հավանականությամբ բառակազմական պրոցեսն այստեղ ընթացել է մեկ քայլով՝ դնեմ-առադրեմ, մանավանդ որ այս տիպի կազմությունների մի զգալի մասը ստեղծվել է բառապատ-



ճենումների ճանապարհով՝ հունարենի հետևողությամբ: Հետևաբար, այստեղ բառակազմական կաղապարն է aSa, ի հակադրություն (aS)a կաղապարի, որ ենթադրում է սկզբնապես նախածանցավոր սերող հիմքի առանձին գոյությունը որպես ինքնուրույն բառ՝ հակադարձ-հակադարձիմ:

Այստեղ արդեն առաջ է գալիս ընդհանրապես բայերի բառակազմական պատմության, հետևաբար նաև բայակազմական կաղապարների որոշման հարցը, որի համար կարելի է առաջարկել մի շարք չափանիշներ և կաղապարների ներկայացման սկզբունքներ:

1. Եթե առանձին վկայված է բարդ կամ նախածանցավոր կազմությունը, ապա բայը կազմվել է անվանական բարդ կամ ածանցավոր երկրորդային սերող հիմքից՝ բայակերտ ածանց-վերջավորության օգնությամբ՝ այլագոյն-այլագունիմ, կերակուր-կերակրեմ, մեծամիտ-մեծամտեմ, անզգայ-անզգայիմ, անզարդ-անզարդիմ և այլն:

2. Եթե առանձին վկայված է բառակազմական տեսակետից պարզ (բայական արմատ+վերջավորություն) կամ սուկածանցավոր բայը, ապա գործ ունենք aj(Sa) կամ Sj(Sa) կաղապարի հետ, այսինքն՝ նախածանցը կամ բարդության առաջին բաղադրիչը կցվել են արդեն որպես բայ ձևավորված սերող հիմքին՝ բերեմ-առբերեմ, դնեմ-արտադնեմ, ընդունիմ-առընդունիմ, կերտեմ-արտակերտեմ, բառնամ-բացաբառնամ, թռչիմ-վերաթռչիմ, գամ-վերագամ, կամ-ներկամ, առկամ, իջանեմ-վայրիջանեմ, արկանեմ-միջարկանեմ և այլն:

3. Եթե բայական վերջավորությանը նախորդող մասը բարդություն է՝ բայարմատ երկրորդ բաղադրիչով՝ սահմանադրեմ, փոխատուեմ, ականարկեմ, ժուժկալեմ, լրտեսեմ, յուղարկեմ, քաջալերեմ և այլն, ապա հիմնականում առկա է (SjS)a կաղապարը, քանի որ բայերից նոր բայ կազմվելու դեպքում առնվում է ոչ թե բայարմատը, այլ ամբողջ բայը (անորոշ դերբայը): Այն դեպքերում, երբ նման բարդությունն անհնար է, կամ գործ ունենք բացահայտ բառապատճենումների հետ, կաղապարը կարող է լինել SjSa, SSa (երևակայեմ, կատարածնիմ, ոտնառեմ, փոխանցեմ), ajSa (բաղադրեմ, տարաբարձեմ, բացածնեմ, պարատեսեմ) կամ aSa (առանցեմ, առարկեմ, ստորիջեմ, ստորանկիմ, ներարկիմ): Փակագծերի բացակայությունը կաղապարում նշանակում է բաղադրիչների միաժամանակյա կցում:

4. Սուկածանցները բառակազմական կաղապարներում առանձին չեն արտացոլվում, քանի որ այդ մասնիկները ձևակազմական-քերականական են և ոչ բառակազմական, սերտորեն առնչվում են արմատին և քերականորեն ձևավորում ամբողջ բառակազմական հիմքը, որն այդ ձև-

վավորմամբ մասնակցում է բառակազմական այլ քայլերի (զգենում-լուսազգենում, թռչիմ-վերաթռչիմ, իջանեմ-վայրիջանեմ, անցանեմ-առանցանեմ, բառնամ-պարաբառնամ, բացաբառնամ, շարաբառնամ, ճամաբառնամ, ինչպես նաև՝ բարձրաթռիչ տիպի հազվադեպ կազմություններում)։ Պարզ բայական հիմքերից տարբերակելու համար սոսկածանցավոր հիմքերն ստանում են քերականական ձևավորման f ցուցիչը. ըստ այդմ կաղապարը կունենա $S^{f}a$ տեսքը՝ երկնչիմ, բռանիմ, իջանիմ, խրտչիմ, ճանաչեմ և այլն.

5. Պատճառական ածանցները նույնպես, որպես զուտ ձևակազմական մասնիկներ կաղապարներում չեն առանձնացվում (մանավանդ որ հաճախ կցվում են ոչ թե «մաքուր» ելակետային արմատին, այլ հերթագայվում են հիմքակազմ այլ մասնիկների՝ սոսկածանցների հետ։ Պատճառական բայերի հիմքը նույնպես նշվում է քերականական ձևավորման ցուցիչով՝ $S^{f}a$—կորուսանել, մատուցանել, $(SS)^{f}a$—աստանդեցուցանել, $[(SS)jS]^{f}a$—կայծակնաճաճանչեցուցանել և այլն։

Կարելի էր, անշուշտ, պատճառական բայերը որպես քերականական բառաձևեր չընդգրկել բայական բառակազմության քննության մեջ (ինչպես այդ արվում է դերբայական ձևերի նկատմամբ), սակայն, քանի որ՝ ա) պատճառական ձևերի սերող հիմք հանդիսացող բայերը միշտ չէ, որ վկայված են, կամ անհնար է դրանք վերականգնել (արտացուցանեմ, զեկուցանեմ), բ) պատճառական ածանցների կցման ժամանակ տեղի են ունենում սերող հիմքերի ձևավորման որոշ փոփոխություններ (վերադառնամ-վերադարձուցանեմ, արբենամ-արբուցանեմ), կամ առաջանում են հնչյունական զգալի տարբերություններ (մուծանեմ, ելուզանեմ, խափուցանեմ, կորուսանեմ, թաքուցանեմ, փլուզանեմ), գ) պատճառական բայերի երկրորդային սերող հիմքերի մեջ հանդիպում են այնպիսի կառույցներ, որոնք այլուր չեն վկայված (քաջողջեցուցանեմ, նախաճանապարհորդեցուցանեմ) և դ) որոշ դեպքերում նկատվում է իմաստային խզում նախատիպ բայի և պատճառականի միջև (կառչիմ-կառուցանեմ), ապա պատճառական բայերը ձեռք են բերել ինքնուրույն բառային միավորների արժեք, արձանագրվել բառարաններում և համապատասխանաբար տեղ գտել նաև մեր ընտրանքում։

6. Կերպային ածանցները (սաստկական, բազմապատկական և այլն), որոնք գրաբարում այնքան էլ շատ չեն, հավասարեցվում են մյուս տիպի ածանցներին և ներկայացվում $(Sa)a$ կաղապարի հետ՝ բեկտեմ, խածատեմ, խանձատեմ, խոբոտեմ, խոցոտեմ, խտղոտեմ, ծակոտեմ, կցատեմ, ձգտեմ, փետտեմ և այլն։



7. -Անալ բայածանցը դիտվում է որպես բաղադրյալ ածանց, և նրանով ստեղծված կազմությունները նշվում են $S(a+a)$ կաղապարով (երկրորդային սերող հիմքերի դեպքում S-ը կարող է ունենալ և այլ արտահայտություններ, ինչպես՝ $[a(S\underline{a})](a+a)$—աներևութանալ, $(S\underline{a})(a+a)$ աղտեղանալ, $(SjS)(a+a)$—ողջախոհանալ, $(\underline{S}\underline{S})(a+a)$—այլայլանալ, $[S(aS)](a+a)$ քաջառողջանալ և այլն։

Նախքան բայակազմական կաղապարների թվարկումը նշենք, որ բայակերտ ածանց-վերջավորությանը նախորդող մասը (այլ կերպ ասած բայերի սերող հիմքը) կառուցվածքային տեսակետից որևէ սահմանափակություն չունի։ Այն կարող է լինել ինչպես պարզ, այնպես էլ բաղադրյալ, ընդ որում ունենալ բարդ և ածանցավոր բառերի բազմազան կաղապարները։ Այս տիպի սերող հիմքերի դեպքում բաղադրությունների բոլոր տարատեսակությունները հանգում են բայակազմական երկու հիմնակաղապարի՝ $Sa$—հիմք+պարզ (ել/ալ/ուլ) բայակերտ ածանց-վերջավորություն և $S(a+a)$ հիմք+բաղադրյալ (անալ) բայակերտ ածանց-վերջավորություն։ Սակայն, ինչպես նշվել է, նոր բայերի կերտման համար սերող հիմք կարող են դառնալ նաև արդեն քերականորեն ձևավորված, «պատրաստի» բայերը։ Այս դեպքում կունենանք $a(Sa)$ հիմնակաղապարը՝ նախածանցավորների և $Sj(Sa)$, $S(Sa)$ հիմնակաղապարները՝ բարդությունների համար։ Նշենք, ի դեպ, որ մեր ընդունած սկզբունքի համաձայն վերջին դեպքերը պետք էր քննել բառաբարդման կաղապարների հետ, քանի որ բառակազմական վերջին քայլը երկու հիմքերի կցումն է, սակայն բայակազմության առանձնահատկությունները միասնաբար ներկայացնելու նպատակով այստեղ շեղվում ենք այդ սկզբունքից։

1. $Sa$—բուն բայական արմատներով կազմությունները, ինչպես ասվել է, բազմաթիվ չեն և հիմնականում ժառանգված են լեզվի զարգացման նախորդ փուլերից՝ ամամ, արածեմ, բախեմ, բերեմ, գամ, գնամ, գոմ, գովեմ, դեգերեմ, երևիմ, լամ, խաղամ, կամ, կեամ, հեղում, շարժեմ և այլն։ Անհամեմատ ավելի շատ են ոչ բայարմատներից կազմված պարզ բայերը՝ ամփոփեմ, անագանիմ, անջատեմ, անջրպետեմ, անօսրիմ, աշակերտեմ, աշտանակեմ, բանակիմ, բոլորեմ, գալարեմ, դալարեմ, դատարկեմ, դատեմ և այլն։

1ա. $\underline{S}a$—այստեղ ևս բայարմատները համեմատաբար սակավաթիվ են՝ բղխեմ, բրդեմ, գիտեմ, դլամ, դնեմ, խցեմ, կրեմ, հծծեմ, ցրտիմ, սուրամ, վրիպեմ և այլն. անվանական արմատներով՝ աղմկեմ, անձկամ, առաքինիմ, ապարիսեմ, արբանեկեմ, բժշկեմ, գթամ, գնեմ, գրեմ, գրկեմ, խրախուսեմ, ծածկեմ, կնքեմ, կշռեմ և այլն։

1բ. S'a—քերականական ձևավորում ունեցող սերող հիմքերը հանդես են գալիս մի քանի տարատեսակություններով։ Ամենասակավաթիվ խումբը կազմում են ուղղականից տարբեր հոլովաձև ունեցող գոյականները՝ ականեմ, անուանեմ, արտասուեմ, կողմանիմ, սերմանեմ, այնուհետև, այս ենթակաղապարին է հատկացվում սոսկածանցավորների բավական ստվար խումբը, քանի որ, ինչպես նշվել է, սոսկածանցները բառակազմական արժեք չունեն, այլ միայն ձևակազմական-քերականական. օրինակ՝ այտնում, անիծանեմ, անկանեմ, անցանեմ, առնեմ, առնում, արբենամ, բառնամ, բեկանեմ, դառնամ, ելանեմ, երկնչիմ, զատչիմ, թռչիմ և այլն։ Ավելի մեծ խումբ են կազմում պատճառական բայերը իրենց կազմության (պատճառական ածանցների) տարբերակային ձևերով՝ ագուցանեմ, ապատեցուցանեմ, ահացուցանեմ, արբուցանեմ և այլն։

1գ. S̲'a—հնչյունափոխված արմատներով սոսկածանցավոր և պատճառական բայեր՝ թռանիմ, թքանեմ, իջանեմ, լիզանեմ, լնում, լուծանեմ, լուցանեմ, լքանեմ, անուշացուցանեմ, ապշեցուցանեմ, բարեցուցանեմ, բթացուցանեմ, բրտացուցանեմ, ելուզանեմ, կորուսանեմ, փլուզանեմ և այլն։

2. (Sa)a—վերջածանցավոր սերող հիմքերով բայեր։ Այստեղ կարելի է առանձնացնել կերպածանցներ ունեցող բայերի մի փոքրիկ խումբ՝ հետևյալ ածանցներով՝ **ատ-** լափատեմ, խածատեմ, խանձատեմ, կցատեմ, ճառատեմ, **-ոտ**—խանձոտեմ, խոթոտեմ, խոցոտեմ, խտղոտեմ, ծակոտեմ, փողոտեմ, **տ-**բեկտեմ, ձգտեմ, փետտեմ, քակտեմ, նողկտամ, **կ-** խեթկեմ, ղօղկիմ, **լ-** շարժլեմ, **չ-** կարկտչեմ։

Մյուս ածանցները հիմնականում ածականակերտ և գոյականակերտ են։ Սրանց մեջ առանձնահատուկ տեղ է գրավում **-աւոր** ածանցը, նախ՝ գործառական անհամեմատ ավելի մեծ բեռնվածությամբ, ապա՝ իր դերով **անալ** բաղադրյալ ածանցին մոտենալու միտումով, թեև ուսումնասիրվող շրջանում դեռևս ձեռք չի բերել բայակերտման այնպիսի ինքնուրույն գործառություն, ինչպիսին ունի ժամանակակից փուլում **-աւորել** ածանցը, որը կարող է բայեր կազմել անմիջապես գոյականներից, շրջանցելով **-աւոր** ածանցով ածականների կերտման բառակազմական քայլը (օր. պահեստավորել)։ Մինչդեռ գրաբարում բայ կազմելու համար դեռևս պետք է անպայմանորեն գոյություն ունենան **-աւոր**-ով ածականական սերող հիմքեր, ինչպես՝ **ամուսնաւոր+եմ, անձնաւոր+եմ, առակաւոր+եմ, արդիւնաւոր+եմ, արուեստաւոր+եմ, աւետաւոր+եմ, բեռնաւոր+եմ, բնաւոր+եմ, բռնաւոր+եմ, թագաւոր+եմ, կեղծաւոր+եմ, շնչաւոր+եմ** և այլն։



Մյուս ածանցներից յուրաքանչյուրով վկայված են սակավաթիվ օրինակներ (եզակի դեպքերից մինչև մեկուկես տասնյակի հասնող)։ Ստորև բերում ենք այդ օրինակները, հնչյունափոխական ենթակաղապարները նշելով յուրաքանչյուր ածանցի տակ.

**-ագար** խելագարիմ, 2ա. (S̲a)a լեզուագարիմ

**-ագին** 2բ. (Sa)a զայրագնիմ, կաթոգնիմ, չարագնիմ, ցասագնիմ, 2գ. (S̲a)a մոլեգնիմ, վշտագնիմ

**-ազան** 2ա. (S̲a)a սրբազանեմ

**-ած** հատուածիմ

**-ակ** արձանակեմ, արուեստակեմ, երասանակեմ, խառնակեմ, համակեմ, համբարակեմ, ղուղակեմ, նպարակեմ, պահակեմ, փայլակեմ, 2ա. (S̲a)a կուտակեմ, կապուտակեմ, վրիժակեմ, օրինակեմ

**-ական**—բաւականեմ, սեպհականեմ, քերականեմ, օգնականեմ

**-ակար** 2ա. (S̲a)a օգտակարիմ

**-ակեր** խոհակերեմ

**-ան** բաժանեմ, կալանեմ, 2ա. (S̲a)a խցանեմ, վզանեմ

**-անակ** ժամանակեմ, փոխանակեմ, 2ա. (S̲a)a նշանակեմ, շրջանակեմ

**-անդակ** այլանդակեմ

**-անդի** 2բ. (Sa)a վտարանդեմ

**-անի** 2բ. (Sa̲)a արժանեմ

**-առոտ** համառոտեմ

**-աստ** նաւաստեմ

**-ատ** երկատեմ, խրամատեմ, կառափնատեմ, կարճատեմ, յօշատեմ, ցաւատեմ, 2ա. (S̲a)a գիշատեմ, գլխատեմ, թլփատեմ, կնատիմ, կըրճատեմ, պնչատեմ, ջլատեմ

**-ատակ** յիշատակեմ

**-ար** աստուածարեմ, զարդարեմ, յարդարեմ, մեծարեմ

**-արան** աւետարանեմ, կերպարանեմ, շտեմարանեմ, պատսպարանեմ

**-արէն** 2բ. (Sa)a փոխարինեմ

**-ացի(ցի)** 2բ. (Sa)a աքացեմ, տամացեմ, 2գ. (S̲a̲)a կցացեմ, 2դ. (S'a)a եղջերցեմ

**-աւ** 2ա. (S̲a)a բնաւեմ

**-աւէտ** շահաւէտեմ, 2ա. (S̲a)a ծաղկաւէտեմ, պտղաւէտեմ

-աւոր անձնաւորել, ախտաւորել, բեռնաւորել, դաշնաւորել, երաշխաւորել, ճահաւորել, զօրաւորել, իրաւորել, կրօնաւորել, հնարաւորել, մասնաւորել և այլն, 2ա. (S̲a)a բնաւորել, բռնաւորել, գլխաւորել, գունաւորել, գրաւորել, դիտաւորել, լուսաւորել և այլն, 2գ. (S̲a)a ալեւորիմ, զօտեւորիմ

-եղի 2բ. (Sa)a աղտեղել

-(ե)րորդ երկրորդել, եօթներորդել, հինգերորդել

-եք բարեքել

-թար վատթարել

-կին 2բ. (Sa)a երեքկնել, կրկնել, հինգկնել, չորեքկնել

-նի 2բ. (Sa)a յայտնել

-ոգ նորոգել

-ող[1] խանձողել

-ող[2] աչողել/յաչողել

-ով 2ա. (S̲a)a վշտովիմ

-ոտ բորոտել, ժանգոտել, ճենճերոտիմ, մեցոտիմ, վեհերոտիմ, փոշոտիմ, քսոտիմ, 2ա. (S̲a)a ծխոտիմ, մրճոտիմ, մրոտիմ

-ոտի 2գ. (S̲a)a չքոտիմ, սնոտիմ

-որ այգորել

-որդ հաղորդել, ժառանգորդել, հանապազորդել, հասարակորդել, ճանապարհորդել, յաջորդել, ցանկորդել, 2ա. (S̲a)a կցորդել, 2գ. (S$^f$a)a տասանորդել

-ոց ածանցոցել, եղոցել, իրոցել, լինոցել, չափոցել, 2ա. (S̲a)a գտոցիմ, խտրոցել

-ուկ 2ա. (S̲a)a յատկել

-ումն 2բ. (Sa)a երդմնիմ

-ուոր գինուորիմ

-շակ ընկերշակել

-պան պահպանել, պաշտպանել

2ե. (Sa)$^f$a, 2գ. (Sa)$^f$a, 2է. (Sa)$^f$a, 2բ. (S̲a)$^f$a վերջածանցավոր սերող հիմքերով պատճառական բայերը վկայված են հետևյալ ածանցներով.

-ագին գայրագնացուցանել

-գին ուժգնացուցանել

-ակ կուտակեցուցանել, տեսակացուցանել, տեղեկացուցանել, փայլակեցուցանել



-անի արժանացուցանել, կենդանացուցանել, հովանացուցանել/հովանեցուցանել, պիտանացուցանել

-ապատիկ բազմապատկացուցանել/բազմապատկեցուցանել

-արիմ հաւատարմացուցանել

-աւ իրաւացուցանել, սակաւացուցանել

-աւոր բնաւորեցուցանել, թագաւորեցուցանել, մերձաւորեցուցանել, պարտաւորեցուցանել, փառաւորեցուցանել

-ար զարդարեցուցանել

-եղ շքեղացուցանել

-եղի աղտեղացուցանել

-ենի վայրենացուցանել

-եցիկ գեղեցկացուցանել

-ի սքանչելացուցանել

-իկ սաստկացուցանել, փոքրկացուցանել

-ին մեկնեցուցանել

-ող կարողացուցանել

-ոտ բորոտեցուցանել

-որդ հաղորդեցուցանել

-ուչ վայելչացուցանել

-ստ զգաստացուցանել, իմաստացուցանել

-օթ ծանօթացուցանել

-օն զգօնացուցանել

3. [(Sa)a]a երկու վերջածանցով սերող հիմքերը անհամեմատ սակավաթիվ են։ Այստեղ ևս ամենահաճախականն է եզրային -աւոր ածանցը։ Հիմքերը խմբավորում ենք ըստ վերջին ածանցի։

-ակ

-ուն+-ակ 3ա. [(S̲a)a]a խոտորնակել

-ստ+-ակ իմաստակել

-աւոր

-այն+-աւոր միայնաւորել

-անի+-աւոր 3ա. [(S̲a)a]a—արժանաւորել, հովանաւորել

-իւն+-աւոր արդիւնաւորել

-ստ+-աւոր զգեստաւորել

-ացի

-ան+-ացի 3գ. [(S̲a)a̲]a նշանացել

-ոտ

ագին+-ոտ 3ա. [(S̲a)a]a ցաւագնոտել, 3բ. [(S̲a)a]a մոլեգնոտել

-ին+-ոտ 3բ. [(S̲a)a]a լուսնոտիմ
-որդ
-ան+-որդ փոխանորդեմ
-ին+-որդ 3ա. [(Sa̲)a]a առաջնորդեմ, 3բ. [(S̲a)a]ā միջնորդեմ
-անի+-ւոր 3գ. [(Sa)a]$^{f}$a արժանաւորեցուցանեմ
4. {[(Sa)a]a}a երեք վերջածանց ունեցող սերող հիմքով վկայված է միայն մշտնջենաւորել բայը։
5. (aS)a նախածանցավոր սերող հիմքերով բայերի մեջ անվերապահորեն այս կաղապարին կարող ենք վերագրել ան-, ապ-, դժ- (տժ- տարբերակով) և տ- ժխտական նախածանցներով կազմությունները, քանի որ բայերը կազմվում են այդ նախածանցներով ձևավորված արդեն գոյություն ունեցող ածականներից, ընդ որում մեծ մասամբ որպես արդյունք ստացվում են ներգործական և կրավորակերպ չեզոք (ե, ի լծորդությունների) բայեր։
ան- անամօթիմ, անառակեմ, անարգեմ, անզարդեմ, անզաւակեմ, անժառանգեմ, անխնամեմ, անհամիմ, անհատեմ, անհաւանիմ, անհաւատամ/անհաւատիմ, անհետիմ, անհնազանդիմ, անճառեմ, անմարդիմ, անսաստիմ, 5ա. (aS̲)a անգիտիմ, անժուժիմ, անճիտեմ, անմտիմ, անշըքիմ, անպատուեմ, անօրինեմ, 5բ. (aS)$^{f}$a անզգամիմ, անզգայիմ, ամ տարբերակով՝ 5ա. (aS̲)a ամբարշտեմ
ապ- ապարասանեմ
դժ- (տժ-) դժգոհիմ, 5ա. (aS)ā տժգունեմ, տժգնեմ
տ- տգունիմ
5դ. (aS)$^{f}$a, 5ե. (aS̲)$^{f}$a, 5զ. (aS$^{f}$)$^{f}$a. ժխտական նախածանցով սերող հիմքերով պատճառական բայերից վկայված են հետևյալ օրինակները.
ան- անապատացուցանեմ, անզգամեցուցանեմ, անմահացուցանեմ, անյայտացուցանեմ, անշքացուցանեմ, անպատեհացուցանեմ
տ- տկարացուցանեմ
Ոչ ժխտական նախածանցների դեպքում կաղապարի որոշումը կապված է որոշ պայմանականության հետ, քանի որ նախ, ինչպես նշվել է, նախածանցավոր բայերի մեծամասնությունը ստեղծված է հունաբան դպրոցի կողմից՝ հունարեն տերմինների պատճենման միջոցով, և այս դեպքում բառի բառակազմական պատմություն բուն իմաստով չկա, բայն ստեղծվում է բառակազմական մեկ քայլի ընթացքում։ Բացի այդ, կարող է վկայված լինել ինչպես նախածանցավոր սերող հիմքը, որին կցվում է բայակերտ ածանց, այնպես էլ առանձին բայը, որին կցվում է նախածանց։ Մեր օրինակների ճնշող մեծամասնությունը պատկանում է



հենց այս վերջին կաղապարին, ընդ որում, ունենք թե՛ ուսումնասիրվող շրջանում ստեղծված նորակազմություններ, թե՛ հնագույն ժամանակաշրջաններից ժառանգված բաղադրություններ, որտեղ նախածանցի դերում հիմնականում հանդես են գալիս նախդիրները, որոնց բառակազմական գործառույթը երբեմն մթագնած է՝ զ-ականեմ, զ-անցանեմ, զ-առաջեմ, զ-գետնիմ, զ-գլխեմ, զ-գնամ, զ-գտանեմ, ընդ-անեմ, ընդ-առաջեմ, ըմ- տարբերակով՝ ըմբերանեմ, ըմբռնեմ, ըմպանկեմ, ըն- տարբերակով՝ ընխոքեմ, ընկալեմ, ընկղմնեմ և այլն։ Այսպիսով, մյուս նախածանցներով 5. (aS)a և 6. (ajS)a կաղապարներից վկայված են հետևյալ սակավաթիվ օրինակները.
անդր- 6բ. (ajS$^{f}$)a—անդրադարձիմ
առ- 5. (aS)a—առաւելեմ/առաւելում, 5գ. (aS̲$^{f}$)ā առանձնեմ, 5գ. (aS$^{f}$)$^{f}$a առկայացուցանեմ
6. (ajS)a
արտ(ա)—արտասահմանեմ
բաղ(ա)—բաղաղանեմ, բաղաձայնիմ
գեր(ա)—գերազանցեմ
ներ(ա)—ներթակայիմ
ընդ—5գ. (aS$^{f}$)a ընդարձակեցուցանեմ, ընդողնեցուցանեմ
հակ(ա)—հակադարձեմ
յար(ա) 6. (ajS̲)a յարակցիմ, 6բ. (ajS$^{f}$)a յարակայեմ
նախ(ա)—նախաբանեմ
պար(ա)—պարունակեմ, 6բ. (ajS$^{f}$)a—պարագայիմ
ստոր(ա)—6բ. (ajS$^{f}$)a—ստորակայիմ
տար(ա)—տարաժամեմ, 6ա. (ajS̲)a—տարակուսեմ, տարագրեմ,
5. (aS)a—տարբերեմ
տրամ(ա)—տրամաբանեմ
7. [a(Sa)]a «նախածանցավերջածանցավոր» սերող հիմքով բայեր.
ան-...-ակ անազդակիմ, անպահակիմ
ան-...-ական անօգնականիմ
ան-...-ու անիրաւեմ
ան-...-ույթ 7ա. [a(Sa)]a—աներևութիմ
յ-...-ատ յառաջատեմ
7բ. [a(Sa)]$^{f}$a
ան-...-անի անպիտանացուցանեմ
ան-...-ույթ աներևութացուցանեմ

8. [aj(Sa)]a

նախ(ա)-...-ակ նախատեսակիմ

պար(ա)-...-ակ 8բ. [aj($\underline{S}$a)]a պարապտուտկիմ

արտ(ա)-...-աւոր 8ա. [aj($\underline{S}$a)]a արտատպաւորեմ

հոմ(ա)-...-աւոր հոմապարաւորեմ

նախ(ա)-...-աւոր 8ա. [aj($\underline{S}$a)]a նախաբանաւորեմ, նախատպաւորեմ

տրամ(ա)-...աւոր 8ա. [aj($\underline{S}$a)]a տրամատպաւորեմ

նախ(ա)-...-որդ 8գ. [aj(Sa)]$^{r}$a—նախաճանապարհորդեցուցանեմ

9. a(Sa)—Նախածանցավոր բայերի սովոր խումբն է, որտեղ նախածանցը կցվում է բայական բառույթին, այլ կերպ ասած, որպես սերող հիմք հանդես է գալիս արդեն «պատրաստի» բայը։ Այս կաղապարով ժխտական նախածանցները նոր բայեր չեն կազմում, եթե նկատի չունենանք ժխտական չ մասնիկը, որն այստեղ ավելի շատ քերականական արժեք ունի, ձևավորում է ժխտական խոնարհումը և կարող է կցվել բոլոր բայերին և հարացույցի բոլոր ձևերին։ Բառակազմական արժեք ունի թերևս միայն չաւատամ բայի մեջ, որտեղ գրեթե սերտաճել է արմատին (հմմտ. նաև չաւատալի)՝ սերող հիմքի հատման (ճ-ի անկման) պատճառով։ Հետևաբար, այս կաղապարում գործառական բեռնվածությունն ամբողջապես ընկնում է նախդիր-նախածանցների և հունաբան դպրոցի կողմից ստեղծված ածանցակերպների վրա։ Ածանցավոր կազմությունները վկայված են բազմազան ենթակաղապարներով. նկատի ունենք ածանցների հոդակապով և անհոդակապ միացումները՝ 9. a(Sa), 10. aj(Sa), բաղադրիչների միաժամանակյա կցումը, այսինքն՝ հունարեն տերմինների պատճենումներով ստեղծված ձևերը՝ 11. aSa, 12. ajSa, ինչպես նաև երկու նախածանց կամ երկու վերջածանց ունեցող սակավաթիվ կազմությունները՝ 13. [a(aS)]a, 14. a[(Sa)a]։ Շարադրանքը չծանրաբեռնելու նպատակով նախդիրները առանձին-առանձին բերվում են միայն 9. և 10. կաղապարների տակ։

9. a(Sa)

ապ- ապատեմ

առ- առածեմ, առասեմ, առբերեմ, առդատեմ, առընկենում, առլինիմ, առլնում, առխեթեմ, առկամ, առկայծեմ, առնմանեմ, առվկայեմ, առտանեմ, առփոխեմ

արտ- արտասեմ, արտոգեմ, արտորոշեմ

բաղ- բաղդատեմ



բաց- բացասեմ, բացերևիմ, բացորոշեմ

ենթ- ենթածեմ

զ- զառածեմ, զգնամ, զգուշակեմ, զեղծեմ, զտեղեմ/զետեղեմ, զեռամ, զկծեմ, զչարիմ

ընդ- (ըն-, ըմ- հնչյունական տարբերակներով, որոնցով կազմված ձևերը նախագրաբարյան շրջանից եկող հնագույն կազմություններ են)— ընդաճեմ, ընդառաջեմ, ընդարձակեմ, ընդաւազեմ, ընդգոգեմ, ընդեղծանեմ, ընդերկարեմ, ընդխառնեմ, ընդձեռեմ, ընդոզնիմ, ընդոստիմ, ընդունեմ, ընդունիմ, հնչյունափոխված տարբերակներով՝ ըմբերանեմ, ըմբերեմ, ըմբռնեմ, ըմպահկեմ, ընխոթեմ, ընկողնիմ, ընձեռեմ

ըստ- (ստ-)—ըստանձնեմ/ստանձնեմ, ըստերիւրեմ/ստերիւրեմ, ըստգտանեմ/ստգտանեմ

հակ- հակորոշեմ

մակ- մակածեմ, մակասեմ

նախ- նախասեմ, նախըմպեմ

ներ- ներածեմ, ներգոմ, ներգործեմ, ներկամ

շաղ- շաղկապեմ

շար- շարասեմ, շարունակեմ

պար- պարպատիմ, պարփակեմ

ստոր- ստորասեմ, ստորոգեմ

վեր- վերածեմ, վերառաքեմ, վերբերեմ, վերընծայեմ

տար- տարանջատեմ, տարորոշեմ

տրամ- տրամորոշեմ

9ա. a($\underline{S}$a)

առ- առգետնեմ, առխթեմ

զ- զգետնեմ, զգլխեմ

ընդ- ընդգրկեմ, ընդմիջեմ, ընդվզեմ, ընկապճիմ, ընկրկեմ

ներ- ներկրեմ

վեր- վերօրինեմ

9բ. a($S^{r}$a)

առ- առականեմ (անվանական սկզբնահիմքով), առանցանեմ, առեղծանեմ, առլնում

զ- զականեմ (անվանական սկզբնահիմքով), զանցանեմ, զելանեմ

ընդ- ընկողմանիմ (անվանական սկզբնահիմքով), ընդելանեմ, ընդելնում, ընդհարկանեմ, ընդոստնում/ընդոստչիմ, ընկալեմ

ըստ- ըստիմանիմ

**յար-** *յարանում, յարարկանեմ*
**ստոր-** *ստորարկանեմ*
**վեր-** *վերընթանամ, վերամբառնամ*

*9գ.* a(S̲ᶠa)

**առ-** *առիջանեմ, առմտանեմ, առմատուցանեմ*
**գ-** *զգտանեմ*
**ընդ-** *ընդելուզանեմ, ընդմտանեմ*
**ստոր-** *ստորիջուցանեմ*
**վեր-** *վերլուծանեմ*

*10.* aj(Sa)

**անդր(ա)-** *անդրաքայլեմ*
**ապ(ա)-** *ապագնամ, ապագովեմ*
**արտ(ա)-** *արտաբերեմ, արտադատեմ, արտակամ, արտակերտեմ, արտահալածեմ/արտալածեմ, արտահանեմ, արտաճառեմ, արտայայտեմ, արտատրոհեմ, արտափայլեմ, արտաքաղեմ*
**բաց(ա)-** *բացագործեմ, բացալինիմ, բացախայտամ, բացածագեմ, բացակամ, բացակատարեմ, բացակոչեմ, բացահայեմ, բացամերժեմ, բացայայտեմ, բացատարածեմ, բացափայլեմ, բացաքարոզեմ*
**ենթ(ա)-** *ենթամնամ*
**հակ(ա)-** *հակաճառեմ, հակասահմանեմ*
**համ(ա)-** *համաբանեմ, համակամիմ, համահավաքեմ, համաձայնիմ*
**մակ(ա)-** *մակագանչեմ, մակալինիմ, մակակամ*
**յար(ա)-** *յարագոմ, յարաձայնեմ, յարամնամ, յարաչափեմ, յարատևեմ, յարափակեմ, յարաքարշեմ*
**նախ(ա)-** *նախագամ, նախագործեմ, նախադասեմ, նախադատեմ, նախադնեմ, նախատեղում, նախաժամանեմ, նախախնամեմ, նախակարգեմ, նախահաւեմ, նախահոգամ, նախաձայնեմ, նախաճառեմ, նախապատրաստեմ, նախասահմանեմ, նախավարձեմ, նախավկայեմ*
**ներ(ա)-** *ներանիւթեմ*
**շաղ(ա)-** *շաղապատեմ*
**շար(ա)-** *շարաբանեմ, շարաբառնամ, շարաբերեմ, շարադասեմ, շարախառնեմ, շարակարգեմ, շարամանեմ, շարամերձեմ, շարայարեմ*
**պար(ա)-** *պարագօտիմ, պարագարդեմ, պարայածիմ, պարապատիմ, պարասահմանեմ*
**ստոր(ա)-** *ստորաբերեմ, ստորադասեմ*



**վեր(ա)-** *վերաբերեմ, վերագամ, վերաթևեմ, վերախառնեմ, վերակամ, վերակոչեմ, վերահռչակեմ, վերաձայնեմ, վերաձգտիմ, վերանայիմ, վերաստեղծեմ, վերափայլեմ, վերափոխեմ*
**տար(ա)-** *տարաբերեմ, տարադատեմ, տարալսեմ, տարաձայնեմ, տարասահմանեմ, տարափոխեմ*
**տրամ(ա)-** *տրամախոհիմ*

*10ա.* aj(S̲a)

**ապ(ա)-** *ապախուրեմ, ապավիժեմ*
**արտ(ա)-** *արտածաղկիմ, արտամիտեմ*
**բաց(ա)-** *բացաթուեմ*
**ենթ(ա)-** *ենթագրեմ*
**հակ(ա)-** *հակամիտեմ*
**համ(ա)-** *համագրեմ, համախմբեմ, համաչուեմ*
**մակ(ա)-** *մակագրեմ*
**յար(ա)-** *յարակցեմ, յարաձգեմ*
**նախ(ա)-** *նախագիտեմ, նախագրեմ, նախադիպիմ, նախաթուեմ, նախակրթեմ, նախապատուեմ, նախատիրեմ, նախատպեմ*
**ներ(ա)-** *ներագրեմ, ներակրթեմ*
**շար(ա)-** *շարագրեմ, շարալծեմ, շարակցեմ, շարաձգեմ*
**պար(ա)-** *պարագրեմ, պարադիպիմ, պարադիտեմ, պարածածկեմ, պարապնդեմ*
**ստոր(ա)-** *ստորագրեմ, ստորակտրեմ*
**վեր(ա)-** *վերագրեմ, վերադիտեմ, վերահնչեմ, վերաձգեմ, վերաշնչեմ*

*10բ.* aj(Sᶠa)

**բաց(ա)-** *բացաբառնամ*
**հակ(ա)-** *հակադառնամ*
**համ(ա)-** *համաբառնամ*
**նախ(ա)-** *նախագոյացուցանեմ, նախածանուցանեմ*
**պար(ա)-** *պարաբառնամ, պարալնում*
**վեր(ա)-** *վերաթռչիմ, վերազգենում, վերադարձուցանեմ*
**տար(ա)-** *տարափախչիմ*

*10գ.* aj(S̲ᶠa)

**արտ(ա)-** *արտածաղկեցուցանեմ*
**վեր(ա)-** *վերաբուսանիմ*

11. aSa ապուսեմ/ապուռեմ, առանցեմ, առարկեմ, ենթարկեմ, պա-րառեմ, ստորանկիմ, վերարկեմ, վերծանեմ, վերտառեմ, տրամատեմ

11ա. a$\underline{S}$a ստորիջեմ

11բ. aSaa ապաստոցեմ, արտասանեմ, բաղարկոցեմ, բացասոցեմ, բացերևոցեմ, յարառոցեմ

12. ajSa արտաբանեմ, պարատեսեմ

12ա. aj$\underline{S}$a առատպեմ, բացածնեմ, բացատուեմ, ենթասնեմ, նե-րամտեմ

12բ. aj$S^{f}$a բացագայիմ, ենթակայացուցանեմ, հակադարձեմ, հակա-կայիմ, յարակայիմ, վերագայիմ, տարաբարձիմ, տրամակայիմ

12գ. aj$\underline{S}^{f}$a առադրեմ, արտադրեմ, բաղադրեմ, բացատրեմ, են-թադրեմ/ընթադրեմ, հակատրեմ, յարադրեմ, շարադրեմ, ստորադրեմ, վե-րադրեմ, վերատրեմ, տրամադրեմ

13. a[a(Sa)] երկու նախածանց ունեցող բայեր, ընդ որում, ձախ-եզրային նախածանցը մեծ մասամբ կցվում է արդեն նախածանց ունե-ցող բային, որը հանդես է գալիս որպես սերող հիմք: Այս կազմություն-ները սակավաթիվ են՝ առընդունեմ, առընկալնում, առիկողիմ, առստորո-գեմ, առաարորոշեմ, նախընձեռեմ, 13ա. aj[a(Sa)] հակաստորոգեմ, հա-կատրամատեմ, 13բ. aj[aj($S^{f}$a] հակատարաբանեմ

14. a[(Sa)a] նախածանցը կցվում է վերջածանցով ձևավորված սե-րող հիմքին՝ առնշանակեմ, 14ա. aj[(Sa)a] հակաբաժանեմ, ստորաբա-ժանեմ

15. aj[$\underline{S}$(Sa)] նախածանցը կցվում է անհոդակապ բարդ հիմքին՝ մալամտածեմ:

Զգալի թիվ են կազմում բարդ սերող հիմք ունեցող կազմությունները իրենց բազմազան տարատեսակություններով: Հատկապես մեծ թվով բա-ղադրություններ են վկայված երկարմատ հոդակապավոր բարդություն-ներով, որոնք հիմնականում ածականներ են, որոշ չափով նաև գոյական-ներ: Մեր ընտրանքում վկայված նյութը կարելի է բաշխել ըստ հետևյալ ենթակաղապարների.

16. (SjS)a այլաբանեմ, առատագործեմ, կամակորեմ, ճարտարապե-տեմ, մանրահետեմ, նաւապետեմ, ողջախոհեմ, քաղաքավարեմ և այլն

16ա. ($\underline{S}$jS)a բազմաբանեմ, բազմասերեմ, բնախօսեմ, բռնազբօսեմ, գլխածանրեմ, գրկախառնիմ, դիմագրաւեմ, զուգախառնեմ, ընչաթափեմ, լեզուահատիմ, լերդաբեկեմ, պաճուճաբանեմ և այլն



16բ. (Sj$\underline{S}$)a ախտակցեմ, ախտասիրեմ, առողջամտեմ, արձանագրեմ, արմատախլեմ, կաթնաբուծեմ, հարցաքննեմ, ճակատագրեմ, շեղջակու-տեմ և այլն

16գ. ($\underline{S}$jS)a գծագրեմ, գետնախշտիմ, դեղնագունիմ, դիմակցեմ, զուգագրեմ, ընչասիրեմ, լծակցիմ, մատենագրեմ, պատուասիրեմ, պըն-դասրտեմ, վրիպագրեմ և այլն

16դ. ($S^{f}$jS)a սերող հիմքի առաջին անվանական բաղադրիչով՝ անուանափոխեմ, անուանագործեմ, անուանակոչեմ, անուանակցեմ, տեառնագրեմ, կենսածնեմ

16ե. ($S^{f}$j$\underline{S}$)a բայական բաղադրիչով՝ ընթերցասիրեմ

16զ. (Sj$S^{f}$)a միայն բայական երկրորդ բաղադրիչով՝ ահաբեկեմ, ամօթահարիմ, երևակայեմ, գահակալիմ, ընծայատարեմ, խնամակալեմ, կարթահարեմ, յեղադարձեմ/յաղադարձեմ, քաջալերեմ

16է. ($\underline{S}$j$S^{f}$)a դիմադարձեմ, զուգադարձեմ, շրջագայիմ, շրջակայեմ

16ը. (Sj$\underline{S}^{f}$)a. այս ենթակաղապարի կազմությունները որպես սերող հիմքի երկրորդ բաղադրիչ ունեն միայն դիր և տուր հրամայականի ձևե-րը՝ ենթարկված համապատասխան հնչյունափոխության՝ ակլադրեմ, արօրադրեմ, պատճառադրեմ, ընծայատրեմ, թելադրեմ, ժամադրեմ, կարգադրեմ, հարկատրեմ, ձեռնադրեմ, մեղադրեմ, ուխտադրեմ, նահա-տակադրեմ, ուշադրեմ, պատասխանատրեմ, սահմանադրեմ, վանատրեմ, տեղադրեմ, փառատրեմ, փոխադրեմ, փոխատրեմ, քաջադրեմ, օրէնս-դրեմ. Թերևս այս ենթակաղապարին կարելի է վերագրել նաև ծնանեմ բայի ծն/ծին արմատով կազմված նորածնեմ ձևը

16թ. (Sj$\underline{S}^{f}$)a դիմադրեմ, օրինադրեմ

16ժ. ($S^{f}$j$S^{f}$)a ձերբակալեմ

16ժա. ($S^{f}$j$S^{f}$)a անուանդրեմ

16ժբ. ($\underline{S}$jS)a ալեկոծեմ, բարեբախտիմ, բարեբանեմ, բարեգործեմ, բարեխառնեմ, բարեխորհիմ, բարեխօսեմ, բարեկամեմ, բարեհամբաւեմ, գինեհարիմ, բարեպաշտեմ, իշխանիմ, ոսկեզարդեմ, գօտեմարտիմ, ոգե-խառնեմ

16ժգ. ($\underline{S}$j$\underline{S}$)a բարեկրիմ, բարեմտիմ, մեկուսեմ, որդեգրեմ, ուղեկ-ցիմ

16ժդ. ($\underline{S}$jS)a դասադասեմ, զանազանեմ

16ժե. $(\overline{Sj\underline{S}})$a կերակրեմ

16ժզ. $(\overline{S}p$S)a ափիբերանեմ, քարընդոտնեմ

16ժէ. ($S^{f}$c$S^{f}$)a առևանգեմ, երթևեկեմ

16ժը. (ScS)a սեթևեթեմ

Պատճառական բայերը վկայված են հետևյալ ենթակաղապարներով.

16ժթ. (SjS)$^{f}$a խելացնորիցուցանեմ, յաւէժամացուցանեմ, ողջախոհացուցանեմ, որովայնազգեցուցանեմ

16ի. (SjS)$^{f}$a բազմամարդացուցանեմ, մտաբերեցուցանեմ

16իա. (SjS)$^{f}$a խելամտացուցանեմ, միակուսեցուցանեմ

16իբ. (SjS$^{f}$)$^{f}$a քաջալերեցուցանեմ

16իգ. (SjS)$^{f}$a բարեկամեցուցանեմ

16իդ. (SjS)$^{f}$a զանազանացուցանեմ

Վկայված են մի շարք կազմություններ, որտեղ որպես սերող հիմք հանդես եկող բարդության բաղադրիչներից մեկը կամ երկուսը միասին իրենց հերթին ածանցավոր կազմություններ են։

17. [(aS)jS]a առաւելադիղում, առաւելագործեմ, յառաջաբանեմ, յառաջաբերեմ, յառաջադասեմ, յառաջախնամեմ, յառաջաձայնեմ

17ա. [(aS)jS]a ընդդիմաբանեմ, ընդդիմախօսեմ

17բ. [(aS)jS]a ընդերկարաձգեմ, յերկարաձգեմ, յառաջագրեմ, յառաջամտեմ, յառաջապատուեմ

17գ. [(aS)jS$^{f}$]a յառաջագայիմ, յառաջահատեմ

17դ. [(aS)jS$^{f}$]a յաւելադրեմ

17ե. [(aS)jS$^{f}$]a ընդդիմադարձիմ, ընդդիմակայիմ, ընդդիմահարիմ

17զ. [(aS)jS$^{f}$]a ընդդիմադրեմ

18. [(Sa)jS]a այլակաբանեմ, երասանակակոծեմ, տեսակագործեմ, փոխանակաբանեմ, իրաւագործեմ, բարոյախօսեմ, վայրապարաբանեմ, քերթողաբանեմ

18ա. [(Sa)jS]a սրբազանաբանեմ, պատուիրանապահեմ

18բ. [(Sa)jS]a ծիրանազարդեմ (ծիրանի+ա+զարդ), կենդանագործեմ (կենդանի+ա+գործ), կենդանախարուկեմ, կենդանակերպեմ, կենդանաստեղծեմ/կենդանաստեղծում, սքանչելագործեմ, կատարելաբերեմ, կատարելագործեմ

18գ. [(Sa)jS]a ծննդաբերեմ, ծննդագործեմ, սրբազնագործեմ

18դ. [(Sa)jS]a ժամանակագրեմ, ներսամտեմ, կերպարանակցիմ, ճանապարհորդակցիմ, իմաստասիրեմ, ներքսամտեմ

18ե. [(Sa)jS]a խորհրդակցեմ, կենդանաբուծեմ, կենդանագրեմ, կենդանատնկիմ, կրկնագրեմ, հովանագրեմ, վերնագրեմ

18զ. [(Sa)jS]a նշանագրեմ

18է. [(Sa)jS$^{f}$]a սրբազնատրեմ



18ը. [(S$^{f}$a)jS]a արարչագործեմ

18թ. [(Sa)jS$^{f}$)a կենդանածնեմ

18ժ. [(Sa)jS$^{f}$]a ներքսադրեմ

18ժա. [(Sa)jS]$^{f}$a խորհրդազգածեցուցանեմ

19. [Sj(Sa)]a աստուածազգեստեմ, հարսնազգեստեմ, պայծառազգեստեմ

19ա. [Sj(Sa)]a շքափայլատակեմ

19բ. [Sj(Sa)]a փոխաբնակիմ

19գ. [(SjS)a]a բարեգործականեմ

19դ. [a(SjS)]a անմիաբանեմ

19ե. [Sj(Sa)]$^{f}$a փոխաբնակեցուցանեմ

19զ. [(SjS)a]$^{f}$a մեկուսացուցանեմ

20ա. [(aS)j(Sa)]a ընդդիմաբաժանեմ

20բ. [(Sa)j(Sa)]a վերնաճանապարհորդեմ

Անհոդակապ բարդություններ ներկայացնող սերող հիմքերով վկայված են կազմություններ հետևյալ ենթակաղապարներով.

21. (SS)a ակնկորեմ, աստանդեմ, գիշերօթիմ, երկփեղկեմ, թևածեմ, ձեռնօժանդակեմ, նուագերգեմ և այլն

21ա. (SS)a զրպարտեմ, հրդեհեմ, ջրգողիմ, ջրթափեմ, սնդիեմ, վշտանգիմ

21բ. (SS)a երկգնդիմ, երկմտեմ, կարճմտիմ, ճարտարմտիմ

21գ. (SS)a ջրխմեմ, սրտմտիմ, տնօրինեմ

21դ. (SS$^{f}$)a ակնակալեմ/ակնկալնում, երկրայիմ, մատակարարեմ, չարարարեմ

21ե. (SS$^{f}$)a ժուժկալեմ, լրտեսեմ, կենարարեմ, սնանկիմ, տնտեսեմ

21զ. (SS$^{f}$)a բարերարեմ

Ինչպես արդեն նշվել է, (SS)a հիմնակաղապարով վկայված են զգալի թվով կրկնավոր բայեր, որոնք, ամենայն հավանականությամբ, ծագել են խոր անցյալում և ուսումնասիրվող շրջանում ևս պահպանել իրենց գործունությունը։ Հանդիպում են ինչպես նույնական, այնպես էլ զանազան կարգի հնչյունական փոփոխությունների ենթարկված արմատների կրկնություններ։

21է. (SS)a այլայլեմ, աղկաղկեմ, աղխաղխեմ, արծարծեմ/արծարծանեմ, բաղբաղեմ, բոհբոհեմ, գեղգեղեմ, խարխարեմ, խողխողեմ, կափկափեմ, կերկերիմ, կղկղեմ, կողկողիմ, հայթհայթեմ, հոսհոսիմ, յեղյե-

ղեմ/յեղյեղում, ողողեմ, սոտոսեմ, չարչարեմ, ջախջախեմ, վազվազեմ, վաղվաղեմ, փաղփաղեմ, փայփայեմ, փողփողեմ, քայքայեմ, բճբճեմ

21բ. (SS)a այս ենթակաղապարը ներկայացված է երկու տարբերակով. ա) երբ կրկնավոր բարդության բաղադրիչները, թեև երկուսն էլ միևնույն հնչյունական ձևավորումն ունեն, սակայն «մաքուր» արմատի համեմատությամբ ենթարկված են հնչյունափոխության, ինչպես՝ թռթռեմ (թիռ), թքթքեմ (թուք), խլխլեմ (խիլ), խուսխուսեմ (խույս), կցկցեմ (կից), ձգձգեմ (ձիգ), մռմռամ (մուռ), շրջշրջեմ (շուրջ), շփշփեմ (շուփ), փրփրամ/փրփրեմ (փուր՝ փրփուր) և բ) երբ կրկնվող բաղադրիչները միմյանցից հնչյունապես որոշ չափով տարբերվում են, ընդ որում, երբեմն միայն ստուգաբանական քննությամբ է հնարավոր պարզել, թե նրանցից որն է պահպանել նախնական ձևը, ինչպես՝ բաբախեմ, բարբառեմ, բողբոջեմ, դողդոջեմ, թօթափեմ, խծբծեմ, խողխողեմ, խտպտամ, կասկածեմ, կարկառեմ, կարկատեմ, կոչկոճեմ, հայհոյեմ, հափափեմ, հեծեծեմ, հոտոտեմ, ճղճմիմ, մարմաջեմ, մեղմիխեմ, մոթխոթեմ, մորմոքիմ, յանձանձեմ, յողդողդիմ, յորջորջեմ, շաղփաղփեմ, պաղպաջեմ, սարսռամ, տաղտապիմ, փոփոխեմ:

21թ. (S$^{f}$S$^{f}$)a բեկբեկեմ, դարձդարձեմ

21ժ. (S$^{f}$S$^{f}$)a բամբասեմ

21ժա. (SS)$^{f}$a աստանդեցուցանեմ, քաջողջեցուցանեմ

21ժբ. (SS)$^{f}$a ջրգողեցուցանեմ, սրարբեցուցանեմ, տնանկացուցանեմ

21ժգ. (SS)$^{f}$a կողկողեցուցանեմ

21ժդ. (SS)$^{f}$a կսկծացուցանեմ/կսկծեցուցանեմ, սարսռեցուցանեմ

(SS)a հիմնակաղապարով ևս հանդիպում են դեպքեր, որտեղ բարդության բաղադրիչներից մեկը կամ երկուսը միասին իրենց հերթին ածանցավոր կազմություններ են, այսպես՝

22. [(Sa)S]a խորհրդածեմ

22ա. [(Sa)S$^{f}$]a տեսակարարեմ

22բ. [S(Sa)]a ողբերգակեմ, ճարտասանեմ, վիպասանեմ, վերարկուեմ

Երեք արմատով կազմություններից վկայված են հետևյալ օրինակները.

23ա. [(SS)jS]a անտեսավարեմ

23բ. [(SS)jS]a հայթհայթամտեմ



23գ. [(SS)jS]$^{f}$a կայծակնաճաճանչեցուցանեմ

Վկայված են սակավաթիվ կազմություններ, որտեղ որպես սերող հիմք հանդես է գալիս արդեն պատրաստի բայը, որին սկզբից կցվում է նոր արմատական ձևույթ՝ Sj(Sa), S(Sa) կաղապարներով.

24. Sj(Sa) փոխաբերեմ, փոխագործեմ, փոխակերպեմ, փոխաձևեմ, փոխաշարժեմ, փոքրահամարեմ

24ա. Sj(Sa) լուսազգենում

24բ. Sj[(SS)a] փոխայեղյեղեմ

25. S(Sa) ակնածեմ, ակնունիմ, խնամածեմ, վայրիջանեմ, փայլածեմ, փոխածեմ

25ա. S(Sa) դիտածեմ, կուսպաշտեմ, միջարկանեմ

25բ. (aS)(Sa) յառաջասեմ

26. SSa Այս ենթակաղապարի մեջ, ինչպես նշվել էր, մտցնում ենք արկ, անց, անկ, առ բայարմատներով բաղադրված այն կազմությունները, որոնց բառակազմական պատմությունը դժվար է վերականգնել, և որոնք, ըստ երևույթին, կազմված են բառակազմական մեկ քայլի ընթացքում (SS$^{f}$)a կաղապարի համաբանությամբ։ Այս բայերի մեջ, անշուշտ, կարող են լինել դեպքեր, երբ նախապես առկա են SS կազմությամբ բառերը՝ առաջարկ, «առաջ նետվող, առաջնորդ», գլխարկ, որոնք սակայն չեն կարող համարվել համապատասխան բայերի սերող հիմքեր, քանի որ վերջիններս բոլորովին այլ իմաստով են հանդես գալիս՝ առաջարկել «առջևը դնել», գլխարկել «գլուխը կախել՝ հակել» և այլն։ Մեր ընտրանքում վկայված են հետևյալ կազմությունները. ակնարկեմ, ահարկեմ, առաջարկեմ, բեռնարկեմ, թափանցեմ, թևարկեմ, իղարկեմ, խնամարկեմ, հիմնարկեմ, ձայնարկեմ, ձեռնարկեմ, ձիարկեմ, նաւարկեմ, ոստայնանկեմ, ոտնառեմ, պահարկեմ, սերմնարկեմ, սքողարկեմ/սքօղարկեմ, վարմարկեմ, ցօղարկեմ, փոխանցեմ, փոխարկեմ, քողարկեմ

26ա. SSa գլխարկեմ, ուղարկեմ/յղարկեմ/յուղարկեմ, պիտարկեմ, երկրպագեմ, ընկնձեռնեմ

26բ. S$^{f}$Sa բանսարկեմ

-Անալ բայածանցով կազմությունների սերող հիմքերը գլխավորապես ածականներ և գոյականներ են, սակավ դեպքերում՝ այլ խոսքի մասեր.

27. S(a+a) ագարականամ, ախտանամ, աղբիւրանամ, ամպանամ, այրանամ, անձնանամ, անձրևանամ, անտառանամ, առիծանամ, աստուածանամ (գոյ.), ապատանամ, աղքատանամ, աղօտանամ, ամբարտաւանանամ, ամբողջանամ, արդարանամ, արիանամ, դալարանամ



21—442

(ածակ.), այլանամ (դեր.), մխանամ (թվ.), անդրանամ, յաւէժանամ, յաւիտանամ (մակբ.) և այլն։

Այս կաղապարով ևս բուն բայական հիմքերով ունենք միայն սահմանափակ թվով կազմություններ, որոնք, ամենայն հավանականությամբ, նույնպես գալիս են խոր հնությունից։ Այդ դեպքում -անալ բայածանցը թերևս -ան- սոսկածանցի և -(ա)լ դերբայական վերջավորության համադրությունն է՝ ազազանամ, ամանամ, արմանամ, բաղկանամ, բաղձանամ, զայրանամ, զանգիտանամ, զարգանամ, զմայլանամ, մոռանամ, մուրանամ, սլանամ, ցոլանամ։ Նշված բայերից մի քանիսն ունեն իրենց պարզ տարբերակները՝ առանց -ան բաղադրիչի՝ ազազիմ, ամամ, բաղձամ, զանգիտիմ, զմայլիմ, մուրամ, ցոլամ։

27ա. $\underline{S}$(a+a) սերող հիմքի շեշտափոխական հնչյունափոխություն տեղի ունի անվանական սկզբնահիմքերի դեպքում։ Վկայված են ուսումնասիրվող շրջանի համար օրինաչափ հնչյունափոխությունների օրինակներ՝ ազնուանամ, ածխանամ, ամուսնանամ, անուշանամ, գիջանամ, եկեղեցանամ և այլն։

27բ. $\underline{S}$(a+a) վկայված են մի քանի օրինակներ, որոնցում սկզբնահիմքի վերջին ի ձայնավորը ձուլվելով -անալ ածանցի սկզբնային ա-ին, տվել է սովորական ի+ա>ե հնչյունափոխությունը՝ այգենամ, բարենամ, ընտանենամ, թշնամենամ, լկտենամ, խնամենամ, հոգենամ, յարենամ, յղենամ։

27գ. $S^f$(a+a) սկզբնահիմքի քերականական ձևավորումով ունենք մի քանի օրինակ անվանական հիմքերով, հիմնականում սեռական-տրական հոլովաձևով՝ աղբերանամ, առնանամ, գարնանանամ (կա և ուղղականի հնչյունափոխված հիմքով՝ գարնանամ), եղերանամ, հոգնակի ուղղական հոլովաձևով՝ աչանամ, մարդկանամ։ Հետաքրքիր է նշել քերականական ձևավորում ունեցող բայական սկզբնահիմքերով կազմված գոյանամ, կայանամ ձևերը, որոնք երկրորդային կազմություններ են՝ գոյ, կայ գոյականացված բայահիմքերից։

Նախածանցավոր սերող հիմքերով վկայված են կազմություններ հետևյալ ենթակաղապարներով.

28. (aS)(a+a) անբաւանամ, անկարանամ, անհնարանամ, անհոգանամ, անմահանամ, առաւելանամ, առողջանամ, ընդարմանամ, ընդագոտանամ, ընդողնանամ, ընդունայնանամ, յառաջանամ, յապահովանամ, յաւելանամ, յերազանամ, յերկարանամ, յերկուանամ, տգեղանամ, տկարանամ և այլն։



28ա. (a$\underline{S}$)(a+a) անգիտանամ, անժուժանամ, անմտանամ, անյուսանամ, անպիտանամ, անշնչանամ, ընդդիմանամ, տգիտանամ

28բ. (a$S^f$)(a+a) անզգայանամ, առկայանամ

28գ. (a$\underline{S}^f$)(a+a) առանձնանամ

28դ. (aj$\underline{S}$)(a+a) տարակուսանամ

28ե. (aj$S^f$)(a+a) ենթակայանամ, նախագոյանամ, շարագոյանամ

29. (Sa)(a+a) վերջածանցավոր սերող հիմքերով կազմություններ. էականամ, աշխարհականանամ, բաւականանամ, միայնանամ, արդարանամ, կերպարանամ, իրաւանամ, սակաւանամ, հովանոցանամ, վատթարանամ, կարողանամ, ձևողանամ, երեկոյանամ, հաճոյանամ, երեկունանամ, պահպանանամ, զգօնանամ, ծանօթանամ

29ա. ($\underline{S}$a)(a+a) բնականամ, բնչեղանամ, շքեղանամ, պիտոյանամ

29բ. (Sa)(a+a) արժանանամ, հովանանամ, վայրենանամ, աղտեղանամ, հաւատարմանամ, ամայանամ, հարիւրապատկանամ, գեղեցկանամ, սքանչելանամ, սաստկանամ, մեկնանամ, երևութանամ, վայելչանամ

29գ. ($\underline{S}$a)(a+a) բազմապատկանամ, ընչաւետանամ, ծաղկաւետանամ, պիտանանամ, տեղեկանամ, կատաղենամ

29դ. [(Sa)a](a+a) իմաստնանամ

29ե. {[($\underline{S}$a)a]a}(a+a) մշտնջենաւորանամ

Նախածանցավերջածանցավոր սերող հիմքերով վկայված են ընդամենը վեց բայ՝ հետևյալ ենթակաղապարներով.

30. [a(Sa)](a+a) անծանօթանամ, ակամայանամ

30ա. [a(Sa)](a+a) աներևութանամ, արտելութանամ, մակերևութանամ

30բ. [a(Sa)](a+a) անպիտանանամ

Բարդությունները որպես սերող հիմքեր հանդես են գալիս հետևյալ ենթակաղապարներում.

31. (SjS)(a+a) գաղտագողանամ, յարատևանամ, ողջախոհանամ, քաջալաւանամ

31ա. ($\underline{S}$jS)(a+a) անուշահոտանամ, բազմահոգանամ

31բ. (Sj$\underline{S}$)(a+a) ատրաշիկանամ, շառագունանամ

31գ. ($\underline{S}$jS)(a+a) բարեբախտանամ, բարեբաստանամ, բարեկամանամ, բարեձևանամ, բարեպաշտանամ

31դ. ($\underline{S}$j$\underline{S}$a)(a+a) մեկուսանամ

31ե. (Sj$S^f$)(a+a) յարակայանամ

31զ. ($\underline{SjS}$)(a+a) զանազանանամ

*31է.* [(Sa)jS̲] (a+a) *իմաստասիրանամ*
*31ը.* [Sj(Sa)] (a+a) *ամենավայելչանամ*
*31թ.* {a[Sj(Sa)]} (a+a) *չմարդահաճոյանամ*
*32.* (SS) (a+a) *քաջողջանամ, օթագանամ/օթեգանամ*
*32ա.* (SS$^{f}$) (a+a) *երկբայանամ*
*32բ.* (S̲S$^{f}$) (a+a) *տնանկանամ*
*32գ.* (S̲S) (a+a) *այլայլանամ*
*32դ.* [a(SS$^{f}$)] (a+a) *չերկբայանամ*
*32ե.* [S(aS)] (a+a) *քաջառողջանամ*

*Ինչպես տեսնում ենք, բայակերտ պարզ ածանցների համեմատությամբ անալ ածանցը զգալի սահմանափակություն ունի թե՛ կաղապարների բազմազանության, թե՛ նրանց իրացումների տեսակետից։*

*Հետևյալ աղյուսակը ներկայացնում է բայական կաղապարների գործառական բեռնվածության պատկերը բացարձակ արժեքներով և տոկոսային հարաբերությամբ։*

Աղյուսակ 9

| № | *Կաղապարներ* | *Օրինակներ* | *Թիվը* | *Տոկոսը* |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| *1* | Sa | *բերեմ* | 323 | |
| *1ա* | S̲a | *գթամ* | 80 | |
| *1բ* | S'a | *անուանեմ* | 670 | |
| *1գ* | S̲$^{f}$a | *իջանեմ* | 94 | |
| | *Ընդամենը* | | 1167 | 37.5 |
| *2* | (Sa) a | *անձնաւորեմ* | 132 | |
| *2ա* | (S̲a) a | *կուտակեմ* | 33 | |
| *2բ* | (S̲a) a | *զայրագնիմ* | 19 | |
| *2գ* | (S̲a) a | *վշտագնիմ* | 8 | |
| *2դ* | (S'a) a | *տասանորդեմ* | 2 | |
| *2ե* | (Sa)$^{f}$ a | *փայլակեցուցանեմ* | 10 | |
| *2զ* | (S̲a)$^{f}$ a | *շեղացուցանեմ* | 3 | |



| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| *2է* | (Sa̲)$^{f}$ a | *զայրագնացուցանեմ* | 14 | |
| *2ը* | (S̲a)$^{f}$ a | *տեղեկացուցանեմ* | 3 | |
| | *Ընդամենը* | | 224 | 7,3 |
| *3* | [(Sa)a]a | *փոխանորդեմ* | 5 | |
| *3ա* | [(Sa̲)a]a | *հովանաւորեմ* | 5 | |
| *3բ* | [(S̲a)a]a | *միջնորդեմ* | 3 | |
| *3գ* | [(S̲a)a̲]a | *նշանացեմ* | 1 | |
| *3դ* | [(Sa)a]$^{f}$a | *արժանաւորեցուցանեմ* | 1 | |
| | *Ընդամենը* | | 15 | 0,5 |
| *4* | {[(S̲a)a̲]a} a | *մշտնջենաւորեմ* | 1 | |
| | *Ընդամենը* | | 1 | — |
| *5* | (aS) a | *անամօթիմ* | 22 | |
| *5ա* | (aS̲) a | *անպատուեմ* | 11 | |
| *5բ* | (aS$^{f}$) a | *անզգամիմ* | 2 | |
| *5գ* | (aS̲$^{f}$) a | *առանձնեմ* | 1 | |
| *5դ* | (aS)$^{f}$a | *անմահացուցանեմ* | 7 | |
| *5ե* | (aS̲)$^{f}$a | *անշքացուցանեմ* | 1 | |
| *5զ* | (aS$^{f}$)$^{f}$a | *անզգամեցուցանեմ* | 2 | |
| *5է* | [a(aS̲)]a | *զարտուղեմ* | 1 | |
| | *Ընդամենը* | | 47 | 1,5 |
| *6* | (ajS)a | *արտասահմանեմ* | 9 | |
| *6ա* | (ajS̲)a | *յարակցեմ* | 3 | |
| *6բ* | (ajS$^{f}$)a | *ստորակայեմ* | 4 | |
| | *Ընդամենը* | | 16 | 0,5 |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| 7 | $[a(Sa)]a$ | անազգակեմ | 5 | |
| 7ա | $[a(S\underline{a})]a$ | անհերեւութիմ | 1 | |
| 7բ | $[a(\underline{S}a)]^{f}a$ | անպիտանացուցանեմ | 3 | |
| | Ընդամենը | | 8 | 0,3 |
| 8 | $[aj(Sa)]a$ | նախատեսակիմ | 2 | |
| 8ա | $[aj(\underline{S}a)]a$ | նախարևաւորեմ | 3 | |
| 8բ | $[aj(S\underline{a})]a$ | պարապտուտկիմ | 1 | |
| 8գ | $[aj(Sa)]^{f}a$ | նախաճանապարհորդեցուցանեմ | 1 | |
| | Ընդամենը | | 7 | 0,2 |
| 9 | $a\ (Sa)$ | առբերեմ | 77 | |
| 9ա | $a\ (\underline{S}a)$ | ընդմիջեմ | 12 | |
| 9բ | $a(S^{f}a)$ | յարարկանեմ | 19 | |
| 9գ | $a\ (\underline{S}^{f}a)$ | զգտանեմ | 8 | |
| | Ընդամենը | | 116 | 3,8 |
| 10 | $aj\ (Sa)$ | ապաղովեմ | 100 | |
| 10ա | $aj\ (\underline{S}a)$ | արտածաղկիմ | 39 | |
| 10բ | $aj\ (S^{f}a)$ | վերազգենում | 11 | |
| 10գ | $aj\ (\underline{S}^{f}a)$ | արտածաղկեցուցանեմ | 2 | |
| | Ընդամենը | | 152 | 4,9 |
| 11 | $aSa$ | առանցեմ | 10 | |
| 11ա | $a\underline{S}a$ | ստորիջեմ | 1 | |
| 11բ | ãSaa | արտասանեմ | 6 | |
| | Ընդամենը | | 17 | 0,5 |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| 12 | $ajSa$ | արտարանեմ | 2 | |
| 12ա | $aj\underline{S}a$ | բացա:նեմ | 5 | |
| 12բ | $ajS^{f}a$ | բացագայիմ | 8 | |
| 12գ | $aj\underline{S}^{f}a$ | բաղադրեմ | 12 | |
| | Ընդամենը | | 27 | 0,9 |
| 13 | $a[a(Sa)]$ | առտարորոշեմ | 6 | |
| 13ա | $aj\ [a(Sa)]$ | հակասատրոզեմ | 2 | |
| 13բ | $aj\ [aj(S^{f}a)]$ | հակատաբարառնամ | 1 | |
| | Ընդամենը | | 9 | 0,5 |
| 14 | $a[(Sa)a]$ | առնշանակեմ | 1 | |
| 14ա | $aj\ [(Sa)a]$ | ստորաբաժանեմ | 2 | |
| | Ընդամենը | | 3 | 0,1 |
| 15 | $aj\ [\underline{S}(Sa)]$ | մակամտածեմ | 1 | |
| | Ընդամենը | | 1 | — |
| 16 | $(SjS)\ a$ | առատագործեմ | 191 | |
| 16ա | $(\underline{S}jS)\ a$ | բազմաբանեմ | 83 | |
| 16բ | $(Sj\underline{S})\ a$ | ախտակցեմ | 81 | |
| 16գ | $(\underline{S}j\underline{S})\ a$ | գծագրեմ | 33 | |
| 16դ | $(S^{f}jS)\ a$ | անուանափոխեմ | 6 | |
| 16ե | $(S^{f}j\underline{S})\ a$ | ընթերցասիրեմ | 1 | |
| 16զ | $(SjS^{f})\ a$ | քաջալերեմ | 9 | |
| 16է | $(\underline{S}jS^{f})\ a$ | դիմադարձեմ | 4 | |
| 16ը | $(Sj\underline{S}^{f})\ a$ | ուխտադրեմ | 2ձ | |
| 16թ | $(\underline{S}j\underline{S}^{f})\ a$ | օրինադրեմ | 2 | |
| 16ժ | $(S^{f}jS^{f})\ a$ | ձերբակալեմ | 1 | |
| 16ժա | $(S^{f}j\underline{S}^{f})\ a$ | անուանադրեմ | 1 | |
| 16ժբ | $(\underline{S}jS)\ a$ | ոգեխառնեմ | 15 | |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| 16ժգ | (SjS) a | բարեմտիմ | 5 | |
| 16ժդ | (SjS) a | դասադասեմ | 2 | |
| 16ժե | (SjS) a | կերակրեմ | 1 | |
| 16ժզ | (SpS) a | ափիբերանեմ | 2 | |
| 16ժէ | $(S^{f}cS^{f})$ a | առեանգեմ | 2 | |
| 16ժը | (ScS) a | սեթևեթեմ | 2 | |
| 16ժթ | $(SjS)^{f}a$ | ողջախոհացուցանեմ | 4 | |
| 16ի | $(SjS)^{f}a$ | բազմամարդացուցանեմ | 2 | |
| 16իա | $(SjS)^{f}a$ | խելամտացուցանեմ | 2 | |
| 16իբ | $(SjS^{f})^{f}a$ | քաջալերեցուցանեմ | 1 | |
| 16իգ | $(SjS)^{f}a$ | բարեկամեցուցանեմ | 1 | |
| 16իդ | $(SjS)^{f}a$ | զանազանացուցանեմ | 1 | |
| | Ընդամենը | | 475 | 15,4 |
| 17 | [(aS)jS] a | առաւելադեղում | 7 | |
| 17ա | [(aS)jS] a | ընդդիմախօսեմ | 2 | |
| 17բ | [(aS)jS] a | ընդերկարաձգեմ | 5 | |
| 17գ | $[(aS)jS^{f}]$ a | յառաջագայիմ | 2 | |
| 17դ | $[(aS)jS^{f}]$ a | յաւելադրեմ | 1 | |
| 17ե | $[(aS)jS^{f}]$ a | ընդդիմադարձիմ | 3 | |
| 17զ | $[(aS)jS^{f}]$ a | ընդդիմադրեմ | 1 | |
| | Ընդամենը | | 21 | 0,7 |
| 18 | [(Sa)jS] a | այլակարանեմ | 8 | |
| 18ա | [(Sa)jS] a | պատուիրանապահեմ | 2 | |
| 18բ | [(Sa)jS] a | կատարելագործեմ | 8 | |
| 18գ | [(Sa)jS] a | ծննդագործեմ | 3 | |
| 18դ | [(Sa)jS] a | կերպարանակցեմ | 6 | |
| 18ե | [(Sa)jS] a | վերնագրեմ | 7 | |
| 18զ | [(Sa)jS] a | նշանագրեմ | 1 | |
| 18է | [(Sa)jS] a | սրբագնագրեմ | 1 | |
| 18ը | $[(S^{f}a)jS]$ a | արարչագործեմ | 1 | |



| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| 18թ | $[(Sa)jS^{f}]$ a | կենդանածնեմ | 1 | |
| 18ժ | $[(Sa)jS^{f}]$ a | ներբսադրեմ | 1 | |
| 18ժա | $[(Sa)jS]^{f}$ a | խորհրդազգածեցուցանեմ | 1 | |
| | Ընդամենը | | 40 | 1,3 |
| 19 | [Sj(Sa)] a | աստուածազգեստեմ | 3 | |
| 19ա | [Sj(Sa)] a | շչափայլատակեմ | 1 | |
| 19բ | [Sj(Sa)] a | փոխարինակիմ | 1 | |
| 19գ | [(SjS)a] a | բարեգործականեմ | 1 | |
| 19դ | [a(SjS)a] a | անմխարանեմ | 1 | |
| 19ե | $[Sj(Sa)]^{f}$ a | փոխարինակեցուցանեմ | 1 | |
| 19զ | $[SjS)a^{f}]a$ | մեկուսացուցանեմ | 1 | |
| | Ընդամենը | | 9 | 0,3 |
| 20ա | [(aS)j(Sa)] a | ընդդիմաբաժանեմ | 1 | |
| 20բ | [(Sa) j (Sa)] a | վերնաճանապարհորդեմ | 1 | |
| | Ընդամենը | | 2 | — |
| 21 | (SS) a | քարկոծեմ | 24 | |
| 21ա | (SS) a | զրպարտեմ | 6 | |
| 21բ | (SS) a | երկմտեմ | 4 | |
| 21գ | (SS) a | տնօրինեմ | 3 | |
| 21դ | $(SS^{f})$ a | երկբայիմ | 4 | |
| 21ե | $(SS^{f})$ a | ժուժկալեմ | 5 | |
| 21զ | $(SS^{f})$ a | բարեբարեմ | 1 | |
| 21է | (SS) a | վազվազեմ | 27 | |
| 21ը | (SS) a | շրշշրչեմ | 50 | |
| 21թ | $(S^{f}S^{f})$ a | դարձդարձեմ | 2 | |
| 21ժ | $(S^{f}S^{f})$ a | բամբասեմ | 1 | |
| 21ժա | $(SS)^{f}$ a | աստանդեցուցանեմ | 2 | |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| 21դբ | (SS)$^{f}$ a | *չրդողեցուցանեմ* | 3 | |
| 21դգ | (SS)$^{f}$ a | *կողկողեցուցանեմ* | 1 | |
| 21դդ | (SS)$^{f}$ a | *սարսռեցուցանեմ* | 2 | |
| | *Ընդամենը* | | 135 | 4,4 |
| 22 | [(Sa)S] a | *խորհրդածեմ* | 1 | |
| 22ա | [(Sa)S$^{f}$] a | *տեսակարարեմ* | 1 | |
| 22բ | [S(Sa)] a | *վերարկուեմ* | 4 | |
| | *Ընդամենը* | | 6 | 0,2 |
| 23ա | [(SS)j(S)] a | *տնտեսավարեմ* | 1 | |
| 23բ | [(SS)j(S)] a | *հայթհայթամտեմ* | 1 | |
| 23գ | [(SS) jS]$^{f}$a | *կայծակնաճաճանչեցուցանեմ* | 1 | |
| | *Ընդամենը* | | 3 | 0,1 |
| 24 | Sj(Sa) | *փոխաբերեմ* | 6 | |
| 24ա | Sj(Sa) | *լուսազգենում* | 1 | |
| 24բ | Sj[(SS)a] | *փոխայեղյեղեմ* | 1 | |
| | *Ընդամենը* | | 8 | 0,3 |
| 25 | S(Sa) | *ակնածեմ* | 6 | |
| 25ա | S(Sa) | *միջարկանեմ* | 3 | |
| | *Ընդամենը* | | 9 | 0,3 |
| 26 | SSa | *քողարկեմ* | 23 | |
| 26ա | SSa | *գլխարկեմ* | 5 | |
| 26բ | S$^{f}$Sa | *բանսարկեմ* | 1 | |
| | *Ընդամենը* | | 29 | 1,0 |



| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| II * | | | | |
| 27 | S(a+a) | *աղբիւրանամ* | 293 | |
| 27ա | S(a+a) | *ածխանամ* | 108 | |
| 27բ | S(a+a) | *բարենամ* | 9 | |
| 27գ | S$^{f}$(a+a) | *առնանամ* | 7 | |
| | *Ընդամենը* | | 417 | 13,5 |
| 28 | (aS) (a+a) | *անկարանամ* | 25 | |
| 28ա | (aS) (a+a) | *տգիտանամ* | 8 | |
| 28բ | (aS$^{f}$) (a+a) | *անզգայանամ* | 2 | |
| 28գ | (aS$^{f}$) (a+a) | *առանձնանամ* | 1 | |
| 28դ | (ajS) (a+a) | *տարակուսանամ* | 1 | |
| 28ե | (ajS$^{f}$) (a+a) | *ենթակայանամ* | 3 | |
| | *Ընդամենը* | | 40 | 1,3 |
| 29 | (Sa) (a+a) | *կարողանամ* | 18 | |
| 29ա | (Sa) (a+a) | *չքեղանամ* | 4 | |
| 29բ | (Sa) (a+a) | *գեղեցկանամ* | 13 | |
| 29գ | (Sa) (a+a) | *բազմապատկանամ* | 6 | |
| 29դ | [(Sa)a] (a+a) | *իմաստնանամ* | 1 | |
| 29ե | {[(Sa)a]a} (a+a) | *մշտնջենաւորանամ* | 1 | |
| | *Ընդամենը* | | 43 | 1,4 |
| 30 | [a(Sa)] (a+a) | *անծանօթանամ* | 2 | |
| 30ա | [a(Sa)] (a+a) | *աներեւութանամ* | 3 | |
| 30բ | [a(Sa)] (a+a) | *անպիտանանամ* | 1 | |
| | *Ընդամենը* | | 6 | 0,2 |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| 31 | (SjS) (a+a) | ողջախոհանամ | 4 | |
| 31ա | (SjS) (a+a) | անուշահոտանամ | 2 | |
| 31բ | (SjS) (a+a) | շառագունանամ | 5 | |
| 31գ | (SjS) (a+a) | բարեձևանամ | 2 | |
| 31դ | (SjSa) (a+a) | մեկուսանամ | 1 | |
| 31ե | (SjS[f]) (a+a) | յարակայանամ | 1 | |
| 31զ | (SjS) (a+a) | զանազանանամ | 1 | |
| 31է | [(Sa) jS] (a+a) | իմաստասիրանամ | 1 | |
| 31ը | [Sj (Sa)] (a+a) | ամենավայելչանամ | 1 | |
| 31թ | {a[Sj (Sa)]} (a+a) | չմարդահաճոյանամ | 1 | |
| | Ընդամենը | | 19 | 0,6 |
| 32 | (SS) (a+a) | քաջողջանամ | 2 | |
| 32ա | (SS[f]) (a+a) | երկրայանամ | 1 | |
| 32բ | (SS[f]) (a+a) | տնանկանամ | 1 | |
| 32գ | (SS) (a+a) | այլայլանամ | 1 | |
| 32դ | [a(SS[f])] (a+a) | յերկրայանամ | 1 | |
| 32ե | [S(aS)] (a+a) | քաջառողջանամ | 1 | |
| | Ընդամենը | | 7 | 0,2 |
| | Ընդհանուր թիվը | | 3078 | 100 |

## ԱԾԱՆՑՆԵՐԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

*Ածանցման կաղապարների քննության ժամանակ որոշ չափով խոսվեց ածանցների, հատկապես նախածանցների առաջացման և իմաստային խմբավորումների մասին:*

*Այստեղ ընդհանուր գծերով կանդրադառնանք ածանցների գործառական կարևորագույն հատկանիշներին:*

*Գործառական հատկանիշների մեջ քննարկվում են ածանցների գործառական բեռնվածությունը, նրանց գործունությունն ու արդյունավետությունը, գործառության ոլորտը (զուտ բառակազմական և ձևակազմա-*



*կան-բառակազմական ածանցներ) և փոխակերպական արժեքը՝ որպես հետևանք որոշակի խոսքի մասեր կերտելու ունակության:*

*1. Ածանցման կաղապարների նկարագրությունից արդեն իսկ պարզ դարձավ, որ ածանցների գործառական բեռնվածությունը խիստ անհամաչափ է, ինչպես նախածանցների և վերջածանցների միջև ընդհանրապես, այնպես էլ առանձին ածանցների միջև: Բացի այդ, ածանցներն անհավասարաչափ են հանդես գալիս տարբեր կառուցվածքի կաղապարներում, այնպես որ այս դեպքում պարզագույն կաղապարները (*aS, ajS, Sa*) ճշտությամբ չեն արտացոլում ածանցների գործառական բեռնվածության պատկերը (որ տեղի ուներ բարդության բաղադրիչների խոսքիմասային պատկանելության դեպքում): Հատկապես, հունաբան դպրոցի ստեղծած նախածանցների մի մասը պարզագույն* aS, ajS *կաղապարներում վկայված է ընդամենը մեկ-երկու օրինակով, իսկ բայակազմություններում գտնում ենք զգալի թվով օրինակներ: Այսպես,* բաց *նախածանցով կազմվում է 23 բայ և ընդամենը 4 այլ խոսքի մաս,* վեր*-ով համապատասխանաբար՝ 36 և 2,* շար*-ով՝ 16 և 3,* ընդ*-ով՝ 34 և 14,* առ*-ով՝ 35 և 18,* գ*-ով՝ 14 և 1 և այլն: Կան նաև որոշ ածանցներ, որոնք հանդես են գալիս միայն այլ ածանցների զուգորդությամբ, բայերի մեջ, կամ էլ միայն բարդ հիմքերի հետ (օր.* ակամայ, անբաղայ, անբաղբաղայ, ընանուղղայ, մշտնջեան, վաղնջուց, անջրդի, անջրդին, անդրաքայլեմ, ընկերշակեմ, հանգստարարիբայ *և այլն): Այդ պատճառով ածանցների գործառական բեռնվածության պատկերը անհրաժեշտ է որոշել՝ հաշվի առնելով այն բոլոր կաղապարներն ու ենթակաղապարները, որոնցում դրանք հանդես են գալիս:*

*Այստեղ պետք է նկատի ունենալ հետևյալը: Յուրաքանչյուր ածանց հաշվվում է միայն մեկ անգամ, այսինքն այն կաղապարում, որտեղ նրա կցումը տեղի ունի բառակազմական միակ կամ վերջին քայլի ժամանակ. այդ նշանակում է.*

*1) ածանցների գործառական բեռնվածությունը որոշելիս նկատի են առնվում հիմնականում ածանցական կաղապարները, քանի որ բառաբարդման կաղապարներում ածանցները հանդես են գալիս երկրորդային հիմքերի կազմում, որոնք որպես անկախ բառեր արդեն հաշվի են առնված ածանցավոր կաղապարների մեջ. այսպես,* անօրինախորհուրդ *բարդության մեջ հանդիպող* ան- *և* -ուրդ *ածանցներն արդեն կան* անօրէն *և* խորհուրդ *առանձին ածանցավոր կազմությունների մեջ, և դրանք նորից երկրորդ անգամ չենք հաշվում:*

2) Մեկից ավելի ածանցներ ունեցող կաղապարների մեջ հաշվում ենք միայն եզրային, այսինքն՝ բառակազմական վերջին քայլում կցված ածանցը (լինի այն նախածանց թե վերջածանց), քանի որ նրան նախորդած մասը որպես առանձին բառ արդեն հաշվի է առնված ավելի պարզ կաղապարների մեջ. օր.՝ a(aS) և (aS)a կաղապարներին պատկանող գերանձանօթ և անողորմաբար բառերի մեջ ան- ածանցը նորից չենք հաշվում, քանի որ այն արդեն հանդիպել է առանձին վերցրած անձանօթ և անողորմ բառերի մեջ։

3) Բայակազմության մեջ համապատասխանաբար հաշվի են առնվում միայն նախածանցները, ընդ որում միայն այն կաղապարներում, որտեղ դրանք կցվում են արդեն պատրաստի բայերին, այսպես, անամօթիմ բայի մեջ ան- ածանցը չի հաշվվում, քանի որ կա արդեն անամօթ բառում, մինչդեռ ներգործեմ բայը կազմված է գործեմ պատրաստի բային ներ- ածանցն ավելացնելու միջոցով, հետևաբար այդ բայը մտնում է ներ- ածանցի գործառական բեռնվածության ոլորտի մեջ։ Այսպիսով, բայակազմության մեջ հաշվի են առնվում միայն նախածանցման 9—15 կաղապարները։ Ինչ վերաբերում է վերջածանցավոր կազմություններին, ապա դրանք հաշվի չեն առնվում, քանի որ, ինչպես նշվեց, բայական վերջավորությունը կցվել է արդեն գոյություն ունեցող բաղադրյալ հիմքին (օր.՝ արժանաւոր-արժանաւորեմ)։

4) Խառը տիպի կաղապարների մեջ, որտեղ տեղի ունի վերջածանցի և նախածանցի միաժամանակյա կցում բառակազմական մի քայլի ընթացքում, երկու ածանցն էլ հաշվի են առնվում։

5) Ոչ եզրային ածանցները հաշվվում են հետևյալ դեպքերում.

ա) Երբ երկրորդային ածանցավոր սերող հիմքը ինչ-ինչ պատճառներով առանձին չի հանդիպում (հին, քարացած կազմություն է, բառարաններում արձանագրված չէ, կամ հայտնի է միայն ուշ վկայություններով և այլն), ինչպես՝ առանձին չեն հանդիպում աննմանոյթ, անտերունչ, անճշտակի, անընդհար, անսխուրան, մակեղուտ, չխաղոյք, չմարթուն, չգիտու, չկեցու, մանկանացու բառերի *նմանոյթ, *տերունչ, *ճշտակի, *ընդհար, *սխուրան, *եղուտ, *խաղոյք, *մարթուն, *գիտու, *կեցու, *մանկան սերող հիմքերը. հետևաբար վերջիններիս մեջ հանդիպող -ոյթ, -ունչ, -ակի, ընդ-, -ան, -ուտ, -ոյք, -ուն, -ու, -կան ածանցները պետք է հաշվի առնվեն (հմմտ. նաև էջ 333-ի օրինակները՝ մշտնջեան, անարդիլ, անջրդի և այլն)։

բ) Երբ բայական վերջավորությանը նախորդող վերջածանցավոր սերող հիմքը առանձին հանդես չի գալիս, այստեղ կարող են լինել ինչպես



եզակի, այնպես էլ այլ բառերում հանդիպող ածանցներ։ Ինչպես ընկերշակեմ, այգորեմ, արուեստակեմ, յօշատեմ, ատուածարեմ, եղջերցեմ բայերի ընկերշակ-, այգոր-, արուեստակ-, յօշատ-, ատուածար-, եղջերցի սերող հիմքերը գոյություն չունեն կամ մեր ընտրանքում վկայված չեն. սրանց մեջ հանդիպող -շակ, -որ, -ակ, -ատ, -ար, -ցի (>ց) ածանցները պետք է առանձնացվեն և հաշվի առնվեն։

գ) Առանձնահատուկ դեպք են բայական կերպածանցները, որոնք հանդիպում են նաև մի շարք բայանուններում (խեթկումն, բեկտումն, ձրգտումն, փողոտումն, խածատումն) և բայերից սերված մի շարք բաղադրություններում (պատառոտուն, քակտիչ և այլն)։ Սրանք հաշվի են առնվում միայն բայերի կազմում և այն բայանուններում, որոնց սկզբնահիմք բայը վկայված չէ (օր. պատառատուն՝ չունենք պատառատեմ)։

Նշված սկզբունքներով կատարված հաշվումները պարզել են ածանցների գործառական բեռնվածության հետևյալ պատկերը (տե՛ս աղյուսակ 10, 11)։

Այսպիսով, ուսումնասիրվող շրջանի բառակազմական համակարգում գործառական բեռնվածության (բառակազմական արդյունավետության) տեսակետից բացարձակ գերակշռություն ունեն ան- ժխտական նախածանցը և -ութիւն վերջածանցը։ Գրաբարի 43 նախածանցներից 5-ը և 220 վերջածանցներից 51-ը եզակի են, այսինքն ունեն միայն մեկ վկայություն, 6 նախածանց և 21 վերջածանց վկայված են ընդամենը երկուական և 20 վերջածանց՝ երեքական օրինակով։

2. Հարաբերակցությունը ածանցների գործառական բեռնվածության (գործածման հաճախականության), նրանց գործառական ակտիվության (գործունության) ու արդյունավետության միջև հետևյալն է։ Գործառական մեծ բեռնվածություն ունեցող ածանցները, բնականաբար, նաև արդյունավետ են, գործածման նույն հաճախականությունն ունեցող մի շարք ածանցներ միշտ չէ, որ հավասարարժեք են նաև գործունության տեսակետից։ Այդ հատկապես վերաբերում է եզակի և սակավ գործածության ածանցներին։ Նրանց մեծ մասը, անշուշտ, ժառանգվել է լեզվի զարգացման նախորդ շրջաններից, կորցրել է իր բառակազմական դերը, և ինչպես արդեն նշվել է, ճանաչվում և տրոհվում է բառակազմական համակարգային զուգորդական կապերի հիման վրա. այդպիսիք են ինչպես փոխառյալ ա-, արք-, անտի-, դժ-, -ակար (ակեար/ակեր), -աւանդ, -անդ, -իտ, -իթայ, -իչ, -թար, -ճան ածանցները, որոնք կամ փոխառվել են իրենց սերող հիմքերի հետ միասին, պատրաստի կառույցների մեջ (բաշխիչ, վատթար), կամ բառապատճենման և [illegible] բառա-

Աղյուսակ 10

| № | Նախածանցներ | Ածանցների քանակը | Բառերի քանակը | Տոկոսը |
|---|---|---|---|---|
| 1 | ան¹- | 1 | 1016 | 49,5 |
| 2 | համ- | 1 | 110 | 5,2 |
| 3 | նախ- | 1 | 107 | 5.1 |
| 4 | առ-, չ- | 2 | 69 | 2 × 3,3 |
| 5 | վեր- | 1 | 61 | 2,9 |
| 6 | ընդ- | 1 | 52 | 2,4 |
| 7 | գեր- | 1 | 51 | 2,4 |
| 8 | արտ- | 1 | 48 | 2,3 |
| 9 | տար- | 1 | 44 | 2,1 |
| 10 | մակ- | 1 | 41 | 1,9 |
| 11 | ներ- | 1 | 40 | 1,9 |
| 12 | յ- | 1 | 37 | 1,7 |
| 13 | բաց- | 1 | 36 | 1,7 |
| 14 | յար-, պար- | 2 | 26 | 2 × 1,2 |
| 15 | հակ- | 1 | 24 | 1.1 |
| 16 | ստոր- | 1 | 23 | 1,1 |
| 17 | շար-, տրամ- | 2 | 22 | 2 × 1,0 |
| 18 | ապ²- | 1 | 19 | 0,9 |
| 19 | ց- | 1 | 18 | 0,8 |
| 20 | բաղ- | 1 | 17 | 0,8 |
| 21 | գ- | 1 | 16 | 0,7 |
| 22 | ենթ- | 1 | 14 | 0,7 |
| 23 | հոմ-, տ- | 2 | 12 | 2 × 0,6 |
| 24 | ըստ- | 1 | 10 | 0,5 |
| 25 | ապ¹- | 1 | 9 | 0.4 |
| 26 | դժ- | 1 | 7 | 0,3 |
| 27 | շաղ- | 1 | 5 | 0.2 |
| 28 | դեր- | 1 | 4 | 0,2 |
| 29 | ան²-, անդր-, անտի-, թեր-, փաղ-, փար- | 6 | 2 | 6 × 0,1 |
| 30 | ա-, արք-, բար-, ի-, քոր- | 5 | 1 | 5 × 0,05 |
| | Ընդամենը | 43 | 2114 | 100 |



Աղյուսակ 11

| № | Վերջածանցներ | Ածանցների քանակը | Բառերի քանակը | Տոկոսը |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1 | -ութիւն | 1 | 3159 | 22,0 |
| 2 | -ել (-ալ/-ել/-ուլ) | 1 | 2565 | 17.8 |
| 3 | -ական | 1 | 986 | 6,8 |
| 4 | -ագոյն | 1 | 622 | 4,3 |
| 5 | -ումն | 1 | 595 | 4,1 |
| 6 | -անալ | 1 | 532 | 3,7 |
| 7 | -արար | 1 | 518 | 3,6 |
| 8 | -իչ | 1 | 339 | 2,3 |
| 9 | -աւոր | 1 | 321 | 2,2 |
| 10 | -ապէս | 1 | 305 | 2,1 |
| 11 | -անք¹ | 1 | 259 | 1,8 |
| 12 | -եալ | 1 | 239 | 1.6 |
| 13 | -եայ | 1 | 183 | 1,2 |
| 14 | -եան¹ | 1 | 178 | 1,2 |
| 15 | -ող¹ | 1 | 177 | 1,2 |
| 16 | -ք | 1 | 163 | 1,1 |
| 17 | -ի¹ | 1 | 158 | 1,1 |
| 18 | -ի³ | 1 | 151 | 1,0 |
| 19 | -ակ², -իկ² | 2 | 2 × 137 | 0,9 |
| 20 | -ու¹ | 1 | 110 | 0,7 |
| 21 | -արան | 1 | 86 | 0,6 |
| 22 | -ակ¹ | 1 | 84 | 0,5 |
| 23 | -ային | 1 | 81 | 0.5 |
| 24 | -ուած | 1 | 78 | 0,5 |
| 25 | -ուն | 1 | 74 | 0.5 |
| 26 | -անոց, -իկ¹ | 2 | 2 × 66 | 0,4 |
| 27 | -ած | 1 | 65 | 0.4 |
| 28 | -ացի/եցի² | 1 | 57 | 0,3 |
| 29 | -ս | 1 | 53 | 0,3 |
| 30 | -օրէն | 1 | 52 | 0,3 |
| 31 | -ին | 1 | 50 | 0,3 |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| 32 | -եղէն, -երիան -եքին, -որդ, -ուտ | 4 | 4 × 49 | 0,3 |
| 33 | -ան¹, -իւն | 2 | 2 × 48 | 0,3 |
| 34 | -ոտ¹ | 1 | 45 | 0,3 |
| 35 | -ակի | 1 | 41 | 0,2 |
| 36 | -նակ, -ն | 2 | 2 × 37 | 0,2 |
| 37 | -ոց¹ | 1 | 35 | 0,2 |
| 38 | -երորդ/-որդ | 1 | 32 | 0,2 |
| 39 | -իք² | 1 | 31 | 0,2 |
| 40 | -ազին, -իք¹ | 2 | 2 × 30 | 0,2 |
| 41 | -աւէտ | 1 | 29 | 0,2 |
| 42 | -ուստ² | 1 | 27 | 0,1 |
| 43 | -աստան, եղ | 2 | 2 × 26 | 0,1 |
| 44 | -ապան | 1 | 24 | 0,1 |
| 45 | -աւ, -ուկ³ | 2 | 2 × 23 | 0,1 |
| 46 | -ոյ | 1 | 22 | 0,1 |
| 47 | -արէն/-երէն, -ի² | 2 | 2 × 21 | 0,1 |
| 48 | -ատ², -ոց² | 2 | 2 × 20 | 0,1 |
| 49 | -ենի¹ | 2 | 2 × 20 | 0,1 |
| 50 | -ացի/-եցի¹, -ուհի | 2 | 2 × 18 | 0,1 |
| 51 | -ածոյ, -կոտ | 2 | 2 × 17 | 0,1 |
| 52 | -անի¹, -եան², -ոյք | 3 | 3 × 16 | 0,1 |
| 53 | -այն, -անակ | 2 | 2 × 15 | 0,1 |
| 54 | -այք, -ոյն, -ու² | 3 | 3 × 14 | — |
| 55 | -իւ, -ոյթ, -ով, -ուկ¹ | 4 | 4 × 13 | — |
| 56 | -ացու, -ունակ, -ունք², -ուստ¹ | 4 | 4 × 12 | — |
| 57 | -ար, -ունի | 2 | 2 × 11 | — |
| 58 | -այ, -անի², -ենի³, -էն, -իճ, -ոտի, -ունք¹ | 8 | 8 × 10 | — |
| 59 | -ապատիկ, -երեակ, -իցս, -ովին, -ուածոյ, -ուկ², -ուց¹ | 7 | 7 × 9 | — |
| 60 | -էք, -կան, -ուչ, -ստ, -օն | 5 | 5 × 8 | — |
| 61 | -ր, -ոտ², ուրդ, -(ա)սուն | 4 | 4 × 7 | — |
| 62 | -ազան, -աց, -եաւ, -եկին, -կէն, -կին | 6 | 6 × 6 | — |



| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| 63 | -ադար, -ակար, -անուտ, -ատ³, -որայ/-որեայ, -ուք, -տ- | 7 | 7 × 5 | — |
| 64 | -ամէտ, -այնի, -ուոր, -եւ, -նեար, -ոյց, -ոք, -ունդ, -ուց² | 9 | 9 × 4 | — |
| 65 | -ակեար/-ակեր, -անօր, -պան, -ապանակ, -պատիկ, -արիմ/-երիմ, -ցի, -աւանդ, -աւանդակ, -աք, -եար, -եղի, -եմն, -իլ, -նի, -ոյկ, -որ, -ունչ, -ուցք, -օնք | 20 | 20 × 3 | — |
| 66 | -ան², -անակի, -անց, -առօտ, -բար, -բի, -գին, -գոյն, -եայք, -եկան, -եմ, -է, -իտ, -իր, -կ-, -կու, -շի, -ող², -ուլ, -չեայ, -րի | 21 | 21 × 2 | — |
| 67 | -ազ, -անդ, -անդակ, -անդի, -անք², -աշ, -աստ, -աստուն, -ատ¹, -ատակ, -գոն, -դի, -դին, -եամն, -եայն, -եանց, -եաշ/էշ, -եր, -եկի, -երիր, -եցիկ, -եւին, -զան, -էճ, -թար, -իթայ, -իմ, -իշ, -ից, -իւղ, -իւր, -լ-, -կեար/-կեր, -կի, -ճակ, -ճան, -շակ, -ող, -ուակ, -ուի, -ունի², -ունչ, -չ-, -չոտ, -չուտ, -սանն, -տակ, -տի, -օթ | 51 | 51 × 1 | — |
| | Ընդամենը | 220 | 14340 | 100 |

ստեղծման արդյունք են (հանգստարարիքայ), այնպես էլ բնիկ կամ անհայտ ծագման մի շարք ածանցներ, ինչպես՝ աճ²–, –արիմ/–երիմ, –եֆ, –եմն, –իլ, –ոյկ, –որ, –ունչ, –կու, –եցիկ, –շի, –չեայ, –ող², –րի, –ղի, –ղին, –եամն, –եաշ/–էշ, –էն, –չուռ, օք և այլն։ Սրանց մեջ կան իմաստային ներփակ խմբերում սահմանափակված և լեզվի զարգացման տվյալ պահին արդեն անարդյունավետ դարձած ածանցներ, ինչպես դժ–, ապ–, տ– ժխտական նախածանցները, կամ բույսերի և միջատների անուններ կերտող –ին ածանցը՝ դառնին, կորկոտին, լուին, ուտին, –(ա)սուն թվականակերտ ածանցը, որ նախկին արմատական ձևույթի ածանցացման հետևանք է և կազմում է տասնյակների փակ համակարգի անվանումները և այլն։ Ուսումնասիրվող շրջանում այս կարգի ածանցներն արդեն զրկվել են բառակազմական գործունեությունից, այսինքն՝ դրանցով նոր բառեր այլևս չեն կազմվում։

*Դրան հակառակ, որոշ թվով ածանցներ, թեև ունեն գործառական փոքր բեռնվածություն, այլ խոսքով՝ արդյունավետ չեն*[84]*, սակայն նշված ժամանակաշրջանի համար միանգամայն գործուն են և կենդանի, այսինքն՝ նրանցով ըստ անհրաժեշտության կարող էին նոր բառեր ստեղծվել, թեև մեզ հասած վկայությունները սահմանափակ թիվ ունեն։ Այդ ածանցները տվյալ ժամանակաշրջանում գործող բառակազմական համակարգի գործուն միավորներ են, նրանց մի մասը նույնիսկ ստեղծվել է V դ. երկրորդ քառորդում իր գործունեությունը սկսած հունաբան դպրոցի ներկայացուցիչների կողմից, հետևաբար այդ իսկ ժամանակաշրջանի լեզվաստեղծական պրոցեսի արդյունք է։*

*Այդ ածանցների թվին են պատկանում՝ 1) առաջին հերթին, ինչպես նշվեց, հունաբան դպրոցի ստեղծած մի շարք նախածանցներ՝* անդր–, ապ–, բար–, դեր–, բեր–, հոմ–, շաղ–, փաղ–, փար–, *որոնք սկզբնապես հանդես էին գալիս միայն պատճենված բառերի կազմում, սակայն մի քանիսը հետագայում զգալի արդյունավետություն են ձեռք բերում. 2) հավաքական հոգնակերտ մասնիկները, որոնք ուսումնասիրվող շրջանում խիստ սահմանափակ դեր և ավելի շատ բառակազմական, քան քերականական արժեք ունեն, բայց լեզվի զարգացման հաջորդ շրջաններում մեծ արդյունավետություն և զուտ քերականական արժեք են ձեռք բերում բարբառներում, ինչպես նաև միջին և նոր գրական լեզուներում՝ փոխարինելով հին հայերենի* –ք *հոգնակերտին. 3) բայական կերպածանցները, որոնց արդյունավետությունը նույնպես բավական սահմանափակ էր նշված շրջանում. սրանք աշխուժանում են հետագա շրջանի բարբառներում և զգալի արդյունավետություն ունեն նաև արդի գրական լեզվում. 4) մի շարք առանձին ածանցներ, որոնք դժվար է որևէ խմբավորման ենթարկել, բայց որոնցով կազմված բառերի մի մասը ստեղծվել է հենց ուսումնասիրվող շրջանում, որ դրանց գործունության ապացույցն է, օր.՝* բար– այսբար, ուրբար, գոն–որգոն, զան–որզան, ինք–քրիստոսինք, օն–գեղօն, գործօն *և այլն. 5) մի շարք ածանցների անհոդակապ տարբերակները, որոնք թեև իմաստային ու գործառական տեսակետից որոշ չափով հեռացել են հոդակապավոր տարբերակներից, բայց վերջիններիս հետ ծագումնաբանական կապի շնորհիվ ընկալվում են որպես տվյալ ժամանակաշրջանում գործուն բառակազմական միավորներ։ Այդպիսիք են՝* –բար, –գոյն, –գոն, –զան, –կան, –պան, –պատիկ, –ցի, –ուոր *ածանցները, որոնք իրենց հոդակապավոր տարբերակների համեմատությամբ խիստ սահմանափակ գործառական բեռնվածություն ունեն։*



*Ըստ այդմ հին գրական հայերենի ածանցները որոշ պայմանականությամբ կարելի է բաժանել երեք խմբերի.*

*1) գործուն և արդյունավետ. նախածանցներ՝* ան¹–, ապ²–, չ–, առ–, արտ–, բաց–, բաղ–, գեր–, ենթ–, ընդ–, հակ–, համ–, մակ–, յ–, յար–, նախ–, ներ–, շար–, պար–, ստոր–, վեր–, տար–, տրամ–, ց–. *վերջածանցներ՝* –աբար, –ագին, –ագոյն, –ած, –ուած, –ալ/ել, –ակ¹, –ակ², –ական, –ակի, –ային, –ան¹, –անալ, –անի¹, –անոց, –անք², –ապան, –ապէս, –աստան, –ատ², –արան, –արէն/երէն, –ացի/եցի², –աւ, –աւէտ, –աւոր, –եալ, –եակ, –եայ, –եան¹, –եղ, –եղէն, –ենի¹, –երորդ/րորդ, –եքեան/եքին, –ի¹, –ի², –ի³, –ին, –իչ, –իւն, –իք¹, –կոտ, –ն, –ող¹, –ոյ, –ոյք, –ոտ¹, –որդ, –ոց¹, –ոց², –ու¹, –ութիւն, –ուկ³, –ումն, –ուն, –ուստ², –ուտ, –ք, –օրէն.

*2) գործուն, բայց ոչ արդյունավետ. նախածանցներ՝* անդր–, բար–, ենթ–, հոմ–, դեր–, բեր–, փաղ–, փար–, շաղ–. *վերջածանցներ՝* –բար (–աբար–ի *տարբերակը*), –ագար –գին, –գոյն/–գոն (–ագոյն–ի *տարբերակները*), –ազան, –զան, –ածոյ, ուածոյ, –կան, –այն, –այնք, –այք, –ան², –անակ, –անակի, –անի², –անուտ, –անց, –անք¹, –պան (–ապան), –ապանակ, –ապատիկ, –պատիկ, –ատ³, –ացի/–եցի¹, –ցի, –ացու, –աւոր, –եան², –եար –եր, –եաւ, –եկին, –ենք², –երեակ, –իցս, –իւ, –կ–, –լ–, –կէն, –կին, –նեար, –նի, –ող², –ոյթ, –ոյն, –ով, –ովին, –ոտ²–, –ոտի, –որայ/որեայ, –ու², –ուի– ուկ¹, –ուկ²– ուկի, –ունակ, –ունի, –ունք¹, –ունք², –ուստ¹, –ուք, –ս, –տ, –տի, –օն.

*3) ոչ գործուն և ոչ արդյունավետ. նախածանցներ՝* ա–, ան²–, անտի–, ապ²–, արք–, դժ–, զ–, ի–, տ–, քոր–, *վերջածանցներ՝* –ազ, –ակար, –ակեր/ակեար, –կեար, –այ, –անդ(ի), –անդակ, –անք, –անօր, –աշ, –առօտ, –աստ, –աստուն, –ատ¹, –ատակ, –ար, –արիմ/երիմ, –աց, –աւանդ, –աւանդակ, –աք, –բ, –բի, –դի, –դին, –եամն, –եայն, –եայք, –եանց, –եաշ/էշ, –եկան, –եկի, –եղի, –եմ, եմն, –երիր, –եցիկ, –եւ, –եւին, –է, –էն, –էն, –էք, –թար, –իթայ, –իլ, –ին, –իմ, իշ, –իտ, –իր, –ից, –իւղ, –իւր, –կի, –կու, –ճակ, –ճան, –շի, –շակ, –ոզ, –ոյկ, –ոյց, –որ, –ոք, –ուակ, –ուղ, –ունդ, –ունչ, –ունջ, –ուշ, –ուրդ, –ուց, –ուցք, –չ–, –չեայ, –չոտ, –չուտ, –սանն, –(ա)սուն, –ստ, –տակ, –րի, –օթ, օնք:

*Նշենք, որ այս վերջին խմբում կան ածանցներ, որոնք զգալի թվով իրացումներ ունեն (ինչպես* տ– *ժխտականը,* զ– *նախդիր-նախածանցը կամ* –(ա)սուն *թվականակերտը և այլն), և սրանց հավասար գործառական բեռնվածություն ունեցող մի շարք ածանցներ համարվել են գործուն և նույնիսկ որոշ չափով արդյունավետ, բայց քանի որ սրանցով նշված շըր-*

ջանում այլևս նոր բառեր չէին կազմվում, սրանք մտցվում են ոչ գործուն ածանցների խմբի մեջ։

3. Գործառության ոլորտի տեսակետից ածանցները բաժանվում են զուտ բառակազմական և բառակազմական-ձևակազմական, այլ խոսքով՝ մենագործառույթ կամ մենամակարդակ (միայն բառակազմական մակարդակում հանդես եկող) և երկգործառույթ կամ երկմակարդակ (միաժամանակ բառակազմական և ձևաբանական մակարդակներում հանդես եկող) ածանցների։ Ածանցների ճնշող մեծամասնությունը զուտ բառակազմական արժեք ունի։ Ինչ վերաբերում է բառակազմական-ձևակազմականներին, ապա նրանց մեջ կարելի է առանձնացնել մի քանի խմբեր։

1) Առաջին հերթին դրանք բայակազմական –ալ /–իլ/–ուլ և –անալ ածանցներն են, առանց որոնց չի կարող ձևավորվել բայական բառույթը, տվյալ դեպքում՝ անորոշ դերբայը։ Բայակազմական այս ածանցների առանձնահատկությունն այն է, որ բայերի ձևաբանական փոփոխությունների ժամանակ (խոնարհման հարացույցում) դրանք դուրս են ընկնում, փոխարինվելով բայական վերջավորություններով կամ զրո ձևույթով, բայց պահպանվում են անորոշ դերբայի հոլովման հարացույցում, որը վկայում է անորոշ դերբայի անվանողական արժեքի մասին (որպես գործողության անուն, անվանում)։

2) Դերբայակերտ –եալ (անցյալ դերբայ), –ի (ապառնի դերբայ), –ող (ենթակայական կամ ներկա դերբայ), ինչպես նաև –իչ ածանցը, որը նախկինում ենթակայական դերբայի արժեք ունեցող բայաձևեր է կերտել, սակայն ուսումնասիրվող շրջանում այդ ձևերն արդեն գործածվում են ածականի և մասամբ էլ գոյականի իմաստով։ Ի դեպ, սա հատուկ է նաև բուն դերբայներին, որոնցից շատերը ածականացման և գոյականացման ճանապարհին են կամ արդեն լրիվին անցել են այդ խոսքի մասերի շարքը (առաքեալ, երանելի, ծնող և այլն)։ Նշված դերբայակերտ ածանցների երկմակարդակ կամ երկգործառույթ բնույթը դրսևորվում է ոչ միայն նրանով, որ նրանք բառաքերականական հատուկ դասի միավորներ են կերտում, այլև նրանով, որ այդ միավորների բառակազմական սերման կանոնները ձևաբանական պատճառաբանվածություն ունեն, այսինքն, այս ածանցները կարող են կցվել միայն որոշակի ձևաբանական ձևավորում ունեցող հիմքերին։ Այսպես, անցյալ դերբայի –եալ ածանցը դրվում է գլխավորապես կատարյալի (արմատական կամ ցոյական) հիմքի վրա, ե և ի խոնարհումների պարզ բայերի դեպքում՝ և՛ կատարյալի, և՛ ներկայի հիմքի վրա, կատարյալի հիմքում ի թույլ բաղադրիչ ունեցող բայերի դեպքում կցվում է նրանց պատճառականի կատարյալի հիմքին,



–ող ածանցով ենթակայական դերբայ կազմվում է միայն ներգործական և չեզոք (այն էլ ոչ բոլոր) սեռի բայերից և այլն։ Պայմանականորեն այս խմբին կարելի է դասել նաև բայանուններ կերտող –ումն ածանցը, որը նույնպես իր մեծ կանոնականությամբ և սերող հիմքի ձևավորման ձևաբանական պայմանավորվածությամբ (ներկայի հիմք-կատարյալի հիմք փոփոխակումներով) մոտենում է քերականական ձևույթներին։

3) Պատճառականի –ույց ածանցը, որը թեև խիստ սահմանափակ կիրառություն ունի (մեր ընտրանքում միայն հանգույց, ուռույց, սառույց, ցառույց բառերում), սակայն կարող է դիտվել որպես բայահիմքերից գոյականներ կազմող ածանց, եթե, անշուշտ, ամբողջ բառույթը չմեկնաբանվի որպես պատճառականի կատարյալի ձևի խոսքիմասային փոխանցում գոյականների շարքը կամ հետադարձ բառակազմության արդյունք։

4) Թվականակերտ –իր, –երեակ, –երիր, –երորդ/–րորդ, –եքեան/–եքին, ինչպես նաև –(ա)սուն ածանցները, որոնք կազմում են թվական անվան ներքին իմաստային տարատեսակությունները, և որոնց զուգորդելիությունը հիմքի հետ դարձյալ քերականական-իմաստային պայմանավորվածություն ունի՝ սրանք դրվում են միայն թվական հիմքերի վրա։

5) Ածականների համեմատական աստիճան կազմող –ագույն ածանցը, որը թերևս կարող էր զուտ քերականական համարվել, եթե շատ դեպքերում մթագնած չլիներ նրա բաղդատականության իմաստը, կամ երկրորդական սերող հիմքի կազմում չմասնակցեր բառակազմական հաջորդ քայլերի (վեհագունութիւն, խստագոյնս)։

6) Հավաքական հոգնակերտները՝ –ան², –անի², –անք², –եան², –եար, –եր, –նեար, –նի, –որայ/–որեայ, –ոտի, –ուի, –ունի², որոնց մեջ հոգնակիության քերականական իմաստը դեռևս թույլ է արտահայտված, և այդ պատճառով սրանցով կազմված բառերը հոլովվում են եզակի թվով (աւազանւոյ, գրենոյ, մանկտւոյ և այլն)։

7) Իր հիմնական գործառույթով որպես հոգնակերտ հանդես եկող –ք ածանցը, որ բառակազմական երկգործառույթ միավորների մեջ թերևս ամենից ավելի է պահպանում իր քերականական իմաստը և այդ տեսակետից մոտենում բայակերտ –ալ/–ել/–ուլ, –անալ ածանցներին։ Վերջիններիս պես նա էլ թեքված ձևերում ընկնում է, փոխարինվելով հոլովական այլ վերջավորություններով, նույնիսկ այն դեպքերում, երբ առավելապես բառակազմական գործառույթ ունի, ինչպես բայահիմքերից բայանուններ կերտելիս (զարմանք–զարմանս, ընթացք–ընթացից)։ –Ք ածանցը զուտ բառակազմական միավոր կլիներ այն դեպքում, երբ կպահպանվեր թեք հոլովներում (ինչպես այդ տեղի ունի ժամանակակից հա-

յերենում): Իսկ ուսումնասիրվող շրջանում նրա ձևակազմական-ձևաբանական արժեքը դեռևս այնքան ուժեղ էր, որ այն դուրս էր ընկնում ոչ միայն հոլովման մեջ, այլ նաև բառակազմական հետագա քայլերի ընթացքում թե՛ միայնակ հանդես գալու դեպքում (միտք-մտադիր, կուռք-կռապաշտ, արքունիք-արքունուստ), թե՛ այլ ածանցների կազմում (կոչունք-կոչնատէր, բարիք-բարեացակամ, կապանք-կապանակից, հորձանք-հորձանախոռ և այլն):

Հավաքական հոգնակերտների և -ք-ի միջև միջին դիրք է գրավում -ունք² ածանցը, որ կազմում է մի շարք գոյականների հոգնակին և միաժամանակ հավաքականության բառակազմական իմաստ ունի (արտևանունք, երիկամունք, մկանունք, խրախունք և այլն):

8) Պայմանականորեն այս խմբի մեջ կարելի է ընդգրկել նաև հոլովական վերջավորություններից առաջացած՝ մակբայակերտ արժեքով -աւ/-եաւ/-և, -իւ, -ով ածանցները, որոնք արդեն գրեթե ամբողջապես բուն ածանցների արժեք են ստացել, քանի որ դրանք կարող են միանալ ոչ միայն մաքուր, այլև ուրիշ ածանցով բաղադրված հիմքին (համառօտիւ), երկրորդային հիմքերի կազմում մասնակցել բառակազմական հետագա քայլերի (առաջեաւասուն), բառակազմական արժեքով միշտ չէ, որ ունեն համապատասխան գոյականների բուն հոլովաձևերի ձայնավորումը, բացի այդ, ունեն հնչյունական տարբերակային ձևեր -աւ/-եաւ/-և և կարող են կցվել միևնույն սերող հիմքին (դիւրաւ-դիւրով, բարեաւ-բարով, զգուշաւ-զգուշեաւ, ճեպաւ-ճեպով և այլն): Քերականական ձևույթների հետ սրանց կապում է դեռևս բավական զգալի՝ գործիական հոլովի ձևն ու իմաստը:

Որպես երկմակարդակ (երկգործառույթ) ածանցների ընդհանուր առանձնահատկություններ կարելի է նշել հետևյալը.

1) Այդ ածանցների մի մասը, հատկապես թվականակերտ և բայակերտ ածանցները օժտված են ավելի մեծ կանոնավորությամբ, հանդես են գալիս որպես տվյալ խոսքի մասի ցուցիչ և տրվում են բառերի որոշակի դասին՝ առանց բացառության, զուգորդման որոշակի կանոններով:

2) Բայածանցների և դերբայական արժեք ունեցող ածանցների դեպքում, ինչպես նշվեց, բառակազմական հիմքը մեծ մասամբ քերականական ձևավորում է ստանում:

3) Մենամակարդակ (մենագործառույթ) ածանցները նախորդում են ձևաբանական հիմքակազմ տարրերին և քերականական ձևույթներին՝ աշխարհ+ական+ացուցանեմ, երկմակարդակ ածանցները մեծ մասամբ հաջորդում են ձևաբանական հիմքակազմիչներին՝ ընթերց+իչ, ստաց+



եալ, բաղադրյալ-երկրորդային ածանցյալ հիմքերի դեպքում ձևաբանական հիմքակազմիչը հայտնվում է երկու ածանցների միջև, առաջինը՝ բուն բառակազմական, երկրորդը՝ բառակազմական-քերականական՝ աշխարհական+աց+եալ, փառաւոր+ել+ի, ընդ որում սրանց էլ իրենց հերթին կարող են հետևել բուն բառակազմական ածանցներ, հատկապես եզրային -ութիւն ածանցը՝ դառնացչութիւն, արարչութիւն, հաղորդեցչութիւն:

4) Վերը նշված խմբերի ածանցների մեջ կարելի է առանձնացնել երկու տիպ. 1) ածանցներ, որոնք ծագումով բուն քերականական են, և նրանց համար բառակազմական գործառույթը ժամանակագրական և սկզբունքային առումով երկրորդային է, այն ձեռք է բերվել հետագայում. այս տիպին են պատկանում՝ -ոյց, -ք, -ունք², -աւ/-եաւ/-և, -իւ, -ով ածանցները և 2) ածանցներ, որ ի սկզբանե իրենց մեջ զուգակցել են այդ երկու գործառույթները, դրանք են՝ առավել կանոնական և գործառական մեծ բեռնվածություն ունեցող բայածանցները, դերբայական ածանցները, թվականակերտները, ածականների համեմատական աստիճան կերտող -ագոյն ածանցը, պայմանականորեն նաև բայանվանակերտ -ումն ածանցը:

4. Ածանցների փոխակերպական արժեքը կապված է որոշակի խոսքի մաս կերտելու նրանց ունակության հետ: Բառակազմական գործընթացի հետևանքը՝ այս կամ այն խոսքի մասի կերտումը, կախված է տվյալ ածանցի բնույթից, նրա գործառական առանձնահատկություններից, և փոխանցումը մի խոսքի մասից մյուսին տեղի ունի որպես հետևանք այդ առանձնահատկության իրացման: Ընդսմին գոյություն ունի երկու դեպք. 1) բառակազմական գործընթացի արդյունքը և սերող հիմքը պատկանում են միևնույն խոսքի մասին (այսինքն սերող հիմքի խոսքիմասային պատկանելությունը համընկնում է ածանցի՝ տվյալ խոսքի մասը կերտելու գործառույթի հետ. օր.՝ գոյական+գոյականակերտ ածանց=գոյական) և 2) բառակազմական գործընթացի հետևանքով ստեղծվում է սերող հիմքից տարբեր խոսքի մաս. օր.՝ գոյական+ածականակերտ ածանց=ածական[85]:

Որպես ընդհանուր դրույթ հայագիտության մեջ ընդունված է այն կարծիքը, որ ածանցների փոխակերպական արժեքի տեսակետից հստակ տարբերակում գոյություն ունի մի կողմից՝ նախածանցների ու վերջածանցների, մյուս կողմից՝ նախածանցների տարբեր խմբերի (օր. ժխտական և ոչ ժխտական) միջև: Նշվում է, որ նախածանցները (բացի ժխտականներից) փոխակերպական գործառույթ չունեն[86]՝ ի տարբերություն վերջածանցների, որոնց տարբեր խոսքի մասեր կերտելու առանձնահատ-

կություններն այնքան ցայտուն է, որ հայ լեզվաբանության մեջ առաջ է քաշվել խոսքի մասերը նաև բառակազմական հատկանիշների հիման վրա դասակարգելու գաղափարը[87]։

Ուսումնասիրվող շրջանի գրաբարում ևս վերջածանցների մեջ հստակորեն դրսևորվում է որոշակի խոսքի մաս կերտելու և դրա հետ կապված՝ խոսքի մասերի՝ փոխանցում կատարելու գործառույթը (եթե, անշուշտ, նկատի չունենանք մի շարք եզակի և սակավ գործածություն ունեցող ածանցներ, որոնք ընդհանրապես կորցրել են իրենց գործառական ու իմաստային որոշակիությունը)։

Ինչ վերաբերում է նախածանցներին, ապա պատկերը բավական բարդ է։ Այստեղ բուն իմաստով փոխակերպական արժեք կարելի է վերագրել միայն ան$^{1}$-, ապ$^{1}$-, դժ-, տ- նախածանցներին, որոնք որոշակիորեն ածականակերտ են, տարբեր խոսքի մասերի պատկանող բոլոր սերող հիմքերից (այդ թվում նաև ածականներից) կազմում են ժխտական կամ բացասողական իմաստով ածականներ։ Ընդ որում, սերող հիմքերի խոսքիմասային բազմազանություն է դրսևորվում միայն ան$^{1}$- նախածանցի դեպքում (Գ–անդուռն, Բ–աներնկալ, Ա–անհզօր, Թ–անմի, Դ–անօքթել. վերջին երկուսը՝ մեկական օրինակով), մինչդեռ մյուս ածանցների դեպքում հանդիպում են միայն գոյականներ և ածականներ, երբեմն բայարմատներ (ապ-՝ Գ–ապերասան, դժ-՝ Ա–դժգոհ, Գ–դժմիտ, տ-՝ Գ-տգեղ, Բ–տգէտ): Հետաքրքրական յուրահատկություն է դրսևորում չ- ժխտականը և այդ առումով առանձնանում մյուսներից։ Ինչպես արդեն նշվել է, նրա բառակազմական իմաստը մոտենում է տրամաբանական ժխտմանը (A—ոչ A), որի հետևանքով այն կամ ամբողջապես ժխտում է սերող հիմքի արտահայտած հատկանիշը (չբարի, չէական, չմարդկապէս), առարկան (չժողովուրդ, չգազան, չինչ), գործողությունը (չգիտ «չգտնվելը»—ՆՀԲ), կամ ցույց է տալիս, որ սերող հիմքի արտահայտած դենոտատը կեղծ է, կամ արժանի չէ այդպես կոչվելու (չքահանա, չերէց,—«սուտ կամ անարժան քահանա, երեց», չարուեստ «վատ արվեստ», չաստուած «սուտ աստված, կուռք» և այլն)։ Այս պատճառով չ- նախածանցով կազմությունների խոսքիմասային պատկանելությունը պայմանավորված է սերող հիմքով, այսինքն ածանցը փոխակերպական գործառույթ չունի։

Նույնքան որոշակիորեն փոխակերպական գործառույթը բացառվում է նաև հունաբան դպրոցի կերտած նախածանցների դեպքում, եթե սերող հիմքը պատրաստի բայ է (անորոշ դերբայ)՝ քայլել–անդրաքայլել, ճառել–արտաճառել, մերժել–բացամերժել, բոչել–վերաբոչել և այլն։



Մնացած բոլոր դեպքերում թե՛ նախդիր-նախածանցները, թե՛ հունաբան դպրոցի ստեղծած նախածանցները փոխակերպական գործառույթի տեսակետից որոշակի օրինաչափության չեն ենթարկվում։ Դրանցից առաջիններով, ինչպես նշվել է, մեծ մասամբ քարացած կազմություններ են պահպանվել, որոնք ներկայացնում են լեզվի զարգացման ավելի վաղ շրջանի օրինաչափությունների հետքերը, իսկ երկրորդները հանդիպում են առավելապես պատճենումների մեջ և կարող են արտացոլել փոխատու լեզվի, տվյալ դեպքում հունարենի բառակազմական օրինաչափությունները։

Սակայն փոխակերպական գործառույթի ոչ միանշանակության մեջ ամենակարևոր դերը խաղում է այն հանգամանքը, որ նշված տիպի ածանցները առավելագույն չափով դրսևորում են բառային միավորների հատկությունները՝ կարող են հանդես գալ որպես անկախ բառեր (նախ, գեր, վեր) կամ որպես արմատ այլ բառերի կազմում (նախագոյն, անբադալ), պահպանել են բառային իմաստի տարրեր, շատ դեպքերում դեռևս ձեռք չեն բերել բառակազմական իմաստի լիակատար ձևականացում և զուտ ածանցական գործառույթ։ Այդ պատճառով էլ, ինչպես բառաբարդման դեպքում բառակազմության արդյունքի խոսքիմասային պատկանելությունը կախված էր ոչ թե առաջին կամ երկրորդ բաղադրիչից առանձին վերցրած, այլ ամբողջ կաղապարի կառուցվածքից, այնպես էլ այստեղ նախածանցավոր կազմությունների խոսքիմասային պատկանելությունը կախված է ամբողջ կառույցից և կարող է համընկնել կամ չհամընկնել սերող հիմքին (որ համապատասխանում է բարդությունների երկրորդ բաղադրիչին)։ Ընդ որում, եթե բառաբարդման ժամանակ բաղադրիչների խոսքիմասային պատկանելությունը հայտնի է, և որոշակի համակցությունների դեպքում կարելի է որոշել նաև ամբողջ կազմության կարգային բնութագիրը, ապա այստեղ առաջին բաղադրիչն, այնուամենայնիվ, խոսքի մաս չէ, հետևաբար դժվար է գուշակել, թե տվյալ ածանցի դեպքում ինչ խոսքի մաս կարող է կերտվել. օր.՝ գոյական հիմքերից սերված միևնույն ածանցով բառերը առձեռն (Ա, Մ), առբերան (Գ), առժամանակ (Գ, Մ) կարող են պատկանել միանգամայն տարբեր խոսքի մասերի (հմմտ. նաև բայական հիմքերից՝ նախաբոյս—Ա, նախագիծ—Ա, Գ, նախադիր—Գ)։

Այսպիսով, ուսումնասիրվող շրջանում նախածանցներից միայն ան$^{1}$-, ապ(ա)$^{1}$-, դժ-, տ- ժխտականներն ունեն որոշակի խոսքի մաս կերտելու և դրա հետ կապված՝ փոխակերպական գործառույթ։ Զ- նախածանցի և նախածանցավոր բայերի դեպքում բաղադրության խոսքիմասային բնու-

թագիրը կախված է սերող հիմքից: Մնացած դեպքերում խոսքի մասերի կերտման որոշակի օրինաչափություններ չեն հաստատվում, և բաղադրության խոսքիմասային պատկանելությունը «անհատական» բնույթ ունի յուրաքանչյուր կոնկրետ դեպքի համար:

Վերջածանցների դեպքում, ինչպես նշվեց, կարելի է պարզել խոսքի մասերի կերտման և փոխանցման ավելի հստակ օրինաչափություններ, քանի որ հայերենում (ինչպես և հ.-ե. լեզուների մեծամասնության մեջ) բառավերջը ձևաբանական ինֆորմացիայի կրողն է, թեև բառի ուղիղ ձևը միայն բայերի դեպքում է քերականորեն նշույթավորված: Այնուամենայնիվ, հայերենի նկատմամբ ևս կիրառելի է այն դրույթը, որ «վերջածանցը... հիմքի բառիմաստի հետ միասին որոշ չափով կանխորոշում է նաև նրա ձևաբանական բնութագիրը»[88], առաջին հերթին, բնականաբար, նրա խոսքիմասային պատկանելությունը:

Նկատի ունենալով միայն լիիմաստ խոսքի մասերը (քանի որ այսպես կոչված օժանդակ խոսքի մասերով ածանցավոր կազմությունները եզակի են), կարելի է նշել ածանցման ժամանակ խոսքի մասերի կերտման հետևյալ հնարավոր կաղապարները.

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | Գ → Գ | Ա → Գ | Թ → Գ | Դ → Գ | Բ → Գ | Մ → Գ |
| 2. | Գ → Ա | Ա → Ա | Թ → Ա | Դ → Ա | Բ → Ա | Մ → Ա |
| 3. | Գ → Թ | Ա → Թ | Թ → Թ | Դ → Թ | Բ → Թ | Մ → Թ |
| 4. | Գ → Դ | Ա → Դ | Թ → Դ | Դ → Դ | Բ → Դ | Մ → Դ |
| 5. | Գ → Բ | Ա → Բ | Թ → Բ | Դ → Բ | Բ → Բ | Մ → Բ |
| 6. | Գ → Մ | Ա → Մ | Թ → Մ | Դ → Մ | Բ → Մ | Մ → Մ |

Նշված 36 կաղապարներից հայերենի համար բացառվում են 12-ը՝ Մ → Գ, Գ → Թ, Ա → Թ, Դ → Թ, Բ → Թ, Մ → Թ և Գ → Դ, Ա → Դ, Թ → Դ, Դ → Դ, Բ → Դ, Մ → Դ կաղապարները, քանի որ թվականներ կարող են կազմվել միայն թվական սերող հիմքերից, ընդ որում դրանք ներփակ դաս կազմող քարացած կազմություններ են, իսկ դերանուններն ընդհանրապես ներկայացված են անբաղադիր կամ պարզեցման ենթարկված հիմքերով, ժառանգված են հնագույն անցյալից և այլևս նորանոր անդամներով չեն հարստանում, թեև իրենք սահմանափակ չափով կարող են մասնակցել բառակազմական հետագա քայլերի, հանդես գալով որպես սերող հիմքեր: Մ → Գ կաղապարի իրացումներ չկան, քանի որ մակբայի գոյականացումը հնարավոր չէ առանց նախնական Մ → Ա անցման, որ հիմնականում կատարվում է առանց բառակազմական տարրերի հավելման (զուտ կոնվերսիայի ձևով):



Իրացվող կաղապարների մեջ տարբերակվում են այն դեպքերը, երբ սերող հիմքը պահպանում է իր խոսքիմասային արժեքը (դրանք 5-ն են՝ Գ → Գ, Ա → Ա, Թ → Թ, Բ → Բ, Մ → Մ) և այն դեպքերը, երբ տեղի են ունենում խոսքիմասային փոխանցումներ (մնացած 19 կաղապարները):

Ածանցման արդյունքում ստացվող խոսքի մասին համապատասխան հայագիտության մեջ ընդունված է վերջածանցները բաժանել հետևյալ տիպերի՝ գոյականակերտ, ածականակերտ, թվականակերտ, բայակերտ, մակբայակերտ: Ստորև բերվող աղյուսակների շարքը ներկայացնում է գրաբարի վերջածանցների փոխակերպական արժեքը՝ ըստ վերը նշված ածանցատիպերի: Աղյուսակների վերաբերյալ անհրաժեշտ է նշել հետևյալը.

1. ածանցներն աղյուսակներում խմբավորված են ըստ նրանցով կերտվող խոսքի մասերի, յուրաքանչյուր խմբում ածանցները դասավորված են այբբենական կարգով:

2. Աղյուսակներում տեղ չեն գտել իրենց իմաստագործառական որոշակիությունը կորցրած եզակի, ոչ գործուն, անարդյունավետ, ինչպես նաև տվյալ ժամանակաշրջանի համար բացահայտորեն փոխառյալ ածանցները (-բար, -իքայ, -իտ և այլն):

3. Սերող հիմքերի խոսքիմասային պատկանելության որոշման ժամանակ առաջնորդվել ենք հիմքակազմության և բարդությունների բաղադրիչների քննության ընթացքում առաջ քաշված սկզբունքներով:

4. Զգալի դժվարություններ ունի ածանցների համանունության, գործառական բազմարժեքության (տարբեր խոսքի մասեր կերտելու) և խոսքիմասային հետագա փոխանցումների ներկայացումը: Այդ դեպքերի համար ընդունվում են հետևյալ սկզբունքները.

ա) Տարբեր խոսքի մասեր կերտող համանուն ածանցները (-անի$^{1}$, -անի$^{2}$, -իկ$^{1}$, -իկ$^{2}$ և այլն) բերվում են տարբեր աղյուսակներում իրենց համապատասխան թվային ցուցիչներով: Տարբեր խոսքի մասեր կերտող միևնույն ածանցը (-ակ$^{2}$, -իչ) բերվում է նրանով կերտվող յուրաքանչյուր խոսքի մասի աղյուսակում. այն դեպքերում, երբ հնարավոր է տարբերակել հիմնական և երկրորդական գործառույթները, հիմնական աղյուսակում ածանցը նշվում է առանց փակագծերի, մնացածներում՝ փակագծերով: Ընդհանուր քանակի որոշման ժամանակ փակագծի մեջ եղածները չեն հաշվվում:

բ) Եթե բառակազմության արդյունքում ստացված բառերը կարող են պատկանել նաև այլ խոսքի մասի, դրանք նշվում են մեկ հիմնական

աղյուսակում՝ օժտվելով երկրորդային գործառության խոսքիմասային ցուցիչով. օր. լալկան բերվում է ածականակերտ ածանցների աղյուսակում, Գ ցուցիչով (լալական[Գ]). այդ նշանակում է, որ բառը կարող է գոյականի արժեք ստացած լինել ոչ թե բառակազմության ընթացքում, այլ հետագայում, որպես պատրաստի կառույց:

գ) Դերբայակերտ ածանցները որոշակի վերապահությամբ բաշխվում են գոյականակերտ և ածականակերտ ածանցների աղյուսակներում՝ համապատասխան Դբ ցուցիչով (բնականաբար դերբայը որպես խոսքի մաս չի առանձնացվում, իսկ բուն բայակերտների մեջ բերելը նպատակահարմար չէ, քանի որ այստեղ կանտեսվեր ածանցների փոխակերպական արժեքը և նրանցով կազմված բաղադրությունների հետագա գոյականացման կամ ածականացման երևույթը):

5. Թվականակերտ ածանցների համար աղյուսակ չի կազմվում, քանի որ նախ՝ դրանք հանդիպում են միայն անփոփոխակերպ կաղապարներում և ապա, բացի քանակական, դասական և անձներական թվականների տիպերից, թվական սերող հիմքով այլ ածանցավոր կազմությունները (երկական, երեքկին, հազարեան) սովորաբար թվականների մեջ չեն մտցվում և բաշխվում են այլ խոսքի մասերի վրա: Այսպիսով, բուն թվականակերտ ածանցներն են՝ -(ա)սուն (քառասուն), -երեակ (եօթներեակ), -երիր (վեցերիր), -(ե)րորդ (չորրորդ, հինգերորդ), -եքեան/-եքին (երկոքեան/երկոքին):

6. Աղյուսակներում բերվող օրինակների սերող հիմքերը հիմնականում անբաղադիր սկզբնահիմքեր են. երկրորդային բաղադրյալ հիմքեր բերվում են միայն սակավ դեպքերում, եթե սկզբնահիմքով բնորոշ օրինակներ վկայված չեն: Բայերի դեպքում բնականաբար գործ ունենք կապված սկզբնահիմքերի հետ՝ եզակի բացառություններով՝ լռել(եայն):

7. Յուրաքանչյուր աղյուսակում տարբերակվում են փոխակերպական և անփոփոխակերպ կաղապարներ: Բառակազմական քննության մեջ ևս կիրառելով արժույթի գաղափարը, կարող ենք ասել, որ անփոփոխակերպ կաղապարի դեպքում ածանցը 0 արժույթ ունի (այսինքն՝ խոսքիմասային փոխակերպում չի կատարում): Աղյուսակի վերջին սյունակի արժույթի ցուցիչը կախված է փոխակերպվող խոսքի մասերի քանակից: Նշենք ի դեպ, որ ածանցների զգալի մասը կարող է հանդես գալ և՛ անփոփոխակերպ, և՛ փոխակերպական կաղապարներում: Այս դեպքում արժույթի ցուցիչը կաղապարների ընդհանուր թվից մեկով պակաս է (հմմտ. -ութիւն, -արար ածանցները):





| Գոյականակերտ վերջածանցներ | Անփոփոխակերպ կաղապար | Փոխակերպական կաղապարներ | | | | Արժույթը (փոխակերպումների քանակը) |
|---|---|---|---|---|---|---|
| | Գ → Գ | Ա → Գ | Թ → Գ | Դ → Գ | Բ → Գ | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| -ած | — | — | — | — | կառուցած | 1 |
| -ուած | — | — | — | — | դրօշուած | 1 |
| -ակ[1] | աղիւսակ | — | — | — | — | 0 |
| -ակ[2] | բուսակ | — | երկակ | որակ | հրաւիրակ[Ա] | 3 |
| -ական | վաշտական | — | — | — | գուժկան | 1 |
| -ան[1] | մասն | — | — | — | փական | 1 |
| -ան[2] | ձիան | — | — | — | — | 0 |
| -անակ | ժամանակ | — | — | — | յաղթանակ | 1 |
| -անի[2] | քաղաքանի | — | — | — | — | 0 |
| -անոց | արուեստանոց | հիւանդանոց | — | — | արձականոց | 2 |
| -անք[1] | մեղանք | — | — | — | գարհու-բանք | 1 |
| -(ա)պան | բանտապան | — | — | — | — | 0 |
| -աստան | կուսաստան | հեռաստան | — | — | — | 1 |
| -ատ | ակնատ | բացատ | — | — | ջոկատ | 2 |
| -ար | փողար | — | — | — | պատահար | 1 |
| -արան | գանձարան | սրբարան | — | — | անցարան | 2 |
| -ացի/-եցի[2] | բաբելացի | — | — | — | — | 0 |
| -ուոր | գինուոր | — | — | — | — | 0 |
| (եալ)[Դբ] | — | — | — | — | առաքեալ | (1) |
| -եակ | խշտեակ | — | հնգեակ[Թ] | ինքնեակ | սպասեակ | 3 |
| (-եան[1]) | — | — | — | — | կայեան | (1) |
| -եան[2] | բերդեան | — | — | — | — | 0 |
| -եար | բանեար | — | — | — | — | 0 |
| -ենի[1] | արմաւենի | — | — | — | — | 0 |
| -ենի[2] | գայլենի | — | — | — | — | 0 |
| (-եքեան/ -եքին) | — | — | — | բոլորեքեան | — | (1) |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
|---|---|---|---|---|---|---|
| -ի² | ծիրանի | — | — | — | — | 0 |
| -իկ¹ | գատրիկ | — | — | — | — | 0 |
| -իճ | կորկոտիճ | գառնիճ | — | — | ուտիճ | 2 |
| -ինք | գահինք | — | — | — | նախատինք | 1 |
| -իչ | — | — | — | — | բնակիչ | 1 |
| -իւն | — | — | — | — | գոչիւն | 1 |
| -իք¹ | հարսանիք | — | — | — | գրուատիք | 1 |
| -իք² | — | — | — | — | սպառնալիք | 1 |
| -ող¹ | — | — | — | — | արարող[Ա, Դր] | 1 |
| -ոյթ | ձանձրոյթ | աւպոյթ | — | — | երևելոյթ | 2 |
| -ոյց | — | — | — | — | ցասոյց | 1 |
| -ոյք | գործոյք | — | — | — | բաշխոյք | 1 |
| -որայ | արտորայ | — | — | — | — | 0 |
| -որդ | այգորդ | աւելորդ | — | — | մնացորդ | 2 |
| -ոց¹ | ծաղկոց | ամբոց | — | — | արգելոց | 2 |
| -ոց² | — | — | — | — | խայթոց | 1 |
| -ութիւն | աստուածութիւն | ագահութիւն | միութիւն | իւրութիւն | մրցութիւն | 4 |
| -ուկ¹ | այրուկ | — | — | — | — | 0 |
| -ուկ² | մեղրուկ | — | — | — | — | 0 |
| -ուկ³ | ջերմուկ | — | — | — | հարցուկ[Ա] | 1 |
| -ուհի | քրմուհի | արդարուհի | — | — | — | 1 |
| -ումն | — | — | — | — | գրաւումն | 1 |
| -ունդ | — | — | — | — | ծնունդ | 1 |
| -ունք¹ | հրաշունք | բարձունք | — | — | կոչունք | 2 |
| -ունք² | մկանունք | — | — | — | — | 0 |
| -ուչ | — | — | — | — | ընկալուչ | 1 |
| -ուստ¹ | — | — | — | — | ապրուստ | 1 |
| -ուրդ | ժողովուրդ | — | — | — | խորհուրդ | 1 |
| -ուց | — | նեղուց | — | — | կիզուց | 2 |
| -ուցք | — | լայնուցք | — | — | մոլուցք | 2 |
| -ուք | — | — | — | — | այրուք | 1 |
| -ստ | — | — | — | — | պահեստ | 1 |
| -ք | արգասիք | բարիք | — | — | աւետիք | 2 |





| Ածականակերտ վերջածանցներ | Անփոխակերպ կաղապար | Փոխակերպական կաղապարներ | | | | | Արդյունքը (փոխակերպական կաղապարների քանակը) |
|---|---|---|---|---|---|---|---|
| | Ա → Ա | Գ → Ա | Թ → Ա | Դ → Ա | Բ → Ա | Մ → Ա | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| -ագար | — | խելագար | — | — | — | — | 1 |
| -(ա)գին | գուարթագին | ուժգին | — | — | տառապագին | — | 2 |
| -ագոյն | ագահագոյն | առիւծագոյն | — | ինքնագոյն | իմացագոյն | զկնիագոյն[Մ] | 4 |
| -ագան | որբագան | աստուածագան | — | ամենագան | — | — | 2 |
| (-ած) | — | — | — | — | կատաղած<br>անկած[Գ] | — | (1) |
| -ածոյ | — | — | — | — | կոփածոյ | — | 1 |
| -ուածոյ | — | — | — | — | մանուածոյ | — | 1 |
| -ակ² | անուշակ | կամակ | — | — | բուժակ | — | 2 |
| -ական | ազատական | արքայական | երկական | խմոյական | լալական[Գ] | յանկարծական | 5 |
| (-կան) | — | բժկան | — | — | — | — | (1) |
| -ակար | — | վնասակար<br>կամակար[Մ] | — | — | — | — | 1 |
| -ային | ամբարձային | աշնանային | — | մերային | — | — | 2 |
| (-այն) | | — | միայն[Մ] | ամենայն | — | — | (2) |
| -անի¹ | — | լեզուանի | — | — | — | — | 1 |
| -անուտ | — | — | — | — | հոտանուտ | — | 1 |
| -ատ² | կրճատ | ականջատ | — | — | — | — | 1 |
| -արէն/-երէն | յունարէն | օրէնսերէն | — | — | — | — | 1 |
| -ացու | ապականացու | մահացու | — | — | — | — | 1 |
| -աւէտ | ուրախաւէտ | ծաղկաւէտ | — | — | — | — | 1 |
| -աւոր | — | կամարաւոր | եօթնաւոր | — | զգայաւոր | — | 3 |



23—442

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|---|---|---|---|---|---|---|---|
| -եալ | բարձրեալ | — | — | — | անիծեալ[Դր] | — | 1 |
| -եայ | — | կաշեայ | — | — | — | — | 1 |
| -եան¹ | — | եզեմեան | հազարեան | — | — | — | 2 |
| -եղ | — | հանճարեղ | — | — | — | արագեղ | 2 |
| -եղէն | — | արծաթեղէն | — | — | — | — | 1 |
| -ենի³ | քաղցրենի | հայրենի | — | — | — | — | 1 |
| -եցիկ | — | գեղեցիկ | — | — | — | — | 1 |
| -ի¹ | դալարի | ազգի | — | — | — | — | 1 |
| -ի³ | — | — | — | — | ըղձալի[Դր] | — | 1 |
| -իկ² | հանդարտիկ[Մ] | տոհմիկ | — | — | մուրացիկ[Գ] | — | 2 |
| -ին | դժուարին | առաւօտին | (երկքին[Թ]) | իւրոյին | — | — | 3 |
| -իչ | — | — | — | — | զօրացուցիչ | — | 1 |
| -կէն | — | կոճկէն | — | — | — | — | 1 |
| -կոտ | դանդաղկոտ | վախկոտ | — | — | զայրացկոտ | — | 2 |
| -նի | յայտնի | — | — | — | — | գաղտնի[Մ] | 1 |
| -ող² | աջող | — | — | — | — | — | 0 |
| -ոյ | աջոյ | ազգոյ | — | — | եփոյ | առաջոյ | 3 |
| -ոտ | հիւանդոտ | խնամոտ | — | — | թափառոտ | — | 2 |
| -ու¹ | — | — | — | — | հատու | — | 1 |
| -ուկ³ | ողորմուկ | — | — | — | առուկ | — | 1 |
| -ուն | խաղաղուն | խոհուն | — | — | աճուն | — | 2 |
| -ունակ | նմանունակ | լուսունակ | քառունակ | մերունակ | բնակունակ | նախունակ | 5 |
| -ունի | ծերունի[Գ] | արքունի | — | — | — | — | 1 |
| -ուչ | — | — | — | — | վայելուչ | — | 1 |
| -ուտ | ծանծաղուտ | ապառաժուտ | — | — | — | — | 1 |



Աղյուսակ 12Դ

| Բայակերտ վերջածանցներ | Անփոփոխակերպ կաղապար | Փոխակերպական կաղապարներ | | | | | Արդյունք (փոխակերպումների քանակը) |
|---|---|---|---|---|---|---|---|
| | Բ → Բ | Գ → Բ | Ա → Բ | Թ → Բ | Դ → Բ | Մ → Բ | |
| ան + ալ | գոյանամ | առիւծանամ | պատառանամ | միանամ | այլանամ | յաւէժանամ | 5 |
| -լ(-ալ/-ել/-ուլ) | բերեմ | գթամ | աներեւութիմ | երկրորդեմ | — | կրկնեմ | 4 |

Աղյուսակ 12Ե

| Մակբայակերտ վերջածանցներ | Անփոփոխակերպ կաղապար | Փոխակերպական կաղապարներ | | | | | Արդյունք (փոխակերպումների քանակը) |
|---|---|---|---|---|---|---|---|
| | Մ → Մ | Գ → Մ | Ա → Մ | Թ → Մ | Դ → Մ | Բ → Մ | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| -աբար | երագաբար | աստուածաբար | առատաբար | միաբար | այլաբար | մոռացաբար | 5 |
| -ակի | յանկարծակի | կողմնակի | ուղղակի | հնգակի | — | երեակի | 4 |
| -այն | — | գիշերայն | — | միայն | — | — | 2 |
| -այնի | — | ամարայնի | — | — | — | — | 1 |
| -անակի | — | — | փութանակի | — | — | — | 1 |
| -անօր | աստանօր | — | — | — | — | — | 0 |
| -ապատիկ | — | — | հոլովապատիկ | հարիւրապատիկ | ամենապատիկ | — | 3 |
| -ապէս | — | եղբայրապէս | լիապէս | միապէս | այդպէս | — | 4 |
| -ացի/-եցի¹ | — | այրացի | արդարացի | — | — | — | 2 |
| -աւ | — | հրապարակաւ | դժուարաւ | — | — | — | 2 |
| -եայն | — | — | — | — | — | յոելեայն | 1 |
| (-եան) | յաւիտեան | — | — | — | — | — | (0) |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|---|---|---|---|---|---|---|---|
| -եաւ | — | — | դիւրեաւ | — | — | — | 1 |
| -եկին | — | — | — | եօթնեկին | — | — | 1 |
| -եմն | երբեմն | | — | — | — | — | 0 |
| -էն | աստէն | նկարէն | — | ինձէն | — | — | 2 |
| -և | — | առաջև | արդարև | — | — | — | 2 |
| (-ին) | ատին | — | — | — | — | — | (0) |
| -իցս | — | — | զուգիցս | երիցս | քանիցս | — | 3 |
| -իւ | — | սաստիւ | խստիւ | — | — | — | 2 |
| -կին | — | — | — | երեքկին | — | — | 1 |
| -ոյն | — | գիշերոյն | — | — | ձեզոյն | — | 2 |
| -ով | — | ձեպով | ճշդով | — | — | — | 2 |
| -ովին | — | երամովին | կարճո-վին | — | իւրովին | — | 3 |
| -ու² | այժմու | առաւօտու | աջու | — | — | — | 2 |
| -ուստ² | վերուստ | աստուա-ծուստ | օտա-րուստ | — | ամե-նուստ | — | 3 |
| -ուց¹ | վաղուց | այգուց | — | — | — | — | 1 |
| -ս | արտաքս | — | յոլովս | — | — | — | 1 |
| -սամն | — | — | — | — | իմով-սամն | — | 1 |
| -օրէն | — | արքայօրէն | ազատ-օրէն | — | ինքնօրէն | — | 3 |

Աղյուսակների քննությունից կարելի է անել հետևյալ եզրակացությունները։

1) Անփոխակերպ կաղապարները հատուկ են առավելապես գոյականակերտ և թվականակերտ ածանցներին։

2) Սերող հիմքերի մեջ գործառական բեռնվածությամբ բացարձակ գերակշռություն ունի գոյականը, մյուս խոսքի մասերը դասավորվում են բայ, ածական, թվական, դերանուն, մակբայ հաջորդականությամբ, ընդ որում, վերջին երեքը մեծապես զիջում են առաջին երկուսին։

3) Թվական և դերանուն սերող հիմքերից առավելապես կազմվում են թվականներ և մակբայներ, հազվադեպ է նրանց գոյականացումն ու ածականացումը։



4) Բոլոր խոսքի մասերի մեջ գերակշռում են մեներժույթ ածանցները։

5) Արժույթի առավելագույն արժեքով բնորոշվում են հիմնականում գործածման մեծ հաճախականություն ունեցող ածանցները. **–աբար**, –ական, –լ (–ել/–ալ/–ոլ)՝ 5, –անալ, –ագույն, –ապէս, –ություն՝ 4, –ակ², -եակ, –աւոր, –ին, –ոյ, –իցս՝ 3։ Բացառություն են կազմում ոչ այնքան արդյունավետ –ունակ՝ հնգարժույթ և –(ա)պատիկ, –ովին, –ուստ եռարժույթ ածանցները։

Յուրաքանչյուր խոսքի մաս կերտող ածանցների քանակի և արժույթի փոխհարաբերությունն արտացոլված է հետևյալ աղյուսակում։

Աղյուսակ 13

| Արժույթ | Վերջածանցներ | | | | |
|---|---|---|---|---|---|
| | գոյականա-կերտ | ածականա-կերտ | թվականա-կերտ | բայա-կերտ | մակբայա-կերտ |
| 0 | 16 | 1 | 5 | 0 | 2 |
| 1 | 26 | 24 | 0 | 0 | 9 |
| 2 | 11 | 11 | 0 | 0 | 9 |
| 3 | 2 | 3 | 0 | 0 | 4 |
| 4 | 1 | 1 | 0 | 1 | 2 |
| 5 | 0 | 2 | 0 | 1 | 1 |
| Ածանցների ընդհանուր քանակը | 56 | 42 | 5 | 2 | 28 |
| Միջին արժույթը | 1,0 | 1,6 | 0 | 4,5 | 2,0 |

Այսպիսով, փոխակերպական արժեքի տեսակետից վերջածանցները դասավորվում են հետևյալ հաջորդականությամբ՝ բայակերտ, մակբայակերտ, ածականակերտ, գոյականակերտ։

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*V դարի գրաբարի բառակազմական համակարգի քննությունը բերում է հետևյալ եզրակացությունների։*

*1. Հին գրական հայերենը սկզբնավորման շրջանից իսկ ունեցել է նոր բառեր կերտելու հարուստ և բազմազան հնարավորություններ։ Բառակազմության համակարգում գործում են բառակազմական երկու հիմնական եղանակները՝ բառաբարդում և ածանցում (այդ թվում նախածանցում և վերջածանցում), ինչպես նաև սահմանափակ կիրառությամբ՝ այդ երկու եղանակների զուգորդումը։ Ի տարբերություն մյուս խոսքի մասերի՝ բառակազմական յուրահատկություններ է դրսևորում բայակազմությունը։*

*2. Մեր ընտրանքում ամփոփված՝ V դարի բաղադրյալ բառերի ամբողջությունը բացահայտված բառակազմական եղանակների և կաղապարների միջև բաշխվում է անհավասարաչափ։ Ամենից ավելի բազմազան և արդյունավետ են վերջածանցման կաղապարները, այնուհետև համապատասխան հաջորդականությամբ գալիս են բառաբարդման, բայակազմական, նախածանցման և խառը տիպի կաղապարները։ Բառակազմական եղանակների ու կաղապարների գործառական բեռնվածության հարաբերակցությունն արտացոլված է հետևյալ ամփոփիչ աղյուսակում.*

Աղյուսակ 14

| № | Բառակազմական եղանակը | Կաղապարների քանակը | Իրացումների քանակը | Տոկոսը |
|---|---|---|---|---|
| 1 | Բառաբարդում | 24 | 7346 | 31,8 |
| 2 | Նախածանցում | 20 | 1547 | 6,7 |
| 3 | Վերջածանցում | 40 | 10761 | 46,5 |
| 4 | Խառը տիպ | 14 | 382 | 1,7 |
| 5 | Բայակազմություն | 32 | 3078 | 13,3 |
| | Ընդամենը | 130 | 23114 | 100 |



*Եթե բայակազմությունը բաշխենք բառաբարդման, ածանցման և խառը տիպերի միջև, կունենանք հետևյալ պատկերը.*

Աղյուսակ 15

| № | Բառակազմական եղանակը | Կաղապարների քանակը | Իրացումների քանակը | Տոկոսը |
|---|---|---|---|---|
| 1 | Բառաբարդում | 26 | 7362 | 31,8 |
| 2 | Նախածանցում | 25 | 1828 | 7,9 |
| 3 | Վերջածանցում | 52 | 13468 | 58,3 |
| 4 | Խառը տիպ | 17 | 455 | 1,9 |
| | Ընդամենը | 130 | 23114 | 100 |

*Այսպիսով, բառակազմական կաղապարների մեջ բացարձակ գերակշռությունը պատկանում է վերջածանցմանը, իսկ բառաբարդման և ամբողջությամբ վերցրած ածանցման տոկոսային հարաբերությունն է 31,8 և 68,2։*

*3. Կաղապարի կառուցվածքի և նրա իրացման հարաբերության քննությունից պարզվում է, որ որքան բարդ է կաղապարն իր կառուցվածքով, այնքան նվազում է նրա կոնկրետ իրացումների հնարավորությունը։ Բաղադրյալ բառերի ամբողջության ճնշող մեծամասնությունը բաշխվում է պարզագույն երկբաղադրիչ* aS, Sa, SS, *եռաբաղադրիչ* (Sa)a, SjS *կաղապարների վրա։ Ամենաբարդ կառուցվածքի կաղապարները բաղկացած են 6—7 բաղադրիչից և ունեն յուրաքանչյուրը 1—2-ական իրացում. այսպես, բառաբարդման մեջ՝* $[(S^{f}\underline{a})jS]jS$ *— արարչագործակից,* $\{[(Sa)\underline{a}]a\}jS$*—մշտնջենաւորակոյս, նախածանցման մեջ՝* $a\{a[(aj\underline{S}^{f})a]\}$ *—աններստորադրական,* $a\{[(Sa)j\underline{S}]^{f}a\}$*—անիմաստասիրելի,* $a[(\underline{S}a)j(\underline{S}a)]$*—ներշրջանապտոյտ, վերջածանցման մեջ՝* $\{[(S^{f}\underline{a})j(SjS)]\}a$*—արարչակերտագործութիւն,* $[(a\underline{S})j(SjS^{f})]a$*—ընդդիմայարակայումն, խառը տիպի մեջ՝* $(Sa)j(Sa)a$*—սակաւաժամանակեան, բայակազմության մեջ՝* $\{[(\underline{S}a)\underline{a}]a\}(a+a)$*—մշտնջենաւորանամ,* $\{a[Sj(Sa)]\}(a+a)$*—չմարդահաճոյանամ։*

*4. Բառակազմական նվազագույն միավորների քննությունից պարզվում է, որ բառակազմական համակարգում կարևոր դեր են կատարում առաջնային սերող հիմքերը կամ սկզբնահիմքերը, որոնք հանդես են գալիս յուրահատուկ հիմքակազմական ձևավորմամբ՝ դրսևորելով որոշակի*

հարաբերակցություն ձևաբանական հարացույցների անդամների հետ: Մեր ընտրանքում բացահայտված է անվանական հիմքերի 8 և բայական հիմքերի 10 տարատեսակություն (չհաշված ուղիղ ձևը և զուտ հնչյունական-հնչյունափոխական զանազանությունները): Բառակազմական կաղապարներում այնպիսի «մաքուր» հիմքերի առկայությունը, որոնք չեն պահպանվել հարացուցային շարքերի մեջ, վկայում է այդ կաղապարների խորագույն հնության մասին: Այդ դեպքերից են բայարմատի լիաձայն տարբերակի (գեղջ, բրիչ, լիր, կտուր, ջինջ, շուփ, բուղխ, լոյծ, խոյզ և այլն) տարահիմք և տարարմատ խոնարհում ունեցող բայերի դեպքում կատարյալի հիմքի (կալ, բարձ, դարձ, առ, արար, տու, լու, կեր, եղ և այլն) հանդես գալը, ազատ արմատում ընկած հիմնային ձայնավորների պահպանումը բառակազմության մեջ (կարօգին, ընդոծին, տանուտէր, ճնգետասան) և այլն: Արմատի լիաձայնության կորուստը կամ ներկայի և անցյալի հիմքերի տարբերակումը (դառն-դարձ) ձևաբանական հարացույցում հետագայում կատարված հնչյունական փոփոխությունների արդյունք են (դարձ-եամ>դառնամ և այլն):

Բառակազմական (տվյալ դեպքում բառաբարդման) կաղապարների խոր հնության վկայությունն է նաև հոդակապի առկայությունը, որը, լինելով նախկին հիմնային ձայնավոր, որպես հոդակապ սկսում է գիտակցվել միայն բառավերջում հիմնային ձայնավորների անկումից և բառամիջում որպես հոդակապ կամ ածանցին հարող մաս վերաիմաստավորվելուց հետո:

5. Բառակազմական նվազագույն միավորների միջև եղած համակարգային հարաբերությունների քննությունը ցույց է տալիս, որ ուսումնասիրվող ժամանակաշրջանում խոսողների գիտակցության մեջ կենդանի և գործուն են ոչ միայն բառակազմական կաղապարները որպես վերացական սխեմաներ, այլև բառակազմական միավորների ողջ ինվենտարը՝ ինչպես երկրորդական, այնպես էլ հիմնական ձևույթները: Այդ մասին են վկայում հատկապես հիմքերի տարբերակների ազատ ընտրության հնարավորությունները (ակնառու-աչառու, ձեռնակերտ-ձեռակերտ, դիցազն-դիւցազուն, ջեռոտ-ջերմնոտ), նորակազմ բառերի, մանավորապես հունաբան դպրոցի բառապատճենումների մեջ անկախ գոյություն չունեցող բայաձևերը որպես սկզբնահիմք օգտագործելը (առադրեմ, առանցեմ, առարկեմ, ճակադարձիմ, պարատեսեմ, օրագայիմ, բացատրեմ, ստորիջեմ), սերող հիմքը ոչ թե ուղիղ, այլ թեքված ձևով վերցնելը (ատեղաբաշխ, դիցապաշտ, կանանցածին, կայսերական, գեղջուկ), հարացույցների մեջ առանձին չվկայված լիաձայն բայարմատների (աղբիւրաբուղխ,



ճաճանչաւախտ, ամպաշուփ, աշխարհապատում, խոռանաչու) և հարացուցային այս կամ այն անդամին համընկնող ձևերի (անզգամ, արքռակալ, թողլիք, զգայական) օգտագործումը, բառակազմության մեջ կիրառվող հարացուցային ձևերի քերականական իմաստների գրեթե բացարձակ կորուստը (հմմտ. անունադրութիւն-անուանադրութիւն, սերմնական-սերմանական, քաղցրենի-քաղցունենի) և այլն: Այդ նշանակում է, որ հիմքակազմական այդ տարբերակները բառակազմական համակարգում գոյություն ունեն որպես առանձին կերպով գիտակցվող կառուցող (կոնստրուկտիվ) միավորներ, ճիշտ այնպես, ինչպես առանձին կառուցվածքային միավոր են գիտակցվում ածանցներն ու անկախ արմատները:

6. Բառակազմական կաղապարների իրացումների մեջ հանդես եկող տարրերի գործառական բեռնվածության և արդյունավետության քննությունը, ինչպես նաև բառակազմությանը մասնակցող գործուն տարրերի և դեռևս տրոհելի, բայց բառակազմական գործառույթը կորցրած ձևերի համեմատությունը ցույց է տալիս, որ մի կողմից, նշված շրջանի գրաբարում, ինչպես և յուրաքանչյուր լեզվի որևէ ժամանակագրական կտրվածքում, գոյակցում են տարաժամանակյա ծագում ունեցող երևույթներ՝ գործուն և արդյունավետ բառակազմական միավորների կողքին կան «մեռած», քարացած ձևեր, իմաստային և գործառական որոշակիությունը կորցրած ձևույթներ՝ արմատակերպներ, սերտաճած ածանցներ, նախդիրներ, աճականներ և այլն, որոնք այլևս ակտիվ դեր չեն խաղում բառակազմական պրոցեսում. մյուս կողմից, սակայն, քանի որ դրանք դեռևս գոյություն ունեն որպես նաև ա՛յդ ժամանակաշրջանին հատուկ փաստեր, ապա բացառված չէ, որ համակարգային զուգորդությունների թարմացումը կարող է որոշ ոչ գործուն միավորների «վերակենդանացման», աշխուժացման պատճառ դառնալ (ինչպես օր.՝ հունաբան դպրոցի կողմից գործառության ընդլայնում ստացան բառակազմական նախկին ակտիվությունը կորցրած որոշ նախդիր-նախածանցներ՝ առ-, ըստ-, ընդ-, ապ(ա)- և այլն):

7. Բառակազմական միավորների մեջ փոխառյալ տարրերի առկայությունը, բառակազմական կաղապարների պատճենումը, ոչ գործուն բառակազմական միավորների գիտակցված ակտիվացման և արհեստականորեն ստեղծված բառակազմական տարրերի ներմուծման փաստը, անհատական բառաստեղծման լայն հնարավորությունները թույլ են տալիս ենթադրելու, որ բառային մակարդակը (այդ թվում բառակազմական համակարգը) լեզվական այլ մակարդակների համեմատությամբ աչքի է ընկնում առավել շարժունությամբ և «թափանցելիությամբ», արտալեզվական

հանգամանքների հետ ավելի ուղղակի կապով։ Այսպես, ի հակադրություն հունաբան դպրոցի ներմուծած քերականական արհեստական ձևերի, որոնք ընդունելություն չգտան լեզվական համակարգում, մնալով միայն քերականական աշխատությունների և հունաբան դպրոցի երկերի նեղ շրջանակում, բառակազմական նորամուծությունները թե՛ կաղապարների և թե՛ նյութական միավորների առումով մտան լեզվի մեջ և պահպանվեցին որպես նրա օրգանական մասը։

8. Միաժամանակ, V դ. գրաբարի բառակազմական համակարգի մեջ հնագույն կաղապարների առկայությունը, բառակազմական տարրական միավորների զգալի նյութական նույնությունը մի կողմից հ.-ե. լեզվից, վաղնջահայերենից և հնագույն հայերենից ժառանգված ունեցվածքի, մյուս կողմից լեզվի զարգացման հետագա շրջանների (հատկապես ժամանակակից գրական հայերենի) համապատասխան լեզվանյութի հետ, ուսումնասիրվող շրջանի բառակազմական կաղապարների մեծագույն մասի գոյատևումը մինչև լեզվի զարգացման ժամանակակից փուլը ցույց են տալիս, որ բառակազմական համակարգը հայերենում աչքի է ընկնում առավել պահպանողականությամբ, այն դեպքում, երբ ձևաբանական և շարահյուսական համակարգերը ենթարկվել են մեծ փոփոխությունների, մինչև նույնիսկ լեզվի կառուցվածքային մեկ տիպի փոխարինումը մյուսով։ Սրա պատճառը թերևս այն է, որ առավել շարժունություն են դրսևորում լեզվի հասկացական համակարգի (համապատասխանաբար՝ նաև բառապաշարի և բառակազմության) եզրային շերտերը, ի տարբերություն կենտրոնականի, որը կազմում է լեզվական ունեցվածքի առավել պահպանողական մասը։



## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### Ներածություն

1 *Н. Адонц*, Дионисий Фракийский и армянские толкователи, Пг., 1915, с. 104.

2 Նույն տեղում, էջ 173։

3 Նույն տեղում, էջ 112։

4 Տե՛ս Գ. Բ. Ջահուկյան, Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում, Երևան, 1954, Նույնի՝ Գրաբարի քերականության պատմություն, Երևան, 1974։

5 Տե՛ս Գ. Բ. Ջահուկյան, Գրաբարի քերականության պատմություն, էջ 120 և հաջ.։

6 «Քերականութիւն գրաբառի լեզուի Հայկազեան սեռի շարադրեցեալ աշխատասիրութեամբ տեառն Մխիթարայ վարդապետի Սեբաստացւոյ աբբայ հայր կոչեցելոյ», Վենետիկ, 1730, էջ 237։

7 Նշենք դրանցից ամենակարևորները. Ս. Մալխասյանց, Գրաբարի հոլովումը, խոնարհումը և նախդիրները, Թիֆլիս, 1891, 1910², Նույնի՝ Գրաբարի շարահյուսություն, Թիֆլիս, 1892, *Н. Я. Марр*, Грамматика древнеармянского языка, СПб, 1903, Մ. Աբեղյան, Գրաբարի քերականություն, Թիֆլիս, 1907 (Երևան, 1936²)։

8 «Հայոց լեզվի պատմական քերականություն», հ. 2, «Բառագիտություն» բաժինը, Երևան, 1975։

9 Վ. Առաքելյան, Հինգերորդ դարի հայ թարգմանական գրականության լեզուն և ոճը, Երևան, 1984։

10 Նույն տեղում, էջ 76։

11 Նույն տեղում, էջ 77։

12 Նույն տեղում, էջ 128։

13 Ստ. Պալասանյան, Քերականություն մայրենի լեզվի, Թիֆլիս, 1874։

14 Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965։

15 *Г. Пауль*, Принципы истории языка, М., 1960

16 Գ. Սևակ, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Երևան, 1955, էջ 21։

17 Հմմտ. Է. Բ. Աղայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Երևան, 1984, էջ 267։

18 «Ժամանակակից հայոց լեզու», հ. 1, Երևան, 1979։

19 Ս. Ղ. Ղազարյան, Ժամանակակից հայոց լեզուն և ռուսերենի դերը նրա հարստացման ու զարգացման մեջ, Երևան, 1955, *И. Кусикьян*, Изменения в словарном составе литературного армянского языка советского периода, М., 1964., Հ. Ա. Օհանյան, Ժամանակակից հայոց լեզվի բառապաշարը և նրա հարստացման միջոցները, Երևան, 1982։

20 «Պատմա-բանասիրական հանդես», 1981, № 3, էջ 32—47։

21 Ս. Գ. Աբրահամյան, *Ժամանակակից գրական հայերեն*, Երևան, 1981, էջ 78 և հաջ.։

22 Ա. Մ. Սուքիասյան, *Ժամանակակից հայոց լեզու*, Երևան, 1982։

23 Է. Բ. Աղայան, *Ընդհանուր և հայկական բառագիտություն*, Երևան, 1984, էջ 268։

24 Նույն տեղում, էջ 269։

25 Նույն տեղում, էջ 247։

26 Նույն տեղում, էջ 248։

27 Նույն տեղում, էջ 246։

28 Գ. Բ. Ջահուկյան, *Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները*, Երևան, 1974, էջ 152։

29 Աշխատությունը դեռևս հրատարակության ընթացքում է, և մենք հեղինակի բարյացակամ թույլտվությամբ ծանոթացել ենք նրա ձեռագրին, որի համար հայտնում ենք մեր շնորհակալությունը։

30 *Г. Б. Джаукян*, Общее и армянское языкознание, Ереван, 1978, с. 78 и сл.

31 Ս. Ա. Գալստյան, *Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում*, Երևան, 1978, էջ 16։

32 Նույն տեղում, էջ 48։

33 Ա. Մուրվալյան, *Հայոց լեզվի բառային կազմը*, Երևան, 1955, Վ. Ս. Քոսյան, *Արդի հայերենի ածականի կազմության շուրջը*, ՊԲՀ, 1959, № 1, Ա. Ս. Աբրահամյան, *Բայը ժամանակակից հայերենում*, Երևան, 1962, Ա. Ս. Մարգարյան, *Հայերենի հարադիր բայերը*, Երևան, 1966, Է. Բ. Աղայան, *Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը*, Երևան, 1967, Տ. Մ. Ավետիսյան, *Ժամանակակից հայերենի բառի կառուցվածքը*, ՀԼԿ, Երևան, 1975, Ռ. Մկրտչյան, *Բարդ բառերի դասակարգումը և նրանց բաղադրիչների իմաստային փոխհարաբերությունը ժամանակակից հայերենում*, ԼՈՀ, հ. 4, Երևան, 1977, *Р. С. Манучарян*, Словообразовательные значения и формы в русском и армянском языке, Ереван, 1981, Ս. Գ. Աբրահամյան, *Ժամանակակից հայերենի տերմինակազմության մի քանի հարցեր*, ՄՀԳ, Երևան, 1984 և այլն։

34 Հմմտ. *Е. А. Земская, Е. С. Кубрякова.* Проблемы словообразования на современном этапе, ВЯ, 1978, 6.

35 Տե՛ս Общее языкознание. Внутренняя структура языка. М., 1972, էջ 344 և հաջ.։

36 Հմմտ. *Е. А. Земская.* Современный русский язык. Словообразование, М., 1973.

37 *Նոր բառգիրք հայկազեան լեզուի*, հ. 1—2, Վենետիկ, 1836, Երևան, 1979—1981$^2$, այսուհետև՝ ՆՀԲ։

38 *Հայկական համաբարբառ*, Եզնիկ, *Եղծ աղանդոց*, կազմ. Գ. Թոսունյան, Երևան, 1972, Կորյուն, *Վարք Մաշտոցի*, կազմ. Է. Դեմիրճյան, Երևան, 1972, «Փավստոսի Բուզանդացւոյ Պատմութիւն Հայոց», կազմ. Ա. Բաղդասարյան, Հ. Սարգսյան, Բ. Եզանյան, Օ. Խաչատրյան, Երևան, հ. 1—3, 1973—1978, «Եղիշէի Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին», կազմ. Լ. Գուլգազարյան, Երևան, հ. 1—2, 1974, 1978, «Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց», կազմ. Ա. Մարգարյան, «Ղազարայ Փարպեցւոյ Թուղթ առ Վահան Մամիկոնեան», կազմ. Հ. Հովհաննիսյան, 1975, «Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց», կազմ. Օ. Խաչատրյան, Հ. Սարգսյան, Բ. Եզանյան, Ա. Բաղդասարյան, Երևան,



1975—1976, «Դավիթ Անյաղթ. Սահմանք իմաստասիրութեան», կազմ. Է. Դեմիրճյան, 1980։

39 Թ. Աստվածատուրյան, *Համաբարբառ Հին և Նոր կտակարանաց*, Երուսաղեմ, 1895։

40 Վ. Առաքելյան, *Դասական և հետդասական գրաբարը*, ՊԲՀ, 1976, № 1, էջ 255—272։ Նույնի՝ *Ակնարկներ հայոց գրական լեզվի պատմության*, Երևան, 1982, էջ 91—106 («Դասական կամ ոսկեդարյան հայերենի խնդիրը» բաժինը), Նույնի՝ *Դասական հայերենի հարցի շուրջը*, ՄՀԳ, Երևան, 1984, էջ 252—259։

41 Հմմտ. Լ. Հովսեփյան, *Հին հայերենի պատմության շրջանաբաժանման մասին*, ՄՀԳ, էջ 379—384։

42 Տե՛ս Ս. Մուրադյան, *Հունաբան դպրոցի ժամանակագրության հարցի շուրջը*, ՊԲՀ, 1964, № 3, էջ 91—106, Նույնի՝ *Դիոնիսիոս Թրակացու քերականության թարգմանչի և մեկնիչի հարցը*, ՊԲՀ, 1980, № 3, էջ 68—87։ Նույնի՝ *Հունաբան դպրոցի ժամանակագրության հարցը*, ՄՀԳ, էջ 410—420։

43 Ժամանակակից ռուս քերականագիտության մեջ այս հարցը բավական մանրամասն մշակվել է Ե. Վ. Պանովի, Ն. Ա. Յանկո-Տրինիցկայայի, Վ. Վ. Լոպատինի, Ի. Ս. Ուլուխանովի, Մ. Ա. Զեմսկայայի և այլոց կողմից։ Բառերի տրոհելիության՝ մեր առաջարկած աստիճանները փոքր-ինչ տարբերվում են նշված հեղինակների սխեմաներից, այնպես, անկախ արմատի գոյությունը մենք համարում ենք ավելի կարևոր, քան կախյալ արմատների շարքը։ Հմմտ. *Е. А. Земская*, Современный русский язык. Словообразование, М., 1973, с. 44 и сл.

44 Տե՛ս Հ. Աճառյան, ՀԱԲ, հ. 2, էջ 487։

45 Տե՛ս Հ. Աճառյան, ՀԱԲ, հ. 3, էջ 267, եթե, անշուշտ, բառն ամբողջությամբ փոխառյալ չէ։

46 *J. J. Katz*, Philosophie der Sprache, Frankfurt, 1969 S. 98։ Բերվում է ըստ *G. Zifonun*, Zur Theorie der Wortbildung am Beispiel deutscher Präfixverben, München, 1973.

47 Հմմտ. Գ. Բ. Ջահուկյան, *Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները*, Երևան, 1974, էջ 158։

48 Ժամանակակից ռուս բառակազմագիտության մեջ սկզբնահիմք տերմինին առավել մոտ է база անվանումը, թեև այստեղ նկատի է առնվում հիմնականում բառակազմական հիմքի խոսքիմասային պատկանելությունը (глагольная база, именная база և այլն), և հատուկ ուշադրություն չի դարձվում որպես բառակազմական հիմք նրա ձևավորմանն ու բառակազմության գործընթացում որպես ելակետային միավոր հանդես գալու գործառական առանձնահատկությանը։ Գ. Բ. Ջահուկյանի «Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն» աշխատության մեջ նշված հասկացությանը համապատասխանում է «արմատահիմք» տերմինը։

49 Հմմտ. Մ. Աբեղյան, *Հայոց լեզվի տեսություն*, էջ 190—193, Է. Բ. Աղայան, *Ժամանակակից հայոց լեզվի հոլովումն ու խոնարհումը*, էջ 78 և հաջ., Նույնի՝ *Ընդհանուր և հայկական բառագիտություն*, էջ 262—265; Գ. Բ. Ջահուկյան, *Հայոց լեզվի պատմություն, նախագրային ժամանակաշրջան*, էջ 246։

50 Տերմինը առաջարկել է Է. Բ. Աղայանը, տե՛ս «Ընդհանուր և հայկական բառագիտություն», էջ 251։

51 Գ. Ջահուկյան, *Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները*, էջ 115։

52 Է. Թումանյանն առանձնացնում է և երրորդ միջոցը՝ արմատի կրկնություն (հմմտ. Э. Г. Туманян, указ. соч., с. 167—170), սակայն մենք այդ համարում ենք բառաբարդման մասնավոր դեպք, քանի որ վերջին հաշվով գործ ունենք արմատական ձևույթների կամ հիմքերի զուգորդման հետ։

53 «Բառակազմական հիմք է կոչվում բաղադրության այն մասը, որ մնում է տվյալ բառակազմական մասնիկը (ածանցը) առանձնացնելուց հետո. այսպես, քաղաք–ական բառի դեպքում քաղաք-ը բառակազմական հիմքն է, ական-ը՝ ածանցը»։ Գ. Բ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1974, էջ 158։ «Ժամանակակից հայոց լեզվի բառակազմություն և իմաստաբանություն» աշխատության մեջ, սակայն, հեղինակն առաջ է քաշում հիմքի ավելի լայն ըմբռնումը՝ կապված բառակազմական նեղ և լայն հարացույցների հետ, առաջինի մեջ ընդգրկելով միայն ածանցավոր կազմությունները, երկրորդի մեջ նաև բարդությունները. «...լայն ըմբռնման դեպքում հիմքի հասկացությունը կարելի է տարածել նաև բարդությունների վրա» (ձեռ., էջ 205)։ Հմմտ. նաև Է. Բ. Աղայանի տարբերակված սերող և բաղադրող հիմքերը բառաբարդման մեջ, նշվ. աշխ., էջ 247—248։

54 Հմմտ. Է. Բ. Աղայան, նշվ. աշխ., էջ 245 և հաջ.։

55 Այստեղ տրվում է մաքուր և ձևավոր հիմքերի մի փոքր այլ ըմբռնում, քան Գ. Բ. Ջահուկյանի «Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը» գրքում, էջ 128—131։

56 Հետաքրքիր է, որ ժամանակակից հայերենում նաև երկրորդային հիմքերի դեպքում անուն արմատը կարող է հանդես գալ սեռ.-տր. հոլովաձևով՝ դերանվանական, ազգանվանակից։

57 Ի հանգով միավանկ հիմքերը՝ մի, բի, դի, լի, ծի և այլն սովորաբար մնում են անփոփոխ՝ միայն, միություն, միամիտ, բիակ, դիակապուտ, լիություն։

58 Հմմտ. Է. Բ. Աղայան, Գրաբարի քերականություն, հ. 1, գ. Ա, Երևան, 1964, էջ 90—91։

59 Հմմտ. Է. Բ. Աղայան, նշվ. աշխ., էջ 306—307։

60 Հմմտ. Э. Г. Туманян, Древнеармянский язык, էջ 105։

61 Գ. Ջահուկյանն այդ տիպի հիմքերը կոչում է «բաղատարրային» (տե՛ս «Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն», ձեռ., էջ 44)։

62 Համեմատաբար երկեամ, երեամ, ինչպես նաև հնգեմեան ձևերի համաբանությամբ են կազմված եօթնեմեան, ութեմեան, իննեմեան, հարիւրեմեան, վաղեմի և նման այլ ձևերը, որոնց սերող հիմքում նախնական ի-ի (կամ ե-ի, ինչպես հնգետասանի մեջ) գոյություն չի կարելի ենթադրել։ Նշված բոլոր բառերը ունեն և ավելի սովորական՝ ամ-ով տարբերակը՝ հարիւրամեայ, ութամեայ և այլն։

63 Համանուն ածանցները տարբերվում են թվային ցուցիչներով՝ ան[1]-, ան[2], -ի[1], -ի[2], -ի[3] և այլն։

64 Այստեղ առկա է ավելցուկության հետաքրքիր երևույթ՝ հասակակից նշանակում է համահասակ, ձայնակից նշանակում է համաձայն։

65 Բաղադրությունն այստեղ, անշուշտ, պայմանական է, մանավանդ որ վկայությունները գալիս են ուշ շրջանի ձեռագրերից։

66 Այս ձևերում տեղի է ունեցել վանկազրկություն՝ աշխարհահալած>աշխարհալած, աշխարհահամար>աշխարհամար, և որպես արդյունք ստացվել են հատված հիմքով անհոդակապ բաղադրություններ։



67 Երկրորդ հիմնային արար բաղադրիչը իր իմաստագործառական առանձնահատկություններով և ձեռք բերած լայն կիրառությամբ հարում է այսպես կոչված ածանցակերպներին։ Հմմտ. նաև նույն արմատի առանց կրկնության ար ձևը, որն արդեն լրովին փոխակերպվել է ածանցի՝ մեծարել, զարդարել, աստուածարել և այլն։

68 Ձևով համընկնող բայական և գոյականական արմատների ծագումը որոշելու դժվարությունների մասին տե՛ս Ա. Ա. Աբրահամյան, Բայը ժամանակակից հայերենում, հ. 1, Երևան, 1962, էջ 79—119, Գ. Բ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, էջ 507։

69 Թեև տարբեր խոսքի մասերի պատկանող բառերի թիվը ստույգ որոշված չէ, սակայն պարզ է, որ գոյականները, բայերը, ածականները ավելի շատ են, քան, ասենք, բուն մակբայները, դերանունները, թվականները և այլ խոսքի մասերը։

70 Բառակապակցությունների և բարդությունների փոխկաղապարման մասին խոսում է Գ. Ջահուկյանը «Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն» գրքում (ձեռ., էջ 279)։ Մասնավորապես գրաբարի համար նման կարգի ուսումնասիրության առատ նյութ կարող է տրամադրել Վ. Ա. Քոսյանի «Գրաբարի բառակապակցությունները» աշխատությունը։

71 Հմմտ. Ա. Ե. Սարգսյան, Դասական գրաբարի տիպաբանական բնութագիրը, ՀԿ, Երևան, 1975, էջ 345 և հաջ.։

72 Հմմտ. Հայոց լեզվի պատմական քերականություն, հ. 2, Երևան, 1975, Մ. Մուրադյանի «Բառագիտություն» բաժինը, էջ 53 և հաջ., Վ. Գ. Առաքելյան, Հինգերորդ դարի հայ թարգմանական գրականության լեզուն և ոճը, Երևան, 1984, էջ 76—79, Գ. Բ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն, Նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987, էջ 242 և հաջ.։

73 Հմմտ. Գ. Բ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, էջ 152։

74 Նշենք, որ վերջածանցների հետ հոդակապի կիրառությունն այլ բնույթ ունի, որի մասին տե՛ս «Վերջածանցում» բաժնում, էջ 188։

75 Ինչպես նշել ենք, -ական ածանցի հավելուրդային կիրառությունը հատկապես հաճախադեպ է Ագաթանգեղոսի լեզվում։

76 Հետաքրքիր է նաև -արան ածանցի երբեմնի գոյությունը՝ պատսպար+արան, որ վանկազրկությամբ դարձել է պատսպարան։

77 Տե՛ս Գ. Բ. Ջահուկյան, Հին հայերենի հոլովման սիստեմը և նրա ծագումը, էջ 230, Э. Г. Туманян, Структура индоевропейских имен в армянском языке, М., 1978, с. 141 и сл.

78 Հնարավոր է վերագրել նաև $S^{i}a$ կաղապարին՝ -ող ածանցով. սեռական հոլովաձև՝ կողման+ող։

79 Ինչպես արդեն նշվել է, աստղանիշով օրինակները կարելի է մեկնաբանել նաև որպես a(Sa) կաղապարի իրացումներ (հմմտ. «Նախածանցում» բաժինը), տվյալ դեպքում թերևս գործ ունենք, այսպես կոչված, բաղադրյալ բառերի կրկնակի պատճառաբանվածության հետ։

80 Ս. Ա. Գալստյանը գտնում է, որ «իրենց կազմում միաժամանակ և նախածանց, և վերջածանց ունեցող», «նախածանցավերջածանցավոր» անվանումները ձևույթային մակարդակի ձևակերպումներ են»... և որ «այդ տերմինների օգտագործելը... սխալ պատկերացում է ստեղծում ժամանակակից հայերենի բառակազմության մասին՝ նրան վերագրե-

լով չեղած բառակազմական միջոց՝ միաժամանակ նախածանցի և վերջածանցի հավելում» (Ս. Ա. Գալստյան, Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում, դոկտ. դիս. ձեռ., էջ 71, տե՛ս նաև էջ 77 «Միաժամանակյա բաղադրում, երբ հիմքը ստանա և՛ նախածանց, և՛ վերջածանց, հնարավոր չէ»)։ Նշենք, որ այդ միջոցը ժամանակակից հայերենի համար դեռևս բավարար չափով ուսումնասիրված չէ, քանի որ, թեև սակավ, բայց ժամանակակից հայերենում էլ կան այդ տիպի կառույցներ՝ առօրեկրյա, ընդծովյա, առճակատում, առափնյա, ինչպես նաև բարդածանցավոր՝ հնգամյակ և այլն, որոնց համար նշված տերմինների կիրառումը լիովին արդարացված է։

81 Ժամանակակից հայերենում բառակապակցական սերող հիմքերի մասին խոսում են Ս. Գ. Աբրահամյանը («Ժամանակակից հայերենի բառակազմական օրինաչափությունների զարգացման միտումները», ՊԲՀ, 1981, № 3, էջ 42—43), Ս. Ա. Գալստյանը (նշվ. աշխ., էջ 62—63)։ Այլ լեզուների համար հմմտ.՝ Н. Д. Арутюнова, Очерки по словообразованию в современном испанском языке, էջ 8, 149։

82 Տե՛ս «Բառակազմական կաղապարներ ու միավորներ» բաժինը, էջ 53։

83 «Բառահիմք» տերմինը գործածված է ըստ Է. Աղայանի «Ժամանակակից հայերենի հոլովումն ու խոնարհումը» գրքում ընդունված նշանակության, էջ 309։

84 «Հատուկ դեպքերում նոր բառեր կազմելու համար կարող են օգտագործվել և անարդյունավետ միջոցներ» M. Dokulil, Tvoření slov v češtině, I. Teorie odvozování slov, Praha, 1962, S. 205)։

85 Այս երևույթի նկարագրության ժամանակ Գ. Բ. Ջահուկյանն առաջ է քաշում «համասեռ» և «տարասեռ» կաղապարների գաղափարը։ Տե՛ս «Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն» ձեռ., էջ 211։

86 «Ժամանակակից հայերենի բոլոր նախածանցների համար, բացառությամբ ժխտականների, երկու հիմնական հատկանիշ է նշվում՝ ա. դրանք գերազանցապես բայական են, բայերից նոր իմաստներով բայեր են կերտում (իմաստափոխական կամ իմաստահավելական ածանցներ), բ., որը բխում է առաջինից՝ խոսքիմասային փոխանցում չեն կատարում՝ քիչ բացառություններով» (Ս. Գալստյան, Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում, դոկտ. դիս. ձեռ., էջ 62)։

87 Տե՛ս Հ. Խ. Բարսեղյան, Հայերենի խոսքի մասերի ուսմունքը, Երևան, 1980, էջ 330, Գ. Բ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, էջ 146։

88 M. Dokulil, նշվ. աշխ., էջ 201։



## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


Աբեղյան Մ., Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965։

Աբեղյան Մ., Գրաբարի քերականություն, Թիֆլիս, 1907, Երևան, 1936[2]։

Աբրահամյան Ա. Ա., Բայը ժամանակակից հայերենում, գիրք 1-ին, Երևան, 1962։

Աբրահամյան Ս. Գ., Արդի հայերենի դերանունները, Երևան, 1956։

Աբրահամյան Ս. Գ., Ժամանակակից հայերենի չթեքվող խոսքի մասերը, Երևան, 1959։

Աբրահամյան Ս. Գ., Ժամանակակից հայերենի բառակազմական օրինաչափությունների զարգացման միտումները, ՊԲՀ, 1981, № 3։

Աբրահամյան Ս. Գ., Ժամանակակից գրական հայերեն, Երևան, 1981։

Աբրահամյան Ս. Գ., Ժամանակակից հայերենի տերմինակազմության մի քանի հարցեր, ՄՀԳ, Երևան, 1984։

Աղայան Է. Բ., Բայակազմությունը ժամանակակից հայերենում, ԳԱՏ, 1963, № 5։

Աղայան Է. Բ., Բայի ձևաբանական կառուցվածքը ժամանակակից հայերենում (կառուցվածքային վերլուծություն), ՊԲՀ, 1963, № 3։

Աղայան Է. Բ., Գրաբարի քերականություն, հ. 1, գ. Ա, Երևան, 1964։

Աղայան Է. Բ., Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը (կառուցվածքային վերլուծություն), Երևան, 1967։

Աղայան Է. Բ., Ընդհանուր և հայկական բառագիտություն, Երևան, 1984։

Աճառյան Հ., Հայոց լեզվի պատմություն, 1-ին մաս, Երևան, 1940, 2-րդ մաս, Երևան, 1951։

Աճառյան Հ., Լիակատար քերականություն հայոց լեզվի համեմատությամբ 562 լեզուների, Երևան, 1—5, 1953—1965։

Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան (2-րդ հրատ.), Երևան, հ. 1—4, 1971—1979։

Այտընյան Ա., Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի, Վիեննա, 1866։

Առաքելյան Վ. Դ., Դասական և հետդասական գրաբարը, ՊԲՀ, 1976, № 1։

Առաքելյան Վ. Դ., Ակնարկներ հայոց գրական լեզվի պատմության, Երևան, 1981։

Առաքելյան Վ. Դ., Դասական հայերենի հարցի շուրջը, ՄՀԳ, Երևան, 1984։

Առաքելյան Վ. Դ., Հինգերորդ դարի հայ թարգմանական գրականության լեզուն և ոճը, Երևան, 1981։

Առաքելյան Վ. Դ., Խաչատրյան Ա. Ա., Էլոյան Ս. Ա., Ժամանակակից հայոց լեզու, հ. 1, Հնչյունաբանություն և բառագիտություն, Երևան, 1979։

Ասատրյան Մ. Ե., Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, Երևան, Ա-Գ, 1970—1977։

Ասատրյան Մ. Ե., Ժամանակակից հայոց լեզու. Ձևաբանություն, Երևան, 1983։

Ավետիսյան Տ. Մ., Ժամանակակից հայերենի բառի կառուցվածքը, ՀԿ, Երևան, 1975։

Ավետիքյան Գ., *Քերականութիւն հայկական նորոգ քննութեամբ և կարգաւ*, Վենետիկ, 1815, 18232։

Բագրատունի Ա., *Հայերէն քերականութիւն ի պէտս զարգացելոց*, Վենետիկ, 1852։

Բաղդասար Դպիր, *Պարզաբանութիւն քերականութեան կարճառօտ և դիւրիմաց*, Կ. Պոլիս, 1736։

Բարսեղյան Հ. Խ., *Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն*, Երևան, 1953։

Բարսեղյան Հ. Խ., *Հայերենի խոսքի մասերի ուսմունքը*, Երևան, 1980։

Գալստյան Ս. Ա., *Ժամանակակից հայերենի բաղադրյալ - բառերի և նրանց բանաձևերի մասին*, ԲԵՀ, 1972, № 3, էջ 104—119։

Գալստյան Ս. Ա., *Ան- ժխտական նախածանցով բաղադրությունները ժամանակակից հայերենում*, ԼՀԳ, 1973, № 5։

Գաղստյան Ս. Ա., *Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում*, Երևան, 1978։

Գյուլբուդաղյան Ս. Վ., *Թվական անունը ժամանակակից հայերենում*, Երևան, 1964։

Էլոյան Ս. Ա., *Ածանցները ժամանակակից հայերենում*, Երևան, 1963։

Իշխանյան Ռ. Ա., *Արդի հայերենի հոլովումը և խոնարհումը*, Երևան, 1971։

Իշխանյան Ռ. Ա., *Ակնարկ հայերենի տերմինաշինության*, Երևան, 1981։

*Հայոց լեզու, I մաս, Ա պրակ* (Գ. Բ. Ջահուկյան, Է. Բ. Աղայան, Վ. Դ. Առաքելյան, Վ. Ա. Քոսյան) Երևան, 1980։

*Հայոց լեզվի զարգացումը սովետական շրջանում*, Երևան, 1973։

Հովհաննես Կոստանդնուպոլսեցի, *Ջոտւթիւն հայկաբանութեան կամ քերականութիւն հայկական*, Հռոմ, 1674։

Հովսեփյան Լ. Ա., *Հին հայերենի պատմության շրջանաբաժանման մասին*, ՄՀԳ, Երևան, 1984։

Ղազարյան Ս. Ղ., *Հայոց լեզվի համառոտ պատմություն*, հ. 1, Երևան, 1954, 19812։

Ղազարյան Ս. Ղ., *Ժամանակակից հայոց լեզուն և ռուսերենի դերը նրա հարստացման ու զարգացման մեջ*, Երևան, 1955։

Ղազարյան Ս. Ղ., *Հայոց գրական լեզվի պատմություն*, հ. Ա, Երևան, 1961։

Մալխասյանց Ս., *Գրաբարի հոլովումը, խոնարհումը և նախդիրները*, Թիֆլիս, 1891։

Մալխասյանց Ս., *Գրաբարի համաձայնությունը*, Թիֆլիս, 1892։

Մարգարյան Ա. Ս., *Հայերենի հարադիր բայերը*, Երևան, 1966։

Մկրտչյան Ռ. Խ., *Բարդ բառերի դասակարգումը և նրանց բաղադրիչների իմաստային փոխհարաբերությունը ժամանակակից հայերենում*, ԼՈՀ, 4, Երևան, 1977։

Մխիթար Սեբաստացի, *Քերականութիւն գրաբարի լեզուի Հայկազեան սեռի*, Վենետիկ, 1730։

Մուրադյան Ա. Ն., *Հունաբան դպրոցը և նրա դերը հայերենի քերականական տերմինաբանության ստեղծման գործում*, Երևան, 1971։

Մուրադյան Ա. Ն., *Դիոնիսիոս Թրակացու քերականության թարգմանչի և մեկնիչի հարցը*, ՊԲՀ, 1980, № 3։

Մուրադյան Ա. Ն., *Հունաբան դպրոցի ժամանակագրության հարցը*, ՄՀԳ, Երևան, 1984։

Մուրադյան Մ. Հ., *Բառագիտություն*/ «Հայոց լեզվի պատմական քերականություն», հ. 2, Երևան, 1975։

Մուրվալյան Ա. Ա., *Հայոց լեզվի բառային կազմը*, Երևան, 1955։

Մուրվալյան Ա. Ա., *Հայոց լեզվի դարձվածաբանություն և բայակազմություն*, Երևան, 1959։





Ոսկան Երևանցի, *Քերականութեան գիրք. համառօտիւք ծայրաքաղ արարեալ յաղագս մանկանց և նորավարժից կրթութեան ի տասն մասենից և ի գիտութիւնս մասանց բանի ըստ քերթութեան արհեստի*, Ամստերդամ, 1666։

Չալըխյան Վ., *Քերականութիւն հայկազեան*, Վիեննա, 1937։

Չալըխեան Վ., Այտընեան Ա., *Քերականութիւն հայկազնեան լեզուի*, Վիեննա, 1885։

Չամչյան Մ., *Քերականութիւն հայկազեան լեզուի*, Վենետիկ, 1779։

Պալասանյան Ստ. *Ընդհանուր տեսություն արևելյան նոր գրավոր լեզվի հայոց*, Թիֆլիս, 1870։

Պետրոսյան Հ. Զ., *Գոյականի թվի կարգը հայերենում*, Երևան, 1972։

Ջահուկյան Գ. Բ., *Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում*, Երևան, 1954։

Ջահուկյան Գ. Բ., *Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը*, Երևան, 1969։

Ջահուկյան Գ. Բ., *Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները*, Երևան, 1974։

Ջահուկյան Գ. Բ., *Գրաբարի քերականության պատմություն*, Երևան, 1974

Ջահուկյան Գ. Բ., *Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան*, Երևան, 1987։

Ջահուկյան Գ. Բ., *Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն* (ձեռագիր)։

Սալլանթյան Մ., *Քերականութիւն գրաբառ լեզուիս հայոց*, հ. Ա, Փոքր քերականութիւն, Մոսկվա, 1827։

Սարգսյան Ա. Ն., *Դասական գրաբարի տիպաբանական բնութագիրը*, ՀԼԿ, Երևան, 1975։

Սևակ Գ., *Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց*, Երևան, 1955։

Սուքիասյան Ա. Մ., *Հոմանիշները ժամանակակից հայերենում*, Երևան, 1971։

Սուքիասյան Ա. Մ., *Ժամանակակից հայոց լեզու (Հնչյունաբանություն, բառագիտություն, բառակազմություն)*, Երևան, 1982։

Քոսյան Վ. Ա., *Արդի հայերենի ածականի կազմության շուրջը*, ՊԲՀ, 1959, № 1, էջ 154—162։

Քոսյան Վ. Ա., *Գրաբարի բառակապակցությունները*, Երևան, 1980։

Օհանյան Հ. Ա., *Ժամանակակից հայոց լեզվի բառապաշարը և նրա հարստացման միջոցները*, Երևան, 1982։

Օհանյան Հ. Ա., *Ածական անունը ժամանակակից հայերենում*, Երևան, 1962։

*Адонц Н.* Дионисий Фракийский и армянские толкователи, Пг., 1915.

*Азарх Ю. С.* Словообразование и формообразование существительных в истории русского языка.—М., 1984.

*Андреева Л. Д.* Статистико-комбинаторные типы словообразования и разряды слов в русской морфологии.—М., 1969.

*Аракин В. Д.* О превращении лексических единиц в аффиксальные морфемы.—ФН, 1959, № 4.

*Арутюнова Н. Д.* О понятии системы словообразования.—ФН, 1960, № 2.

*Арутюнова Н. Д.* Очерки по словообразованию в современном испанском языке.—М., 1961.

*Ахманова О. С.* Очерки по общей и русской лексикологии.—М., 1957.

*Бенвенист Э.* Синтетические основы именного сложения. В кн.: Общая лингвистика.—М., 1974.

*Варбот Ж. Ж.* Древнерусское именное словообразование. Ретроспективная формальная характеристика.—М., 1969.

*Винокур Г. О.* Заметки по русскому словообразованию. В кн.: Избранные работы по русскому языку.—М., 1961.

Вопросы словообразования и лексикологии древнерусского языка.—М., 1974.

Вопросы теории и истории русского словообразования. Казань, 1972.

*Григорьев В. П.* О границах между словосложением и аффиксацией.—ВЯ, 1956, № 4.

*Григорьев В. П.* О взаимодействии словосложения и аффиксации.—ВЯ, 1961, № 5.

*Джаукян Г. Б.* Общее и армянское языкознание.—Ереван, 1978.

*Зверковская Н. П.* Суффиксальное словообразование русских прилагательных XI—XVII вв.—М., 1986.

*Зализняк А. А.* Русское именное словообразование.—М., 1967.

*Земская Е. А.* Современный русский язык. Словообразование.—М., 1973.

*Земская Е. А., Кубрякова Е. С.* Проблемы словообразования на современном этапе, ВЯ, 1978, № 6.

*Земская Е. А.* Словообразование. В кн.: Современный русский язык.—М., 1981.

*Зенков Г. С.* Вопросы теории словообразования. Фрунзе, 1969.

Исследования по словообразованию и лексикологии древнерусского языка.—I—М., 1969, II—М., 1978.

*Каращук П. М.* Словообразование английского языка.—М., 1977.

*Кубрякова Е. С.* Еще раз о месте словообразования в системе языка.—В сб.: Актуальные проблемы русского словообразования, т. I, Ташкент, 1975.

*Кубрякова Е. С.* Основы морфологического анализа (на материале германских языков).—М., 1974.

*Кузнецов Е. С.* Опыт формального определения слова.—1964, № 5.

*Кулешова Л. В.* Описание корней русского языка с помощью статистических методов, М., 1976.

*Курилович Е.* Деривация лексическая и деривация синтаксическая. В кн.: Очерки по лингвистике.—М., 1962.

*Кусикьян И. К.* Изменения в словарном составе литературного армянского языка советского периода. М., 1964.

*Левковская К. А.* О принципах структурно-семантического анализа языковых единиц (на материале немецкого языка).—ВЯ, 1957, № 1.

*Левковская К. А.* Теория слова, принципы его построения и аспекты изучения лексического материала. М., 1962.

Лексикология и словообразование древнерусского языка.—М., Наука, 1966.

*Лопатин В. В.* Русская словообразовательная морфемика.—М., Наука, 1977.

*Максимов В. И.* Структура и членение слова.—Л., 1977.

*Манучарян Р. С.* Словообразовательные значения и формы в русском и армянском языках.—Ереван, 1981.

*Марр Н. Я.* Грамматика древнеармянского языка.—СПб., 1903.

*Милославский И. Г.* Вопросы словообразовательного синтеза.—М., 1980.

Морфологическая структура слова в языках различных типов.—М., 1963.



*Немченко В. Н.* Современный русский язык. Словообразование. М., 1984.

Общее языкознание. Внутренняя структура языка.—М., 1972.

Основы построения описательной грамматики русского языка, М., 1966.

*Панов М. В.* Степени членимости слова. В кн.: «Русский язык и советское общество. Словообразование современного русского литературного языка», М., 1968.

*Пауль Г.* Принципы истории языка.—М., 1960.

*Потиха З. А.* Современное русское словообразование.—М., 1970.

*Рогова В. Н.* Словообразовательная система русского языка в XVI в.—Красноярск, 1972.

Русский язык и советское общество. Словообразование современного русского литературного языка.—М., 1968.

Русская грамматика, т. 1.—М., 1980.

*Смирницкий А. И.* Лексикология английского языка.—М., 1956.

*Степанова М. Д.* Словообразование современного немецкого языка.— М., 1953.

*Степанова М. Д.* Методы синхронного анализа лексики.—М., 1968.

*Тихонов А. Н.* Основные понятия русского словообразования. В кн.: Словообразовательный словарь русского языка в 2-х т., т. 1, М., 1985.

*Туманян Э. Г.* Древнеармянский язык, М., 1971.

*Туманян Э. Г.* Структура индоевропейских имен в армянском языке.—М., 1978.

*Янко-Триницкая Н. А.* Членимость основы русского слова.—ИАН СССР, СЛЯ, 1968, № 6.

*Galanus C.* Grammaticae et logicae institutiones linguae literalis Armenicae—Romae, 1645.

*Chahan de Cirbied J.* Grammaire de la langue arménienne.—Paris; 1823.

*Dokulil M.* Tvoreni slov v češtiné. 1. Teorie odvozováni slov. — Praha, 1962.

*Lees R. B.* The Grammar of English nominalisations. — The Hague, 1966.

*Marchand H.* Studies in Syntax and Wordformation. — München, 1974.

Perspektiven der Wortbildungsforschung. — Bonn, 1977.

*Rivola F.* Grammaticae armenae libri quattuor, Lutetiae Parisiorum, 1624.

*Rozwadowsky J.* Wortbildung und Wortbedeutung. — Heidelberg, 1904.

*Schröder I. I.* Thezaurus linguae armenicae, antiquae et hodiernae, cum varia praxios meteria. — Amsterdam, 1711.

*Zifonun G.* Zur Theorie der Wortbildung am Beispiel deutscher Präfixverben. — München, 1973.

## ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*ԱԲ—Առձեռն բառարան հայկազնեան լեզուի, Վենետիկ, 1865։*
*ԲԵՀ—Բանբեր Երևանի համալսարանի։*
*ԳԱՏ—ՀՍՍՀ ԳԱ Տեղեկագիր (հասարակական գիտությունների սերիա)։*
*ԼՀԳ—Լրաբեր հասարակական գիտությունների։*
*ԼՈՀ—Լեզվի և ոճի հարցեր (ժողովածուների շարք)։*
*ՀԱԲ—Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 1—4, Երևան, 1971—1979$^{2}$։*
*ՀԼԿ—Հայոց լեզվի կառուցվածքը (ժողովածու), Երևան, 1975։*
*ՄՀԳ—Միջազգային հայերենագիտական գիտաժողով, Զեկուցումներ, Երևան, 1984։*
*ՆՀԲ—Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. 1—2, Վենետիկ, 1836, Երևան, հ. 1, 1979$^{2}$, հ. 2, 1981$^{2}$։*
*ՊԲՀ—Պատմա-բանասիրական հանդես։*
ВЯ—Вопросы языкознания.
ИАН СЛЯ—Известия Академии наук. Серия литературы и языка.
ФН—Филологические науки.



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


Ներածություն . . . . . 5
*Հայերենի բառակազմության ուսումնասիրման պատմության ակնարկ* . . . 5
*Նյութի ընտրության ու նկարագրության սկզբունքները* . . . 34
Բառակազմական կաղապարներ և միավորներ . . . 51
Հիմքակազմություն . . . 60
Բառաբարդման կաղապարներ . . . 95
*Բարդությունների և նրանց բաղադրիչների խոսքիմասային (կարգային) բնութագիրը* . . . 137
Ածանցման կաղապարներ . . . 158
*Նախածանցում* . . . 160
*Վերջածանցում* . . . 187
*Խառը տիպի կաղապարներ* . . . 287
*Բայակազմություն* . . . 298
*Ածանցների գործառական առանձնահատկությունները* . . . 332
Եզրակացություններ . . . 358
Ծանոթագրություններ . . . 363
Գրականություն . . . 369
Համառոտագրություններ . . . 374

ԼԻԱՆԱ ՍԱՄՎԵԼԻ ՀՈՎՍԵՓՅԱՆ

# ԳՐԱԲԱՐԻ ԲԱՌԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

*Հրատ. խմբագիր Ա. Լ. Սաճայան*
*Նկարիչ Հ. Ն. Գործակալյան*
*Տեխ. խմբագիր Լ. Կ. Հարությունյան*
*Սրբագրիչ Գ. Ս. Ստեփանյան*

ИБ № 1309

*Հանձնված է շարվածքի 23. 06. 1987 թ.: Ստորագրված է տպագրության 13. 10. 1987 թ.: Չափը 60×84 1/16: Թուղթ № 1: Տառատեսակ «գրքի սովորական», բարձր տպագրություն: Պայմ. 21,85 մամ., տպագր 23,5 մամուլ: Ներկ. մամուլ 21,85: Հրատ.-հաշվարկ. 20,5 մամուլ: Տպաքանակ 1000: Հրատ. № 7167: Պատվեր № 442: Գինը 2 ռ. 80 կ.:*

*ՀՍՍՀ ԳԱ Հրատարակչություն, 375019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24 գ.:*
Издательство АН АрмССР, 375019, Ереван, пр. Маршала Баграмяна, 24 г.
*ՀՍՍՀ ԳԱ Հրատարակչության տպարան, 375019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24:*
Типография Издательства АН АрмССР, 375019, Ереван,
пр. Маршала Баграмяна 24.